# ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ
# ԱՄԵՐԻԿԱՅ։

Արարեալ 'ի վարդապետէն Կուլիէլմեայ Ռոպերթսոնէ։

ԵՒ

Բաժանեալ յութն դպրութիւնս.

Թարգմանեալ նախ յանգղիական բնագրէ յիտալական լեզու. և անտի 'ի Հայ բարբառ 'ի Հայր Մինաս Վարդապետէ Գասպարեանց Աքթիվլինցւոյ 'ի Միաբանութենէ բազմավաստակ բարեյիշատակ Մխիթարայ Րաբունապետի և Մեծի Աբբայի։

## ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ։

Տպագրեալ ծախիւք և արդեամբք Բաբաջանեանց Աղայ Յօհաննէսի Ջուղայեցւոյ։

Յամի տեառն 1784. և 'ի Թուին Հայոց ՌՄԼԳ։

'Ի ԹՐԵՍՏ.
'Ի Տպարանի Հարց Մխիթարեանց։
Հրամանաւ Մեծաւորաց։

# ԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԱՌ ԲԱՐԵՍԷՐ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՂՍ։

Բազումք բազմօրինակ գրեցին զգիւտէ և զհան-
գամանս Ամերիկոյ և զվայրենի բնակչաց
նորա. բայց մերս վիպասան Կուլիելմոս Ռօպերթ-
սոն հռչակեալ է յամենեցունց իբր առաւել հա-
ւաստաբան և իմաստնախոհ և զուարճալի և հրա-
հանգիչ մարդկեղէն մտաց։
Զոր տեսեալ և փորձիւ հմտացեալ Պօղոսեցի
Նարիկեանց Աղայ Յօհաննէսն՝ այրն պատուական,
բարեսէր բարերար առ ամենեսին, և անչափ նա-
խանձայոյզ պայծառութեան ազգին, միանգամայն և
սկզբնաշաւիղ երախտաւոր և զօրավիգն Թրես-
տեանս հիմնարկութեան, առաջագրեաց մեզ թարգմա-
նութիւն 'ի լոյս ածել. և ծախուք և արդեամբք ի-
րովք տպագրեալ՝ ամենահարուստ գանձուցն, որ 'ի
սմա, բաժանորդ զազգն առնել։ Եւ քիրաւի եթէ
ոք մտադիւր ընթեռնուցու միանգամ և երկիցս
զայս պատմագիր, միտք նորին արծարծանի, առ-
քացեալ բազմազան իմաստիւք և տեղեկութեամբք. և
ընդարձակի և լուսաւորի. քանզի ոչ եթէ սին սոսկ

պատմութիւն է, այլ հանդերձ իմաստասիրական խորհրդածութեամբք 'ի հրահանգումն մտաց մերոց և 'ի կանոնաւորումն գործոց:

Դ. սմա տեսանեմք թէ որպէս աշխարհս իբրև զտղայ յանկատարութենէ առ կատարելութիւն յառաջացաւ. և թէ որքան պարտական է մարդս քաղաքական դաստիարակութեան և ուսման. և թէ որպէս արհեստք, գիտութիւնք և օրէնք կատարելագործեն զբնութիւն, և հանեն զմարդն գրեթէ յանբանական վիճակէ. և թէ զիարդ առ անդորրութիւն մարդոյ կարևոր են օրէնք և ստորակարգութիւնք. և թէ առ 'ի իմանալ զօգուտ կարգին, որ միացուցանէ զզօրութիւն բռնութեան և բաւականս գործէ առ իւր վախճան, բազում մասունք լուսաւորութեանց և ներհմտութեանց պէտք են, զոր ազգք տխմարք ոչ իմանան. և զոր երջանկութիւն ինքեանց համարին զազատ և զինքնագլուխ լինելն՝ այնու ընդ մեծագոյն թշուառութիւն զանձինս արկանեն. և իբր տխմար և անզօր ազգ յամենեցունց արհամարհին և զոհ թշնամեաց լինին: Այլ ևս իմանամք, թէ 'ի մեծամեծ և 'ի դժուարին գործս մեծ համբերութիւն պիտի օրինակաւ մեծի և սքանչելւոյ առն Քօլոմպոսի. որ համբերութեամբ իւրով և տոկալովն յաղթեաց ամենայն դժուարութեանց. և թէ յորժամ գլուխ իրիք ընկերութեան առողջ է, բովանդակ քաղաքական մարմինն 'ի հանգստեան եղիցի. իսկ յորժամ ախտիւք իմիք վարակեալ իցէ, բոլոր մարմինն տագնապի, և թէ որքան մեծ է չարութիւն մախանացն և իբր ժանտախտ ընկերութեան. և զիարդ անհանդուրժելի և բռնացիչ ապերախտութիւն մարդկան առ կենցաղօգուտ հասարակաց ծառայութիւն դիւցազանց: Այլ եթէ 'ի սկզբան անդ ուրեք ուրեք խրթին երևեսցի ոմանց այս պատմագրութիւն վասն նորա տրամաբանութեան հեղինակին՝ ոչ է պարտ լքանիլ. և 'ի բաց թողուլ, այլ յառաջել յընթացս ընթերցմանն,

մինչև

մինչև նոյն բանն այլով շարադրութ՟բ ընդառաջ ելցէ. կամ ընտելասցի ում քերթութեն. և ապա 'ի կրկնելն երկ՟դ անգամ ոչ կրեսցի նոյն դժուարութ՟ի, այլ ախորժագոյն ևս երևեսցի :

Բնագիրն 'ի չորս հատորս բաժանեալ էր. բայց մեք պատշաճագոյն վարկաք հայելով 'ի չափ մեծութեն մատենին յերկուս հատորս տրամատել. որոց առաջինն ահա այս է. իսկ զերկրորդն յետ սակաւուց տերամբ ունիմք 'ի լոյս ածել :

Զնշանագրութիւնս, զորս բնագիրն եդե՟լ էր 'ի վերջն, մեք փոխադրեցաք առ իւրաքանչիւր բուն տեղիսն, ուր կոչեցեալն էին, հանդերձ համարովն, այլև երկուտեք զոյգ գծիւք 'ի սկիզբն և 'ի վերջն. ո՟պ զի եթէ ոք կամիցի որոնել 'ի բնագրին, դիւրաւ գտցէ. զորօրինակ տեսցէ յընթացս գործոյս. Սակայն բազում ուրեք իբր միջանկեալ բան պարտ է համարել զայսոսիկ ծանուցմունս և զհետագայ բուն բանն յարել անընդմիջաբար ընդ նախընթացին յընթեռնուլն. զի մի խրամատեալ երևեսցի շարահետութ՟ի բանին :

Ուրեք ուրեք զբառս ինչ կամ զնշանակութ՟ի բառից 'ի գործ արկաք առ հարկի. որք ոչ գտանին 'ի տպագրեալ Հայկազեան բառարանի մերում. բայց մի՛ եպերեսցին իբր նորաստեղծք և մտացածինք. քանզի ըստ մեծի մասին գտեալ եմք յերևելի մատենագիրս ազգիս. ո՟պ 'ի վերստին տպագրիլ բառարանին յայտնեսցին. Նաև ուշադիր ընթերցողն եթէ ուրեք ուրեք զբառ ինչ ոչ իմասցի, զոյժ բանին կարօղ է իմանալ 'ի նախընթացէն և 'ի հետևեցելոյն :

Զսկզբնագիր յատուկ անուանց մարդոց, քաղաքաց, լերանց, գետոց ևն, դրեցաք գլխագրով առ 'ի որոշել զի մի հասարակ անուն կարծիցի. և շփոթիցի միտք ընթերցողին :

'Ի դրադարձութեն 'ի սովորական անուանս պահեցաք զկանոն նախնեաց. զոր օրինակ զՓէթրոսն յեղափոխելով Պետրոս և զՓաւղոսն Պօղոս. իսկ

զայլսն ըստ յատուկ հնչման իւրաքանչիւր լեզուին, ունելով բաւական տառս առ 'ի յօդաւորել զինչ և իցէ հնչումն բաց 'ի միոջէ կամ յերկուց : Հուսկ յետոյ զաշխարհացուցոյք բնագրին զանց արարաք վն երկուց պատճառաց . Նախ՝ զի առանց ծանօթու-թե երկրագրութե ոչինչ օգտեն ազգին . և երկ-րորդ՝ զի բազում ծախք լինէին յանօգուտս, և նմին իրի գին գրքին ծանրանայր . որով բազումք զը-կէին 'ի շահեկանութէ նորա : Այլ արդ խնդրեմ մի փոքր ջան համարիցիք զջքնութիս իմ . Ազսի-րով նուիրեալս սիրով ընկալարուք :



# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ
## ՀԵՂԻՆԱԿԻՆ.

'Ի կատարելն զպարաւանդութիւն, զոր ընկալեալ էի վ՟ն հասարակաց՝ յաղագս պատմութ՟ե Ամերիկոյ, դիտաւորութ՟ի իմ էր ոչ տալ յայնմանէ 'ի դուրս զմասն ինչ մինչեւ ոչ իցէ լրացեալ բովանդակն. Ա-ռաջիկայ վիճակ հատուածոյն Անկլիզաց շարժեաց զիս այլայլել զայս որոշումն իմ. Որովհետեւ նոքին ներգործաբար գրաւեալ են 'ի քաղաքական պատերազմի ինք 'ը մե-ծին Բրիտանիոյ, ոչ կարեն լինել շահե-կանք հետազօտութիւնք եւ դիտողութիւնք 'ի վ՟ր նախկին կերպից քաղաքավարութ՟ե եւ 'ի վ՟ր օրինացն, որք ոչ եւս կան. Ուշ եւ ակն-կալութ՟ի ազգի մարդկան ուղղեալ է այժմ առ ապագայ պայմանն ն՟ց. Որով եղանակաւ եւ աւարտեսցի այս թշուառական հակառա-

կո՛ն պարտի տեսանել յԱմերիկա Նոր իմն կարգ իրաց. և առցեն զայլ իմն կերպարան իրակութի՛ք Նց. Ապաւէն կամ անձկանօք բարւոյ քաղաքացւոյ, զի այս եռացումն դադարեսցի, և զի կանոնաւոր իմն կառավարութի վերահաստատեսցի 'ի նմա. և յայնժամ դարձայց առ այն մասն գործոյն իմոյ, յորում վաղիսկ արարեալ էի զյառաջադիմութի իմն. որ և միացեալ ընդ վիպասանութե փորթուկեզեան Ամերիկոյ, և բնակութեանցն արարելոց 'ի զանազան ազգացն Եւրոպիոյ 'ի կղզիսն արեւմտեան Հնդկաց, կատարելագործեսցէ զգաղափար իմ:
Երկու մասեանքն, զորս հրատարակեմ այժմ, պարունակեն զպատմութիւն գտման Նորոյ աշխարհի, և յառաջադիմութեն արարեցելոյ 'ի զինուց և 'ի հաստուածոցն Սպանիացւոց. Այս ոչ միայն է պերճագոյն բաժին ամերիկեան վիպասանութե, այլ և է անջատեալ այնպէս, զի կերպաւորէ ինքնին զբոլոր մի արժանի դիտողութե վ՛ս միութե ենթակային. Եւ քանզի յայսմ մասին գործոյ իմոյ պարզաբանին սկզբունք և առածք Սպանիացւոց 'ի տնկելն զհաստուածս, որք յետոյ տարազու իմն ողջագուրեն եղեն յամ ազգացն Եւրոպիոյ, եղիցի այս իբր դիպաւոր ներածութի առ պատմութի հարգունութե նց յԱմերիկա. և տացէ շուրջ զայսու մեծավարկ յօդուածով քաղաքականութեն զծանօթութիւն զայնոսիկ. որք կարեն լինել

Հաւատարապէս ցանկալիք և շահեկանք ։ ՚ի գծագրելն զարարս և զսահմանադրութիւնս Սպանիացւոց ՚ի Նոր աշխարհին, ՚ի բզմ լծակցութիւս հեռացայ ՚ի պատմական ոճոյ նախընթաց վիպասանից. և յաճախակի ՚ի մէջ բերի զգործողութիւս, որք երևին ընդանգիտացեղ ՚ի նոցանէ. Պարտականութիւն իմն է, խոստովանել զայն յանդիման աշխարհի, յիշատակելն զաղբիւրս, յորոց հանեալ եմ զլոյսն զայնոսիկ, որք կարեն արդարացուցանել զիս, կամ ՚ի դնելն զերան ՚ի նոր իմն տեսիլ, կամ ՚ի կերպաւորելն զնոր ինչ կարծիս վերահայեցմամբ պատճառաց և գործոցնց. Զայս պարտականութիւն կատարեմ ես այնչափ մեծագոյն հաճութ՟, որչափ ընծայեցաւ ինձ զառիթ վկայելոյ զերախտագիտութիւն իմ առ բարերարսն այնոսիկ. որք պատուեցին զիս վկայութբ իւրեանց և օժանդակեցին յամ հետազօտութիւս իմ ։ Որովհետև զառաւել ծանրակշիռ ծանօթութիւն նկատմամբ այսր մասին գործոյն իմոյ պարտ էր սպասել ՚ի Սպանիոյ, նկատեցի իբր բարեբաստիկ պարագայութի վ՟ իմ, յորժամ միլորտ Կրանթամ, (յորմէ ունէի պատիւ ծանուցեալ լինելոյ անձնաւորաբար, և որոյ ծանօթ էր ինձ ազատականութիւն մտացն և պատրաստականութիւն առնելոյ զիրս հաճոյականս ,) կարգեցաւ դեսպան յարքունիսն Մադրիտու .

Ու֊

Ուղերձելով զիս առ նա՝ գտի զայնպիսի
ընդառաջելումն, որ ապահովացոյց զիս․
թէ փոյթք իւր պարապելոց էին առաւել
գործունեայ եղանակաւ․ և թէ նմին իրի
ընդունելոց էի զլրումն բաղձանաց իմոց․
Ուստի զյառաջադիմութիւն, զոր արարի ՚ի հե-
տազօտութեանս իմ ՚ի մէջ Սպանիացւոց, պար-
տիմ նախապետաբար վերագրել առ ստու-
գութիւն, զոր նոքա ունէին, որչափ վաս-
մութեան իւրում փոյթ էր ՚ի բարեյաջողու-
թեան հետազօտութեանց, Այլ թէ և Միլորտ
Կրանթամու ես ոչ լինէի պարտական վասն
այլոյ իրիք․ բայց եթէ վասն ուշադրութեան իւ-
րոյ ՚ի գրաւել զպարոնն Սատտիլովէ զմատ-
րանապետն դեսպանութեան իւրոյ առաջնոր-
դել իրակութեանց իմոց ՚ի Սպանիա, պարա-
ւանդուլք ձգեալք յանձն իմ լինէին ան-
բաւք․ Զամս հինգ հետզհետէ սեպուհս
այս շարունակեաց զհետազօտութիւնս իւր վասն
օգտի իմոյ այնչափ գործունէութեամբ յարա-
տեւութեամբ և ճանաչողութեամբ ենթակային, առ
որ ուղղեալ էր մտադրութիւն իւր․ մինչ զի
պատճառեաց ինձ միանգամայն զզարմացումն
և զհաճութիւն․ Նա պատճառեաց ինձ զմե-
ծագոյն մասն գրեանց Սպանիացւոց․ յո-
րոց հրահանգեցայ․ և բազումք ՚ի սոցանէ
տպագրեալ էին կանխաւ ՚ի վեշտասաներորդ
հարիւրեկին․ և եղեալ էին ցանցաղագիւտ․
այնպէս զի հաւաքելն զնոսա պարտէր լինել
զզբաղումն իմն․ որ միայն պահանջէր զբզմ

ժմկ և զՀանապազորդութի. Ո՛ւ Նր բարե-
կամական ժրաջանութեն պարտական եմ վն
օրինակաց զանազան մեծագին Հեռագրաց.
որք պարունակեն զգործս և զմանաւո-
րութիս, զորս ես որոնելոց էի վայրապար 'ի
գործս, որք շուրջ յածին տպագրեալ. Բա-
ջալերեալ 'ի բարի և 'ի դիւրաշարժ կամաց
Պարոնին Սատոիլովեայ յընձեռելն զշնորհս
իւր, առաքեցի նմա զշարս ինչ հարցմանց 'ի
վ՛ր փարուց և կառավարութե ազգաց Ամերի-
կացւոց, և 'ի վ՛ր բնութե զանազան սահ-
մանադրութեց 'ի կալուածս Սպանիացւոց.
բայց տրամադրելս և յարդարելս այնիպ, զի
Սպանիացի ոմն կարէր պատասխանել այնց
առանց յայտնելոյ ինչ յայնց իրաց, զորս ոչ
պատշաճէր նմա Հաղորդել օտարի ումեք.
Նա յեղափոխեաց 'ի լեզու Սպանիացի. և 'ի
պէսպէս անձանց, որք իջեւանեալ էին 'ի բա-
զումս 'ի Հատուածոցն Սպանիացւոց, ըն-
կալաւ զպխիս. որք յոյժ Հրահանգեցին զիս։
Ընդ այս տմ՛ սեպՀական շաՀուց, ո-
րովք ընկերակցեալ եղեն Հետազօտութիք
իմ 'ի Սպանիա, պարտիմ յարել մասնա-
ւոր տՀաճութ իմով, թէ զբարի յաջողու-
թին, յորմէ նպաստաւորեցան, ճանաչեմ 'ի
բարութէ անհատից և ոչ 'ի Հաղորդութե ա-
ռաջացելոյ ինձ Հրապարական իշխանութ.
Մանաւոր իմն կարգադրութի Փիլիպ-
պոսի երկրորդի յիշատակք միապետութե
սպա-

սպանիացւոց աւանդեալ են 'ի դիւանին Սեմանքասու մերձ 'ի Սակլիատօլիտ Հարիւր քսան մղոն հեռի յաթոռոյ Թագաւորութեն ե 'ի գերագոյն ատենից արդարութե. Ուերթեք վերաբերեալք Ամերիկոյ, և Նախապետութար առ այն պարբերութի պատմութե իւրոյ, առ որ ուղղիւր մտադրութի իմ, են այնպ յոգնաթիւք, մինչ զի, որպ պատմի, ըսուն միայն զընդարձակագոյն կայանս դիւանին այնորիկ. և բաղկացուցանեն ըստ այլոց տեղեկութեց, զորս ընկալայ, զութն հարիւր եօթանասուն և երիս երկայնագոյն շարոցս. Հաւատայի ունել ինձ յիմիք ատուծանի ըզճարտարութի, որ պատկանի վիպասանի ումեք. և վ'աղ տեսութի այսպիսի իմն գանձու զարթոյց զեռանդագին փափագ իմ. Բայց տեսութին միայն եղև, յոր վայելեցի. Սպանիա չափազանց իմն դժուարութիւ միօրինակ ձգեաց քող 'ի վր արարելոց իւրոց յԱմերիկա. Այսքէն գաղեալ են յարտաքնոց մտանաւոր իմն խնամով. և նոցին իսկ հպատակաց իւրոց դիւանն Սեմանքասու ոչ է բացեալ առանց արքունի հրամանի. և թէև ընկալեալ լիցի այս հրաման, թուղթքն ոչ կարեն օրինակել առանց այնպիսի տարապայման իմն ծախսու որ զանցանէ ըստ չափն, որ ինչ արժանէր տալ. յորժամ միակ առարկայ տալոյ փոյթս փոխագրել է հաճելն գրութարական բաղմահոգութին. Սակայն յուսալի է, թէ Սպանիացիք խելամտո-

ցին ուր ուրեմն, թէ այս ոմն պահելոյ զայնս
թաքուն ոչ է նուաղ ըղձեմ քաղաքակա-
նութե, քան թէ ըղձեմ ազնուականութե.
Յայնմանէ, զոր փորձեցի յընթացս հեռա-
զօտութեց իմոց, ախորժեմ ասել համար-
ձակ, թէ 'ի կրկտելն ճշդիւ զառաջին գոր-
ծողութիւն Սպանիացւոց 'ի Նոր աշխար-
հին, եթէ գործք անհատիցն երևեցին ըստ
գտանելի, գնացք ազգին դնիցին յինէն յա-
ռաւել շնորհալի իմն տեսիլ:
Յայլ մասունս Եւրոպիոյ նախազօրացեալ են
ամենևին տարբեր կարծիք. Որոնեալ իմ
առնցպատոյ 'ի Սպանիա զթուղթ մի Ֆօր-
թիսի գրեալ առ Կարոլոս հինգերորդ՝ խո-
կոյն զկնի հասանելոյ նր նաւու 'ի Թագա-
ւորութիւն Մեքսիքոյի, և որ մինչև ցայժմ
ոչ է հրատարակեալ, եկն 'ի միտս իմ, թէ
մինչ կայսրն չու առնէր 'ի Գերմանիա 'ի
ժմկին, յորում պատգամաւորքն Ֆօրթիսի
ժամանեցին յԵւրոպիա. թուղթն վրատա-
հացեալ նց հաւանական էր, թէ պահիւր
'ի կայսերական դրատանն Վիեննայու. Հաղոր-
դեցի զայս խորհդ տպետին Ռուպերթոսի
Մուրրայի Քէիթայ. Ը ուրում կայսյ զպա-
տիւ կելոյ յերկար ժմկ 'ի սիրելուէ. և ըն-
կալայ վաղվաղակի զերկրուն գիտելոյ, թէ
առ այսպիսի խնդիր կայսերական Լուսքե-
լական Մ եհունի իւր հաճեցաւ շնորհաւո-
րաբար առ հրաման, զի ոչ միայն օրինակ մի
խնդ-

խնդրեն քարտիսին, (յորժամ գտցի,) այլև
զինչ և լցէ Թղթոյ գրատանն, որ կարիցէ
լոյս տալ պատմութեան Ա՛մերիկոյ վերաբերեա-
ցի առ իս. Գիրն Փորթիսի ոչ կայ 'ի կայ-
սերական գրատան. բայց այո՛ օրինակ մի ար-
ժանահաւատ վկայեն ձեռամբ նոտարի՝ այ-
լոյ երից Թղթոյ գրեցելոյ 'ի մեծաւորաց
հաստուածոցն հաստատելոց 'ի Փորթիսէ 'ի
Ս. Երաշխաւորս, (զոր 'ի մէջ բերի յերկրորդ
մասաննին յերես. 32. Իմո՛ Ա՛նգլիական Բնա-
գրէն.) գտեն, նոյնհետայն օրինակեցաւ վերս-
տին և առաքեցաւ առ իս. Այս Թուղթ ոչ
նուազ ցանցաղագիւտ և հաւաստարանի սա-
կաւ ծանուցեն երբեք զմիւսն. որ էր առար-
կայ հետազօտութեան իմոց, ժամանեաց առ իս,
յորժամ մասն պատմութեան, առ որ վերաբե-
րի, տպագրել էր. Սակայն ետու տեղեկու-
թիւնս զայնմանէ որ պարունակի 'ի նմա առա-
ւել արժանի գիտելոյ 'ի վախճանի ծանուց-
մանցն և պարզաբանութեանցն յերկրորդ մա-
տենին. 'Ի միասին 'ը այսմ քարտիսի ընկալայ
զպատճէնն Թղթոյ ինչ Փորթիսի. որ է
պատմականն առաքման իւրոյ 'ի Հոնտուրաս
շուրջ զորով ոչ հաւատամ կարևոր մտանել
'ի մասնաւորութիւն իմն. և ընկալայ նմանապ
զայն հետաքրքրական նկարն մեքսիքական.
զոր գծագրեցի յերկրորդ մատենին երես.
284: Հետազօտութիւնք իմ 'ի Փեթրոպուրկ
նպաստաւորեն եղեն հաւասար զիւրութեամբ և
յաջողութեամբ. Մինչդեռ կայի 'ի քննութեան ա-

ռաւել մտաւոր հաղորդութե՛ան 'ի մէջ ցա-
մաքին մերոյ և ցամաքին Ամերիկոյ. կարևոր
համարեցայ հետևաբար ստանալ զարժա-
նահաւատ տեղեկութ՛ի զերկրագոտութեյն
Ռուսաց 'ի նաւարկուէ իւրեանց 'ի Քամ-
շաթքայ դէպ 'ի ծովեզրն Ամերիկոյ. Առա-
ւել հաւաստի պատմութ՛ին առաջին ճա-
նապարհորդուէ իւրեանց յամին 1741 եղև
հրատարակեալ 'ի Մուլլերայ և 'ի Գմելի-
նոս. Բազում արտաքին հեղինակք ետուն
զանձինս իմանալ, թէ արքունիքն Ռուսիոյ
դիտմամբ ունէցի թաքուցել զյառաջադի-
մութիւն արարեալս 'ի նորագոյն նաւողաց. և
թէ հանդուրժէ, զի աշխարհս իցէ պատա-
ղեցուցեն սուտ պատմութ̃ք ճանապարհոր-
դուէնց. Այլապէս իմն ընթացք երևէր ինձ
ներհակ այնց ազատական մտաց և այնմ
պատապարտուէ գիտուէց, վ̃ որոյ առաջիկայ
Կայսրուհին Ռուսիոյ է գերահռչակեալ. և
ոչ իսկ կարէի տեսանել զպատճառ ինչ քա-
ղաքական. որոյ վ̃ լինէր ինձ պատկերակեր-
պել ոչ բարուոք արարեալ զխնդրելն զտեղե-
կուէ իմն զվերջին ձեռնարկուէց Ռուսաց
առ 'ի բանալ զհաղորդուէ իմն 'ի մէջ Ասիոյ
և Ամերիկոյ. Վարդապետն Ռօպէրտսօն զեր-
զգօն համիշխարհիկն իմ և առաջին բժիշկն
կայսրուհւոյն ներկայացոյց զաղերս իմ կայ-
սերական վեհութե իւրում. որ ոչ միայն
անարգեաց զինչ և իցէ խորհուրդ թաքուց-
ման.

ման. այլ և խնկոյն եւ Հրաման զի Թարգ-
մանեսցի օրական մատեանն Նաւապետին
Բրէնեցինու. որ առաջնորդեաց ճանապար
Հորդութեան երկրածանօթութեան. արարեալ
Հրապարական աւագութեամբ. և թէ էցէ ես
օրինակեալ վասն պիտոյից իմոց բնագիր մա-
տեան նորա. Ունելով դիւրութի խորհրդակ-
ցելոյ այսպիսի Հրահանգաց, կարող եղէներ
կայացուցանել զտեսիլ իմն առաջադիմու-
թեան և տարածութեան երկրածանօթութեանցն
Ռուսաց առաւել անվթար քան որչափ ի-
ցեն մինչև ցայժմ մատնաւորեալ աշխարհի:
Նաև յայլ կողմանց ընկալայ զծանօթութիւնս
շահաւէտս ծանրակշիռս. Ռապետն Փին-
թօն սպասաւոր Փորթուկալլիոյ յարքու-
նիսն մեծին Բրետանիոյ, որ կալաւ զհրա-
մանատարութիւն քաղուած ամս 'ի Սաթակ-
րօս 'ի վերայ կալուածոյ միոյ Փորթուկեզաց
'ի ներքսագոյն մասին Պրասիլեայ, ուր հն-
դիկք են բազմաթիւք, և վարկ նորա սակաւ
ինչ այլայլեալ յաղագս յաճախութեան ընդ
Եւրոպացւոց, հաճեցաւ լինել պատասխա-
նել հարցմանց ինչ վերաբերելոց առ յատ-
կութի և առ սահմանադրութիւս ազգացն
Ամերիկոյ. և խրախուսեաց զիս առնել նմա
զառաջադրութիւն զայն, բարութեամբ, որով
ընկալեալ էր կանխաւ զթախանձանս 'ի կող-
մանէ իմմէ. Յուցին ինձ պատասխանիք իւր,
թէ նա նկատեալ էր մասդիր տարորոշում

զըղձալի տուարկայն. զորս աստիճան իւր
տուաջի առնէր նմա 'ի տեսութի. և ջերաղ-
միցս հեռուեցոյ նմա, երբև մեռուլ յառա-
ւել լուսաւորեալ առաջնորդաց իմոց։
Պարոն Մուրատն, որոյ ընտիր Թարգմանու-
թեան Կարոլոսի հինգերորդի
պարտական եմ զբարի պատահումն այնր
գործոյ 'ի ցամաքին, հոգացաւ զպատասխա-
նիս առ նոյն խնդիրսն իմ 'ի պարոնէ Պուկա-
յեն վիլլեայ. որ կալեալ էր առ ինք նշմարելոյ
զհնդիկս հիւսիսային և հարաւային Ամերի-
կոյ. և 'ի պարոն Կոտինու կրտսերոյ, որ եկաց
զամս հնգետասան 'ի մէջ հնդկաց 'ի Բուե-
թօ և զքսան 'ի Բայինէնէ. Վ`երջինքն են
տուաւել յարգոյք վասն լինելոյ՝ քննէլք 'ի
պարոնէ Բօնտամինեայ. որ սակաւ եօթնե-
կօք յառաջ քան զմահ իւր արար յայնս զփոք-
րիկ յաւելուածս ինչ. որք կարեն նկատիլ
իբր վախճանական ձիգն այնր սիրոյ առ գի-
տութիւն. որ պատաղեցոյց զկեանս իւր ողջոյն։
Ա.յս հետազօտութիւք իմ ոչ եղեն սահմանա-
ւորեալք առ մի կողմն Ամերիկոյ. Բ.դեշխն
Հութշինսօն յանձն էառ զաշխատութիւն
յանձն առնելոյ զԹախանձանս իմ տեարցն
Հաւըէյեայ և Պրայինեբոսայ երկուց քա-
րոզչաց կարգելոց 'ի մէջ հնդկաց հինգ ազ-
գաց. որք շնորհեցին ինձ զպէխիս իւրեանց.
յորոց վերաուի զնոցա մեծ ծանօթութի ժո-
ղովրդեանն, զորոյ գծագրեն զվարս. 'ի Գու-

)( )(                    լեալ

լեւլմոսէ Սմիթու Ճշգրիտ վիպասանէ Նորոյ
Եօրքայ ընկալայ զպիտանի տեղեկութիւնս. Նոր
ժամէց 'ի վիպասանութէ մերոց Հատուածոց
Անկլեզաց 'ի Հիւսիսային Ամերիկա, կա-
լայց պարապ յայտ առնելոյ, թէ որչափ պա-
րաւանդեն եմ՝ բազմաց այլոց ազնուականաց
այնր երկրի ։
'Ի յարգոյ ժողովածոյ Ճանապարհորդու-
թեց արարելոյ 'ի պարոն Աղեքսանդրոսէ
Տալրիմփլեա, զորոյ մատուցուէ առ պատ-
մութի Նաւարկութե եւ երկրածանօթու-
թե քաջ տեղեկացեալ է աշխարհս, ըն-
կալայ զբազում ցանցաղագիւտ գրեանս, եւ
մանաւորաբար զերկուս մեծամեծ մա-
տեանս յիշատակաց, ըստ մասին ձեռագիրս
եւ ըստ մասին տպագրեալս. որք ներկայա-
ցուցեալ եղեն յաքունեան Սպանիոյ առ
թագաւորութբն Փիլիպպոսի երրորդի եւ Փի-
լիպպոսի չորրորդի. 'Ի սոցանէ հանի ըզ-
բազում ցանցաղագիւտ մանաւորութիւս
նկատմամբ ներքին վիճակի Հատուածոցն
Սպանիացւոց եւ պէսպէս առաջարկութեց
կերպացելոց վ՟ բարեզունացուցման իւր-
եանց. Արոլհեան այս հաւաքումն յիշա-
տակաց պատկանէր երբեմն առ գրատունն
Քօլպերթայ, լաւ համարեցայ 'ի մէջ բե-
րել զնա՛ նովին իսկ անուամբ ։
Յայս ամենայն գրեանս եւ 'ի ձեռագիրս
հայեցայ այնու մտադրութբ, զոր պահան-
ջէր անհնածութէ վիպասանի միոյ պարտա-

կան առ ազգ մարդկան. և ապաստանելով
'ի նմա մանրամասնաբար, հնարեցայ վեր-
կայութ հաստատել զայն ամ, որ պատմեալ
է յինէն. Որչափ առաւել հայիմ 'ի բնու-
թի պատմական շարադրութե, այնչափ ա-
ռաւել հաւատամ զհարկաւորութի այսր
երկխաղած զգուշութե. Պատմիչն, որ յե-
շատակէ զդիպուածս ժամանակին իւրոյ.
գտանէ զհաւատարմութի 'ի չափու կար-
ծեացն, զոր ունի աշխարհս շուրջ զհան-
գամանօք տեղեկութե նր և ճշմարտախօ-
սութե. Նա, որ ստորագրէ զգործս հե-
ռաւոր երեք ժմկի ոչ կարէ պահանջել ըզ-
հաւատս յումեքէ, եթէ 'ի ցոյց ստացու-
ծոյ ոչ մարթի յառաջ բերել զճշմարտու-
թի. Առանց սորա կարօղ է նա գրել զա-
ռասպել ինչ հաճոյական. բայց ոչ երբեք
առնցի թէ նա յօրինեալ իցէ զարժանահա-
ւատ իմն պատմութի. Հաստատեաց զիս
յայսոսիկ միտս կարծիքն հեղինակի միոյ
Դիպպոն կոչեցելոյ. որ 'ի ճարտարմտու-
թենէ իւրմէ, 'ի ներհունութէ, և յընտ-
րողութենէ զետեղեալ եղև արժանապէս
'ի վսեմ աստիճանի 'ի մէջ գերազանցա-
գոյն վիպասանից ժամանակիս. Բաւա-
կան եղև ինձ միայն ակնարկութիւն նո-
րա առ 'ի հրատարակել զցանկ իմ գրեանց
Սպանիացւոց, որոց խորհրդակցեցայ. Նա
էր սովորութին մուծեալ յանցեն հարիւրե-

կին. և նկատէր եթէ վկայութիւն իմն զօրելի մտավարժութեան հեղինակի միոյ. Յառաջիկայս թերևս կարէ դատել եթէ գործ իմն ցուցամոլութեան. այլ քանզի բազմք յայսց գրեանց ոչ ճանաչին 'ի մեծն Բրիտանիա, ոչ էի կարօղ դնել առ նոսա եթէ առ վկայութիւն իմն առանց լցուցանելոյ զէջն ցանկին անուանց նց. և ցանկն աներկբայ պիտանի լինելոց է նց, որք կամիցին հետևել ինձ ընդ այս ճանապարհ հետազօտութեան իմոյ ։

Ընթերցողք իմ նկատեսցեն. թէ 'ի յիշելն զգումարս ինչ դրամոց միօրինակ կալոյ զոմն հաշուելոյ ճիշդ փեսօսի, որ է փեցայն սպանիոյ. Յամերիկա Փուէրթ փեցայն է միայն, որ ճանաչի. և միշտ իմացեալ լինի զայսմանէ, յորժամ անուանի գումար ինչ ելեն յամերիկոյ, Փուէրթ փեսօսն կամ փեցայն զօրէն այլոց դրամոց այլայլեալ է 'ի հաշուի իւրում. բայց խրատեալ եղէ, առանց հայելոյ յայսոսիկ դոյզն պէսպիսութիւնս նկատել զայն եթէ հաւասար չորից շիլլինից Անկլէզաց և վեց սօլտեաց Իտալացւոց, որք առնեն եթէ տասն լիրէ վենետկոյ. Սակայն պիտոյ է յուշածել, թէ 'ի վեշտասաներորդ հարիւրեկին իրական արժողութեամբ միոյ փեսօսի մարթ էր աշխատեցուցանել զդք, կամ գնել ինչ հինգ կամ վեց անգամ աւելի քան զոր առնէ այժմյս ։

Գ. Ռ.

# ԳՈՒՄԱՐ

## Յօդուածոց պարունակելոց յայսմ առաջնում հատորի։

### Յառաջին Դպրութեան։

Երկիրն սակաւ առ սակաւ մարդաբնակ եղեալ. . . . Երես. 1.
Առաջին տեղափոխութիւնք ցամաքաւ. . Անդէն.
Առաջին հայթհայթանք նաւարկութեան. . 2.
Ներածութիւն տուրևառութեան. . . . 3.
Անկատարութիւն նաւարկութեան առ նախնիս. . 5.
Նաւարկութիւն և տուրևառութիւն Եգիպտացւոց. 6.
Ի վ՟ր Փիւնիկեցւոց. . . . . Անդ.
Ի վ՟ր Եբրայեցւոց. . . . . 8.
Ի վ՟ր Կարթագենեցւոց . . . . 9.
Ի վ՟ր Յունաց. . . . . . 15.
Ի վ՟ր Հռոմայեցւոց. . . . . 23.
Երկրածանօթութիւնք նախնեաց ընդ ցամաք. 28.
Անկատարութիւն երկրական ճանաչմանց առ նախնիս. . . . . . 30.
Նշանաւոր հաւաստիք այսր իմն. . . 31.
Օգուտն Երկրագրութեան 'ի ձեռն Պտղոմեայ. 36.
Յարձակումն խուժադուժ ազգաց 'ի վ՟ր Հռոմէական կայսերութեան. . . . 37.
Արդիւնք տիրապետութեանց նոցա 'ի վ՟ր տուրևառական հաղորդակցութեան. . . Անդ.
Ճանաչումն վաճառականութեան նախապահեալ միշտ յարևելեան կայսերութեան. 39.
Նշոյլ լուսոյ 'ի մէջ Արաբացւոց. . . 40.
Վերածնութիւն տուրևառութեան և նաւարկութեան Եւրոպայի. . . . . Անդ.

Յառաջադիմութիւն նոցա նպաստաւորեալ 'ի խաչակրաց. . . . . . 42.
Երկրագտութեանց ճանապարհորդաց ընդ ցամաք. 44.
Ի գիւտոյ կողմնացուցին, որ է տուփն նաւավարաց . . . . . 48.
Երևոյթ ինչ հոգւոյ համարձակագունի 'ի նաւել . . . . . . 51.
Առաջին կանոնաւոր գաղափարն երկրածանօթութեան. . . . . . . 52.
Պարագայքն, որք այնմ գործակից եղեն . 53.
Առաջին հայթհայթանք. . . . 54.
Արքայն Հենրիկոս առաջնորդ երկրածանօթութեանցն փորթուկեզաց. . . 57.
Ծանօթութիւն փորթօ սանթօին. . . 59.
Գիւտ Մադերայ կղզւոյն. . . . 60.
Արկնումն ընդ գլուխն Պոյատոր. . . անդ.
Յառաջեն դէպ յարևադարձն. . . 61.
Հիանան ընդ գիւտսն. . . . . անդ.
Շնորհելն քահանայապետին փորթուկալլիոյ զգտեալ երկիրսն 'ի նոցանէ. . 63.
Համբաւ և յառաջադիմութիւնք երկրագտութեանց փորթուկեզաց. . . . 65.
Մահ արքային Հենրիկոսի. . . . 66.
Ինչք երկրագտութեան թուլանայ առ ժամն ինչ. 67.
Վերստին կենդանանայ առաւել եռանդիւ. անդ.
Յառաջադիմութիւնք իւր. . . . 68.
Յոյս գտանելոյ զնոր ինն ճանապարհ առ արևելեան Հնդիկս. . . . . 69.
Ճանապարհորդութիւն Բարթողոմէայ Դիացու 71.
Ստուգագոյն յոյսք յառաջադիմութեան. . 72.
Նախապատրաստութիւնք վասն այլոյ իրիք ճանապարհորդութեան. . . . . 73.

Յերկրորդում Դպրութեան:

Ծնունդ և դաստիարակութիւն Քոլոմպոսի. 75.

Մանէ

Մտանէ 'ի ծառայութիւն փորթուկալլիոյ. . 77.
Արդիւնք երկրագործութեանց նոցա 'ի նմա. . 78.
Կերպ եւ գաղափար նոր իմն ընթացից 'ի
Հնդկաստան . . . . . 79.
Սկզբունք, յորոց վ̄ն տեսականութիւն իւր կեր-
պաւորեալ էր. . . . . 80.
Յառաջադիմութիւնք իւր առ 'ի դնել զայն 'ի
գործ. . . . . . 85.
Դարձոյց զինքն առ Ջ'ենովացիս . . 86.
Առ արքայն փորթուկալլիոյ. . . . անդ.
Թողու զփորթուկալլիա եւ երթայ յարքու-
նիսն Սպանիոյ. . . . 88.
Առաքէ զեղբայր իւր յԱնգլիա. . . 89.
Խոչք բարեյաջողութեան իւրոյ 'ի Սպանիա. անդ.
Առաջարկութիւն իւր քննեալ 'ի տգէտ դա-
տաւորաց. . . . . . 90.
Խրակութիւն եղբօր իւրոյ յԱնգլիա. . . 92.
Քօլոմպոս տեսանէ զնշմարանս քաջալերու-
թեան 'ի Սպանիա. . . . . 93.
Մնայ վերստին խոտեալ. . . . 95.
Յաջողի 'ի վախճանի երջանկաբար . . 97.
Դաշինք միաբանութեան իւրոյ ընդ Սպանիոյ. 99.
Նախապատրաստութիւնք վ̄ն ճանապարհորդութեան. 100.
Մեկնիլն իւր 'ի Սպանիոյ. . . . 103.
Հսկողութիւն եւ ուշադրութիւն Քօլոմպոսի. . 105.
Կասկածք եւ երկիւղք խուժանին իւրոյ. . 106.
Յառաջացումն նոցա. . . . . 108.
Աշալրջութիւն Քօլոմպոսի 'ի հանդարտեցու-
ցանելն զն̄ս . . . . . 110.
Վերադառնան երկիւղք նոցա. . . անդ.
Յոյսք յաջողութեան քաջալերեն. . . 112.
Երկիրն յայտնեցաւ. . . . . անդ.
Յուրբաթու 12. Հոկտեմբերի. . . 113.
Առաջին հանդիպումն ընդ ազգայնոյն. . 114.
փոխադարձ հիացումն. . . . . անդ.

Քօլոմպոս առնու յինքն զանուն ծովակալի և փոխարքայի. . . . . 116.
Յառաջ խաղայ ընդ Հարաւակողմն . . անդ.
Գտանէ զՔուպա. . . . . 117.
Սարկածք իւր նկատմամբ այսպիսի իրաց. 118.
Գտանէ զկղզին Սպանիոլա. . . . 120.
Մինն 'ի նաւուց իւրոց կորուսեալ. . 122.
Անձկութիւն Քօլոմպոսի . . . . 125.
Որոշէ թողուլ զմասն ինչ խուժանին իւրոյ 'ի կղզւոջն. . . . . . 126.
Ընդունի զհաւանութիւն ազգայնոցն. . . անդ.
Շինէ զամրոց մի. . . . . 127.
Հրահանգք իւր առ նոսա, զորս եթող անդէն. . . . . . 129.
Որոշէ փութով վերադառնալ յԵւրոպիա. 130.
Զգաստութիւն Քօլոմպոսի. . . . 131.
Ապաւինի յԱզօրէս. . . . . 134.
'Ի փեբրվարի քսան և չորսն մեկնի. . 135.
Ժամանէ 'ի Լիսպոնա 'ի մարտի չորսն. . անդ.
Դարձ առնէ 'ի Սպանիա. . . . 136.
Ընդունելութիւն իւր. . . . . 137.
Ապշութիւն ազգի մարդկան վն երկրագտութեց. . . . . . . 145.
Նախապատրաստութիւնք վն երկրորդ ճպհորդութե. . . . . . 147.
Իրաւունքն Սպանիոյ 'ի վն նորոյ աշխարհի հաստատեալ 'ի պապէն. . . . 148.
Երկրորդ ճպհորդութիւն Քօլոմպոսի. . 149.
Ժամանէ 'ի Սպանիոլա . . . . 150.
Թէ զինչ եղև արանցն, զորս թողեալ էր անդէն . . . . . . 151.
Հանճարեղ գնացք Քօլոմպոսի. . . 152.
Տժգոհութիւն հետևողաց իւրոց. . . 153.
Քննէ զվիճակ երկրին . . . . 154.
Աճէ տառապանք և տհաճութիւն հատուածոյն. 156.

Քօ-

Կօլոմպոս ձեռնարկէ 'ի նոր երկրագնտութիս. . . . . . . . 157.
'Ի դարձին իւրում գտանէ զեղբայր իւր Բարթողոմէոս 'ի Եղիսաբեթ . . 160.
Հնդիկք առնուն զէնս ընդդէմ Սպանիացւոց. անդ.
Մարտ ընդ նոսա. . . . . . . 162.
Սակ եդեալ 'ի վ՟ր նոցա. . . . 165.
Ճակատագրական արդասիք այսր հայթհայթանաց. . . . . . 166.
Շփոթք ընդդէմ Կօլոմպոսի յարքունեան Սպանիոյ. . . . . . 167.
Դառնայ 'ի Սպանիա. . . . . 169.
Ընդունելութիւն իւր անդ. . . . 170.
Հանգամանք կերպաւորեալ առաւել կանոնաւոր հարգունութեան հաստուածոյ միոյ. 171.
Պակասութիւն յայսմ յառաջատեւութեան. . 172.
'Ի գործ դնի դանդաղ . . . . 173.
Երրորդ ճանապարհորդութիւն Կօլոմպոսի. . . 174.
Գտանէ զշարունակն Ամերիկոյ. . . 176.
Վիճակ Սպանիոլայի 'ի հասանելն իւրում յայն մասն. . . . . . 179.
Ապստամբութիւն Ռօլտանու. . . . անդ.
Ցածուցեալ վ՟ն խոհական գնացից Կօլոմպոսի. . . . . . . . 181.
Հաստատի նոր լծմ եղանակ հարգունութեան. 182.
Ճ՟պհորդութիւն Վասքօի Կամայ առ արեւելեան Հնդիկս ընդ Կափօ տի պոնա ըսփերանցա. . . . . . 184.
Երկրագնտութիւնք շարունակեալք 'ի Սպանիա 'ի մասնաւոր բաղդորդաց. . . 188.
Ընկերակցեցաւ յԱմերիկոսէ վեսպուչչեայ. 189.
Ճանապարհորդութիւն Ալոնծոսի Նինեայ. 193.
'Ի վ՟ր Վինչենցիոսի Եանեզայ Փինծոնի. . անդ.
Փորթուկեզք գտանեն զԲրասիլէ. . . 194.
Անքենայութիւն ընդդէմ Կօլոմպոսի. . 195.

Անգութ

Ազդումն նշ 'ի վն Ֆերտինանտոսի և Եղի-սաբեթի. . . . . . . 197.
Ճակատագրական արգասիք սոցա . . 198.
Քոլոմպոս առաքեալ 'ի Սպանիա 'ի շղթայս. 199.
Եղեալ յազատութեն, բայց զրկեալ յամ իշխանութէ. . . . . . 201.
Յառաջադիմութի երկրագտութե. . . 203.
Օվանտոս կարգեալ կառավար Սպանիոլայի. անդ.
Հաստատին նոր կանոնաւորմունք. . . 205.
Անհաճոյ կայաւորութի Քոլոմպոսի. . 206.
Կերպաւորէ զնոր առաջարկութիս երկրագը-տութե. . . . . . 207
Չորրորդ ճպհորդութի իւր. . . . 208.
Խնդրէ 'ի զուր զանցս ինչ առ Հնդկայինն Ովկիանոս . . . . . . . 211.
Նաւաբեկ լինի առ ծովափամբն Ճամա-մայիքայ. . . . . . 212.
Տառապանք իւր և չարչարանք յայնմ տեղւոջ 214.
Անողորմ սատակացումն ապստամբելոցն. . 217.
Ազատութի իւր, և հասանելն 'ի Սպանիոլա. 219.
Մահ թագուհւոյն Եղիսաբեթի. . . 220.
Մահ Քոլոմպոսի . . . . . 222.

## Յերրորդ Դպրութիւն.

Պատերազմ ընդ Հնդկաց. . . . 224.
Անողորմ և նենգաւոր գնացք Օվանտոսի. 226.
Հնդիկք անձնատուր լինին. և որպիսի հե-տեւութիք յայնմանէ. . . . 228.
Յառաջադիմութիք հաստածոյն. . . 230.
Քաղաքական կանոնաւորմունք Ֆերտինանտ. անդ.
Խիղճ Հնդկաց սրայ նուաճի. . . 232.
Նոր երկրագիւտք և նորանոր բնակութիք. 234.
Գնէկոս Քոլոմպոս կարգեալ բդեաշխ Սպա-նիոլայի. . . . . . 235.

Տէրն

Տէրն Դեկոս երթայ 'ի Սպանիոլա. . 237.
Որս մարգարտայն Քուպակուայ. . . անդ.
Նոր ճնպհորդութիւնք. . . . . 238.
Հարգունութիւն փորձեալ 'ի շարունակին. . անդ.
Տառապանք, որք զհետ երթան այնմ. . 243.
Տիրապետութիւն Քուպայի. . . . 246.
Ծանօթութիւն Ֆլորիտայի. . . . 249.
Յառաջադիմութիւնք Պալպոայ 'ի Տարիէն. . 251.
Նշանագծութիւնքն, զոր կերպաւորէ նա. . 252.
Դժուարութիւն կատարելոյ զայն. . . 253.
Ծանօթութիւն հարաւային ծովուն . . 254.
Ընդունի զտեղեկութիւն հարստագոյն իրիք երկրի . . . . . . 257.
Պարաւանդեալ առ 'ի դարձ առնել. . անդ.
Փետրարիոս կարգեալ բդեաշխ Տարիէնու. 258.
Տարաձայնութիւն 'ի մէջ նորա և Պալպոայ. 260.
Բռնական յառաջ խաղալն ընդդէմ Պալպոայ 262.
Նոր երկրագիւտք. . . . . 265.
Վիճակ նժդեհութեան Սպանիոլայի . . 266.
Հակառակութիւն շուրջ կվարմամբն ընդ Հնդկաց. . . : . . 268.
Ներհական վճիռք 'ի վ̅ր այսր յօդուածոյ. 269.
Արդիւնք այսր ամենայնի. . . . 271.
Բարթողոմէոս Լասքազաս երևի 'ի պաշտպանութիւն Հնդկաց. . . . . անդ.
Վարէ զդատ նց յարքունիսն Սպանիոյ. . 272.
Կանոնաւորութիւնք Կարտինալին Քսիմենեայ 273.
Հանգամանքն, որով 'ի գործ եդան. . 274.
Լասքազաս ոչ մնայ շատացեալ. . : 277.
Վարմունքն իւր ընդ գործակալացն Կառոլոսի հինգերորդի . . . . 278.
Առաջարկութիւն լրացուցանելոյ զհատուածոն խափշկօք, այսինքն, սևաւ ափրիկեցւովք . . . . . . 279.

Լաս֊

Լասքաղաս առաջադրէ, զի առաքեսցին գիւղականք 'ի Սպանիոյ. . . . . 281.
Կերպաւորէ զգաղափար նոր իմն նժդեհութեան. 282.
Ընկալեալ է սիրողաբար. . . . 283.
Հանդիսական որոշումն նկատմամբ եղանակին վարելոյ ընդ Հնդկաց. . . 284.
Առաջարկութիւն Լասքազայ հաւանեալ. . 286.
Նախապատրաստութիւնք իւր կատարելոյ զայն. 287.
Չու առնէ յԱմերիկա. և պատահի խոչընդոտակաց. . . . . . անդ.
Աշխատի առ 'ի յաղթել այնց. . . 289.
Մախճանական անկումն առաջարկութեան իւրոյ. 290.
Նոր երկրագիւտք ընդ արևմուտս կոյս. . 292.
Ապհարդութիւն Կրիալվայ. . . . 296.
Գտանէ զնորն Սպանիա. . . . 297.
Պատճառք վասն ոչ թողլոյ անդէն զնժդեհութիւն իմն. . . . . 299.
Նախապատրաստութիւնք վասն այլոյ իրիք շահատակութեան. . . . . . 300.

## Ի Չորրորդ Գրքումն :

Ընդարձակ տարածութիւն նորոյ աշխարհի. 304.
Առաջի առնէ զմեծամեծ առարկայս տեսութեան. 305.
Լերինք իւր . . . . . . անդ.
Գետք . . . . . . . 306.
Լիճք . . . . . . . 307.
Ձև իւր նպաստաւոր տուրևառութեան. . անդ.
Որակութիւն նահանգին իւրոյ . . . 310.
Առաւել տիրողութիւն ցրտոյ. . . . 311.
Պատճառք այսր ամի. . . . . 312.
Յորում պայմանի էր յորժամ զառաջինն գտեալ եղև . . . . . 321.
Խոտաբորոտ և անգործ. . . . անդ.
Անառողջաբար. . . . . . 324.

Ընչա-

Ընչաւորք իւր. . . . . . 325.
Օճառունք և ժլժմունք. . . . . 329.
Թռչունքն. . . . . . 330.
Գետինն. . . . . . 331.
Օրարդ մարդաբնակ եղեալ Ամերիկա. . 334.
Զինք զայսու աւանդութի՛ 'ի մէջ Ամերիկա-
ցւոց. . . . . . . անդ.
Զէսպէս տեսականութիք. . . . 335.
Ոչ պարտի հիմնել 'ի վ՛ր լոկ վարկածից. 336.
Այլ ոչ 'ի վ՛ր նմանութե՛ բարուց. . . 337.
Կամ կրօնական ծիսից . . . . 339.
Ոչ բնակացեալ յազգաց ոմանց վսեմաբար
քաղաքականացելոց. . . . 340.
Այլ ոչ 'ի հարաւային կողմանց մերոյս շարու-
նակի. . . . . . . 341.
Երկու շարունակք երևին լինել հպաւորք
ընդ հիւսիս. . . . . . 342.
Այս հաւաստեալ է յերկրածանօթութեանց. 343.
Այլ հաղորդակցութի՛ ընդ հիւսիսային արև-
մուտս . . . . . . 351.
Հաւանականաբար բնիմամարդացեալ 'ի հիւ-
սիսային արևելից. . . . . 353.
Գայման և յատկութի՛ Ամերիկացւոց. . 355.
Նուաղ կրթեալք քան զայլ զինչևիցէ մասն
երկրի . . . . . . 356.
Այս հետազօտութի՛ սահմանաւորեալ առ
բրտագոյն ցեղս . . . . 357.
Դժուարին է տեղեկանալն զայնմանէ. . 358.
Այն անընդունակութե՛ առաջնոց դիտողաց. 359.
Ա՛յն նախադատութե՛նց. . . . . 360.
Ի՛ դրութե՛նց փիլիսոփայից. . . . անդ.
Ոճն պահեալ 'ի հետազօտութե՛. . . 363.
Բաղկացութի՛ մարմնոյ նոցա . . . 364.
Որակութի՛ մարմնոյ. . . . . անդ.
Ծկարագոյնք . . . . . . 366.

Գոյն

Նուազ յօժարութիւն կերակրոյ. . . 367.
Նուազ սաստիկք ՚ի ցանկութեան. . . 368.
Խորհրդածութիւնք նկատմամբ ասացելոց իրաց 379.
Ոչոք ՚ի նոցանէ է տգեղ. . . . 383.
Միակերպութիւն ՚ի տեսիլ նոցա. . . 385.
Վիճակ առողջութեան նոցա. . . . 395.
Հիւանդութիւնք. . . . . . 396.
Կարողութիւն և որպիսութիւն մտաց նոցա. . 399.
Իմացական կարողութիւնք յոյժ կոպարաւո-
րեալք . . . . . . անդ.
Ոչ ունին զգաղափարս խոկման. . . 402.
Ներգործական ջանք մտաց սակաւք և թոյլք. 405.
Պէսպիսութիւն ինչ նկատմամբ այսր ամի. 406.
Ընկերական վիճակ նոցա. . . . 414.
Չունին միաւորութիւն . . . . անդ.
Պայման կանանց. . . . . 415.
Կանայք ոչ են զաւակաբերք յոյժ. . 418.
Հայրական գութ և պարտականութիւն որդւոյ. 420.
Սահմանադրութիւնք քաղաքականք. . . 422.
Իշխանակն ապրստի. . . . . անդ.
Որսովք. . . . . . , 425.
Երկրագործութիւն . . . . . 427.
Պէսպէս պտուղ մշակութեան նոցա. . . 428.
Երկու պատճառք անկատարութեան իւրոյ. . 432.
Պակասութիւն շնչաւորացն ընտանեցելոց. . 433.
Պակասութիւն պիտանի հրահալելեաց. . 435.
Սահմանադրութիւնք քաղաքականք յառաջ
եկեալք յայսմ վիճակէ. . . . 437.
Բաժանեալք ՚ի փոքրիկ հասարակութիւնս. . անդ.
Անտեղեակք գաղափարացն յատկութեան. . 440.
Խորին ճանաչումն հաւասարութեան և անկա-
խութեան . . . . : . 443.
Ճանաչումն ստորակարգութեան անկատար . 445.
Առ որ ժողովուրդս մերձեցուցանելի այս
ստորագրութիւնք. . . . . 447.

Ան-

Նշանաւոր ինչ երեւոյթք. . . . 449.
Անասնաւորաբար յոմանս 'ի ջերմագոյն կող-
մանց. . . . . . . անդ.
'Ի մէջ Նաթքչեզաց. . . . . 450.
'Ի կղզիսն. . . . . . . 451.
'Ի Պօկսիթա . . . . . . 452.
Պատճառք այսց անկանոնաւոր երեւութից. 453.
Արհեստ նոցա առնելոյ պատերազմ. . 456.
Զօրժինչք դիմադրաւ լինելոյ նոցա 'ի պա-
տերազմ. . . . . . 457.
Այս հոգւոյ վրէժխնդրութեան. , . . անդ.
Աստուստ ծնանի մոլեգնութիւն 'ի պատերազ-
մունս նոցա. . . . . . անդ.
Իւ մշտնջենաւորութի նոցա. . . . 459.
Իշանակն շարունակելոյ զպատերազմն. . 461.
Ոչ համարելի առ պակասութի ինչ սրտե-
ղութեան . . . . . . 464.
Անընդունակութի կարգի, կամ կրթութեան. 466.
Վարուքն ընդ կալանաւորաց. . . . 468.
Երբեմն ուտեն զկալանաւորս իւրեանց. . 471.
Սպառնալք 'ի մշտնջենաւոր պատերազմաց
իւրեանց. . . . . . 479.
Լրացուցանեն զգունդս իւրեանց որդեգրե-
լով զկալանաւորս. . . . . 480.
Են վայրագոյնք կիրթ ազգացն 'ի պատե-
րազմի. . . . . . . 482.
Օրէնք նոցա. . . . . . 491.
Տնենի կահք նոցա. . . . . 492.
Կազմութի քանօէից իւրեանց. . . 494.
Յեղգութիւն, որով տան զանձինս յաշխա-
տութի . . . . . . 495.
Գոյութիւն այ. . . . . . 499.
Նշանաւոր զանազանութիւն 'ի մէջ կրօնա-
կան ճանաչմանց նոցա. . . . 504.
Գրութիւնք Նաթքչեզաց. . . . 505.

Դա-

Ճանաչմունք նոցա պատկանեալք առ անմահութիւն ոգւոյ. . . . . 506.
Ներածէ զնա 'ի թաղել զչէնս ընդ մեռելոց իւրեանց . . . . . 507.
Աւելորդակրօնութիւն յարակցեալ ընդ պաշտօնասիրութեան. . . . . 509.
Այս բաժանումն պատկանի առ բժիշկս. . անդ.
Աստիճանաբար տարածանի. . . . 511.
Ուրոյն բարք. . . . . . 512.
Յօժարութիւն կաքաւելոյ . . . . անդ.
Սէրք մն խաղու. . . . . . 515.
Եւ մն արբենալոյ . . . . . 516.
Տան զմահ ծերոց և հիւանդոտաց. . . 520.
Ընդհանուր վարկումն յատկութեան նոցա . 521.
Իմացական կարողութիւնք. . . . 522.
Քաղաքական քանքարք. . . . 523.
Աստիճան ըղձից. . . . . . 525.
Խստութիւն սրտի. . . . . . 527.
Լռակեցութիւն. . . . . . 529.
Խորամանկութիւն . . . . . 530.
Առաքինութիւն. . . . . . 532.
Քաջութիւն . . . . . . անդ.
Յարումն առ հասարակութիւն իւրեանց. . 533.
Գոհանալն ընդ սեպհական կացութիւն իւրեանց . . . . . . 534.
Հանրական զգուշութիւն նկատմամբ այսր հետազօտութեան . . . . . 536.

# ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿՈՅ.

## ԴՊՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ։

Յառաջադիմութիւն մարդկան 'ի ծանօթանալն և 'ի մարդաբնակ առնելն ըզպէսպէս մասունս երկրի եղև յամր յոյժ. Անցին բազում դարք յառաջ քան զկարող լինել նց հեռանալ 'ի բարեխառն և 'ի բերրի կողմանցն, ուր սկզբնաբար արարիչ նոցա եդեալ էր զնս. Պատճառ առաջին ընդհանրական բաժանման նոցա յայտնի է, բայց ոչ լինի դիտացեալ ընթացք տեղափոխութեանց նոցա, և ժամանակն, յորում տիրեցին նոքա զանազան տեղեացն, յորս բնակին այժմիս. Ոչ պատմութիւն և ոչ աւանդութիւն տան մեզ շուրջ զայսպիսի հեռաւոր պատահմամբք զլոյս, որ բաւական արասցէ զմեզ հետազօտել ստուգութբ իւրք զգործողութիս ազգի մարդկան 'ի տղայութեան ընկերութեանն:
Բայց մարթ է մակաբերել, թէ ամենայն առաջին տեղափոխութիւնք եղեն ցամաքաւ. Ովկիանոսն, որ յամենուստ շրջապատէ զբնակելի երկիրն, ոչ և զանազան ձգմունք ծովուց, որք բաժանեն զմի ցա-

մարն 'ի միւսն, թէպէտ և կարգեալք առ 'ի դիւրացուցանել զհաղորդութիւն 'ի մէջ հեռաւոր տեղեաց, երևին անդուստ 'ի սկզբանէ կերպաւորեալք առ 'ի կանգուցանել զյառաջադիմութիւս մարդկան, և առ 'ի նշանակել զկապարս այնր բաժնի երկրագնտոյն. որում բնութին սահմանեալ էր զայն. Բազում ժամանակաց պէտք եղեն, ('ի դէպ է գոնէ հաւատալ,) յառաջ քան թէ մարդիկ ձեռնարկեսցեն անցանել անդր քան զայս աշխարհս պատնէշ, և լինէին այնչափ փորձք և սրտեայք տալոյ զանձինս դատման հողմոց և ալեաց, կամ թողլոյ զընիկ ափունս բերեանց առ 'ի երթալ 'ի խնդիր հեռաւոր և անծանօթ կողմանց:

Առաջին Հայրենիք Լինել Նաւարկու- թեան. Նաւարկութիւն և շինութիւն նաւուց են արհեստք այնպէս նախանձելիք, և այնպէս մանուածոյք, զի պահանջեն ոչ միայն զօրութիւ մտաց, այլ և զներհմտութիւն բազմաց դարուց յաջորդականաց առ 'ի վերածել զնոսա յատուկան ինչ կատարելութն. 'Ի քանօնայ, որ ծառայեաց զառաջինն առ 'ի փոխադրել զվայրացն 'ի վերայ գետոյն, որ էր նմա արգել որսոյ, մինչև 'ի կերտուած նաւու միոյ բաւականի փոխադրելոյ 'ի հեռաւոր ծովեզերս ըզբազմութիւն մարդկան ապահովութի, եղեալ է զտումն իմն անրաւ. Բազում ջանք եղեն, բազում հմտութիւնք, մեծամեծ աշխատութիւնք և հնարագիտութիւնք, զոր 'ի գործ արկին յառաջ քան զժամանել մարդկան 'ի գլուխ այսր դժուարահաս և ծանրակշիռ ձեռնարկութեան. Աղքատական և անկատար վիճակն, յորում տեսանի նաւարկութիւն 'ի մէջ ազգացն, որք ոչ են երևելապէս քաղաքականացեալք, համեմատի այսմ բաղդատութեան բարեգունութեան խորոյ. և ցուցանէ, թէ 'ի վաղնջուց ժամանակս արհեստն ոչ էր այնչափ յառաջացեալ, մինչև հրաւիրել զմարդիկ առ 'ի ձեռնամուխ լինել 'ի հեռաւոր ճանապարհորդութիւ, կամ փորձել զհեռաւոր երկրածանօթութիւ:

Բայց

Բայց փոփոխակի իբրև արհեստ նաւելոյ ծանու- Նեբրա- ցաւ, նոր իմն տեսակ հաղորդութեան հաստեցաւ ծովըն 'ի մէջ մարդկան. Զատատի առ այս սկիզբն ըստ-- կըսումն այնր կապոյ 'ի մէջ նոցա, որ արժանի է առա-է. կոչելոյ տուրևառութիւն. Մարդիկ, զճշմարիտն ասելով, երևին յոյժ կրթեալք յառաջ քան զինելն տուրևառութեան վասն նոցա առարկայ իմն ծանրակշիռ. Պիտոյ է, թէ արարեալ իցեն ընշանաւոր իմն զարգացումն 'ի քաղաքականացման յառաջ քան զստանալն զգաղափար յատուկ իրաւանց, և թէ զայս գաղափար տպաւորեսցեն յինքեանս այնչափ կատարելապէս՝ որչափ տեղեկացեալ իցեն զպարզագունէ 'ի մէջ դաշնագրութեանց. որպիսի է դաշնագրութիւն փոխանակելոյ ճանապարհաւ փոխելոյ զանգործ իմն տարազ ընդ միւսոյ. Սան այսորիկ խելոյն իբրև այս գոյացական իրաւունքն հաստատեցաւ, և իւրաքանչիւրոք ճանաչէ, թէ ինքն միայն ունի հիմն ստանալոյ կամ օտարացուցանելոյ զայն ամենայն, զոր ինքն պատճառեալ է յատուկ աշխատութեամբ իւրով և յաջողակութեամբ, պիտոյք և աչալրջութիւն բնութեան իւրոյ թելադրէ նմա զնոր իմն հանդամանս աճեցուցանելոյ զստացուածս իւր և զվայելմունս, տրամադրելով զայնմանէ, որ է աւելորդ 'ի հանութս իւր առ 'ի հոգալ զայն, որ է կարևոր կամ փափագելի 'ի հանութս այլոց. և սկսանի այսպէս տուրևառական իմն հաղորդութիւն, որ ծաւալի յետոյ 'ի մէջ անդամոց նորին հասարակութեան. Այս աստիճանաւ իրազեկ լինին նոքա, թէ մտաւոր ցեղքն ունին զայն, որ պակասի ինքեանց, և թէ վայելեն յայն շահեկանութիւն, որոց ինքեանք իսկ փափագին բաժանորդ լինել. Նոյնպէս եղանակաւ և 'ի վերայ նոյն սկզբանց, որով առտնին վաճառականութիւն ընդմտանէ յընկերութիւն, հաստատի արտաքինն ընդ այլոց ժողովրդոց. փոխադարձ շահ իւրեանց և փոխադարձ կարիքն առ-

 նեն

նէն զայս փոփոխ տուրևառութիւն յարգոյ. և մուծանեն անզգալաբար զսկզբունս և զօրէնս, որք զիւրացուցանեն զայն. և ապահովացուցանեն ըղյառաջացումն նր. Բայց տուրևառութիւն իմն բաղմատարած ոչ կարէ ունել զտեղի 'ի մէջ յարակից գաւառաց. որոց գետինն և կլիմայն գրեթէ նոյն ելով, են ևս նոյն կամ նման բերքն. Հեռաւոր կողմանք ոչ կարեն փոխաբերել զտարազս իւրեանց ընդ ցամաք յայն տեղիս, ուր յաղագս ցանցաղագիւտ լինելոյ ցանկալի են և յարգի. Միայն նաւարկութեան պարտական է դիւրութիւն բերելոյ զերս աւելորդս միոյ մասին երկրի առ 'ի լնուլ զպակասութիւն միւսոյ. Պերճութիւն և փափկութիւն միոյ մասնաւոր նահանգի ոչ ևս մնան անդմիակի բանտարկեալք, այլ փոխառաքի վայելումն նոցա առ հեռագոյն ժողովուրդս:

Ըստ չափուն, որով ճանաչումն շահուց յառաջ եկելոց 'ի նաւարկութենէ և 'ի տուրևառութենէ շարունակեաց ծաւալիլ, ընդարձակեցաւ հաղորդութիւն 'ի մէջ մարդկան. Փառասիրութիւն երկրատացուն կամ հարկաւորութիւն հոգալոյ զնոր իմն բնակուէ ոչ ևս եղեն միայն շարժիչ երթալոյ այց առնել հեռաւոր կողմանց. Շահասիրութիւն ևս եղև յորդոր առ ժրաջանութիւն. զարթոյց զառաջնորդս, և առաքեաց զնոսա արտաքս երկար ճանապարհորդութիւք 'ի խնդիր տեղեացն, որոց բերք կամ պիտոյք կարէին աճեցուցանել զայն շրջանակումն, որ սնուցանէ և զօրացուցանէ զտուրևառութիւն. Տուրևառութիւն եղև սկիզբն բազմաց գիւտից, տարաւ ընդ անծանօթ ծովս. միջամուխ եղև 'ի նորանոր կողմանս, և հանդանակեաց աւելի քան զինչ և իցէ այլ պատճառ առ 'ի առնել զմարդիկ տեղեակս զկայաւորութէ, զընուէ և զբերոց զանազան մասանց երկրագնտոյս. Այսպէս նաև յետ հաստատելոյ յաշխարհի կանոնաւոր վաճառականութե, և երևելոյ ազգաց նշանաւորաբար քաղաքականա-

ցեալ

ցեալ, և գիտունց և արհեստից մշակելոյ եւան-
դի՛ և յաջողութիւն, նաւարկութիւն տակաւին էր
այնպէս անկատար, մինչ զի հազիւ կարէ ասել,
թէ 'ի հին աշխարհի իցէ բնաւ ամբարձեալ 'ի
վերայ առաջնոյ ընձիւղման իւրոյ:

Նա նախնի ժողովուրդս կերտուած նաւուց իւր- Անկա-
եանց էր յոյժ ուրուական, և եղանակ շինելոյ նց տարու-
դնաւս նոյնպէս անկատար. Պակասէր նոցա ճա- թիւն նա-
նաչողութիւն մեծամեծ ովկեանց ինչ և գործողու- ւարկու-
թեանց, որք համարին այժմ իբր առաջին տա- թեան
րերք, յորոց վերայ այս գիտութիւն հիմնեալ է. նախ-
Թէպէտ յատկութիւն, զոր ունի մագնիսն քար- նեաց.
շելոյ զերկաթ, կարի իսկ քաջ ծանօթ էր նախ-
նեաց, բայց իւր ծանրակշիռ և սքանչելի զօրութիւն
ուղղելոյ առ բևեռս աշխարհի՝ էր բնաւին յանհ-
տակեալ 'ի գիտողութեանց նոցա. Զուրկք յայս
հաւատարիմ առաջնորդէ, որ յայսմ ժամանակի
ածէ զնաւուղիղն այնչափ ապահովութիւն ի ահա-
գին Ովկիանոս, 'ի մթան գիշերոյ, և յորժամ
երկինք ծածկեալ էին ամպովք, նախնիք ոչ ու-
նէին զայլ եղանակ առ 'ի կանոնաւորել զճանա-
պարհս իւրեանց, եթէ ոչ նկատել զարեգակն և
զաստեղս. Նաւարկութիւն նոցա էր
երկիւղալի և անստոյգ. Հազիւ երբեք փութային
զանձինս թողուլ զտեսութիւն ցամաքին. և վասն
այսորիկ քերէին առ ափամբք միշտ, ներքոյ անկեն-
ամ փանգաց, կասեցուցեալք յամ խոչընդակաց ան-
խորշելեաց այնմ, որ ունի զայսպիսի իմն անյարմար
և տարժանելի ընթացս. Անհաւասարելի իմն երկայ-
նութիւն ժամանակի հարկաւոր էր առ 'ի կատարել
զճանապարհս, որք այժմ աւարտին արագագոյն
ևս. Նաև յառաջել բարեխառն կլիմայս և 'ի
ծովս խաղաղականս միայն յամառան համարձա-
կէին նախնիք ելանել 'ի նաւահանգստէ իւրեանց.
Անոցին ժամանակ տարւոյն էր կորուսեալ յանգոր-
ծութեան. Յանդգնութիւն համարիւր երթալ

 ընդ-

ընդդէմ անճշդութեան հողմոց և ալեաց ծովուն : Մինչդեռ գիտութիւն և գործածութիւնն նաւարկուն էին այնմ պակասաւորք, ոչ փոքր դժուարութիւն և վտանգաւ ձեռնարկեալ լինէր այդ առնելն ինքն 'ի զատուցեալ անկեանց երկրի. Բայց ընդդէմ այնքան դժուարութեանց գործնական հոգին վաճառականութեան երթալով երթայր միշտ

Նաւար- կու- ... և կրթիւր. Նոյն զԵգիպտացւոց, թէ հաղիւ հաստատեալ միապետութիւն նոցա՝ բացին զվաճառականութիւն ընդ ծոցն Արաբիոյ, կամ ընդ կարմիր ծովն և ընդ արևմտեան ծովեզերս մեծի շարունակին Հնդկաստանի. Տարազքն, զորս փոխաբերէին նոքա յարևելից, ածեալ լինէին ցամաքաւ 'ի ծոցոյն Արաբիոյ առ ափունս Նեղոսի. և ընդ այս գետ 'ի խոնարհ 'ի միջերկրական ծովն. Այլ եթէ Եգիպտացիք կանուխ մտադիրք եղեն վաճառականութեան, մտադրութիւն նոցա առ այն եղև կարճատև. Արգաւանդ հողն և քաղցր նահանգն Եգիպտոսի յառաջ ածէին զերկրագործն և ընդհեշտալիս կենաց այնպիսի առատութիւն, որ առնէին զբնակիչս իւրեանց ամենևին անկախս յայլոց օգնութեանց, մինչդի եղեալ էր սկիզբն արմատացեալ յայնմ ժողովրդեան, (որոյ օրէնքն տարբեր էին գրեալ յամ յօդուածս յօրինաց այլոց ազգաց) հրաժարել յինչևիցէ բարեկամութենէ ընդ օտարաց. Զմին իրի ոչ ելանէին երբեք 'ի կայից իւրեանց. Նշկահէին զամ անձինս, որք ունէին բան ընդ ծովու իբր ամբարիշտս և անօրէնս. և ամրացուցանելով զնաւահանգիստս իւրեանց, զլանային ընդունել 'ի նոսա զօտարս. և միայն յանկման իշխանութեան իւրեանց վերստին բացին զայն, վեր առնլով զհաղորդութիւն ընդ նոսա :

'Ի վե Փիւնի- կեցւոց. Ճարտարութիւն և կարողութիւն Փիւնիկեցւոց էին այնչափ նպաստաւոր հոգւոյ տուրևառուն և երկրագործութեան, որչափ վասն այսպիսի պատճառաց Եգիպտացիք ցուցանէին զինքեանս այնց հակա-

կառակս. Ոչ ունէին փիւնիկեցիք զմատենագրութիւն, որ զանազանէր զնոսա 'ի վարս և 'ի սահմանադրութիւս իւրեանց. ոչ էին դիմագրաւք առ նկական և առ անընկերակցական կերպ նորակրօնութե, և կարէին խառնակիլ ընդ այլոց ազգաց առանց խղճի կամ ընդդիմամարտութեան. Ունէին զսահմանն իւն ոչ ընդարձակ և ոչ բերրի. Վաճառականութիւն էր միայն աղբիւր, յորմէ կարէին հանել և զփարթամութիւն և զզօրութիւն. Վասն այսորիկ տուրևառութիւն, որում միտ դնէին փիւնիկեցիքն Սիդոնի և Տիւրոսի, յաջողէր առաւել ընդարձակ և առաւել ձեռներէց քան զոր և իցէ այլոյ տրութեն 'ի նախկին աշխարհի. Նաւք փիւնիկեցւոց, որպէս և տարակայ քաղաքականութն նոցա և հողի օրինաց իւրեանց դիմէին բնաւին առ վաճառականութի. Ժողովուրդ իմն վաճառականաց, որպէս այս, ձկտէր առ հրամանատարութիւն ծովու, և արդեամբք իսկ ժառանգէր զայն. Նաւք իւրեանց ոչ միայն յածախէին առ ամենայն նաւահանգիստս միջերկրեայ ծովուն, այլ և ելեն առաջինք, որք ձեռներէց ելեն անդր քան զկոպարս նաւարկութե. և որք անցանելով ընդ նեղուցս Գադիրեայ, գնացին այց առնել արեմտեան ծովեզերաց Սպանիոյ և Ափրիկոյ. 'Ի բազում յայնց տեղեաց, ուր ապաստանեցան, տնկեցին զհաստատածս, և հաղորդեցին անկիրթ բնակչացն զծանօթութիւն իմն արհեստից իւրեանց և կատարելութեանց. 'Ի ժամանակին, յորում ձգէին զծանօթութիւս իւրեանց 'ի հիւսիսակողմն և ընդ արեմուտս, ոչ անհոգացան ընդ մտանել յառաւել հարուստ և բերրի հարաւային և արևելեան կողմանս. Գաղով այսպէս տիրացեալք բազմաց գլխոյն նաւահանգստից դէպ 'ի խորս Արաբիոյ ծոցոյն, ըստ օրինակի եգիպտացւոց հաստատեցին զկանոնաւոր իմն հաղորդակցութի ընդ Արաբիոյ և ընդ ցամաքին Հնդկաստանի 'ի միջէ

կողմանէ և ը̄ արևելեան եզերս Ափրիկոյ 'ի միւս կողմանէ. Աստի բերին զբազմայոլով պատաճական տարազս անծանօթս այլոց կողմանց աշխարհի. և յերկար ձգմամբ ժամանակի քարշեցին յինքեանս զայն օգտակար ճիւղ վաճառականութեանն առանց նախանձաւորի:

(1) ‖ Տիւրոս կայացեալ էր յայնպիսի հեռաւորութե̄ 'ի ծոցոյն Արաբիոյ, որ առնէր անկարելի բերել անդր զվաճառս գրաստուք ը̄ ցամաք. Այս շարժեաց զփիւնիկեցիս տիրանալ Ռինոքորուրայի կամ Ռինոքոլուրայի նաւահանգստի. որ էր առաւել մօտ 'ի միջերկրականին առ կարմիր ծովն. Արկանէին 'ի ցամաք զբեռինս, զորս գնեալ էին յԱրաբիա, յԵթեովպիա և 'ի Հնդկաստան առ Եղաթ նաւահանգիստ ապահովագոյն 'ի կարմիր ծովուն յարևմտակողմն. Աստի ածէին զայնս ընդ ցամաք 'ի Ռինոքոլուրա, ոչ լինելով երևելի հեռաւորութե̄ն. և 'ի տեղւոյէ յայնմանէ ապա փոխաբերէին 'ի Տիւրոս և բաշխէին ը̄ աշխարհ. ‖ Զայս ասէ Ստրաբոն:

'Ի վերայ Եբրայեցւոց. Անրա հարստութիւն, զոր փիւնիկեցիք ստացան միանվաճառութե̄ տուրևառութեանն արաբեցւոց ը̄ ծովն կարմիր, խրախուսեցին զԵբրայեցիս զդրացիս իւրեանց առ յաջող թագաւորութե̄ն Դաւթի և Սողոմոնի առ 'ի փափագել մասնակից լինել այնմ. Զոր և արդեամբք իսկ ընկալան. և վասն տիրապետութեան իւրեանց Եդոմայ, որ տարածանի ը̄ երկայնութիւն կարմիր ծովուն, և վասն դաշնաւորութեան իւրեանց ընդ Իրամայ արքային Տիւրոսի Սողոմոն պատրաստեաց զնաւս, որք ընդ առաջնորդութե̄ նաւավարաց փիւնիկեցւոց առագաստեցան 'ի կարմիր ծովէն առ Թարշիշ և առ Ոփիր. որք համանականարար էին նաւահանգիստք 'ի Հնդիկս և յԱփրիկէ սովորեալք յաճախել 'ի նաւուղղաց նց. և դարձան այնպէս մեծագին բեռամբք, որք սփռեցին անընդմիջաբար զհարստութի և ըզփառս

մտաւ ընդ թագաւորութիւնն Իսրայէլի. Սակայն սեպհական սահմանադրութիւնք Եբրայեցւոց, որոց պահպանութիւն հրամայեալ էր 'ի գերագոյն օրէնսդրէ իւրեանց դիտմամբ նախապահելոյ զնա իբր ժողովուրդ մի զատուցեալ և մաքուր 'ի կռապաշտութենէ, կերպարանեցին զյատկութիւն իմն ազգային անընդունակ այնմ համարձակ և ազատ հաղորդակցութեան ընդ օտարաց. որ պահանջի 'ի վաճառականութեն. Ստուգ է, զի անընկերակցական հանգամանք այսր ժողովրդեան միացեալ ընդ ձախորդութեանցն, զորս կրեաց թագաւորութիւն Իսրայէլի, խափանեաց յետոյ զհոգին տուրևառուն, զոր Սողոմոն իւր աշխատեցան մուծանել և յարդել, 'ի սփռելոյ և յընդարձակելոյ անդէն. Եբրայեցիք ոչ կարեն դասիլ ընդ ազգացն, որք հանդանակեցին առ յառաջադիմութիւն նաւարկուն և առ աճումն երկրագործութեանց:

Թէպէտ կանոնաւորութիւնք և օրինակն Փիւնիկեցւոց ոչ եղեն բաւական թեքելոյ զբարս և զխառնուած Եբրայեցւոց, և դնելոյ զնոսա 'ի հակադրութեան, (որպէս բանից կարգ է ասել) ընդդէմ օրինաց իւրեանց, սակայն բաւեցին յեղափոխել զերակի զհոգին վաճառականութեան, ևս և 'ի կատարեալ ուժգնութեան իւրում, 'ի Կարթագինեցիս սերունդս իւրեանց. Հասարակապետութիւն Կարթագինոյ մնացեր եղև տուրևառութեան և ծովային իրակունց ոչ նուազ եռանդի, աչալրջութեամբ, և յաջողակութե հեղինակաց իւրոց. Կարթագինէ վաղվաղակի նախանձաւոր եղև և գերազանցեաց զՏիւրոսի 'ի փարթամութեան և 'ի կարողութեան. բայց ոչ երբեւիցէ ձգտիլ առ 'ի ունել զման ինչ 'ի վաճառականութե ընդ հնդկաց. Փիւնիկեցիք դրաւեալ էին զայն. և այնպիսի էր հրաման նոցա 'ի վերայ կարմիր ծովուն. որ ապահովացուցանէր զնոսա 'ի մէ սեպհական մառանգութեան այսքան պտղաբեր ճիւղոյ վաճառա-

'Ի վէրայ Կարթագէնեցւոց.

կա-

կանութեան. Գործունէութիւն նոցա յայսմիկ մասին վարժիւր զանազանաբար. Առանց հակառակելոյ վասն վաճառականութեան արևելից ընդ բնիկ երկրի իւրեանց, ուղղեցին զնաւարկութիւն նախապատաբար ընդ արևմուտս և ի հարաւակողմն. Զհետ երթալով ընթացից բացելոց վաղնիկ ի փիւնիկեցւոց անցին ընդ նեղուցս Գադիրեայ. և ձգելով զերկրածանօթութիւնս իւրեանց առաւել յառաջ քան զնոսա, ոչ միայն յայց ելին ամ ծովեզերաց Սպանիոյ, այլ և Գաղղիոյ, և ընդ մոտին ի վախճանի ի Բրիտանիա. Ի նմին ժամանակի, յորում ստանային զծանօթութիւն նորանոր տեղեաց յայնմ մասին երկրագնտոյս, ուղերձէին աստիճան առ աստիճան զխոյզս իւրեանց դէպ այլոց միջօրականաց. Յառաջացան երևելաբար ցամաքաւ ի ներքսագոյն գաւառն Ափրիկոյ. տուրևառս արարին ը՛ ոմանց ի նոցանէ, և զայլս նուաճեցին ընդ տէրութեամբ իւրեանց. Առագաստ վերացուցին առ արևմտեան ափամբ այնր համատարած ցամաքին գրեթէ մինչև յարևադարձն խեցգետնոյ. և տնկեցին զանազան հաստուածս դիտմամբ քաղաքականացուցանելոյ զբնիկսն, և ընտելացուցանելոյ զնոսա առ վաճառականութիւն. Գտին զերանելեաց կամ զերջանիկ կղզիսն, որ վարին այժմ ընդ անուամբ Քանարեայց. սահման առաւել հեռաւոր նախկին նաւարկութեան յարևմտեան Ովկիանոսի.

Յառաջադիմութիւն փիւնիկեցւոց ի ճանաչման երկրագնտոյս ոչ է պարտ առնուլ բոլորովին ի ցանկութէ ընդարձակելոյ զվաճառականութի իւրեանց ի միոջէ տեղւոյ առ միւսն. (Տուրևառութին շարունակեալ էր վասն բարի արգասեաց իւրեանց ի մէջ երկուց ազգացս.) այլ զարթոյց հետաքրքրութիւնն ևս, անձկոյց զճանաչմունս, և զփափագ մարդկան, և յորդորեաց զնոսա առ քաջասիրտ ձեռնարկութիւնս. Այսքան ճանապարհորդութիւնք. որոց միակ նպատակն էր գտանել զնոր սահմանս

և

և քննել զանծանօթ ծովս. և այսպիսիք յեր-
ջանիկ դարուն Կարթագինեցւոց հասարակապետութե
եղին համբաւաւոր նաւարկութիւնք Աննոնայ և Իմիլ-
քոի. Երկոքեան նաւահանդէսք ոչ հանդերձէին
իշխանութեամբ ծերակուտին և հրապարակական ծա-
խուք. Աննոն կամ Հաննա կարգեալ էր երթալ
'ի հարաւակողմն առ ծովեզերօքն Ափրիկոյ. և ե-
րևի թէ նա յառաջացեալ իցէ առաւել քան զո
և իցէ նախնագոյն նաւուղիղ մօտ 'ի գիշերահա-
ւասար գծին. Իմիլքօ պարտ էր յառաջ խաղալ 'ի
հիւսիսակողմն, և ճանաչել զարևմտեան ծովեզերս
Եւրոպական ցամաքին. Նոյնգունակ եղև արտա-
քոյ կարգի նաւարկուն փիւնիկեցւոց շուրջ զԱփ-
րիկէիւ. Նաւահանդէս մի փիւնիկեան կոչեցեալ
հանդերձեալ 'ի Նեքոս արքայէ Եգիպտոսի, շու
արար իբր վեց հարիւր չորս ամօք յառաջ քան
զթուականն Քրի 'ի նաւահանգստէ միոջէ Կարմիր
ծովուն. կրկնեաց ը հարաւային դերսարն Ափ-
րիկոյ. և յետ ճանապարհորդութեան երից ամաց՝
դարձաւ ընդ նեղուցս Ջաշտիչեայ 'ի բերան Նե-
ղոսի. Պատմի, թէ Եւդոքսոս կիզիկեցին ևս կա-
լաւ զնոյն ընթացս, և կատարեաց զնոյն տարժա-
նելի ձեռնարկութիւն ։

Այսպիսի ճանապարհորդութիւնք արարեալք տաս-
ցեալ եղանակաւ՝ կարեն պատշաճապէս համարիլ
մեծագոյն ճիգն նաւարկութեան նախկին աշխարհի.
և եթէ զմտաւ ածիցի անկատար վիճակն այսր
արհեստի յայնմ ժամանակի, դժուարին է որո-
շելն, թէ արդեօք իցէ՞ առաւել զարմանալի քա-
ջասրտութիւն կամ զգօնութիւն, որով կերպաւո-
րեցաւ այն խորհուրդ, եթէ առաջնորդութիւն և
բարեբախտութիւն. որք օժանդակեցին կատարմանն.
Բայց ճախուռագրութեամբ իմն բովանդակ բնագիրք
և արժանահաւատ պատմութիւնք ճանապարհորդուեց
փիւնիկեցւոց. և Կարթագինեցւոց՝ կի՛ բուռն հարեր
հրապարակական հրամանաւ, կամ չարունակեալք մ

ա-

առանձնական շահու, կորեան. Ծանօթութիւնքն, զորս ունիմք զնոցանէ 'ի Յունաց և 'ի Հռոմայեցւոց մատենագրաց, ոչ միայն աղօտք են և հարևանցիք. այլ և բարձեալ 'ի նոցանէ զկարճառօտ պատմութիւն առաջման Աննոնայ, երկբայականք են:
(2) Փերիփլոնն Աննոնայ է միայն արժանահաւատ յիշատակարան քաջութեանն Կարթագինեցւոց 'ի նաւական իրակութիւնս, և մի յառաւել հետաքրքրական մնացածոց փոխանցելոց առ մեզ 'ի նախնեաց. Գիտնական և զգօնամիտն Դոդվել 'ի ճառի միում, որ յառաջէ քան զՓերիփլոնն Աննոնայ, 'ի տպագրութեան փոքր երկրագրաց հրատարակեցելոց 'ի Օքսֆորտ, ջանայ հաւատել, թէ այս է գործ իմն անհարազատ, և շարադրութիւն Յունականի ուրուք, որ առեալ իցէ զանուն Աննոնայ. Բայց նախագահն Մոնթեսքիէօ 'ի մատենի իւրում զհոգւոյ օրինաց և Պուկայնվիլլ 'ի ճառի միում հրատարակեցելոյ գյիշատակաց Ակադեմիայի մակագրութեանց, հաստատեաց զարժանահաւատութիւն նր փաստիւք, որք երևին ինձ անցրելիք. Սամուսիոս ընդ թարգմանութեան իւրում այսր հետաքրքրական ճանապարհորդութեան ընկերակցեաց զճառ ինչ յաղագս պարզաբանելոյ զայն. և Պուկայնվիլլ մեծաւ ներհունութեամբ և քանքարով ճառեաց զնոյն առարկայէ:
Երևի թէ Աննոն ըստ սովորութեան նախկին նաւարկութեան ձեռն էարկ յայս ճանապարհորդութի 'ի փոքրիկ նաւակս շինեալս այնպէս, զի կարիցեն ունել առընթեր եզերացն. Սրացաւ 'ի Բառիչեայ առ կղզին Զենննեայ յերկոտասան աւուրս. Այս է հաւանականաբար այն, որ յարդեաց ծանուցեալ է անուամբ կղզւոյ Արկուինայ. Էղև գլխաւոր կայան Կարթագինեցւոց յայն եզր. և Պուկախնվիլլ պնդէ, թէ չորհորք գտեալք անդէն՝ են յիշատակարան իմն կարողութեան և ճարտարու-

րութեան Կարթագինեցւոց . Յառաջ խաղալով յազգէն և հետամուտ լինելով միշտ խուզել զե-զերս, եհաս յեօթն և տասն աւուրս առ գետաբար իմն, զոր նա կոչեաց արեւմտեան Հոռն . որ թերեւս թէ իցէ գլուխն Փալմի . Աստի յառաջեաց առ այլ իմն գետաբար . զոր անուանեաց Հոռն հարաւային . որ և յայտնապէս երեւի լինել գլուխն ե-րից ծայրիցն շուրջ զհինգ աստիճանօք հասարակածին ընդ հիւսիսակողմն :

Ամենայն պարագայք պարունակեալք 'ի համառօտութեան այսր օրըստորական մատենի, որ փոխանցեալ է առ մեզ վերաբերեալ առ երեւոյթ և առ վիճակ տեղեացն առ ծովեզերքն Ափրիկոյ՝ հաստատեալ են և պարզեալ բաղդատութեամբ պատմութեանց արդի նաւորդաց . Նաև նոյն իսկ պարագայքն, որք մն առերեւոյթ անհաւանականութեանց յառաջ բերեալ են առ 'ի անհաւատարիմ առնել զպատմութիւն նորա, դիմեն առ 'ի հաստատել զայն . Նշմարեաց նա ինքն, թէ յերկրին 'ի հարաւակողմն Զեռնեայ թագաւորէր խոր իմն լռութիւն 'ի տունջեան , այլ 'ի ժամանակի գիշերոյն տեսանէին վառեալ անհամար կրակս առ ափամբք գետոցն , և թէ օդն հնչէր 'ի գոչմանէ եղջերափողոցն և թմբկաց և աղաղակաց հրճուանացն . Սոյն այս սովորութիւն , որպէս նշմարէ Սամուսիոս, տակաւին 'ի գործ ածի անդէն . Զաւփաղանց տօթն պարաւանդէ զնաւսն յապաւինել յանտառս կամ 'ի տունս իւրեանց զօրն ողջոյն . Ընդ մտանելն արեւու ելանեն վաղվաղակի 'ի դուրս, և առ լուսով ջահից վայելեն 'ի բերկրութեան երաժշտութեան և կաքաւման , յորում անցուցանեն զգիշերն ողջոյն . Եւ յայլում տեղւոջ առնէ յիշատակ զծովէն, որ գրեթէ վառի հեղեղատիւ հրոյ . Զայս մարթ է մեկնել այնու, որ պատահեաց Ադանսոնի առ նովին ծովեզերաւ . « Հա-
« ղեւ թէ արեւն, ասէ, էջ ընդ հորիզոնաւ , և

„ գիշերն ծածկեաց զերկիր խաւարաւ, մատոյց մեզ
„ ծովն զսիրելի լոյս իւր․ Մինչդեռ առաջին կողմն
„ նաւին մերոյ ճեղքէր զփրփրեալ ալիսն, երեւէր
„ թէ հրացեալ էին բովանդակ․ Այսպէս առագաս-
„ տեցաք 'ի ներքս լուսաւոր իմն պարունակի, իբր
„ 'ի մեծի շրջանակի շառաւիղաց․ յորոց անդրա-
„ դարձիւր յակօսին զկնի նաւին մերոյ երկայն իմն
„ հոսանք լուսոյ ։ „

Զինչ և իցէ տեղեկութի, զոր փիւնիկեցիք կամ Կարթագինեցիք տուեալ էին 'ի հնաւոր աշխարհաց, թագուցեալ էր յայլոց ազգաց վս նախանձաւորութեան շահուն. Պուզնաքեայ ինչ իր վերաբերեալ առ ընթացս նաւարկութեան նոցա՝ ոչ միայն էր խորհուրդ իմն վաճառականութ, այլ և գաղտնի իմն տրութեան. Յիշատակին արարք արտաքոյ կարգի նկատմամբ հոգածութեան նոցա առ 'ի ոչ թողուլ արտաշնչել առ այլ ժողովուրդս զայն, զորմէ նոքա խիթային, զի մի յայտնիցի. Եւ այս է պատճառն, զի յոլովք 'ի գտեալ տեղեաց նց հազիւ թէ գիտացեալ եղեն արտաքոյ սահմանաց տրութեանց նոցա. Նաւարկութին շուրջ զԱփրիկէիւ յառաջ բերեալ է 'ի Յունաց և 'ի Հռովմայեցւոց հեղինակաց մանաւանդ իբր ճարտար իմն և հանճարական առասպել. զոր ինքեանք իսկ կամ ոչ իմանային, կամ ոչ հաւատային իբր գործ իմն ընդունակ անձեռուցանելոյ զլոյս իւրեանց. կամ նպաստելոյ կարծեաց նոցա ։

(3) Առաջում ժամանակս զկնի նաւարկութն փիւնիկեցւոց և Եւդոքսեայ շուրջ զԱփրիկէիւ, Փօլիպոս վիպասանն իմաստնագոյնն և քաջ տեղեակն 'ի մէջ նախնեաց հաստատէ, թէ ոչ գիտէին յայնմ դարու, միթէ Ափրիկէ էր ցամաք իմն շրջունակեալ, որ տարածիւր ընդ հարաւակողմն, եթէ էր շուրջ պատեալ 'ի ծովէ. Փլինիոս բնագէտն պնդէ, թէ ոչ կարէ լինել հաղորդակցութի 'ի մէջ հարաւային և հիւսիսային բարեխառն գօտեաց. Եւ-

թէ

թէ նոքա ընծայեալ էին կատարեալ հաւաստ պատ-
մութեանց այնպիսի ճանապարհորդութեանց, առա-
ջինն ոչ էր կալեալ զնմանակ իմն տարակոյս. և
երկրորդն ոչ էր տարածեալ զայնպիսի կարծիս.
Յիշատակէ Սթրաբոն զճանապարհորդութիւն Եւ-
դոքսեայ. բայց նկատէ զայն իբր առասպելական.
և ըստ պատմութեան նորա ոչ կարէ հերպաւորիլ
զայնմանէ այլ դատումն. Երեւի թէ Սթրաբոն
ոչ իցէ գիտացեալ ստուգութիւն զիր ինչ վերա-
բերեալ առ կերպ և առ վիճակ հարաւային մա-
սանցն Ափրիկոյ. Պտղոմէոս առաւել ուշադիրն
և առաւել ներհունն քան զամ նախնի երկրա-
գիրս էր հաւաստապէս 'ի մթան առ մասունս
Ափրիկոյ կայացեալս ստկաւ աստիճանօք անդր քն
զգիշերահաւասար գծն. որովհետեւ ենթադրէ՝ թէ
այս մեծ ցամաք ոչ իցէ շրջապատեալ 'ի ծովէ,
այլ թէ տարածիցի առանց ինչ խրամատութեան
առ հարաւային բևեռ. Եւ ես խորհ այնքան 'ի
ճշգրիտ ձև նորա, զի գծագրէ զշարունակ ցա-
մաքն իբր միշտ առաւել ընդլայնելով ըստ չափուն,
որով յառաջագէմ լինէր 'ի հարաւակողմն:
Եւ քանզի ոչ յառաջադիմութիւն երկրածանօթու-
թեանցն փիւնիկեցւոց և Կարթագինեցւոց, և ոչ
տարածութիւն նաւարկութեան նոցա հաղորդեցաւ
այլոց ազգաց, յայնմանէ հետեւի, թէ համօրէն
յիշատակք արտաքոյ կարգի քանքարոյ նոցա 'ի
նաւական իրակութիս կորեան մեծագոյն մասամբ,
յորժամ ծովային զօրութիւն առաջնոցն չքացու-
ցեալ եղեւ յաւուրն Աղեքսանդրու զՏիւրոս, և
թագաւորութիւն վերջնոց կործանեալ 'ի զինուցն
Հռոմայեցւոց:
Ապա թողլով զմթին և զպաճուճեալ պատմութիւն Դ. [illegible]
ճանապարհորդութեանց փիւնիկեցւոց և Կարթա- Յու-
գինեցւոց՝ հետաքրքրութեանց և ենթադրութեանց նաց.
վաղնջայուզից, վիպասանութիւնն պարտի շատա-
նալ պատմելով զյառաջադիմութիւն նաւարկութեն

և

և երկրագիտաց 'ի մէջ Յունաց և Հռոմայեցւոց. որք թէպէտ և ոչ յոյժ ընդարձակք, այլ առաւել հաւաստի են. Յայտնի իմն է թէ Փիւնիկեցիք, որք հրահանգեցին զՅոյնս յայլ պիտանի գիտութիւնս և արհեստս, ոչ հաղորդեցին նոցա զընդարձակ ծանօթութիւն նաւարկութեանն, զոր ինքեանք ստացեալ ունէին. և թէ Հռոմայեցիք ոչ 'ի միտ առին զհոգին տուրևառութեան և զցանկութիւն երկրածանօթութեան, որ հանդիսացուցեալ էր զԿարթագինեցիս. Թէպէտ Յունաստան գրեթէ իբր շրջապատեալ 'ի ծովէ, որ կերպացուցանէր յայնժամ զյոլով ընդարձակ խորշս, և զանդորր նաւահանգիստս, թէպէտ իբր պարառեալ 'ի մեծ բազմութենէ արգաւանդ կղզեաց, սակայն ոչինչ էհաս հանդերձ այսպիսի նպաստաւոր կայաւորութեամբ, որ պարտ էր հրաւիրել զճարտարամիտ ժողովուրդն զայնոսիկ առ ծովենաց հարուստ մի երկայն ժամանակ յառաջ քան թէ արհեստ նաւելոյ երևէր 'ի նոսա յաստիճանի իմիք կատարելութեան. Առաջին նաւարկութիւնք Յունաց, որոց առարկայն ամփոփիւր առ յելուզակութիւն յաւէտ, քանթէ առ վաճառականութիւն, եղեն այնպէս սակաւ համարեալք, մինչ զի յարձակումն Արգոնաւտաց 'ի ծովեզերէն Թեսաղիոյ առ սևա ծովն երևեցաւ թևակոխութիւն իմն այնչափ զարմանալի վասն յաջողակութեան և վասն քաջասրտութեան, մինչ զի սահմանեաց զառաջնորդն դասիլ 'ի թիւ կիսաստուծոց. և նաւն, յորում առագաստեցին, ամբարձեալ եղև զետեղիլ 'ի մէջ երկնային համաստեղութեանց. Այլ և 'ի վերջին շրջանի յորժամ Յոյնք դիմագրաւ եղեն 'ի համբաւաւոր ձեռնարկութեան իւրեանց ընդդէմ Տրովադայ, գիտութիւն նոցա յիրս ծովու ոչ երևի յոյժ համարելի. Ըստ պատմութեան Հոմերոսի բանաստեղծի միայնոյ, առ որ վկայութիւն համարձակի վերաձայնիլ, և որ վասն խոհեմ զգուշաւո-

րութեան խորոյ 'ի գծագրելն զկարս և զարուեստ տուածնոց դարուց՝ արժանի է այսպիսի իմն պատւոյ, գիտութիւն նաւարկութեան յայնմ ժամանակի էր հազիւ ամբարձեալ սակաւ մի յառաւել ուրուականն վիճակէ իւրմէ. Յոյնք 'ի դիւցազանց դարուն ոչ էին տեղեակ կիրառութեան երկաթոյ, որ պիտանագոյն է քան զամենայն հրահալելիս. տանից որոյ ոչ եղև երբեք զարգացումն իմն երևելի 'ի մեքենական արհեստս. Նաւք նոցա էին ցածակողք, և յոլովք առանց ծածկութի և միով և եթ կայմիւ, որ վերացուցանիւր և խոնարհիւր ըստ հաճոյից. և ոչ գիտէին 'ի կիր առնուլ զխարիսխ. Ամենայն գործողութիւնք նոցա յառագաստելն էին անհեթեթք և անհմուտք. Պարծուցանէին զհայեցուածս իւրեանց առ աստեղս բնաւին անյարմարս առ 'ի կանոնաւորել զընթացս իւրեանց. և ես նկատէին զայնս անմտադիր և վերջակ եղանակաւ. Ընդ աւարտելն զճանապարհորդութիւն իմն, քարշէին զփանաքի նաւակս իւրեանց յափունս. և այսոքիկ մնային 'ի վերայ ցամաք գետնոյ մինչև ոչ մերձենայր յեղանակն վերադառնալոյ 'ի վի ծովու. 'Ի նախկին դարս կամ թէ 'ի ժամանակս դիւցազանցն Յունաստանի ոչ է մարթ սպասել տեսանել զգիտութիւն նաւարկութ և զհողին երկրածանօթութե առնել զնշանաւոր իմն զարգացումն. Ընդ բովանդակ ժամանակն ընդ այն անկարգութե և տգիտութեան, բիւր պատճառք զուգընթաց եղեն առ 'ի ամփոփել զհետաքրքրութիւն և զձեռնարկութիւն մարդկան յանձկագոյն կոպարս. Բայց Յոյնք սրնթացք եղեն 'ի 'ի քաղաքականանալ և 'ի զօրել մեծապէս. Կառավարութիւն սկսաւ հաստատիլ 'ի պայծառագոյն և 'ի կատարելագոյն կերպի իւրում 'ի մէջ հասարակութեանցն Յունաստանի. օրէնք հաւասարք և կանոնաւոր քաղաքականութ սակաւ առ սակաւ մուծեալ եղեն 'ի նոսա. գիտութիւնք և արհեստք,

որք են յօգնութիւն և 'ի զարդ կենաց, վերացան 'ի բարձրագոյն կայան. և բազումք 'ի յունական հասարակապետութեանց ետուն զանձինս առ վաճառականութիւն այնչափ եռանդիւ և յաջողութեամբ, մինչև նկատեալ լինէին 'ի նախկին աշխարհի իբր իշխանութիւնք ծովայինք առաջնոյ աստիճանի. Սակայն զյաղթութիւնս Յունաց ընդ ծով 'ի դէպ էր նաև յայնժամ վերագրել մանաւանդ առ բնական ոգին ժողովրդեան, և առ սրտեղութիւն ներշնչեալ 'ի նոսա 'ի վայելմանէ ազատութեան, քան թէ առ զինչ և իցէ արտաքոյ կարգի զարգացումն յարհեստի նաւելոյ. 'Ի պատերազմին Պարսից այնք արարք, զորս ճարտարախօսութիւն Յունաց վեպասանից փոխաբերեաց այնչափ համբաւաւորս, վճարեցան 'ի նաւահանգստից բաղկացելոց յանծանկոյթ նաւակաց. որոց ամբողջն յարձակիւր ուժգին կորովութեամբ, բայց սակաւ արհեստիւ առ 'ի զդէմ ունել կորովութեան թշնամւոյն. 'Ի պատերազմին Փէլոփոննեսոսի՝ նաւք նոցա պահեալ լինէին դեռևս փանաքի մեծութեամբ և սակաւ զօրութեամբ. Տարածութիւն վաճառականութեան նոցա էր համեմատեալ ցածուն պայմանի ծովային արհեստի. Ծովեզերեայ տրուէք Յունաստանի հազիւ ձգեցին զտուրևառութիւն ինչ անդր քան զկոպարս միջերկրեայ ծովուն. Նաւապետական հաղորդութեանց էր մանաւանդ ընդ համաշխարհիկ հատուածոց, քան թէ 'ի փոքրն Ասիա, յԻտալիա և 'ի Սիկիլիա. Այս անէին երբեմն նաւահանգստին Եգիպտոսի, Կաղղիոյ և Թրակիոյ. և անցանելով ընդ Հելլեսպոնտոս՝ վաճառակցէին ընդ գաւառացն զետեղելոց շուրջ զսեաւ ծովուն. Հանդիպին հիանալի օրինակք տգիտութեան նոցա, եւս և նոյն իսկ տեղեացն, որք պարփակին յանձուկ շրջապատոն, յորս նաւարկութիւն նոցա սահմանիւր. Յորժամ Յոյնք միացուցին զնաւահանգիստս իւրեանց կարգեն ընդդէմ Քսերքսեսայ առ Եգինա կղզւոյն համա-

րե-

բնցան անխոհեմական իմն առնել առագաստ դէպ Սամոսայ, ենթադրելով, թէ տարակացուքն 'ի մէջ այնր կղզւոյ և Ճինայի իցէ մեծ. որպէս տարակացութին ընդ Ճինա և ընդ սիւնսն Հերքուլեայ. կամ նոքա էին ընաւին 'ի մթան նկատմամբ ամ մասանց երկրագնտոյս անդր քան զմիջերկրեայ ծով, կամ ծանօթութին, զոր ունէին զնոցանէ, հիմնիւր 'ի վերայ մակարերուեց, կամ թէ յառաջգայր 'ի պատմութեց այնր սակաւ անձանց, զորս հետաքրքրութին և փափագն գիտելոյ դրդեալ էր առ 'ի ճանապարհորդել ընդ ցամաք 'ի վերինն Ասիա, կամ ընդ ծով Եգիպտոս նախկին աթոռս իմաստութեան և արհեստից. Յորմէհետէ ուսան Յոյնք 'ի նոցանէ, ցուցանեն տգիտացեալ զառաւել ծանրակշիռ գործս, յորոց վերայ հաստատի հաւաստագոյն և գիտնական ճանաչումն աշխարհի ։

Նահատակութին Աղէքսանդրու մեծի յարևելս ընդարձակեաց յոյժ յոյժ զոլորտ նաւարկութեան և երկրագրական ծանօթութեց առ Յոյնս. Այս այր արտաքոյ կարգի հանդերձ ամ բռնաւոր կրիքն, որք հրաւիրէին զնա մերթ 'ւ մերթ առ գործողութիս ամէհագոյնս՝ և առ ձեռնարկութիս առաւել եզականս, ունէր քանքարս, որք բաւական առնէին զնա ոչ միայն տիրապետելոյ, այլ և կառավարելոյ զտիեզերս. Սա էր ընդունակ յղանալոյ զանվեհեր և զսկզբնական գաղափարս քաղաքականուե. որք տան զնոր իմն կերպարան մարդկային գործառնութեց. Փոփոխութին 'ի սեռի վաճառականութե, որ շուրջ տարածեալ եղև յուժոյ ճարտարմտութե նորա, ոչ է ընաւ վայրագոյն քան զփոփոխութիւն թագաւորութեն, զոր պատճառեաց յաջողութի զինուց իւրոց. Հաւանական է, թէ դիմակացութիւն և զօրութիք հաստակապետուեն Տիւրոսի, որք կասեցուցին զնա յայնչափ ժամանակ յընթացս յաղթութեց իւրոց, տուին Աղէքսանդրու պարապ նշմարելոյ զյոգնա-

թիւ շահս ծովային իշխանութեան իւրեանց. և թէ մատակա-
րարէին նմա զգաղափար իմն անբաւ հարստութեանցն,
զոր Տիւրացիք հանէին ՚ի տուրևառութենէ իւրեանց, և
մանաւանդ եղանակաւ ՚ի տուրևառութենէ ընդ արևելեան
Հնդկաց. Իբրև աւերեաց իսպառ զայն երկիր, և նուա-
ճեաց զԵգիպտոս, խորհեցաւ առնել զԹագաւորութիւն,
զոր ՚ի մտի եդեալ էր հաստատել, կեդրոն վաճառա-
կանութեան, միանգամայն և աթոռ տէրութեան իւրոյ. Այսու
վախճանաւ հիմնեաց զքաղաք մի մեծ. զոր և պա-
տուեաց սեպհական անուամբ իւրով, մերձ առ մի
՚ի բերանոցն Նեղոսի, որպէս զի միջներկրեայ ծո-
վուն և մօտաւորութիւն Արաբիոյ ծոցոյն ունիցի քա-
ղաքն այն դիւրութիւն տուրևառութեան յարևելս
և յարևմուտս. Այս կայսերութիւն ընտրեալ ե-
ղև այնչափ զգօնութեամբ, մինչզի Աղեքսանդրիա
վաղվաղակի եղև առաջին քաղաք վաճառատեղի
աշխարհի ոչ միայն մինչդեռ տևէր թագաւորու-
թիւնն Յունաց յԵգիպտոս և յարևելս, այլև ՚ի
մէջ յաջորդական փոփոխութեանց ՚ի կողմանսն յայ-
նոսիկ ՚ի ժամանակէ Պտղոմեայց մինչև ՚ի ծա-
նօթութիւն նաւարկութեան ՚ի Գաբօ տի Պօնա
Էսփէրանցայէ, տուրևառութիւն, և մանաւանդապէս
արևելեան Հնդկացն շարունակեաց հոսիլ ընդ այն
ջրմուղ, ընդ որ աշալրջութիւն և նախատեսութիւն
մեծին Աղեքսանդրու վաղուց ուղղորդեալ էր զայն:
Ոչ շատացեալ փառասիրութիւն նորա բանալով
Յունաց զհաղորդութիւն իմն ընդ Հնդկաց ծո-
վով՝ անձկացաւ ինքնակալութեան այնց կողմանց,
որք մատակարարէին մնացին ազգի մարդկան զայն-
քան մեծագին բարիս. և էած անդր զզօրս իւր
ընդ ցամաք. Բայց անվեհերն այն, պարտ է ասել,
մանաւանդ եգիտ զայնս. քան թէ տիրապետեաց.
Յառաջ խաղալն յարևելս կոյս ոչ էանց անդր
քան զեզերս գետոցն, որք անկանին ՚ի Հնդոս
կամ յԻնդոս. ուր է այժմ արևմտեան կողմն
այնր մեծի ցամաքին Հնդկաց. ՚Ի նոյն անվեհեր

գոր-

գործողութիւն, որք հանդիսացուցանէին զայս մասն փիլիսոփայութեան իւրոյ, նշմարեաց զչափմունս, որք ցուցանէին զխեմութիւն մտաց իւրոց, որպէս և զընդարձակութիւն տեսութեան իւրոյ․ Էր այնչափ ընդմոտեալ ՚ի Հնդկաստան առ ՚ի հաստատել ՚ի կարծիս մեծաւարկութեան նոցա վասն վաճառականութենն. և առ ՚ի ստուգել, թէ անբաւ օգտութիւն կարէր ծագել ՚ի յառնչութենէ ընդ աշխարհի միում, ուր արհեստք վայելչութեան վասն լինելոյ անդէն կանուխ մշակեալք, էին ևս հասեալք ՚ի մեծագոյն կատարելութիւն առաւել քան թէ յորում և իցէ այլում մասին աշխարհի. Ի այսու գաղափարի որոշեաց քննել զընթացս նաւարկութեան ՚ի բերանոյ Հնդոս գետոյն առ վերջ պարսկային ծոցոյն. և յորժամ յաջողեսցի գործն, հաստատել զկանոնաւոր իմն հաղորդութիւն ՚ի մէջ նոցա. Եա ՚ի արդիւնացուցանել զայն, եդ առաջի բառնալ զսահմանս, որովք նախանձաւորութի պարսից և խորշումն նոցա ՚ի բարեկամութենէ ընդ արտաքնոց՝ փակեալ էին զանցս ՚ի մէջ Եփրատայ, առ ՚ի փոխադրել զբերս արևելից ընդ այս գետ և ընդ Տիգրիս, որ միանայ ընդ նմա, ՚ի ներքին մասունս տրութենց իւրոց Ասիա. որովհետև ճանապարհաւ Արաբիոյ ծոցոյն և գետոյն Նեղոսի կարէին ածել յԱղեքսանդրիա և բաշխել յայլ կողմն աշխարհի. Նեարքոս զօրագլխին, որ էր այր անհամեմատ ընդունակութեան, վստահացեալ եղև հրամանատարութիւն նաւահանգստին պատրաստեցելոյ վասն այսպիսի առարկայի. Նա կատարեաց զայս ճանապարհորդութիւն, որ դատել եղև ձեռնարկութիւն իմն այնպէս դժուարին և ծանրակշիռ, մինչզի Աղեքսանդր արձանագրեաց զայն իբրև զմի յառաւել տարակարգ դիպուածոցն, որք երևելի արարին զթագաւորութիւն նորա. Որչափ և այժմ երևեսցի այս դուզնաքեայ ինչ, յայնմ ժամանակի եղև ձեռնարկութիւն իմն դժուարին և մե-

մեծավաստակ. Նմին իրի 'ի կատարման սորա տեսանին քաջայայտ հաւաստիք նորա զարգացմանն, զոր Յոյնք արարեալ էին յարհեստի նաւարկութեան:

(4) ‖ Գործ մի յիշատակեալ 'ի Ստրաբոնայ՝ մատակարարէ հզօրագոյն իմն և եզական ցոյց տգիտութեան նախնեաց նկատմամբ կայաւորութեան պէսպէս մասանց երկրի. Յորժամ Աղեքսանդր չու առնէր առ ափամբք Իտասփեայ և Աչեսինեայ երկուց գետոցն, որք երթան անկանին 'ի Հնդոս, նշմարեաց, զի էին անդ բազում կոկորդիլոսք, և զի երկիրն այն բուսուցանէր բակլայս նոյնատեսակս այնց, որք լինէին հասարակօրէն յԵգիպտոս. Յայսց պարագայից հետևեցոյց նա, թէ գտեալ էր զաղբերակն Նեղոսի. և հանդերձեաց զնաւահանգիստ մի առ 'ի առագաստել 'ի խոնարհ ընդ Իտասփէ առ Եգիպտոս. Այս զարմացման արժանի մոլորութիւն ոչ յառաջ եկն 'ի տգիտութենէ իմիքէ մասնաւոր երկրագրութեան յայնմ Ասիապետի. որովհետև ասէ մեզ Ստրաբոն, թէ Աղեքսանդր տայր զանձն սեպհական իմն մտադրութեամբ առ 'ի ստանալ զայս գիտութիւն. և թէ ունէր զանվրէպ աշխարհացոյցս կամ զգծագրութիւնս աշխարհացն, զորս անցանէր. Այլ 'ի ժամանակս նորա ծանօթութիւնք Յունաց ոչ տարածանէին անդր քան զսահմանս միջերկրեայ ծովուն: ‖

Ոչ ունելով երբէք Յոյնք առագաստեալ անդր քան զկղպարս միջերկրականին, ուր տեղատուութիւն և մակընթացութիւն ծովու հազիւ թէ երևի, յորժամ զառաջինն նշմարեցին զայս երևոյթ 'ի բերան Հնդոսի, համարեցան զայն իբր հրաշ իմն, որոյ միջնորդութեամբ ածք վկայէին զտհաճիլն երկնից ընդ ձեռնարկութիւնս նոցա. (5) ‖ Այս յիրաւի մինչ տեղատուութիւն և մակընթացութիւն ծովու է նշանաւորապար մեծ 'ի բերան Հնդոս գետոյն, այսպէսի ինչ իր պարտ էր փոխատրել զայն ե-

րևոյթ

քայթ առաւել զարհուրելի առ Յոյնս: ‖ Ընդ այն բոլոր ընթացս ցուցին ոչ երբէք կորուսեալ զտեսութիւն երկրի. այն զի գնացին քերելով այնպէս հուպ առ ափամբ, մինչ զի ոչ կարացին երբէք 'ի կիր առնուլ զպարբերական հողմունս, որք դիւրացուցանեն զնաւարկութիւն ընդ Ովկիանոսն Հնդկային. Նաւէին ոչինչ պակաս քան զտասն ամիսս 'ի բովանդակել զճանապարհ իւն, որ 'ի բերանոյ Հնդոս գետոյն մինչև 'ի բերան պարսկային ծոցոյն, ոչ է աւելի քան զքսան աստիճանս. Հաւանական է, թէ 'ի մէջ բուռն խռովութեց և վտարանջութեց կրկնեցելոց վասն հակառակուեց 'ի մէջ յաջորդացն Աղէքսանդրու, խափանեալ իցէ նաւարկութիւնն առ Հնդիկս ընդ այն ճանապարհ վաղեւկ բացեալ 'ի Նէարքոսէ. Յաջողավաճառութիւն Հնդկային 'ի վար արկեալ յԱղէքսանդրիա ոչ միայն տևէր տակաւին. այլև էր այնքան աճեցեալ առ յոյն Միապետօքն Եգիպտոսի, զի նկատիւր իւր մեծ աղբիւր հարստութեցն. որովք հանդիսանայր այն թագաւորութիւն:

Յառաջադիմութին, զոր արարին 'ի նաւարկութե Դ. կէ և յերկրածանօթութեան Հռօմայեցիք, եղև միշտ Հռօմայ նուազ երևելի քան զՅունացն. Նաւորութիւն Եգ-ոյ. Հռոմէական ժողովրդեան, զինուորական դաստիարակութի իւր, և հոգին օրինաց իւրեանց զուգընթաց լինէին առ 'ի հեռացուցանել զնոսա 'ի վաճառականութեէ և 'ի մտադրութեէ նաւական իրակուեց. Հարկն ընդդէմ կալոյ աշարկու ախոյանի միում, և ոչ եթէ փափագն յարձակելոյ զվաճառականութին դրդեաց զնոսա նախնարար ուղղել զհայեցուածս առ 'ի եղանել իշխանութիւն ինչ ծովային. Թէպէտ Հռօմայեցիք ճանաչէին արագ թէ առ 'ի ստանալ զտէրութին ընդհանրական, առ որ անձկային, պիտոյ էր նոցա տիրել ծովու, սակայն նկատէին զծառայութիւնն նաւական իբր պարապումն իմն վայրագունից, և վերապահեալ

այնց քաղաքացւոց, որք ոչ էին յիմիք աստիճանի առ 'ի արժանաւորիլ ընկալեալ լինելոյ 'ի գունդս զօրաց. 'Ի բովանդակ վիպասանութեան Հռոմայեցւոց հասարակապետութեան հազիւ գտանի օրինակ մի, որ ցուցանիցէ զնա մտադրեալ նաւարկութեան, բայց եթէ ըստ որում էր այն հայթհայթանք իմն տիրապետութեան. Թէպէտ Հռոմայեցւոց զօրութիւն և մարդութիւն էարկ ընդ լծով ծառայութեան զամ ծովեզերեայ տէրութիս ծանուցեալս 'ի նախնին աշխարհի, Թէպէտ և Կարթագինէ, Յունաստան և Եգիպտոս՝ էին նուաճեալ ընդ իշխանութեամբ նոցա, տակաւին Հռոմայեցիք ոչ առին զհոգին առեւտրութեան 'ի յաղթեալ ազգացն:

Աւշ գտնելն վաճառականութեան 'ի մէջ այնր ժողովրդեան զօրականաց՝ համարեալ լինէր ապաստիճանիլ իմն 'ի լինելոյ քաղաքացի. Ակբեննական արհեստք, վաճառականութիւն, և նաւարկութիւն թողեալ լինէին գերեաց, ազատաւորաց, գաւառականաց և նուաստ քաղաքացւոց. Նաև զկնի կործանման ազատութեան՝ իբրև խստութիւն և ամբարտաւանութիւն նախնին սովորութեանցն սկսանէին խոնարհիլ, առեւտրութիւն ոչ ամբարձաւ երբէք 'ի մեծ համարում. Այն որ 'ի Յունաստան և յԵգիպտոս, և յայլ սոսցեալ կողմանս, էր շարունակեալ ընդ նախնին ջրմուղս. ես և զկնի վերածեալ լինելոյ նոցա 'ի կերպ Հռոմայեցւոց գաւառաց. Նա քանզի Հռոմ էր մայրաքաղաք աշխարհի և աթոռ կառավարութեան, բոլոր հարստութիւնք և պատուական բերք այլոց գաւառաց հաւաքեալ լինէին 'ի ներքս անդ. Հռոմայեցիք շատացեալք միայն այսու, ոչինչ փոյթ էր նոցա, թէ շահավաճառութիւն մնացէ գրեթէ բովանդակ 'ի ձեռս ազգային իւրաքանչիւր գաւառաց. Բայց տարածութիւն Հռոմայեցւոց իշխանութեան, որ պարփակէր իւր զբոլոր աշխարհն ծանուցեալ, հրակող վերապետողութիւն մեծաւորաց Հռոմայեցւոց,

և

և հոգին Հռոմէական կառավարութեան հաւասարապէս զգուշաւոր և գործունեայ, ետուն զայնպիսի իմն ապահովութիւն շահավաճառութե, զի զօրացուցին զնա նոր ուժգնութբ. Միաւորութիւն 'ի մէջ ազգաց ոչ երբէք եղև այնպէս հաստատեալ, և ոչ հաղորդակցութիւն այնպէս կատարեալ որպէս 'ի ներքս կայսրաց այսր համատարած կայսերութեան. Առ տէրութբ նորա շահավաճառութիւնն ոչ լինէր խափանեալ վասն նախանձաւորութեան մերձակայ տէրութեանց, և ոչ խրամատեալ 'ի յաճախ թշնամութեանց, և ոչ ամփոփեալ 'ի մասնական սեղմանց. Իշխանութիւն իմն վերադիտող էր այն, որ տայր կանոն, և շարժումն ճարտարութե մարդկային ազգի, և որ վայելէր 'ի պտուղս ընկերակցեալ ջանից իւրոց:

Նաւարկութին ասպնջական եղև այսպիսի իմն ազդեցութեց և շահաւորեցաւ անտի. Իսկ և իսկ իբրև առին Հռոմայեցիք զճաշակ արևելեան պերճութե, տուրևառութին ճանապարհաւ Եգիպտոսի ը Հնդկաց յառաջ շարժեցաւ նոր եռանդիւ, և ընդարձակեցաւ մեծագոյն տարածութբ. Զօրութբ յաճախելոյ առ Հնդկային ցամաքն՝ ծանեան նաւորդք զպարբերական ընթացս հողմոց, որք յՈվկիանոսին՝ որ զատուցանէ զԱփրիկէ 'ի Հնդկաց, շնչեն յարևելից սակաւ ինչ պէսպիսութբ զկէս ամ, և զայլ վեց ամիս հաւասար կայունութբ յարևմտից. Քաջալերեալք յայսմ գիւտողութե, 'ի բաց թողին զնախկին յամր և վտանգաւոր գնացս իւրեանց առ ծովեզերօք. և հազիւ թէ արևմտեան հողմն հրաւիրէր զնոսա, մեկնէին յՕկէլիդեայ առ բերան Արաբիոյ ծոցոյն, և անվեհեր երթային առ 'ի ձգիլ իբր խոտորնակի ընդ Ովկիանոս. Միակերպ ուղերձումն Մօնսօնայ, որ է Մօսումն, այս է, հողմն կոչեցեալ վաճառականութե, որ լնոյր զտեղի կողմնացուցին, և առնէր զառաջնորդութե աստեղացն ոչ յոյժ հարկաւոր, ածէր զնոսա առ

նա-

Նաւահանգիստն Անուսիրիդեայ յարեւմտեան եզր Հնդկային ցամաքին . Աստէն առնուին 'ի նաւ ըղ-բեան իւրեանց . և վերադառնալով նպաստիւ ա-րեւելեան հողմոյ՝ կատարէին զճանապարհ իւրեանց առ ծոցն Արաբիոյ 'ի միում ամի. Այս մասն Հնդ-կաստանի ծանուցեալ այժմ անուամբ ծովեզեր Մալապարու, երեւի լեալ հեռաւորագոյն սահման նախկին նաւարկուե յայնմ կողման երկրագնտոյս . Զուկար ծանօթութիւն, զոր ունէին նախնիք զայ-լոց անրաւ կողմանց, որք են առաւել յարեւելս կոյս, հանէին յայնց սակաւ բաղդորդաց՝ որք գնա-ցեալ էին յայց առնել այնց կողմանց ցամաքաւ , Արշաւանք նոցա ոչ էին կարի իմն տարածեալք . և է հաւանական, թէ մինչդեռ Հռոմէական հա-ղորդակցութիւնն տեւէր ընդ Հնդկաց , ոչ ոք ճա-նապարհորդ ընդմտանէր երբէք եւ անդր քան զա-փունս Կանճէ գետոյն :

(6) Հաւանական է եւ , թէ սոքա հազիւ երբէք շարժէին առ 'ի յառաջ խաղալ այնքան , կամ յաղագս հետաքրքրութեն , կամ յաղագս առար-կայից տուրեւառական շահուն. Յայսմանէ հետեւի, թէ գաղափար նախնեաց վերաբերեալ առ դիրս այնր մեծի գետոյ՝ էր բոլորովին մոլորական. Պտո-ղոմէոս դնէ զծիւղն Կանճեայ , զոր ինքն զանազա-նէ անուամբ մեծի բերանոյ , 'ի հարիւր քառա-սուն և վեց աստիճանսն երկայնութեան յառա-ջին միջօրականէ իւրմէ, որ յԵրանելեաց կղզիսն. Բայց իսկական երկայնութի իւր հաշուեալ յայն միջօրականէ՝ որոշեալ է այժմ աստղաբաշխական նշմարութեամբք լինել միայն հարիւր և հինգ աստի-ճանս . Երկրագիր ոմն գերազանց անկանելոց էր արդեօք յայսպիսի իմն մեծ մոլորութիւն վն ան-կատար ծանօթութեցն , զորս ընկալեալ էր վե-րահայեցմամբ այնց հեռաւոր տեղեաց . և այս յայտնի հաւաստիք են մեզ , թէ հաղորդակցութիւն ընդ այնց ոչ էր յաճախեալ . Նկատմամբ կող-

մանցն

մանցն Հնդկաստանի անդր քան զԼյանձէ՝ իմացողութիւն նորա էր ևս առաւել պակասաւոր, և առաւել տարապայմանք էին սխալանք իւր. Գոլից պարապ նշմարելոյ յայլում տեղւոջ, թէ նա եդեալ է զաշխարհն Սինէացւոց ոչինչ պակաս քան զվաթսուն աստիճանս աւելի յարևելակողմն, որ ոչ է ճշմարիտ դիրք իւր. Անվիլլէ վարդապետն՝ մի յառաւել գիտնաւորաց և յառաւել ուսումնականաց 'ի մէջ արդի երկրագրաց, եդեալ է զայս նիւթ 'ի պայծառ խմն տեսութեն յերկուս ճառսն հրատարակեալս յիւրմէ : ‖

Նաւահանդէսքն Եգիպտոսի, որք շահավաճառ լինէին 'ի Մուսիրիտէ, էին բռնաւորեալք արդարև խնկօք և այլ հարուստ տարազուք ցամաքին և կղզեաց ներքսագոյն Հնդկաստանին. սակայն այսպիսի իրք տարեալ լինէին յայն նաւահանգիստ, որ եղեալ էր վաճառատեղի այնպիսի վաճառաց, 'ի նոյն իսկ հնդկաց 'ի վր քանօէից արարելոց և փորելոց 'ի միոջէ ծառոյ. Վաճառականք Եգիպտացիք և Հռոմայեցիք շատացեալք ստանալով զայսպիսի իրս այնպիսի եղանակաւ, ոչ համարեցան հարկաւոր փորձել զանծանօթ ծովս, և գնել զանձինս 'ի վտանգաւոր նաւարկութեան 'ի խնդիր երկրացն՝ ուր գոյանային այնք. Բայց որչափ և երկրածանօթութիւնք Հռոմայեցւոց 'ի Հնդկաստանի էին այսպ կոպարաւորեալք, տուրևառութիւնն, զոր ունէին անդ, էր այնպիսի, որ կարէ երևիլ նշանաւոր նաև յառաջիկայ դարուս. յորում վաճառականութին Հնդկային գեր 'ի վերոյ եղև մեծապէս քան զգործածութի կամ ըզգաղափար որպիսի և իցէ նախընթաց պարբերու իւրոյ. Տեղեկացեալ եմք 'ի հաւատարիմ հեղինակէ միոջէ, թէ տուրևառութին ընդ Հնդկաց հանէր յիւրաքանչիւր ամի 'ի կայսերութէ Հռոմայեցւոց աւելի քան զչորեքհարիւր հազար լիրէ ըսթէռլինկաց, որք են իբր ութն հարիւր հազար

ոս-

տակի, և յայլն ումեքէ, թէ հարիւր քսան և մի նաւք առաքատէին ամի ամի 'ի ծոցոյն Արաբիոյ առ այն աշխարհ:

Այս նոր ոճ նաւելոյ 'ի Հնդիկս՝ է առաւել նշանաւոր զոռւմն նաւարկուն 'ի ժամանակին, յորում Հռոմայեցւոց իշխանութիւն շարունակէր. Բայց 'ի վաղ ժամանակս ծանօթութի աշխարհաց ստացեալ եղև աւելի ՚ի ցամաք, քան թէ ՚ի ծով. (7) Յայտնի իմն է, թէ երկրածանօթութիք նախնեաց եղեալ են նախապետաբար ՚ի ցամաք. և արդեանցս նախապետաբար ՚ի ծով. Յառաջադիմութի տիրապետութեան ընդածեր առ առաջինն, և յառաջադիմութի տուրևառութեն առ երկրորդն. Ի համեմատել իմն դիտողութի Եսթրաբոնի, թէ տիրապետութիք Աղեքսանդրու մեծի ետուն ճանաչել զարևելս. տիրապետութիք Հռոմայեցւոց բացին զարևմուտս, և տիրապետութիք Միհրդատայ կամ Միթրիդաթայ արքային Պոնտոսի զհիւսիս. Ի ձգել երկրածանօթութեան միայն ընդ ցամաք, յառաջադիմութիք իւր լինէին յամր, և գործողութիւնք իւր կոպտաբարոյք. Յորժամ ձգի միայն ընդ ծով, դնացք իւր կարեն լինել առաւել տարածեալ, և յառաջատութիք իւր առաւել սրընթացք. բայց կրէ զմասնաւոր պակասութիս. Թէպէտ կարէ տալ ճանաչել զեզերս զանազան աշխարհաց, և ապահով առնել զեզերաց նոցա, թէ մինչև ցոր վայր յՈվկիանոսէ իցէ հաստատեալ, բայց թողու զմեզ բնաւին 'ի տգիտութեան վերահայեցմամբ ներքնագոյն վիճակի նոցա. Անցեալ են ամք աւելի քան զերկերիւր և յիսուն, յորմէհետէ Եւրոպացիք նաւեցին շուրջ զհարաւային դերսարի Ափրիկոյ, և շահավաճառք եղեն 'ի մեծագոյն մասին նաւահանգստից իւրոց. բայց ՚ի երևելի իմն տարածութիւն այնր մեծի ցամաքի՝ գրեթէ ոչինչ աւելի արարեալ են, քան թէ նկատել զեզերս նր, և նշանակել զծայրս և զափունս իւր. Ներքին դա-

Երկրածանօթութիք նախնեաց ընդ ցամաք.

գաւառք իւր միայն ըստ մեծի մասին անծանօթք · Նախնիք որք ունէին զծանօթութիւն ինչ անկատար յայժ ծովեզերաց նորա, բաց յայնց, որք ուղեւալ էին 'ի միջերկրականէն կամ 'ի կարմիր ծովէն, սովոր էին ընդմտանել 'ի ներքին գաւառս իւր · և եթէ պարտիցիմք հաւատալ վկայութեան Հերոդոտոսի և Դիոդորոսի Սիկիլացւոյ, լրտեսեալ էին 'ի նոցանէ զբազում մասունս այժմոյս բնաւին անծանօթս · Աշխարհագրական գիտութիւն երկրի մնացէ միշտ անխնամ և անկատար, եթէ ոչ վերստին միաւորեսցին երկրքեան եղանակք առնելոյ զերկրածանօթութիւնս : ‖

Արժէ է ասել զՀռոմայեցւոց թէ վասն սնոտիական հակակրութեան իւրեանց առ նաւական իրս, անփոյթ եղեն բոլորովին զերկրածանօթութէ ճանապարհաւ ծովու · թէպէտ և էր դիւրագոյն և առաւել առձեռնպատրաստ եղանակ գտանելոյ ըղնոր երկիր · Օժանդակեաց մեծապէս առ 'ի ընդարձակել զերկրածանօթութիւնս ընդ ցամաք՝ երջանկութիւնն յաղթական զինուց նոցա · և նրաց նաև զճանապարհ ընդ նոր ծովս ոչ եւս տեսեալս · Յառաջ քան զտիրապետութիւն Հռոմայեցւոց քաղաքական ազգք նախնեաց ոչ ունէին զհաղորդութի ընդ ազգացն Եւրոպիոյ, որք կերպաւորեն այժմ զփարթամագոյն և զհզօրագոյն թագաւորութիւ · Ներքինն Սպանիոյ և Գաղղիոյ սակաւ ճանաչիւր · Բրիտաննիա զատուցեալ 'ի մնացեալ մասնէ աշխարհի՝ ոչ էր լեալ երբեք այց արարեալ, բայց եթէ 'ի Գաղղիացւոց դրացեաց իւրոց, և 'ի սակաւուց վաճառականաց Կարթագենեցւոց · Անուն Գերմանիոյ հազիւ թէ լուեալ էր · Զէնք Հռոմայեցւոց ընդմտին յամ ծանօթացեալ տեղեան · արկին ընդ լծով զՍպանիա և զԳաղղիա ողջոյն · տիրապետեցին զմեծագոյն և զարգաւանդագոյն բաժինն Բրիտաննիոյ · յառաջ խաղացին 'ի Գերմա-

մանիա մինչև 'ի գետն Նիլա. տեղեկացան Ափրիկէ զգաւառացն, որք տարածին առ միջերկրեայ ծովուն յԵգիպտոսէ յարեւմուտս կոյս ցնեղուցս Գատիսեայ. Ափսիա ոչ միայն նուաճեցին ընդ իշխանութեամբ իւրեանց զմեծագոյն թիւ գաւառացն, որք բաղկացուցանէին զթագաւորութիւն Պարսից և Մակեդոնացւոց, այլ և զնոյն յաղթութեանց իւրեանց 'ի վերայ Միհրդատայ և Տիգրանու՝ տեսանի, թէ նշմարեցին զերկիրս հիւսիսոյ սեաւ և կասպիական ծովուն առաւել հոգաբարձութ, զոր ոչ արարեալ էին յառաջ. և թէ մեծին զտուրևառութի իմն առաւել պատշաճական քան զՅունացն 'ի մէջ փարթամ և վաճառական ցեղիցն բնակացելոց յայնժամ շուրջ զսեաւ ծովուն:

Անկատարու- Երկրագրական ծանօթթեանց առ նախնիս. Յայսմ կարճառօտ քննութեան երկրածանօթութեանց և նաւարկութեան, զոր յառաջածի յառաջնոյ նշուլէ վիպասանական ծանուցման մինչև 'ի կատարել հաստատութեան Հռոմայեցւոց տէրութեան, թերևս թէ յառաջադիմութիւն նաւարկութեան լեալ է յամրագոյն ևս. Ոչ երբեք և ոչ իսկ հաւասարեալ այնմ, որ կարէր սպասել 'ի գործունէութեան և 'ի համարձակութեան մարդկեղէն ոգւոյ, կամ կատարել 'ի կարողութեան մեծամեծ կայսերութեանց, որք յաջորդաբար տիրեցին աշխարհի. Եթէ հերքեմք զպատմութիւս, որք են առասպելականք և մթինք, եթէ ապաստանիմք հաստատապէս 'ի լուսաւորութիւս և 'ի վարդապետութիւս արժանահաւատ վիպասանի ուրուք, առանց փոխանակ կացուցանելոյ զվարկս երևակայութեան, կամ զնորագս ըստուգաբանից, հարկ եղիցի աւարտաբանել, թէ ծանօթութիւն, զոր ըստացեալ ունէին նախնիք զընակ երկրագնտոյ, էր իբր անսահմանաբար ամփոփեալ. Եւրոպիա հազիւ ծանօ չէին զգաւառս տարածեալս յարևելեան մասին Գերմանիոյ. Նոյին անդիտանային համատարած կողմանցն, որք են այժմ ենթարկեալ արքային Դանիոյ, Սվեցւոյ, Պրուսիոյ, Պոլոնիոյ, և կայսերութեան Ռու-

սաց

ծաց. Առաւել ամուլ վայրքն 'ի ներքս արջային շրջանակին միայն բոլորովին մթինք. Ափրիկէ հետազօտութիւնք նոցա ոչ անցին անդր քան զգաւառսն, որք մօտ են միջերկրականին, և որք կայացեալ են առ արևմտեան եզերօք Արաբիոյ ծոցոյն. Ասիա ոչ ունէին ծանօթութիւն, որպէս նշմարեցի 'ի վերոյ, զարգաւանդ և զհարուստ կողմանցն անդր քան զԳանգէ, որք մատակարարեցին զպատուականագոյն տարազս. որք յարդեան ժամանակի լեալ են մեծ առարկայ Եւրոպական տուրևառութեան ընդ Հնդկաց. և ոչ իսկ կարէ ասել, թէ ընդմտեալ իցեն երբէք յայն անբաւ տարածութիւն տեղակալեալս 'ի Թափառական ազգաց կոչեցելոց 'ի նոցանէ ընդհանրական անուամբ Սարմատացիք, կամ Սկիւթացիք, և ժառանգելոյ յայսմ ժամանակի 'ի պէսպէս անուն Թաթարաց և յասիական հպատակաց Ռուսիոյ:

Բայց է կարծիք իմն, որ նախազօրացեալ էր ընդհանրապէս առ նախնիս, և որ տայ մեզ զառաւել սքանչելի գաղափար զնոցա ստացմանէն, զոր արարեալ էին 'ի ճանաչման բնակելի երկրագնդոյս, քան զայն, որ կարիցէ առեալ լինել յինէ և իցէ պատմութենէ երկրածանօթութեանց իւրեանց. Ենթադրէին նոքա, թէ երկիրս իցէ բաժանեալ 'ի հինգ մասունս. զորս զանազանէին անուամբ գօտեաց. Զերկուսն 'ի նոցանէ, որք էին առաւել մօտաւորք բևեռացն կոչէին ցրտային գօտիս. և հաւատացուցանէին զինքեանս, թէ ծայրագոյն ցուրտն, որ թագաւորէր անդէն մշտնջենաբար, ոչ թողացուցանէր բնակիլ անդ. զմիւս այլ կայացեալ 'ի ներքոյ հասարակածին, որ և տարածիւք 'ի միջէ կողմանէ առ միւսն դէպ յարևադարձս՝ կոչէին այրեցած գօտի. և պատկերակերպէին զայն բոլորովին հրացեալ վասն շարունակ տօթոյ, այնպէս-, զի իցէ հաւասարապէս զուրկ 'ի բնակչաց. զայլ երկու գօտիսն, որք տեղակալէին

Նշանաւոր հատուածոյ այսր մի.

զմնա-

զմիացեալն երկրի , անուանեալ էին բարեխառն , և խորհէին , թէ այնք միայն եւեթ , ընդ որովք կեանքն կարէր տևել , սահմանեալ էին մարդոյ վասն բնակութեան իւրոյ . Այս խելագար կարծիք ոչ էր մտածութեան իմն ազէտ խաժամուժին , կամ երևակայական ստեղծուած բանաստեղծից , այլ գրութեան ընկալեալ յառաւել լուսաւորեալ փիլիսոփայից , և յառաւել զգուշաւոր վիպասանից և երկրագրաց 'ի Յունաստանի և 'ի Հռոմ . Ըստ այսմ տեսականութեան ընդարձակ իմն բաժին երկրի դատեալ էր անընդունակ պահելոյ զմարդկային տեսակ . Այնք բևեռի և մերձաշատ վայրք 'ի ներքս այրեցած գօտւոյն , զորս գիտեմք այժմ դարմանել ոչ միայն զբնակիչս իւրեանց կարևորօք և հեշտալիօք կենաց ամենահարուստ զեղմամբ, այլ և հաղորդել միացեալ երկրի զարմիս իւրեանց , ենթադրեալ լինէին աթոռ ամլութեան և անշէնութեան . Եւ քանզի ամ մասունք երկրագնտոյս ծանուցելոյ 'ի նախնեաց գտանէին 'ի ներքս բարեխառն հիւսիսային գօտեաց, կարծիք նց՝ թէ միւս բարեխառն գօտին իցէ լի բնակչօք, ունէր խարիսխ ըղտրամաբանութեան և զմակաբերութեան , և ոչ զտեսութեան . Տային և ևս իմանալ, թէ նկատմամբ անտանելի տօթոյն՝ այրեցած գօտին իբր անյաղթելի կրճիմն եղեալ 'ի մէջ երկուց բարեխառնից , պարտ էր միշտ խափանել զհաղորդակցութիւն 'ի մէջ երկաքանչիւր անհատից . Այսու եղանակաւ այս վտարանդի տեսականութեան հաւաստէ ոչ միայն , թէ նախնիք ոչ ճանաչէին զճշմարիտ վիճակ երկրագնտոյս , այլ և դիմէ 'ի մշտնջենաւորել զտգիտութիւն նոցա 'ի նմա , առաջի առնելով իբր բնաւին անգործադրելի զամ ջանս հոգալոյ զհաղորդակցութիւն իմն յայն մասունս :

(8) Պտղարիպն նախնեաց հայելով առ ստուճոյն այսպիսի տարապայման տօթոյ յայրեցած գօտւոջ մինչև առնել զայն անբնակ , և առ յարա-

կայութիւն նոցա յայսմ մոլորութեան, նաև յետ որոյ սկսան ունել զառևտրական հաղորդակցութիւն ինչ ընդ զանազան մասանց Հնդկաստանի եղելոց 'ի ներքս արևադարձից, պարտի երևիլ այնպէս եղական և տարադէպ, որպէս զի անհորժելի իմն եղիցի ումանց յընթերցողաց իմոց յառաջ բերելն ըզվկայութիւն իմն այսր կարծեաց, զոր ունէին նոքա, և տալ պատճառ առերևոյթ անբաղկացուն տեսականութեան նոցա ընդ փորձառութիւն իւրեանց։ Չիչերոն, որ ուշ դնէր ամենայն մասանց փիլիսոփայութեան ծանուցելոյ նախնեաց, ցուցանէ հաւատացեալ, թէ այրեցած գօտին իցէ անբնակ. և թէ հետևաբար ոչ կարիցէ լինել հաղորդակցութիւն 'ի մէջ հիւսիսային և հարաւային բարեխառն գօտեաց. Ի ներքս ածէ զԱփրիկեցին խօսել այսպէս առ երիտասարդն Սկիփիոն. * Տեսանես զայս երկիր շրջապատեալ և պնդեալ 'ի գօտեաց ինչ, որոց երկուքն 'ի մեծագոյն տարակացութեան միմեանց և վերամբարձ ունելով զհակադրեալ բևեռս երկնից, սառուցեալ են 'ի մշտնջենաւոր իմն ցրտոյ. միջինն և առաւել ընդարձակն քան զամենեսեան տոչորեալ է 'ի տապոյ արեգական. երկուքն են բնակելիք. Ժողովուրդքն 'ի հարաւային գօտւոջ են առ մեզ հակոտնեայք, ընդ որոց ոչ ունիմք զկապակցութիւն. ‖ Այսպէս ընթերցեալ լինի յերազն Սկիփիոնի. Գեմինոս փիլիսոփայն Յոյն' ժամանակակից Չիչերոնի 'ի կիր առնու զնոյն վարդապետութիւն ոչ 'ի հասարակ ինչ գործում, այլ 'ի ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՒՄ ԱՌ ԵՐԵՒՈՅԹՍ ԵՐԿՆԻՑ, ճառ լոկ գիտնական * Յորժամ խօսիմք, ասէ, զբարեխառն հարաւային գօտւոյ և զբնակչաց նորա, և զայնցանէ, որք կոչին հակոտնեայք, պարտ է իմանալ միշտ. թէ ոչ ունիմք զստոյգ տեղեկութիւն, կամ զծանօթութիւն զբարեխառն հարաւային գօտւոյ վերահայեցմամբ բնակ լինելոյ կամ ոչ. Բայց 'ի բոլորակ ձևոյ երկրի և յընթացիցն, զոր ունի ա-

րեգակն 'ի մէջ արեւադարձից, մակաբերի լինել միւս այլ գօտի կոյացեալ 'ի հարաւ, որ վայելէ 'ի նմին աստիճանի բարեխառնութեան ընդ հիւսիսայնոյն, ուր բնակիմք . ‖ Կարծիք Փլինիոսի բնազննի նկատմամբ այսց երկուց գլխոց էր նոյն . * Նա, ասէ, հինգ բաժանմունք երկրի կոչեցեալք գօտիք, բոլոր բաժինն այն, որ տարածի մերձ երկուց բեւեռաց հակադրելոց՝ է հարստահարեալ 'ի սաստիկ ցրտոյ և 'ի յաւէժական սառնամանեաց. Ընդ ոչ երեւելով տեսիլ քաղցրադոյն աստեղաց, թագաւորէ յաւէժական խիտ մութն, կամ գոնէ աղօտ խիտ լոյս, որ անդրադարձի 'ի շրջակայ ձեանց. Մէջն երկրի, յորում է հոլովումն արեւու, բորբոքեալ և վառեալ է 'ի բոցոյ և 'ի գոլորշեաց. 'Ի մէջ այսց նահանգաց և հրոյ և սառին կան այլք երկու բաժինք երկրի, որք են բարեխառն, բայց պատճառաւ վառեալ անցիցն միջադրելոց՝ ոչ կարէ լինել հաղորդակցութիւն 'ի մէջ նց. Այսպէս երկինքն զրկեալ է զմեզ յերից մասանց երկրի. ‖ Ըսթրապօն տայ մեզ զկարծիս իւր ոչ նուազ պարզ եղերօք . * Բաժինն երկրի, ասէ, որ կայ մերձ հասարակածին յայրեցած գօտւոջ, եղեալ է անբնակ վասն մեծի տօթոյն . ‖ Ընդ այսոսիկ կարող էի յարել նաև զվկայութիս այլոց բազմաց մեծարու փիլիսոփայից և վիպասանից նախնեաց ։

Այլ 'ի պարզաբանել զմիտս, յորում այս վարդապետութիւն ընդհանրապէս ընկալեալ եղև, 'ի դէպ է նկատել, զի Փարմէնիտէս, որպէս պատմէ Ըսթրապօն, եղև առաջինն, որ բաժանեաց զերկիր 'ի հինգ գօտիս . և նա երկայնաձգեաց զկլոպարս գօտւոյն, զոր ենթադրէր անբնակ պատճառաւ տօթոյն, անդր քան զարեւադարձսն. Արիստոտէլ, որպէս գիտեմք նմանապէս 'ի Ըսթրապօնայ, հաստատեաց զեզերս տարբեր գօտեաց նովին եղանակաւ, որով նոքին սահմանեալ են յարդի երկրագրաց . Բայց յառաջադիմութիւն երկրա-

ծա-

ծանօթութեան աստիճանաբար ցուցանելով, թէ զանազան կողմանք երկրի, որք կան 'ի ներքս արեւադարձից, ոչ միայն էին բնակեալք, այլ եւ բերրիք եւ բազմամարդք, այս շարժեաց զվերջին երկրագիրս 'ի պարագրել զկոպարս այրեցած գօտւոյն. Ոչ է դիւրին ինչ ստուգել որոշմամբ զեզերսն, զորս սահմանեցին այնմ. 'Ի միջէ աստղոնածոյ Ըսթրապոնի, որ ը̅ իմում դատման է միակ հեղինակ նախնեաց, յորմէ ընդունիմք զլոյս ինչ շուրջ զայսու ենթակային, կարէի մակաբերել, թէ նոքա, որք քաջ հաշիւ առնէին ըստ չափոյ երկրի արաբեցելոյ Էրատոսթենեայ՝ ենթադրէին թէ այրեցած գօտին պարունակէ իբր զվեշտասան աստիճանս, ութն յիւրաքանչիւր կողման հասարակածին. ուր հետեւողք հաշէին Փոսիդոնիու տային այրեցած գօտւոյն իբր քան եւ չորս աստիճանս, կամ ինչ ինչ աւելի քան զերկոտասան աստիճանս յիւրաքանչիւր կողմանէ հասարակածին. Ըստ կանոնի առաջին կարծեաց իբր երկու երրորդք այնր բաժնի երկրի, որ է եդեալ 'ի մէջ արեւադարձից, էին համարեալք իբր բնակք. եւ ըստ կարգի վերջնոյն՝ իբր կէս նորա. Այսու ամփոփմամբ վարդապետութիւն նախնեաց վերաբերեալ առ այրեցած գօտին՝ երեւի նուազ անտեղի. եւ բարւոք կարեմք խելամուտ լինել պատճառին, որոյ վասն պնդէին, այսմ գօտւոյ լինել անբնակ. Նաեւ զկնի բանալոյ նց զհաղորդակցուի իմն ը̅ զանազան տեղեացն 'ի ներքս արեւադարձիցն. Յորժամ արք գիտնականք խօսէին զայրեցած գօտւոյ, նկատէին զայն, ոչ եթէ պարասահմանութի երկրագրաց լինէր կոպարաւորեալ առ վեշտասան, կամ թէ աւելի առ քան եւ չորս աստիճանս. եւ զոր օրինակ ոչ ճանաչէին գրեթէ բնաւ զկողմանս մօտաւորս հասարակածին, կարէին միշտ ենթադրել զայնս անբնակ. Իսկ 'ի հասարակ եւ 'ի ռամկական զրոյց՝ անուն այրեցած գօտւոյ տակաւին տուեալ լինէր

թովանդակ այնմ՝ բաժնի երկրի, որ է եդեալ 'ի մէջ արեւադարձից. Ներելի թէ Չիչէրօն ոչ էր տեղեկացեալ զգաղափարաց վերջին երկրագրաց. Եւ ըստ բաժանման փարմենիդեայ, գծագրէ զայրեցած գօտին իբր առաւել տարած քան զհինգսն. Ամենք 'ի Նախնեաց մերժեցին զգաղափարն վերաբերեալ առ անհանդուրժելի տապն այրեցած գօտւոյն իբր մոլորութի ինչ ռամկական. Այս էր, ասէ փլուտարքոս, միտք Պիւթագորայ. Եւ վերառեալ լինի 'ի Ըսթրապօնայ, թէ Երաթոսթէնէս եւ փօլիպիոս եւս յարեալ էին 'ի նոյն կարծիս. Առ այսորիկ տեսանի, զի Պտղոմէոս ոչ կալաւ զնկատումն ինչ առ վաղեմի վարդապետութիւն եւ առ կարծիսն, որ յաղագս այրեցած գօտւոյն: ‖

Այլ որչափ եւ անկատար եւ անհոգացեալ երեւիցի երկրագրութիւն Յունաց եւ Հռոմայեցւոց վերաբերութեբ առ ներկայ կատարելութի այսր գիտութեն, այսու ամե յառաջադիմութեի նց յերկրածանօթութիս պարտի համարիլ երեւելի, եւ բարձր նպատակն, առ որ ժամանեցին նաւարկութիւն եւ տուրեւառութիւն, եթէ դնիցին 'ի բաղդատութեան ընդ տգիտուե նախնագոյն ժամանակաց. Յորչափ կայսերութն Հռոմէական կալաւ զայնքան ոյժ նախապահելոյ զաւագութի իւր 'ի վր ժողովրդոցն ստացելոց եւ պահելոյ զնո միացեալս, էր առարկայ ինչ հրապարակական կանոնաւորման, որպէս եւ առանձնական ըղձուե քննելն եւ գծագրելն զերկիրսն, որք բաղկացուցանէին զայն մեծ մարմին:

Օգուտն Երկրագրութեան 'ի յետ Պտղոմէոյ.

Նաեւ յորժամ այլք գիտութիք սկսան նուազել, երկրագրութիւն ճոխացեալ 'ի նորանոր գիտողուեց, եւ աճեցուցեալ 'ի փորձոյ իւրաքանչիւր դարու եւ 'ի պատմուեց ամ ճանապարհորդի, տակաւին կատարելագործիւր. եւ էհաս առ բարձրագոյն կէտ կատարելութե եւ ինամոտութե, ուր երբէք չէր հասեալ յառաջ, ճարտարմտութբն եւ ուշիմութբն Պտղոմէայ իմաստասիրի. Նա ծաղկեցաւ յերկրորդ

հա-

Հարիւրեկին թըւականութեն քսի. և հրատարակեաց զստորագրութի իմն երկրային գնտոյ առաւել ընդարձակ և առաւել անվթար քան զայն որոյ և իցէ 'ի նախորդաց իւրոց:

Բայց բուռն օգտմունք սկսան յետ սակաւուց սասանեցուցանել զգրութիւն Հռոմէական. Ճակատագրական փառասիրութիւն կամ մոլեգնութիւն Կոստանդինու 'ի փոխելն զաթոռ կառավարութեն, բաժանեցին կամ տկարացուցին զզօրութի նորա. Խուժադուժ ազգք, զորս յառաջատեսութիւն այ նախապատրաստէր իբր իւր գործիս առ 'ի կործանել զհզօր շինուած Հռոմէական իշխանութեն, սկսան ժողովել և հանել զզօրս իւրեանց 'ի սահմանս իւր. և կայսրութիւն մեծ եղև յանկումն. 'Ի խոնարհման, միանգամայն և 'ի ծերուն տրուն Հռոմայեցւոց անկարելի էր գիտութեանց շարունակել զստացումն. Զանք մտաց էին յայնմ շրջանի թօշնեալ և տկար զոյգ ջանից կառավարութեն. Աչտեսանի, թէ 'ի ժամանակէն Պտղոմեայ երկրագրական գիտութիւն ոչ նշանաւոր աճումն ընկալեալ իցէ. և ոչ թէ մեծ ինչ փոփոխումն 'ի վաճառականութեն եղեալ. միայն թէ Կոստանդինուպօլիս վասն շահաւէտ կայաւորութեն իւրոյ և վն խրախուսութեն արևելեան կայսերաց եղև քաղաք իմն վաճառատեղի յառաջնում աստիճանի:

Յարձակումն բարբարոսաց ազգաց 'ի վերայ Հռոմէական կայսերութե.

'Ի վախճանի ազգքն, որք այնպէս ընդ երկար ժամանակ թանձրացեալ էին շուրջ զՀռոմէական կայսրութեբ, ճայթեցան 'ի փոթորիկ իմն. Ազգք խուժադուժք վիժեցան անդր աննահանջելի ուժգնութեբ և հանրական նուաճելութբ պատճառելելով 'ի հեղեղէն, որ ծածկեաց զԵւրոպիա. Արհեստք, գիտութիւնք, գիտք, և երկրածանօթութիւնք Հռոմայեցւոց կորեան և չքացան. Համօրէն զանազան ցեղք կամ տիրապետեալք կամ հատատեալք 'ի պէսպէս գաւառս, էին բնաւին անկիրթք, առանց գրոց, առանց արհեստից, առանց կանո-

[illegible] [illegible] [illegible] նոց 'ի վեր [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

նաւոր կառավարութեն, օրինաց և ստորակարգութեն. Ունէին ոմանք 'ի նոցանէ վարս և օրինադրութիւնս ուրոյնականս և անսամնականս, և նմին իրի անմիամնականս ընդ ընկերակցական միաւորութեան. Եւրոպիա տեղակալեալ յայսպիսի բնակչաց երևեցաւ վերստին անկեալ յերկրորդ իմն տղայութի. և հարկեցաւ վերանուլ նորոգ զընթացս իւր առ 'ի բարեգունանալ և 'ի կահաւորիլ իմաստութբ և քաղաքականութբ. Առաջին գործ տիրապետութեն այսց անագորոյն յափշտակողաց եղև լուծանելն զմիաւորութիւնն, որով Հռոմէական իշխանութին կապեալ ունէր զազգ մարդկան. Նորա բաժանեցին զԵւրոպիա 'ի փոքրիկ տրութիւնս անկախս և զանազանս 'ի միմեանց լեզուաւ և սովորութբք. Վասն այսորիկ ոչինչ կապ կայանայր 'ի մէջ անդամոց այնց բաժանեալ և ներհակ հասարակուեց. Սովորեալ մարդիկ 'ի պարզ իմն տարազ կենցղ, և խորշելով 'ի ճարտարութէ, ունէին սակաւ պիտոյս առ 'ի կեալ. և պակասէր նց աւելորդն առ 'ի կարգադրել. Անուանք օտարի և թշնամւոյ եղեն անուանք նոյնանշանք. Նախազօրանայր ամ ուրեք միայն սովորութին. և հաստատեցան օրէնք, որք առնէին անհամոյ և վտանգաւոր զերթալն արտաքոյ 'ի ճանապարհ. Քաղաքք, առ որս միայն կարէին տանել զաւուրևառութին, էին 'ի սակաւ համարի՝ և զուրկք յայնց ապահարկութեանց, որք պատճառեն զապահովութի, և զարթուցանեն զեռանդն. Ոչ մնային գիտութիւնք, և մանաւորապէս այնք, յորոց վերայ հիմնեալ է երկրագրութիւնն և նաւարկութիւն. Պատմութիւնք նախկին յառաջադիմութեց և գտմանց պարունակելոց 'ի Յունաց և 'ի Հռոմայեցւոց մատենագիրս՝ էին կամ արհամարհեալք, կամ չարաչար իմացեալք. և այսպէս ծանօթութի հեռաւոր աշխարհաց կորուսեալ էր. կայսութի նց, բերքն և գրեթէ անուանքն իսկ կային 'ի մթան։

Մի միայն պարակայութիւն արգել զվաճառական
կրթութիւն 'ի գագարելոյ բոլորովին, Կոստանդի-
նուպօլիս, թէպէտ և սպառնացեալ յաճախագոյնս վնա-
յամէհի ասպատակողացն, որք առ հասարակ յա-
տակեցին զմնացեալ մասն Եւրոպիոյ, եղև այն-
պէս բարեբաստ, զի զերծաւ յապականիչ կատա-
ղութէ նոցա. Պաշտեցան յայնմ քաղաքի ծանօ-
թութիւ հին արհեստից և երկրածանօթութեանց.
գոյր անդ ճաշակ վայելչութեան և շքոյ. Որք և
պերճութիւք օտար տեղւաց ցանկացեալք էին ան-
գէն. և տուրևառութիւն հանապազորդէր 'ի ծաղ-
կումն, յորժամ յայլ ամ մասին Եւրոպիոյ տե-
սանիւր շիջեալ. Քաղաքացիք Կոստանդինուպօլսոյ
ոչ սահմանաւորէին զվաճառականութիւ իւրեանց
առ կղզիսն Արքիպեղագոսին, կամ առ ընթերա-
կայ ծովեզերսն Ասիոյ, այլ ընդգրկեցին զընդար-
ձակագոյն իմն գաղափար. և զհետ երթալով ըն-
թացիցն, զոր նախնիք նշանակեալ էին, մուծա-
նէին զվաճառս արևելեան Հնդկաց յԱղէքսան-
դրիոյ. Իբրև Արաբացիք անջատեցին զԵգիպտոս
'ի Հռոմէական կայսրութենէ, ճարտարմտութի Յու-
նաց եգիտ զնոր իմն ճանապարհ, ընդ որ բերք
Հնդկաց կարէին փոխաբերիլ 'ի Կոստանդինուպօ-
լիս. Գայլն սոքա ընդ Ինդոս գետ ցորչափ նա-
ւարկելի է. անտի ընդ ցամաք յափունս Օքսու-
սայ. և 'ի խոնարհ ընդ հոսանս իւր իջանէին 'ի
Կասպից ծով. Աստէն մտանէին 'ի Վօլկա, և ա-
ռագաստելով 'ի վի, անցանէին ցամաքաւ 'ի Թա-
նայիս գետ, որ ածէր զնս 'ի սևա ծով. ուր
նաւք եկեալք 'ի Կոստանդինուպօլսոյ սպասէին հա-
սանելոյ նց. Այս արտաքոյ կարգի և տաղտկալի
փոխաբերութի՝ արժանի է մտադրութե, ոչ այն-
չափ իբրև ցոյց իմն բուռն կրից, զոր բնակիչք
Կոստանդինուպօլսոյ յղացեալ էին վս արևելեան
պերճութե, որչափ իբր առհաւատչեայ իմն հանճա-
գեան և ճարտարութե, որով ձգէին յառաջ զվա-

Ռ՛անա-
չուծն
վաճա-
ռակա-
նութե-
նաջա-
ղահէր
Միշտ յա
բնէւ
Եան կայ
ռերանէ.

ծառականութիւն. և այս առ 'ի ցուցանել, թէ մինչ դեռ տգիտութիւն թագաւորէր 'ի բովանդակ յայլ կողմանս Եւրոպիոյ, մեծ իմն ծանօթութիւն հեռաւոր տեղեաց տակաւին պահիւր 'ի Մայրաքաղաքն Յունական կայսրութեան:

Նշոյլ լուսոյ ԺԵ Դա- րաշրջա- նոյ. Յայնմ վայրի փայլածիւն ինչ լուսոյ և իմաստութեան 'ն սողացաւ ընդ արևելս. Արաբացիք գոլով առեալ զճաշակ ինչ գիտութեանց ազգին, որոյ 'ի կործանումն թագաւորութեան միաբանեալ էին, ետուն զանձինս 'ի թարգմանել զգրեանս զանազան Յունաց իմաստասիրաց 'ի սեպհական բարբառ իւրեանց. Մինն յառաջնոց եղև պատուական գործն Պտղոմեայ վերագոյնդ յիշատակեալ. Ուսումն երկրագրութեան հետևաբար եղև դիպան իմն առարկայ ուշադրութեան Արաբացւոց. Բայց այս ազգ ուշիմ և նուրբ մշակէր մասնաւորաբար զտեսական և ըզգիտնական մասունս երկրագրութեան. Առ 'ի ստուգիլ զձևոյ և զչափմանց երկրային գնտոյս, ուշ եդին Արաբացիք սկզբանց երկրաչափութեան. ապաւինեցան յաստղաբաշխական գիտողութիւնս, 'ի գործ արկին զփորձս և զհաւաստիսն, զորս Եւրոպիա յառաւել լուսաւորեալ ժամանակն մեծամտեալ էր ունել կամ հետևել. Սակայն յայնմ ժամանակի համբաւ յառաջադիմութեանց արարելոց Արաբացւոց ոչ էր հասեալ յԵւրոպիա. Ծանօթութիւն գիտից նոցա վերապահեալ էր դարուց ընդունակաց քաջ խելամտելոյ և կատարելագործելոյ զայնս:

Աշխա- ծնունդ ԷԹ տարբե- րական ն- նա- ռոկեա- ջեալսա- ԺԵ. Թշուառութիւնք և աւերմունք արևմտեան գաւառաց Հռոմէական կայսրութեան սակաւ առ սակաւ մոռացեալ եղեն և նորոգեցան 'ի լաւ անդր. Ցեղք բիրտք, որք բնակեցան անդէն, անզգալաբար ստանալով զգաղափարս կանոնաւոր կառավարութեան և զհաճութիւն ընդ գործս և ընդ հեշտութիւնս քաղաքական կենաց, սկսաւ Եւրոպիա զարթնուլ 'ի թմրութենէ և 'ի պղերգութենէ իւրմէ. Առաջին նշանք վերստին կենդանութեան յայտնեցան յԻտալիա. Պես-

պէս

պէս պատճառք, զորս ոչ է առարկայ այսր գործոյ 'ի Թիւ արկանել և մեկնել, ընծայեցան առ 'ի վերստանալ Իտալիոյ քաղաքացն զազատութին և զանկախութին. Յաջողումն այսպիսի իրաց զարթոյց զհնարագիտութին, և նա զշարժումն և զոյժ ամ կարողութեանց մարդկային մտաց. Արտաքին տուրևառութին վերադարձաւ 'ի կեանս. և նորոգտուշ եղաւ նաւարկութն կատարելութի իւն. Կոստանդինուպօլիս եղև գլխաւոր վաճառատեղի, յոր դիմէին Իտալացիք. Անդէն ոչ միայն գտին ըդբարեկամական իմն ասպնջականութի, այլև ընկալան արտօնութիս այնպէս օգտակարս, զի հանդերձեցին զնն շարունակել անդ զվաճառականութին մեծաւ շահեկանութ. Նոքա յանձանձեալ էին պատուական տարազուք արևելից և բազում ցանկալի ձեռագործովք, որք էին պտուղ նախկին արհեստից և զգօնութեն, որ տևէր տակաւին 'ի մէջ Յունաց. Նաև քանզի աշխատութին և ծախքն փոխաբերելոյ զբերսն Հնդկաց 'ի Կոստանդինուպօլիս ընդ երկայն և ը՟ աղամող ընթացս, զոր արդ իսկ ստորագրեցի, առնէր զայնս կարի իմն ցանցաղագիւտս և Թանկագինս յոյժ յոյժ, հնարագիտութի Իտալացւոց եգիտ զայլ եղանակ նախահօգալոյ զայնս մեծագոյն առատութ և դիւրագոյն ծախուք. Մերթ գնէին 'ի Բերիա, Ալէբապօլիս և յայլ նաւահանգիստս ծովեզերն Սիւրիոյ, ուր բերեալ էին ընդ ճանապարհ իմն ոչ անծանօթ նախնեաց. այս է, 'ի Հնդկաց ընդ ծով 'ի վր Արաբացւոց ծոցոյն. և վայրաբերեալ ընդ Եփրատ և ընդ Տիգրիս մինչև 'ի Բաբիլոն, երթային ցամաքաւ, խոտորնակի անցանելով ընդ անապատն, 'ի Փալմիրա. և անտի 'ի քաղաքսն 'ի վր միջերկրական ծովուն. Բայց նկատեալ զերկայնութի ճանապարհին և զվտանգսն, որոց ենթարկեալ էին կարաւանքն, լինէր միշտ տաղտկալի իմն և անստոյգ եղանակն ընկերելոյ. Ի վախ-

ճա-

ճանի Սուլթանն Եգիպտոսի նորոգելով զտուրև-առութի̅ն ընդ Հնդկաց ընդ իւր հին ջրմուղն, այս է, ընդ ծոցն Արաբիոյ, վաճառականք Իտալա-ցիք, թէպէտ և ուժգին հակակրութե̅ վարակեալ էին Քրիստոնեայք և Հագարացիք ընդդէմ մի-մեանց, ապաւինէին յԱղէքսանդրիա. և հանդուր-ժելով վասն սիրոյ շահուն լրբութե̅ և պահանջ-մանց Հագարացւոց, հաստատեցին զվաճառակա-նութի̅ իւր̅ յոյժ շահաւէտ յայնմ նաւահանգստի. Յայնժամ շահավաճառական հոգին Իտալիոյ եղև գործունեայ և ձեռներէց. Վենետիկ, Ճենովա, Փիզա ամբարձան յաննշան գոլոյ առ'ի լինել բազ-մամարդ և փարթամ քաղաքք. Նաւական զօրութ̅ նոցա աճեաց. յաճախեցին նաւք նց̅ յամ̅ նաւա-հանգիստս Միջերկրականին. այց արարին ծովե-զերեայ կաղուածոցն Սպանիոյ, Ֆրանսիոյ, Ֆլան-դրիոյ և Անգղիոյ. և բաշխելով զինչս իւրեանց ը̅ Եւրոպիա, սկսան սփռել 'ի մէջ պէսպէս ազ-գաց իւրեանց լոյս 'ի վերայ գերազանցիկ վաճա-ռացն արևելից, որպէս և զծանօթութիւս ձեռա-գործաց և արհեստից. որոց մինչև ցաւուրսն ցայ-նոսիկ ոչ էին տեղեկացեալ:

Յառաջադիմութի̅ նց̅ նպաստաւորեալ 'ի խաչակրաց.

Մինչդեռ Իտալիա այսպէս յառաջադէմ լինէր 'ի շահեկան ընթացս իւր, ահա պատահումն իմն, և թերևս առաւել արտաքոյ կարգին 'ի վիպասանութ̅ մարդկային ազգի, որ փոխանակ կասեցուցանելոյ զյառաջադիմութի̅ վաճառականութե̅ Իտալացւոց, արար զայն առաւել սրընթաց. Պատերազմական հոգին Եւրոպացւոց ամբարձեալ և բորբոքեալ 'ի նախանձուէ կրօնին, դրդեաց զնս̅ յաղթել զս̅ երկիրն 'ի ձեռաց անհաւատից. Անծամեծ զօրք բազկացեալք յամ̅ ազգացն Եւրոպիոյ չուեցին դէպ յԱսիա վս̅ այսր անվեհեր ձեռնարկութե̅. Ճե-նովացիք, Փիզացիք և Վենետիկեցիք մատակա-րարէին զբառնալիս առ'ի ածել զնս̅ անդր. և ամ-բայուցանէին զնս̅ ռոճկօք և զինուորական կա-

հիւք

հիք. Բաց յանիրաւ գումարոց, զորս ընկալան
նոքա վն այսր պատճառի, ստացան զյառաջատե-
սութիս օգտակարս առ վաճառականութիւն, որք
եղեն մեծապէս նպաստաւոր տուրեւառութեն, զոր
Խաչանիշքն հաստատեցին 'ի Պաղեստինէ և յայլ
գաւառսն Ասիոյ. Յայսց աղբերաց բղխեցին աքան-
չելի փարթամութիք 'ի յիշատակեալ քաղաքսն,
որք համեմատաբար աճեցին և 'ի կարողութե. և
աւարտեալ սր պատերազմն, Վենետիկ մանաւո-
րապէս եղև մեծ ծովային տրութիւն, ստանալով
զտարածեալ իւր տուրեւառութի և զընդարձակա-
գոյն սահմանս. Իտալիա ոչ եղև միայն, ուր խա-
չանիշքն հանգանակեցին առ 'ի վերստին կենդա-
նացուցանել և սփռել զայն հոգին, որ նախա-
պատրաստեաց զԵւրոպիա առ ապագայ երկրա-
գտութիս. Վասն շահատակութեց իւրեանց յԱ-
սիա այլ ժողովուրդք Եւրոպացւոց ընկալան զծա-
նօթութիւն ժողովրդոց առաւել հեռաւորաց յին-
քեանց. զորս յառաջ ճանաչէին միայն անուամբ
կամ պատմութբ տգէտ և դիւրահաւատ պանդխ-
տաց. Այսպէս կալան պարապ նշմարելոյ զվարս,
զարհեստս, և զդիւրութիւնս առաւել հրահանգ-
տրութեց նց. Այս հաղորդակցութի 'ի մէջ արևե-
լից և արևմտից տևեաց իբրև ամս երկերիւր.
Բաղդորդքն, որք դառնային յԱսիոյ, հաղորդէին
հայրենակցացն զգաղափարս ստացեալս յինքեանց
և զսովորութիս կենցաղ ունեալս յայց առնելն մոր-
դոց առաւել կիրթ եղելոց. Եւրոպացիք յայնժամ
ծանուցեալք հաստատապէս զկարօտութիսն, զորս
յառաջ ոչ ճանաչէին, զգային ծնանել յինքեանս
նորանոր փափագս. և այնպիսի եղև ախորժակ
դիւրութեց և արհեստից արտաքնոց, որ ծաւա-
լեցաւ 'ի մէջ նց, մինչզի ոչ միայն խրախուսեց
զնն առ 'ի խուռն ընթանալ 'ի նաւահանգիստս նց,
այլ և ետ ճանաչել նց զշահս և զհարկաւորութիս
մատչելոյ և ինքեանց վաճառականութեն ։

Այս

Օէրբէրա գտաւ-էջ ճանա- պարհաց ընդ ցա- մաք.

Այս հաղորդակցութիւն բացեալ 'ի մէջ Եւրոպիոյ և արևմտեան գաւառացն Ասիոյ՝ քաջալերեաց ըզ-բազում անձինս յառաջել անդր քան զկողմանսն, ուր խաչանիշք ձգէին զգործողութիս իւրեանց, և ճանապարհորդել ընդ ցամաք 'ի հեռագոյն և 'ի փարթամագոյն տեղիսն արևելից. Անկարգ ցնորումն, որ յաւուրսն յայնոսիկ երևէր խառնիլ ոչ միայն յամ առաջարկուխս անհատից, այլ և յամ խորհուրդս ազգաց, գրգռեաց զմարդիկ մխիլ յերկայն և 'ի վտանգաւոր պանդխտութիւս. Յայսոսիկ ձեռնարկեալ եղեն տեսուք վաճառական օգտի կամ լոկ հետաքրքրուէ ազգաւ. Բենիամին Եբրայեցի 'ի Թուտելայէ 'ի Թագաւորութեն Նաւարրայ լի աւելորդապաշտ յարգութբ Եբրայական օրինաց, և անձկացեալ երթալոյ առ 'ի այց առնել հայրենակցաց իւրոց յարևելս, զորս յուսայր գտանել յայնպիսի վիճակի կարողութեան և ճոխութե, զի արասցէ զեղանել 'ի պատիւ ազանգոյն իւրոյ, մեկնեցաւ 'ի Սպանիոյ յամին 1160. և ճանապարհորդեալ ցամաքաւ 'ի Կոստանդինուպօլիս, յառաջխաղաց ընդ հիւսիսային կողմանս Սեաւ ծովուն և Կասպիականին մինչև 'ի Թաթարաստանն Չինէացւոց. Անտի կալաւ ճանապարհ ընդ հարաւակողմն. և ապա անցանելով ընդ պէսպէս գաւառս, և 'ի մէջ այսոցիկ ընդ առաւել հեռաւորսն Հնդկաստանի՝ նաւեաց 'ի վր Հնդկային Ովկիանոսի. Ետես զզանազան կղզիս նր. և դարձաւ յետ երեքտասան ամաց ընդ ճանապարհ Եգիպտոսի յԵւրոպիա, տեղեկացեալ ամենևին ընդարձակ իմն տարածութե երկրագնտոյս, որ յայնմ ժամանակի էր բնաւին անծանօթ արևմտեան աշխարհի. Նախանձայուզութի Գիլեայն կաթուղիկէ եկեղեցւոյ 'ի վախճանի օժանդակեաց առ 'ի ծանօթանալ ներքին և առաւել տարակաց գաւառացն Ասիոյ. Բովանդակ քրիստոնէութիւն գոլով ահաբեկեալ 'ի պատմութեց արագ յառաջխաղացմանց զի-

զհնուցն Թաթարաց առ Ճէնկիս խանաւ, Իննո-
չէնտիոս չորրորդ զօրութ՟բ լիութ՟ն իշխանութ՟ե իւ-
րոյ, և ենթարկութ՟են, որ պարտի առ ակնար-
կութիւն Վատիկանու, արձակեաց զեղբայր Յօհան-
նէսն փլանեան Կարփինի ’ի գլուխ առաքելութ՟են
միոյ Փրանչիսկանաց, և զեղբայր Ասքօլինն ’ի գլուխ
այլոյ երեք առաքելութեան Դօմինիկեանց առ ’ի
յորդորել զԳիւյուք խանն զթոռն Ճէնկիսու, որ 1246
էր յայնժամ հրամանատար կայսրութ՟են Թա-
թարաց, ընդգրկել զքրիստոնէական հաւատն և
դադարել յապականելոյ զերկիր զինուք իւրովք.
Ամբարտաւան սերունդն համբաւաւորագոյն տի-
րապետողին, քան զոր երբէք տեսեալ էր Ասիա.
հարեալ յայսմ անսովոր հրեշտակութ՟է ’ի կող-
մանէ Հռոմէական քահանայապետին, զորոյ ոչ
ճանաչէր ոչ զանունն և ոչ զիշխանութիւն, ըն-
կալաւ զայն անհոգութ՟բ իմն. թէպէտ արձակեաց
անպատիժ զմուրացիկ կրօնաւորսն, որք կատա-
րեցին զայն հրեշտակութի. Իսկ քանզի սոքա բաղ-
դաւորաբար ընդմտեալ էին յայն երկիր Ը տար-
բեր ճանապարհս, և ժամանակ ինչ զհետ երթեալ
էին բանակացն Թաթարաց միշտ ’ի շարժման, ու-
նէին պարապ քննելոյ զմեծ մասն Ասիոյ. Կար-
փինին, որ յառաջեաց ընդ ճանապարհ Փօլոնիոյ
և Ռուսիոյ, գնաց ընդ այն արեւմտեան գաւառսն
մինչև ’ի վերջսն Թիբեթայ. Ասքօլին, որ են-
թադրի հասեալ նաւու ’ի տեղի ինչ Սիւրիոյ,
յառաջ խաղաց ընդ իւր հարաւային կողմանսն ’ի
ներքսագոյն մասունս Պարսկաստանի. Ոչ յետ
յերկար ժամանակի սէն Լուդովիկոս արքայն Փրան-
սիոյ ժամադրեաց աւելի առ աճումն ծանօթութ՟են,
զոր Եւրոպացիք սկսեալ էին ստանալ զայնց տա-
րակաց աշխարհաց. Կարգեալ ումն խաբեբայ,
որ ’ի կիր էառ զփոքրիկ ճանաչումն, որ էր յայն-
ժամ զմիջակէ և զյառաջուէ Ասիացւոց, ետ զծա-
նօթութի, թէ մինն ’ի հզօր խանիցն Թաթա-

րաց

բաց ընկալեալ էր զհաւատն քրիստոնէական. Մատոյց զունկն Աղապեան այն կրօնական դիւրահաւատութեամբ առ այնպիսի շաղփաղփանս. և որոշեաց վաղվաղակի արձակել հրեշտակս առ այն երևելի դարձաւոր դիտաւորութեամբ յորդորելոյ զնա 'ի դիմի հարկանել Սարակինոսաց հասարակաց թշնամեաց իւրեանց 'ի միոջէ կողմանէ, մինչ ինքն յարձակելոց էր 'ի վերայ նց 'ի միւս կողմանէ. Եւ քան զի յայնմ ժամանակի վանականք էին միայն անձինք բաւականք աստիճանաւ խելք գիտութեան առ այնպիսի իմն պաշտօն, կարգեաց առ այն զՀայրն Անդրէաս Տօմինիկեան. որ ընկերակցեալ եղև 'ի Հօրէն Գուլիելմոսէ Ռուպրիքուէնայ Փրանչիսքանէ. Ո՛չ կայ յիշատակ շուրջ զգործեցելով առաջնոյն. Իսկ օրըստօրական մատեանն վերջնոյն հրատարակեալ է. Սա ընկալեալ եղև առաջի Մանկուայ երրորդ խանի յաջորդին Ճ՛ենկիսու. և ապա ընթացաւ ընդ ներքին մասունս Ասիոյ. ուր յառաջագէմ եղև աւելի ևս քան զայլ ո՛ և իցէ Եւրոպացի. որ ցայնժամ ընդմտեալ էր անդր:

Ասոցիկ ճանապարհորդաց առաքելոց արտաքս առ 'ի ցոյց առնել Ասիոյ 'ի նախանձայուզութենէ կրօնի՝ յաջորդեցին այլք, որք համարձակեցան երթալ
1269 անդրադոյնս դիտաւորութեամբ շահաւորելոյ 'ի վաճառականութեան, կամ պարզ հետաքրքրութեան աղագաւ. Առաջինն և առաւել նշանաւորն 'ի մէջ ամենեցուն եղև Մարկոս Փօլօն ազնուական Վենետիկեան. Սա գոլով դարձուցեալ կանխաւ ըստ սովորութեան հայրենեաց իւրոց զքաջասիրտ հոգին իւր առ վաճառականութիւն, ըղձանայր ունել զառաւել ընդարձակ վայր գործունէութեան քան զայն. որ մատուցեալ լինէր նմա 'ի տուրևառուէ վաղխսկ հաստատեցելոյ և 'ի գործ ածեցելոյ 'ի նաւահանգիստս Եւրոպիոյ և Ասիոյ, յորս յաճախէին Վենետիկեանք. Այս դրդեաց զնա բերել առ անծանօթ երկիրս ակնկալութեամբ բանալոյ զհա-

ղորդակցութիւն իւր վաճառականութեան որ առաւել յարմարեալ իցէ արթուն գաղափարաց և յուսադրութեանց բաղդորդ երիտասարդի միոյ. Նա քան զի հայր նորա յառաջ փոխաբերեալ էր բերս ինչ Եւրոպիոյ յարքունիսն մեծի խանին Թաթարաց, և վաճառեալ էր շահեկանութեամբ, որդին ևս գնաց անդր ընդ պաշտպանութեամբ Կուբլայի խանին՝ հզօրագունին քան զամ յաջորդս Ճենկիսու. շարունակեաց զվաճառական պանդխտութիւն իւր ընդ Ասիա աւելի քան զամս քսան և վեց. և յայնմ միջոցի յառաջ խաղաց յարևելս կոյս անցանելով ը̅ սահմանս հեռաւորագոյնս, ուր Եւրոպացի ոք ճանապարհորդ հասեալ իցէ երբէք. փոխանակ հետևելոյ ընթացից Կարփինեայ և Ռուպրիքուեայ ընդ ահագին անբնակ դաշտավայրս Թաթարաստանի, գնաց 'ի գլխաւոր քաղաքս վաճառականութեան յառաւել շէն տեղիսն Ասիոյ. և էհաս 'ի Կամպալու, կամ 'ի Փէքին մայրաքաղաք մեծի թագաւորութեանն Կաթայեայ, կամ Չինու, որ էր յայնմ ժամանակի ընդ իշխանութեամբ յաջորդացն Ճենկիսու. Արար զբազում ճանապարհորդութիւս 'ի վերայ Հնդկային Ովկիանոսի. շահավաճառ եղև 'ի բազումս յայնց կղզեաց, յորոց Եւրոպիա ը̅ երկայն ժամանակ հանեալ էր զխունկս և զայլ տարազս, զորս ունէր 'ի մեծի համարման, թէպէտ ոչ էր տեղեկացեալ զմասնաւոր աշխարհացն, որոց էր պարտական վասն այնպիսի մեծագին դարմանոց. և յայնմանէ էհան զպատմութիւն տեղեացն, որոց ոչ էր այց արարեալ. և մանաւորաբար կղզւոյն Ճիփանկրեայ, որ թերևս է նոյն, որ այժմ կոչի ընդ անուամբ Ճափոնիայ. 'Ի դարձին իւրում ապշեցոյց զժամանակակիցս իւր ստորագրութեամբք անրաւ կողմանցն, որոց չէին յառաջ լուեալ անուանքն յԵւրոպիա, և ճոխում պատմութեամբ բերրութեան նց, բազմամարդութեան, փարթամութեան, պէսպիսութեան ձեռագործաց, և

տարածութիւն տուրևառութեան, որ գեր 'ի վերոյ էր քան զխմացումն անկիրթ դարու միոյ. Իբր յիսուն ամօք զկնի Մարկոսի փօլօի՝ Ասպետն Յօհաննէս Մանտեվիլլէ անգղիացի քաջալերեալ յօրինակէ նո, այց արար մեծագոյն մասին աշխար-
1322 հացն արևելից, զորս Մարկոս փօլօն ստորագրեալ էր., և ըստ նմանութեան նորա հրատարակեաց զայնցանէ զպատմութիւն մի 'ի դարձին իւրում. Սխպասանութիւնք այսց առաջին ճանապարհորդաց լի են բազում մտացածին անյարիր առասպելօք որպէս հսկայից, կախարդաց և հրէշից. Բայց հանդերձ այս ամ պարակայութիւնք ոչ էին նուազ ընկալեալք 'ի տգէտ դարու միջէ, որ բերկրէր այնու, որ երևէր զարմանալի. Հրէշքն, զոր նոքա պատմէին յոլովակի 'ի լոյս, ընդին զբազմութիւն ապշութեան. Իսկ արարքն, զորս կրկնէին ականատես լինելով իւրեանց, յանկուցանէին զուշադրութիւն իմաստնոց. Առաջինքն, որք կարեն նկատիլ իբր աւանդութիւնք և առասպելք տեղեացն, ընդ որս էին անցեալք, աստիճանաբար լինէին արհամարհեալք ըստ չափու, որով Եւրոպիա զարգանայր 'ի ճանաչման. Երկրորդքն՝ որչափ և անհաւատալի՝ կարէին երևել ինչ ինչ 'ի նոցանէ 'ի ժամանակի իւրեանց, զկնի հաստատեալ եղեն 'ի քննութենէ արդի ճանապարհորդաց. Այլ յերկոցունց ևս հետաքրքրութիւն ազգի մարդկան արծարծեցաւ 'ի բաղձալ ճանաչել զանջատեալ մասունս աշխարհի. Զարթեան գաղափարք մարդկան, որք առ սակաւ սակաւ հանդերձեցան 'ի ձեռնարկել 'ի նորանոր
Ա= գիւ- երկրածանօթութիւնս. և ընկալան զհրահանգս, որք
փոյ ինչ ուղղեցին զնա ունել զայն մասնաւոր ընթացս, յո-
նայու- րում 'ի մօտոյ 'ի գործ եդան:
ցին. որէ Մինչդեռ այս հոգի երթայր սակաւ առ սակաւ և
փառքն կերպաւորիւր, Եւրոպիա երևեցաւ նոր իմն գիւտ, որ
նաւահա- ժամանդակեաց աւելի քան զամ ջանս և զնրբութիւ
գաց. Նախընթաց դարուց 'ի բարեգունացուցանել և 'ի

տարածանել զնաւարկութիւն. Այն սքանչելի յատ-
կութիւն մագնիսին, յորմէ հաղորդի այնպիսի զօ-
րութիւն գաւազանի խիք երկաթոյ կամ ասղան, զի
դարձուցանէ զծայրն դէպ 'ի բևեռն երկրի, նշմա-
րեալ եղև. Պիտանութիւն սորա առ 'ի բարւոք կա-
նոնաւորել զնաւարկութիւն վաղվաղակի ծանուցաւ.
և այն պատճառաւ և յայսմ ժամանակի ընտա-
նի գործին տուփն նաւավարաց կերպաւորեցաւ.
Յորժամ միջնորդութեամբ սորա տեսին նաւորդք,
թէ յամենայն եղանակի և յամենայն տեղւոջ կարէին գտանել
զհիւսիս և զհարաւ այնքան դիւրութեամբ և ճշգրտութեամբ,
ոչ եղև կարևոր այլևս կախել 'ի լուսոյ աստե-
ղաց և 'ի նշմարմանէ ծովային եզեր. 'Ի բաց
թողին սակաւ առ սակաւ զիւրեանց նախկին երկչոտ
և տաղտկալի ընթացս առ ծովափամբք. Սլացան
անվեհեր ընդ Ովկիանոսն, և ապաստանեալք յայս
նոր առաջնորդ, կարող եղեն դիմագրաւ լինել 'ի
մթագոյն գիշերի, և 'ի ներքոյ առաւել ամպապատ
երկնից ապահովութեամբ իմն և որոշմամբ, որք ցայն-
ժամ չէին ծանուցեալ. Կողմնացոյցն կարէ ասել,
թէ եմուծ զմարդն 'ի տէրութիւն ծովու. և ետ զնա
'ի կատարեալ ստացման երկրի, առնելով զնա ըն-
դունակ նկատելոյ զինչ և իցէ խորշս նորա. Փլա-
վիոս Ճիոյա Ամալֆեայ քաղաքէ երևելի վաճա-
ռատեղւոյ 'ի թագաւորութեանն Նեապոլսոյ եղև
սկզբնապատճառ այսր մեծի գիւտոյ շուրջ զ 1302
ամաւ. Ապաքէն բազում անգամ լեալ է վիճակ
այսց երևելի բարերարաց ազգի մարդկան, որք ճոխա-
ցուցին զգիտութիւն և զտեսլին զարհեստս ուսմամբք
իւրեանց, հանել մնացուանդ զհամբաւ, քան զօգուտ
յերջանիկ ջանից մնաց իւրեանց. Նայց Ճիոյայն
եղև յոյժ առաւել անագորոյն. Ո՛չ ստուգանունն
կամ ազգատոհմն ժամանակակից պատմագրաց զրկեցաւ
նա յայնմ համբաւոյ, առ որ ունէր զայնպիսի իրա-
ւացի պատճառ. Այլ փոխանցեցաւ 'ի նոցանէ առ
մեզ ծանօթութիւն իւր վերահայեցմամբ արհեստի նորա

պայմանին, և որոշեալ ժամանակին, յորում արար զայս մեծակշիռ գիւտ. և ոչ զպատահմանցն և ըն-խուզմանցն, որք առաջնորդեցին նմա առ այն. Այսպիսի իմն արդիւնք, թէպէտ և պատճառ առաւել հռչակաւոր շահեկանութեանց յիշատակելոց 'ի տարեգրութիւնս մարդկային տեսակի, փոխանցեալ է առ մեզ առանց իրիք յայնց պարագայութեանց, որք կարեն շատացուցանել զհետաքրքրութիւն զարթուցեալ 'ի նոյն գործոյ. Թէպէտ կիրառութիւն կողմնացուցին կարէր բաւական առնել զԻտալացիս 'ի կատարել զկարգ ճանապարհորդութիւնս իւրեանց մեծագոյն ապահովութեամբ և արագութեամբ, այլ ոչ կալաւ զազդեցութիւն այնպէս առաձեռնպատրաստ և այնպէս տարածեալ առ 'ի խրախուսել անընդմիջաբար առ նաւարկութիւն, և առ 'ի զարթուցանել զհոգին երկրածանօթութեան. Յծակցեցան բազում պատճառք 'ի խափանել զայս բարեբար գիւտ 'ի յառաջածելոյ անթերի զգործ իւր 'ի սուղ ժամանակի. Մարդիկ ընդդիմութեամբ և դանդաղ՝ թողուն զհին սովորութիւնս իւրեանց. ունին զխորշումն 'ի նորանոր փորձոց. և մտին յայնս երկիւղիւ. Հաւանական է ևս, թէ շահավաճառական նախանձաւորութիւն Իտալացւոց աշխատէր առ'ի ունել թաքուն յայլոց ազգաց զերևելի ծնունդ միոյ ազգայնոյ իւրեանց. Արհեստն նաւարկելոյ միջնորդութեամբ կողմնացուցին այնպէս մեծ յաջողակութեամբ և փութով, ունէն եղև յետոյ անցմամբ ժամանակի բոլորական իմն վստահութեամբ յառաջնորդունի. Նաւավարք սովորեալք առ'ի չթողուլ զտեսութիւն ցամաքին ոչ համարձակէին սլանալ միանգամայն, և դնել զանձինս 'ի ծովս բոլորովին անծանօթս. և ըստ այսորիկ էանց գրեթէ կէս հարիւրեակ մի'ի գիւտոյ Ժիոյեայ յառաջ քան զշաջաւորին նաւորդաց դիմագրաւ լինել յայնս, յորս ոչ էին սովորեալ յաճախել:

Զառաջին երևումն հոգւոյ առաւել ձեռներեցու-

մար-

մարթ է հաստատել 'ի նաւարկութիւնս Սպանիացւոց Նորմանց
առ Քանարեան կամ յերանելեաց կղզիսն. Բայց ինչ հոգ-
ւով զխորամածով ածեալ եղեն նորին 'ի ծանօթս այսոյ հա-
թուի այնց կղզեկացն որք կան զատուցեալք հա- զար հա-
րիւր մղոնաւ 'ի ծովեզերէն Սպանիոյ, և աւելի քան գուէ
գհարիւր յիսուն մղոն 'ի ծովեզրէն Ափրիկոյ, ժա- 'ի նա-
մանակակից մատենագիրք ոչ պարզաբանեցին. Սա-եւ.
կայն 'ի կէսն չորեքտասաներորդ հարիւրեկին ժո-
ղովուրդն համօրէն զանազան Թագաւորութեանցն,
յորս յայնժամ բաժանեալ էր Սպանիա, տեսա-
նի սովորեալ առնել անդէն զյեղուզակութի առ
'ի կողոպտել զընակիչսն և առնուլ զնս իբր գե-
րիս :
Կղեմէս վեցերորդ զօրութբ իրաւանց սըյ աթո-
ռոյն կարգադրելոյ զամ աշխարհաց, որք էին 'ի
ժառանգութե անհաւատից, կանգնեաց զլովան-
դակ զայն կղզիսն 'ի Թագաւորութի յամին 1344
երորդի. և շնորհեաց Լուդովիկոսի Չերտեան
իշխելոյ յազգունի զարմէ Քաստիլոյ. Բայց այս
արքայ տարաբաղդ զուրկ 'ի զօրուէ վաւերացու-
ցանելոյ զիրաւունս իւր ոչ գնալով երբէք յայց
առնել Քանարեայցն, Յոհաննէս Պէթէնքուրթ
Պարոն Նորմանտ ընկալաւ զշնորհումն իմն այնց
կղզեաց յԱնրիկոսէ երրորդէ Քասթիլոյ. Պէ-
թէնքուրթ քաջութբն և բարերաղդութբն, որովք
հանդիսանայրն բաղդորդք երկրին իւրոյ, ձեռն
էարկ արդիւնացուցանել զստացումն Քանարեայցն.
և մնաց ժառանգութին առ ժամանակ ինչ 'ի տան
նր, իբր փեոտ կալեալ 'ի Թագաւորութէն Քաս-
թիլոյ. Յառաջ քան զայսօսիկ շահատակութիս 1365
Պէթէնքուրթայ ասի, թէ աղգայինք իւր գնա-
ցեալ էին առ ծովեզրն Ափրիկոյ, և թէ յառաջ
խաղացեալ էին մինչև 'ի հարաւակողմն Քանա-
րեայց. Բայց այս ճանապարհորդութիք նոցա ոչ
երբէն ձեռնարկեալք հետևութբ իւիք հրապարա-
կան կամ կանոնաւոր գաղափարի առ 'ի տարա-

ծանել զնաւարկութիւն կամ նախահոգալ զնորա-նոր երկրածանօթութիւն . այլ եղեն յեղուզակունք թելադրեալք 'ի թափառական յափշտակօղ հոգւոյ , որ փոխանցեալ եղև 'ի Նորմանդս 'ի նախնեաց իւրեանց , կամ շահավաճառական ձեռնարկութիւնք առանձին վաճառականաց . որք այնպէս սակաւ վարկման արժանի եղեն , մինչև հազիւ թէ գտանի զնոցանէ յիշատակութիւն ինչ միայն 'ի մատենագիրս այնր ժամանակի . 'Ի հանրական քննութեան յառաջադիմութեան երկրագտութեան բաւական է առնել զյիշատակ պայսմ յօդուածոյ . և թողուլ զայն 'ի մէջ այնց , որք են միշտ երկբայականք և սակաւակշիռք , մարթ է հետևեցուցանել , թէ որչափ և բազում տեղեկութիւնք ընկալեալ իցեն նկատմամբ հեռաւոր կողմանցն արևելից 'ի ճանապարհորդաց , որք գնացին անդր զառաջինն , նաւարկութիւն 'ի սկզբան վեշտասաներորդ հարիւրեկին ոչ էր բնաւ առաւելեալ քան զվիճակն , յոր ժամանեալ էր յառաջ քան զանկումն Հռովմայեցւոց կայսերութեան :

Առաջին կանոնաւոր գաղափարն Երկրածանօթութեան.

'Ի վերջոյ էհաս ժամանակն , յորում յառաջադիմութիւն որոշեաց , թէ պարտ էր մարդկան անցանել ըստ կարգս , որոց 'ի ներքս էին այնպէս ընդ երկար ամփոփեալք , և բանիլ ընդարձակագոյն ասպարիզի հանդիսացուցանելոյ զքանքարս իւրեանց , զձեռներէցութիւն և զքաջասրտութիւն : Առաջին ջանք երևելիք առ այս վախճան ոչ եղեն արարեալք յումեքէ 'ի հզօրագոյն տէրութեանց Եւրոպիոյ . և ոչ յայնց որք տիրեալ էին զանձինս 'ի նաւարկութիւն մեծագոյն յաճախութեամբ և յաջողակութեամբ . Փառքն ցուցանելոյ զճանապարհ յայս նոր ընթացս պահիւր Փորթուկալիոյ , միում 'ի փոքրագոյն և 'ի նուազ անուանի Թագաւորութեանց Եւրոպացւոց . Եւ քանզի հայթհայթանք Փորթուկէզաց 'ի յօրինել զծանօթութիւն այնց մասանց երկրագնտոյս , զորս մարդիկ ոչ էին տա-

կա-

հաւրն տեղեկացեալք, ոչ միայն պայծառացուցին և ծաւալեցին զարհեստ նաւելոյ, այլև զարթուցին զհոգի իմն հետաքրքրութեան և համարձակութ., որ առաջնորդեաց 'ի ծանօթութիւն նորոյ աշխարհի, զորմէ կամ է ինձ գրել զպատմութիւն, կարեւոր է ակնարկել առ անգամ մի 'ի ծնունդն, 'ի զարգացումն և յերջանիկ ելս զանազան նաւական գործողութեանց նց. Նոյն այս դպրոց, յորում գտիչն Ամերիկոյ կերպաւորեցաւ. և եթէ ոչ հետազօտիցին քայլքն, որովք վարժապետք իւր և առաջնորդք յայսմ յառաջադէմ եղեն, անկարելի է քաջ խելամուտ լինել պարագայիցն, որք թելադրեցին զգաղափարն, կամ որք դիւրացուցին ըզկատարումն այսպիսի հիանալի իմն խորհրդոյ:

Պէսպէս ընթացութիւնք յորդորեցին զՓորթուկէզս Պորտ- վարժել զգործունէութիւն իւրեանց յայս նոր ըն- կոյս, թացս, և արարին զնս բաւականս յանձն առնլոյ որք այնն գործս մեծնագոյնս քան զբնական զօրութիւն մա- գործո- պետութեան իւրեանց. Նաւաւորք Փորթուկալիոյ նէց ե- վանեալք զՄաւրիս 'ի տրունց իւրեանց՝ ստացեալ էին զէն. զզօրութիւն և զփառս յաղթութեան զինուց իւրեանց ընդդէմ անհաւատից. Սն յաղթութեանցն 'ի վերայ նց, տարածեալ էին զարքայական իշխանութիւն անդր քան զանձուկ կապարսն, յորս սկզբնաբար սահմանաւորեալ էր այն 'ի Փորթուկալիա որպէս և յայլ փետական թագաւորութիւնս. Ունէին 'ի ծովու զհրամանատարութիւն ազգային զօրութեանց. կարող էին յարուցանել զայնս առ 'ի ներգործել միաւորեալ զօրութեամբ. և յետ վանելոյ զՄաւրիս, էին յաստիճանի 'ի կիր առնլոյ զայնս առանց երկիւղի խրամատեալ լինելոյ յըստանի թշնամեաց. Դի պատճառս մշտնջենաւոր թշնամութեանց տածելոց 'ի զանազան երկիրս ընդդէմ Հագարացւոց՝ պատերազմական հոգին քաջասրտութեան, որ հանդիսացուցանէր զամ Եւրոպացիս 'ի միջին դարսն, երեւեցաւ լաւագոյն մնեալ և առաւել աճեցեալ

'ի մէջ Փորթուկէզաց. Ամեհի իմն պատերազմ քաղաքական 'ի վերջն չորեքտասաներորդ հարիւրեկին շարժեալ 'ի յաջորդութէ իմիքէ հակառակեցելոց, բորբոքեաց զզինուորական եռանդն ազգին. կերպարանեաց և էհան առս գործունեայս և անվեհերս և քաջայարմարս առ դժուարին գործառնութիւնս. Կայսաւորութիւն Թագաւորութեանն շրջապատեցելոյ յամ կողմանէ 'ի տէրութեանց հզօրագոյն դրացւոյ ոչ մատակարարէր զազատ իմն նպատակ քաջութեան Փորթուկէզաց ընդ ցամաք, ոչ լինելով զօրութի միապետութեան նց համեմատեալ Միապետութեանն Գաստիլիոյ. Բայց Փորթուկալլեա էր տէրունի իմն ծովեզերեայ. որոյ 'ի ներքս գտանէին բազում անդորր նաւահանգիստք. Ժողովուրդն սկսեալ էր առնել զստացումն ինչ 'ի ճանաչման և 'ի գործածութեան նաւելոյն. և սպասէր նմա ծովն բացեալ՝ առաջի առնելով նմա միայն զասպարէզ գործողութեանցն, յորս կարող էր հանդիսանալ:

Առա- ջին հայե- հայ- Ընդհն. Այսպիսի էր վիճակն Փորթուկալլեայ, և այսպիսի պատրաստու ժողովրդեան յորժամ Յօհաննէս առաջներորդ մականուանեալ աղջկորդի ընկալաւ զապահով ժառանգութի Թագաւորութեանն վն խաղաղութն կատարեցելոյ ը Գաստիլեոյ յամին հազարերորդի չորեքհարիւրորդի մետասաներորդի. Նա էր արքայ մեծավաստակ, և վն արտաքոյ կարգի քաջասրտութե իւրոյ և քանքարոյ հորդեալ էր ինքեան ճանապարհ առ աթոռն արքունի, որ իրաւամբք ոչ էր նմա անկ. Նա իսկ և իսկ իրազեկ եղև, թէ անկարելի էր նմա պահել զհրապարական կարգն և զընտանի անդորրութիւնն առանց գտանելոյ զզբաղումն ինչ ամբոխեալ հոգւոյ հպատակաց իւրոց. Այսու տեսութե առաքեաց 'ի միասին զբազմաթիւ նաւահանգէս մի 'ի Լիսպոնա բաղկացեալ յամ նաւուց, զորս կարող եղև հանդերձել 'ի Թագաւորութեն իւրում, և յայլոց բազմաց վար-

վարձելոց յարտաքնոց. Այս մեծ սպառազինութիւն կազմեցաւ առ'ի 'ի դիմի հարկանել Մաւրեաց 'ի կողմ իւրեանց առ ծովեզերբն Բարբարիոյ. Մինչ դեռ նախապատրաստէին զայն, նաւք ինչ կարգեցան առնել առագաստ առ արեւմտեան ծովեզերօքն Ափրիկոյ, որ սահմանի Եթլանտեան Ովկիանոսիւ, և թեւակոխել ճանաչել զանծանօթ երկիրսն, որք կայանորեալ էին անդէն. Յայս առաջին նշանաւոր որոշմանէ մարթ է յառաջ ածել զսկսումն այնր հոգւոյ երկրածանօթութեան, որ էհաս յետոյ 'ի խորտակել զպատնէշսն, որք փակեալ էին այնպէս ընդ երկայն ժամանակ զազգ մարդկան, որպէս զի մի ունիցի գաղափար զկէս գնդոյ երկրի. 'Ի ժամանակին, յորում Յօհաննէս արար զառաքումն այսոց նաւուց յայս նոր ճանապարհորդութի, արհեստ նաւարկութե տակաւին էր ամենեւին անկատար. Թէպէտ Ափրիկէ այնպէս մօտ է փորթուկալլիոյ, և բերրիութի անդոց յայնմ ցամաքի պարտ էր յորդորել զմարդիկ առնել անդէն հետազօտութիւս, սակայն փորթուկեցիք ոչ երբէք վստահեալ էին զինքեանս յառաջել աւելի քան զգլուխն Նօն. որ 'ի Հռոմայեցւոց 'ի մեզ թարգմանի՝ ոչ. Այն գերասարն որպէս անուն իւր ակնարկէ, մինչեւ ցայնժամ համարեալ էր կոպար իմն, ընդ որ ոչ էր կար անցանել. Բայց Եւրոպացիք արդէն ստացեալ էին լոյս բաւական քաջալերութե և արհամարհելոյ զնախադատութիւս, և ուղղելոյ զմոլորութիւնս նախնեաց իւրեանց. Յերկարագոյն ևս թագաւորութիւն տգիտութե յարակայ թշնամի ամ խնամոտ հետազօտութե և ամ նոր ձեռնարկութեան, մերձենայր առ վախճան իւր. Բա՝ սկսանէր փայլատակել լոյս գիտութեց. գործք նախկին մատենագրաց Յունաց և Հռոմայեցւոց՝ առեալ յինէլին յընթեռնուլ զարմացմամբ և օգտիւ. Իմաստութիւն մշակեալ յԱրաբացւոց՝ մուծեալ էր յԵւրոպիա 'ի Մաւրեաց հաստատելոց 'ի Սպանիա և

'ի փորթուգալլիա և յԵբրայեցւոց, որք էին յո-
լովք յոյժ յերկոսեան յայսոսիկ թագաւորութիւնս. Երկրաչափութիւն աստղաբաշխութիւն և երկրագրութիւն, յորոց վ̅ հիմնեալ է նաւարկութիւնն, եղանէին առարկայք ուսումնական ուշադրութեան. Յիշատակէին երկրածանօթութիւնք արարեալք 'ի նախնեաց, և հանապազ հետազօտիւր յառաջադիմութիւն ճանապարհորդութեանց ն̅ց ընդ ծով և վաճառականութեան ն̅ց. Ամենք յայնց պատճառաց, որք 'ի նախասացեալ հարիւրեկին, և՞ յայնմ որ յառաջ՝ խափանեալ էին զմշակութիւն ուսմանց 'ի փորթուգալլիա, ոչ ևս կային, կամ ոչ գործէին նոյնգունակ 'ի հնգետասաներորդ հարիւրեկին. և փորթուգէզք երևէին յայնժամ սկսեալք զոյգ ընդ այլոց ազգաց այսր քան զԱնգղիեայս 'ի գրաւորական վարժմունս :

(9) ‖ Բայց ատեանն քննութեան, որ մուծեալ եղև 'ի փորթուգալլիա 'ի Յօհաննու երրորդէ, որ սկսաւ զթագաւորութիւն իւր յամին 1521. վ̅ ծայրագոյն խստութեան իւրոյ ոչ էր նպաստաւոր գրաւոր հետախուզութեանց : ‖

Նաև քանզի բնաւորութիւն դարուն նպաստէր կատարման այնր նորոյ ձեռնարկութեան, առ որ վիճակ երկրին իւրեանց հրաւիրէր մասնաւորապէս ըզփորթուգէզս, նմին իրի կալաւ զյաջողակ ելս. Նաւքն առաքեալք վ̅ երկրագտութեան կրկնեցին ընդ այն աշխարհու գլուխ, որ կասեցուցեալ էր զյառաջադիմութիւն նախկին նաւարկութեան. և անցին ընդ այն հարիւր փաթսուն մղոն մինչև 'ի գլուխն Պօյատոր. Պարեխք նո̅ լի ժայռիւք, որք ձգեալ էին ը̅ երևելի իմն տարածութի 'ի ծովն Ատլանտեան երևեցան ահեղագոյն քան զնոյն իսկ զերսարն, ընդ որ բա՝ անցեալ էին. և վասն այսորիկ հրամանատարք փորթուգէզք ոչ համարձակեցան նաւել շուրջ, այլ դարձան 'ի Լիսպօնա, առաւել հաճեալք վ̅ յառաջանալոյն այնպէս 'ի բացեայ,

քան

քան ամօթալիցք վասն ոչ համարձակելոյն ա-
ւելի:
Արշաւ և սակաւ համարումն արարեալ լինէր յայն- Արքայազն
ժամ զայսմ նաւարկութենէ, այսու ամենայնիւ Հենրիկ-
պիտանի եղև առ 'ի աճեցուցանել զկիրս վասն կոս ա-
երկրածանօթութեան, որ սկսաւ զարթնուլ 'ի ռաջ-
փորձուկայլիւ. Արտաքոյ կարգի յաջողու- նորդ
թիւնն շահատակութեան արքային ընդդէմ Մաւ- Երկրա-
րեացն Բարբարիոյ յաւել զզօրութիւն 'ի վերայ ծանօ-
հոգւոյ ազգին, և գրգռեաց առ միշտ նորա- թութեան
նոր գաղափարս. Եւ 'ի յաջողել զայնս՝ պի- փոր-
տոյ էր փորձուկեղաց առաջնորդիլ յումեքէ, որ ձութեան-
իցէ ընդունակ ճանաչելոյ որ զինչ առնելի էր, ցոյ.
և որ ունիցի զյուրութի կերպաւորելոյ զկանոնա- 1415
ւոր իմն կարգադրութի առ 'ի շարունակել զհե-
տազօտութիւն, և որ խրախուսեալ յեռանդնէ ի-
մքէ տոկայցէ ընդդէմ խոչընդակաց և հակառա-
կութեանց. Երջանկաբար վն փորձուկայլեոյ հաւա-
քեցան այս ամ որակութիւնք 'ի Հենրիկոս դուքսն
Վիսեայ չորրորդ որդին արքային Յովհաննու 'ի
Փիլիպպայէ Լանքաստրեան քեռանէ Հենրիկոսի
չորրորդի արքային Անգլիոյ. Այս արքայորդի յա-
ռաջնում երիտասարդութեն իւրում ընկերակցեալ
էր ընդ հօր իւրում 'ի շահատակութեն 'ի Բար-
բարիա. և անդ բազում գործովք քաջութե հան-
գիսացեալ էր. Ընդ պատերազմասէր բարուցն, որ
էր նշանաւորիչ յայնմ հասակի ամ ազնուազարմ
մարդոյ, զուգաւորէր զայն ձիրսն, որք սովոր են
ծաղկիլ յառաւել լուսաւորեալ և յառաւել մշա-
կեալ դարս. Սնադիր եղև արհեստից և գիտու-
թեանց, որք էին յայնժամ անծանօթք և ար-
համարհեալք յերևելի արանց. ուսաւ սրտի մտօք
զերկրագրութին. և կրթութե գիտնական վարդա-
պետաց, և պատմութիք ճանապարհորդաց ստացաւ
ժամանակաւ զայնպիսի իմն ծանօթութի ընակ երկ-
րագնտոյս, զչի գուշակեաց զհաւանականութին մէծ,

որ.

որ էր անդ, գտանելոյ զնոր և զփարթամ երկիրս առագաստելով առ ծովեզերբն Ափրիկոյ. Երևէր թէ այսպիսի իմն առարկայ կերպացեալ էր դիտմամբ առ 'ի զարթուցանել զաժխոյժ և զեռանդն երիտասարդ մտաց. և յանձին կալաւ մեծագոյն նախանձայուզութեամբ պաշտպանել զգաղափարն, որ կարէր նոյնչափ շահեկան լինել, որչափ երևէր շքեղ և պատուական. Առ 'ի շարունակել զայս մեծ գաղափար առանց ընդմիջահատութեան, խոյս ետ յարքունեացն վաղվաղակի զկնի դարձին իւրոյ յԱփրիկոյ. և հաստատեաց զաթոռ իւր 'ի Սակրէս մերձ 'ի գագաթն անուանեալ սրբոյն Վինչէնցիոսի. ուր տեսութի Ատլանտեանն Ովկիանոսի հրաւիրէր հանապազորդ զխորհուրդս իւր առ սիրելի նպատակ իւր. և խրախուսէր զնա ժամանել անդր. Յայսմ առանձնութեան ընկերակցեալ եղև յոմանց գիտնագոյն արանց հայրենակցաց իւրոց, որք օգնական եղեն նմա 'ի հետազօտութիւնս. Նա տեղեկանալոյ ուղղեաց առ Մաւրսն Բարբարիոյ սովորս ճանապարհորդելոյ ընդ ցամաք 'ի ներքին դաւառն Ափրիկոյ 'ի խնդիր փղոսկրի, փոշւոյ ոսկւոյ, և այլոց մեծագին տարաղոց. Խորհուրդ էհարց նաև Եբրայեցւոց բնակեցելոց 'ի Փորթուգալիա. Խոստմամբք, վարձուք և ազնուոր եղանակաւ յանկոյց 'ի ծառայութի իւր զգանազան անձինս եթէ օտարս և եթէ զփորթուկէզս գերագանցս մն ընդունակութի իւրեանց 'ի նաւարկութ. 'Ի առնելն զայսոսիկ նախապատրաստական քայլս մեծամեծ քանքարք արքայի նպաստեալք էին յառանձնական առաքինութեց իւրոց. Կատարելութի իւր, քաղցրաբարոյութիւն, ակնածութիւն առ կրօնն, նախանձն մն պատւոյ հայրենեաց իւրոց գրաւեցին զմեծամեծ անձինս յամ աստիճանէ 'ի գովել զխորհուրդն նր և նպաստել առ կատարումն. Պնտէին հայրենակիցք իւր, թէ դիտմունք նր ոչ յառաջ գային ոչ 'ի փառամո-

լու-

լութենէ և ոչ 'ի ցանկութենէ փարթամանալոյ , այլ
թէ բղխէին 'ի սիրալիր բարեկամութենէ սրտի անձ-
կացելոյ առ 'ի յառաջ շարժել զերջանկութիւն ազ-
գի մարդկան . զոր և ինքն յիրաւի հաւատարմա-
ցոյց առնլով զիմաստ իմն վր իւրոյ նշանի , որ
նշանակէր զօրակութիւն , որով ըղձանայր զանա-
զանիլ . Բանտօր Բոլէ առնելոյ :
Առաջին զան նր , որպ սովոր է հանդիպիլ 'ի սկզբան Ծովա
զինչ և իցէ ձեռնարկութեան , ոչ եղև յոյժ երևելի . Նաւլէ
Ջանդերձեաց զմի միայն նաւ . և տալով զհրա- Ֆօրծօ
մանատարութիւն Յօհաննու Կոնծալեզայ Ծովարքօի , Ատտ-
և Քրիսթանու Աղայ երկուց Աեպուհեաց 'ի Եօջն .
տոհմէ իւրմէ , որք կամովին մատուցին զանձինս 1418
յառաջնորդել ձեռնարկութեան , յորդորեաց զնս
'ի գործ արկանել զվերջին կար իւրեանց առ 'ի
կրկնել ընդ գլուխն Պօյատօր . և ապա ձգիլ ընդ
հարաւակողմն . Նորա զհետ երթալով եղանակին
նաւելոյ , որ տակաւին տևէր , կալան զընթացս
իւրեանց առ ափամբ . և յայսպիսի իմն ուղղաւո-
րութե պարտէին պատահիլ իբր անյաղթելի դժուա-
րութեանց 'ի թեւակոխելն անցանել ընդ վերոյ ասա-
ցեալ գլուխն . Բայց բաղդն էհաս 'ի թիկունս
պակասութեան ընդունակութեան նց , և արդել զի մի
ձանապարհորդութիւն այն լինիցի բոլորովին անօ-
գուտ . Յարեաւ հողմն իմն յանկարծ , որ վանեաց
զնս 'ի դուրս 'ի խորս ծովուն . և մինչ սպասէին
կորստեան յամ վայրկենի , հասոյց զնս 'ի կղզի
ինչ անծանօթ . զոր 'ի պատճառս երջանիկ փրծման
իւրեանց կոչեցին Փօրթօ Սանթօ՝ սբ նաւահան-
գիստ . 'Ի տղայութեան ( որպ բանից կարգ է ասել )
նաւարկութեան՝ ծանօթութիւն այսր փոքր կղզւոյ ե-
րևեցաւ իր իմն այնքան մեծակշիռ , մինչ զի նոյն-
հետայն դարձան 'ի Փօրթուկալլիա այսպիսի ու-
րախութե աւետեօք , և ընկալեն եղեն 'ի Ջենրիկոսէ
պարտուպատշաճ պատուով բաղդաւոր գիւտագրաւայն .
Այս թեթև նշոյլ բարեյաջողութեան լցոյց զհոգին
Ար-

Արքային, որ արդէն զմայլեալ էր հետամուտ լինել այսպիսի իմն ամբիչ և քաջայոյս առարկայի, որ բաւական եղև որոշել զնա առ 'ի երթալ յառաջ. 'Ի հետևեալ ամին Հէնրիկոս առաքեաց զերիս նաւս ընդ նոյն հրամանատարօք. յորս յաւել զԲարթուղիմէոս Փէռէստրէլլօ. ոմն զի առցէ զժառանգութիւն կղզւոյն գտելոյ 'ի նոցանէ. Իբրև սկսան բնականալ 'ի Փորթօ Սանթօ նշմարեցին 'ի հարաւակողմն բիծ ինչ հաստատուն յեզերսն նման սևաւ փոքրիկ ամպոյ, Աստիճանաբար բերեալ եղեն 'ի մակաբերել, թէ կարէր լինել երկիր, և ուղղելով յայն կողմն, ժամանեցին

Գիւտ Մադէրայ կղզւոյն. 'ի կղզի ինչ երևելի անբնակ և ծածկեալ անտառաւ զոր վն այսպիսի պատճառի անուանեցին Մադէրա. Իսկ քանզի նախապետական առարկայ Հէնրիկոսի էր առնել զերկրագտութիւս իւր օգտակար երկրին

1420 իւրում, եդ վաղվաղակի 'ի կարգի զնաւահանգէս ինչ առ 'ի փոխաբերել զհատուած մի փորթուկէզաց 'ի նոյն կղզին. Ամենայն յառաջատես խնամով գարմանեցան նոքա սերմամբք, տնկօք և ընտանի չնչաւորօք հասարակօք Եւրոպիոյ, և նախատեսանելով արքայն թէ ջերմութիւն Կլիմային և արգաւանդութիւն հողոյն կարէին լինել նպաստաւոր առ աճումն այլոց բերոց, նախահոգացաւ ուստ այգեաց կղզւոյն Կիպրոսի. որոյ հարուստ գինիքն էին յայնժամ 'ի մեծի գործածութեան, և զտունկս եղէգանց շաքարի 'ի Միկիլիոյ. ուր նորոգ մուծեալ էր. Այսպիսի յաջողութեամբ յղացեալ նոր գետնի արմատացան այնքան յաջողութիւն, մինչև նոյնհետայն ծանուցաւ շահեկանութիւն մշակելոյն զայն. և շաքարն և գինին Մադէրայի եղեն վաղվաղակի յարգոյ յօդուածք 'ի շահավաճառութեան փորթուկալիոյ:

Ակլինոսակըն ընդ գլուխն Պօյատօր. Իսկոյն իբրև սկսան լսելի լինել բարութիւնք յառաջ եկեալք յառաջնոյ հարգունութէ յարևմուտս Եւրոպական շարունակին, հոգին երկրածանօթութեան եղև նոճաղ քիմերական. և եղև առաւել համարձակ

ձակ. փորթուկեզք զօրութբ̄ ճանապարհորդութեց իւրեանց առ Մադէրա յաջողեցան առ համարձակագոյն իմն նաւարկութի. և փոխանակ երթալոյ ծառայաբար սողալով առ ծովեզերբն, ետուն զանձինս 'ի բացարձակ ծովն. Յառնուլն զայս ընթացս՝ Գիլիանէզ, որ հրամայեր միում 'ի նաւուցն արքային Հէնրիկոսի, կրկնեցաւ ը̄ գլուխն Պօյատոր եզր նաւարկութն փորթուկեզաց ընդ ամս աւելի քան զքսան. և որ ցայնժամ համարեալ էր անանցանելի. Այս երջանիկ ճանապարհորդութի, զոր տգիտութի դարուն հաւաստէր համբաւաւորագոյն գործողութեց յիշատակելոց մեզ 'ի պատմութե, առաջի արար նոր իմն ասպարէզ նաւարկութե. որովհետև հոլանէր զմեծ շարունակն Աֆրիկոյ ուղղեալ յԱթլանտեան Ովկիանոսէ և տարածեալ 'ի հարաւակողմն. Այսոն ինչ սորա Յառա
նոյնժամայն խնդրեցաւ. փորթուկեզք խաղացին ջէն
'ի ներքս արևադարձից. և 'ի միջոցի սակաւ ամաց ջէղ յա
կարողացան հետազօտել զգետն Սենէկալ և զբո- քռա-
վանդակ ծովեզըն, որ կայ 'ի Կափօպլանքօէն տարին.
մինչև 'ի Կափօվէրտէն:

Յայս վայր փորթուկեզք ուղևորեցան 'ի գործո- Հէն-
ղութիս իւրեանց և քաջալերեցան ձեռնարկել յայնս նուն ը̄
'ի լուսոյ և 'ի հրահանգէ, զոր հանէին 'ի մատե- գէ-դար-
նից նախնի քանակաբանից և երկրագրաց. Բայց 1433
յորժամ սկսան դնել զոտն 'ի ներքս այրեցած գօտւոյն, ճանաչումն, որ նախապօրացեալ էր առ նախնիս, իբր թէ չափազանց տօթն, որ թագաւորէր անդէն յաւէժաբար, էր այնպէս վնասակար կենաց՝ մինչև առնել զայն անբնակ, զարհուրեցոյց զնս առ ժամանակ մի յառաջ խաղալոյ. Գիտողութիք նց սեպհականք յորժամ ձեռներեց եղեն մտանել յայն նոր և ահարկու կայս, դիմէին 'ի հաստատել զկարծիս նախնեաց շուրջ զբուռն ներգործութի ուղղեալ շառաւիղացն արևու. Մինչև 'ի կեան Սենէկալ փորթուկեզք գտեալ էին զծով-

եզըն

եղերն Ափրիկոյ բնակեալ յազգէ ամենեին համանմանւոյ Մաւրեացն Նարբարիոյ․ Ըստ չափուն որով մերձենային ընդ. հարաւակողմն այնր գետոյ մարդկային կերպարանն երեւէր առնուլ զնոր տարազ․ Տեսին զմարդիկ սեւամորթ իբրեւ զարանոս, կարճ և գռուզ վարսիւք, ճմլեալ քթովք, ստուար շրթամբք և ամ̃ մասնաւոր կազմուածովք, որք զանազանեն այժմ զցեղ սեւամորթացն․ Զայս ապշեցուցիչ այլայլութիւն ընծայեցին բնականաբար ներգործութեան տօթոյն․ և եթէ մերձեցեալ էին հասարակածին, երկնչէին, թէ փորձելոց են զառաւել եւս օրհասականն։

Այսպիսի վտանգք դիզաբարդեալք էին, և այլ զանազան ընդդիմակութիւնք ընդդէմ ձեռնարկելոյ ՚ի նորանոր հետազօտութիւն արտեալք յոմանց մեծամեծաց․ որք վն̃ տգիտութե, վն̃ յաչաղանաց և վն̃ այնր ցուրտ և երկչոտ խոհականութե, որ մերժէ զայն ամ̃, որ բերէ ը̃ իւր զնշանակ իմն նորութե և համարձակութե, մինչև ցայնժամ զատապարտեալ էին զնմ̃ գլխաւոր առաջարկութիւն Հենրիկոսի․ ՚Ներկայացուցանէին լինել բնաւին եղջերուաքաղ սպասելն շահու իմիք յաշխարհացն եդելոց յայնմ կողման, զոր զգօնութի և փորձառութի նախնեաց յայտ արարեալ էր անընդունակ առ ՚ի լինել բնակութի վն̃ մարդկան․ Ասէին թէ նախահարք իւրեանց շատացեալք մշակելով զսահմանն, զոր յառաջատեսութիւն կարգեալ էր նց̃, ոչ ցրուեցին զզօրութի թագաւորութեն անպտուղ մտածութբ̃ ՚ի խնդիր նորանոր բնակութեց․ և թէ փորթուկալիա արդէն սպառեալ էր վն̃ ծախուցն եղելոց ՚ի ձեռնամուխ լինելն ՚ի խնդիր երկրացն, որք կմ̃ ոչ գոյին, կամ թէ բնուին կամէր, զի մնայցեն անծանօթ․ և թէ թագաւորութիւն արդէն թափուր էր ՚ի մարդկանէ, որք կարէին գրաւիլ ՚ի գործս հանդերձ ապահովագոյն յաջողութբ̃ և մեծագոյն բարեօք․ Այլ ոչ նց̃ զխմուն սա վկայուէ̃

նախ-

նախնեաց, և ոչ նչ տրամաբանութիւն շուրջ զշա-
հին փորթուկալլից արարին զապաւորուն ինչ 'ի
վն իմաստասիրական և որոշեալ մտաց արքային
Հենրիկոսի․ Երկրագտութիւքն, զորս արդէն ա-
բարեալ էր՝ յաղթահարելին զնա, թէ նախնիք սա-
կաւ ինչ աւելի քան զճանաչումն իմն մակաբերա-
կան ունէին զայրեցած գօտւոյն․ Օռմարձանայր,
զի առարկուիք քաղաքականք հակառակորդաց ի-
րոց նկատմամբք շահուն փորթուկալլից էին բո-
վանդակ առարկութիւնք յաչաղանաց և անհիմն․
Այսոսիկ կարծիս քաջութբ ջատագովեալ եղև
յեղբօրէ իւրմէ տէր Պետրոսէ․ որ վարէր զթագա- 1438
ւորութիւն իբր դաստիարակ եղբօրորդւոյ իւրեանց
Ալփոնսոսի հինգերորդի, որ յաջորդեալ էր յա-
թոռն 'ի կրտսեր հասակի իւրում․ և այսպէս փո-
խանակ թուլացուցանելոյ զջանս իւր Հենրիկոս, շա-
րունակեաց յառաջ խաղալ 'ի հետազօտութիւնս իւր
մեծագոյն զուարթութեամբ :

Բայց առ 'ի լռեցուցանել զամ քրթմնջիւնս հա-
կառակորդաց հնարեցաւ ընդունել 'ի նպաստ գոր-
ծելոյ իւրոյ զվկայութի իմն բարձրագոյն իշխա-
նութե․ Դիմեաց առ այս վախճան առ Հռոմէա-
կան քահանայապետն․ յանդիման արար նմա պան-
ծալի եղերօք զբարեպաշտական և զանվեհեր նա-
խանձայուզութիւն, յորում վարժեալ էր զամս
քան 'ի յորոնելն զնոր երկիրս․ որոց ողորմելի
բնակիչքն էին բնաւին զուրկք 'ի ճշմարիտ կրօնէ,
մոլորեալք 'ի խաւարի հեթանոսութե և զարտա-
ղեալք 'ի խարէութեցն Հագարացւոյն․ Աղաչեաց
զսր Հայրն, որում իբր փոխանորդին քնի բոլոր
թագաւորուիք երկրի ենթարկեալ էին, հաստա-
տել թագաւորուին փորթուկալլից զիրաւունս ինչ
'ի վն ամ աշխարհացն ստացելոց յանհաւատից․
զորս ինքն գտանէր ճարտարութբ հպատակաց ի-
րոց, և նուաճէր ընդ լծով զօրուբ զինուց իւրոց․
Աղաչեաց զնա պատուիրել բովանդակ քրիստո-

Ճոր-
հեշն
Բոնհա-
նոյապե
տէն՝
փոքրա-
խոյլոյ
պզտևել
Երկիր-
'ի նոյա
նէ․

նէ-

նեական իշխանութեանց չխուեալ զփորթուգեզս․ որովհետև պայմանեալ էին յայսմ գովելի գործառնութեան, և արգելուլ զնա 'ի հարդունանալոյ յիմէք յայնց տեղեաց զորս նա ինքն գտեալ էր․ Խոստացաւ, թէ 'ի բովանդակ շահատակութեանն գլխաւոր նպատակն փորթուգեզաց եղիցի ծաւալելն քրիստոնէական կրօնն, հաստատելն զիշխանութի մէջ Աթոռոյն, և անձնացուցանելն զհօտ ընդհանրական հովւին․ Իսկ քանզի այս առաջի առնէր զծակցութի իմն օգտակար ընդարձակելոյ զիշխանութին, զոր երաստն Հռոմայ աստիճանաբար արդէն ընկալեալ էր, Եւգինէոս չորրորդ՝ քահանայապետն, առ որ արարեալ եղև այս խնդիր, մեծաւ զիմագրաւութի շահաւորեցաւ 'ի բարի դիպաւորութէն․ Ծանեաւ իսկ և իսկ, թէ հաւանելով խնդրոյ արքայն Հենրիկոսի կարող էր վարել զարտօնութի իմն ոչ միայն պարաւանդիչ բնութ իւրով, այլ և օգտակար 'ի հետևութիս իւր․ Սա այսորիկ հրատարակեաց կոնդակ մի․ յորում զկնի գովելոյ բացայայտագոյն եղերօք զանցեալ ջանսն փորթուգեզաց, և զկնի յորդորելոյ զնա երթալ յառաջ 'ի գովելի ընթացսն, յոր մտեալ էին, շնորհէր նց զիրաւունս ինչ սեպհականս 'ի վերայ ամ աշխարհացն, զորս գտեալ էին 'ի Կաւօ Նօնայ մինչև ցշարունակն Հնդկաց․ Այսպիսի իմն ամոքական պարգևութն, որ բովանդակէր զայսպիսի ընդարձակ բաժին բնակ երկրագնտոյս, որչափ և տարապայման կարիցէ երևիլ այժմ, ոչ ոք 'ի հնգետասաներորդ հարիւրեկին երկմտեցաւ մի թէ քահանայապետն լռութ առաքելական իշխանութե իւրոյ ունիցի իրաւունս ինչ առնելոյ զայն․ Արքայն Հենրիկոս խնլամուտ եւ անընդմիջաբար շահուցն, զոր կարէր հանել յայնմանէ․ որովհետև առաջարկութիք իւր վկայեալ լինէին և ակնածելի 'ի նոյն կոնդակէ․ Հոգին երկրագնտութե նրթայր յարակցեալ ընդ նախանձայու-

գութեն կրօնին. որ եղեալ է միշտ սկիզբն այսպի-
սի գործունէութեն և ուժգնութեն առ 'ի ազդել 'ի
գնացս ազգաց. Ամենայն նահապետք քրիստոնեայք
նախանձեալք էին 'ի մտանելոյ յայն տրուհն, զորս
փորթուկէզք գտեալ էին, և 'ի խրամատելոյ զյա-
ռաջադիմուի նաւարկութեն նց և տիրապետութեան :
(10) ‖ Օրինակ ինչ սորա յառաջ բերեալ է 'ի
Հաքլուիթայ 'ի վն իշխանուն Գարցիոյ Ռեսեն-
դեայ փորթուկէզ վկայասանի. Ամանք 'ի վաճա-
ռականաց Անգլիացւոց գնելով 'ի մտի բանալ ըն-
տուրևառութի իմն ընդ ծովեզերն Կուինեայի, Յով-
հաննէս երկրորդ փորթուկալեյոյ առաքեաց հրեշ-
տակս առ արքայն Եդուարդոս չորրորդ Անգլիոյ,
ով զի բացայայտեսցեն նմա զիրաւունսն, զոր նա-
ստացեալ էր զօրութե Կոնդակի Պապին առ տրուի
այնր երկրին. և աղաչեսցեն զնա արգելուլ հպա-
տակաց իւրոց չերթալ յառաջ 'ի սահմանեալ ճա-
նապարհորդութեն իւրեանց. Եդուարդոս այնպէս
շատացաւ բացառական իրաւամբքն շնորհեցելով
փորթուկէզաց, զի առաքեաց զհրամանս իւր ար-
տաքս այնու եղանակաւ ամենեւին, որով փորթու-
կէզք փափագէին : ‖

Համ- բաւ և յառա- ջադի- մութի Եւրո- պացւոց Փորթու- կէզաց.

Սփռեցաւ նոյնհետայն ընդ Եւրոպիա համբաւ ստա-
ցուածոցն փորթուկէզաց. Մարդիկ սովորեալք յեր-
կար ժամանակաց հետէ 'ի պարագրել զգործու-
նէութի և զճանաչումն մարդկային մտաց 'ի կո-
պարսն, յորս յայնժամ սահմանաւորեալ էր, ապ-
շեցան 'ի տեսանելն զծիր նաւարկութեն ընդարձա-
կեալ այնպէս արագ, և հորդեալ ճանապարհն
այց առնելոյ այնց մասանց երկրագնտոյս, որոց
գոյութիւնն ոչ ծանուցաւ 'ի վաղ ժամանակսն.
Գիտնականքն և հոյեցողականքն տրամաբանէին
և կերպաւորէին զտեսականութիս 'ի վն այնպիսի
անակնկալ գիւտուածոց. Ռամիկն զբաղէր հետա-
խուզելով և զարմանալով. քաջասիրտ բաղդորդքն
խուռն ընթանային յամ կողմանցն Եւրոպիոյ փու-

թացուցանելով զարքայն Հէնրիկոս կարգել զնս յայնպիսի պատուաւոր ծառայութն. Բազում Վենետիկեցիք և Ճենովացիք մասնաւորապէս, որք էին յաւուրսն յայնոսիկ վերնագոյնք քան զայլ ամ ազգս 'ի գիտութն ծովային իրակունց, մտին 'ի ծով 'ի վերայ նաւուց փորթուկէզաց. և ստացան զկատարելագոյն և զառաւել անվթար ծանօթութի արհեստի իւրեանց յայնմ նորոգ կանգնեալ դպրոցի. փորթուկէզք մրցելով ընդ ար-
1446 տաքնոց յարգեցին զքանքար իւրեանց. Ազգն ընհետ գնայ գաղափարացն արքային. Նաւաձին վաճառականք հիմնեցին զընկերութիս դիտմամբ ըմտանելոյ յայլ երկիրսն. Կղզիքն Քափօվէրտեայ, որք են արտաքոյ համանուն գերսարին, գտեալ եղեն. և
1449 յետ սակաւուց կղզիքն կոչեցեալք Ազօրէք. Այլ քան զի առաջինք տարակոյս են աւելի քան զերեքհարիւր մղոն 'ի ծովեզերէն Ափրիկոյ, և վերջինք իննհարիւր մղոն յինչ և իցէ ցամաքէ, յայտնի իմն է, թէ փորթուկէզք վտանգելով զանձինս այնչափ քաջասրտութն 'ի բացարձակ ծովսն, զայնու ժամանակաւ զտեալ էին յոյժ յոյժ զարհեստ նաւարկութնն։

Մահ արքային Հէնրիկոսի. Մինչդեռ փափագ դիմագրաւ լինելոյ յայսպիսի ձեռնարկութիս երևէր այնպէս ջերմացեալ և գործունեայ, ընկալաւ զտարաբախտ իմն նահանջ վս մահուան արքային Հէնրիկոսի. որոյ սեպհական
1463 քանքարն մինչև ցայնժամ ուղղաւորեալ էր զբովանդակ գործս երկրագիտից, և որոյ պաշտպանութին քաջալերեալ էր զնս և ջատագովեալ. Ճշմարիտ է, թէ 'ի կենդանութն նր փորթուկէզք 'ի մեծագոյն յառաջ խաղացմունս իւրեանց 'ի հարաւակողմն ոչ յառաջացան 'ի ներքս հինգ աստիճանացն գիծերահաւասար գծին. և թէ յետ տաժանմանց իւրեանց շարունակելոց ընդ կէս հարիւրեակ մի հազիւ թէ հազար հինգհարիւր մղոնք էին ծանուցեալք 'ի ծովեզրէն Ափրիկոյ. Ապա դարու միում, որ խնլամուտ է ճղանց նա-

ւար-

ռարկութիւն ՚ի հասունութիւն և ՚ի կատարելութեան ՚Ի 1412
վիճակի իւրում, այս փոքր արարեալք ՚ի սկզ- ամ՝ մին
բունս իւր՝ պարտին արձակարար երևիլ տկարք և չև ՚ի
առանց ուսման. Բայց որչափ և կարիցեն դա- 1463.
տիլ թեթև, բաւական եղեն դարձուցանել զըղ-
ձումն ազգաց Եւրոպացւոց առ նոր ասպարէզ մը
զարթուցանելոյ զհոգի իմն ձեռներէց, և ցուցա-
նելոյ զճանապարհ առ ապագայ ձեռնարկութիւնս:
Ալփոնսոս, որ նստէր յաթոռ Փորթուկալիոյ յետ Աֆոն
մահուան արքային Հէնրիկոսի, էր այնքան պա- Եղեր-
տաղեալ ՚ի վաւերացուցանել զիրաւունս իւր առ Գարուն
թագաւորութիւն Կաստիլիոյ, և ՚ի շարունակել զշա- Նաւաւ-
հատակութիս իւր ընդդէմ Մաւրեացն Բարբարիոյ, նոյ ա-
մինչզի զօրութիւնք թագաւորութեան իւրոյ գոլով վա- ձախ-
րեալք ընդ այլ ճանապարհս, ոչ կարէր եռան- ողջէնչ.
դեան յառաջ տանել զերկրածանօթութիւնս Ափրի-
կոյ. Մի այսօրիկ յանձն արար զառաջնորդութիւն
այնց Ֆէրդինանդոսի Գոմեծայ վաճառականին ՚ի
Լիզբոնա, որում միայն շնորհեաց զարտօնութիւն
շահավաճառութեան ընդ բոլոր աշխարհացն, որոց
արքայն Հէնրիկոս տիրեալ էր. ՚Ի ներքոյ անձ-
կութեան և ճնշման մենավաճառութեան՝ հոգին երկ-
րածանօթութեան թուլացաւ. Այլազգ՝ ոչ եղև ա-
ռարկայ իմն ազգային, այլ՝ եղև շահ միոյ առան-
ձին մարդոյ ձկտեցելոյ առ իւր օգուտ, և ոչ առ
փառս հայրենեաց իւրոց. Բայց արար զզարգա-
ցումն ինչ. Փորթուկեցիք ՚ի վախճանի նորին զան-
ձինս ՚ի վտանգի յանցանել ընդ գիծերահաւասար
գիծն. և հիացմամբ իւրեանց գտին, զի երկիրն
այն այրեցեալ գօտւոյն, որ ենթադրիւր բոցակի- 1471
զեալ յանհանդուրժելի տապոյ, էր ոչ միայն Սեր-
բնակ, այլ և բերրի և մարդաշատ: ջեն կեն
Յովհաննէս երկրորդ, որ յաջորդեաց Ալփոնսոսի տանո-
հօր իւրոյ, ունէր զքանքարս ընդունակս կերպա- նոյ ա-
ւորելոյ և կատարելոյ զմեծամեծ գաղափարս. Նա ռանէլ
քանզի մի մասն մտից իւրոց, յորժամ էր նա ար- Եղան-

քայ, յառաջ եւն 'ի սակիցն 'ի մը վաճառականութե ընդ նորոգ գտեալ աշխարհաց, այսորիկ զարթուցին բոլորովին զուշադրութի նր. և խնամնեցուցին 'ի վերայ օգտակարութե և ծանրակշռութե նց. Ըստ չափուն, որով աճէր ճանաչումն իւր զայսց երկրաց, երևէր և նմա, թէ ստացումն նոցա լինելոց էր մեծակշիռ. Մինչև փոքթուկեզք յառաջադէմ լինէին առ ափամբն Ափրիկոյ 'ի ՝Բարի ՝Յուսոյ ցգետն Սենեկալ, տեսին, զի բովանդակ այն ընդարձակ տարածութիւն էր աւազուտ, անբեր և բնակեալ 'ի սակաւ և 'ի տառապեալ ժողովրդենէ, որ դաւանէր զկրօնն Հագարացւոյն. և էր ենթարկեալ ընդարձակ կայսրութեն Մարոքքայ. Բայց 'ի հարաւոյ կողմանէ այնր գետոյ ոչ նշմարիւր, ոչ իշխանութիւն և ոչ կրօնն Հագարացւոց. Երկիրն էր բաժանեալ 'ի փոքր փոքր անկախ նահապետութիւնս, բազմամարդութիւն երևելի, գետինն արգաւանդ. և փոքթուկեզք իմացեալք եղեն ևս, թէ յառաջ ածէր զփղոսկր, զհարուստ խէժս, զոսկի և զայլ մեծագին տարազս. Ս՟ այսպիսի ստացմանն վաճառաշահութիւն զարթեաւ. և եղև առաւել խրախուսեալ. Մարդիկ քաջալերեալ և շարժեալ 'ի ստուգագոյն տեսութէ շահուն, մղեցին զհետազօտութիւն իւրեանց առաւել յառաջ, և մեծագոյն անձկանօք, քան յորժամ էին շարժեալք առ այն միայն 'ի հետաքննութէ և 'ի յուսոյ:

Յառա- Եւս հոգի ընկալաւ ոչ փոքր յաւելուած ուժգնութե
ջադէ- վս առաջնորդութե Միապետին Յոհաննու. Սա
մութիւ- հանդիսացաւ պաշտպան զինչ և իցէ ձեռնարկութե
նք. վս երկրածանօթութեան. յառաջ շարժեաց զայնս համարձակութբն մշտնջենաւոր յիշատակաց արժանի մեծի հօրեղբօր իւրոյ արքային Հենրիկոսի, և մեծագոյն ևս զօրութք. Աղխաղակի զգացին եղեն արդիւնքն. որովհետև հանդիպեցաւ հզօրեղ նաւահանգիստ մի, որ զկնի ծանօթութեան թա-

դա-

գաւորութեանցն Պէնինու և Բոնկօյի յառաջ խաղացին գրեթէ հազար վեց հարիւր մղոն անդր քան զհաստարակածն. և Փորթուկեցք տեսին յառաջնում նուագի զնոր երկին. և նշմարեցին զաստեղս այլոյ իրէք կիսագնդոյ. Յօհաննէս ոչ միայն փոյթ եղև յաղագս երկրագտութեանցն, այլ և ուշադիր յապահովացուցանել զստացուած այնց աշխարհաց. Շինեաց զամրոցս 'ի վր ծովեզերացն Գուինէոյ. առաքեաց զհատուածս առ 'ի բնականալ անդէն. հաստատեաց զշահավաճառական իմն հաղորդակցութի ընդ հզօրագոյն թագաւորութեանց. ջանացաւ առնել զնս, որք էին տկարք և բաժանեալք հարկատուս թագաւորութեան Փորթուկալլիոյ. Ամենք յայնց փոքրիկ նահապետաց յայտ արարին զանձինս կամաւորաբար ստրուկս նր. և այլք հարկեցան առնել զայն բռնութբ զինուց. Արքայութեան կանոնաւոր իմն և բարւոք կարգաւորեալ ոճ նկատմամբ այսր նորոյ առարկայի քաղաքականութեան, յոր յարելով հաստատապէս կարողութիւն և շահավաճառութիւն Փորթուկեցւոց՝ յԱփրիկէ հարգունացան սերտ հիմամբ։

Ի մէ յարակայ հաղորդակցուն իւրեանց ընդ Ափրիկեցւոց՝ Փորթուկեցք ստացան աստիճան առ աստիճան զծանօթութի այնց տեղեաց, զորս և ոչ իսկ տեսեալ էին. Տեղեկութիւնն զայնցանէ, զորս հանէին յազգայնոց, լծակցեալ ընդ այնմ, զոր ինքեանք նշմարեալ էին 'ի ճանապարհորդութիւնս իւրեանց, սկսան մեծացուցանել զհայեցուածս մտաց, և թելադրել զգաղափարս առաւել ծանրակշիռ մտածութեանց այնց իրաց, որք ցայնժամ յանկուցեալ էին զնս և պատաղեցուցեալ. Իա՝ ճանաչէին զմոլորութի նախնեաց նկատմամբ բնութե այրեցեալ գօտւոյն. տեսեալ էին, թէ ըստ համեմատութեան, որով յառաջանային 'ի հարաւակողմն, շարունակն Ափրիկոյ փոխանակ տարածելոյ յերկայնութի ըստ վարդապետութեան Պտղո-

Յոյսն
Գրանէ
լոյս պէոր
իմն ճա-
նապարհ
[illegible]
բեերկ
եան հրա
[illegible]։

մեայ, որ էր իբր պատգամ ածայլին յայնմ ժամանակի, և առաջնորդ գիտնաւորաց յերկրագրութն, երևէր զգալաբար ամփոփիլ և թեքիլ յարևելս կոյս. Այս շարժեաց զնա ընծայել հաւատս պատմութեանց ճանապարհորդութեանցն նախնի փիւնիկեցւոց շուրջ զԱփրիկէիւ, որք համարեալ էին ընդ երկար ժամանակ առասպելականք. և ետ նմ յղանալ զյոյս, թէ հետևելով ընդ նոյն ճանապարհ կարէին հասանել յարևելեան Հնդկաստան. և 'ի ձեռս բերել զայն վաճառականութիւն, որ լեալ էր սկիզբն փարթամութն և կարողութ ազգացն, որք ստացեալ ունէին զայն. Սրատես և նուրբ ուշիմութի արքային Հենրիկոսի, որպէս մարթ է մակաբերել 'ի բանից Կոնդակին Հռոմայ, կերպաւորեալ էր կանխաւ զգաղափար այսր նաւարկութ. Ամենայն նաւուղիղք և քանակաքանք փորձուկեցք միաբանեցան յայնժամ 'ի ստորագրել զայն 'ի գործ դնելի. Ինքն իսկ թագաւորն եղև ջերմ համախոհ նմ. և սկսաւ կարգաւորել զեղանակս վն դժուարին և ծանրակշիռ ճանապարհորդութեն. Յառաջ քան զընելն 'ի կարգի զնախապատրաստութիս իւր վն այսպիսի իմն վախճանի, եկն լուր յԱփրիկոյ, թէ զանազան ազգք առ ծովեզերբքն յիշատակեալ էին զթագաւորութ իմն հզօր կայաւորեալ յայնմ ցամաքի, և 'ի մեծ տարակայութ յարևելս կոյս. ուր թագաւորն ըստ պատմութեանց նմ դաւանէր զքրիստոնէական հաւատս. Անխապետն փորթուկալեայ անընդմիջաբար հետևեցոյց, թէ սա լինելոց էր կայսրն Հաբէշաստանու. զոր Եւրոպացիք զառածէին 'ի սխալմանէ Սուրբիքեւնայ, Անդրօ փօլօի և այլոց ճանապարհորդաց յայն անղեան, մոլորաբար անուանեալ էին փրէթէ Յաննի, որ թարգմանի երէց յօհաննէս. և յուսալով ընդունել զլոյս, և զսատարութի 'ի քրիստոնեայ արքայէ միոջէ առ 'ի անընդհատ յառաջ տանել զխորհուրդն, որ դիմէր 'ի տարածանել զհասարակաց

կրօնն

կրօնն, որոշեաց բանալ, եթէ էր կարելի, զհաղորդակցութիւն ինչ ընդ արքունեաց նր. Այսու դիտմամբ ընտրեաց նա զՊետրոս Կովիլեամ և զԱլֆոնսոս Փայվայ, որք ուսեալ էին կատարելապէս զԱրաբացւոց լեզուն. և արձակեաց զնոսա յարևելս առ 'ի գտանել զաթոռ այսր անծանօթ իշխանաւորի. և ընծայել նմա զբարեկամութիւն. Նաև պատուիրեցաւ նց նախահոգալ վասն իմն ծանօթութիւն, զորս ցեղքն այց արարեալք 'ի նոցանէ կարող էին հաղորդել նց, եթէ նկատմամբ շահավաճառութեն Հնդկաստանի, և եթէ ընթացից նաւարկութեն 'ի կողմանսն յայնոսիկ:

Մինչդեռ Յօհաննէս առնէր զայսպիսի իմն փորձ ընդ ցամաք առ 'ի ստանալ զծանօթութի ինչ երկրին, զոր խորհէր գտանել այնչափ անժուժութբ, ոչ անհոգացաւ յառաջաշարժել զիւր մեծ խորհուրդն նաև ը ծով. Առաջնորդութի այսր դժուարագոյն և առաւել ծանրակշիռ ճանապարհորդութե, քան զոր երբեք փորձուկեգք առաջադրեալ էին, յանձնեցաւ Բարթողոմեայ Դիացու, որ էր զօրագլուխ յարմար առ այն վս իւրոյ աչալրջութե, ներհմտութե և հաստատութե. Սա ուղղեաց զնիքն համարձակ 'ի հարաւակողմն. և անցանելով ընդ առաւել տարակաց կոպարսն, առ որս հայրենակիցք իւր մինչև ցայնժամ հասեալ էին, ծանօթ եղև շուրջ զհազար մղոնաւ նորոգ երկրի. Ո՛չ վտանգն, յորում եղեալ կայր նա վս շարունակ բուռն փոթորկացն յանընդել ծովուն, ո՛չ յաճախ աղստամբութիւնք խուժանին իւրոյ, և ոչ տառապանք քաղցուն, զոր կրեաց նա վս կորուսանելոյ զնպարակաբարձ նաւուն իւր, կարող եղեն զարհուրեցուցանել զնա յերթալոյ յառաջ 'ի սկսեալ գործն իւր. 'Ի փոխարէն աշխատութեց իւրոց և տոկալոյ իւրոյ՝ կարողացաւ 'ի վախճանի նշմարել զայն բարձրաբերձ դերասարն, որ եզերէ զԱփրիկէ ընդ հարաւակողմն. բայց այս երկրածանօթութի

Ճանապարհորդութիւն Բարթողոմեայ Դիացու.

 միայն

միայն եղև այնչափ ինչ, զոր նա մարթացաւ առնել. Ներհակութիւն հողմոց, խարխալումն եղեալ նաւուց իւրոց, և խռովեալ հոգին նաւավարաց իւրոց ստիպեաց զնա դառնալ յետս զկնի ճանապարհորդութեան վեշտասան ամսոց. յորում գտեալ էր զտարածութիւն իմն երկրի մեծագոյն յոյժ, քան զոր և իցէ այլ նաւորդ յառաջ քան զնա. Գիւպ անուանեալ էր զգերասարն, որ աւարտեաց զճանապարհորդութիւն իւր, գլուխ վշտալի կամ գլուխ մրրկալի. բայց թագաւորն տէր իւր, որ ոչ ևս երկմտէր 'ի վերայ գտանելոյ զերկար փափագեալ ճանապարհին 'ի Հնդկաստան, ետ նմա զանունս առաւել խրախուսիչ և առաւել յաջողագուշակ, Քափօ տի պօնա Ասփէրանցա. որ թարգմանի գլուխ կամ կատար բարի յուսոյ:

Աստու- գոգոյն յոյժ յա- տողջա- գիւտն. Այս անձկացեալ ակնկալութիւնք բարեյաջողութեան հաստատեցան 'ի ծանօթութէն, զոր ընկալաւ Յօհաննէս ցամաքաւ յընթացս հրեշտակութեան 'ի Հաբէշաստան. Քովիլլամ և Փայվա զհետ երթալով խրատուց արքային իւրեանց՝ գնացեալ էին 'ի Մեմփիս Եգիպտոսի. Յայսմ քաղաքէ մեկնեցան ընդ կարաւանի միում Եգիպտացւոց վաճառականաց. և անցին մինչև ցԱդէն 'ի վերայ կարմիր ծովուն. անդ անջատեցան 'ի միմեանց. Փայվա առաքաստեաց ուղղակի 'ի Հաբէշաստան, Քովիլլամ նաւեաց յարևելեան Հնդկաստան. և այց արարեալ Քալիկութթայի, Գօափ և այլոց քաղաքաց առ ծովեզերբն Մալաբարու, դարձաւ 'ի Սօփալա յարևելեան կողմն Ափրիկոյ. և անտի 'ի մեծն Քահիրոս որ է Մեմփիս. զոր երկոքեան հաստատեալ էին իբր տեղի հանդիպելոյ միմեանց. Փայվա եղև թշուառաբար և անողորմաբար սպանեալ 'ի Հաբէշաստան. բայց Քովիլլամ եգիտ 'ի Մեմփիս զերկուս փորթուկեզ հրեայս. զորս Յօհաննէս, որոյ յառաջատես զգօնութիւն 'ի գործ արկանէր զամ պարագայս, որ կարող էր գիւ-

բա-

բացուցանել զկատարումն խորհրդոյն իւրոյ, որ-
ձակեալ էր անդր զինինց առ 'ի ունել զտեղե-
կութի իմն զյառաջադիմութեանց նոցա և առ 'ի հա-
ղորդել նց զնոր հրահանգս. Ակնորդութի այսց
հրէից Բովէլլամ փոխանցոյց 'ի փորթուկալեա
զօրըստօրեայ մատեան մի ճանապարհորդութեց իւրոց
ընդ ծով, և ընդ ցամաք զգիտողութիս իւր 'ի վր
հնդկային շահավաճառուն 'ի միասին ը անվթար
աշխարհացուցաց այնց ծովեզերաց. առ որս հա-
սեալ էր. և յայնմանէ, զոր նա ինքն նշմարեալ
էր, որպէս և 'ի տեղեկութեանցն ընդունակ նաւա-
վարաց 'ի զանազան երկիրս, հետևեցոյց թէ ա-
ռագաստելով շուրջ զԱփրիկէիւ մարթ էր գտա-
նել զանցս ինչ առ արևելեան Հնդկաստան.
Երջանիկ շարակցութի կարծեաց և տեղեկութեն Կոնտ
Բովէլլամու ընդ երկրագրութեանցն արաբեաց պորտօս
փոքր մի յառաջ 'ի Գիտացու հաղէն եթող զստուեր թոնԼէյ
իմն տարակուսանաց նկատմամբ կարող լինելոյ նա- վէ ոյայ
ւել քերօպին 'ի Հնդկաստան. Բայց երևելի Էլէօ ճօ
երկայնութի ճանապարհորդութեն և ամէնի փո- նաւլը
թորիք պատահեալք Գիտացու մերձ 'ի Բանիօ տի հօրտօ
պանս Աֆէրանցա՝ կասկածեցուցին զայն ատրիճան Նէան.
և աշխարհեցին զփորձուկէզս, թէպէտ և հա-
նապազորդ փորձառութեամբ եղեալ էին արդէն
վարժ և համարձակ նաւավարք, մինչ զի ժա-
մանակի պէտք եղեն առ 'ի յարդարել զմիտս նոցա
առ այնպիսի վտանգաւոր և արտաքոյ կարգի
գնացս. Նմ զօրութիւն և սաստութիւն Ախա-
պետին ցրեցին զմնոտի տպաւորութիւնս հպա-
տակաց նորա. կամ հարկադրեցին ունել զայնս
թաքուն. Նա քանզի Յօհաննէս տեսանիւր ար-
թուն կատարելոյ զայն մեծ գաղափարն, որ ե-
ղեալ էր նախապետական առարկայ թագաւորու-
թեան իւրոյ, որոշումն իւր 'ի կատարել զայն՝ ե-
ղև այնպէս ուժգին, զի պատաղեցուցանէր միշտ
զխորհուրդս իւր 'ի տուէ. և բաւնայր 'ի նմանէ
զհան-

զհանգիստն 'ի գիշերի. Մինչդեռ 'ի գործ արկանէր նա զամ զգուշութիւն թելադրեալ նմա 'ի սեպհական իմաստութենէ և 'ի ներհմտութենէ առ 'ի ապահովացուցանել զբարի ելս առաքմանն, որ պարտէր որոշել զվիճակ սիրեցեալ առաջարկութե իւրոյ, համայն մեծամեծ երկրագտութեանց, զորս Փորթուկէզք արդէն արարեալ էին, պատմութիւն արտաքոյ կարգի լուսոյ, զոր ընկալեալ էին յարեւելից, և հայեցուած ճանապարհորդութեն, զոր խոկայրն, զարթուցին զուշադրութի համօրէն Եւրոպացւոց ունելով զնն 'ի վարանման և յակնկալուե. Յոմանց Փորթուկէզք մծ ծովային գիտութն և նաւարկութն համեմատել էին Փիւնիկեցւոց և Կարթագինեցւոց և աւելի ևս բարձրացուցեալք. Նոյնք կերպաւորէին զվարկածս շուրջ զորոշմամբքն, զորս երջանիկ պատահումն խորհրդոց նց կարէր պատճառել 'ի վաճառականութն և 'ի քաղաքական վիճակի Եւրոպիոյ. Վենետիկեցիք սկսան խռովիլ երկիւղիւ կորուսանելոյ զՀնդկային շահավաճառութի իւրեանց. որոյ գործածութին էր նախապետական ծագումն կարողութեան միանգամայն և փարթամութեանց նց. և Փորթուկէզք արդէն խնդային պատկերակերպութեամբ բերոցն արեւելից. Բայց յայսմ ժամանակի, որ մատակարարէր զայսպիսի իմն նպատակ զանազան գաղափարաց հետաքրքրութեան, յուսոյ և երկիւղի, եհաս յԵւրոպիա լուր տարապայման և անակնկալ իմն դիպուածոյ. այս է, ծանօթութի նորոյ աշխարհի միոյ կայսերեցելոյ յարեւմուտս. և աչք և զարմացումն ազգի մարդկան դարձան նոյնհետայն առ այսպիսի իմն մեծ առարկայ:

ԱՅ-

# ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅ

## ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ.

'ԻՄԷՋ արտաքնոց, զորս համբաւ երկ- նաւո- րագութեանց արարելոց 'ի փորձու- նութ. կեզաց հրաւիրեալ էր մտանել 'ի ծա- ռա- ռայութի նց, մինն եղև Քրիստափա- փէրո- նոս Քօլոմպոս հպատակ Հասարակապետութենէն Ճէնուայի. Ոչ լինի գիտացեալ ստուգութե ոչ Քօլոմ- ժամանակն և ոչ տեղին ծննդեան իւրոյ. սակայն դոյժ. սնեալ էր նա 'ի պատուական տոհմէ, թէպէտև վասն պէսպէս ձախորդութեանց անկեալ 'ի կարօտութիւն :

(11) Իսկ վարկածին իմն մարթ է հաստատել զժամանակ ծննդեան Քօլոմպոսի առ կարի իսկ քաջ իմն շուրջ՝ 'ի հետագայ պարագայից. Նորին 'ի հատակոտոր թղթոյ ինչ ուղղելոյ 'ի Նմանէ առ Ֆերդինանդոս և առ Եղիսաբեթ յամին 1501, թէ նա յայնմ ժամանակի ընդ ամս քառասուն վարեալ էր զկեանս իւր 'ի վր̃ ծովու. Յայլում

իմիք

իմիք թղթի ծանուցանէ նորա , թէ գնացեալ իցէ 'ի ծով 'ի հասակի չորեքտասան ամաց . և յայսց իրաց մարթ է հետևեցուցանել, թէ նա ծնեալ էր յամին 1447 : ‖

Ազնուագոյնք նորա գոլով տուեալ զանձինս 'ի պատերազմ զապրուստ առ կեանս 'ի մէջ ծովու, Գօլոմպոս յառաջին մանկութեն իւրում եցոյց զմասնաւոր հանգամանս և զքանքարս, որք ընդունակացուցանեն զմարդն առ այնպիսի արհեստ . Ծնողք իւր հեռի 'ի հակառակելոյ բնական յօժարութեն նորա , խրախուսեցին զնա և հաստատեցին յայնմ՝ զդաստիարակութիւն իւրեանց , զոր ետուն նմա . Իբրև ստացաւ զծանօթութի ինչ լատինական լեզուին , որոյ միջնորդութեամբ միայն ուսեալ լինէր յայնմ ժամանակի գիտութիւն , վարժեցաւ յերկ-
1461 րաչափութեն , յաշխարհագրութեն , յաստղաբաշխութեն և յարհեստի նշանագծութեն . Յայսոսիկ ետ զանձն այնչափ եռանդեան և մասնաւորութեամբ պատճառաւ կապակցութեն նորա ընդ նաւարկութեան սիրելի առարկային իւրոյ , մինչզի արար յուսման նորա զորընթաց իմն յառաջադիմութի . Այսպէս հանդերձեալ գնաց 'ի ծով չորեքտասանամեայ . և սկսաւ 'ի մէջ այնր տարեր զընթացս իւր . որ յետոյ հասոյց զնա յայնպիսի մեծ փառս . Առաջին ձեռնարկորդութիւնք իւր եղեն առ այն նաւահանգիստ Միջերկրականին , յորս յաճախէին Ջե-
1467 նովացիք հայրենակիցք իւր . Բայց այս լինելով ծիր իմն կարի անձուկ մտաց գործունեայ հոգւոյ իւրոյ , այց արար Հիւսիսային ծովուց և եզերացն Իսլանդայի . ուր Անգղիացիք և այլ ազգք սկսեալ էին խուռն ընթանալ պատճառաւ որսոյ ձկանց . Իսկ քանզի նաւարկութիւն յայնժամ եղեալ էր ձեռնարկելի ընդ ամենայն կողմն , յառաջ մղեցաւ ապա յայնմ կղզւոյ , որ էր Թիւլէ կամ Թուլէն նախնեաց . և խաղաց բազում աստիճանօք 'ի ներքս բևեռային շրջանակի . Գոլով յեցեալ զիմաստութեն

իւր

իւր ճանապարհորդութիւն լինի, որ մնացական դի-
մեր առ աճումն ճանաչման իւրոյ 'ի նաւական
նիւթս, քան թէ առ 'ի բարեգունացուցանել ըղ-
բաղդ իւր, էանց 'ի ծառայութիւն հռչակաւոր նա-
ւապետի ուրումն անուանակցի իւրում և տոհմակ-
ցի. Սա հրամայելով փոքրիկ նաւահանգստի միում
հանդերձեցելոյ ծախուք իւրովք, և յելուզակե-
լով երբեմն ընդդէմ Հագարացւոց, երբեմն ընդ-
դէմ Վենետիկեանց նախանձաւորաց իւրոց 'ի շա-
հավաճառութեն, ստացեալ էր զփարթամութիւն և
զհամբաւ. Կօլոմպոս հանապազ եկաց ընդ նմա
ընդ ամս բազումս հանդիսանալով ոչինչ ընդ հատ
քաջասրտութ̃, քանթէ նաւավարական ներհմտութ̃.
Ի վերջոյ 'ի միում յամառ խառնման մարտի ար-
տաքոյ ծովեզերն Փորթուկալիոյ ընդ ոմանց նա-
ւուց Վենետիկեանց, որք դառնային բեռնաւորք
'ի սորին գաւառաց, նաւն, յորում ծառայէր նա,
էառ հուր 'ի միասին ընդ այլում իմիք 'ի թշնա-
մեաց իւրոց, ընդ որում կառչեալ էր անձկապէս.
Յայսմ ահարկու պարագայութեն անվեհերութի
իւր՝ և զգաստութի հոգւոյն ոչ լքին զնա. Ընկեց
զինքն 'ի ծով ապաստանելով 'ի թիակ մի լողել
յերեսս ջուրց. և այսպիսի հաստատանաւ և յա-
ջողակութեն իւրով 'ի լող եհաս յեզր. և ապ-
րեցոյց այնպէս զկեանսն վերապահեալ առ մեծա-
մեծ ձեռնարկութիւնս ։

Սաղվաղակի իբրև ստացաւ վերստին զոյժ առ 'ի Սրանէ
շարժիլ, խոյս ետ 'ի Լիսբոնա. որովհետև բա-'ի ծո-
ղովք 'ի հայրենակցաց իւրոց հարդունացեալ էին տայո-ն
անդէն. Որք յղացան ինքեան զայնպիսի իմն բա-ֆօլէ-
րի կարծիս զվաստակոյ նր և զքանքարոց, մինչև կոչեյ.
Թախանձել զնա ստիպաւ մնալ յայնմ թագա-
ւորութեն. ուր ընդունակութի իւր և հմտութին
'ի նաւական իրս անշուշտ առնելոց էին զնա նշա-
նաւոր. Ս՟ բաղդորդի ուրումն խրախուսելոյ կամ
'ի յղձականութե տեսանելոյ զնոր երկիրս, կամ

'ի

՚ի փառասիրութէ կարօղ լինելոյ հանդիսանալ, ծառայութիւն Փորթուգալլիոյ էր յաւուրսն յայնոսիկ ծայրագոյն յանկուցիչ. Կօլոմպոս մատոյց զիւրակի ունկն խորհրդոյ բարեկամաց իւրոց. և գոլով ստացեալ զհամարումն Փորթուկեղ տիկնոջ միոյ, զոր և հարսնացոյց ինքեան, ընտրեաց ըզԼիզբոնա վն բնակութեան իւրոյ. Ամուսնաւորութիւն իւր անդէն փոխանակ անջատելոյ զնա ՚ի կենացն ՚ի վ̃ ծովու, օժանդակեաց յընդարձակել զծիր գիտութե իւրոյ հայեցմամբ յայն տարր. և զարթոյց ՚ի նմա զփափագ խն ընդլայնելոյ զայն առաւել ևս. Այն իւր էր դուստր Բարթողոմէայ Փէռէսթրէլլայ միոյ ՚ի նաւապետաց կարդեցելոց յարքայէն Հէնրիկոսէ յառաջին նաւարկութիւն իւր. որ և ՚ի պաշտպանութէ նր գտեալ էր և մշակեալ զկղզիսն Փօրթօ Սանթօի և Մատէրայի. Կօլոմպոս տիրեաց օրըստօրեայ մատենից և աշխարհացուցաց այսր փորձ նաւորդի. և էհան ՚ի նոցանէ զընթացս, զոր Փորթուկեզք կալեալ էին յառնելն զգիւտս իւրեանց. որպէս և զզանազան պարագայսն, որք առաջնորդեցին նց. կամ քաջալերեցին ՚ի խորհուրդս իւրեանց. Այս փոյթ զօրացաւ ստածել և բորբոքել զախորժական կիրս իւր. և մինչդեռ հայէր նա յաշխարհացոյցս, և քննէր զստորագրութիւն նորոց գաւառաց, զորս Փէռէսթրէլ տեսեալ էր, զգաց յանձին զնաւանդնա խն անժուժելի առնելոյ զնոյն. Առ ՚ի արդիւնացուցանել զայն, գնաց ՚ի Մատէրա. և տևեաց ընդ բազում ամս ՚ի շահավաճառութե ընդ այնմ կղզւոյ, ընդ Կանարեայց, ընդ Ազօրէից, ընդ հարգունեցն ՚ի Կուինէա և ընդ բոլոր այլոց տեղեաց, զորս Փորթուկեզք գտեալ էին ՚ի շարունակին Ափրիկոյ:

Արդիւն- Երևելո- գործոյ- նց ՚է նոսա: Ս̃ փորձառութիւն, զոր Կօլոմպոս ստացաւ այսպիսի պէսպիսութե նաւապարհորդութեանց գրեթէ յամ մասին երկրագնտոյս, ուր յայնմ ժամանակի ՚ի ներքս մտեալ էր հաղորդակցութի ինչ ընդ

ծով

ծով, արագապէս եղև մի յընդունակագոյն նաւորդացն Եւրոպիոյ. Նա և ոչ շատացաւ այսոմիկ պարզ գովութեամբ, ձկտեցաւ փառասիրութեամբ իւրով առ իրս մեծագոյնս. Երջանիկ յառաջադիմութիւք փորթուկէզ նաւուղղաց զարթուցեալ էին զհոգի իմն հետաքրքրութեան և զնախանձաւորութի իմն, որ պարաւանդէր զարս գիտնականս 'ի քննել զպարակայսն. որք առաջնորդէին առ երկրագտութիւնս, զորս արարեալ էին նոքա. կամ որք ներկայացուցանէին զյուսադրական իմն հայեցողութի յորում և իցէ նորոգ և համարձակ ձեռնարկութեան. Քօլոմպոս բնականաբար հետազօտ, ընդունակ խորին մտածութեան, և հակեալ առ այսպիսի հայեցողութիւնս, պարապեցաւ բազում՝ բազում անգամ 'ի նկատել զսկզբունս, յորոց վճ փորթուկէզք հիմնեալ էին զյառաջադիմութիւնս իւրեանց, և զեղանակն, որով 'ի գործ եդեալ էին. սկսաւ աստիճանաբար դնել 'ի միտ բուռն հարկանել 'ի զտել զգաղափար նոցա, և կատարելագործել զերկրածանօթութիւն, զորս նոքա ցայնժամ փորձեալ էին 'ի զուր:

Գտանելն զանցս ընդ ծով առ արևելեան Հնդկաստան էր մեծ նպատակ դիտեալ յայնմ դարու. 'Ի ժամանակէ անտի, յորում փորթուկէզք կրկնեցան ընդ Քափօվէրտէ, այս էր կէտն, յոր դիմէին նաւարկութիւք նոցա. և ամ երկրածանօթութիւք նջ Ափրիկէ համեմատեալք ընդ այսպիսի առարկայի երևէին դուզնաքեայ իմն. 'Ի բազում ժամանակաց հետէ ճանաչէիր արգաւանդութի և հարստութի Հնդկաստանի. համեմունք իւր և այլ մեծագին տարազք էին մեծապէս ցանկացեալք Եւրոպիոյ. և անբաւ շահն Վենետիկեանց վն գրաւեալ ունելոյ զայս շահավաճառուն ողջոյն, զարթուցանէր զյաջողանս ազգաց. Արշաւի և մտադիրք լինէին փորթուկէզք 'ի հետազօտել զնոր իմն ճանապարհ առ այն փափաքելի տեղիսն, որոնէին

Ակերդ
Ի գա-
ղափար
նոր ճա-
նապարհի
'ի Հնդ-
կաստան.

զայն

ղայն ուղղելով միայն զինքեանս 'ի հարաւակողմն յուսով ժամանելոյ 'ի Հնդկաստան՝ դառնալով ընդ արեւելս յետ առագաստելոյ 'ի հեռաւորագոյն ծայրն Ափրիկոյ. Այլ այս ընթացք մնայր տակաւին անծանօթ. և թէպէտ և գտեալ էին, լեալ էր այնպէս տարապայման երկայնութիւն, զի նաւարկութիւն Եւրոպիոյ առ Հնդկաստան՝ համարելի էր գործառնութիւն իմն յոյժ տաժանելի, և միշտ անստոյգ ելք նորա. Աւելի քան զկէս հարիւրեակ մի փոյթ լինէր յառաջ խաղալ 'ի Քաբօ Նոնայէ առ Հասարակածն. և յոյժ մեծագոյն իմն յերկարաձգութեան ժամանակի պէտք էին յառաջ քան զկարող լինելն լրանալ նաւարկութեան իւրք առաւել տարածելոյ յայնմ վայրէ մինչև 'ի Հնդկաստան. Այս խորհրդածութիւնք 'ի մի՛ անստուգութն, վտանգի, և տաղտկութն ընթացից, զոր ունէին փորձուկեղք, շարժեցին բնականաբար զՔոլոմպոս 'ի խորհել, թէ ուղեգք կարճագոյն իմն, և առաւել անընդմիջական անցս մարթ էր գտանել առ արևելեան Հնդկաստան. Քննեալ ընդ երկար ժամանակ և խոկութբ յանձին իւրում զամ պարագայս թելադրեալս նմա 'ի բարձրագոյն ճանաչմանէ իւրմէ, եթէ 'ի տեսականութն և եթէ 'ի գործածութն նաւելոյ, և բաղդատեալ մտադրութբ զխորհրդութիս արդի նաւուղղաց ընդ նշանաց և վարկածից նախնի հեղինակաց, հուսկ յետոյ հետևեցոյց, թէ առագաստելով ուղղակի յարեւմուտս կոյս խոտորնակ Ատլանտեանն Ովկիանոսի պարտ էին անվրէպ հանդիպել նոր աշխարհաց, որք կերպաւորէին զմի մասն համատարած շարունակին Հնդկաստանի:

Ամերի- կոյն, յորոյ կէ դիտաւոր նաւաթէ էր կէտ դրօշ- մեալ էր.

Սկզբունք և պէսպէս յանդիմանութիւնք հանեալք 'ի զանազան աղբերականց շարժեցին զնա յարել յայս կարծիս՝ առ երևոյթս եղջերումաքաղս, որպէս և նորս և արտաքոյ կարգի. Բոլորակ ձև երկրի ծանուցեալ էր, և մեծութի իւր ստուգեալ առ-

տիճանաւ իմիք ճշգրտութե. Յայսմանէ յայտնի երեւէր, թէ շարունակք Եւրոպիոյ, Ասիոյ և Ափրիկոյ էին միայն փոքրիկ իմն բաժին հողաջրեայ գնդոյս. Համեմատիւր եւս ճանաչմանց մերոց զիմաստութէ և զլարուէ սկզբնապատճառին բնութե, հաւատալի, թէ այն ընդարձակ միջոցն տակաւին և ոչ իսկ ձեռնարկեալ, ոչ լցէ բոլորովին ծածկել յանպտուղ իմն Ովկիանոսէ, այլ տեղակալեալ յաշխարհաց յարմարելոց առ 'ի ծառայել բնակութե մարդոյ. Այլև գտանիւր ամենևին հաւանական, թէ ցամաքն յայսմ մասնէ երկրագնդոյս կայր 'ի զուգակշռութե շարժակցեալ քանակութ իմն երկրի ընդ այլում կիսագնդոյ. Այսպիսի հետեւութք նկատմամբ գոյութեան այլոյ իրիք շարունակի հաստատեալ լինէին 'ի դիտողութեանց, և 'ի վարկածից արդի նաւորդաց. Նաւուղիղ ոմն Փորթուկէզ սլացեալ 'ի խորշս ընդ արևմտակողմն աւելի, քան զոր սովոր էր լինել յայնժամ, կարողացաւ ըմբռնել զհատոր մի գերանի արուեստիճ հատելոյ, որ ծփայր յերեսս ծովուն. և գտելով այս մղեալ առ ինքն յարեւմտեան իմն հողմոյ, յայնմանէ մակաբերեաց, թէ գայր յանծանօթ իմն երկրէ զետեղեցելոյ յայն կողմանս. Նաև ազգականն Քոլոմբոսի գտեալ էր 'ի արևմտակողմն կղզեացն Մատէրայի զհատոր մի փայտի համքատակ արուեստակեալ՝ և բերեալ 'ի նոյն հողմոյ. տեսեալ էր եւս եղեգունս տարապայման մեծութե տատանեալս 'ի վերայ ալեաց, որք երևէին լինել եղեգունքն ստորագրեալք 'ի Պտղոմէոյ իբր մասնաւոր բերք արևելեան Հնդկաստանի. Յետ միոյ քնթացից արևմտեան հողմոց ծառք խլեալք յարմատոց երեւեցան բազում անգամ 'ի վերայ ծովեզերացն Ազորըէից. և 'ի նմին ժամանակի դիակունք երկուց մարդոց անզուգական իմն կազմուածովք, որք ոչ նմանէին ոչ բնակչացն Եւրոպիոյ, և ոչ Ափրիկոյ, գտան ապաստ անկեալք յափն ծովուն:

Իսկ զօրօրինակ զօրուն այսց հաւաստեաց հաւաքե-լոց և յառաջ ածելոց 'ի սկզբանց տեսականութեն և 'ի մտածութենց 'ի վ՜ր գործնականին, հաւաստա-ցոյց զԿոլոմպոս, թէ կարող է գտանել զնոր վայրս յարևմտեան Ովկիանոսի, այլք փաստք հա-ւանեցուցին զնա, թէ այս վայրք պարտ էին լի-նել շարակցեալք ընդ շարունակին Հնդկաստանի. Թէպէտ և Նախնիք հազիւ թէ ընդմտեալ էին 'ի Հնդկաստան անդր քան զափունս Գանգեայ, այլ 'ի վ՜ր այսր ա՜մի ոմանք 'ի մատենագրացն Յունաց համարձակեալ էին 'ի ստորագրել զգաւառս անդր քան զնոյն գետ. Իսկ վ՜ն զի մարդիկ ունէին զսո-վորութի և զազատութի մեծացուցանելոյ զայն, որ է հեռաւոր և անծանօթ, ներկայացուցեալ էին զայնս իբր անբաւ իմն տարածութի. Կտեսիա ասաց, թէ Հնդկաստան էր տարածեալ որչափ մնացեալ մասն Ասիոյ. Օնեսիկրիտոս, որում հե-տևէր Պլինիոս բնագիտին, պնդէ, թէ է հաւասար երրորդ մասին բնակ երկրի. Նէարքոս հաստա-տեաց, թէ պիտոյ էին չորք ամիսք առ 'ի գնալ 'ի միջէ ծագէ նո՜ր մինչև ցմիւսն ուղիղ գծիւ. Օրացոյցն Մարկոսի Փօլայ, որ ճանապարհոր-դեաց ընդ Ասիա յերեքտասաներորդ հարիւրեկին, և որ յառաջադէմ եղև ընդ արևելս յոյժ առա-ւել անդր քան զկոպարսն, առ որս ոչ ոք յԵւ-րոպացւոց յառաջացեալ էր երբէք, թուեցաւ թէ հաստատէր զայսոսիկ պատմութիւնս բարդեալս 'ի Նախնեաց. Ա՜յ մեծապանծ ստորագրելոյ նորա զթագաւորութիւն Կաթայեայ, և Զիփանկոյի և այլոց բազմաց աշխարհաց, որոց անուանքն իսկ ոչ լինէին գիտացեալ յԵւրոպիա, երևէր, թէ Հնդկաստան պարտ էր լինել ընդարձակագոյն յոյժ յոյժ. Յայսպիսի դոյզն վկայութեց, որք էին անվթարք առաւել քան զոր Եւրոպացիք ըն-կալեալ էին յայնմ ժամանակի նկատմամբ զատու-ցեալ մասանցն արևելից, Կոլոմպոս էհան զիրա-

ւա-

ւածի իմն հետեւութի. Նոյ 'ի մտի, թէ ըստ հա-
մեմատութեն, որով ցամաքն Հնդկաստանի տա-
րածիւր յարեւելս կոյս, պարտ էր 'ի հետեւութէ
բոլորական ձեւոյ երկրի մերձենալ յոյժ յոյժ առ
կղզիսն 'ի վերջոյ գտեալս ընդ արեւմտակողմն Ափ-
րիկոյ. եւ թէ տարակացութին միոյն 'ի միւսմէ ոչ
էր հաւանականաբար կարի իմն երեւելի. եւ թէ ա-
ռաւել անընդմիջական, ոչ եւ առաւել համառօտ
ընթացք 'ի հեռաւոր կողմանս արեւելից գտեալ
լինէր առագաստելով ընդ արեւմուտս ուղղակի:

(12) Բոլորական ձեւ երկրի էր ծանուցեալ 'ի
Նախնի երկրագրաց. Նոքա գտին զոմն մինչեւ ցայժմ
'ի գործ ածեալ հաշուելոյ զերկայնութի եւ զլայ-
նութի տարբեր տեղեաց. Ըստ վարդապետութե
նց հասարակածն, կամ գիծն պատկերակերպական,
որ շուրջ պատէ զերկիր, պարունակէր զ360 աս-
տիճանս. զայսոսիկ բաժանէին 'ի 24 մասունս կմ
ժամս՝ իւրաքանչիւրն հաւասար 15 աստիճանաց.
Աշխարհն Մէ՝ կամ Մինակ՝ գոլով առաւել հե-
ռաւոր մասն Հնդկաստանի ծանուցելոյ 'ի Նախ-
նեաց, ենթադրեալ եղեւ 'ի Մարինոսէ Տիւրաց-
ւոյ, որ էր առաւել գերադոյնց 'ի մէջ նախկին երկ-
րագրաց յառաջ քան զՊտղոմէոս, 15. ժամս, կմ
225 աստիճանս յարեւելս կոյս, առաջնոյ միջօրա-
կանին անցանելով ընդ Երանելեաց կղզիսն. Եթէ
այս ենթադրութի էր բարւոք հիմնեալ, աշխարհն
Մինէացւոց կամ Չինու էր միայն 9 ժամս, կամ
135 աստիճանս հեռաւորին 'ի կղզեացն Երանելեց
կամ Քանարեայցն. եւ նաւարկութին յայն ըն-
թացս պարտ էր լինել առաւել կարճառօտ քան
զոր 'ի գործ ածէին փօրթուկեցք. Մարկոս փօ-
լօն 'ի ճանապարհորդութիս իւր ստորագրեալ էր
զերկիրս, մանաւանդաբար զկղզին Չիփանկօ կամ
Ճիփանկրի ենթադրեալ ճափփօնն, երեւելաբար
յարեւելակողմն քան զինչ եւ իցէ մասն Ասիոյ ծա-
նուցելոյ նախնեաց. եւ հետեւաբար այս երկիր, վա-

զի տարածիւր առաւել յառաջ յարևելակողմն. էր միշտ առաւել մօտաւոր կղզեացն Քանարիայց. Հետևութիւնք Պտօլոմէոսի թէպէտ և հանեալք յոչ կարի խնամոտ դիտողութէ, էին իրաւացիք. Եթէ ենթադրութիւնք Մարինոսի լեալ էին բարւոք հիմնեալք, և եթէ երկիրքն, որոց այց արար Մարկոս փօլօն, լեալ էին զետեղեալք յարևելակողմն այնց տեղեաց, որոց Մարինոս կայացուցեալ էր զերկայնութիւն, սեփական և առաւել մօտաւոր ընթացք առ արևելեան Հնդկաստան լինելոց էր ուղղիլն ընդ արևմուտս. Ընդարձակագոյն իմն ծանօթութիւն երկրագնտոյս եցոյց այժմյս զմեծ մոլորութիւն Մարինոսի յենթադրելն, թէ Չին իցէ հնգետասան ժամս, կամ, 225 աստիճանս արևելեան 'ի կղզեացն Քանարիայց. և թէ նաև Պտղոմէոս խաբեցաւ յորժամ վերածեաց զերկայնութիւն Չինու յերկոտասան ժամս կամ, 'ի 180 աստիճանս. Երկայնուի արևմտեան սահմանի այնր ընդարձակ կայսրութն է եօթն ժամ, կամ 115 աստիճան 'ի միջօրականէ կղզեացն Քանարիայց. սակայն Պտօլոմէոս զհետ գնաց ճանաչմանցն, զորս մատակարարեր ժամանակ իւր. և ապաստան եղև 'ի վկայուի մատենագրացն, որք էին յայնժամ համարեալք իբր վարդապետք և առաջնորդք մարդկային ազգի 'ի գիտութն երկրագրութեան: ‖

Այս վարդապետութի պատկանեալ առ մօտաւորուի Հնդկաստանի առ արևմտեան մասունս ցամաքին մերոյ հզօրացեալ էր յոմանց երևելի մատենագրաց 'ի մէջ նախնեաց. զորոց հարկաւոր էր ունել զարժանահաւատ կնիք յայնմ դարու, ուր զի կարծիք ինչ լինիցի կամակար ընկալեալ. Արիստոտէլ համարի կարելի, թէ սիւնքն Հերքուլեայ կամ նեղուցքն Սեպտէի ոչ իցեն յոյժ տարակայք յարևելեան Հնդկաց. և թէ կարէր լինել 'ի մէջ նց հաղորդուի իմն ը ծով. Սենեկայ պարզագոյն ևս եղերօք ցուցանէ, թէ յաջողակ հողմով

մալ մարթ էր առագաստել 'ի Սպանիոյ 'ի Հնդ-կաստան 'ի սակաւ աւուրս. Մեծաշամբաւ կղզին Ատլանտեան վերագրեալ 'ի Պղատոնէ, զոր բազումք ենթադրեցին ճշմարիտ իմն երկիր, յորմէ և անդր գտանիւր զետեղեալ շարունակ իմն անծանօթ, երևեցուցեալ է 'ի նմանէ իբր կայացեալ ոչ յոյժ հեռի 'ի Սպանիոյ. Կշռեալ զայս ամենայն մտմտութիւնս Կօլոմպոս, որոյ 'ի յառակութեն չափաւորութիւն և անյանձնապաստանութիւն 'ի մեծ ուշիմութի իւր միացեալ էին ընդ եռանդնոտ վերացման մտաց առաջարկողի, ոչ կամեցաւ հանդչել բացարձակ ապահովութեան 'ի վերայ ցուցմանց իւրոց, կամ 'ի վերայ վկայութեան նախնեաց. Խորհուրդ էհարց նաև 'ի ժամանակակցաց իւրոց. որք ընդունակք էին քաջ խելամուտ լինելոյ բնութեան ապացուցութեն, զոր նա յառաջ բերէր 'ի ջատագովութեն կարծեաց իւրոց. Որչափ վաղագոյն կարօղ եղև, յամին 1474, հաղորդեաց զգաղափարս իւր վերաբերեալս առ հաւանականութեն գտանելոյ զնոր աշխարհս նաւելով յարևմուտս կոյս, Պօղոսի բժշկի Փիօրէնցացւոյ, որ էր դերահռչակ մի իւրոյ ծանօթութեն յաշխարհագրութեն. և որ 'նկատմամբ գիտութեն իւրոյ և յստակամտութեն ցուցելոյ 'ի պատասխանատուութեն իւրում երևի արժանաւորագոյն մտերմութեն, զոր եդ 'ի նմա Կօլոմպոս. Պօղոս գովեաց յոյժ զգաղափար նր. Թելադրեաց նմա զանազան գործս 'ի հաստատութի նորին. և խրախուսեաց զնա տակաւ յայնպիսի գործել ձեռնարկութեան. որ և զեղանելոց էր 'ի պատիւ հայրենեաց իւրոց և 'ի բարերարութիւն Եւրոպիոյ:

Անձին, որ իցէ նուազ ընդունակ քան զԿօլոմպոս՝ 'ի կերպաւորել և 'ի գործ դնել զմեծամեծ խորհուրդս, այս ամ տրամաբանութիւնք, գիտութիւնք և վկայութիւնք լինէին միայն հիմն գովելի իմն և անպատուղ տեսականութեան, որ կարէր մա-

տակարարել զնիւթ ուշիմ տրամաբանութն, կամ պատկերակերպական վարկածի. Բայց վն սմաւ և ձեռներեց խառնուածոյ նր տեսականութեն էանց ուղղակի 'ի գործ. Խելամնեալ ճշմարտութեանն խորհրդածութե իւրոյ, էր անհամբեր առ 'ի գնել զայն 'ի հաւաստիս փորձոյ, և երթալ 'ի ճանապարհ վն երկրագտութե. Առաջին քայլն վն այսր վախճանի եղև ապահովանալն զպաշտպանութե իրիք յերևելագոյն իշխանութեանց Եւրոպիոյ եարք բաւական իցեն ձեռնտու լինել նմա. Եւ քանզի երկար բացակայութիւն ոչ էր շիջուցին զսէրն, զոր միշտ կրէր առ հայրենիս իւր, ըղձանայր, զի սա կթեսցէ զպտուղ աշխատութեց իւրոց և գիւտից. Ապա ներկայացոյց զառաջարկութի իւր ծերակուտի Ճ՛էնովայի. և համարելով ղհայրենիս իւր առաւել գործական առարկայ ծառայութե իւրոյ, մատոյց զանձն յառաջադատել զը դրօշակաւ Հասարակապետութեն 'ի խնդիր նորոց աշխարհաց. զորս ակնունէր գտանել. Յամեալ էր Քոլոմպոս զամս բազումս յարտաքին կողմանս. և վն այսորիկ քաղաքակիցք նորա ոչ էին տեղեակք ընդունակութե և հանգամանաց նր. Թէպէտ Ճ՛էնովացիք էին ազգ ծովու, սակայն էին այնպէս սակաւ ընտելք երկայն ճանապարհորդութեց, զի ոչ կարացին կերպաւորել զերաւացի իմն գաղափար զսկզբանցն, յորոց վն հիմնէր նա զյոյս բարեյաջողութե իւրոյ. Սն այսորիկ մերժեցին առանց քննելոյ զառաջագրութի նր իբր երազ եղջերուաքաղի ուրումն առաջարկողի. և կորուսին մշտնջենաւորաբար զփառողութի վերածելոյ զՔրութի իւրեանց յառաջին պայծառութիւն իւր:

Պար- յոյց զէնժա առ Ճ՛է- նովա- ցիս.

Քոլոմպոս կատարելով զայն, զոր պարտ էր առ հայրենիս իւր, ոչ վհատեցաւ բնաւ 'ի մերժմանէն, զոր ընկալաւ, այլ զի փոխանակ 'ի բաց թողլոյ զգաղտնին հետամուտ եղև այնմ հզօրագոյն փութով. Յետոյ մատոյց զխնտկար իւր Յովհաննու երկրորդի արքային Փորթուկալիոյ. յո-

Առ ար- քայն Փօրթու- կալեայ.

րում

րոյ նորունն վաղեմի հարդունացեալ էր ընդ բա-
գում ամս. և զոր համարէր վն այսպիսի նկատ-
ման իւր ստացող երկրորդ իրաւանց առ ծառայու-
թիւն. Յայսմ վայրի ամ պարապայութ երևէր խոս-
տանալ նմա զառաւել նպաստաւոր հանդիպումն.
Յանդիման եղև առաջի հոգևանդն Մխայելի
Ճշգրիտ դատաւորի 'ի նաւական գործառնութիւ,
և փառասիրի պաշտպանուն, զոր շնորհէր նմա,
որ միանգամ ձեռնարկէր 'ի գիւտ նորոյ աշխար-
հաց. Հպատակք իւր համարեալ լինէին առաւել
հմուտ նաւորդք Ճենովայ, և նոյնպ մեղկք յա-
հարեկելոյ, կամ 'ի նորոսէ, կամ 'ի Լիզպոնէ
որոյ և իցէ ծովային շահատակուն. 'Ի փորձու-
կալիս ծանուցիւր կատարելապէս ընդունակութիւն
Կոլոմպոսի յարուցեալ խռովմ, և քաջալերեալ անձ-
նական հանդամանք նր. և զորօրինակ առաջինն
հաւատացուցանէր, թէ ստեղծուած մնաց նր ոչ
էր լինելին էակ բանի, երկրորդքն ազատէին զնա
'ի կասկածէ ձախող դիտաւորութե առաջադրելոյ
զայն. Ասափ այլքայն ունկն եդ նմա առաւել
քաղցրութե. և յանձն արար զննութի գաղա-
փարի նր Դիեկոսի Օրթիզայ եպիսկոպոսին Զեու-
թայի. և երկուց հրէայ բժշկաց նշանաւոր երկ-
րագրաց. Ի որս սովոր էր նա խորհրդակցիլ յայս-
պիսի նիւթս. 'Ի Ճ'էնովա տգիտութիւն ընդդէմ
դարձեալ էր, և Կոլոմպոս մնաց խաբեալ. 'ի
Լիզբոնա պարտ եղև նմա պատերազմիլ ընդ նա-
խապաշարութե ոչինչ նուազ աչառկու թշնամեայ.
Նոքա, որք վճռով իւրեանց կարող էին ընդու-
նել, կամ մերժել զառաջարկութիւն, էին որդէն
լեալ գլխաւոր ուղղիչք նաւարկութեանցն փորձու-
կեցաց. և խորհուրդ տուեալ էին 'ի խնդրել զանցս
ինչ առ Հնդկաստան ունելով զգնելթացս ուղղակի
հակադրեալ այնմ, զոր Կոլոմպոս ընծայեցուցա-
նէր իւր առաւել կարճառօտ և առաւել ապահով.
Այն այսօրիկ ոչ կարէին գովել զառաջադրութիւն

F 4	նր

նէ առանց ննթարկելոյ զինքեանս կրկին մաշացուցման, կամ դատապարտելոյ զունայնութի իւրեանց, կամ ճանաչելոյ զզգօնութի նէ վերնագոյն։ Ջկնի տառապեցուցանելոյ զնա խորամանկ հարցմամբք, և զկնի շարժելոյ զանյաւ ընդդիմութիւս դիտմամբ ներածելոյ զնա դաւով առ 'ի մեկնել զգաղափար իւր, այնպէս զի նոքա կարող լիցին հանել յայնմանէ զճշմարիտ գոյացութին, յապաղեցին արտասանել զվախճանական իմն վճիռ. Յայնմ վայրի միաբանեցան կողոպտել զնա 'ի պատւոյն և 'ի շահեկանութեցն, որ սպասեալ լինէր 'ի բարւոք ելից խրախութեն, յորդորելով զարքայն առաքել զնաւ մի 'ի ծածուկ առ 'ի փորձել զպանծացեալ երկրածանօթութին, հետեւելով ճըշգրտիւ ընթացիցն, զոր Պտղոմէոս երեւէր գծագրել. Յօժարեալ մոռանալով յայսմ դիպւածում զխմաստս պատշաճելոյս Ամիապետի միում, տարադէպ ունկնդիր եղև այսմ դաւանակալ թելադրութ. Բայց նաւուղիղն ընտրեալ առ 'ի գործ դնել զգաղափարն Պտղոմէոսի ոչ ունէր ոչ զուշիմութի և ոչ զհաստատութի հեղինակին. Յարեան հողմունք հակառակք, ոչ երեւեցաւ երբէք տեսութի ծովուոր երկրի, նուազեցաւ քաջասրտութի նէ. և դարձաւ անդրէն 'ի Լիզբոնա, անխծանելով զառաջարկութին օտար՝ միանգամայն և վտանգաւոր։

Թուական գիւտոյ Ամերիկայ. Գիտացեալ զայս անպատիւ ձեռնարկութի, զգաց Պտղոմէոս զտհաճութի բնական աշնուական անձին ումեք. և 'ի ջերմութե ցասման իւրոյ բացորոշեաց 'ի բաց թողուլ բնաւին զազգ մի ընդունակ այսպիսի իմն շօշափելի դաւաճանութ. Նոյն հետայն նեթող զայն թագաւորութին. և եհաս 'ի Սպանիա 'ի վերջն ամին հազար չորեքհարիւր ութսուն և չորսին. Գտեալ յայնժամ յաղատութե որոնելոյ զպաշտպանութի որոյ և իցէ պաշտպանի գիտութեց և արուեստից առ 'ի պարաւանդել զնա 'ի հաստատել զգաղափար իւր և 'ի դնել 'ի գործ,

եգ

եդ 'ի մտի մատուցանել անձամբ յետկար Ֆեր-
դինանդոսի և Իզաբելլայի, որք հովանէին յայնմ
ժամանակի զմիաւորեալ թագաւորութիւնս Կաստի- Լէոն-
լիոյ և Արագոնայ. Այլ մի զի կանխաւ փորձեալ էր
էր նա թէ զինչ նշանակէ ուղղելն առ իշխանա-
ւորս և առ պաշտօնեայս նց, կալաւ զգուշութիւն յԱն-
տաքելոյ յԱնգլիա զեղբայր իւր Բարթողիմէոս, զոր
որում բոլորովին հաղորդեալ էր զգաղափարս իւր.
որպէս զի կարող լիցի 'ի նմին ժամանակի խօսել զայն-
մանէ ընդ Հենրիկոսի եօթներորդի, որ էր հա-
մարեալ մի յառաւել զգօն և հարստագոյն ար-
քայից Եւրոպիոյ:

Ոչ առանց պատճառի Քօլոմպոս ունէր զերկիւ- ղութիւն
բայութիւն և զերկիւղս, թէ առաջարկութիւնք իւր բարեյա-
ոչ լինիցին ընկալեալ յարքունիս Սպանիոյ. Այլ զայն-
յայնմ ընթացութեան Սպանիա 'ի վտանգաւոր պա- տերազմ է
տերազմի միում ընդ Գրանաթայ, որ էր վերջին Ապա-
թագաւորութիւն Մաւրեաց. Թէպէտ հաւատ և կաս- կածոտ.
կածոտ խառնուածն Ֆերտինանտոսի ոչ էր յար-
մար հաճելոյ ընդ համարձակ և ընդ տարապայ-
ման գաղափարս. Իզաբելլ թէպէտ և արիա-
գոյն և առաւել ձեռներէց, կախեալ կայր զառ-
նէ իւրմէ յամ գործս իւր. Սպանիացիք ոչ էին
արարեալ ցայնժամ զթեակոխութիւն ինչ առ 'ի
յառաջ մղել զնաւարկութիւն արտաքոյ հին կո-
պարաց. և տեսանէին զքանչելի զարգացումն երկ-
րագործութեան Փորթուկեզաց դրացեաց իւրեանց առանց
շարժելոյ նմանօղ լինել նց կամ նախանձաւոր.
պատերազմն է անհատանելի մատակարարէր զընդ-
արձակ իմն ասպարէզ մի ազգային գործունէութեան
և քաջութեան. Յայսպիսի ձախող ժամանակի
անկարելի էր Քօլոմպոսի առնել զերագ զար-
գացումն ընդ ազգի միում, որ ըստ մեծի մասին
էր տարտամ, և յապաղեալ 'ի կերպաւորել զբաց-
որոշութիւն իւր. Բայց հանգամանք նր յարմա-
րէր սքանչելապէս հանգամանացն ժողովրդեանն,

զը-

զորոյ զվստահութիւն և զպաշտպանութիւն խնամով խնդրէր. Այր նա ծանրաբարոյ թէպէտ և քաղցր 'ի գնացս իւր, շնչահայեաց 'ի խօսս և 'ի գործս, անստգիւտ 'ի վարս, և ամենևին օրինակ 'ի ճիշդ կատարման ամ պարտուց և պաշտամանց կրօնին. Այսպիսի ակնածելի որպիսութիւնք ոչ միայն շահեցան նմա զբաղում սոսկական բարեկամս, այլ և ստացան զնմանէ զհամարումն ինչ այնպէս ընդհանրական, մինչ զի թէպէտ և անպաճոյճ տեսլեամբ համեմատ միջասահմանութեան վիճակի իւրոյ, ոչ համարեցաւ իբր լոկ բաղդորդ, որում կարօտուին թելադրեալ իցէ զառաջարկութիւն իմն երազական, այլ եղև ընկալեալ իբր անձն, որոյ առաջադրութեանցն պարտ էր հաստատուն իմն ուշադրութիւն:

[illegible] Ֆէրտինանտոս և Իզաբէլլա, թէպէտ և ողջոյն պատաղեալք 'ի գործողութիւնս իւրեանց ընդդէմ Մաւրեաց, այնչափ մեծարեցին զԿօլոմբոս, զի յանձն արարին զքննութիւն գաղափարի նորին խոստովանահօր թագուհւոյն Ֆէրտինանտոսի Թալավերայ. Նա խորհրդակցեցաւ 'ի հայրենակցաց իւրոց ընդ այնոսիկ, որք էին ենթադրեալք յարմարագոյնք վճիռ հատանելոյ 'ի վերայ նմանակ ենթակայի իրիք. Այլ ճշմարիտ գիտութիւն արարեալ էր այնպէս սակաւ զարգացումն 'ի Սպանիա, մինչ զի այնք կարծեցեալ փիլիսոփայքն ընտրեալք 'ի դատել յայնպիսի նիւթում ոչ իմացան զառաջին դրութիւնսն, յորոց վերայ Կօլոմբոս հիմնէր զվարկածս և զյոյս իւր. Ոմանք 'ի նոցանէ սուտ գաղափարօք չափմանց երկրագնտոյս պնդէին, թէ ճանապարհորդութիւն իմն առ այն հեռաւոր մասունս արևելից, զոր Կօլոմբոս հաւատայր գտանել, ոչ լինէր աւարտեալ դէթ յերիս ամս. Այլք ասէին թէ նա կամ գտանելոց էր զՈվկիանոս անբաւ տարածութեան ըստ կարծեաց ոմանց նախնի վարդապետաց, կամ թէ յորժամ յառաջ խաղայցէ ըն-

ա-

արևմուտս կոյս անցանելով ընդ որոշեալ կէտ ինչ, կորնթարդ ձև երկրագնտոյս խափանելոց էր զդարձ նր. և թէ երթայր նա յանհրաժեշտ կորուստ յընդունայն ձեռնարկութն պատճառելոց դժուարակցութի իմն 'ի մէջ երկուց հակադրեալ կիսագնտոց, զորս բնութեին զատուցեալ էր մշտնջենաւոր. Նա ևս առանց արժանի համարելոյ մտածել 'ի դոյզն ինչ քննութի, 'ի բաց մերժեցին ոմանք զառաջարկութին ընդհանրապէս, հաւատս ընծայելով առածին, որ յայմ դարս եղև ապաստանարան տգիտաց և վատասրտաց. զի թէ, ամբարհաւաճական իմն է յորում և իցէ անձին ենթադրելն, թէ նա միայն ունիցի ստացեալ զճանաչումն ինչ վերնագոյն քան զճանաչումն այլ ամ մարդկան միանգամայն. եթէ կային այն աշխարհք զոր պնդէր լինել Քոլոմպոս, ոչ մնային այսպէս ի նկայն ժամանակ թագուցեալք. և թէ իմաստունք և գգօնութի դարուցն անցելոց ոչ էին թողեալ զիառս այսր պտման աննշան Ճենովայի նաւուղղի միում:

Պիտոյ եղև Քոլոմպոսի ամ համբերութին և լռջմտութի առ 'ի վարել ընդ ազգի, որ մտաբերէ խօսիլ այսպիսի օտարոտի եղելոց. Պարտ էր նա կռուել ոչ միայն ընդ յամառեալ տգիտութե, այլ և ընդ հպարտութն սուտ գիտութե, որ է առաւել անյընդդիմելի. Զկնի անհամար խօսակցութեց, և յետ հինգ ամաց վատնելոց 'ի զուր ջանս առ 'ի հրահանգել զնս, և խելամտեցուցանել, հուսկ յետոյ Թալավերա այնպէս տարադէպ առաջի արար զբանն Ֆերտինանտոսի, և Եղիսաբեթի, մինչև շարժեաց զնս ազդ առնել Քոլոմպոսի, թէ ցորչափ պատերազմն ընդ Մաւրեաց ոչ իցէ հատուցեալ 'ի վախճան ինչ, անկարելի էր վս նց գրաւիլ 'ի նորանոր և 'ի բազմածախս ձեռնարկութիս. Որ զինչ ջան և 'ի գործ ածեալ լինէր առ 'ի մեղմել զխստութի այսր յայտ արա-

րու-

րուն, Քոլոմպոս համարեցաւ զայն իւր բացարձակ զլացումն աղաչանաց իւրոց. Բայց առ բարերարութիւն մարդկային ազգի այն վեհութիւն քանքարոյ, որ կերպարանէ զմեծամեծ և զհռչակաւոր գաղափարս, յոլովակի ընկերակցեալ է 'ի վաւ իմն վերացմանէ մտաց, որ ոչ կարէ ցրտանալ 'ի յապաղմանէ, և ոչ 'ի մերժմանէ զգետնիլ. Քոլոմպոս ունէր զայս անյողդողդ խառնուած. Թէպէտ և զգայր խորապէս զանագորոյն հարուածն առնելով յուսոյ իւրում, և խոյս տայր նոյնժամայն յարքունեացն, ուր այնպէս ընդ երկար դեգերեալ կայր սուտ ակնկալութիւնք, սակայն վստահութիւն նր̃ 'ի ճշգրտութիւն գաղափարին իւրոյ ոչ նուազեցաւ. և անժուժելի էր ճշմարտելոյ զայն ներգործական փորձառութեամբ եղև մեծագոյն քան զառաջինն. Ոչ ետ պնդել և թարթափել առանց պտղոյ պաշտպանութեան արքայական որութեանց մատեաւ յետոյ առ վայրագոյն անձինս, և յանդիման եղև յաջորդարար առաջի դքսից Մետինայի Սիտոննեայ, և Մետինայի Չելեայ. որք թէև էին հպատակք, էին հզօրացեալք իշխանութեամբ և փառթամութեամբ. և թերևս ունէին քան զոր պիտոյ էր մի առաքմանն, զոր առաջադրէր նմ̃. Բանք իւր ընդ նմ̃ եղեն անօգուտ որպէս ընդ այլոց. որովհետև այսպիսի ազնուական տեարք կամ ոչ յաղթահարեցան 'ի մի տրամաբանութեան Քոլոմպոսի, կամ երկեան զարթուցանել զնախանձաւորութիւն, կամ խուել զփառասիրութիւն Ֆերտինանտոսի, ընդունելով զառաջարկութիւն իմն, զոր նա մերժեալ էր:

Բարթողոմէոս եղբայր Եւրոպ յԱնգլիա. 'Ի մէջ վշտալի տհաճութեանց պատճառելոց յայսց յաջորդական խոչընդակաց, Քոլոմպոսի պարտ եղև կրել նաև զտրտմութիւն ոչ ևս լսելոյ զլուրս եղբօր իւրոյ, զոր առաքեալ էր յարքունիսն Անգլիոյ. Բարթողոմէոս 'ի ճանապարհորդելն առ այն թագաւորութիւն պատահեալ էր թշուառութեան անկա-

կանելոյ 'ի ձեռս յեղուզակաց ծովու, որք կողոպտելով զնա յամէ ըմբռնեալ էին կալանաւոր ընդ բաղում ամս. 'Ի փախճանի զերծոյց զանձն և եհաս 'ի Լոնտրա. բայց յայնպիսի վերջին կարօտութն, զի պարաւանդեալ եղև պարապել հարուստ մի ժամանակ 'ի գծագրել և 'ի վաճառել զաշխարհագրացս մն գումարելոյ զայնքան դրամ, որ բաւական էր 'ի գնել զվայելուչ իմն հանդերձ. որով համարձակեցի ներթալ յալքունիս. Յայնժամ եդ առաջի աչաց արքային զառաջադրութին վստահացեալս նմա յեղրօրէն իւրմէ. և թէպէտ և աւելի քան զշափն զբուշաւոր և ժլատ էր Հէնրիկոս, որք օտարացուցանէին զնա 'ի նորութէ և 'ի ծախուց, ունկնդիր եղև այս արքայ առաջարկութեցն Ռօլանդոսի առաւել գովութի քան զո և իցէ այլ Ամիալետ, որ մինչև ցայնժամ լռեալ էր զրանս նո։

Յայսմ վայրի Ռօլանդոս տեղեկացեալ զվիճակէ Բօլոմ-եղբօրն, և ոչ տեսանելով զերևոյթ քաջալերութե ԴՈՒԳԷ 'ի Սպանիա, եդ 'ի մտի այց առնել արքունեացն ԱՆՆԷ Անգլիոյ անձամբ՝ յուսով գտանելոյ զառաւել ԱՇԽԱ-նպաստաւոր ապաւինի. Այնինչ արարեալ ԲԱՆԻ ՍՈ էր զնախապատրաստութիս իւր, և խորհեալ վասն ՉԱԼԷՐՈՒ-բարւոք զետեղելոյ զորդիս իւր 'ի ժամանակի հե- ԼԷՆԱՆ ռաւորութե իւրոյ, Յօհաննէս փէրէց առաջնորդ 'Ի ՍՈՒ Անեաստանին Սաալիտայ մօտ 'ի փալօս, ուր դաս- ՆԷՍ. տիարակեալ էին, թախանձեաց զնա իսկապէս յապաղել 'ի սակաւ աւուրս զգնալ իւր. Փէրէց էր այր մեծ 'ի գրաւորականութն, և համարեալ լի իմիք առ Թագուհւոյն Եղիսաբեթի. որ և ծանօթ էր նմա անձամբ. Սա խանդակաթ էր սրտիւ առ Ռօլանդոս, տեսանելով 'ի բազում դիպողութիս զընդունակութի և զպատուականութի նր. Տարժեալ 'ի խնամոտութե և 'ի բարեկամութե, ձեռնամուխ եղև 'ի մտադիր քննութիւն գաղափարի նորա 'ի միասին ընդ բժշկի միում բնակացելոյ 'ի

մեր-

մերձակայ տեղիսն, որ էր մեծապէս կրթեալ 'ի քանակարանութիւնս. Զկնի քննութեանն երկգքեան մեծապէս հանգեան, հայելով 'ի սերտուն սկըզբանցն, յորոց վերայ Քոլոմպոս հաստատէր ըզկարծիս իւր, և 'ի հաւանականութիւն յաջողութեանն 'ի կատարման գաղափարին յղացելոյ 'ի նմանէ. Փերեց առ 'ի խափանել, զի մի հայրենին իւր մնասցէ զրկեալ 'ի փառաց և 'ի բարերարութեէն, որ զեղանելոց էր և 'ի պաշտպանս այսպիսի մեծի ձեռնարկութեան, համարձակեցաւ գրել զայնմանէ առ Իզաբելթ, աղաչելով զնա զննել նորոգ զայն նիւթ արժանաւոր ուշադրութե̃:

Շարժեալ 'ի յանդիման արարութեանց անձին, որ մեծարու էր առ նմա, Իզաբելթ հրաւիրեաց ըզՓերեց բերել վաղվաղակի 'ի գիւղն Սանթա Փէ, ուր փոխադրեալ էր յայնժամ արքունիքն պատ-
1491 ճառաւ պաշարման Կրանաթայի, առ 'ի կարող լինելոյ խօսակցել ընդ նմա 'ի վե̃ այսր ծանրակշիռ գաղափարի. Առաջին արդիւնք խօսակցութեան նր̃ եղև շնորհալի իմն վերակոչումն Քոլոմպոսի յարքունիսն հանդերձ պարգևաւ դրամն ինչ գումարոյ առ 'ի գնել զնա 'ի կարգի մն̃ ճանապարհորդութեանն. Եւ քանզի էր յայնժամ իբր ապահով իմն երևոյթ, թէ պատերազմն ը̃ Մաւրեաց վերջանալոց էր 'ի սուղ ժամանակի և երջանկաբար անձնատուր լինելով Կրանաթայի, որ գնելոց էր զազգն յաղթութեան դիմագրաւ լինելոյ 'ի նորանոր առաջարկութիւնս, այսպիսի ինչ իր միացեալ ընդ արքունի շնորհաց, որով Քոլոմպոս փոքր մի յառաջ պատուհեալ էր, քաջալերեաց զբարեկամն նր̃ յերևան գալ մեծագոյն վստահութե̃ քան զառաջինն առ 'ի պաշտպանել զխորհուրդ նր̃. Գըլխաւորն 'ի մէջ սոցա Ալոնծոս Քուինթանիլլէ համարակալ հասիցն արքունեաց 'ի Քասթիլիա, և Լուդովիկոս Սանթ Անճէլօ ընդունող եկեղեցական մտից 'ի Արակոնա, որոց անաճանք արժանի

նի էն ունել զպատուաւոր տեղի ’ի Սիպաստանուն վ̃ն նախանձուն, զոր ցուցին նոքա ’ի յառաջ տանելն զայսպիսի մեծ իրողութի, մեծին զՔօլոմպոս առ բազում վսեմական անձինս. և փոյթեռանդն եղեն յօգուտ նր̃:

Հանդերձ այսու ամի̃ գժուարին իմն էր ազդելն Սնոյ ’ի Ֆերտինանտոս զնպաստաւոր խորհուրդս. Յուրտ Ջէրտոնի և թերեւս հաւատ խոհեմութի նր̃ տակաւին հայր Խուանէի ’ի խորհուրդս Քօլոմպոսի իւր յեղջերուաքաղս և ’ի վտարանդիս. և առ ’ի անգործ առնել զջանս կուսակցաց նր̃՝ խորամանկութ̃ կարգեաց յայս կրկին քննութե զոմանս ’ի նոցանէ, որք վաղիւք վճռել էին զգաղափարն իւր անգործադրելի. Մեծաւ զարմացմամբ նր̃ յանդիման եղև Քօլոմպոս. և նովին հաւատի յուսով բարեյաջողութե, որպէս յանցելումն, պնդեաց ’ի վ̃ն մեծամեծ փոխարինացն. Նդ. առաջի հանդերձել զփոքրիկ նաւահանգիս մի հրամայելի ’ի նմանէ առ ’ի հետամուտ լինել երկրաձանօթութեն. և խնդրեաց կարգիլ մշտնջենաւոր և ժառանգական ծովակալ և փոխարքայ բովանդակ ծովուց և ցամաքաց, զորս գտանիցէ. և ունել զտասանորդն շահուց, որք յառաջ գայցեն յայնցանէ, աննահանջելի հաստատեալ յանուն նր̃ և զաւակաց իւրոց. Միանգամայն և յառաջամատոյց եղև կանխել զութերորդ մասն գումարոյ, որ կարևոր էր առ կատարումն գաղափարին, այնու դաշամբ, զի նա կարող լինիցի պահանջել զբաժին իմն հաւասար բարութե, որ յայնմանէ բղխիցի, յայտ առնելով չխնդրել ոչ վարձ և ոչ շահ ինչ, եթէ ջանք իւր լինիցին բոլորովին ընդունայնք. փոխանակ նկատելոյ զայս ընթացս իւր յայտնագոյն ցոյցս կատարեալ խելամտութեան նր̃ ’ի վ̃ն ճշմարտութե գաղափարին իւրոյ, փոխանակ հիանալոյ ընդ վեհանձնութի նր̃, որ զկնի այնքան յապաղմանց և այնչափ մերժմանց ոչ կասէր իւիք, որ էր միշտ վայրագոյն քան զսկզբնա-

կան

կան շարժիչս իւր, նոքա, ընդ որոց խօսէր Կօ-լոմպոս, սկսան հաշուել զձձութի՟ զծախս առաք-մանն և զարժողութի՟ մրցանակին, զոր նա խնդ-րէր. Առաջի արարին, թէ ծախքն ոչչափ և չա-փաւորեալ լինիցի, եր կարի մեծ նկատմամբ Սպա-նիոյ յառաջիկայ անստոյգ վիճակի արքունի մտից. պնդէին ևս, թէ պատիւքն և շահքն պահանջեալք 'ի Կօլոմպոսէ էին տարապայմանք, թէպէտ և ա-ւելի քան զայն զոր խոստանայր, արասցէ. և թէ՛ թէ և բովանդակ ընչաքաղց յոյզ իւր 'ի դերև ելանէին, այսպիսի մեծամեծ արտօնութիւնք հաւա-նեալք բաղդորդ զօրականի միում համարեալ լի-նէին ոչ միայն անխոհեմականք, այլ և ծիծաղա-կանք. Այսու առ երևոյթ կերպարանաւ զգուշուն և խոհեմութե՟ կարծիք նց՟ երևեցաւ այնպէս գո-վելի, և եղև այնպիսի եռանդիւ ընդգրկեալ 'ի Ֆերտինանտոսէ, մինչ զի Եղիսաբեթ խուսափեց՟ 'ի մատուցանելոյ զնպաստ ինչ Կօլոմպոսի. և հապճեպ ընդհատեաց զգրոյցն, զոր սկսեալ էր ընդ նմա:

Այսպիսի իմն խոչընդոտն մահացոյց զԿօլոմպոս աւելի քան զայլս ամ՟, որոց պատահեալ էր մին-չև ցայնժամ. Զրաւիրումն արարեալ նմա յԵղի-սաբեթէ առ արքունիսն իբրև զխայլակն անակն-կալ լուսոյ բացեալ էր զտեսիլ իմն բարեյաջողուն, որ քաջալերէր զնա յուսալ, թէ աշխատութիւնք իւր եզերելոց էին. այլ այժմ վերստին դառնայր մթութիւն և անստուգութիւն. և միտք նր՟ թէպէտ և հաստատուն հազիւ կարէր կանգուն կալ առ հարուածն տեղատարափոյ ոչ նախատես եղելոյ. Ելոյս նա՝ յարքունեացն 'ի խորին իմն անձկու-թն դիտաւորութեամբ յառաջ խաղալոյ զճանա-պարհ իւր յԱնգղիա իբր վերջին կազդուրումն իւր:

Յաւել. 'ի հրտ. Այնու ժամանակաւ Կրանաթայ անձնատուր եղև. և Ֆերտինանտոս և Եղիսաբեթ յաղթանակաւ ա-

ունի զժառանգութի քաղաքի միոյ, որոյ մատնուլին ծանիչ էր
ընաջինջ առար զօտար իշխանութիւն 'ի կեդրոնէ Ջանիշ-
տրուեց նոյ. և արար զնա տեարս բովանդակ զա- Քր.
ւառացն, որք տարածին 'ի վերջոյ Պիրենէից ցսահ- 1492.
մանս Փորթուկալիոյ. Նոյն քանզի հոգիք, յոր- Յուն-
ժամ են 'ի շարժման մն երջանիկ պատահման ի- ուարէ.
րիք, ամբառնան զմիտս և պատրաստեն առ ազ- 2.
նուական ձեռնարկուն, Քուինթանիլէ և Սանթ
Ընճելօ պաշտպանք գերարթունք և ճանաչօղք ար-
ժանեացն Գօլոմպոսի առին օգուտ յայսմ ճա-
հաւոր ընթացութէ, և արարին զվերջին ճիգն 'ի
նպաստ խնդրանց հասարակաց բարեկամին. Յան-
դիման եղեն Եղիսաբեթի. և յետ ցուցանելոյ ըզ-
հիացումն իմն, թէ զինչ նա, որ միշտ լեալ էր
ազատական պաշտպանիչ արիական գործոց, տա-
րակուսէր այնպէս ընդերկար 'ի պաշտպանել զխա-
ռաւորագոյն, որ լեալ իցէ յիմիք ժամանակի ա-
ռաջադրեալ Միապետաց. Ետուն նմա ճանաչել,
թէ Գօլոմպոս էր այր խորհմանց և առաքինազարդ,
յոյժ քաջայարմար մն իւրոյ ներհմտութէ 'ի նա-
ւարկութ, ոչ և մն երկրաչափական ճանաչողութ
իւրոյ 'ի կերպաւորել զնկարանս գաղափարս վե-
րահայեցմամբ կերտուածոյ երկրագնտոյս և կայա-
ւորութե ընդարձակ կողմանց իւրոց. և թէ յա-
ռաջամատոյց լինելով գնել 'ի վտանգի զկեանս
իւր և զինչս 'ի կատարման մեծի խորհրդոյն ի-
րոյ, տայր նա զառաւել հանդուցիչ վկայութիւն
ողջամտութէ իւրոյ և յուսոյ յաջողութե. և թէ
դումայն խնդրեալ 'ի նմանէ առ 'ի հանդերձել
զնաւահանգէսն էր յոյժ գումարեալ. և թէ շահքն
որք կարէին հանիլ անտի, երևէին անբաւք. թէ
նա ոչ պահանջէր զհատուցումն մն գտման իւրոյ
և աշխատութե, եթէ ոչ զայն, որ բնականաբար
գայր 'ի գտեալ աշխարհացն. և թէ զոր օրինակ
պատշաճ էր մեծանձնուն նր առնել զայս ազնուա-
կան հայթհայթանս առ'ի ընդարձակել զծիր մարդ-

կային ճանաչման, և հնարել զհաղորդակցութիւն իւր ընդ ժողովրդոց մինչև ցարդ. անծանօթ եղելոց, այսպէս ևս տայցէ զմեծ իւր հաճութիւն բարեպաշտութեան քում և նախանձայուզութեան զկնի հաստատելոյ վերստին զքրիստոնէական հաւատս յայն գաւառն Սպանիոյ, յորոց ընդ այնքան ամս արտասահմանեալ էր, գտանելն զնոր իւր աշխարհ. որում թագուհիդ կարասցէ հաղորդել զլոյս և զօրհնութիւնս
1492 աստուածային ճշմարտութեան. և եթէ ոչ փութով որոշեսցես, դիպաւորութիւն կորիցէ առանց վերադարձի. և թէ Քօլոմպոս բա՝ դիմեալ էր յօտար արքունիս. ուր արքայ ոք առաւել բաղձաւոր և սրտեայ հաւանէր առաջադրութեանց նորա. և թէ Սպանիա ողբայր յետոյ միշտ զճակատագրական երկչոտութիւն, որ արտաքսեալ էր զնա 'ի փառացն և'ի շահեկանութեանցն, յորս էր նա երբեմն յաստիճանի պերճարար փայլելոյ:

Այս զօրաւոր փաստք յեղյեղեալք յայնպիսի աւագանւոյն և այնպէս բարիոք պնդացեալ լծակցութեամբ, յառաջ ածին զփափագեալ արդիւնս. փարատեցան ամենայն տարակոյսք և երկիւղք 'ի սրտէ Եղիսաբեթին. հրաման ետ վաղվաղակի կոչել անդրէն զՔօլոմպոս. յայտ արար զորոշումն իւր կարգելոյ զնա 'ի գործն պայմանօքն, զոր նա ցանկայր. և քանքարտալով զգծուծ վիճակէ արքունի գանձարանին, մատոյց զանձն քաջաբար դնել 'ի գրաւ զզոհարս իւր առ 'ի գտանել զայնքան գումար, որ պիտոյ էր առ 'ի առնել զհանդերձանս վասն ճանապարհի. Սանթ Անճելօ յարգական երախտագիտութեամբ համբուրեաց զձեռս թագուհւոյն. և վասն խնայելոյ 'ի նա չփխել յայսպիսի իւր մահացուցիչ հայթհայթանս պատճառելոյ զգրամ, մատոյց զանձն կանխիկ տալոյ միանգամայն զգումարն, որ համարիւր հարկաւոր:

Քօլոմպոս բա՝ յառաջացեալ էր փարատել ինչ

դէպ

դէպ Անգլիոյ յորժամ պատգամաւորն Աշխարհ-
թի եկն էհաս նմա. Ընկալեալ զլուր այսր անա-
կնկալ փոփոխութեան 'ի նպաստ իւր, դարձաւ ուղ-
ղակի 'ի Սանթա Ֆէ. Թէպէտ մնացորդք ինչ թե-
րեւհաւատութեան տակաւին խառնէին ընդ ուրախութեան
իւրում. Բայց մտերիմ ասպնջականութիւն, զոր Աղա-
եզին Եղիսաբեթէ, միաւորեալ ընդ մերձաւոր
ստուգութեան գնելոյ զինքն յայն ճանապարհ, որ
լեալ էր այնպէս ընդերկար ժամանակ առարկայ
խորհրդոց իւրոց, ջնջեաց վաղվաղակի զյիշատակն
որչափ ինչ կրեալ էր նա 'ի Սպանիա ընդ ամիսս
ութն անհանգիստ թախանձանաց եւ յապաղման.
Յայնժամ դաշնադրութիւն յաջողեցաւ դիւրութեամբ
եւ արագութեամբ. եւ ստորագրեցաւ միաբանութիւն
իմն կամ գլխակարգութի ընդ Կոլոմբոսի 'ի տասն 1492
եւ եօթն ապրիլի 1492. եւ ահա նախապետական
յօդուածք նր. Նախ՝ Ֆերտինանտոս եւ Եղիսա-
բեթ իբր գերիշխանք Ովկիանոսի կացուցանէին
զԿոլոմբոս իւրեանց մեծ ծովակալ 'ի բովանդակ
ծովս՝ 'ի կղզիս եւ 'ի ցամաքս, որք գտեալ լինի-
ցին 'ի ճարտարմտութեան նր. եւ խոստանային, թէ
նաեւ ժառանգք իւր վայելեսցեն միշտ յայս
պաշտօն հանդերձ նոյն իշխանութեամբ եւ արտօ-
նութեամբ, որք ունէին մեծի ծովակալին Կաստիլիոյ
'ի ներքս կոպարացն իրաւարանութ իւրոյ. Երկրորդ՝
կարգէին զԿոլոմբոս իւրեանց փոխարքայ յամ
կղզիս եւ 'ի ցամաքս, զորս գտանիցէ. բայց եթէ
վն լաւագոյն մատակարարութ իրակութեանց կարեւոր
լինիցի առ յապայն 'ի միում իմիք յայնց կողմանց
ուրոյն կառավար, իշխանաւորէին զԿոլոմբոս ա-
նուանել զերիս անձինս. յորոց ինքեանք ընտրե-
լոց էին զմի վն այնր գործոյ. եւ արժանաւորութիւն
փոխարքային հանդերձ համօրէն առանձնաշնոր-
հութեամբ իւրովք պարտ էր հաւասարապէս լինել ժա-
ռանգական 'ի տոհմին Կոլոմբոսի. Երրորդ շնոր-
հէին Կոլոմբոսի եւ ժառանգաց իւրոց մշտջենա-

Դաշինք Ֆերտի- նանդոսի Եղիսաբեթայ ընդ Կոլոմ- բոսի.

բար զտասանորդն յըստակ շահուցն յառաջիկելոց
՚ի բերոց և ՚ի շահավաճառութէ տեղեացն, զորս
գտեալ իցէ նա. Չորրորդ՝ յայտ առնէին, զի ե-
թէ հակառակութի ինչ կամ վէճ յարիցէ նկատ-
մամբ տուրևառական իրիք իրակութն՝ ՚ի տեղիսն,
զորս գտեալ իցէ, այս բացորոշեսցի միայն ի՛շ-
խանութէ Քօլոմպոսի, կամ ՚ի դատաւորայն ՚ի
1492 նմանէ ընտրելոց. Հինգերորդ՝ թոյլ տային Քօ-
լոմպոսի վճարել կանխիկ զութերորդ մասն այնր,
որ պարտէր ծախիլ ՚ի նախապատրաստելն և յա-
ռաջ տանելն զտուրևառութիւն ընդ այնց աշխար-
հաց, զորս նա գտեալ իցէ. և փոխադարձաբար
ապահովացուցանէին զնա ՚ի վն ութերորդ մասին
օգտութեանցն:
Թէպէտ անուն Ֆերտինանտոսի երևի ընթացեալ
ընդ անուան Իզաբէլթի յայսմ գործողութեան.
սակայն թերևհաւատութիւն, զոր Ֆերտինանտոս
ունէր զՔօլոմպոսէ, տակաւին էր այնպէս տա-
րապայման, զի հրաժարեցաւ ՚ի մտանելոյ ՚ի դուզ-
նաքեայ ինչ մասն այնր ձեռնարկութե իւր Թա-
գաւոր Արակոնայի. Եւ քանզի բովանդակ ծախքն
ընկերութեն պարտ էր անկանիլ ՚ի վերայ Թագա-
ւորուհն Քասթիլեայ, Իզաբէլթ վերապահեաց
հպատակաց նորա յայնմ Թագաւորութե զսեփ-
հական իրաւունս ինչ ՚ի վն ամ բարութեանցն,
որք կարէին շահանիլ յայնմանէ:
՚Սոսկ Իզաբէլթ ստորագրեալ դաշնագրութեն, ուշադ-
պատրաս- րութեն իւրով և գործունէութե ՚ի փութացուցա-
տութիւնք նել զնախապատրաստութիս և զշարժմունսն, հո-
ինչ ճա- գացաւ փոխարինել ըստ իմիք մասին Քօլոմպոսի
նապար- վն ժամանակին, զոր նա կորուսեալ էր ՚ի հետա-
հորդու- մուտ լինելն առանց պտղոյ. Ընդ երկոտասանն
թեան. մայիսի այն ամ, որ կախեալ կայր զնմանէ, եդաւ
՚ի կարգի. և Քօլոմպոս սպասէր ընդունել յար-
քայէն և ՚ի Թագուհւոյն զվախճանական հրա-
հանգսն. Օ՛ինչ և իցէ իւր վերաբերեալ առ վի-
ճակն

ձային եւ առ առաջնորդութե՛ այնր իրականն զան-
խլաբար յանձնեալ եղեւ կարգադրութեն եւ խոհե-
մութեան նր․ Բայց առ 'ի խորշել յամ դոյն
տհաճութէ ընդդէմ արքային փորթուգալլոյ՝ պա-
տուիրեցին նմա խստիւ չմերձենալ 'ի կալուածս
փորթուգէլաց 'ի ծովեզերսն Գուինէոյ, կամ 'ի
միում իմիք այլոց կողմանց, առ որս նոքա ունէին
զիրաւունս գտանողի․ Կարգաւորեաց Եղիսաբեթ,
զի նաւքն, զորոց Կոլոմբոս առնլոց էր զհրամա-
նատարութին, ելցեն համդերձեալք 'ի նաւահան-
գստին փալոսայ փոքրիկ ծովեզերեայ քաղաքի 'ի
գաւառին Անտալուսիոյ․ Եւ քանզի վանահայրն
Յոհաննէս փերեզ, որում Կոլոմբոս արդէն լեալ
էր այնչափ պարտական, բնակէր յայն մերձակայ
տեղիսն, Կոլոմբոս օժանդակութե՛ այնր բարւոյ
վանականի, որպէս եւ բարեկամութին, զոր ունէր
ընդ այնց երկրականաց, ոչ միայն ժողովեաց 'ի
մէջ նց որ ինչ պակասէր նմա 'ի գումարոյն, զոր
պարաւանդեալ էր կանխիկ տալ, այլ եւ գրաւեաց
զոմանս 'ի նոցանէ առ 'ի հետեւիլ նմա ընդ ծով․
Նախապետականքն յայսց ընկերելոց եղեն երեք
եղբարքն անուանեալք փինծօն, բարեկեցիկք յոյժ
յոյժ՝ մեծապէս փորձք 'ի նաւական իրակութիս,
եւ որոշեալք 'ի վտանգել զկեանս իւրեանց եւ զինչս
վս այսր ձեռնարկութե :

Այլ յետ ամ փութոյ եւ ճգանց Եղիսաբեթի եւ 1492
Կոլոմբոսի՝ սպառազինութին ոչ համեմատեցաւ ար-
ժանաւորութե ազգին, որոյ վս էր հանդերձեալ
եւ ոչ ծանրակշռութե ծառայութեն, առ որ սահ-
մանեալն էր․ Բաղկանայր միայն յերից նաւուց․
Առաջինն՝ ոչ երեւելի մեծութե հրամայեալ էր 'ի Կո-
լոմբոսէ իւր 'ի ծովակալէ․ որում էր զանուն
Սանթա Մարիա վասն մեծարանաց առ Երանուհի
կոյսն․ զոր նա պատուէր մասնաւոր պաշտօնասի-
րութբ․ Երկրորդին կոչեցելոյ փինթա Նաւապետ
էր Մարթինոս փինծօն եւ նաւուղիղ եղբայր իւր

Ֆրանչիսկոս. Երրորդն անուանեալ Նինա առաջնորդեալ էր 'ի Վինչէնցիոսէ Եանէզայ Փինծոնէ. Երկոքին սոքա էին նաւք թեթեւք, հազիւ վերագոյնք 'ի քանակութեն եւ 'ի զօրութեան քան զստուարագոյն նաւակս. Այս նաւահանդէս, եթէ արժան իցէ կոչել այսպէս, հանդերձեալ եղեւ նպարախօք վ̄ երկուց ամսոց. եւ ունէր 'ի նաւսն արս իննսուն մեծագոյն մասամբ նաւավարս՝ ընդ ոմանց բաղդորդաց եւս, որք զհետ երթային բաղդի Կոլոմպոսի, եւ ընդ ոմանց սեպուհեաց յարքունեացն Եղիսաբեթի, զորս նոյն ինքն սահմանեալ էր ընկերել նմա. Թէպէտ ծախքն յայսմ դիպողուն էր մի 'ի պարագայից, որք զարհուրեցուցանէին նախապետարար զարքունիսն Սպանիոյ, եւ յամեցուցանէին զկատարումն գաղափարի Կոլոմպոսի, սակայն գումարն 'ի կիր առեալ առ 'ի ունել զբովանդակն 'ի պատրաստի՝ ոչ եանց քան զչորս հազար լիրէ ըսթէռլինս:

Արհեստն շինելոյ զնաւս 'ի վեշտասաներորդ հարիւրեկին լինելով ամենեւին ուրոմական, եւ մեծութի նաւուցն յարմարել միայն 'առ կարճառօտ եւ դիւրին ճանապարհորդութիւն սովորելոյ առնիլ առ ծովեզերօք, է ցոյց իմն քաջասրտութե եւ արտաքոյ կարգի ճարտարմտութե Կոլոմպոսի համար-
1492 ձակել այսպիսի իմն նաւահանդիսիւ առ հեռաւոր նաւարկութի, եւ առ 'ի հետազօտել զանծանօթ ծովս. ուր ոչ ունէր զաշխարհացոյց, որ առաջնորդէր նմա. եւ ոչ ծանօթութի ալէկոծուեց եւ յորձանացն, եւ ոչ փորձառութի վտանգացն, յորս դնելոց էր զանձն. Ընձկուին հասուցանելոյ 'ի վախճան զմեծ գաղափարն, որ յայնչափ ժամանակաց հետէ զբաղեցուցանէր զմիտս նր, ետ նմա արհամարհել եւ անգոսնել զայն ամ պարագայսն, որք ահարկելոց էին զանձն որք նորա ձեռներեցփութացոյց նա այնպիսի մեծ եռանդիւ զնախապատրաստութիւն, եւ նպաստաւորեցաւ այնպէս

գոր-

գործունէաբար յանձանց, որոյ Եղիսաբեթ յանձն առարեալ էր զվերադիտողութիւն այսր իրակութե, մինչ զի ամ ինչ վաղվաղակի եդաւ 'ի կարգի առ 'ի ուղեւորել. Բայց Կօլոմպոս, որ քանդակեալ ունէր 'ի սրտի զխմաստս ածպաշտութե, ոչ կամեցաւ վս այսպիսի իմն դժուարին շահատակութե, որոյ առարկայն էր տարածանել զճանաչումն քրիստոնէական հաւատոյ, մեկնիլ առանց աղերսելոյ հրապարակաւ զառաջնորդութիւն և զպաշտպանութիւն երկնից. Վասն այսորիկ 'ի միասին ընդ բովանդակ բազմութեանն եղելոյ 'ի ներքոյ հրամանի իւրոյ՝ գնաց հանդիսաւոր թափօրաւ առ մենաստանն Ռապիտայ. Յետ խոստովանելոյ զյանցանս իւրեանց, և ընդունելոյ զարձակումն՝ ընկալան զամենասուրբ խորհուրդն 'ի ձեռաց Առաջնորդին. որ ընդ նոցին լծակցեաց զաղօթս իւր վս երջանիկ ելից գործառնութեանն, զոր նա ինքն այնչափ նախանձայուզութե ընծայեցուցեալ էր:

'Ի հետեւեալ առաւօտուն յուրբաթու յերեքն օգոստոսի հազար չորեքհարիւր իննսուն և երկուի Կօլոմպոս առագաստ վերացոյց փոքր մի յառաջ քան զծագել արեւու յառաջիկայութե մեծի ամբոխին 'ի վնեն կացելոյ, որք առաքէին յերկինս զաղօթս իւրեանց վս յաջողութե ցանկացելոյ յաւէտ և ոչ բա՝ ակնկալեցելոյ այնր ճանապարհորդութե. Կօլոմպոս ուղղեցաւ անընդմիջաբար առ կղզիսն Կանարեայց. և էհաս անդր առանց ինչ պատահարի արժանի լինելոյ երեւելի յայսմ առաւել քան յինչ և իցէ այլում դիպաւորութե. Բայց յընթացս ինչ, որ տայր զայնքան ակնկալութի, ամ պարակայ էր շարժիչ մասնաւոր ուշադրութե. Բեկաւ ղեկն Փինթայի յետ աւուր միոյ թողլոյ զնաւահանգիստն. և այսպիսի իմն ձախորդութիւն զարհուրեցոյց զնաւաժանն՝ ոչինչ ընդհատ աւելորդապաշտ, քանթէ տգէտ իբր նախագուշակ թշուառական իմն վախճանի. Այլ ևս 'ի սուղ գնացս առ

Մեկնիլն իւր 'ի Սպանիոյ.

Գանարեայն նաւքն գտան այնպէս խարխալեալք և վատթարեալք, զի ոչ էին ընդունակք մծ նաւարկութե՛ն, որ արդէն ենթադրէին երկայն և բովանդակ վտանգաւոր. Այլ Գօլոմպոս նորոգեաց զնա՛ լաւագոյնս. և ամրացուցեալ նորանոր առձկօք, չուեաց 'ի Գոմէրայ 'ի միոյ յառաւել արևմտեան կղզեացն Գանարեայց 'ի վեցն Սեպտեմբերի:

Ասէն կարէ ասել յառաջարար, թէ սկսանի գաղափարն երկրագտութե՛ն. որովհետև Գօլոմպոս ունելով զընթացս իւր ընդ արևմուտս, 'ի բաց եթող զսովորական եղանակն նաւելոյ. և սլացաւ 'ի ծովս ոչ յաճախեալս և անծանօթս. Յառաջնում աւուր մի՛ խաղաղ լինելոյ ծովուն սակաւ ինչ գնաց յառաջ. բայց յերկրորդումն կորոյս զտեսութի Գանարեայցն. և բազումք 'ի նաւավարացն արդէն լքեալք և շփոթեալք 'ի նկատելն զհամարձակութի առաջնորդին՝ սկսան սարսափիլ և հեծել զարտասուս, իբր թէ ոչ ևս տեսանելոց էին զերկիր. Գօլոմպոս քաջալերէր զնս, ապահովացուցանելով զբարի ելիցն և զփարթամութեանցն, զորս ստանալոց էին յայն ընչաւէտ կողմանսն, առ որս առաջնորդեալ էին. Այսպիսի իմն հոգածութեան ճաշակ հոգւոց հետևողաց իւրոց ետ ճանաչել Գօլոմպոսի, թէ պարտ էր նախապատրաստել զանձն 'ի կռուիլ ոչ միայն ընդ անխորշելի դժուարութիւն, որք սպասելի էին 'ի բնութե ձեռնարկութե իւրոյ, այլ և ընդ այնս, որք ծնանելոց էին 'ի տգիտութե և յերկչոտութե բազմութեն եղելոյ 'ի ներքոյ հրամանաց իւրոց. Սակաւ իրագգաց եղև, թէ արհեստն կառավարելոյ զմիտս մարդկան ոչ նուազ կարևոր լինէր մծ վախճանին, զոր ունէր առաջի, քան զգիտութի նաւական և քան զհամարձակ քաջասրտութի. Այս առ բարեբաղդութե անձին իւրոյ և թագաւորութեն, յորմէ կարգեալ էր յայն գործ զուգաւորէր ընդ հրայլին խառնուածոյն և

լնդ

ընդ սուղծիչ մտաց առաջարկողի զայլ իմն ան-
սակ առաքինութիւն, որք Հազիւ երբեք լինին միա-
ւորեալք ընդ այսց երկուց իրաց. Ածէր նա զկա-
տարեալ իմն ճանաչումն ազգի մարդկան, զխոր-
մանեցուցիչ իմն յաջողակութի, զՀաստատուն յա-
րատեւութի 'ի կատարել զինչ և իցէ գաղափար,
զամբողջ իմն տրուի կրից իւրոց և զբանքար ուղ-
ղաւորելոյ զկիրս այլոց. Այս ամ արակութիք,
որք սաՀմանէին զնա առ Հրամանատարութի, ընկե-
րակցեալ էին 'ի միրնագոյն իմն ընդունակութէ
յարՀեստի իւրում, որ ծնանի զանմեՀերութի 'ի
դժուարին և 'ի վտանգաւոր ժամանակս:

Նաւավարաց սպանիացւոց որք գնեալս անվարժք [illegible]
էին և սովորեալք միայն քերել առ ափամբ ընդ [illegible]
միջերկրեայ ծովն՝ ծովային գիտութիւն Իդոմենէո- [illegible]
սի՝ առացեալ 'ի փորձառութե երեսուն ամաց և [illegible]
զեալ 'ի ծանօթութե զիւրից փորձութեանց, [illegible]
երեւէր անչափ իմն. Իսկոյն իբրև արձակեալ լի- [illegible]
նէին առագաստք՝ կանոնաւորէր նա զամ ինչ ա-
ւագութ իւրով, Հսկէր 'ի վն կատարման ակնար-
կուեց իւրոց. և շնորՀելով նիքեան սակաւ ժամս
վն քնոյ իւրոյ, զսանիէր յորում և իցէ դիպո-
ղութե 'ի վն տախտակամածին. և յոյժ ընթացս
ընդ ծովս չեւեա տեսեալս յամէքէ անընդՀատ ու-
նէր 'ի ձեռին զխորաչափն և զգործիսն զիտողու-
թեան. Նա օրինակի երկրագիտ փորձութեանց
կայր ուշադիր առ անդատութի և առ մակընթա-
ցութիւն ծովու, առ շարժումն յորձանաց, առ
թռիչս թռչնոց, առ երեւումն ձկանց, ծովային
խոտոց, և խորաքանչիւր իրի որ լինայր 'ի վերայ
ալեաց. և ամ նորութի մտանէր յօրինաօրինայն,
զոր նա գրէր մանրամասն անվթար. Այսպիսի իմն
երկայն ճանապարՀ ոչ կարէր չաՀագուցանել ըզ-
նաւավարս սովորեալս առ փոքրիկ ընթացս. և վն
այսորիկ Հնարէր Իդոմենէոս ունել 'ի նոցանէ
թմբրուն զկրակսն յառաջ խաղացուցին, զոր առ-

նէին

նէին անդէն. Աչ այսր պատճառի, թէպէտ և կատարեալ էին զութն և տասն փարսախս յերկրորդում աւուր զկնի թողլոյն զԿօմէրա, ծանեան, թէ էին վերջատանք միայն. և յետոյ 'ի կիր էարկ զնոյն արուեստակալ հաշուելոյ միշտ նուազ, ուր և ժամանէր. 'Ի չորեքտասանն Սեպտեմբերի նաւահանգիստներ աւելի քան զհարիւր փարսախ ընդ արևմուտս կղզեացն Քանարեայց, և 'ի մեծագոյն տարակուսութեն յերկրէ. յորում Սպանիացիք ոչ երբէք լեալ էին յառաջ:

1492 Ճանապարհ հարկ եղեն 'ի սքանչելի իմն և 'ի նոր
Սլա- պատահմանէ իմեքէ. Նշմարեցին, զի սլաքն մագ-
քաթեն նիսի կողմնացուցի իւրեանց ոչ ուղղիւր անվթար
Երևելւոյ 'ի բևեռային աստղն. այլ զի ցանազանիւր աստ-
Խոտո- ճան մի ընդ արևմուտս կոյս. և ըստ չափուն,
րին խո- որով յառաջ խաղային, աճէր այլայլութիւնն.
րոյ. Այս երևոյթ յայսմ ժամանակի յոյժ հասարակ,

թէպէտ և մնայ տակաւին 'ի մէջ գաղտնեաց բնութեն, զորոյ զխորագէտ օրէնսն մարդն ոչ է լեալ բաւական 'ի հետազօտել, ևեթ արհաւրօք զԸնկերս Քոլոմբոսի. Գտանէին յայնժամ յանկարծ իմն և յանծանօթ Ովկիանոսի արտաքոյ սովորուն նաւելոյ. բնութիւն իսկ երևէր այլայլել և միակ առաջնորդն, յոր վստահացեալն էին, սպառնայր պակասել նց. Քոլոմբոս ոչ փոքր արագութի, քանզի աչալրջութի գիտաց գտանել զպատճառ իմն այսպիսի փոփոխուն. որ թէպէտ և ոչ հանդուցանէր զնոյն ինքն, յաջողեցաւ լինել հաւանական առ խուժանն. փարատեաց զերկիւղս նց և դադարեցոյց զքրթմնջիւնն. Հարունակեաց միշտ ձգել յարևմուտս կոյս, ունելով զենքն անձկապէս 'ի նմին լայնուն ընդ կղզեացն Քանարեայց. Գործելով այսու օրինակաւ եկն էհաս 'ի ներքս դաւառին հողմոյ կոչեցելոյ հողմ շահավաճառուն. որ շնչէ անայլայլելի յարևելից յարևմուտս 'ի մէջ արևադարձից, և սակաւ աստիճանս անդր քան

զնո

զնս. Մնեալ յայսմ կայուն հողմոյ՝ յառաջադէմ եղև յափշտակութիւն նմա այնչափ համակերպ, զի հազիւ ուրեմն պիտոյ եղև նմա փոխել զառագաստ նոյն. Շուրջ զերկուհարիւր փարսախօք ընդ արևմուտս. Բանաւորեայցն եղիտ զծովն ծածկեալ կնիւնովք, որ նմանէր մեծատարած մարգագետնոյ իմիք. և 'ի տեղիս տեղիս էին այնպէս խիտք, զի յամրացուցանէին զշարժումն նաւուց. Այսպիսի իմն տարօրինակ տեսութի պատճառեաց զնոր կասկածանս և զվրդովմունս. Պատկերակերպէին նաւավարքն, ուր ուրեմն ժամանեալք 'ի վերջին սահմանս նաւարկելի Ովկիանոսին. և թէ այս կնիւնք ծփեալք խափանելոց էին զանդրադարձն յառաջագիմութի նց. երկնչէին, թէ գուցէ թաղուցեալ ունիցին ժայռս վտանգաւորս. կամ զերկայն լինչ տարածութի ցամաքի խորասուզելոյ և ընկղմեցելոյ անդէն առանց գիտելոյ զգեղջն. Կոլոմպոս աշխատ եղև հաւանեցուցանել զնս, թէ նշանքն, որք զարհուրեցուցեալ էին զնս, պարտէին մանաւանդ քաջալերել զնս. որովհետև նկատեալք էին իբր նշանք մօտաւոր երկրի. 'Ի նմին ժամանակի յարեաւ հողմն ինչ փոքր մի ուժգին. որ մղեաց զնս առաւել յառաջ. Զանազան թռչունք տեսան ճախրել 'ի վերայ նաւին. և ուղղել զթռիչս ընդ արևմուտս. Կոլոմպոսն այնինչ վհատեալ վերստին ընկալաւ յիմք աստիճանի զհոգի, և սկսաւ կազդուրել նորոգ յուսով: 1492

(13) Այն զի փորթուկեցք յառնելն զերկրագիտս իւրեանց ոչ բերէին կարի իմն 'ի բացեայ 'ի ծովեզրէն Ափրիկոյ, հեռանեցուցանէին, թէ թռչունքն, զորոց նշմարէին զթռիչս մեծաւ ուշադրութի, ոչ վտանգէին զինքեանս առ երևելի իմն հեռաւորութի 'ի ցամաքէ. 'Ի տղայութեն նաւարկութեան ոչ գիտացեալ լինէր տակաւին, թէ թռչունք բազում անգամ յառաջ երթային թռչելով առ անյաւ իմն տարակացութիւն յինչ և էցէ երկ-

երկրէ. Յառագաստէն դէպ հիւսիսայի՛ն կշռեաց հնդկայնոց տեսանէին ստէպ թռչունք 'ի բացակայութե երկներիւր փարախաց յամ ցամաքէ. 'Ի բնական վերջասանութե Քարօղինայի պարոն Պուֆֆոնի ասի, թէ Քաթեսպի եսես 'ի ծովու զբումի, յորժամ նաւն էր վեցհարիւր փարսախ հեռի 'ի ցամաքէ. յորմէ երևի, թէ այս նշան ցամաքի, յոր թրչի, թէ Քօլոմպոս ապաստանեալ էր վստահութե իմն, էր ամենևին անստոյգ:||

Յառա- ջնումն նշ. Յառաջնումն Քոլոմբոսի ըստ հաշուի ծովականին էին եօթնհարիւր ութսուն փարսախք յարևմուտս կոյս Քանարեայց. բայց առ աչխն, զի մի ալք իւր վն երկայն ճանապարհորդութեն զարհուրեսցին, ապահովացոյց զնս, թէ ոչ էին արարեալ աւելի քան զհինգհարիւր ութսուն և չորս. և վն բարերախտութե Քօլոմպոսի ոչ նաւուղին իւր, և ոչ այլ այլոց նաւուց գիտէին ուղղել զայս մոլորութի, և յայտնել զխաբէութեին. Այն արդէն լևալք ընդ ծով զերիս եօթնեակս անցեալ բաղմոք յոյժ ընդ նշանն, զոր նախնագոյն նաւորդք մոռձեալ էին, և հաստատեալ կարէին 'ի փորձել. Ամենայն դաշտակութիք նց զերկրագտութե հանեալք 'ի թռչելոյ հաւուց և յայլոց պարագայից լինէին ընդունայնք. Երևոյթ երկրի, որով զխբաւտութի նց և հնարագիտութի հրամանատարին երբեմն երբեմն համոզեալ էր զնս, և զբաղեցուցեալ, երևէր լոկ պատրանք. և անկեալք բարեյաջողութե հետևաբար երթալով երթայր և հեռանայր միշտ առաւել. Այսպիսի խորհրդածութիւնք յածէին ըստէպ 'ի միտս մարդկան, ոյք պատաղեալ էին միայն 'ի տրամաբանել և յորդճալ 'ի վն վախճանին և 'ի վն ամ հաստարանաց
1492 անաքման իւրեանց. Այսորիկ զառաջինն առնէին տպաւորութիս 'ի յերկչոտս և 'ի տգէտս. և ապա տարածանելով աստիճան առ աստիճան առ լաւագոյն հրահանգեալս, կամ առ համարձակագոյնս

առա-

տարափոխիկ ախտն ճարակեցաւ նաեւ 'ի նաւ. 'Ի զանխուլ շշնջմանց անցին վաղվաղակի առ յայտնի չարագուշակութիւնս և առ հրապարական ողբս. Բամբասէին զԹագուհին իւրեանց վն անխոհեմ դիւրահաւատութեանն 'ի ցուցանելն զայնքան համարումն առ սնոտի խոստմունս և առ յանդուգն վարկածս մուրացիկ օտարականի միոյ, մինչև վտանգել զկեանս այնչափ հպատակաց իւրոց 'ի յառաջ տանելն զառաջարկութի իմն եղջերուաքաղ. Հաստատէին, լիապէս կատարեալ զպարտս իւրեանց, վտանգելով զանձինս այնքան յառաջ 'ի ճանապարհի միում բնաւին նորոյ և առանց յուսոյ. և թէ ոչ լինելոց էին պարտաւեալ, եթէ հրաժարէին 'ի հետևելոյ բաղդորդի միում, որ ընդածէր զնն առ խոպան կորուստ. Պնդէին, թէ կարևոր է դառնալ անդրէն 'ի Սպանիա, մինչդեռ աղքատին նաւք իւրեանց էին տակաւին 'ի վիճակի տոկալոյ ծովու. Թէպէտ ցուցանէին ևս զերկիւղս իւրեանց, թէ գուցէ որոշումն այն լինիցի ընդունայն պատճառաւ հողմոյն, որ մինչև ցայնժամ լեալ էր այնպէս նպաստաւոր, զի կարէր անկարելի առնել զվերադառնալն 'ի հակադրեալ կողմն. Հուսկ յետոյ կնքէին զբանն, թէ պարտ էր Քոլոմպոսի ստիպել քննութեան յընդունել զայն փոխարէն, յորմէ կախէր նց հասարակաց ապահովութիւն. Ոմանք 'ի յանդգնագունիցն առաջի դնէին, եթէ առաւել առ ձեռն և լաւագոյն եղանակ ազատանալոյ 'ի միում վայրկենի 'ի դժնէութէ նր, ընկենուլն զնա 'ի ծով, հաւաստացեալք, թէ 'ի վերադարձի իւրեանց 'ի Սպանիա՝ մահն տարաբախտ առաջարկողի միոյ զարթուցանելոց էր զոյժ սակաւ տհաճութի և զնուաղ հոգածութի դիտելոյ զպարակայս նորա:

Քոլոմպոս կարի իսկ քաջ իրազեկ էր պայմանի իւրոյ. Նշմարեալ էր նա մեծաւ դառնութեամբ իւրով զճակատագրական արդասիս ոգխութեանն և

Իր-

Մշտա- երկիւղին. որ ծնանելոց էր 'ի մէջ բովանդակ խըմ-
ջանէ բին զտժգոհութի իւր. և տեսանէր, թէ այս այն-
Կօղոմ ինչ մերձ էր գալ 'ի դուրս 'ի հանրական իւր
բոսն 'ի վտարանջութիւն. Այլ կալաւ զհաստատուն իւր
հանդերձ ներկայութի հոգւոյ. եցոյց չիմանալ զմերձենալումն
պէտս առ- նց. և հանգերձ տատամսութբն, որ տագնապէր
ջանելոյ զնա, երևեցաւ միշտ զուարթ դիմօք իբր գոհ ըզ-
իւրոյ. յառաջադիմութէն, զոր արարեալ էր, և ապահով
զերջանիկ ելիցն. 'Ի գործ ածէր ընդ ժամանակս
1492 ժամանակս զնմ արհեստս խնամատարութեան առ
'ի ամոքել զնս. Գոուն գործէր երբեմն բաւածել
զխառասիրութի և զագահութի նց ստորագրելով
զհանգամանս ընդածիչս առ համբաւ և առ գանձս.
առ որոց ստացումն հակէին նոքա. Յայլ ժամ
առնոյր զայլ եղանակ աւագութն. և սպառնայր
նց վրէժխնդրութն Թագաւորին իւրեանց, եթէ
մեհերոտ իմն գնացիւք խոչ լինիցին աշխատական
ջանից յառաջ շարժելոյ զխառս այ, և բարձրա-
ցուցանելոյ զանուն Սպանիացւոց 'ի վե̃ ամենայն
այլոց ազգաց. Նա և 'ի վերայ խռովարար նա-
ւավարաց բանք առն միոյ, զոր սովորեալ էին
յարգել, ունէին զծանրութի և զհամոզականու.
Այսպիսի ոչ միայն նահանջեցին զնս յայնց բուռն
եղեռնութեց, զոր խորհէին, այլ և որոշեցին զնս
ընկերել ծովակալին իւրեանց այլ ևս ժամանակ ինչ.
Մերձ- Ըստ չափուն, որով յառաջադէմ լինէին, նշանք
տար- մերձաւոր ցամաքի երևէին ստուգագոյնք. և զար-
նան Եր- թուցանէին զյափակցեալ իմն ուրախութի. Թռ-
կրագնդ. չունք սկսանէին երևիլ երամովին դէպ յարև-
մտեան հարաւ. Կօղոմբոս ըստ նմանութն նա-
ւորդաց փորթուկեցւոց, որք 'ի բազումս յերկրա-
ծանօթութեց իւրեանց առաջնորդեալ էին 'ի շարժ-
մանէ թռչնոց, փոխեաց զընթացս իւր յարևմտա
կուսէ յայն կողմն, ուր նոքա ուղղեալ լինէին.
Բայց նկատելով ընդ բազում աւուրս զայսպիսի
իմն ոճ առանց ինչ պտղոյ լաւագունի քան զա-

ռա-

ռաչինն, որովհետև ոչ յանդիման եղև ամիս մի այլ առարկոյ, բայց եթէ երկինք և ջուր, թուլացան յոյսք արագագոյնս՝ քան թէ ծնեալ էին. երկիւղք վերստին կենդանացան մեծագոյն ուժգնութեամբ. անհամբերութիւն, կատաղութիւն և յուսահատութիւն երևեցաւ 'ի դէմս բոլորեցուն. Ի՛մ գառումն ստորակարգութեան կորուսեալ էր. պաշտօնատարք մինչև ցայն կէտն զուգընթացք 'ի կարծիս Ռոլամդոսի ջատագովելով զիշխանութիւն նր, կալան փաղփաղուկ զկողմն արանցն. խռնեցան աղմկաւ 'ի վերայ տախտակամածին, կարգեցան ընդ հրամանատարին, խառնելով զսպառնալիս ընդ նախատանաց. և պահանջէին նոյնհետայն դարձուցանել զնաւսն և դառնալ յԵւրոպիա. Ջասու եղև Ռոլամդոս կարի խիստ քաջ, թէ ոչինչ օգտէր զիմելն առ հիմն 'ի սովորական արհեստից իւրոց. որք մն լինելոյ 'ի գործ արկեալ այնպէս յաճախ՝ կորուսեալ էին զազդողութիւն իւրեանց. և թէ անկարելի էր վերստին արծարծանել զկայծ ինչ նախանձայուզութեան առ 'ի գլուխ տանել զդիտեալն 'ի նն, որոց 'ի սրտի ամ ազնուական ազդումն բա՝ հեղձեալ էր առ աչհն. Նտես նոյնպէս լինել անօգուտ 'ի գործ արկանելն զողոք կամ զխիստ եղանակս առ 'ի զցածուցանել զայսպիսի իմն ընդհանրական և բուռն աղմուկ. Ո՛ահ եղև նմա վշ այսց ամ պատճառաց գովել զկիրսն զայնոսիկ, որոց ոչ ևս կարող էր հրամայել, և բանալ զճանապարհ կարի իմն դաշավէժ հեղեղատի միում առ 'ի գտնել այնմ զթումբ ինչ. Խոստացաւ հանդիսաւորաբար արանց իւրոց, թէ զեչանելոց էր խնդրոյ նց, միայն թէ կամիցին ընկերել նմա, և հնազանդիլ այլևս աւուրս երիս և եթ. և եթէ յոյսմ ժամանակի ոչ երևիցի ցամաք, 'ի բաց թողցէ ընաւին զայն խորհուրդ, դարձուցանելով ըզնաւսն դէպ Սպանիոյ:

Արշաւի և զիմագրաւ էին նաւավարքն, և անհամ-

բեր

Յոյս յաջողու- թեան ձայնու- թեան.

բերք դարձուցանելոյ զերեսս առ բնիկ աշխարհ իւրեանց, այսպիսի իմն առաջադրութի ոչ երեւեցաւ նոցա անբանաւոր. և ոչ Քօլոմպոս վտանգեաց զանձն յայժ յամփոփիլն յայնպիսի սուղ պայման. Նախապաշարութիւնք տեսանելոյ զերկիր էին այնպէս յոգնաթիւք և ապահովք, զի համարեցաւ զայնս անպակասելիս. Խորաչափն զուարս ինչ ընդհարաւ 'ի յատակն, և նիւթն, զոր քարշեաց 'ի վեր, ցուցանէր, թէ երկիրն ոչ էր կարի հեռի. Նշանք թռչնոց աճեցին. և էին բազադրեալք ոչ միայն 'ի ծովայնոց, այլ և 'ի ցամաքայնոց. ոմ զի մարթ էր ենթադրել, թէ սոքա թռչէին սակաւ տարակացութի 'ի նաւահանգստէ. Նաւն Փինթայի նշմարեաց զեղէգն մի լեղեալ 'ի վր ալեաց, որ երեւէր թարմ հատեալ, և կոտոր մի գերանի արհեստաւորաբար թեքեալ. Նաւավարք 'ի նաւն Նինա որսացան զոստ ծառոյ իրիք հանդերձ կարմիր և ամենաթարմ հատապտղովք. ամպք շուրջ զարեգակամբ 'ի մուտս առնուին զնոր իմն երեւոյթ. օդն էր առաւել քաղցր և առաւել ջերմիկ. և 'ի գիշերի հողմն շնչէր անհաւասար և պէսպէս. Առ այսոց նշանաց Քօլոմպոս էր այնպէս ապահով գտանելոյ մերձ ցամաքին, մինչ զի յերեկոյին մետասաներորդ աւուրն Հոկտեմբերի յետ հրապարակական աղօթիցն վասն բարւոյ վախճանի՝ հրամայեաց ամփոփել զառագաստն և զնաւսն ունել 'ի բացեայ, ուշադրելով հսկողութի, զի մի երթիցեն յեղը 'ի գիշերային ժամանակի. Յայսմ միջոցի վարանման և ակնկալութեն ուրուք 'ի մարդկանէ կարիոյց զաչս. կացին ամենեքեան 'ի վերայ տախտակամածին, պշուցեալք մտադրութբ յայն կողմն. ուր յուսային տեսանել զերկիր առարկայ հանապազորդ ուխտից իւրեանց:

Տեսանեն լոյս- նշոյլ.

Երկու ժամու յառաջ քան զկէս գիշերն Քօլոմպոս կալով 'ի նշմարման 'ի վր նաւարտանին եւտես զլոյս մի 'ի հեռաստանէ, և ակնարկեաց զայն

Է Պետ-

«Պետրոսի Կութթիերիցի հանդերձապետի Թագուհ-
ւոյն. Կութթիերէց նշանակեաց զայն. և կոչելով
զՍալչետօ մատենագիր Նաւահանգիսին, երեքեան
տեսին զայն շարժիլ, որպէս եթէ տարեալ լինէր
տեղւոջէ 'ի տեղի. Սակայն մի զկնի մէջ գիշերոյն
բարբառ ուրախութե՝ Էրկիր Էրկիր լսելի եղև ե-
լանել 'ի Փինթայէ, որ էր գլխաւոր երկուց այ-
լոց նաւուց. Բայց գոլով այնպէս յաճախ խա-
բեալք 'ի ստապատիր երևութից, յուշիկ հաւա-
տային. և անձկային լուսանալոյ տուընջեան. հա-
մակ 'ի տագնապի անըստուգութեան և անհամբե-
րութե. Յառաջին արշալոյս առաւօտուն տարա- Յուր-
կոյսք և երկիւղք նոցա փարատեցան. ընծայեցաւ բոլո-
առաջի կղզի մի իբր երկու փարսախ ընդ հիւսի- 12 հոկ-
սակողմն. որոյ հարթայատակ և դալարի դաշտք տեմբե-
քարուք դարմանեալք անտառօք, և ոռոգեալք 'ի րի:
բազում վտակաց յանդիման առնէին զտեսիլ զուար-
ճալի իմն երկրի. Խուժանն Փինթայի հնչեց ան-
ընդմիջարար՝ Զքեզ Ած օրհներգութի 'ի գոհա-
բանութի այ. և զկնի յարեցին և այլոց նաւուց
ամբոխն արտասուօք ուրախութեան և զեղմամբ
հրճուանաց. Այսմ պաշտօնի գոհութե յերկինս՝
զհետ եկն ներգործութի արդարութե առ հրա-
մանատարն իւրեանց. Ընկան առ ոտս Քոլոմպո-
սի զղջացմամբք կշտամբանաց անձանց իւրեանց և
խառնմամբ պատկառանաց. Երդմնեցուցին զնա
ներել տգիտութե, դժուարահաւատութե և լրբութե
իւրեանց, որք պատճառեալ էին 'ի նմա զայնպի-
սի ծանր վրդովմունս, և խոստանալ յառաջ տա-
նելոյ զքաջայարմար գաղափար իւր. և յետան-
գեան զարմացմամբ անցանելով ծագէ 'ի ծագ, ե-
դին 'ի մտի, թէ մարդն այն փոքր մի յառաջ ան-
գոսնեալ 'ի նոցանէ և սպառնացեալ, էր անձն որ
շնչեալ յայ գերմարդկային հանճարով և զօրութ
ու 'ի տանել 'ի վախճան զխորհուրդ իւր այնչափ
վերնագոյն քան զմիտս և զմտածմունս համօրէն
դարուց անցելոց : Ը H Իսկ

Առա- Իսկ և իսկ 'ի ծագել արևու. ամ նաւակք պատ-
ջին հան- րաստեցան. վարեցան թիակօք դէպ կղզւոյն Հան-
դիպումն դերձ դրօշակօք իւրեանց պարզելովք, ընթանօրա-
ընդ ազկան երաժշտութեամբ և այլ պատերազմական Հան-
Գայ- դիսիւք. և մերձենալով 'ի ծովեզրն, տեսին զայն
նոյն: ծածկեալ 'ի բազմութէ ազգին. զոր նորութիւն
տեսարանին 'ի մի վայր գումարեալ էր. և որոց
արարողութիւք և շարժմունք ցուցանէին զապշումն
և զհիացումն մն օտար տարկայիցն, որք յանդի-
մանն լինէին 'ի տեսութեն. Քոլոմպոս էր առաջին
Եւրոպացին, որ դնէր զոտն 'ի նոր աշխարհին.
էջ 'ի ցամաք ձոխ հանդերձիւ իւիք և սուսեր մերկ
'ի ձեռին. Ընդ իւր գային զկնի նր. և ծունր ե-
դեալ համբուրէին ամենեքեան զայն գետինն, զոր
նա այնպէս ընդ երկար փափագեալ էր տեսանել.
Ապա կանգնեցին զխաչելութն մի, և անկեալ 'ի
վերայ երեսաց առաջի նր գոհանային զայ մն ա-
ծելոյ զնն առ այնպիսի երջանիկ եզր. Յետ այ-
նորիկ առին զհանդիսաւոր ստացումն երկրին փառ
թագաւորութն Քաստիլեայ ամ կերպականութքն,
զոր փորթուկեզք սովոր էին պահել յայս ազգ գոր-
ծողութիս 'ի նոր երկրագտութիս իւրեանց:
Փոխա- Սպանիացիք մինչ կային այնպէս պատաղեալք, ու-
դարձ հե- նէին շուրջ զբազումն յազգայնոցն, որք հայէին
տազու-ն պշուցեալք և շրտուցեալք յայն գործողութիւն,
նց. որոց ոչ կարէին հասու լինել. և զորոց ոչ նա-
խատեսանէին զհետևութիս. Հանդերձն Սպանիաց-
ւոց, սպիտակութի մորթոյ նց, մօրուսքն և զէնքն
երևէին օտար իրք և ապշեցուցիչք. Նաւքն,
յորոց մն անցեալ էին ընդ Ովկիանոս, զորս նոքա
դատէին շարժիլ 'ի մն ջուրց թևօք, և որք առաքէին
արտաքս զահարկու լմն շառաչիւն նման շառաչման
որոտմանն հանդերձ փայլմամբք և ծխով, հարին
զնն այնչափ սարսափմամբ, մինչ զի սկսան յար-
գել զնոր հիւրս իւրեանց իբր էակս վերնագոյն
իւիք կարգի, կնքելով թէ էին որդիք արևու, իջեալք
յայց աւանդ երկրի:

Եւ-

Եւրոպացիք եւս ոչինչ ընդհատ սքանչացեալ էին
՚ի տեսարանն, որ ընծայիւր նց առաջի. Խոտք,
թուփք եւ ծառք տարբեր էին յամի յայնցանէ, որք
բողբոջին յԵւրոպիա. Հողն երեւէր յուռթի. բայց
տայր սակաւ նշանս մշակութե. Նաւահանգն նաեւ
՚ի Սպանիացւոց դղացեալ լինէր ջերմ, թէպէտ եւ
ծայրագոյնս բեւեկրալի. Երեւէին բնակիչք ՚ի պարզ
անմեղութե բնութե բնաւին ձերկք. Վարսք նոցա
սեաւք, երկայնք եւ գռուզք ծածանէին ՚ի վր թի-
կանց նց. կամ էին հանգրիձեալք հիւսիւք շուրջ
զգլխով. Ոչ ունէին մօրուս. եւ ամ մասն մարմ-
նոյ նոցա էր կատարելապէս ողորկ. գոյն մարմնոյ
նց նման պղնձոյ հակեալ ՚ի թուխ. կազմուածքն
մանաւանդ սեպհականք, քանթէ անհաճոյք. տե-
սիլն նազելի. բայց անհամարձակ. Թէպէտ եւ ոչ
բարձր՝ էին բարեհասակք. Երեսք նց եւ այլ մա-
սունք մարմնոյն նկարեալք փայլուն գունովք.
Ցուցանէին սակաւ մի անբարոյ ՚ի սկզբան անդ
առ ահին. բայց վաղվաղակի եղեն ընտանիք ընդ
Սպանիացւոց. եւ շարժմամբք ուրախութե ընկա-
լան ՚ի նոցանէ բոժոժս բազէից, գնտակս սառ-
նորակի եւ զայլ խաղէական իրս. որոց փոխարէն
ետուն նոքա զայն պարէնս, զոր ունէին. եւ ՚ի
թելոյ բամբակի զմիակ արժեցուցանելի բերսն,
զոր կարէին մատուցանել. Կոլոմպոս ընդ երեկս
դարձաւ ՚ի նաւսն իւր ընկերեալ ՚ի բազմաց յայնց
կղզեականաց ՚ի նաւակս իւրեանց կոչեցեալս ՚ի նո-
ցանէ քանօէ. եւ թէպէտ կերպացեալք յուեգոյնս՝
կամ ՚ի բնոյ ինչ, կամ ՚ի լոկ ծառոյ խմբէ, վա-
րէին զայնս զօրութ թիոց սքանչելի յաջողակութ.
Այսպէս յառաջին հանդիպման բնակչաց հին եւ
նոր աշխարհի ամ ինչ էանց բարեկամաբար եւ
փոխադարձ հաճութ նց. Առաջինքն լուսաւորեալք
եւ փառասէրք՝ կերպաւորէին զմեծամեծ գաղափարս
հայելով ՚ի շահն, զոր հանելոց էին յայնց կող-
մանց, որք սկսանէին գնիլ առաջի աչաց նց. Երկ-

բորգքն պարզամիտք և բնաւ անտրամախոհք ոչ նախատեսանէին զխժդժութիւն և զաւերումն, որք այնինչ մերձենային առ ՚ի անկանել ՚ի վերայ նոցա ։

Կօլոմ-բոս առ-նու [illegible]

Կօլոմբոս, որ էառ իսկ և իսկ զանուն և զառաջնութեան ծովակալի և փոխարքայի, կոչեաց զայս կղզի գտեալ ՚ի նմանէ Սան Սալվատոր. որ թարգմանի սբ փրկիչ. Սա լուսաւոր ծանուցեալ է ընդ անուամբ Կուանահանի, զոր եդին նմա ազգայինքն. և է մի յայնմ ակմբոյ կղզեաց կոչեցելոց Լուքայիա, կամ Պահամա. Սա զետեղեալ է աւելի քան զերեքհազար մղոն ընդ արեւմուտս Եւրոպայ. ուստի չու արար նաւախումբն. և չորս աստիճանս միայն ընդ հարաւակողմն իւր. և այսպէս սակաւ նեղեալ էր Կօլոմբոս յարեւմտեան ընթացիցն, զոր ընտրեալ էր իբր առաւել սեպհական,

Յառաջ- խաղաղ [illegible]

Կօլոմբոս ծախեաց զհետագայ օրն յայց առնել եզերաց կղզւոյն. և ՚ի հանրական աղքատութենէ բնակչացն ծանեաւ, թէ ոչ է այս փարթամ երկիրն, որոյ երթայր ՚ի խնդիր. Բայց հաւատարիմ առ տեսականութիւն իւր վերաբերեալ առ ծանօթութիւն այնց կողմանցն Ասիոյ, որք տարածեալ լինէին ընդ արեւելս, կնքեաց, թէ Սան Սալվատոր էր մի յայնց, զորս երկրագիրք ստորագրէին կայացեալ ՚ի համատարած Ովկիանոսին յառընթեր Հնդկաստանի. Նկատեաց, թէ մեծագոյն մասն ժողովրդեանն, զոր տեսեալ էր, բերէր կտորակս գործեալ ոսկւոյ, և այն մի լոկ զարդու ընդ ռնգաց. եհարց խնամով, թէ ուր գտանէին նոքա զայն մեծագին հրահալելին. Ակնարկէին զհարաւ. և իմացուցին նմա նշանացի, թէ ոսկին առատ էր ՚ի տեղիսն յայնոսիկ. Կազմորոշեաց ուղղել անդր զընթացս իւր, լի վստահութ ժամանելոյ առ փարթամ հողն, որ լեալ էր առարկայ շարժման իւրոյ, և որ լինելոց էր հատուցումն բազմադաւն աշխատանաց իւրոց և վտանգաց. Նաւ զհետ իւր

գնօթն

զեօթն արս յազգայնոցն Սան Սալվատորայ, որք զի ուսանելով զլեզուն Սպանիացւոց՝ կարող լինիցին առնել զպաշտօն առաջնորդաց և թարգմանաց. և այն անմեղ ժողովուրդն համարեցաւ իբր նշան գերազանցութեան զլինելն ընտրեալ յընկերակցութիւն նորա:

Ետես զզանազան կղզիս. և մերձեցաւ յերկին յառաւել ընդարձակացն. որոց ետ անուանս Սանթա Մարիա տելա Կոնչէցիոնէ, Ֆերտինանտոս և Եղիսաբեթ. Եւ քանզի գետին նոցա, բերքն և բնակիչքն նմանէին Սան Սալվատորայ, ոչ գեղերեցաւ յինքն յայնցանէ. Որոնէր 'ի ամուրիք զոսկի, և ամուրէք պատասխանէին նմա, թէ այն բերեալ լինէր 'ի հարաւոյ. Զանեաց յայն կողմն. և 'ի սուղ ժամանակի առաջի ընծայեցաւ նմա երկիր մի ընդարձակ յոյժ, ոչ բնաւին տափարակ որպէս զայլսն, զորս տեսեալ էր, այլ այնպէս պէսպիսացեալ բլուրակօք, լերամբք, գետովք, անտառօք, և դաշտօք, զի 'ի տարակուսի եղև, թէ արդեօք կղզի իմն իցէ, կամ թէ մասն ինչ շարունակի. Ազգայինքն Սան Սալվատորայ, զորս ածեր ընդ իւր 'ի նաւի, կոչէին զայն Քուպա. Քօլոմպոս անուանեաց զայն Եուաննա. Եմուտ նաւահանգիստ իւրով 'ի բերան լայնատարած իրիք գետոյ. և բովանդակ բնակիչքն փախեան 'ի լերինս, ըստ չափուն, որով մերձենայր նա յափն. Բայց գոլով որոշեալ առնել բեթեկ յատակաց նաւուց իւրոց 'ի տեղւոջն յայնմիկ, առաքեաց զոմանս 'ի Սպանիացւոց 'ի միասին ընդ միում յարանցն Սան Սալվատորայ 'ի քննել զներքսագոյն մասն այնր նահանգի. Յառաջացեալք սոքա վաթսուն մղոն 'ի ծովեզերէն, պատմեցին 'ի դարձին իւրեանց, թէ հողն էր առաւել ճոխ և առաւել մշակեալ քան զայլ որպիսի և իցէ, զոր մինչև ցայնժամ տեսեալ էին, և թէ բաց 'ի բազմաց սփիւռ հիւղից գտեալ էին անդ գեւղ մի, յորում էին ոգիք ա-

Գտանէ զԿուբա.

ւելի քան զհազար. և թէ բնակիչքն թէպէտ և մերկք, ցուցանէին լինել առաւել իմաստականք քան զբնակիչսն Սան Սալվատորայ. և թէ վարեալ էին ընդ նոսա նովին մեծարանօք, համբուրելով զոտս նոցա և պատուելով զնոսա իբր աստուածային էակս դաշնաւորս ընդ երկնից. և թէ տուեալ էին նոցա ուտել զարմատ ինչ, որոյ ճաշակն նմանէր ճաշակի խորովեալ շագանակաց, և նմանապէս զմասնաւոր տեսակ ինչ ցորենոյ կոչեցեալ մաիծէ, որ խածղեալ և մանրեալ էր կերակուր իմն ամենափափուկ. և թէ գտէին ոչ լինել անդ չորքոտանի շնչաւորս, բայց 'ի տեսակէ իմեքէ շանց, որք ոչ հաչէին. և յաղկաղկ անասնոյ ինչ նման ընտանի նապաստակի, բայց յոյժ առաւել փոքր. և թէ նկատեալ էին 'ի վերայ ազգին զզարդս ինչ ոսկւոյ, այլ ոչ արծաթ ինչ:

Առա- ջածէ ձեռք նշ- ձեռպ- մաճը այստեղէն ձեռաց. Այս պատգամաւորք կարողացան հաւանեցուցանել զոմանս յազգայնոցն յընկերել Կոլոմբոսի. որք և զեկուցին նմա, թէ ոսկին, որով զարդարէին զանձինս, գտանիւր 'ի Կուպանաքան. Իմանային այսու բառիւ զմիջին կամ զներքին մասն Կուպայի. բայց Կոլոմբոս ոչ գիտելով զբարբառ նոցա, և ոչ լինելով ընտել առ արտասանութիւն նոցա, և յածելով միշտ խորհրդովն 'ի վերայ տեսականութեանց իւրոց շուրջ զծանօթութիւն արևելեան Հնդկաստանի, շարժեցաւ յերևութէ ձայնին ենթադրել, թէ նոքա խօսէին զմեծ խանէն. և պատկերակերպեաց, թէ ընչաւէտ թագաւորութիւն Կաթայեայ ստորագրեալն 'ի Մարկոսէ Փօլոյ, ոչ իցէ յոյժ հեռի. Այս պարտաւորեաց զնա ծախել ըզժամանակ ինչ 'ի ճանաչել զերկիրն. Նշմարեաց գրեթէ զամ ծովափունս նորա 'ի նաւահանգստէ արքային 'ի վերայ հիւսիսային ծովեզեր Կուպայի մինչև ցարևելեան ծագ կղզւոյն:

(14) Ի միում թղթի առաքեցելոյ 'ի ծովակալէն առ Ֆերտինանտոս և առ Եղիսաբեթ ստորագրէ նա զմի 'ի նաւահանգստիցն 'ի Կուպա ամ մնաց

յա-

յափշտակիչ զարմացմամբ ․ „ Պատի, ասէ, զգետ մի, ուր կարէր զիւրաւ մտանել ցռկանաւ մի․ Գեղեցկութի՛ն նր շարժեաց զիս չափել․ և չափեցի 'ի հնգից մինչև ցութն չափս, իւրաքանչիւրն վեց ոտնաչափ, չըոյ․ Պնացեալ յառաջ 'ի երևելի իմն տարածութի այնր գետոյ, ա՛մ ինչ հրաւիրէր զիս հարգունանալ անդէն․ Գեղեցկութիւն գետոյն, վճտուե ջրոյն, 'ը որ կարէի տեսանել զյատակն աւազուտ, բազմուե զանազան ազգ արմատնեց, բարձրագոյնք եղեղեցկագոյնք քան զոր նրբէք նշմարեր էի, և անսահման իմն համար այլ մեծամեծ և ծաղկաւէտ ծառոց․ Թռչունքն և դալարութիւն դաշտացն են այնպէս սքանչելաբար հաճոյականք, մինչ զի այս աշխարհ դեր 'ի վերոյ է քան զայլ ա՛մ, որչափ տի՛ն 'ի լուսաւորութե և 'ի պայծառութե յաղթէ գիշերոյ․ այնպէս՝ զի առացի բազում անգամ, թէ 'ի զուր էր ինձ նկրտիլն տալ զայնցանէ բարձրութեց ձերոց զկատարեալ իմն ծանօթութի․ որովհետև ոչ լեզու իմ և ոչ գրիչ իմ կարող էին ձեռնհաս լինել բացայայտել զճըշմարտութին այնց․ Ես արդարև այնպէս հիացեալ եմ 'ի նկատելն զայս չքնաղութի, մինչ զի չգիտեմ, ուստի սկսանից գծագրել զայն․ „Այսպէս'է ձայնս Կօլոմպոսի : ||

Այլ թեպէտ և այշեալ 'ի պէսպիսութէ տեսարանացն, որք առաջի ընծայէին նմա յա՛մ կողմանէ, և հիացեալ յուռճալիր բերրիութէ գետնոյն, յորոց երկրբեան վճ նորութե իւրեանց առնէին զկայտառ տպաւորութի յերևակայութե նր, ոչ եգիտ զոսկի այնչափ, որ բաւէր յագեցուցանել զագահութի հետևողաց իւրոց․ և զանկայլութի արքունեացն, առ որ պարտ էր դառնալ․ Յապուշ կրթեալ ազգայինքն ընդ այս տատամսութի յորոնման ոսկւոյն, որչափ Եւրոպացիք 'ի վերայ ազնուութե և պարզմտութե նց, ակնարկի արարին յարենեւս կոյս․ ուր էր կցել ինչ, զոր նոքա

կոչեն Հայիթի. և ուր այս մետաղ գտանիւր մեծագոյն առատութբ քան թէ 'ի մէջ նց. Քօլոմպոս հրամայեաց նաւախմբի իւրում շարժիլ յայն կողմն. բայց Մարթինոս Ալոնծոս Փինծօն անհամբեր լինելոյ առաջին 'ի տիրել գանձուցն, զորս երկիրն այն ենթադրիւր ունել, եթող զընկերս իւր առանց հոգալոյ զհրամանաց ծովակալին, որք էին չիջուցանել զառագաստ, մինչև ոչ լծակցեցին վերստին ընդ նմա:

Գտա-
նէ զկղ-
զին
Սպա-
նիոլա.

Քօլոմպոս յամեցուցեալ 'ի հակառակ հողմոց ոչ եհաս 'ի Հայիթի մինչև 'ի վեցն Դեկտեմբերի. Կոչեաց զգաւառն, ուր զկայ էառ նախնաբար, Սան Նիքօլա, և զկղզին՝ Սպանիոլա 'ի պատիւ թագաւորութեն, որոյ վն ծառայեցուցեալ էր. և այս միայն է երկիրն յայնց, զորս ցայնժամ գտեալ էր, որ պահեալ իցէ զանունն եդեալ 'ի նմանէ. Նա քանզի ոչ կարաց պատահել Փինթայի. և ոչ ունել զտեսութի ինչ բնակչացն, որք 'ի մեծի սարսափման փախեան յանտառս, 'ի բաց եթող նոյնժամայն զՍան Նիքօլա. և առագաստելով առ հիւսիսային եզր կղզւոյն, եմուտ յայլ նա-
1492 ւահանգիստ. զոր անուանեաց Քօնչէպցիօնէ. Աստէն եղև առաւել բաղդաւոր. Արք իւր պատահեցան կնոջ միում, որ խուճապէր. և յետ վարելոյ ընդ նմա մեծաւ քաղաքավարութբ, արձակեցին զնա. տալով նմա զպարգև իմն յայնց չնչին իրաց, զոր գիտէին լինել յոյժ 'ի յարգի յայնմ երկրատանի. Սիրագրութեն, զոր կրէին այն արար առ համաշխարհիկս իւր զմարդասիրութե և զքանչելի որպիսութե օտարացն, ապշութի նց ընդ չքնաղ իրսն, զորս եցոյց նոցա լի հրճուանօք, և անձկութեն, զոր կալան ամենեքեան բաժանորդ լինելոյ նոյն շնորհաց, մերժեցին զերկիւղն. և ներածին զբազումս 'ի նոցանէ դառնալ 'ի նաւահանգիստն. Անսովոր առարկայքն, զորս նկատէին նոքա, և ճաշակքն, զորս Քօլոմպոս

բաշ-

բաշխէր նց, յագեցուցին զհետաքրքրութի եւ զփափագս նց. Սոքա նմանէին քաջ քաջ ժողովրդոց Կուանահանեայ եւ Կուպայի. էին մերկք իբրեւ զնս, տգէտք եւ պարզամիտք. եւ երեւէին հաստատապէս լինել ՚ի խաւարի ամ արհեստից, որք կարեւորագոյնք են առ քաղաքական ընկերութին. Բայց ցուցանէին յայլմէ կողմանէ ազնուութք, դիւրահաւատք, եւ երկչոտք ցայն աստիճան, զի դիւրին լինէր ստանալ զգերամբարձութն իւն ՚ի վերայ նց. եւ մանաւորապէս՝ վն զի չափազանց զարմացումն նց ընդածէր զնս ՚ի նոյն մոլորութի, յորում անկեալ էին աչք այլոց կղզեաց. զի է, ՚ի հաւատալ, թէ Սպանիացիք էին գեր քան զմահկանացուս, եւ իջեալք ուղղակի յերկնից. Յաւանդէին զոսկի առատութբ առաւել քան զդրացիս իւրեանց. եւ փոխանակեցին զայն փաղփաղուկ ՚ի բոժոժից, ուլունց, եւ գնձկաց. եւ յայսմ անհաւասար տուրեւառութն երկոքին կողմանքն հաճեալ էին յոյժ, նկատելով զփոխանակումն իբր զշահաւորութի իւն. Կօլոմպոս ստանօր այց արարեալ եղեւ ՚ի Նահապետէ միոջէ, կամ ՚ի Կաղիքեայ երկրէն. Սա երեւեցաւ ամ շքով, որ ՚ի գործ ածեալ էր ՚ի մէջ այնր պարզամիտ ժողովրդեան, բերել ՚ի տեսակ ինչ գահաւորակի ՚ի վր թիկանց չորից արանց. որում զհետ երթային բազումք ՚ի հպատակաց իւրոց, որք ծառայէին նմա մեծաւ ակնածութբ. Բարք իւր էր ծանր եւ վեհափառ, յոյժ դժնեմ առ ազգն իւր, բայց ընդ Կօլոմպոսի եւ ընդ Սպանիացւոց ծայրագոյն քաղցրաբարոյ. Նա ծովակալին զարուեստակեալ կոտորակս ինչ ոսկւոյ, եւ զգօտի մի նորասքանչ ձեւակերտեալ ընդունելով ՚ի փոխարէն այնց զընծայս սակաւագինս, բայց նմա գերհաճոյականս:

Կօլոմպոս ձգտեալ միշտ ՚ի հետազօտել զհանքս, որք տային զոսկի, շարունակեաց հարցանել ցազգայինսն, առ որս մերձենայր, ՚ի վր կայսուորութե

նջ. Զուգընթաց եղեն ամենեքեան յակնարկել նմա զգուշաւ մի լեռնային կոչեցեալ 'ի նոցանէ Զիպաօ 'ի տարակացութեն իմիք 'ի ծովէ, և առաւել ընդ արևելս կոյս. Հարեալ յայսմ բանէ, որ երևէր նմա նոյն ընդ Զիփանկօ անուան, որով Մարկոս Փօլօ և այլ ճպհորդք յարևելս զանազանէին զկղզին Ճ'իափփօնայ, ոչ ևս եկաց տարակուսել զմտաւորութե տեղեացն, զոր նա գտել էր 'ի հնաւոր մասունս Ասիոյ. և լի վստահութե դնելոյ անդէն վաղվաղակի զոտն, ուղղեաց զընթացս ընդ արևելս. Եհաս 'ի դիւրին նաւահանգիստ մի. և եգիտ, զի նշանագն էր 'ի ներքոյ կառավարութե միոյ Քազիքեայ անուանեցելոյ Կուաքանահարի. որ, ըստ որում նա ինքն իմացաւ յետոյ, էր մի 'ի հինգ գերիշխանացն, որք բաժանէին զբովանդակ զայն կղզի. Նա արձակեաց փութանակի հրեշտակս առ Քօլոմպոս. որք յանուն նր ընծայեցին նմա գլխանկ մի օտարակերպ, որոյ ականքն, ունքն և բերանն 'ի կռեալ ոսկւոյ. և հրաւիրեցին զնա 'ի տեղի բնակութե նր մերձ 'ի նաւահանգիստն կոչեցեալ այժմ Քափօ տի Սան Ֆրանչէսքօ, փարասխս ինչ յարևելս կոյս. Քօլոմպոս առաքեաց զոմանս 'ի պաշտօնատարաց իւրոց այց առնել այսմ նահապետի. որ քանզի համարիւր մեծագոյն արժանաւորութե, ցուցանէր պահանջել նաև զմեծագոյն ուշադրութի. Դարձան այնպիսի հաճոյական պատմութե դաւառին և ժողովրդեանն, մինչ զի ետուն փափագել Քօլոմպոսի յանդիման լինել Կուաքանահա-
1492 րեայ. որպէս իւր հրաւիրեալ էր առնել:

Անկանի 'ի նաւուց իւրոց խորտակեալ: Շարժեցաւ մն այսր վախճանի 'ի Սան Թօմասու 'ի քսան և չորսն Դեկտեմբերի յաջողակ հողմով, և 'ի կատարեալ խաղաղութե ծովու. Այլ քանզի 'ի մէջ բազմապատիկ զբաղմանց իւրոց ոչ էր խիթեալ զաչս յերկուս աւուրս, առանձնացաւ 'ի խոր գիշերի առնուլ սակաւ ինչ հանգիստ, աւան-

ւանդելով զղեկն նաւուղղին ճիշդ իմն հրամանաւ
ոչ թողլոյ զայն վայրկեան մի. Այլ ոչ երկնչե-
լով 'ի վտանգէ, 'ի բաց եթող անխորհրդաբար
զղեկավարութին 'ի ձեռս անհմուտ նաւավարի ու-
րումն. և նաւն տարեալ 'ի բաց 'ի հոսանացն՝ գնայ
ընդհարկանիլ ընդ ժայռ մի. Բռնութի զարկուա-
ծոյն զարթոյց զԿոլոմբոս, որ ընթացաւ 'ի մէջ
տախտակամածին. Նա հասարակ էին յանկարգութ
և 'ի յուսահատութ. Նա միայն պահեաց զներ-
կայութի հոգւոյ. Հրամայեաց ոմանց 'ի նաւավա-
րացն երթալ նաւակաւ, և բառնալ զմի խարիսխն
յետուստ. այլ փոխանակ հնազանդելոյ՝ հեռացան
դէպ 'ի Նինեա, որ էր 'ի տարակացութ իբր կէս
փարսախ. Յայնժամ հրաման ետ հատանել ըզ-
կայմն առ 'ի թեթևացուցանել. բայց բովանդակ
ջանք իւր էին կարի անազանք. Նաւն
բացաւ մօտ 'ի յատակն. և այնպէս արագ լցաւ
ջրով, մինչ զի կորուստ իւր երևէր անխորշելի.
Օդոյն 'ի խաղաղութե, և 'ի դէպ ժամու ընթե-
րակայութի նաւակացն եկելոց 'ի Նինեայէ, օգնե-
ցին նաւավարացն ապրեցուցանել զկեանս. Ապա-
վաղակի իբրև լուան բնակք եղելոյն զայսպիսի իմն
ձախորդութի, խուռն ընթացան 'ի նաւահանգիստն
հանդերձ նահապետաւ իւրեանց Կուաքանահա-
րեաւ 'ի գլուխ. փոխանակ առնլոյ շահ 'ի ճշնա-
ռութէն, յորում տեսանէին զՍպանիացիս, և ձեռ-
նարկելոյ յիրս ինչ 'ի վնաս նց, արգահատեցին
զողորմելի վիճակ նց անկեղծ արտասուօք ցաւակ-
ցութեան, Ոչ շատացեալք այսու սակաւօգուտ
ցուցմամբ համակրութե իւրեանց, արկին 'ի ծով
զմեծ բազմութի քանօէից. և ընդ առաջնորդութ
նոցին իսկ Սպանիացւոց՝ օգնեցին նախապահել 1492
զայն ամ, զոր կարող եղեն քարշել 'ի դուրս 'ի
նաւաբեկութէն. և միջնորդութ միաւորեալ աշ-
խատութեան այնքան ձեռաց՝ որ զինչ և իցէ իր
պատուական փոխաբերեալ եղև յափն. Հողին
թէ

թէ եղեալ իբրև 'ի ցամաք՝ կուսաքանահարի յանձնեաւ զհոգ նց. Հրամանաւ նր եդեալ եղեն բովանդակ յաւանդ 'ի տեղւոջ միում. և զինեալ պահապանք կարգեցան անդէն. որք ունէին զգաղմութին 'ի բացեայ առ 'ի արգելուլ ոչ միայն ըզյանկացուցանելն, այլև զնոյնն կարի հետաքրքիր աչօք յոյն, որ պատկանէր առ հիւրս իւրեանց, Ապա ընդ այգն այս նահապետ գնաց այց առնել Պօլոմպոսի, որ էր այն ինչ 'ի վր նաւին Նինայ. և ջանացաւ մխիթարել զնա 'ի վն կորըստեան իւրոյ, մատուցանելով զայն ամ, զոր ունէր նա առ 'ի լնուլ զնաւն:

(15) Պատմութին, զոր գրէ Պօլոմպոս զմարդասիրութենէ և զկանոնաւոր գնացից ազգայնոցն յայսմ զկողոպուն Հիանայի է. „Արքայն (ասէ 'ի միում նամակի առ Ֆերտինանտոս և առ Եղիսաբեթ) գոլով տեղեկացեալ զթշուառութէ մերմէ, եցոյց զզգալի իմն ցաւ վն կորստեանց մերոց. և արձակեաց փութանակի զբոլոր բազմութի տեղւոյն 'ի վր բազում քանօէից. Մեք դատարկացուցաք անընդմիջաբար զնաւն 'ի բովանդակ իրացն, որք էին 'ի վր տախտակամածին. և ինքն իսկ արքայն ետ մեզ զմեծ սատարութի յայսմ ընդ իւրոց եղբարց և ազգականաց, առնլով զամ կարելի հոգ, զի ամ ինչ անթերի կատարեսցի եթէ 'ի նաւին և եթէ 'ի ծովեզերին. Երբեմն երբեմն առաքէր զոմանս յազգականաց իւրոց, որք յարտասուս լուծանէին, աղաչելով զիս 'ի կողմանէ նր կալ հանգարտ սրտիւ. և ապահովացուցանելով՝ տալոյ ինձ զայն բովանդակ, որ էր յիշխանութե իւրում. Կարող եմ ստուգել զԲարձրութիս ձեր, թէ յոչ խմիք մասին Սպանիոյ կալեալ լինէր այնքան հոգ ապրեցուցանելոյ զարդիւնս մեր, որպէս արարեալ եղև յայսմ նահապետէ, որ ժողովեաց բովանդակ 'ի միում տեղւոջ մերձ յապարանս իւր. մինչև տունքն, զոր նա նկրտէր նախապատրաստել վն պահ-

պաշտպանութեան ընդէմ մերոց, լինէինք դատարկացեալք. Նա ինքն եդ անդէն վաղվաղակի զպարէնկալպանս զինեալ արանց, որք հսկեցին զգլխերն ողջոյն. և այլք մնացեալքն յափն ծովուն ցաւակցէին 'ի սրտէ, որպէս եթէ ունէին զնման ինչ յայնմ դժբախտութեան. Այս ժողովուրդ է այնպէս գորովական, կենցաղավարելի և խաղաղարար, զի երդնում 'ի բարձրութիւն ձեր, թէ չիք բարեգոյն զարմ մարդկան կամ երկիր ինչ լաւագոյն 'ի բոլոր աշխարհի. Սիրեն զընկերն իբրև զանձինս իւրեանց. զրոյցնց է առաւել քաղցր և չափաւոր քան զհանուրց, զուարթ և միշտ հանդերձ ժպտմամբ ինն. Արդարև գնան մերք, այլ բարձրութիւնք ձեր կարեն ապահով լինել, թէ նոքա ունին զգովելի վարս. Արքայն ծառայեալ է մեծաւ շքով. և բերումն նո է այնպէս վայելուչ, զի ախորժելի է տեսանել զայն. Ես զարմանալի նկատեցի զմեծ մեծողութիւնն զոր ունի ազգս այս, և զփափագն դիտելոյ զամ ինչ. որ ընդածէ յորդնել զպատճառս և զարարս այնց. „ Հաւանական է, թէ Սպանիացիք պարտ էին զայս օձանաւոր ընդունելու 'ի առ կարծիսն. զոր Հնդիկք ունէին զնոցանէ իբր զէակաց վերնագոյն ինն կարգի. ‖

Պտղոմէոս էր 'ի վիճակի ունելոյ պէտս մեծի քաջալերութեան. Դեռևս ոչ էր հոգացեալ զծանօթութիւն ինչ զփինթայէ. և ոչ երկբայէր, թէ դաւաճանն ընկերութեան իւրոյ բա՛ առաղատեալ իցէ դէպ Նիրոպիոյ առ 'ի յափշտակել զկատասնն լինելոյ առաջին 'ի տանել զնորալուրս արտաքոյ կարգի երկրագտութեանց, զոր արարեալ էին. և կամէին այսպիսի եղանակաւ յաղանցս թագուհւոյն, դողանալով 'ի նմանէ զփառս և զմիցանակն. որք արդար իրաւամբք պարտ էին նմա. Անայր անդ մի միայն նաւ, և այն փոքրագոյնն և վատթարագոյնն նաւախմբին, առ 'ի անցանել ընդ այնպիսի տհաղին ինն Ովկիանոս, և վերածել զայն-

Ընթաց- Ելեան Պտղոմ- եայ.

քան

քան մարդիկ Եւրոպիոյ. Իւրաքանչիւրն յայսց պարագայից բաւական էր լինել զսիրտ Քօլօմպոսի մեծագոյն տատամսութեամբ. Փափագ իւր ժամանելոյ փինծօնի և ջնջելոյ զվնասակար տպաւորութիւնն, զոր սուտ ներկայացուցմունք նոցա կարէին առնել ՚ի Սպանիա, առնէր կարևոր վերադառնալ անդր առանց յապաղման. Դժուարութիւնն առնելոյ զայնքան անձինս ՚ի նաւ ՚ի վերայ Նինեայի, հաստատեաց զնա ՚ի կարծիսն, զոր բերրութիւն երկրին, և այնքան խոնարհած ժողովրդեանն արդէն ներածեալ էր զնա ՚ի կերպաւորել. Որոշեաց թողուլ զմասն ինչ յարանց իւրոց ՚ի կղզւոջն. ուր զի ՚ի բնակելն անդ, կարող լիցին ուսանել զլեզու ազգայնոցն, խմանալ զբարս նոցա, քննել զբնութիւն երկրին, որոնել զհանքս, նախապատրաստել ըն-

Որոշէ թողուլ զմասն ինչ խումբ— նէն իւ— րոյ ՚ի կղզւոջն.

1492 հեշտ իմն յաջողութեան վասն հաստատածոյն, որով խորհէր դառնալ անդր. և այսպէս զիւրացուցանել և ապահով առնել զստացումն այնց շահեկանութեանց, որք խոստացեալ լինէին յերկրաձանօթութեանցն. Նրաւ զոյգ զայսմանէ ընդ արս իւր. և գովեցին ամենեքեան զխորհուրդ նորա. Տաղտկութիւն երկար իմն ճանապարհորդութեան, բնական պարագայութիւն նաւավարացն, յոյսն կուտելոյ զանբաւ հարստութիւնս յերկրի միում, որ ընծայէր զայսպիսի ամբքիչ առ հաւատչեայս ընչեղութեան իւրոյ՝ շարժեցին զբազումս մնացանել զանձինս կամաւորաբար առ ՚ի լինել ՚ի թիւս այնց, որք մնալոց էին։

Ընդունի զհաւանութիւն ... նոյն.

Մինչ պակասէր առ կատարումն այսր խորհրդոյ, եթէ ոչ ընդունել զհաւանութիւն Կուաքանահարեայ. որոյ միամտութիւն անսովոր առ կասկածանս, ներկայացոյց ծովակալին զնպաստաւոր իմն դիպողութիւն խնդրելոյ զայն. Քօլօմպոս կարելի լաւագոյն եղանակաւ կրճատ խօսիւք և նշանացի ցուցանելով զղղձականութիւն ինչ գիտելոյ զպատճառն, որ շարժեալ էր զնզականսն փախչել այն-

քան

քան խուճապաւ յերևել նաւուց իւրոց, առաց ցնա նաւապետն, թէ այն երկրաստան բազումս հարստահարեալ էր 'ի հինից ժողովրդոց ինչ, զոր նա կոչեաց Բարբիպեանս. որք բնակէին 'ի զանազան կղզիս ընդ հարաւային արևելս. Ստորագրեց զսոսա իբր զարմ ինչ ամէհի և պատերազմասէր մարդկան. որք բերկրէին մարդկային արեամբ. և ուտէին զմիս կալանաւորացն անկելոց արկածիւ 'ի ձեռս նց. և քանզի յառաջին երևման Սպանիացւոց ենթադրեալ էին, թէ իցեն Բարբիպեանք, որոց ազգայինքն թէպէտև թըւով վերնագոյնք, ոչ համարձակէին 'ի դիմի հարկանել պատերազմաւ, ապաւինեալ էին յիւրեանց սովորական եղանակն ապահովացուցանելոյ զփրկութիւն իւրեանց փախչելով 'ի թանձրադոյն և յանընդմտանելի անտառս. 'Ի ներգործութեն, յորում Կուաքանահարի խօսէր զայսց աշխարհս և զազանաբարոյ աւազակաց, երևէին 'ի դէմս նր նշանք զարհուրանաց. որք կարող եղեն դիւրակի հաւանեցուցանել, թէ հպատակք իւր էին անբաւականք ընդդէմ կալոյ նց. և Քօլոմպոս հետևեցոյց, թէ սա ոչ նախանձաւորէր բնաւ առ առաջադրութի դարմանոյ իրիք, որ դնէր նմա ակնյանդիման ըզշահն օգնական զօրութե իրիք ընդդէմ յարձակողացն. Նոյնժամայն մատոյց զզօրավիգութիւն Սպանիացւոց առ 'ի ունել 'ի բացեայ զթշնամին. խոստացաւ դնել զնահապետն և զժողովուրդն իւր ընդ պաշտպանութ հզօր Միապետին, որում ինքն ծառայէր. և առաջադրեաց թողուլ 'ի կղզւոջն զայնքան թիւ մարդկան, որ կարէր բաւել ոչ այնչափ առ 'ի պաշտպանել զբնակիչս յապագայ ասպատակութեց, որչափ առ 'ի առնուլ զվրէժ անցելոց անիրաւութեց:

Դիւրահաւատ նահապետն հաւանեցաւ անձկանօք դաշնակցութեն. և համարեցաւ զանձն քա՛ ապահով ընդ պաշտպանութ. ազգին տեղացելոյ յերկ- Ընէ- դաշնդրոյ Դ.

նից

նից, և վերնագունի 'ի կարողութ քան զմահկանացուս. Գեղապրեալ յայնժամ գաղափարն մն փոքրիկ ընդդի միոյ, զոր Քոլոմբոս կոչեաց Նաւիտատ, որ 'ի Սպանիացւոց 'ի մերս թարգմանի ծնունդ. վն զի հասանայեր անդր յաւուր ծննդեանն քի. Արարել եղև խոր իմն խրամ շուրջ զբերդաւն. Ամբերթքն ամրացուցին եղեն խիտ առ խիտ ցցովք. և թնդանօթքն՝ ժողովեալք 'ի նաւէ ծովակալին կառուցան 'ի վն. 'Ի տասն աւուրս բովանդակեցաւ գործն, պարզամիտ զարմն այն մարդկան անխորհուրդ հանապազորդութե աշխատելով 'ի կանգնել զառաջին յիշատակարանն գերութե իւրեանց. Քոլոմբոս յայոմ վայրի փայփայանօք և առատաձեռնութեն զուն գործեաց անձկացուցանել զբարձր կարծիսն, զոր ունէին ազգայինք զՍպանիացւոց. Նայց 'ի ժամանակին, յորում հնարեր նա չուել 'ի նն ընդվստահուլ առ Սպանիացիսն՝ բերեալս բնականաբար 'ի բարի առնել, բաղձայր ևս տալ զնշանակոր իմն տարացոյց կարողութե նց 'ի պատժելն և յապականելն զժողովուրդս, որք լինիցին առարկայ ցասման նց. Ըստ այս վախճան յառաջնկայուն անդրա ազգին զումարեալ՝ կարգադրեաց զհրսն 'ի կարգի պատերազմի. արար զշբել իմն, թէպէտ և անմեղ՝ հանդէս արութե սուսերաց Սպանիացւոց, և ուժգնութեն նիզակաց և ներգործութեան ամրաց նոցա. Այսպիսի իմն անկիրթ ժողովուրդ անծանօթ կիրառութեն երկաթոյ և ամ թշնամական զինուց (բաց 'ի յեղեգնեայ նետից իւրեանց հանդերձ ծայրիւք յոսկերէ և 'ի փշոյ ձկանց, և 'ի փայտեայ շամփրոց իւրեանց և յաշտէից կարծրացուցելոց զօրութ հրոյ) ապշէր և դողայր. Յառաջ քան զունելն ժամանակ դադարելոյ հիացման և երկիւղի նց, հրաման ետ Քոլոմբոս արձակել զԹնդանօթսն. Յանկարծական բոմբիւնն ելից զնոսա այնպիսի արհաւրօք, մինչ զի անկան տապաստ 'ի վն երկրի; ծածկելով ձեռօք զերեսս,

 և

և ապա իբրև տեսին զԹուխս և զքաղցելի ներ–
գործութիւն գնտակացն, կնքեցին, թէ անկարելի
է ընդդէմ կալ մարդոց, որք ունէին զհրաման ՚ի
վերայ ապականիչ գործեաց. և որք եկեալ էին զինեալք
փայլակամբ և որոտմամբ ընդդէմ թշնամեաց իւրեանց: 1492
Տեսեալ զայսպիսի տպաւորութիւս բարեբաղդութեան Հրա–
և կարողութեան Սպանիացւոց, ոչ զի դիւրին լի– հանգս
նիցի նախապահել զգերակայութիւն իւր ՚ի վերայ հոգ– Խոր–
ւոյ ազգայնոցն. Քոլոմպոս սահմանեաց զերեսուն հոգի, հուստ,
և ութն յիւրոցն մնալ ՚ի կղզւոջն. Զհրամանա– զօր–
տարութիւն նոցա վստահացաւ ՚ի Տիեկոս Արանայ Եւրոպ
Սեպուհն Քորտովայ, զգեցուցանելով զնա նո– ական.
վին իշխանութիւն, զոր նա ինքն ընկալեալ ունէր
յուղղափառ Վեհութենէն. այլ և հանդերձեաց զնա
ձիովք, որք պաշտպանէին առ ՚ի հաստատուն ունել
և պաշտպանել զնորածնեալ մարդաբնակութիւն.
Պատուիրեաց նոցա անձկապէս պահել զմիաբանութիւն
՚ի մէջ իւրեանց, ունել զխոյր իւր հնազանդութեան
առ հրամանատար իւրեանց, խորշիլ ՚ի խթելոյ
զազգայինս դուզնաքեայ իւր բռնութեամբ կամ պա–
հանջմամբ, տածել զբարեկամութիւն ընդ Կուա–
քանահարեայ. բայց զգոյշ լինել յանկանելոյ եր–
բէք ՚ի ձեռս նոցա, բաժանելով և ցրուելով ՚ի
փոքրիկ գունդս, կամ կարի հեռանալով յամրո–
ցէն. Խոստացաւ դառնալ առ ՚ի վերստին տեսա–
նել զնոսա արագ արագ՝ և հանդերձ բարգաւաճութեամբ
զօրութեան, որ դիցէ զնոսա յաստիճանի առնելոյ զկա–
տարեալ ժառանգութիւն այնր աշխարհի, և հաւա–
քելոյ զպտուղս երկրագործութեանց իւրեանց. Միան– 1492
գամայն և պարաւանդեաց զանձն՝ յիշատակել զա–
նուանս ամենեցուն նոցա առաջի Թագաւորին և Թա–
գուհւոյն, և երևեցուցանել զծառայութիւս և ըզ–
վաստակս նոցա օգտակարագոյն տեսլեամբ:
Մեկնեալ այսպէս զնոսա զգուշութիւն վերայ ապահո– 1493
վութեան հաստածոյն, եթող զՆաւիտատ ՚ի չորսն
յանուարի ՚ի հազար չորեքհարիւր իննսուն և ե–

րեքն. և տարածելով յարևելս կոյս, ծանօթացաւ. և եդ անուանս բազմաց նաւահանգստից 'ի վերայ հիւսիսային ծովեզեր կղզւոյն. 'Ի վեցն կարօղ եղև նշմարել զՓինթայն. և վաղվաղակի եհաս նմա, և միաւորեցաւ ընդ նմա յետ անջատման վեց շաբաթուց. Փինծօն ջանայր արդարացուցանել ըզգնացս իւր, պնդելով թէ արտաքսեալ իցէ 'ի ճանապարհէ իւրմէ 'ի բռնութէ փոթորկին, և խափանեալ 'ի դառնալոյ 'ի ներհակութէ հողմոցն. Կոլոմբոս խելամտեալ զհաւատադրուժ ձկտունց նր, և զթեթևութէ և զստութէ իրացն, զորս նա յառաջ բերէր վն անբասրութն իւրոյ, և տեսանելով, թէ ոչ է ժամանակ վտանգելոյ զխստ ինչ գործածութի իշխանութն, եցոյց զինքն ուրախ վն նորոգ վերստին լծակցութն ընդ ընկերին իւրոյ, որ ազատէր զնա 'ի բազում անհանգստութէ և 'ի հոգոց. և որչափ և ջատագովութ փինծոնի կաղայր, այսպէս խօսելով, նա զանց արար զայնու առանց դժուարութն. և վերընկալաւ զնա 'ի շնորհս իւր. Փինծօն 'ի ժամանակի հեռաւորութն իւրոյ 'ի ծովակալէն, ծանուցեալ էր զզանազան նաւահանգիստս 'ի կղզւոջն, և ստացել ոսկի, տուրևառս առնելով ընդ ազգայնոցն. այլ ոչ արարեալ զերկրածանօթութիւն ինչ մեծակշիռ:

Որոշէ ժողովն վերադառնալ յԵւրոպա : Նկատեալ զվիճակն, յորում էին նաւք իւր, նաև զխառնուած արանց իւրոց, Կոլոմբոս հաւատաց կարևոր փութացուցանել զդարձ իւր յԵւրոպիա. Նաւքինքն բազում կրելով յայնպիսի անսովոր երկարատև ճանապարհորդութն էին խախտեալք. Նաւորդքն ցուցանէին զմեծագոյն անձուձութիւն տեսանելոյ վերստին զբնիկ աշխարհ իւրեանց, յորմէ էին այնպէս ընդերկար բաժանեալք. և ուր ունէին պատմել զիրս զարմանալիս և անլուրս. 'Ի
1493 վեշտասանն յանուարի ուղղեաց զընթացս իւր 'ի մառնէ հիւսիսոյ ընդ արևելս. և կորոյս նոյնհետայն

տայն 'ի տեսութէ ցամաքն. Ունէր 'ի նաւի զօ-
րանս յազգայնոցն առեալս 'ի զանազան կղզեաց
գունդոց 'ի նմանէ. և բաց յոսկւոյն, որ էր նա-
խապետական առարկայ հետախուզութեանցն, բերէր
զառհաւատչեայս ամ բերոցն, որք հաւանականա-
բար լինէին նիւթք շահավաճառութեան ընդ զանա-
զան աշխարհս. որպէս և զբազմազգի թռչունս ոչ
եւս տեսեալս, և զայլ բնական եղականութիւ, որք
կարէին զարթուցանել զմտադրութիւ և զզարմա-
ցումն 'ի ժողովրդեան. Ճ'անապարհորդութիւն ե-
ղև յաջողակ մինչև 'ի չորեքտասանն փեբրվարի.
և բա՛ յառաջ խաղացեալ էին շուրջ զհինգհա-
րիւր փարսախս 'ի խոտորնակն Եթլանտեան Ով-
կիանոսի, յորժամ սկսաւ յառնել հողմն, և շա-
րունակեաց շնչել այնչափ կրկնեալ կատաղութիւ,
մինչև աւարտեցաւ 'ի զարհուրելի իմն ալեկոծու.
Զամ նպաստս, զոր արհեստն նաւական և ներ-
հմտութիւն Պօլոմէոսի կարողացան հնարել, 'ի
գործ եած վասն ապրեցուցանելոյ զնաւն. Բայց
անկարելի էր ընդդէմ կալ ուժգնութեան ալեացն.
և զոլով եւս նորա ամենեքին հեռի յինչ և իցէ տե-
սութէ ցամաքին, երևէր անխորշելի կորուստն.
Նաւավարքն դիմեցին յաղօթս առ ամենակալն ած,
առ կոչումն սրց, առ ուխտս և միանգամայն առ
ամ ինչ, զոր ազդէ կրօնն. և ոմանք մինչև առ
թմբրութիւն, որք են թելադրութի աւելորդապաշ-
տութեան 'ի զարհուրեալ անձինս. և ոչ տեսանե-
լով երևել յոյս ինչ ապրանաց, բարձի թողի ա-
րարին զինքեանս ապականութե, սպասելով յամ
վայրկենի կլանիլ յալեացն. Բայց 'ի կրիցն, որք
խռովեն և աչհաբեկեն զմարդկեղէն միտս յայսպի-
սի աչահրկու կայանորու, ուր մահն ստոյգ ներ-
կայացուցանի 'ի միում յառաւել սոսկալի կերպս. Զգու-
րանաց իւրոց, Պօլոմէոս ունէր կրել զտառադնայ տուեն
իմն իմբեան սեպհական. Ներնչէր, թէ ծանօթու. Պօլեմ-
թիւնն հրաշալի երկրագործութեանցն, զոր արարեալ դոյն.

էր, երթիցէ 'ի կորուստ յայնմ ժամու. Անդ մարդկային զեխելոց էր 'ի բարբարութեան, զոր կարացեալ էր հանել յերջանիկ յաջողուէ գործածոյ նր. և անուն իւր փոխանցեալ լինէր 'ի յետնորդս իբրև յանդուգն և մոլախառ բաղդորդի, փոխանակ փոխանցելոյ պատուով, որ պարտ էր սկզբնապատճառի և ստացնորդի ազնուագոյն ձեռնարկութեան, յոր թևակոխեալ իցէ ոք երբեք. Այս խորհրդածութիւնք շփոթեցին 'ի նմա զամ զգացուած անձնական վտանգին իւրոյ. Նուաղ հոգալով զկորստենէ կենաց, և առաւել տառամսեալ վն նախապահելոյ զյիշատակ այնր, զոր նա գաղափարեալ էր և լուացուցեալ, առանձնացաւ 'ի սենեկի իւրում. և գրեաց 'ի մագաղաթի զհամճառօտ իմն պատմութի ճանապարհորդութեան, զոր արարեալ էր, ընթացիցն, զոր կալեալ, կայսութեան և փարթամութեց աշխարհացն, զոր գտեր և հաստատածոյն, զոր թողեալ էր անդէն. փաթաթեալ զգոլորն 'ի պաստառի մոմ թաթաւելոյ 'ի ձէթ, և փակեալ 'ի պատառս ինչ մոմոյ էարկ զայն յարկղիկ ինչ խնամով խցեալ. և ապա ընկէց զայն 'ի ծով, յուսալով թէ բաղդաւոր իմն պատահումն կարէր պահել աշխարհի զաւանդ ինչ այնքան ծանրագին։

(16) Անուայն յիշատակ առն միոյ, որպէս Բարթողոմէոս, է արժողական. Նաման մի, զոր գրեաց նա առ Ֆերտինանտոս և առ Իզապէլ հաղորդելով նց որինչ պատահեցաւ յայսմ դիպուածի, մատակարարէ զառաւել հրաշալի պատկեր անվեհերութե նր, մարդասիրութեան, համբերոյն, նախանձայուզութե հաւատարմոյ բարւոյն և ստորասին ուղղելոյ առ արքունիս. „ Նուաղ զարհուրեցուցեալ էր զիս, ասէ, այս դժբաղդութիւն, եթէ ես միայն լեալ էի 'ի վտանգի. այո՛ վն զի կեանք իմ է պարտ իմն, զոր ես պարտիմ ընբարձրին հաստչին. և զի լեալ եմ յայլ անգամ

յա-

յառաւել սպառնական վտանգս անկեալ. Տայր ինձ զանսահման ցաւ և զտագնապ սրտի. զի յետ որոյ հաճոյ եղեալ էր նմա մերժել զինէն յիս ըզսրտեղութիւն ձեռնարկելոյ յայս յանձնառութիւն, յորում էի այնպէս բարւոք յաջողեալ, զի հակառակորդք իմ միայն էին յաղթահարեալք, և փառք բարձրութեանց ձերոց, և տարածութիւն սահմանացդ անձեցեալ միջնորդութեամբ իմով, կամեցեալ էր ածոյին մեծվայելչութիւն իւր դնել վախճան ամի մահուամբ իմով. Նա այս լինէր հանդուրժելի, եթէ ոչ էր եկեալ զկնի կորուստ այնց մարդոյ, զոր ես ածեալ էի ընդ իս խոստմամբ մեծագոյն յաջողութեան. որք տեսանելով զինքեանս յայնպիսի ծփանս, անիծանէին ոչ միայն զգալն ըզիս, այլ և զմեծարանս և զպարգևութիւն, զոր ցուցեալ էին ինձ. և որ արգել նոյ զպատնալն յետս. որպէս յաճախ արտշեալ էին առնել. Թող զայսամ, ցաւն իմ անէր խորհելովս թէ թողեալ էի գերիսս որդիս իմ ՚ի գլխոցի ՚ի Պորտուգալ զուրկ ՚ի բարեկամաց յօտար երկրի. և եթէ հաւանականաբար ոչ կարէին լինել ծանօթ ծառայութիւնք իմ առ ՚ի պարաւանդել զբարձրութիւն ձեր ՚ի պատսպարել զնա. Ես որչափ և քաջալերէի զիս յուսով, թէ որն մեր ոչ թողացուցանէր միայն անկատար զայն, որ զիմէր առ մեծագոյն փառս եկեղեցւոյ իւրոյ, և զոր ես յառաջ տարեալ էի այնպիսի մեծ աշխատութ, ոչինչ ընդհատ զմտաւ ածի, թէ կամք նոր կարէր ՚ի պատճառս յանցանաց իմոց զրկել զիս յայնմ պատւոյ, զոր շահելոց էի ինձ յայսմ աշխարհի. Մինչդեռ յայսպիսի իմն վիճակի շփոթութեան դարձուցանէի զմիտս առ բարերարութիւն, որ ընկերէր բարձրութեանց ձերոց, ձևացուցանէի յիս, զի թէև դէպ լինիցի կորնչել ինձ և նաւին դնալ ՚ի կորուստ, կարելի էր, թէ բարձրութիւնք ձեր ունիցին իմիք եղանակաւ զծանօթութիւն ճանապարհորդուն իմոյ և յա-

ջող պատահման իւրոյ. Այսու աղագաւ գրեցի 'ի միում մագաղաթի համառօտութիւն, զոր պահանջէր վիճակ իմ. այսինքն թէ գտեալ էի զերկիրսն խոստացեալ յինէն, և թէ յորքան աւուրս յաջողեալ էր ինձ առնել զայն, և որով ճանապարհաւ. Յիշեցի զբարութիւն երկրին, զյատկութիւն բնակչացն. և թէ հպատակք բարձրութեանց ձերոց մնացեալ էին 'ի ստացման բոլոր գաւառացն գտելոց յինէն. Յետ կնքելոյ զայս գրուած, ուղղեցի զայն առ բարձրութիւն ձեր, խոստանալով զհազար տուքաթս անձին, որոք աւանդեսցէ ձեզ նովին կնքով, այնպէս զի որպիսի և իցէ ազգ օտար և գտանէր, վարձն խոստացեալ հրաւիրեալ էր զնա չտալ զայնմանէ ծանօթութիւն այլոց. Յայնժամ ետու բերել ինձ գտեսակ ինչ տակառոյ. և պատատելով զմագաղաթն 'ի միում պատառի թաթաւեալ 'ի ձէթ, արկի 'ի ներքս, խցանելով զայն բարւոք, և ընկեցի 'ի ծով. Ամենայն արք իմ հաւատացին թէ այս էր ներգործութիւն ինչ ջերմեռանդութեան. Ապա պատկերացուցանելով յիս, թէ գուցէ այս ոչ իմիք գլխաւորով լինիցի վերաբեալ, արարի զմիւս այլ փաթեթ նման առաջնոյն. և եդի զայն 'ի ծայր յետոյ կողման նաւին. ով զի եթէ նաւն գնասցէ 'ի յատակն, տակառն մնասցէ 'ի վերայ ջրոյ վստահացեալ առաջնորդութեան բաղդի: ||

Ապաւէնէ յԱ.ծծոյէ. Առաջնորդեաց 'ի վախճանի յառաջատեսութեան. և ապրեցոյց զկեանս մի վերապահեալ առ անդրագոյն ծառայութիւն. Օգնեալ հողմն, հանդարտեցաւ ծովն. և ընդ երեկս հնգետասաներորդ աւուր սկսաւ նշմարիլ ցամաք. և թէպէտ յանըստուգութեան, թէ ուր երթային, ամենեքեան յայն կողմն թեքեցին. Ծանեան խոկ և խոկ զՍանթա Մարիա զմինն յԱծորբէից, կամ յարեւմտեան կղզեաց ենթադրելոց թագաւորութեան Փորթուգալիոյ. Զկնի դժնդակ իմն վիճոյ ընդ րդեշխին,

մա-

յորում Կօլոմպոս եցոյց ոչինչ ընդհատ զաժ-
խոյժն, քան թէ զհանճարն, ընկալաւ զլրումն ինչ
թարմ ոռճկաց և այլ ամ իրաց, որք պիտոյ էին
նմա. Նոյն պարակայ իմն վրդովմանց զնա մեծա-
պէս. փփնթայն, զորս հորուսեալ էր զտեսուին
յառաջնում աւուր մրրկին, ոչ երևէր. Զանգի-
տեաց ընդ ժամանակ ինչ, թէ ընկղմեալ իցէ 'ի
ծովու. և թէ բովանդակ կարասիք իւր ոչ ևս
կայցեն. Նա 'ի դէմս եկին նմա իւր առաջին
կասկածքն, թէ փինծօն ուղղեալ իցէ դէպ Սպա-
նիոյ առ 'ի ժամանել անդր յառաջ քան զնա, և
լինել առաջին 'ի տալ զաւետիս երկրածանօթու-
թեանցն, և յափշտակել զբաժին ինչ համբաւոյ
նորա: 1493

Կոտմամբ խափանելոյ զնա յայնմանէ, մեկնեցաւ 'Ի Փե-
յԱծծօրրէից հազիւ թէ ժամանակն թողացոյց զնա. տրվարէ
Աչ կայր հեռի 'ի ծովեզերէն Սպանիոյ և ար- յամսեան
տաքոյ վտանգի հանդիպելոյ նոր թշուառութեանց չորսն
յարեաւ այլ իմն մրրիկ սակաւ ինչ վայրագոյն 'ի ժամանէ
խստութն քան զանցեալն. և յետ ալեկոծելոյ 'Ի Լիս-
զերկուս տիւս և զերկուս գիշերս, հարկեցաւ ա- պօնա.
պատսպարել 'ի գետն Տագոս. Մատուցեալ աղերս 'Ի Մար-
առ արքայն Փորթուկալլիոյ, ընկալաւ զհրաման տէ
գնալոյ 'ի Լիսպօնա. և թէպէտ բնականարար չորսն.
պարտ էին գտալ զյաջողանս Փորթուկէզք 'ի տե-
սանելն զայլ իմն ազգ մտեալ 'ի գաւառ երկրա-
ծանօթութեն, զոր մինչև ցայնժամ նոքա համա-
րեալ էին զբովանդակն իւրեանց սեպհականն, և
թէ յառաջին փորձի իւրում ոչ միայն նախան-
ձաւոր լինէր, այլև խաւարեցուցանէր զհամբաւ նց,
բայց Կօլոմպոս ընկալեալ եղև անդ ամ նշանօք
պարտուպատշաճ վարկման առն միոյ, որ 'ի գլուխ
տարեալ էր զայնչափ արտաքոյ կարգի և անակն-
կալ իրս. Թագաւորն ընկալաւ զնա առաջի իւր.
վարեցաւ ը նմա բարձրագոյն պատուով. և ունկն
ետ պատմութեն, զոր արար զճանապարհորդուէ

իւրմէ, հանդերձ զարմացմամբ, բայց խառնեալ ընդ գանգատանաց. Կողոմպոս 'ի կողմանէ իւրմէ ունէր զգեղեցիկ հաճութիւն գծագրելոյ զմեծութիւն գիւտից իւրոց, և լինելոյ յաստիճանի հաւատալոյ զսերտութիւն գաղափարին իւրոյ առ նոյն իսկ անձինս, որք տգիտութեամբ իմն անվայելչականաւ ինքեանց և ճակատագրականաւ ջին իւրեանց, նորոգ՝ մերժեալ էին զայն իբր զխորհրդածումն երազողի ուրումն և չարամիտ բաղձողի։

Դարձ առնէ 'ի Սպանիա. Կողոմպոս էր այնպէս անհամբեր վերադառնալոյ 'ի Սպանիա, մինչ զի զհինգ աւուրս միայն յամեաց 'ի Լիսպոնա. 'Ի հնգետասանն մարտի եհաս 'ի Նաւահանգիստն փալոսայ յետ եօթն ամսոց և

1493 մետասան աւուրց 'ի ժամանակէն, յորում մեկնեցաւ անտի վն նպատակին իւրոյ. Նոյն ժամայն իբրև նաւ իւր տեսեալ եղև մերձենալ 'ի նաւահանգիստն, բովանդակ բնակիչք փալոսայ ընթացան անձկանօք 'ի ծովափն առ 'ի տալ զբարեդարձն ազգականաց և քաղաքակցաց իւրեանց. և առ 'ի լսել զնորալուրս ճանապարհորդութեան նց. Յորժամ իմացան զերջանիկ յաջողութիւնն, յորժամ տեսին զօտարոտի ազգն, զոր եւ տեսեալ հնչաւորսն և զեղական բերսն բերեալ 'ի յայտնեալ աշխարհացն, բոլորեցուն առ հասարակ զեղաւսիրան զուարճութեան. Հնչեցուցան զանգակք. արձակեցան թնդանօթք. Կողոմպոս ընկալեալ եղև 'ի ցամաք արքայական պատուով. Ժողովուրդն ողջոյն ընկերեաց հանդիսական թափօրաւ նմա և արանց իւրոց յեկեղեցին. ուր շնորհս մատուցին այ, որ այնպէս սքանչելարար առաջնորդեալ էր, և պսակեալ բարեյաջողութեամբ զճանապարհորդութիւն երկայնագոյն և առաւել ծանրակշիռ քան զոր երբեք նկրտեալ իցէ ոք առնել յանցեալ դարսն. 'Ի նմին աւուր յերեկոյի ընկալաւ նա զուրախութիւն տեսանելոյ մտանել 'ի նաւահանգիստն զփինթայն. զոր բռնութիւն մրրկին մղեալ էր մեծաւ միջոցաւ 'ի հիւսիսակողմն։

Առաջին մտածումն Կողոմբոսի եղև առ անձինս Թագաւորին և թագուհւոյն, որք էին յայնժամ ներքոյ 'ի Պարսելոնա, զհասանել իւր և զյաջողակ պատահումն. Ֆէրտինանտոս և Եղիսաբեթ ոչ նուազ հրճուեցեալք, քան թէ զեղեալք ուրախութեամբ վասն այսր անակնկալ գիւտուածոյ, պատասխանեցին յոյժ պատուաւոր և ամբարձական բանիւք Կողոմբոսի, 1493
հրաւիրելով զնա բերել անընդմիջաբար յարքունիսն. ուր զի կարող լինիցին լսել 'ի բերանոյ նր զնախկատար պատմութիւն արտաքոյ կարգի ծառայութեանց և երկրածանօթութեանց իւրոց. 'Ի ժամանակի իջեվանելոյ իւրոյ 'ի Պարսելոնա, ժողովուրդն խուռն ընթացեալ 'ի մերձակայ տեղեաց երթայր զհետ նր ամ ուրեք հիացմամբ և կայթմամբ. Մուտ նր 'ի քաղաքն կարգաւորութի Ֆէրտինանտոսի և Եղիսաբեթի կանոնաւորել եղև համեմատական շքով մեծի բարեկեցութեան, որ յաւելոյր զայնչափ պայծառութի 'ի մեծ թագաւորութեան իւրեանց. Նոքա, զորս ածեալ էր ընդ իւր 'ի գտեալ աշխարհացն երթային առաջի. և վն եղական գունոյ մարմնոյ իւրեանց, վն հետաքրքրական մանաւորութ կազմուածոյն և վն անսովոր ձևոյ նց գտանել լինէին մարդիկ այլատեսակք. Զկնի սոցա գային զարդք ոսկւոյ կերտեալք յուրուճական արհեստէ ազգայնոցն, հատք ոսկւոյ գտեալք 'ի լերինս, և փոշի նոյն մետաղին հաւաքեալ 'ի գետս. Ապա հետևէին պէսպէս տարազք ժողովեալք 'ի կողմանս յայնոսիկ 'ի միասին ընդ այլոց զանազան անսովոր բերոց. Կողոմբոս կնքէր զթափորն. և ձգէր յինքն զաչս բոլորեցունց 'ի զննին եղելոց. որք կային պշուցեալք զարմացմամբ 'ի վերայ այնր արտաքոյ կարգի մարդոյ. որոյ խորագիտութիւն և վեհագոյն հաստատութիւն առաջնորդեալ էր հայրենակցաց իւրեանց ընդ ճանապարհ խմ թաքուն անցելոց դարուց առ ծանօթութի այլոյ իւիք աշխարհի. Ֆէրտինանտոս և Եղիսաբեթ ընկալան զնա

զգե-

զգեստաւորեալք արքայական նախարարօք իւրեանց և բազմաց յաճախ ընդ մեծագործ իմն հռչակա-ցաւ. Այսու կացին յորժամ մերձեցաւ նա. և արգելեալ նմա զծունր կրկնելն առ 'ի համբուրել զձեռս նց, հրամայեցին նմա ունել զտեղի իւր 'ի վճ միոյ նստարանի նախապատրաստեցելոյ նմա յատկապէս, և տալ զմանրամասն տեղեկութիւն ճանապարհորդութեան իւրոյ. Կոլոմպոս արար զայն ծանրութեամբ իմն և համեստութեամբ, որ ոչ նուազ վայելչական էր բնաւորութեան ազգին Սպանիացւոց, քան թէ արժանաւորութեան ունկնդրութեանն, առ որ խօսէր. և այնու պարկեշտ պարզութեամբ, որ զանազանէ զմարդիկ վսեմական քանքարոյ. որք շատացեալք կատարելով զմեծամեծ գործս, ոչ խնդրեն յայնմանէ զսնոտի գովասանս ամբարտաւան իմն ցուցմամբ նոցին իրաց. Ակնածանեալ զպատմութիւն, թագաւորն և թագուհին ծունր եդեալ հատուցին այ ամենակալի զհանդիսաւոր գոհութիւն վն յայտնութեան այնց կողմանց, յորոց խոստացեալ լինէին բղխելոց այնչափ շահեկանութիւնք 'ի վերայ թագաւորութեանց ենթարկելոց կառավարութեան նոցա:

(17) Ամենայն 'ի հեղինակաց Սպանիացւոց անարդուն ազգային նախանձուաւ ջանացին աղօտացուցանել զփառս Կոլոմպոսի, հաւատացուցանելով թէ նա առաջնորդեալ իցէ առ ծանօթութի նորոյ աշխարհի ոչ 'ի գտիչ և 'ի ձեռներէց ճարտարմտութենէ իւրմէ, այլ յոմանց ծանօթութեանց ընդունելոց 'ի նմանէ 'ի դէպ ժամու. Ըստ պատմութեն նց նաւ մի հարթուցեալ արտաքոյ ընթացից իւրոց յարեւելեան հողմոյ, տարեալ եղև յարևմուտս կոյս. և գնաց մատչել 'ի ծովեզր անծանօթ աշխարհի միոյ. ուստի դարձաւ մեծագոյն ևս դժուարութեամբ. նաւուդիղն և երեք նաւավարք գոլով միայն անձինք 'ի խուժանէն, որք կենդանի մնացին 'ի տառապանացն, յորում կրեալ էին զպակասութիւն ռոճկաց,

և

և զերկայն և զանդրաւ աշխատութի, յետ սակաւ աւուրց հասանելոյ նոցա, մեռան չորեքեան. բայց նաւուղիղն լինելով ընկալեալ 'ի տան Կոլոմբոսի մտերիմ բարեկամի իւրոյ, յառաջ քան զմահ իւր յայտնեաց նմա զգաղտնիսն երկրագտութեան, զոր արարեալ էր նա պատահաբար. և եթող նմա զթուղթս իւր պարունակօղս զօրըստօրեայ մի ճանապարհորդութեն. որ ծառայեաց Կոլոմբոսի իւր առաջնորդ 'ի ձեռնարկութեն. Կոմարա որչափ գիտեմ ես, է առաջին հեղինակն, որ հրատարակեաց զայս պատմութի. Ամ պարագայութի զուրկ է 'ի վկայութէ առ 'ի հաւատարմացուցանել զնա. Աչ լինի գիտացեալ ոչ անուն նաւին, և ոչ յո սահմանէ էր երթալ. Կարծեն ոմանք, թէ պատկանէր առ մի 'ի քաղաքացն և 'ի նաւահանգըստիցն Անդալուզիոյ. և թէ առագաստէր կամ առ Կանարիայսն կամ առ Մատերա. այլք թէ էր Գալիքիացի, որ երթայր յԱնգլիա. և այլք թէ նաւ մի փորթուկեզ, որ շահավաճառ լինէր 'ի մէջ ծովեզերացն Կուինեայ. Այլև անուն նաւուղղին է անծանօթ, որպ և անուն նաւահանգստին, ուր եհաս 'ի դարձի իւրում. Ըստ կարծեաց ոմանց եղև 'ի փորթուկալիա. և ըստ այլոց 'ի Մատէրա, կամ 'ի Ածօրրէս. Տարին, յորում այս նաւարկութի արարեալ եղև՝ ոչինչ նշան է անըստոյգ. Նաև ոչ մի ինչ յիշատակուի արարեալ լինի զայսմանէ նաւուղղէ, կամ զերկրագտութեանց իւրոց 'ի Պէռնալտեսայ, կամ 'ի Պետրոսէ Մարտիրոսէ ժամանակակցացն Կոլոմբոսի. Հերրէրա սովորական զգուշութեամբ իւրով անցանէ ընդ այն լուռ. Օվիետոս ասէ, եղեալ այս բարբառ. բայց նկատէ զբովանդակն իբր առասպել իմն յատուկ առ 'ի զբաղեցուցանել զխաժամուժն. Նաև քանզի Կոլոմպոս կալաւ զընթացս իւր ուղղակի ընդ արևմուտս 'ի Կանարիայցն առանց այլայլելոյ զայն, են հեղինակք, որք ենթադրեն են, թէ այս մխա-

կեց-

կերպութի է հաւաստիք իմն, թէ նախաշաւիղ ինչ տեղեկութի առաջնորդեալ իցէ նմա յայնմ. Բայց նորա ոչ յուշածեն զսկզբունսն, յորոց վ՛րն հիմնեաց նա զնմ յոյս իւր զշարժախուզութեն. այսինքն է, թէ ունելով զարեւմտեան իմն գնացս, պարտ էր ստուգիւ ժամանել յայն կողմանս արեւելից գծագրեալս կամխաւ 'ի նախնեաց. Նորա հաստատուն փաստահուէին 'ի գաղափարի իւրում հաւանեցոյց զնա տալ զանձն յայն ընթացս եւ յառաջատել յայնմ առանց երբէք զարտուղելոյ յայնմանէ: Այլ ազգք յետ Սպանիացւոց կամեցան յերկրայս արկանել զվաստակ Քոլոմպոսի վն պատուոյ գտ-մանն Ամերիկոյ. Ոմանք 'ի Գերմանացի հեղինակաց վերագրեն զայն Մարտինոսի Պէհայիմայ. զոր ենթադրեն իւրեանց համաշխարհիկ. Այլ ոչ ունեն զյիշատակութի ոչ զտարւոյն, յորում արար նա զգիւտն զայն, ոչ զտեղւոյն, ուստի նաւեաց. եւ ոչ զպարագայէ իմեքէ այնք ճշմարտութեան. Յօհաննէս Մտուլէնիոս 'ի ճառի միում ուղղմարտ գտողէ նորոյ աշխարհի զխաւս այնր տայ Պէհայիմայ. բայց առանց յառաջբերելոյ 'ի հաստատութի ասորիկ իրս ինչ, որ ունիցի գէթ զստուէր քաջայայտութե. Արդարեւ եղեւ ոմն Մարտինոս 'ի Պոէմիոյ աշխարհագիր ըստ իմիք նշանաւոր 'ի հնգետասաներորդ հարիւրեկին, զոր Հերրէրա անուանէ իբր բարեկամ Քոլոմպոսի. բայց ստուգէ մեզ, թէ էր Փորթուկէզ, եւ ծնեալ 'ի կղզւոջն Ֆայալ, որ է մի յԱզօրրէից. Կոմարա տեղեկացուցանէ զմեզ, թէ Մաճէլլան ունէր զերկրագունտ մի արարեալ յայսմ Մարտինոսէ Պոէմացւոյ. յորում ցուցանէր նա զընթացս առաջադրեալս ունել յորանելն զայն նեղուց, զոր յետոյ եգիտ. Ապա ուրեմն երեւի հաւանական, թէ Տայք, այսինքն, Գերմանացիք շարժեալ իցեն սոսկապէս յանուանէ արհեստաւորիս այսորիկ յենթադրել զնա Պոէմիացի. եւ 'ի վերայ այսր ենթադրուե կառուցեալ են զմտացածին կարծիս իւրեանց: Ակ-

Մատեանք Կալլեսայ ոչ երբեք յենուլ յառաջել ս ըստ հինն. Յերկոտասաներորդ հարիւրեկին ըստ փոխելոյ՝ ծնեալ մեծ իմն 'ի մէջ որդւոցն Օվ-վենայ Կուինէթայ արքային հիւսիսային Կալլեսոյ 'ի վէճ յաջորդութեն 'ի ժառանգութեան իւր, Մատոք մի 'ի թըռնոյ նոյ տաղտկացեալ յայսմ վիճակ, եմուտ 'ի ծով 'ի խնդիր անդորրագոյն երկր հարդուածուն. Չոգեցաւ նա ընդ արեւմուտս, թողով զԻռլանտիա ընդ հիւսիս, և եհաս յանծանօթ ինչ աշխարհ. որ թըռեցաւ նմա այնպէս բերկրալի, զի դարձաւ անդրէն 'ի Կալլէս. և եած ապա անդր զզանազանս 'ի յարեւոց իւրոց և յընկերաց. Նաև, թէ այս պատահեալ իցէ շուրջ յամին հազար հարիւր եօթանասներորդի. և յետ այսորիկ ոչ ես գիտացեալ եղև ինչ՝ ոչ զհաստատածոյ նոր, և ոչ իսկ զնմանէ. Բայց պարտ է նկատել, թէ փոխելոյ որոյ 'ի վկայութիւն հաստատեալ է արժանահաւատութիւն այսր վիպասանութ, հրապարակեաց զայն իբր չորեքհարիւր ամօք զկնի ժամանակին այնր գիպուածոյ յառաջբերելոյ 'ի նմանէ. 'Ի մէջ այսպիսի իմն բիրտ և տգէտ ժողովրդեան, որպէս էին Կալլէսք յայնմ ժամանակի, միշտակ այնպիսի իմն հեղաւոր անցից պարտ էր լինել պահպանեալ անկատարապէս, և արժանի էր հաստատեալ լինելոյ յումեքէ հաւատարմագոյն հեղինակէ և առաւել մօտաւորէ քան զփոխելն առ թըռականն ձանապարհորդութեն Մատոքայ. Յետոյն վաղընջայսյգք ճշմարտիւ բողոքեցին առ վկայութեն Մերէտիթափուէէեայ Պարտայ Կալլէսացւոյ, որ մեռաւ յամին հազար չորեքհարիւր եօթանասուն և եօթներորդին. Բայց և նա կեայր 'ի միում ժամանակի այնպէս հեռաւորի յեղելոյն, զի ոչ կարէ համարեալ լինել վկայութի իմն ծանրակշիռ, քան զփոխելոյն. Թող զայս, զի տաղաչափուէք նր ոչ տան մեզ զայլ ծանօթութի, բայց եթէ, զի Մատոք ուղևորեալ ընդ ընտանի կայսութեն

իւր

իւր պարապեցաւ 'ի յուղել զԱմերիկանոսն առ 'ի գտանել զնոր ստացուածս. Այլ թէև ընկալեալ լինէր աւագութեան վիպասանութեան փոխելոյ, ոչ հետևէր յայնմանէ, թէ աշխարհն անծանօթ, զոր եգիտ Մատոք ուղղելով ընդ արևմուտս ընթացիւք իւր, որ թողոյր զԿոլումբոս ընդ հիւսիս, լեալ իցէ մասն ինչ Ամերիկոյ. Ընդունակութիւն Կալեսացւոց յերկոտասաներորդ հարիւրեկին հազիւ ուրեմն չափակցեալ էր այսպիսի իմն ճանապարհորդութեան. Եթէ արար նա զգիւտ ինչ երկրի, առաւել հաւանական է, թէ էր Ասոէրա կամ այլ իմն յարևմտեան կղզեաց. Մերձաւորութիւն լեզուին Կալեսաց ընդ տարազուց ինչ խօսելոյ յԱմերիկա յառաջ բերեալ է իբր պարակայ իմն, որ հաստատէ զճշմարտութիւն ճանապարհորդութեանն Մատոքայ. Բայց այս նշմարեալ եղև 'ի սակաւ օրինակս. և յոմանս մերձաւորութիւն է այնպէս աղօտ, կամ այնպէս մտացածին, զի ոչ է մարթ հանել զբացարձակ հետևութիւն ինչ 'ի պատահական նմանութենէ սակաւ ինչ թրճոյ բառից. Գոյ թռչուն մի, որ՝ որչափ մինչև ցայժմ ծանուցեալ է, գտանի միայն 'ի ծովեզերս հարաւային Ամերիկոյ 'ի նաւահանգստէն Տեսիտերիոյ ցնեղուցն Մաճելլանու. Այն թռչուն զանազանեալ է փէնկուին անուամբ. Այս բառ 'ի Կալեսական լեզուի նշանակէ գլուխ սպիտակ. Ամենայն հեղինակք, որք նպաստեն ձկտմանց Կալեսաց առ գիւտ Ամերիկոյ. յիշեցուցանեն զայս իբր անցրելի իմն ցոյց մերձաւորութեան Կալեսական լեզուին ընդ այնմ, որ խօսեցեալ լինի յայնմ կողման Ամերիկոյ. Բայց պարոն Փէննանթն, որ ետ զգիտնական իմն ստորագրութիւն փէնկուինոյ, նշմարէ թէ ամ ցեղք այնց թռչնոց ունին զգլուխ սեաւ. այնպէս զի պարտ է մեզ հրաժարել յամ յուսոյ հիմնեցելոյ յայսմ ենթադրութեան գտանելոյ զպարոնի Բամբլեական 'ի նոր աշխարհի. Իսկ ես եթէ Կալեսացք դէպ

'ի

'ի վերջին երկոտասաներորդ հարիւրեկին հարցու-
նացեալ էին յիմիք մասին Ամերիկայ, մնացուածք
ինչ Քրիստոնէական վարդապետութեն և ծխից
գտեալ լինէին 'ի մէջ սերնդոց նց յորժամ ծա-
նօթացեալ եղեն նոքա, իբր երեքհարիւր ամա
զկնի տեղափոխութեն նց. մինչ, այնպէս սուղ,
զի յինթացս իւր ոչ կարէաք ենթադրել, թէ ամ
գաղափարք և արհեստք Եւրոպականք իցեն բո-
լորովին 'ի մոռացօնս անկեալք:

Զկնմանք Նորվեգաց առ գիւտ Ամերիկայ երեւին
լաւ ևս հիմնեալք քան զՃայոցն, կամ զԻռլան-
դացն. Անակիցք Սքանտինաւիոյ էին անուանիք 'ի
միջին հարիւրեակսն վս համարձակուն և տարա-
ծութեան ծովային արշաւանաց իւրեանց. Ցամին
874 Նորվեգք գտին և հաստատեցին յԻսլանտա
զհաստուած ինչ. 'Ի 982, գտին զԳրենլանտ. և
արարին անդէն զկալուածս. Անտի ոմանք 'ի նա-
ւորդաց իւրեանց յառաջ խաղացին ընդ արեւմուտս
և գտին զաշխարհ մի յոյժ առաւել հաճոյական
քան զսոսկալի կողմանսն, զորոց տեղեկացեալ էին.
Ըստ գծագրութեն նց այս երկիր էր աւազուտ առ
ծովեզերօք, բայց 'ի ներքսագոյն մասունս ծածկեալ
անտառաւ. յոյր սակս ետուն նմա զանունս Հէլլէլանտ
և Մարքլանտ. և ապա գտանելով զթուփս ինչ որթոց
հանդերձ ողկուզովք, կոչեցին զայն Վինլանտ.
Հաւաստարմութի այսր պատմութեն յեցեալ է, որ-
չափ գիտեմ ես, 'ի վս վկայութեն Սակայի կամ
ժամանակագրութեն արքային Օլաոսայ շարադրեալ
'ի Սնորրոսէ Ստուրլոնիանայ կամ Ստուրլուսոն-
եայ և հրատարակեալ 'ի Ստոքօլմ 'ի 1697. Իս-
քանզի Սնորրոս ծնեալ էր յամին 1179, ժամա-
նակագրութի իւր կարէր շարադրել շուրջ երկե-
րիւր ամօք զկնի դիպուածոյն, զոր նա յառաջ բե-
րէ. Պատմութին իւր զնաւարկութե և զերկրա-
գտութեցն Պիօռնու և ուղեկցին իւրոյ Լէէֆայ է
անհեթեթ իմն և շփոթ առասպել. Ենկարելի է

հա-

հանել 'ի նմանէ, թէ որ մասն Ամերիկոյ էր այն, ուր Նորվէգք հասին. Ըստ զեկուցման նոցա զերկայնութէ տունջեանց և գիշերաց, այս պարտ էր լինել ընդ հիւսիսակողմն 'ի քառասուն և հինգ աստիճանսն լայնութեն 'ի մասին իմիք ծովեզերն Լաբրատորեայ. որ մօտ է 'ի մուտս նեղուցացն Հուտսոնայ. Այսուհետև խաղողք ոչ են բերք այնր երկրի. Թօրֆէոս ենթադրէ. թէ իցէ վրիպակ ինչ 'ի բնաբանին. զոր առ 'ի ուղղել, տեղին, ուր Նորվէգք հասին, կարէ ենթադրիլ կայացեալ 'ի լայնութեն քառասուն և ինն աստիճանաց. Այլ այս ոչ է պատճառ գինւոյ 'ի Ամերիկա. Ընթեռնլով զբաջաղանս Անորրոսի, խորհէի, թէ կայաւորութի Նեվֆոունտլանտոյ համեմատիցի առաւել երկրին գտելոյ 'ի Նորվէգաց. բայց խաղողք ոչ են բերք այնր ամուլ կղզւոյ. Այլք վարկածք յիշատակեալ են 'ի Աւլէթայ. Իսկ ոչ եմ բաւականապէս տեղեկացեալ գրաւորութե հիւսիսակողման առ 'ի քննել զայնս. Բայց այս ինչ յայտնի է, զի եթէ Նորվէգք գտին զմասն ինչ Ամերիկոյ յայնմ ժամանակի, ջանք նոցա տնկելոյ անդէն գաղթականս անօգուտ եղեն. և բովանդակ յիշատակ սորա կորեաւ վաղվաղակի ։‖

(Այլ ևս պատմութիւն անդրէն 'ի նորոյ պատմութեանն.)

Զինչ և իցէ նշան պատւոյ. որ կարէր թելադրիլ յերախտագիտութէ և 'ի զարմացմանէ, ցուցեալ եղև Կօլոմպոսի. Իշխն հրովարտակք, որք հաստատէին նմա և ժառանգաց իւրոց զամ սրտօնութիս պարունակեալս 'ի պայմանադրութին աւարտեցելոյ 'ի Սանթա Ֆէ. և տոհմն իւր ընկա-
1493 լաւ զաստիճան ազնուականութե. Թագաւորն և թագուհին, և գլխի օրինակի նց արքունականքն վարեցան ընդ նմա յամ դիպողուն ամ խորուրդ, որ պարտի վսեմագործ անձանց. Այլ այն, որ առաւել հաճոյ եղև նմա, և որ առաւել ամօքեաց զարդիւնականութի մտաց իւրոց շրջելոյ միշտ առ

մեծամեծ տարակոյս, եղև կարգաւորութիւն հանգերձելոյ առանց յապաղման զպատրաստութիւն իմն այնպիսի զօրութեան, որ դիցէ զնա յաստիճանի ոչ միայն առնլոյ զժառանգութիւն աշխարհացն գտելոց, այլև երթալոյ 'ի խնդիր առաւել հարստացն, զորս նա տակաւին ունէր զվստահութիւն գտանելոյ :

Մինչդեռ արարեալ լինէին նախապատրաստութիւնք մն այսր առաքման, համբաւ երջանիկ հանդիպմածոյն Քոլոմբոսի սփռեցաւ ընդ Եւրոպիա. և արժանաւորեցաւ հանրական ուշադրութեան. Բազմութիւն հարեալ 'ի զարմացմանէն 'ի լսելն թէ այլ երկրային աշխարհ իցէ գտեալ, հազիւ կարէր հաւատալ այսպիսի արտաքոյ հասարակաց մտաց նորութեան. Արք գիտունք բաւականք հասու լինելոյ բնութեան և արգեանց այսր մեծի երկրագտուն, ունէին զնէին պատմութեան նոյ հիացմամբ և ուրախութ. Խօսէին զայնմանէ վաղամամբ իմն. և խնդակից լինէին միմեանց վասն բաղդի իւրեանց գտանելոյ 'ի դարու միում, յորում մն այսր արտաքոյ կարգի դիպուածոյ՝ կոպարք մարդկային ճանաչման էին այնպէս ընդարձակեալք. և բացեալ նոր իմն շաւիղ առ որոնումն և առ գիտողութիւն. ուստի յառաջ խաղային մարդիկ 'ի հետազօտել կատարելապէս ընկերատուած և զեւրս բնակ երկրագնտոյս :

Աշխատէ ... Նորոց Եւրոպացւոց ... (margin)

(18) ‖ Պետրոս Մարտիրոս Անկլերիոյ, զորոյ զծանօթութիւն 'ի վեր արկի, եր ... Մէտիոլանացի. բնակէր յայնմ ժամանակի յարքունիս Սպանիոյ. և թուղթք իւր պարունակեն զպատմութի գործոցն եղելոց ըստ կարգին, որով հանդիպէին. Սա ստորագրէ զկարծիսն, զոր նա ինքն ընդ գիտնաւոր ժամանակակցաց իւրոց ունէր և առաւել զօրաւոր եղերօք. Ընթերցցի նամակ իւր 152. առ Փոմփոնիոս Լէթոս :‖

Կերպաւորէին զանազան կարծիք և մակածք նկատմամբ այնց տեղեաց. և վիճէին, թէ առ ո՞ր բա-

ժանուծն երկրի պատկանէին. Պտօլոմէոս պնդէր ուժգին 'ի սկզբնական դատման իւրում, թէ պարտ էին հաշուիլ 'ի մէջ համատարած կողմանցն Ասիոյ փաղառելոց ընդ հանրական անուամբ Հնդկաստանի. և այս կարծիք հաստատեալ էր 'ի նշմարուածս, զորս առնէր նա շուրջ զեզերովք տեղեացն այնոցիկ. Գիտէր, թէ ոսկին առատ էր 'ի Հնդկաստան. և հանդիպեալ էր այնպիսի յուսալից առհաւատչէից նոր 'ի կղզիսն այց արարեալս յիւրմէ, զի ներածէին զնա 'ի հաւատալ, թէ կարէին գտանիլ հարուստ հանք նոր. Նամյակն այլ իմն տարազ արևելեան Հնդկաց էր անդ հասարակ. փիմէնթն կղզեաց ենթադրիւր, թէ իցէ տեսակ ինչ պղպեղի արևելեան Հնդկաց. Արմատ ինչ սակաւ մի նման խաշնդեղոյ առեալ եղև 'ի նմանէ փոխանակ այնր պատուական համեմի. որ համարիւր մասնաւոր ինչ բոյս արևելեան Հնդկաստանի. Թռչունքն, զորս բերեալ էր ընդ իւր, զարդարեալ էին նոքիմբք ազնուական փետրօք, որք զանազանէին զթռչունս Հնդկաստանի. Տիտեռն գաւառի միոյ երևէր լինել նոյն որ կոկորդիլոս յայլում. Աշոեալ զայս ամ պարագայս, ոչ միայն Սպանիացիք, այլև բովանդակ այլ ազինք Եւրոպիոյ ցուցանեն յարիլ 'ի կարծիսն Պտօլոմէոսի. Երկիրքն, զորս նա գտեալ էր, նկատեալ եղեն իբր մասն ինչ Հնդկաստանի. և 'ի հետևութենէ այսր ճանաչման անուն Հնդկաստանի տուաւ նմ 'ի Ֆերտինանտոսէ և յԻզաբէլթէ 'ի հաստատութեան առաջին դաշնագրութեան իւրեանց վաւերացուցելոյ առ Պտօլոմէոս 'ի դարձի իւրում. Այլև յետ ճանաչելոյ զմոլորութիւն, որ ետ առիթ այսմ կարծեաց, և յետ ճշմարիտ կայաւորութեն նորոյ աշխարհի առաւել ճշգրտիւ ստուգելոյ, անունն մնաց. ամենայն ազգաց կոչելով զաշխարհն արևմտեան Հնդկաստան և զբնակիչս իւր Հնդիկս:

Ա-

Ընուէն, որով Պտղոմէոս զանազանեալ էր զեր- կիրսն գտեալս 'ի Նմանէ, էր այնպէս զառանցու- ցիչ, և Նշանք հարստութեանց Նց և բերրիութեանց էին այնպէս երևելիք, և պատմութիւնք ըն- կերաց Նորա սփռեալք բարդութեամբ իմն սեպ- հականաւ ճանապարհորդաց երևէին այնչափ Նպաս- տաւոր, զի զարթուցին զսքանչելի իմն հոգի ձեռ- նարկուն 'ի մէջ Սպանիացւոց. Սոքա թէպէտ և գո- սակաւ ընտելք առ Նաւական շահատակութիւնս հառաչէին առ այլ իմն ճանապարհորդութի. Կա- մակարքն յամ աստիճանէ թախանձէին լինել 'ի թիւ Նց, հրապուրեալք յընդարձակ ասպարանէն, որ յանդիման լինէր փառասիրութե և ագահութե Նց. և ոչ ցուցանէին զկնքեանս զանգիտելոյ յեր- կայնութէ և ոչ 'ի վտանգէ Նաւարկութեն. Օգու- շաւորն Ֆերտինանտոս և օտարն յամ Նոր 'և 'ի վտանգաւոր իրաց ցուցանէր ձգեալ յանձն զնոյն յօժարուն հպատակաց իւրոց. և օրինակ Նր կա- լաւ զայնպիսի ազդեցութի, զի արարան Նախա- պատրաստութիք վն երկրորդ ճանապարհորդութե իւրք անսովոր իմն արագութբ Սպանիացւոց, և բազմութբ իմն, որ ոչ երևէր փոքր Նաև յառա- ջինկոյ գարուս. Նաւահանդէսն բաղկանայր յեօթն- ևտասն Նաւուց. յորոց ոմանք էին յոյժ բարե- կազմք. Տեսանէին 'ի Նաւսն հազար հինգհարիւր անձինք. 'Ի մէջ սոցա յոլովագոյնք յազնուական տանց, որք վաղիսկ ծառայեալ էին 'ի պատուաւոր պաշտօնս. Սոքա մեծագոյն մասամբ սահմանեալ լինելով առ 'ի մնալ յերկրին, գնացին անդր ամ կարևորք վն տիրապետութե, կամ վն հարգու- նութեան, հանդերձ ամ ազգ ընտանի շնչաւորօք Եւրոպիոյ, հանդերձ սերմամբք և տնկովք, որք հաւանականաբար արմատանային 'ի Ներքոյ կլիմայի արևելեան Հնդկաց, հանդերձ իւրաքանչիւր ցեղ կահիւք և գործեօք, և հանդերձ արհեստաւորօք, որք համարեալ էին պիտանի 'ի Նորածնեալ մար- գաղթակչուն իմիք :

Նախա- պատ- րաստ- ընդ- Էլիզաբէթ ճանա- պարհոր- դութ.

1493 Այլ ոչ սակաւ և աշխատ էր և բարւոք հանդերձել Իրաւունքն նաւահանգիստն, Ֆերտինանտոս և Իզաբէլլա ոչ Ստանալոյ կամեցան հաստատել զիրաւունս իւրեանց առ ստա- 'ի վեր Նորոյ ցումն աշխարհացն գտելոց միայն 'ի վերայ գործողու- աշխարհին թեանց նորին. Օրինակն փորթուգիզաց հաւատա- հաստա- ցոյց կարևոր զխնդրելն 'ի Հռոմէական քահա- տեալ 'ի նայապետէ զշնորհումն ինչ այնց երկրաստանաց, Պապէն. որոց ընձանային տիրել. Պապն իբր փոխանորդ և ներկայացուցիչ Յնի Քնի ունէր զիրաւունս տրուեալ 'ի վերայ համօրէն թագաւորութեանց երկրի. Աղեքսանդրոս վեցերորդ՝ քահանայապետն, որոյ ոչ կամեցաւ բարւոք հնչել համբաւն, նստէր յայնժամ 'ի պապական աթոռ. Լինելով նա ծնեալ հպատակ Ֆերտինանտոսի, և թերևս անձկացեալ ապահովացուցանելոյ ինքեան զպաշտպանութիւն այնր Միապետի, առ 'ի դիւրացուցանել զկատարումն փառասէր խորհրդոցն 'ի շնորհս տոհմին իւրոյ, զիջաւ վաղվաղակի առ խնդիրն. Ներգործութ իմն դիւրին առատաձեռնութե, և որ ծառայէր 'ի հաստատել զիրաւարարութիւն Հռոմէական աթոռոյ, պարգևեաց Ֆերտինանտոսի և Իզաբէլլայի զբոլոր երկիրս բնակեալս յանհաւատից, զորս նք գտեալ էին, կմ զոր գտցեն. և զօրութ այնր իշխանութե, որ 'ի նա ածանցիւր 'ի Յնէ Քնէ, ետ թագաւորութեն Քաստիլիոյ զիրաւունս ինչ 'ի վերայ համատարած կողմանցն, առ որոց ստացումն այնպէս հեռի էր նա յունելոյ զիրաւունս ինչ, մինչ զի ոչ կարէր, և ոչ իսկ գիտել զկայաւորութիւնս, կմ լաւ ևս խօսելով, զգոյութիւն նց. քանզի բարւոք էր, թէ այսպիսի իմն շնորհումն ոչ ներհակեցի շնորհմանն արարեցելոյ յառաջագոյն թագաւորութեն փորթուգալիոյ, որոշեաց նա, զի գիծ ինչ, որ ենթադրիւր ձգելի բևեռէ 'ի բևեռ հարիւր փարսախ ընդ արևմուտս Ածօրրէից, ծառայեսցէ իբր կոպար 'ի մէջ երկուց պետութեանց. և լռութ իշխանութե իւրոյ՝ շնորհեաց զբովանդակն զայն, որ էր ընդ ա-

րև-

բևեռն այսր մնացածին գծի՝ Փորթուկեզաց. և զայն բովանդակ, որ մնայր ընդ արևմուտս՝ Սպանիացւոց. Նախանձն տարածանելոյ զքրիստոնէական հաւատն էր շարժիչն յառաջբերեալ 'ի Ֆերտինանդոսէ 'ի Թախանձելն զկոնդակն. և է ևս յիշատակեալ յԱղէքսանդրոսէ իբր նախապետա- 1493
կան վախճան տալոյ զայն 'ի գուրս. Առ 'ի ցուցանել զփոյթ ինչ զայսմանէ գովելի առարկայէ, զանազան միանձունք ընդ առաջնորդութե՛ գերահամբաւ հօրն Պօյիլոյ միանձին Կաթալոնիացւոյ իբր առաքելական փոխանորդի ընտրեցան առ 'ի ընկերել Կօլոմպոսի, և նուիրել զանձինս 'ի կըրթել զազգայինսն. Հնդիկքն, զորս Կօլոմպոս ածեալ էր ընդ իւր, ուսեալք զնախակրթութիւնս քրիստոնէական վարդապետութե՛, մկրտեցան հանդիսիւ. և նոյն իսկ Թագաւորն և Նահապետն որդի նր, և երևելագոյն անձինք արքունեացն ընթերակայ եղեն այնմ իբր կնքահարս. Այլ այս առաջին պտուղք նորոյ աշխարհի ոչ ընկալան զայն հետևումն աճման, որում ազգն բարեպաշտ փափագէր, և որում ունէր յուսունս սպասելոյ:

Ֆերտինանդոս և Եղիսաբեթ այսու օրինակաւ Երկ-
ստանալով զիրաւունս ինչ համարեալ բաւականա- րորդ
պէս վաւեր առ 'ի տարածանել զերկրագտութիւնս ճանա-
իւրեանց, և առ 'ի հաստատել զիշխանութի իւրեանց պարհոր-
'ի մէջ այնց ընդարձակ գաւառաց երկրագնտոյս, դութի՛ն
ոչ ևս յամեցուցին զառաքումն նաւահանդիսին. Կօլոմ-
Կօլոմպոս էր անհամբեր վերստին տեսանելոյ ըզ- պոսի.
հաստատածն, զոր թողեալ էր, և յառաջատելոյ յընթացս փառացն, յոր մտեալ էր. Ելցաւ 'ի ծոցոյն Կատիզեայ 'ի քսան և հինգն Սեպտեմբերի. և դիմելով նորոգ 'ի կղզին Կոմերա, յառաջ խաղաց 'ի հարաւակողմն աւելի քան զոր արարեալ էր յանցեալ ճանապարհորդութե՛. Անելով զայս գնացս, վայելեաց առաւել հաստատուն 'ի բարեբարուն կանոնաւոր հողմոցն, որք Թա-

Թագաւորեն 'ի ներքս արևադարձից. և ետես բերեալ յակումն ինչ կղզեաց զետեղելոց նշանաւորաբար ընդ արևելս այնց, զորս կանխաւ գտեալ էր. 'Ի քսաներորդ աւուրն մեկնելոյ իւրոյ 'ի Կոմերայ կալաւ զցամաք 'ի միում 'ի կղզեացն Քարիպպեաց կամ Ղեեվարտաց. որոց եդ զանուն Տեսէատա, պատճառաւ անհամբերութեան խուժանին իւրոյ հանդիպելոյ իմիք մասին Նորոյ աշխարհի.
1493 Յետ այսորիկ այց արար յաջորդաբար Տոմինիքայի, Մարիկալանթեայ, Կուատալուփայ, Անթիկուայ, Սան Ճիովաննեայ հարուստ Նաւահանգստի, և այլոց զանազան կղզեաց սփռելոց ընդ այն ճանապարհ, ըստ չափուն, որով յառաջ խաղայր ընդ հիւսիսային արևմուտս. Եգիտ զայնս բովանդակ բնակեալս յայնմ ամէհի զարմէ ժողովրդեան. զոր Կուաքանահարի նկարեալ էր նմա այնպիսի ահարկու գունովք. և որոյ գծագրութիւնք ոչ երևեցան բնաւ գիղաբարդեալք. Սպանիացիք ընդոստ առնելով 'ի ցամաք՝ պատահէին միշտ աւպնջականութեան իմիք, որ յաղթահարէր զնն զպատերազմականն և զզժնեայ հոգւոյ նց. և տեսանէին ես 'ի բնակութիս նց զնշխարս խրախճանացն, զորս խուժադուժքն այնոքիկ արարեալ էին՝ 'ի վն մարմնոց թշնամեաց իւրեանց ըմբռնելոց 'ի պատերազմի.

Հասանէ 'ի Սպանիոլա. Բայց Քոլոմբոս անձկացեալ գիտելոյ զվիճակ հաստատածոյն, զոր տնկեալ էր, և դարմանելոյ զնա կարևոր իրօք, զորոց ենթադրէր ունել զպէտոյս, ոչ դեգերեցաւ բնաւ յիմիք յայնց կղզեց. և յառաջադէմ եղև ուղղակի մինչև 'ի Սպանիոլա.
22. Նոյեմբերի. Իբրև էհաս մերձ 'ի Նաւատատ, կայան, յորում թողեալ էր զերեսուն և ութն արսն ընդ հրամանատարութբ Արատայ, ապշեցաւ, զի ոչ ոք 'ի նոցանէ երևէր, սպասելով յամենայն վայրկենի տեսանել զնն ընթանալ իբր համաշխարհիկս իւր ջերմամբ հրճուանաց առ 'ի տալ նց ողջոյն դա-

լստեանն

լեռանն. Ի հոգարկութիւն շուրջ զողջութիւն նց, եւ գուշակելով 'ի միտս իւր զայն, որ կարէր պատահել նց, եւ 'ի նաւէն մեծաւ ըշտապաւ. Բովանդակ ազգայինքն, յորոց կարէր ընդունել զտեղեկութիւն զնոցանէ, փախուցեալք էին. Ամրոցն շինեալ 'ի նմանէ տեսանիւր տապալեալ. Զինուորական զգեստքն ծուէնեալք, զէնքն խորտակեալք եւ մանրեալք, կաճքն սփռեալք շուրջ. ոչ թողին այլեւս տեղի տարակուսի նկատմամբ ողբալի իրակութեն ամրականացն:

1493

Մինչդեռ Սպանիացիք լուծանէին յողբս 'ի սակս տխրական յիշատակի քաղաքակցաց իւրեանց, եւ հաս եղբայր մի քաղիքեայ Կուաքանահարեայ. Քոլոմպոս իմացաւ 'ի նմանէ զմանաւոր պատմութիւն թէ որչափ ինչ պատահեալ էր զկնի մեկնելոյ իւրոյ 'ի կղզւոյն. Ընտանեկան կենցաղավարութիւն Հնդկաց ընդ Սպանիացւոց դիմէր սակաւ առ սակաւ 'ի նուազեցուցանել զայն աւելորդապաշտական յարգութիւն, զոր առաջին երեւումն նց շնչէր էր 'ի ժողովուրդն յայն. Սպանիացիք վն անհանճարութեն իւրեանց եւ չար գնացից ջնջեալ էին վաղվաղակի զայն նպաստաւոր տպաւորութիւն, եւ տուեալ ճանաչել կղզականացն, թէ էին նոքա ներքոյ անկեալք կարեաց, տկարութեանց եւ կրից մարդկան. Հազիւ պակասեալ հզօր սանձն ներկայութեն եւ աւագութեն Քոլոմպոսի, կորուսին ամբարտաւանքն զամ նկատումն առ պաշտօնատարն, որում տուեալ էր նա զհրամանատարութիւն. Առանց ուշ դնելոյ այլեւս նախընթաց հրահանգութեանցն, զորս թողեալ էր անդէն Քոլոմպոս, իւրաքանչիւրոք եղեւ անկախ, եւ թափեաց զցանկութիս իւր առանց զսպելոյ. Ոսկին, կանայք, եւ պարէնք գաւառականացն եղեն նոյնհետայն աւար այնց անառակ ճնշողաց. Արշաւեցին աստ եւ անդ 'ի փոքրիկ խումբս ընդ կղզին, բերելով յամենայն մենկենս նր զյափշտակութիւն եւ զլրբութիւն.

Թուէ զինչ եղե արանցն, զորս Կո զետեղէր անդէն.

Որչափ և ազնիւ՝ և երկիւղած էր ժողովուրդն այն
անպարտ անիրաւութիւքն պարտասեցուցին 'ի վախ-
ճանի զհամբերութի նր, և զարթուցին զքաջասր-
տութի իւր. Կաղիքէն Զիպաօի. զորս զահմանան
նախապետաբար հարստահարէին Սպանիացիք 'ի
պատճառս ոսկւոյն, որ ծնանէր անդէն, յանկար-
ծակի ըմբռնեաց և կոտորեաց զոմանս 'ի նոցանէ,
մինչդեռ կային ցրուեալք աստ և անդ 'ի բոլորո-
վին իմն ապահովութե. որպէս եթէ գործողու
նց լեալ էր ընաւին անմեղ. Սա գումարեց յայն-
ժամ զհպատակս իւր. և պաշարեալ զամրոցն հուր
էարկ. Ոմանք 'ի Սպանիացւոց սպանեալ եղեն 'ի
նմրգործուն պաշտպանելոյ զայն. և այլք կորեան
'ի թեակոխելն փախչել անցանելով ընդ բազուկ
ինչ ծովու. Կուաքանահարի, որ հանդերձ ամ
հարստահարութիւն Սպանիացւոց ոչ էր օտարա-
ցեալ 'ի նոցանէ, էառ զէնս յօգնութիւն նց. և
ջանալով պատսպարել զնա, ընկալաւ վիրաւորուած
ինչ, որ փակեաց զնա մշտնջենաւոր 'ի տան:
1493 Թէպէտ այսպիսի իմն պատմութի ոչ էր յարմար առ'ի
Հանձա- ցրել զկասկածս Սպանիացւոց ընդդէմ հաւատար-
րէր մուն Կուաքանահարեայ, Կողոմպոս զգաստ եղև
գնայ 'ի ճանաչել թէ այս ոչ էր լծակցութի սեպհական
Կոլոմ- առ 'ի քննել զգնացս նր ճիշդ խնամով. ուստի մեր-
պոսի. ժեաց զխորհուրդս ոմանց'ի պաշտօնատարաց իւրոց,
ովք դրդէին զնա ապահովանալ զանձնէ այնր նա-
հապետի, և յարձակիլ 'ի վր հպատակացն նր առ'ի
առնուլ զվրէժ մահուան հայրենակցաց իւրեանց.
Արար տեսանել նց զկարևորութիւն զօրացուցանե-
լոյ զբարեկամութիւն ընդ ումեք իշխանաւորի այնր
երկրի. առ 'ի դիւրացուցանել զհաղորդութիւն,
զոր խորհէր. և եցոյց նոցա զմօտալուտ վտանգն
փրկելոյ զազգայինսն առ 'ի միաւորել 'ի յուսա-
հատեալ իմն որոշումն ընդդէմ նց տարադէպ և
անօգուտ գործածութե խստութեանն. Փոխանակ
վանելոյ զժամանակ իւր 'ի պատժել զանցեալ
թշնա-

թշնամանս, կալաւ զզգուշութիւն վս կանխելոյ առ ապագայսն. Այսու դիտմամբ ընտրեաց զեղ իմն առաւել առողջարար եւ առաւել հեշտ.քան զԻսաբելլայն. Նշանագծեաց զհերձ քաղաքի միոյ 'ի տափարակի իմիք մօտ յընդարձակ խորշ ինչ ծովու. եւ պարաւանդելով զնա որ սատարել գործոյն, յորմէ կախիւր հասարակաց ապահովութիւնն, եւ տունք եւ պարիսպք տեսան այնպէս արագ ամբարձեալք յայնքան միաւորեալ ձեռաց, մինչ զի եղեն յաստիճանի մատակարարելոյ զապաւէն եւ զպաշտպանութի. Զայս նորածին քաղաք առաջին, զոր հիմնեցին Եւրոպացիք 'ի նոր աշխարհի, անուանեաց Եղիսաբեթ 'ի պատիւ Թագուհւոյն Իսաբելլայ պաշտպանին իւրոյ:

Կոլոմբոս 'ի յառաջացուցանելն զայս գործ կարեւոր՝ ունէր հանդուրժել ոչ միայն ամ դժուարութեանց, որոց արտադրեալ են նորածնեալ մարգաղթականութիք յանգործ երկրի միում, այլ եւ պարտ էր մաքառել ընդ այնմ, որ է առաւել անըստանելի. այս է, ընդ հեղգութե, ընդ անհամբերութե եւ ընդ ապստամբ հանգամանաց հետեւողաց իւրոց. Ասէին թէ բնական պղերգութի Սպանիացւոց աճէր վս տագնապիչ ազդեցութե տօթոյ կլիմայիս. Նազումք 'ի նոցանէ էին սեպուհք անընտելք աշխատութե մարմնոյ. եւ ամենեքեան էին գրաւեալք առ իրակութիւն վս ընչաքաղց յուսոյն զարթուցելոյ 'ի պայծառ եւ 'ի բարդողական ստորագրութեանց նց, որք դարձան ընդ Կոլոմբոսի յառաջին ճանապարհորդութե իւրեանց. եւ եւս վս խաբման նց, 1493
ոչ թէ երկիրն, զոր գտեալ էր, իցէ կամ Զիփանկօն Մարկոսի Փօլայ, կամ Օփիրն, ուստի Սողոմոն եբեր զայն մեծագին տարազսն. որք ծառալեցին անընդմիջաբար զանսովոր հարստութիւն 'ի Թագաւորութե նց. Բայց յորժամ փոխանակ ոսկեղէն հնձոյն, զորս սպասեալ էին ժողովել առանց աշխատանաց եւ տաժանմանց, տեսին Սպանիա-

Տժգոհութիւն Հեգիացւոց Էրոյ.

նիացիք, թէ նոյն ակնկալութի գանձուցն էր հե-
ռաւոր և անստոյգ, և թէ ոչ կարէր ըստացեալ
լինել, եթէ ոչ դանդաղ և անընդհատ ճգամբք
ճարտարմտութեն, այսոքիկ եղջերուաքաղ և պատ-
րեալ յոյզք պատճառեցին զայնպիսի իմն վհատութ
հոգւոյ, որ աւարտեցաւ 'ի յուսահատութի, և
երկնեաց զհանրական դանդատանս. 'Ի զուր հնա-
րեցաւ Կոլոմբոս կազդուրել զսիրտս նց, ակնար-
կելով զարգաւանդութի գետնոյն, և ցուցանելով
զառհաւատչեայս ոսկւոյն, որք օրըստօրէ բերեալ
լինէին 'ի զանազան կողմանց կղզւոյն. Ոչ ունէին
զերկայնմտութի սպասելոյ յաջորդական կեթոյն,
զորս խոստանայր առաջինն. և զվերջինս անգոս-
նէին իբր դուզնաքեայս և չնչինս. Սփռեցաւ
ցրտութիւնն 'ի սիրտս. և կերպաւորեցաւ երդ-
մնակցութի իմն, որ կարէր լինել մահաբեր Կո-
լոմբոսի և հատուածոյն. Իրազեկ եղև նա այնմ
ըստ բաղդի. և կալանաւորելով զչարմիտսն պատ-
ժեաց զմասն ինչ 'ի նոցանէ. և զայլս վերառա-
քեաց կալանաւորս 'ի Սպանիա. ուր արձակեաց
զերկոտասանս 'ի նաւուցն, որք ծառայեալ էին
փոխաբերութեանցն, հանդերձ սերտ խնդրուածով
1494 արանց 'ի զօրավիգնութի, և առատ լրման ռոճկաց:
Քննէ Յայսմ վայրի առ 'ի տարագրել զդատարկապոր-
զՀիճակ տութիւն, որ տալով ամբոխին իբրու զժամանակ
երկիրն. որոճալոյ 'ի վե կրեալ պակասութեանցն, սնուցա-
նէր զդժգոհութի, խորհեցաւ առնել զզանազան
առաքմունս 'ի ներքսագոյն մասն գաւառին. Յու-
ղարկեաց զհատուած մի ընդ հրամանաւ Ալփոն-
սոսի Օյետայ արթուն և քաջասիրտ զօրագլխոյ
յայց առնել նահանգին Չիպաօի. զորմէ ասէին
յառաջ ածել զմեծագոյն քանակութի ոսկւոյ.
և նա ինքն յետոյ գնաց զհետ նր անձամբ նա-
խապետական զօրութե գնդաց իւրոց. Յայսմ դի-
պաւորութեան պարզեաց զշուք զինուորական մեծա-
գործութեան, զորս կարէր երբէք առնել առաւել

նա-

նազելի ցոյց, առ 'ի շքացուցանել զպատկերակեր-
պութիւն գաւառականացն. Զու արար արձակեալ
դրօշակօք, պատերազմական երաժշտութ. և փոք- Ի 10.
րիկ գնդաւ հեծելոց. որք երբեմն առնէին զե- Ամերիկ.
րեւոյթ իւրեանց 'ի ճակատու, և երբեմն 'ի վեր-
ջապահս. Գոլով այսոքիկ առաջին երիվարք, որք
երեւէին 'ի նոր աշխարհի, էին առարկայք զար-
հուրանաց ոչինչ ընդհատ քան զարմացման Հնդ-
կաց. զի ոչ ունելով 'ի մէջ իւրեանց զընտանի
շնչաւորս, ոչ հասու լինէին այսմ մեծի աճման
կարողութն, զոր ունէր մարդն, 'ի նուաճել զնս
ընդ տէրութ. իւրով. Պատկերակերպէին, թէ իցեն
ստեղծուածք բանաւորք. և թէ կերպաւորէին զմի
միայն շնչաւոր ընդ հեծելոյն. ապշէին ընդ արա-
գութի նց. և նկատէին զթափ և զկորովութի նց
իբր անընդդիմակայելի. Մինչդեռ Բօլոմպոս նա-
խահոգայր շինել միշտ 'ի գաւառականսն զարհա-
ւիրս կարողութն իւրոյ, ոչ անհոգացաւ զհնա-
րիցն յանկուցանելոյ յինքն զսէր և զվստահութն
նց. Կայր խղճմտութբ յարեալ 'ի սկզբունս հա-
ւատարմութն և արդարութն 'ի բովանդակ վար-
մունս իւր ընդ նս, և յամ դիպողութն 'ի գործ
ածէր զմարդասիրութի և զներողութի. Երկրա-
տանն Զիպաօի համեմատեցաւ ստորագրութնցն
տոհմելոց զնմանէ յերկրականացն. Էր լեռնային և
անգործ. բայց յամ գետս և 'ի վտակս նր հա-
ւաքիւր ոսկի, կամ 'ի փոշի կամ 'ի հատս. որոց
ոմանք էին երեւելի խոշորութբ. Հնդիկք ոչ եր-
բէք փորեալ էին զհանքս 'ի խնդիր ոսկւոյ. Ընդ-
մտանելն 'ի փորոտիս երկրի և զտելն զխոշոր մե-
տաղն էին գործողութիք կարի մանուածոյք վն
ճարտարութն նց և վն քանքարոցն. և ինքեանք
ոչ տային զայնպիսի իմն բարձր արժողութի նմին
հրահալելոյ առ 'ի գնել զմիտս և զհնարագիտու-
թիւնս իւրեանց 'ի տանջանս վն ստանալոյ զայն.
փոքր քանակութն, զոր նոքա ունէին, այնր մե-
ծաւ-

ծագին տարագու, կամ էր հաւաքեալ 'ի յատակս գետոց, կամ քարշէին զայն 'ի վայր 'ի լերանց ջուրք անձրեւք, որք անկանէին 'ի ներքս արեւադարձից. Յայսպիսի նշանաց ոչ կարացին Սպանիացիք այլ եւս երկրային ընդ երկար 'ի մի պարունակելոյ երկրին զգանձս. որոց յուսային տիրել փութանակի. Եւ 'ի ապահովացուցանել ըզհրամանատարութիւն այսր պատուական գաւառի, Քօլոմպոս կանգնեաց փոքրիկ բերդ՝ որում եւ զանուն եդ Թոմաս դիտմամբ՝ առ 'ի յանդիմանել զնոսին 'ի դժուարահաւատ հետեւողաց իւրոց, որք ոչ կամեցան երբէք հաւանել, թէ գաւառն յառաջ ածէր զոսկի, մինչեւ ոչ տեսին զայն աչօք իւրեանց եւ շօշափեցին ձեռօք:

Սծէ-պա-տա-պանին Նա-փն-ձու-ՔՇ հաղոր-ծայն. Օեկուցումն այսց ամրքէ երեւութից ստացման յերկրատանին Չիպաօի էհաս 'ի դէպ ժամու 'ի քաջալերել զյուսահատեալ հատուածն վշտացեալ յայնքան եւ յայնպիսի պէսպէս տառապանաց. Բանակութիւն պարէնից բերելոց յԵւրոպիոյ էր սպառեալ մեծագոյն մասամբ. իսկ մնացեալն այնպէս ապականեալ էր 'ի տօթոյ եւ 'ի խոնաւութենէ կլիմային, զի ոչ կարէին հանել անտի զշահ. Ազգայինքն մշակէին զայնպիսի ինչ փոքրիկ բաժին հողոյ, եւ այնպիսի սակաւ արհեստիւ, զի այս հազիւ մատակարարէր զայն, որ բաւական էր վն ապրուստի իւրեանց. Սպանիացիք յԵղիսաբեթի ոչ ունէին զայնժամ ոչ ժամանակ եւ ոչ զդիւրութիւն յղկելոյ զգետինն առ 'ի հաւաքել անտի ճարտարութիւն զերեւելի պտուղս. Վն այսպիսի մտածութեանց սկսան երկնչել, թէ պարտ էին մեռանել 'ի սովու, արդէն իսկ վերածեալք 'ի կերակրել փոքր բաժնիւ յաւուրն. 'Ի նմին ժամանակի հիւանդութիւնք առաւել տիրողք յայրեցած գօտւոջ, եւ որք առնեն զկտորած նախապետաբար յոչ մշակեալ տեղիսն, ուր ձեռն ճարտարութեան ոչ է բացեալ զանտառս, ցամաքեցուցեալ զճախինս, ամփոփեալ

զգետս

զպետս 'ի խոխոմս ինչ, սկսան ճարակել 'ի մէջ նց . Ահարեկեալք 'ի բռնութէ ալեացն և յանտովք նշանաց նց, գառնային ընդդէմ Կոլոմպոսի և ընդդէմ ընկերաց իւրոց առաջին ճանապարհորդութեն . որք չքեղ, այլ պատրողական գծագրութբ Սպանիոլայի հրապուրեալ էին զնա 'ի թողուլ զբնիկ սահմանս իւրեանց վն խուժադուժ և սոսկալի իմն երկրի . ուր լինէին բնամահք կմ սպանեալք յանծանօթ տարափոխիկ ախտից . Զանազան պաշտօնատարք և անձինք անուանիք փոխանակ ցածուցանելոյ զնա միաւորեցին ը նն զվտարանջական տրտունջս իւրեանց. Հայրն Պօյիլ փոխանորդն առաքելական էր մի յառաւել ամբոխելոցն և անիծաբանից . Պիտոյ եղև համօրէն աւագուն և աչալրջութ Կոլոմպոսի առ 'ի հաստատել վերստին զստորակարգութի և զհանդարտութիւն 'ի հատուածին. Խոստմունք և սպառնալիք փոփոխակի 'ի կիր արկեալ եղեն առ այս վախճան . այլ ոչինչ հանգանակեաց առաւել 'ի քաղցրացուցանել զտժգոհսն , քան զհամոզումն գտանելոյ 'ի հանքսն Չիպաօի զայնպիսի իմն հարուստ մթերս գանձուց , զի վճարեսցէ զամ չարչարանս նց , և քնքեսցէ զյիշատակ անցելոց պակասութեց :

Յորժամ անխռով ջանիւք իւրովք ետես վերստին Կոլոմ-
կայկայեալ զկարգն և զմիաբանութին, ոռ զի կա- պոս յէ-
րօղ լինել համարձակել թողուլ զկղզին, Կո- նորյէ
լոմպոս որոշեաց յառաջ խաղալ 'ի հետաղօտութիւն 'ի Նոր
իւր առ 'ի լինել յաստիճանի ստուգելոյ, արդեօք Ինդի-
այնք կողմանք, ընդ որոց բացեալ էր զհաղորդակ- Գտա-
ցութի իմն, էին կապակցեալք ընդ իմիք գաւառի Աէն.
երկրին արդէն ծանուցելոյ, եթէ պարտ էին նկա- 1494
տել իբր անջատեալ իմն բաժին երկրագնտոյս դեռ
ես ոչ այց արարեալ. Կարգեաց զեղբայր իւր
զպարոն Դիեկոս ընթերակայութ խորհրդեան պաշ-
տօնատարաց ունել զկառավարութի կղզւոյն 'ի հե-
ռաւորութեն իւրում. և ետ զհրամանատարութիւն

գու-

գումարտակի միոյ զօրականաց ցպարոն Պետրոսն Սարմիէնտա. ընդ որում պարտ էր նա վերաճանաչել զտարբեր մասունս կղզւոյն. և ջանալ հարգունացուցանել զիշխանութի Սպանիացւոց 'ի մէջ բնակչացն. Յետ թողլոյ նր զմասնաւոր հրահանգս ինչ նկատմամբ գնացից նր, եբարձ զխարիսխն 'ի քսան և չորսն ապրիլի նաւաւ միով և երկու փոքր նաւակօք ընդ առաջնորդութե իւրով. 'Ի տաղտկալի իմն ընթացս վեց ամբողջ ամսոց պարտ եղև նմա կրել գրեթէ զրավանդակ անհամար թշուառութիւս, որոց անձինք արհեստին իւրոյ արտագրեալ են, առանց առնելոյ զծանրակշիռ իմն երկրագտութի բաց 'ի կղզւոյն Ճ՛իամմաիքա ։

(19) Արք գիտնականք յայնմ դարու էին այնպէս համատարապէս համանեալք, թէ երկիրքն գտեալք 'ի Գօլոմպոսէ էին յարակցեալք ընդ արևելեան Հնդկաստանի, մինչզի Պէրնալտէս կուրապաղատն, որ երևի լեալ նշանաւոր 'ի վարժմունս աշխարհագրութե, պնդէ, թէ Քուպա ոչ էր կղզի ինչ, այլ մասն մի շարունակի միացելոյ ընդ ծրուեն մեծի խանին. Ասաց նա զայսպիսի ինչ էր իբր զկատուկ կարծիս իւր նմին իսկ Գօլոմպոսի. որ եղև հիւրընկալեալ 'ի նմանէ առ ժամանակ ինչ 'ի դարձին իւրում յերկրորդ նանապարհորդութենն. և ջատագովէ զայն զանազան առարկութիւք, որք մեծագոյն մասամբ հիմնեալ են 'ի վը վկայութե ասպետին Յօհաննու Մանտեվիլլեայ. Ձեռագիրն է առ իս. Անտօնիոս Կալլոս, որ էր դիմանադպիր Մեծաւորացն Ճ՛էնովայի 'ի վերջն կոյս վեշտասաներորդ հարիւրեկին հրատարակեաց զկարճառօտ իմն պատմութի նաւարկութեանց և երկրագտութեանց քաղաքակցին իւրոյ Գօլոմպոսի. յորում իրագեկ առնէ զմեզ 'ի թղթոցն Գօլոմպոսի, զորս նա ինքն տեսեալ էր, թէ էր կարծիք նր հիմնեալ 'ի վը նաւորդական նշմարանց, թէ մինն 'ի կղզեաց 'ի նմանէ գտե-

Լոյ

լոց էր տարակաց միայն ժամս երկուս կամ երե-
սուն աստիճանս 'ի Քաթթիկարայ․ որ էր գծագ-
րեալ 'ի թուղթս աշխարհագրաց այնր դարու 'ի
վն վկայութն Պտողոմեայ իբր տեղի առաւել ա-
րեւելեան յԱսիա․ Աստի հետեւեցուցանէ նա, զի
եթէ անծանօթ ինչ շարունակ ոչ էր խափանել
զնաւարկութիւն, պարտ էր լինել անդէն կարճա-
ռօտ իմն եւ դիւրին մուտ, ունելով զարեւմտեան
ինչ ընթացս առ այս վերջին գաւառ արեւմտից ։ ‖
Արշաւելով Քոլոմպոս առ Հարաւային ծովեզե-
րքն Քուպայի պատահեաց լաբերինթոսի միում
անհաւատալի իմն բազմութն կղզեկաց․ որոց եդ
զանուն՝ պարտէզ Թագուհւոյ․ Այսմ անծա-
նօթ ճանապարհորդութն 'ի մէջ ժայռից եւ քա-
րափանց յամեցուցեալ եղեւ 'ի ներհակ հողմոց,
յարձակեալ 'ի խառաղի մրրկաց, եւ զարհուրեցու-
ցեալ յահեղ փայլականց եւ որոտմանց, որք 'ի
մէջ արեւադարձից հաշուեն թէ ոչ դադարին եր-
բէք․ 'Ի վախճանի պակասեցան պարէնք․ Խու-
ժանն իւր վհատեալ յաշխատութէ եւ 'ի սովու
քրթմնջէր եւ սպառնայր․ եւ էր պատրաստական
յանցանել յառաւել յուսահատ ծագ ընդդէմ նորա․
Պաշարեալ 'ի վտանգէ յայսպիսի պէսպէս կեր-
պարանս, պարաւանդեցաւ հսկել հանապազորդ-
առ 'ի նկատել զամ ինչ աչօք իւրովք, եւ առ 'ի
տալ ինքնին զկարեւոր հրամանս եւ ածել զայնս 'ի
կատարումն․ Յոչ իմիք այլ դիպաւորութն եղեալ
եղեւ այնքան 'ի փորձ գիտութի իւր եւ վարժութիւն
նաւորդի․ եւ նաւախումբն այսոցիկ պարտական ե-
ղեւ զփրկութի իւր․ Բայց յարակայ աշխատութի
մարմնոյ եւ շարունակ տաժանումն մնաց ծանրա-
նալով քան զխառնուած իւր, թէպէտ եւ ուժեղ
եւ կորովի, ածին նմա 'ի վն զտենդ ինչ, որ ա-
ւարտեցաւ յախտ թմբրութն․ որով զրկեցաւ 'ի
զգայութն եւ 'ի յիշողութէ․ պարակայ ճակա-
տագրական վն կենաց իւրոց ։

Սա-

27. Սակայն 'ի դարձին իւրում 'ի Սպանիոյ՝ յանկար-
[illegible] ծական շարժումն ուրախութեն, զոր զգայ, պա-
[illegible] տահելով եղբօր իւրում Բարթողոմէոսի յԵղիսա-
[illegible] բեթի, այնպէս շարժեաց զոգիս նր, զի պատ-
[illegible] ճառ եղև վերստին առողջութեան իւրոյ. Յերեք-
[illegible] տասան ամաց հետէ այս երկու եղբարք, զորս նմա-
[illegible] նութիւն քանքարոց կապէր յանձուկ բարեկամութեն.
[illegible] անջատեալք էին. և յայսպիսի երկայն ժամանա-
[illegible] կի ոչ էին ընկալեալ զգոյզն հաղորդակցութի 'ի
[illegible] մէջ իւրեանց. Բարթողոմէոս աւարտեալ զիրա-
[illegible] կութի իւր ընդ արքունեացն Անգղիոյ գնացեալ
[illegible] էր 'ի Սպանիա ը ճանապարհ Փրանսիոյ. 'Ի փու-
[illegible] թեղ ունեալ էր զնորալուրս արտաքոյ կարգի երկ-
րագտութեանց արարելոց յեղբօրէ իւրմէ յառաջնում
ճանապարհորդութեն. և թէ սա հանդերձիւր յայն-
ժամ մտանել 'ի նաւ վն երկրորդ երից առաքման.
Թէպէտ և այս ստիպէր զնա բնականաբար հե-
տևել զճանապարհ իւր մեծագոյն արագութբ,
Կոլոմբոս արարեալ էր զառագաստ առ Սպանիա-
լս յառաջ քան զժամանել Բարթողոմէոսի 'ի Սպա-
նիա. Ֆերտինանտոս և Եղիսաբեթ ընկալան զնա
մեծարանօք, որ պարտ էր եղբօր առն միոյ, որոյ
վաստակք և ծառայութիւնք առնէին զնա այնչափ
երևելի. և ձևացուցանելով յինքեանս զմխիթա-
րութիւն, զոր ներկայութի նր տալոց էր Կոլոմ-
բոսի, հաւանեցուցին զնա առնուլ զհրամանատա-
րութիւն երից նաւուցն, զորս ինքեանք սահմա-
նեալ էին առ 'ի տանել զնպարս առ հաստուածն
1494 'ի Եղիսաբեթ:
[illegible] Նա ոչ կարէր ժամանել 'ի լաւագոյն ժամանա-
[illegible] կի. որովհետև Կոլոմբոս ունէր ճշգրտիւ զկա-
[illegible] րիս բարեկամի միոյ, որ իցէ բաւական սատարել
[illegible] նմա խորհրդովք իւրովք, կամ բաժանել ը նմա զհոգս
[illegible] և զբեռն կառավարութեն. Թէպէտ և առժիկք ե-
[illegible] կեալք փոքր մի յառաջ յԵւրոպիոյ բերէին Սպա-
[illegible] նիացւոց զփոփոխմանս ինչ 'ի թշուառութէ սովոյն,

բայց պարէնքն ոչ էին յայնպիսի քանակութեան առ 'ի պահել զնս ընդերկար. և կղզին դեռ եւս ոչ էր յառաջ ածեալ որչափ ինչ բաւէր առ պէտսն. Այլ իմն վտանգ առաւել զարհուրելի քան զսովն սպառնայր նց. որ և խնդրէր զառաւել անմիջական իմն ուշադրութի. Հազիւ թէ Կոլոմպոս եթող զկղզին առ 'ի երթալ առ երկրագտութիւս, զինուորքն 'ի ներքոյ հրամանի Մարգարիտայ, որք եթէ ազատ մնացեալ էին 'ի խրատուէ և 'ի ստորակարգութենէ, անարժան համարեցան ինքեանց զնմ ազդ սանձի. փոխանակ հետևելոյ խոհական ազդմանց ծովակալին, ցրուեցան աստ և անդ ընդ կղզին յայնքան փոքրիկ խումբս. կեային ըստ հաճոյից 'ի վն ազգայնոցն, սպառէին զպարէնս նոցա, գողանային զկանայսն, և վարէին զայն անմեղ զարմ մարդկան ամ զինուորական ցոփութբ:

Յորքան Հնդիկք ունէին զյոյս, թէ չարչարանք իւրեանց վերջանալոց էին յաւուր միում, կամաւին մեկնելով անտի բռնակալացն, յարմարեցին զինքեանս առանց խոսելոյ, և ոչ ցուցին զտրտցաւուն իւրեանց. բայց յետոյ ծանեան, թէ լուծն լինելոց էր տեւողական, որ և էր անտանելի. Սպանիացիք շինեալ էին զքաղաք մի և պատեալ պարսպաւ, կանգնեալ զամրոցս 'ի զանազան տեղիս, փակեալ և ներմանեալ զյոլովագոյն դաշտս. որ էր քաջայայտ նշան, թէ ոչ գային առ 'ի այց առնել աշխարհին, այլ առ 'ի հաստատիլ անդէն. Թէպէտ թիւ օտարացն ոչէր երևելի, որպիսութի հողագործութն 'ի մէջ այնր անկիրթ ժողովրդեան էր այնպէս անկատար և այնպէս ճշդիւ չափակցեալ պիտոյից իւրեանց, զի մեծաւ դժուարութբ կարացեալ էին տալ զապրուստ նոր հիւրոցն. Ազգայինքն 'ի տարազս կելոյ իւրեանց էին անհոգք և պղերգք. Յագնապիչ տօթ նահանգին, բաղկացութիւն մարմնոց նոցա, որք բնականապէս

տկարք էին, և սակաւ սովորեալք աշխատալից վարժ-մանց, առնէին այնպէս, զի շատացեալ էին փոք-րիկ ինչ քանակութիւ կերակրոյ, և այս ևս ճիշդ աւելի քան զչափն. Մի մի մախծէի, կամ սակաւ ինչ հաց անհամ արարեալ յարմատոյ քասսա-տայի բաւէր պահել զմարդիկն. որոց ոյժ և ոգին ոչ յաղթէր իմիք ճգան կամ մարմնոյ կամ մտաց. Սպանիացիքն՝ թէպէտ և ժուժկալք 'ի գինւոյ ա-ռաւել քան զո՛ և իցէ այլ ազգս Եւրոպացւոց, երևէին նց անսահման շռայլք. Մի ոմն Սպա-նիացի ծախէր, որչափ ծախէին յոլով Հնդիկք. Այս յօժարութիւն, որ երևէր անյագ, ապշեցոյց զնս ցայն վայր, մինչև ենթադրել, թէ Սպանիա-ցիք թողեալ էին զսեպհական աշխարհ իւրեանց, վն զի ոչ գոյացուցանէր, որչափ բաւական էր նոցա անբաւ բաղձանաց կերակրոյ, և թէ եկեալ էին անդր 'ի խնդիր սննդեան. Այերն պահպանու-անձանց ստիպեաց զնս ըղձանալ 'ի բաց երթալոյ անտի ազգին, որ ապականէր զդուզնաքեայ պար-մանս նց. և անիրաւութիւքն, զորս կր..րն 'ի նո-ցանէ աճեցուցին զանհամբերութիւն. Հարուստ մի ժամանակ սպասեալ էին, թէ Սպանիացիք խոյս տացեն կամաւ իւրեանց. 'Ի վերջոյ ծանեան, թէ առ 'ի հեռացուցանել զաւերումն, որ կայր 'ի վե նց կամ գանդաղ իմն կրիւք չքաւորութե, կամ բռնութիւ թշնամեաց իւրեանց, 'ի դէպ էր պնդել զսիրտս, 'ի դիմի հարկանիլ նոցա միաւորեալ զօ-րութիւ. և վանել զնս 'ի կայիցն, որոց տիրա-ցեալ էին:

1494 Այսպիսի էին խորհուրդք. որք նախազօրացեալ
Ամրգ էին ընդհանրապէս 'ի Հնդիկս, յորժամ Կողոմ-
ըմբ պոս էհաս 'ի Եղիսաբեթ. Գործեալք սոքա 'ի
նշ. թշնամեացն, որոց ոչ արժանաւորեցան, և ըմ-բռնեալք 'ի մոլեգնութէ իմիք, որում փափուկ բնաւորութի նց արարեալ յատկապէս առ 'ի են-թարկիլ և տանել, երևէր անընդունակ, կային սպա-

սպասելով միայն անհարկութեան առաջնորդացն առ 'ի խուժել 'ի վ՛ր հաստոճածոյն . Ամենք 'ի քաղաքէից արդէն ըմբռնեալ և սպանեալ էին զբազումն յարանցն ցրուելոց . Արհաւիրք այսպիսի մօտալուտ վտանգաց վերածեաց 'ի միասին զՍպանիացիս . և հաստատեաց վերստին զաւագութիւն Կոլոմպոսի , ոչ տեսանելով զայլ երևոյթ ապահովութեան , բայց եթէ վստահանալ յառաջնորդութիւն նր̃ . Կարևոր էր յայնժամ դիմել 'ի զէնս . յորոց գործածութէ ընդդէմ Հնդկաց Կոլոմպոս միշտ խորշեալ էր մեծագոյն հոգածութբ̃ . Որչափ և անհաւասար կարէր երևել պատերազմն 'ի մէջ մերկ բնակչացն Նորոյ աշխարհի՝ զինելոց մնգովք , ցցովք կարծրացուցելովք առ հրով , փայտեայ սուսերօք կամ ոսկրածայր տիգօք կամ գայլախազ քարամբք , և 'ի մէջ խմբից ուսելոց զգինուորական կրթութիւս , և հանդերձելոց գործեօք ապականութեն , որք ծանուցեալ են յարհեստի Եւրոպական պատերազմի , պայման Սպանիացւոց ոչ էր կարի զերծ յահէն . Մեծ գերագունոյն թըւոյ կղզականացն ընդր բազմօք զայլ ած պակասութի նց . Նուան մի մարդկան , այսպէս խոսելով , երթայր ընդդէմ ողջյն ազգի միում . Զախող իմն պատահումն , կամ յապաղումն ինչ ոչ նախատեսեալ 'ի բացորոշել զվիճակ պատերազմին կարէր լինել ճակատագրական Սպանիացւոց . Խելամտեալ Կոլոմպոս , թէ բարեյաջողութիւն կախեալ կայր զուժգնութէ և զհապճեպոյ գործողուեց իւրոց , գումարեաց նոյնհետայն զզօրս իւր . Մ.Ջ. ոտքս վերածեալ էին 'ի փոքրիկ թիւ . Հիւանդութիւնք ծնեալք 'ի ջերմութէ և 'ի խոնաւութենէ երկրին ապականեալ էին սարսափելի մահեգնութբ . Ներհմտութիւն տակաւին ոչ էր ուսուցեալ զարհեստ բժշկելոյ զայն , կամ զզգուշութի անձնապահ լինելոյ յայնմանէ . Երկու երրորդք զինուականն բաղդորդաց էին մեռեալք . և բազումք 'ի կեն-

դանի մնացելոցն երեւէին անընդունակք կարող լինելոյ ծառայել. Գոնզալվոսն, որ պատրաստեցաւ, բաղկանայր միայն յերկերիւր արանց հետեւակաց, 'ի քսան ձիաւորաց, և 'ի քսան մեծամեծ շանց. որչափ և գտիցին օտարոտի վերջինքս այսօրիկ իբր մասն բաղկացուցիչ զինուորական զօրութեան, ոչ էին թերեւս նուազ ահարկուք և նուազ ապականարարք, յորժամ արձակեալ են ընդդէմ մերկ և ամենեւին երկչոտ ազգին. Ամենայն Կաղիկէք կղզւոյն, թող զԿուաքանահարի, որ
1495 պահէր յարաժամ զանխախտ իւր յարումն 'ի Սպա-
Մար- նիացիս, կային պատրաստ 'ի զէնս առ 'ի 'ի դիմի
տ. 24. հարկանել Քօլոմպոսի զօրօք, որք ամբարձեալ էին, եթէ պարտ իցէ հաւատալ վիպասանից Սպանիացւոց, 'ի հարիւր հազար արս. փոխանակ նախահոգալոյ քարշել զՍպանիացիս յանձուկս անտառաց և լերանց, եղեն այնպէս անխոհեմք բանակելոյ յարքունի Վեկային ընդարձակագոյն դաշտի երկրին. Քօլոմպոս ոչ ետ նմա ժամանակ ճանաչելոյ զայսպիսի իւր վրիպակ, և այլայլելոյ ընդիրս. Յանկարծակի եհաս 'ի վերայ գիշերայն, յորժամ գունդք անուսմունք անընդունակք են գործելոյ միաւորաբար և միաբան. և ընկալաւ 'ի վերայ նոցա զփերին իւր և զոչ արհնալից յաղթութիւն. Սարսափումն, որով լցեալ էին Հնդիկք վասն շառաչմանց արարելոց 'ի հրացան զինուց, յուժգին թափոյ հեծելոց և յամեհի յարձակմանէ շանց, էր այնպէս մեծ, զի ընկեցին 'ի գետին զզէնս իւրեանց, և փախեան առանց թեակոխելոյ ընդդէմ կալ. Բազումք սատակեցան, յոգունք կալանաւորեցան և գերի վարեցան. և մնացեալքն այնպէս ահաբեկք եղեն, մինչզի յայնմ վայրկենէ հետէ ետուն զանձինս 'ի յուսահատութիւն, 'ի բաց թողլով զխորհուրդ դիմակաց լինելոյ յարձակողացն անյաղթելի համարելոց 'ի նոցանէ :

(20) ‖ Պէռնալտէս հոգաբարձուն պալատան ժամանակակից պատմագիրն ասէ, թէ վեցհարիւրք յոյզ գերեաց առաքեցան 'ի Սպանիա, և վաճառեցան հրապարակաւ 'ի Սեւիլիա. բայց վասն փոփոխութեան կլիմային, և վն անընդունակութեան նց 'ի հանդուրժել աշխատանաց և տաժանմանց՝ մեռան ամենեքեան 'ի սուղ ժամանակի. Ձեռագիրն է առիս : ‖

·Քոլոմպոս պարապեցաւ յետ ամաց ինչ շուրջ յածիլ զկղզեաւն, և նուաճել զայն ընդ կառավարութեամբ Սպանիացւոց առանց պատահելոյ անդէն դոյզն ինչ հակառակութեան. Եդ զհարկ ինչ նց. Ամ. Տեառն 'ի ՌՇ ԻԵ. 'ի վն բոլորեցուն բնակչաց, որք անցեալք էին զչորեքտասան ամօք. Որք և իցէ անձն, որ կայր յայնմ նահանգի, ուր գտանիւր ոսկի, պարտաւանդեալ էր վճարել յամ երիս ամիս զայնչափ փոշի ոսկւոյ, որ ընդր զբոժոժ մի բաղէի. և 'ի բնակչաց այլոց մասանց գաւառին պահանջեցան քսան և հինգ լիտր բամբակի. Այս եղև առաջին կանոնաւոր սակարկութիւն 'ի վն Հնդկաց. և եղև իբր կարապետ առ բաժս առնել անտանելիս. Բայց այսպիսի ծանր հարկադրութիւն բնաւին ներհակ էր սկզբանցն, զոր Քոլոմպոս ցայնժամ յեղյեղեալ էր վերահայեցմամբ եղանակին վարելոյ զժողովուրդսն զայնոսիկ. Այսպիսի լծակցութեան սկսաւ նեւթիլ դաւաճանութին առ արքունիսն Սպանիոյ, և զանխլաբար առ'ի կողոպտել զնա յիշխանութէ իւրմէ, և աղարտել զգործած իւր. որ և ստիպեաց զնա 'ի բաց դնել զիւր ոճ մատակարարութեն. Զանազան միասկար տեղեկութիւք զգնացից իւրոյ և զգաւառաց գտելոց 'ի նմանէ վաղվաղ փոխանցեալ էին 'ի Սպանիա. Մարգարիտա և Պոյիլ գտանէին յայնմ ժամանակի յարքունիսն. և առ 'ի արդարացուցանել զգործս իւրեանց և թաքել զոխս իւրեանց, սպասէին չարախօս ուշադրութե պարապոյ սպրդելոյ

և սիրելոյ զամբաստանութիւն 'ի տուգանս նորա. Նազումք 'ի պալատն անդ Հայելին յանձնեալ համբաւն և 'ի կարողութեն Քոլոմբոսի յաջողկոտ աչօք. Փոնսեքա սա կաւափայն Սիվիլլիոյ, որում հաւատացեալ էր նաւապետական ուղղաւորութիւն իրակուեց Հնդկաց. յղացեալ էր զայնպիսի անբարի գաղափար զՔոլոմբոսէ մի պատճառացն, զորս ժամանակակից պատմագիրք ոչ են յիշատակեալ, զի եդ զաշաւու ունկն ամ պարսաւանաց ընդդէմ նր. Այլ էր դիւրին օտարականի ումեք, որ զուրկ էր 'ի բարեկամաց և անվարժ յարուեստակութիւն արքունականաց, ընդդէմ կալ մեծանունեաց այնքան թշնամեաց. Նուես Քոլոմբոս, թէ գոյ միմիայն հանգամանք ա 'ի վերամբարձ ունել զհամբաւ իւր, և խնուլ զբերան հակառակորդաց իւրոց. Պիտոյ էր բերել զայնպիսի իմն քանակութի ոսկւոյ, որ ոչ միայն արդարացուսցէ զայն, զոր ընկալեալ էր 'ի սեփ փարթամութեն յաշխարհացն գտելոց, այլ և քաջալերեսցէ զՖերտինանտոս և զԻզաբէլլա 'ի յարատեւել 'ի դիտման իւրեանց. Զարկն ստանալոյ զայն՝ բանադատեալ էր զնա դնել զայնպիսի իմն ծանր սակ 'ի վր Հնդկաց. և պահանջել 'ի նոցանէ վճարումն ծայրագոյն խստութի, որ կարէ անբասիր առնել զնա մի լինելոյ իւրոյ հեռացեալ յայսմ աւթի 'ի հեզութէն և 'ի մարդասիրուէն. զոր միօրինակ 'ի գործ ածեալ էր միշտ ընդ տարաբախտ ժողովրդեանն ընդ այնմիկ:

Ո՞րչափ պատճառ էին արգասիք այսր հայրենեաց Ամերիկոյ.

Աշխատութիւն, փոյթքն, և նախապատրաստութիւն, որով Հնդիկք պարաւանդեալ էին վարել 'ի պաճարեն զհարկն խնդրեալ 'ի նոցանէ, երեէր եւ մեծագոյն չարեաց՝ մարդոց սովորելոց անցուցանել զաւուրս իւրեանց յանխորհուրդ իմն և 'ի պալարտ անհոգութեն. Էին նոքա անընդունակք այսպիսի իմն սեպհական և յարակայ մտավարժութեն. և ազատութի նց զգայր յայնմանէ զճլն-

հում

շուէն իմն այնչափ անհաճոյական, մինչզի առ 'ի թեթեւանալ յայսմ լծոյ դիմեցին առ որոշումն իմն, որ ցուցանէ զչափազանցութիւն անհամբերութեան եւ յուսահատութեան. կերպաւորեցին զխորհուրդ թողլոյ մեռանել 'ի քաղցոյ զճնշօղսն զայնոսիկ, զորս ոչ իշխէին վանել. եւ ճանաչմամբն, զոր ունէին զորկորեայ յօժարութէ Սպանիացւոց կնքեցին, թէ գործն էր անշուշտ կատարելի. Ապա խափանեցին զբոլոր աշխատութիւս հողագործութեան. ոչ սերմանեցին զմախծէ, խլեցին արմատաքի զմանիոք, որ տնկեալ էր. եւ խոյս տալով յառնել անմատոյց թագստարանս լերանց, թողին մերկ զդաշտս թշնամեաց իւրեանց. Այս մոլեգին որոշումն յառաջ եկած ըստ մասին զարգասիւն, զորս սպասէին անտի. Սպանիացիք վերածեալ եղեն 'ի խորագոյն կարիս. բայց ընկալան պարէնս այնպէս առատս յԻսպանիոյ, եւ գտին զայնքան նպաստս յուշիմութէ եւ 'ի մտավարժութեն իւրեանց, զի ոչ արարին զմեծ կորուստ ազգին. եւ տարաբաղդիկ Հնդիկք եղեն զոհ վատախորհուրդ քաղաքականութեն իւրեանց. Անբաւ իմն բազմութիւն փակեալ 'ի մէջ 1495 ամուլ լերանց առանց ինչ կերակրոյ՝ բաց յայնմանէ, զոր ինքնին բերէր երկիրն, փորձեաց վաղվաղակի զսոսկալի պատուհաս քաղցուն. Այս եբեր ընդ իւր զտարափոխիկ հիւանդութիւս. եւ յընթացս սակաւ ամսոց կորեաւ աւելի քան զերրորդ մասն բնակչաց կղզւոյն յետ կրելոյ զթշուառութիւ յամ պէսպէս կերպարանս իւր :

Հնարք ընդդէմ Կոլոմբոսի յարուցանեն

Մինչդեռ Կոլոմբոս այսպէս յաջողաբար ապահովացուցանէր զհիմունս Սպանիական մեծութեն 'ի նոր աշխարհին, գուն գործէին թշնամիք իւր անխոնջ հանապազորդութե զրկել զնա 'ի փառացն եւ 'ի մրցանակացն, առ որս ծառայութիւնք իւր եւ չարչարանք սահմանէին զնա. Անխորշելի գժուարութիւնք 'ի նորոգ հարցնութեան իմիք, աղէտք Աղպատճառեալք յանառողջ կլիմայէ, տառապանք, նեղ.

որք ընկերակցին ճանապարհորդութեան իմիք ընդ անծանօթ ծովս էին բովանդակ ներկայացուցեալք իւր պտուղք անհանգիստ և անխոհեմ փառասիրութեան նր. Յառաջատես հսկողութի իւր 'ի պահելն զխրատ և զստորակարգութին, կոչեցեալ էր տարապայման խստութի. պատիժքն, զորս տայր ապստամբելոց և աղատաւորաց՝ համարեալ լինէին անգթուի. Այսպիսի ամբաստանութիք գտին զայնքան հաւատարմութի 'ի նախանձաւոր արքունիսն, մինչ զի եանց 'ի սահմանել զպատուիրակ մի, որ երթայցէ 'ի Սպանիոլա 'ի նշմարել զգնացս Կոլոմպոսի. Յանձնարարութք հակառակորդաց իւրոց՝ Ակուատոս անարգ սպասաւոր սենեկի յարքունի պալատան եղև անձն, որում այս ծանրակշիռ պատուէր հաւատացաւ. և այսպիսի ընտրութեամբ ցուցաւ, թէ շարժեալ էին առաւել 'ի ծառայական ըղձուէն, զոր Ակուատոս ունէր առ առանձնական շահս նց, քան թէ յընդունակութէ նր առ պաշտօնն. Սա փքացեալ ընդ յանկարծական ամբարձման իւրոյ, եցոյց 'ի կատարմունս պաշտա-
1495 ման իւրոյ զամ սնոտի անձնահաճութի ան մեծի գործոյ. և վարեցաւ ամ զզուելի լրբութք. որ է բնական ցածուն հոգւոց, յորժամ տեսանին ամբարձեալ յանակնկալ արժանաւորութիս, և 'ի գործածեալ առ պաշտօնս ոչ հաւասարեալս ինքեանց. Սա մատուցանելով ունկն առ ամ ամբաստանութի ընդդէմ Կոլոմպոսի. և գրգռելով ոչ միայն զոժգոհ Սպանիացիս, այլ և զհնդիկս 'ի լու ածել զգանգատանս իւրեանց կամ ճշմարիտս կամ երևակայականս՝ տածեաց զոգին երկպառակութէ 'ի կղզւոջն, առանց 'ի ներքս ածելոյ զկանոնաւորութիւն ինչ հրապարական օգտի, կամ աք դիմեցէ 'ի վերուղղել զանիրաւութիւն, որոց ատելեօքն ըղձանայր ծանրացուցանել զմատակարարութի ծովակալին. Ճանաչելով Կոլոմպոս, թէ որչափ ցածուն լինելոց էր կայսերութէ

իւր

իւր, եթէ մնայր յերկրին յայնմիկ 'ի ժամանա-
կին, յորում աչառու դէտ մի նշմարէր զշարժ-
մունս իւր. և խոչընդոտն լինէր իրաւարանութե̃ն
իւրում, եդ 'ի մտի դարձ առնել 'ի Սպանիա՝
խորհրդակալ առաջի առնելոյ զկատարեալ իմն պատ-
մութի բովանդակ գործողութեանց իւրոց, և մաս-
նաւորաբար նկատմամբ յօգուածոցն 'ի վճարա-
նութեն եղելոց 'ի մէջ նր և հակառակորդաց իւ-
րոց, աչաց Ֆերտինանտոսի և Եղիսաբեթի. յո-
րոց արդարութե և ընտրողութե սպասէր նա զհա-
ւասար իմն և զնպաստաւոր որոշումն. Յանձն ա- 1496
րար զկառավարութիւն իւրոց կղզւոյն 'ի միջոցի բա-
ցակայութեն իւրոյ ե̃ն Բարթողոմեայ եղբօր իւ-
րում անուամբ ետեղակալ կառավարի. Բայց տա-
րաբաղդ իմն ընտրութի, և որ եղև աղբիւր ան-
բաւ տառապանաց վն հատուածոյն, եթող ան-
դէն զՖրանչիսկոս Ռոլտանոս առաջին դատաւոր
ընդարձակագոյն ևս իշխանութի:
'Ի դառնալն Քրիստոփորի Քոլոմպոս կալաւ զըն- [illegible]
թացս ինչ տարբեր յայնմանէ, զոր կալեալ էր նոյ 'ի
յառաջնում ճանապարհորդութեն իւրում. Տարա- [illegible]
ծեցաւ ընդ արևելս 'ի Սպանիոլայէ 'ի մէջ զու- [illegible]
գահեռականի քսան և երկու աստիճանաց, չև ևս
ծանուցեալ փորձառութի զստուգագոյն և զհեշ-
տագոյն ուղին ուղղելոյ ընդ հիւսիս առ 'ի պատա-
հել 'ի մէջ հողմոց հարաւային արևմուից. Պատ-
ճառաւ այսր անզգաստ ընտրութե, որ 'ի տղայութե
նաւարկութեն 'ի մէջ նոր և հին աշխարհի հա-
զիւ կարէ համարիլ ծովակալին իբր պակասութի
ընդունակութեան, գտաւ նա արտադրեալ անլուա 1496
տաժանմանց և վտանգաց 'ի յաւէժական իմն հա-
կառակութեն ընդ Մուսոնեայ, այս է, ընդ հողմոց
կոչեցելոց վաճառականութե. որք շնչեն առանց
այլայլելոյ յարևելից 'ի մէջ արևադարձից. Ընդ-
դէմ նմ գրեթէ անյաղթելի դժուարութեանց յայնմ
ճանապարհի տոկաց նա իւր սովորական համբե-
րու-

թութեան և հաստատութեան. բայց այնպէս սակաւ գնաց յառաջ, զի եկաց զերիս ամիս առանց երբէք տեսանելոյ ցամաք. ՚Ի վերջոյ սկսան պակասիլ նոցա ուտելիք. խուժանն վերածեալ էր առ ողորմելի բաժին վեց ունկեաց հացի յաւուրն առ բերան. և ծովականն ևս ոչ մնանիւր բարեգոյն քան զհուսկ յետին նաւավարն. Յայսմ վերջին վհատութեան պահեաց զմարդասիրութիւն, որ տրոհէ զյատկութիւն իւր. և հրաժարեցաւ ՚ի զիջանելոյ միսկական և ՚ի կրկնեալ ժտանս արանց իւրոց. յորոց ոմանք առաջադրէին կերակրել Հնդիկ կալանաւորօքն, զորս ածէին ընդ իւրեանս, մինչ այլք պնդէին ընկենուլ զնս ՚ի ծով առ ՚ի նուազեցուցանել զծախուծս ամենադժնդին ապրուտից իւրեանց. Յանդիման արար նոցա, թէ և նոքա էին անհատք մարդկայինք, եկեալք ընդ հասարակաց թշուառութեան ՚ի նոյն պայման իւրեանց, և յաւտիճանի բաժանորդ լինելոյ նմին ճակատագրին. Աւագութիւն իւր և իրաւացի յանդիմանութիւնքն իւր ցրեցին զմոլեգին գաղափարսն թելադրեալս ՚ի յուսահատութենէ. և ոչ կալան այսուհետև ժամանակ այլ ևս յանդիման լինելոյ. որովհետև էհաս նա վաղվաղակի ՚ի տեսութիւն ծովեզերն Սպանիոյ. ուր բովանդակ երկիւղք և չարչարանք իւր աւարտեցան:

Ընդունելութիւն է ՚ի Սպանիա.

Քօլոմպոս ընդունեցաւ յարքունիսն չափաւոր և որոշ վստահութեամբ մարդոյ խելամտեցելոյ ոչ միայն զանմեղութէ իւրմէ, այլ և զնշանաւոր ծառայութեան, զորս արարեալ էր. Ֆերտինանտոս և Իզապելլա իբր շառադնեալք ընդ գիւտութեան իւրեանց ՚ի մատուցանել զունկն սնոտի և անհիմն ամբաստանութեանցն, ընկալան զնա այնպէս սեպհական նշանօք մեծարանաց, զի ամօթալից արարին զթշնամիս նր. Ըստգտանք և զրպարտութիւնք նոցա ոչ ևս նկատեցան յայնմ ընթացութեան. Ոսկին, մարգարիտք, բամբակն և այլ տարազք արժողութեան,

զոր

զոր Կօլոմպոս առաջի արար, երեւէին լրապէս ներհակիլ այնմ, զոր տրտնջօղք հրապարակեալ ծին զաղքատութէ երկրին. Աերածելով զՀնդիկս 'ի հնազանդութի, և դնելով 'ի վր նց զօսկ իմն կանոնաւոր ապահովացուցեալ էր նա Սպանիոյ զմեծ բարգաւաճումն նորոց հպատակաց և զհաստատութի հասից ինչ, որ խոստանայր լինել երեւելի, 'ի հանքացն, զոր նա գտեալ էր և չափեալ, բղխէր աղբիւր իմն զանձուց միշտ ծոխացունից. Թէպէտ և մեծամեծք և անակնկալք էին շահքս այսոքիկ, Կօլոմպոս ստորագրեաց զայնս իբր նախաշաւիղս ապագայ ստացուածոց. և իբր առհաւատչեայ առաւել նշանաւոր երկրագտութեց. զորս նա տակաւին խորհէր, և առ որս այլք արդէն արարեալք 'ի նմանէ առաջնորդելոց էին զնա դիւրութե՛ և ստուգութե՛:

Հաստուն իմն քննութի այսպիսի պարագայութեց արար զայնպիսի տպաւորութի 'ի վր Եղիսաբեթի մինչզի պանծացաւ կամել լինել պաշտպան բովանդակ ձեռնարկութեցն Կօլոմպոսի. և ներգործեաց նմանապէս 'ի հոգւոյն Ֆերտինանտոսի. որ գոլով 'ի սկզբանէ յայտ արարեալ զոչ հաւանելն իւր ը այսպիսի խորհուրդ, տակաւին երկբայէր զյաջողութէ նր. այնպէս զի որոշեցին երկրքեան մատակարարել հատուածոյն 'ի Սպանիոյ՝ զինչ որ ինչ կարէր առնել զայն տեւողական իմն հարգանութի. և հանդերձել զԿօլոմպոս նաւահանդիսիւ միով, զի եղիցի յաստիճանի երթալոյ 'ի խնդիր այնց նորոց կողմանց, զորոց ըղգոյութէ երեւէր ամենեւին ստոյգ. Խորհուրդք առաւել յարմարք 'ի կատարել զայսոսիկ երկուս յանձնառութիս խորհեալ եղեն ընդ Կօլոմպոսի. Երկրագտութիւն լեալ էր միայն առարկայ առաջին ճանապարհորդութեն առ Նոր աշխարհ. և Թէպէտ յերկրորդին նպատակ էր տնկելն զհարգանութի իմն, զգուշութիք 'ի գործ ածեալք առ

այս

այս վախճան էին լեալ անբաւականք վասն ամբոխեալ ոգւոյ Սպանիացւոց, և վասն ոչ նախատեսեալ թշուառութեանցն յառաջ եկելոց 'ի պէսպէս պատճառաց. Այժմ պարտ էր կերպաւորել գաղափար ինչ կանոնաւոր իմն հաստուածոյ առ 'ի լինել յարացոյց բովանդակ առ յայսոյ բազմամարդութեն. և վասն այսորիկ իմ մասնաւորութիւն արժանի էր ուշի ուշով նկատեալ լինելոյ և կարգադրեալ ճիշդ խնամատարութեամբ. Որոշեալ թիւ բաղկորդացն, որոց թողացուցեալ լինէր մտանել 'ի նաւ, արդէն հաստատեալ էր. Սոքա պարտ էին լինել 'ի զանազան աստիճանաց. և յառաջադիմութիւն իւրաքանչիւր ուրուք վճռեալ էր ըստ պիտանութեան իւրեանց և ըստ պիտոյից հաստուածոյն. Հաւասարեալ իմն թիւ կանանց ընտրիւր առ 'ի ընկերել հաստուածորդացն. Եւ լինելով առաջին առարկայ բուսուցանելն զպարէնս յաշխարհի միում, ուր չքաւորութիւն կերակրոյ լեալ էր առիթ այնքան չարեաց, պիտոյ էր և փոխաբերել անդր զերեւելի իմն բազմութիւն գիւղականաց. Եւ քանզի Սպանիացիք ոչ ունէին յայնժամ զգաղափար ինչ հանելոյ զշահս յայնց բերոց նորոյ աշխարհին, որք յետոյ մատակարարեցին զփոխադարձն այնպիսի մեծամեծ իրաց Եւրոպիա, այլ կերպաւորէին զայսս մեծագործս և շահեկանս, հայելով 'ի հարստութիւս պարունակեալս 'ի հանքս գտեալս 'ի Նոյանէ, խորհեցան նախահոգալ զհոյլ ինչ ընդունակ գործաւորաց 'ի զանազան արուեստս հանելոյ և զտելոյ զմեծագին մետաղս. Ամենեքին սոքա պարտ էին ունել և զվճարս և զապրուստս ընդ ամս ինչ հրապարակական ծախուք:

Պակասութիւն յաջող յառաջադիմութեան.

Մինչև ցայսվայր կանոնաւորութիւքն էին բովանդակ յառաջատեսք և կարի քաջ յարմարեալք առ վախճանն, որ էր դիտեալ. Բայց նախատեսանելով, թէ սակաւք դիմադրաւ լինելոց էին յօժար կամօք առ 'ի հարդունանալ յաշխարհի միում, որոյ

մնա-

վնասակար կլիմայն լեալ էր մահաբեր այնքանեաց 'ի հայրենակցաց իւրեանց, Քոլոմպոս եդ առաջի փոխաբերել 'ի Սպանիոյ զչարագործսն զայնոսիկ, որք լեալ էին յաղթահարեալք 'ի յանցանս, որ թէպէտ և գլխապարտութեն, երևէին ոչ յոյժ դժնեայ սեռ, և թէ առ յապայն որոշեալ ինչ բաժին մեղապարտոց առաքելոց սովորաբար 'ի կալերս՝ դատապարտելոյն յաշխատութիս հանքաց, զորս պարտ էին բանալ. Այս խորհուրդ տուեալ առանց պատշաճաւոր շրջահայեցութեն, անխորհրդաբար ևս եղև ողջագուրեալ. Բանտք Սպանիոյ դատարկացան առ 'ի գումարելոյ զանհատս մի խորհեալ բազմամարդութեն. և դատաւորք ընկալան զհրահանգ պարտական լինելոյ լռացուցանել զթիւ նց յաջորդական դատավճռով իւրեանց. Բայց հիմունք նորոյ իրիք ընկերութեն սահմանեցելոյ 'ի լինել յարակայ, ոչ պարտին արկանիլ նմանակ ատաղձօք. Անավարժութի, զգաստութի, համբերութի և փոխադարձ վստահութի պահանջէին անտնօրինելաբար 'ի նոր ինչ հաստատութի, ուր մարդկութի բարոյականութե պարտի օժանդակել հաստատութե կարգին առաւել քան ըզգործողութի կամ զաւազութի օրինաց. Երբ այսպիսի իմն խառնուրդ ապականութե ընկալեալ է 'ի սկզբնական բաղկացութեն քաղաքական մարմնոյ իրիք, ախտք այնց հիւանդ և անբժշկելի անդամոց ապականեսցեն հաւանականաբար զբոլորն. և յառաջ ածցեն անվրէպ զբանական և զամենաթշուառ հետևութիս. Փորձեցին զայն դառնութի 1496
Սպանիացիք, և այլազգք Եւրոպականք, հետևելով 'ի մտոյ սովորութեն նց յայսմ մասնաւորի. և յառաջ եկին յայնմանէ վնասակար գործք 'ի հարդունութիս իւրեանց, որք ոչ կարեն առագրել այլոց պատճառաց:

Թէպէտ Քոլոմպոս ընդունէր մեծաւ զխրութ և արա- Ի գործ
դուն զարքունի հաւանութի ամ չափմանց և կանոնաց դնի
առաջադրելոց 'ի նմանէ, բայց փոյթք իւր դնե- դան-

ԼՍ դար:

քոյ վայնս 'ի գործ եղեն այնպէս յամեցուցեալք , զի պարտաւեցուցին զՀամբերութին անձանց ոչ սովորելոց Հանդիպելոյ և յաղթելոյ դժուարութեանց . Յապաղումն պատճառէր մասամբ իմն 'ի տարակուսի կնոպականութէ և 'ի Հոգւոյ վաղարկութեն , որով Ապանիացիք ընդ ածէին զերակութիս . և մասամբ իմն 'ի ցածուն վիճակէ զանձարանին սպառեցելոյ այն ինչ 'ի ծախուցն եղելոյ 'ի Հանդիսի ամուսնութեան մի միայն դստեր Ֆերտինանտոսի և Եղիսաբեթի ընդ մարգարիտայ Աւստրիոյ , և Յոհաննայի երկրորդ դստեր նց ընդ Փիլիպպեայ արքիդուքային Աւստրիոյ . բայց առաւել քան առ այլ՝ մարթ է վերագրել առ չարամիտ արուեստակութիս թշնամեացն Կոլոմբոսի . Աքանչացեալ ոճ ընդ ասպնջականութիւն , զոր ընկալեալ էր 'ի դարձի իւրում, և զուՀի Հարեալք 'ի ներկայութէ նր , թողին առ ժամանակ մի երթալ ընդ ճանապարՀ իւր զուղխ ին- շնորՀաց կարի ուժգին առ 'ի Հնարել զբաղեցուցանել զնա . Սակայն թշնամութիւն նց կարի Հնացեալ ոչ կարէր ընդ երկար մնալ անգործ . Սերտին ձեռնարկին 'ի չարաՀնար գործողութիս իւրեանց . և ձեռնտուութ Ֆոնսեքայի մատակարարի Հնդկային իրողութեց , որ յառաջ չարժեալ էր յայնժամ առ Եպիսկոպոսութի Պատայօսայ , եդին զայնքան խռչս առ 'ի յապաղել զնախապատրաստութիս առաքմանն Կոլոմբոսի , մինչզի անց տարի մի , յառաջ քան զկարող լինել նր նախաՀոգալ զերկուս նաւս առ 'ի փոխաբերել զմասն ինչ զարմանոցն սաՀմանելոց վասն
1498 Հատուածոյն . և գրեթէ ամք երկու ծախեցան
Երրորդ նախ քան զտեսանելն Հանդերձեալ զփոքրիկ նա-
ճանա- ւախումբն , զորոյ նա ինքն առնլոց էր զՀրամանա-
պարՀոր տարութիւնն :
դութի Խաղկանայր նաւաՀանգէսն 'ի վեց նաւուց , որք
Կոլոմ- ոչ էին մեծ քանակութե , և զարմանեալք յոյժ
բոսի. թեթեւապէս վն երկայն և վտանգաւոր նաւար-

կու-

կութեն իւրք. Ճանապարհորդութիւն, զոր խոր-
հէր նա, պարտ էր լինել ընդ ընթացս ինչ տար-
բերս յայնց, զորս կալեալ էր յառաջ. Խելամուտ
լեալ, թէ բերրի կողմանքն Հնդկաստանի կան ի
հարաւային արեւմուտս երկրացն գտելոց 'ի նմանէ,
ընտրեաց իւր զստուգագոյն ճ՛ ունելոյ զնէքն ուղղակի
ի հարաւակողմն Կանարեայց կղ. Գափօվերտեայ,
մինչեւ ժամանեսցէ 'ի գիշերահաւասար գիծն, եւ յայն
ժամ գնալոյ ի արեւմուտս նպաստիւ հողմոյն, որ շնչէ
անպայպելի 'ի մէջ արեւադարձից, Այսպէս առա- 30. Մայ.
գաստեաց. եւ դիպեցաւ նախ 'ի Քանարիայսն, եւ Ե—է.
ապա 'ի կղզիսն Գափօվէրտեայ. Յառաջնոցն ա-
ռաքեաց զերիս 'ի նաւուց իւրոց հանդերձ նպա-
րակօք վն ժողովրդեան Սպանիոլայի. Երիւք այ- 1498
լովքն շարունակեաց զգնացս իւր ի հարաւակողմն. Յուլ. 4
Անդ պատահեցան նշանաւոր պատահմունք, մինչեւ
հասին 'ի ներքս հինգ աստիճանաց հասարակածին.
Յայսմ վայրի եկն 'ի վր հանդարտութիւն ինչ ծո-
վու. եւ 'ի նմին ժամանակի աճեաց տօթն այնպէս
չափազանց, մինչ զի բաղումք 'ի տակառաց գինւոյ
նց ճայթեցան, յոյլս հեղանիւթն թթուեցաւ. եւ
ապականեցան պարէնք նց. Սպանիացիք, որք ոչ
երբէք համարձակեալ էին այնչափ հեռի ընդ հա-
րաւակողմն, երկնչէին, թէ գուցէ նաւքն առցեն
հուր. եւ սկսան կասկածիլ զճշմարտութէ այնր,
զոր երեւակայեալ էին նախնիք 'ի վր ապականիչ
որակութե այնր տօշորիչ կողման երկրագնտոյս.
Եկն 'ի սփոփել զնն ըստ մասին յերկնից իւր-
եանց անձրեւ իմն դիպաւոր. բայց այս՝ թէպէտ եւ
ջաղբ եւ անոյշ դհատ, այնպէս զի ոչ կարէին մար-
դիկ կալ 'ի վերայ տախտակամածին, ոչ բաւեաց
մեղմացուցանել կարի իմն զզժնէութիւն տօթոյն.
Ծովակալն, որ սովորական արթնութբ իւրով
կանոնաւորեալ էր զամ գործողուի անձամբ ան-
դստին 'ի սկզբանէ ճանապարհորդութե իւրոյ, էր
այնպէս ձնշեալ յաշխատութէ եւ 'ի պակասութէ

քնոյն

քնոյն, զի ըմբռնեցաւ 'ի բուռն իմն յօդուածացաւութեան հանդերձ ջերմամբ. Այս ամ պարակայուէք պարաւանդեցին զնա յաղթիլ 'ի թախանձանաց խուժանին, և այլայլել զընթացս իւր 'ի հիւսիսային արևմուտս, նպաստաւոր ժամանելոյ առ մի 'ի կղզեացն Քարրիպպեայ. ուր մարթացի գտանել զապաւինութիւն և կազդուրել զարենիւք:

Գտանէ զցամաքըն Ամերիկոյ. Յառաջնումն օգոստոսի այրն, որ կայր 'ի գագաթն փոքրիկ առագաստին, հիացոյց զնա աղաղակելով հրճուանօք՝ ցամաք ցամաք. Դիմեցին յայն կողմն. և տեսին զկղզի մի երևելի. զոր ծովակալն կոչեաց Թրինիթա՝ Երրորդութի անուն, զոր մինչև ցայժմ պահէ. Կայ այս կղզի առ ծովեզերբն
1498 Կուխանայ մօտ 'ի բերան Օրինոքոս գետոյն. որ թէպէտ և երրորդ կամ չորրորդ է մեծութբ 'ի Նոր աշխարհին, գերազանցէ մեծապէս քան զայնս բովանդակ, որք ոռոգանեն զկիսագունտն մեր. Արբէ Ովկիանոսն զայնպիսի մեծ մարմին ջուրց, և թափի անդէն 'ի ներքս այնպիսի ուժգին բռնութբ, մինչզի յորժամ պատահէ կոհակաց, որք յայնմ եզեր համբառնան 'ի տարապայման իմն բարձրութի, ընդհարումն նց պատճառէ զուռուցումն իմն և զայգս ալեաց ոչինչ ընդհատ ապշեցուցիչս, որչափ և ահարկուս. Յայսմ մրցման զօրանան ցայնվայր աննահանջելի յորձանք այնր գետոյ, զի յետս մղեն զՈվկիանոսն բազում փարսախս յանկանիլն անդր ուժգնութբ իւրով. Քօլոմպոս մինչև կարողացեալ էր տեսանել զվտանգն, գտաւ մձձեալ 'ի մէջ հակադրեալ և մրրկալից ալեացն. և մեծագոյն դժուարութբ յաջողեցաւ նմա զերծանել ընդ փոքրիկ նեղուց մի, որ երևեցաւ նմա այնպէս սարսափելի. մինչզի կոչեաց զայն բերան վիշապի. Իսկոյն իբրև շուարումն պատճառեալ յայսպիսի պատահարէ թողացոյց նմա խորհիլ 'ի վր բնութ այսպիսի իմն նոր երևութի.

եգիտ նա զառիթ ինչ քաղաքերութն և յուսոյ . Հետևեցոյց , և իմաստութբ̅ իսկ , թէ այն աշա- գին քանակութի ջուրց պարունակեալ յայսմ գե- տոյ ոչ կարէր արձակիլ 'ի կղզւոյ իմեքէ . այլ թէ պարտէր հոսիլ ընդ անբաւ տարածութի ինչ երկ- րի . և թէ հետևաբար ժամանեալ էր յայն շա- րունակն , որոյ ծանօթութին լեալ էր այնպէս ը̅ երկայն ժամանակ առարկայ փափագանաց իւրոց . Քաջալերեալ յայսմ վստահութեէ թեքեաց զըն- թացս ը̅ արևմուտս առ ծովեզերօք այնց գաւա- ռաց , որք վարին այժմ ընդ անուամբ Փարիսյ և Քումանայ . Էարկ խարիսխ 'ի զանազան տեղիս . և կալաւ զխօսակցութի ինչ ընդ բնակչացն , որք նմանէին բնակչացն Սպանիոլայի 'ի տեսիլն և յե- ղանակն կելոյ . Արկէին իբր զարդս զփոքրիկ կտորս ոսկւոյ գործեալս , և զմարգարիտս երևելի ար- ժողութեամբ . զորս փոխանակէին կամակար ընդ չնչին իրացն Եւրոպացւոց . Երևէին լինել օժ- տեալք լաւագոյն իմացողութբ̅ , և առաւել քաղաքար- տութբ̅ քան զկղզականսն . Երկիրն յառաջ ա- ծէր զպէսպէս ազգս չնչաւորաց չորքոտանեաց , թռչ̅ և զմեծ պէսպիսութի երէոց և պտղոց . Ըն- չափ հաճոյ եղև ծովակալին գեղեցկութի իւր և բերրիութին , մինչզի հանդերձ հիացմամբ գոմանն , որ յափշտակէր զնա , պատկերացոյց ինքեան , թէ իցէ դրախտն ստորագրեալ 'ի սբ̅ գիրս . և զոր ա- մենակալն ընտրեաց վն̅ բնակութե մարդոյ , ցոր- չափ եկաց անմեղ , և արժանի նմանակ իմն բնակութե ։ (21) Երևի , թէ Քօլոմպոս կերպաւորեալ իցէ զկարծիս ամենևին եզականս հայեցմամբ երկրացն գտելոց յիւրմէ . բուռն կոհակին և յուզին ջուրց 'ի մջ̅ եղեր Օրինոկային` ներածեաց զնա հետևե- ցուցանել , թէ այս էր բարձրագոյն մասն հողա- ջրեայ գնտոյս . և պատկերակերպեաց . թէ պէս- պէս պարակայք զուգընթանային 'ի հաւաստել , թէ ծովն աստէն երևելաբար ամբարձեալ էր . Ընծայե-

քով նա հաւատս այսմ մոլորական սկզբան, առե-
րեւոյթ գեղեցկութի աշխարհին եւ նմա անկանիլ 'ի
կարծիս ասպետին Մանտեվիլեայ, այսինքն թէ
երկրաւոր դրախտն իցէ բարձրագոյն տեղին երկ-
րի. և հաւատաց՝ լեալ այնպէս բաղդաւոր գտա-
նելոյ զայս երջանիկ բնակութի. Ոչ պարտի ե-
րեւիլ օտարոտի իմն, թէ անձն որ այնքան զգօնա-
միտ թողուցու զինքն ձգեալ 'ի կարծիս, կամ 'ի
պատմութիւն այնպիսի առասպելական հեղինակի,
որպէս էր Մանտեվիլէ. Քոլոմպոս և այլք երկ-
րագործք պարաւանդեցան զհետ երթալ այնց ա-
ռաջնորդաց, զորս կարէին գտանել. և տեսանի
եւս 'ի զանազան տեղիս ձեռագրի հոգաբարձուին
Պէռնալտեայ բարեկամին Քոլոմպոսի, թէ յայնմ
դարու ոչ էր փոքր համարումն, որ տուեալ լի-
նէր վկայութեանն Մանտեվիլեայ։

1498 Այսպէս ստացաւ Քոլոմպոս զփառս ոչ միայն
գտանելոյ յօգուտ ազգի մարդկան զգոյութի նո-
րոյ աշխարհի, այլ և արար զերևելի յառաջադի-
մութիս, ստանալով զայնմանէ զճանաչումն. և
եղև առաջին, որ էած զՍպանիացիս յայն մեծ
ցամաք. որ եղեալ է նախապետական աթոռ կայ-
սերուն ն҃ց, և աղբիւր հարստուն ն҃ց յայս մասն երկ-
րագնտոյս. Խախուտ վիճակ նաւուց իւրոց. նուազուն
ռոճկաց և հիւանդութք իւր միաւորեալք ը҃ անհամբե-
րութ խուժանին իւրոյ կասեցուցին զնա 'ի շարունա-
կելոյ զհետազօտութիս իւր եւս յառաջ. և ստիպե-
ցին զնա մեկնիլ անտի առ 'ի երթալ 'ի Սպանիո-
լա. Ընդ այն ճանապարհ կալաւ զմիջոց ճանաչե-
լոյ զկղզին Քուպակնայի և Մարգարիտայի. որք 'ի
մօտոյ եղեն անուանիք վս որսոյ մարգարտաց իւրենց։

30 Օ- Հասեալ 'ի Սպանիոլա, էր նուաղեալ 'ի վերջին
գոստ. աստիճանի վս տաժանմանն և հիւանդութեն. և
եգիտ զերակութիս հատուածոյն յայնպիսի դիրս,
զի ոչ ետուն նմա դադար վայելելոյ յայն հան-
գիստն, որոյ ունէր զայնքան պէտս։

Բա-

Յաղում վտարանդութիւնս լեալ էին 'ի հեռաւորութեն իւրում. Եղբայրն իւր տեղակալ յարեւելով 'ի խորհուրդն, զոր տուեալ էր նմա ծովակալն յառաջքան զմեկնիլն իւր, փոխադրեալ էր զհաստատածն Եղիսաբեթի յառաւել հեշտ իմն դիրս. այս է, 'ի միւս մասն կղզւոյն. և արկեալ զհիմն քաղաքին Սան Դոմինիկեայ, որ էր առաւել երեւելի գաւառ Եւրոպական 'ի Նոր աշխարհին, և աթոռ գերագոյն ատենից յայնմ տէրութեան Սպանիացւոց. Իսկոյն իբրեւ Սպանիացիք գտան ապահովացեալք յայսմ հարկաւորութեան, ոչ զի մի կարասցեն թուլանալ 'ի դատարկութեն, կամ ունել ժամանակ յղանալոյ զնորանոր խորամանկութիւնս, չու արար տեղակալն յայն մասունս կղզւոյն. որոց եղբայր իւր դեռ ևս ոչ էր այց արարեալ, կամ վերածեալ 'ի հնազանդութիւն. Ժողովուրդն ոչ լինելով յաստիճանի ընդդէմ կալոյ, անկաւ ըստ ամի ընդ հարկաւ, զոր տեղակալն եդ 'ի վերայ նց. Բայց փութանակի ծանրութիւն երեւեցաւ այնպէս անտանելի, մինչզի սոսկացեալք, ոչ և էին 'ի վերնագոյն իշխանութէ ճնշողաց իւրեանց, առին զէնս ընդդէմ նց. Այլ այս ապստամբութիւնք ոչ տային զերկիւղ. Պատերազմն ընդ երկչոտ և ընդ մերկ Հնդկաց ոչ էր վտանգաւոր և ոչ անստոյգ ելք նորա:

Մինչ դեռ տեղակալն կայր պարապեալ ընդդէմ Հնդկաց յապարիզի մարտին, վտարանդութիւն իմն առաւել ևս ահարկու տեսլեամբ եկն 'ի յայտ 'ի մէջ Սպանիացւոց. Առաջնորդ սորա էր Ֆրանչիսկոս Ռոլտանոս. զոր Քոլոմպոս եդեալ էր 'ի դիրս ինչ, որ յայտ առնէր զնա պաշտպանիչ կարգի և անդորրութեան 'ի հաստատածին. Խռովային իմն և անխորհուրդ փառամոլութիւն ձգեաց զնա գահավէժ յայս յուսահատ ընթացս, և այնպէս անարժան աստիճանին իւրոյ. Փաստքն, զորս յառաջ եած առ 'ի մոլորեցուցանել զհամաշխարհիկս

Մեծաջ Սղանեա լոյն 'ի հաստա- նեկն Խ- բում յոյն նաւու. 1498.

Ապըս- տամ- բութիւն Ռոլ- տանոսի.

իւր, էին մնոտի և անհիմն. Սա ամբաստանեաց զԿողոմբոս և զեղբայր նորա իբր գոռոզս և դըժնեայս. պնդեաց, թէ նոքա ձկտէին հաստատել յերկրին զտէրութիւն իւրեանց անկախ. զըպարտեաց զնոսն, որպէս եթէ խորհէին զրաւել զմի մասն Սպանիացւոց քաղցու և աշխատութեան, որպէս զի յաջողեսցի նոցա զիւրագոյնս վերածել զմնացեալն 'ի նուաճումն. և առաջի արար իւր անհամբաւութիւն իմն վասն Կաստիլեացւոց կալն հեղ և համբերող գերի եղից Ջ'ենովացի բաղդորդաց. Մարդիկ ունէին միշտ ըղհակումն վերագրելոյ առ չար գնացս առաջնորդաց իւրեանց զխստութիւն, զորոց զգան զծանրութիւն. և իւրաքանչիւր ազգ հայի յաչաղկոտ աչօք յիշխանութիւն և'ի համբարձումն օտարաց. և վասն այսորիկ զգացուցմունք Իսոլատնոսի կալան զմեծ ներգործութիւն 'ի սիրտ հայրենակցաց իւրոց. Ըստ ինճան նորա և որպիսութիւնն յաւելոյին այնմ զծանրութիւն. Նըռեելի իմն բազմութիւն Սպանիացւոց ընտրեաց զնա յառաջնորդ. և եառ զէնս ընդդէմ նոտեղակալին և եղբօր նորա. տիրեցին շտեմարանի արքային, որ լի էր նպարօք. և թևակոխեցին յանկարծ իմն առնուլ զամրոցն Սան Տոմինկեայ. որ էր պահպանեալ 'ի հսկողութէ և 'ի քաջարտութէ
1498 մն Դիեկոսի Կողոմբոսի. Վտարանջեալքն բանդատեցան խոյս տալ 'ի գաւառն Քսարագուայ. ուր հանապազ բողոքէին ընդդէմ իշխանութեն նոտեղակալին. և գրգռեցին ևս զհնդիկս թօթափել 'ի նմանէ զլուծն:

Այսպիսի էր հեգ վիճակ հատուածոյն. յորժամ Կողոմբոս եհաս 'ի Սան Տոմինկոս, իսկոյն մնաց ապշեալ, թէ զկարգ երեք նաւքն, զորս արձակեալ էր նա 'ի Կանարեայսն, տակաւին ոչ էին ժամանեալ անդր. Այն անընդունակութեան նաւուղղացն և բռնութեն յորձանացն տարեալ էին հարիւր վաթսուն մղոն ընդ արևմուտս կղզն Սան Տոմինկեայ, և բանաքարեալք ապստամբք 'ի նա-

ւա-

ռաջանդիստ ինչ գաւառին Բասարակուսայ. ուր
Սոլտանոս և ապստամբ հետեւօղք իւր էին խոր-
շացեալք. Սոլտանոս զանխլաբար թաքոյց 'ի
հրամանատարացն զապստամբութիւն իւր ընդդէմ
եւրոպականին. և 'ի կիր արկանելով զբովանդակ
յաջողակութիւն իւր առ 'ի շահել զնա, հաւանե-
ցոյց նմա ընդոստուցանել վաղվաղակի յափն ծո-
վու զհարուստ մի մասն արանցն, զորս ածեալ էին,
որպ զի մարթասցին յառաջ խաղալ 'ի Սան Տո-
մինիկոս Ը ցամաք. Նպա սակաւ փաստք պիտոյա-
ցան առ 'ի շարժել զնա յարել 'ի կողմն իւր-
եանց, Էին խոստանքն բանտիցն Սպանիոյ, որոց
դառնաբեկութիւն, ազատաւորութիւն և ամ բուռն
ներգործութիւնք էին ընտելականք. և զառնայլն
անձկանօք յընթացս ինչ կենաց, որ էր ամենեքին
նման այնմ, որում էին յառաջ սովորեալք. Հրա- 1498
մանատարք նաւուցն իրազեկ եղեն, բայց կարէ
անագան, անխոհեմութեն իւրեանց 'ի թողուլն ե-
լանել 'ի նաւուց զայնքան բազմութիւն յարանց
իւրեանց. և դիմեցին դէպ Սան տօմինիկեայ. և
մտին ողջամբ 'ի նաւահանգիստն յետ սակաւ ա-
ւուրց ժամանելոյ ծովակալին. բայց մթերք ռոճ-
կաց նմա էին այնպէս ապականեալք վն երկարատև
ճանապարհորդութեն, մինչ զի դոյզն սփոփանս
բերին բազմամարդութեանն :

Յաւելման այսր խմբի յանդուգն և յուսահատ Յածու
չարագործացն, Սոլտանոս եղև ահարկու 'ի վեր ցէտու
քան զչափն, և ոչինչ ընդհատ օտար 'ի խնդիրս վն խո-
իւր. Քոլոմպոս թէպէտ և լի ցասմամբ ընդդէմ հախան
ապերախտութեն նը, և խորապէս զայրացեալ վն գլխա-
ըրութեն հետեւողաց իւրոց, ոչ կալաւ շատ ճա- ցէց
կատելոյ 'ի մարտ. Դողայր 'ի խորհիլն, թէ պարտ Քոլօմ
էր լուցանել զբոց քաղաքական իրիք պատերազմի. պոսի
ուր զինչ մասն և լինէր յաղթական, կարողուն
և զօրութի երկոցունց լինէին այնպէս տկարացեն,
զի քաջալերէին զհասարակաց թշնամին առ 'ի

միաւորիլ և եղծանել զնն խոստ. Աշմարեաց 'ի նմին ժամանակի թէ նախադատութիւք և կիրք, որք գրգռէին զապըստամբսն 'ի զինիլ, վարակեալ էին և զկուսակիցս նր. որոց յոլովք եղեալ էին նմա ներհակք. և գրեթէ ամենեքեան ցրտացեալք առ ծառայութիւնն. Այս դատմունք նկատմամբ հրապարական շահուն. և այսոքիկ մտածութիւնք սեպհական կայաւորութն իւրոյ՝ շարժեցին զնա ընտրել գալ մանաւանդ 'ի հայթհայթանս հաշտութն, քան պատերազմի. Տալով քարոզ կարդալ 'ի դէպ ժամու, թէ շնորհէր զազատ թողութի նց՝ որք արժանաւորիցին այնմ, վերադառնալով 'ի պարտականութի իւրեանց, արար զտպաւորութիւն 'ի սիրտս ապստամբելոցն. Առաջի մատուցանելով զանձն 'ի պարգևել փափագողացն զազատութի դառնալոյ 'ի Սպանիա, գիտաց յանկուցանել զնմ փորձանաւոր բաղդորդսն, որք կամ վն հիւանդութեանց, կամ վն տհաճութն յափրացեալ էին յաշխարհէ անտի. Խոստանալով վե-
1498 րստին կացուցանել զԽօլտանոս յառաջին պաշտօնի իւրում՝ զցածոյց զամբարտաւանութի նր. և զիջանելով մեծագոյն մասին խնդրոց նր 'ի շնորհս հետևողաց իւրոց, յագեցոյց նաև զագահութի սը. Այսպէս սակաւ առ սակաւ և առանց հեղման արեան յետ բազում և բազում ձանձրացուցիչ հնարից՝ ցրեաց զայս վտանգաւոր լծակցութիւն, որ սպառնայր զկործանումն հաստատածոյն. և վերածեաց 'ի նոյն զբարեկարգութի, զկանոնաւոր կառավարութիւն և զհանրական անդորրութիւն։
Ամա- 'Ի հետևութէ այսպիսի խռն միաբանութեան ընդ
րոպէ վտարանջելոց, տուեալ եղեն նց գետինք 'ի զա-
Նոր ըն նազան տեղիս. և բնիկ Հնդիկք նահանգաց ե-
Եղանակ րևեցան կարգեալք 'ի մշակել զորոշեալ բնչ բա-
Հարգա- ժին անդոց յօգուտ նոր տեարց իւրեանց. Այսմ
Նաւթ.. այս աշխատութի կացուցեալ էր 'ի տեղի հարկին
1499 եդելոյ յառաջագոյն. և որչափ և կարևոր լինէր

այս-

այսպիսի իմն յառաջատեսութեան 'ի թուլացեալ և 'ի տկար հաստածի, եմուտ 'ի մէջ Սպանիացւոց զբաժանմունս, կամ զբաշխումն Հնդկաց հաստատելոց 'ի նոցանէ յամ հարգանութիս իւրեանց . որ և ձգեաց զանբաւ թշուառութիս 'ի վ͞ր այնր տարաբախտ ժողովրդեան . և եարկ զն' ընդ ցաւագին ճնշմամբք . Այս ոչ եղև միայն վնասակար արդիւնք ապստամբութեն 'ի Սպանիոլա, այլև խափանեաց ես զԿոլոմպոս 'ի յառաջատելոյ յերկրածանօթութիս իւր 'ի շարունակին . որովհետև վ͞ս պահպանութեն իւրոյ գտաւ պարաւանդեալ ունել միշտ մերձ առ ինքն և առ եղբայր իւր տեղակալ զնաւավարս . զորս ձկտէր 'ի գործածել յայնմ ձեռնարկութ . Զաղէ թէ իրակունք իւր թողացուցին նմա, առաքեաց զոմանս 'ի նաւուց իւրոց 'ի Սպանիա հանդերձ օրըստօրական մատենիւ ճանապարհորդութեն, զոր արարեալ էր . հանդերձ ստորագրութ Նոր աշխարհացն , զորս գտեալ էր . հանդերձ աշխարհացուցիւ ծովեզերացն , առ որովք առագաստեալ էր , և հանդերձ ցուցիւք ոսկւոյ , մարգարտաց , և այլոց եզական և արժողական բերոց 'ի նմանէ ստացելոց 'ի շահավաճառ լինելն ընդ ազգայնոց . փոխանցոյց միահետ զծանուցումն ապստամբութեն 'ի Սպանիոլա . ամբաստանեաց զվտարանջեալսն վ͞ս արկանելոյ ն͞ց զհատուածն 'ի բուռն օգտմունս , որք գուշակէին ըզքակտումն իւր . և վ͞ս խափանելոյ զթևակոխումն յերկրագործութիս, և յանդրադոյն յառաջադիմութիս , ապստամբելով առանց ինչ գրգռելոյ 'ի վերնագունից իւրեանց . և առաջադրեաց զանազան կանոնաւորութիս վ͞ս բարեգոյն խորհեալ կառավարութեն կղզւոյն . և վ͞ս ջնջուցանելոյ զապստամբողական հոգին , որ թէպէտև թմբրեալ առժամայն անդ , կարէր վաղվաղակի վերադառնալ առ 'ի վառել առաւել մոլեգին կատաղութ . Ռոլտանոս և ընկերակիցք իւր ոչ անհոգացան առաքել

'ի Սպանիա միջնորդութբ նոյն նաւուց զնաւատորմ-մութեն գնացից իւրեանց՝ 'ի միասին ընդ բողոք-մանցն ընդդէմ ծովակալին և եղբարց նր. Նա անպատուութիւն Սպանիոյ և առ Թշուառութիւն Գօլոմպոսի՝ վերջինքն գտին զհաւատարմութի իմն մեծ յարքունիսն. և յառաջ ածին զարդիւնս անակնկալս:

Ջ՚նգք հոլ- գուԹէ Մասօֆէ չափայ ...ալ- Նէլէան ...նդէլս ընդ Բաֆօ ... քանցա.

Բայց յառաջ քան զայսոսիկ պատահմունս պատահեալ էին այլք, որք արժանի են ուշադրութեն վս ծանրակշռութեն իւրեանց. և զի կապակցեալ են ընդ վիպասանութեն Նորոյ աշխարհի. Մինչդեռ Գօլոմպոս զբաղեալ էր 'ի յաջորդական ճանապարհորդութիւնս իւր ընդ արևմուտս, հոգին երկրագտութեն ոչ Թուլանայր 'ի փորձուկալս, Թագաւորութի, յորում էառ զոյժ նախնաբար, և խրախուսեցաւ. Տհաճուին և նախատինքն անձանց՝ ոչ եղեն միայն կիրքն զարԹուցեալք 'ի սիրտս փորձուկեղաց վասն յաջողութեն Գօլոմպոսի, և յեղեալն զանհանճարութի իւրեանց 'ի մերժելն զառաջադրութիւնս նորա. Այլև շարժեցաւ 'ի նն ազնուական իմն նախանձաւորութի դերազանցելոյ զգործողութիք նր, և վառեալ իմն փափագ զերծուցանելոյ զ իմիք զհայրենին իւրեանց 'ի կնասուէ սեպհական սխալանացն իւրեանց. Էմմանուէլ, որ ժառանգեաց ըզբարձր ուշիմութիւն նախորդաց իւրոց, տակաւին ընդէր յաղնուական առաջադրութեն իւրեանց բանալոյ զանցս ինչ առ արևելեան Հնդկաստան ընդ Բափօ տի պինա ըսփէրանցա. և յետ սակաւ միոյ հասանելոյ իւրոյ յաԹոռ Թագաւորութեն՝ հանդերձեաց զնաւախումբ մի վս այսր մեծի վախճանի. Օհրամանատարութին այնր ետ Վասքօ Կամայ անձին քաջատոհմի. որև պերճացեալ էր առաքինութբ. խոհականութբ և քաջութբ պատշաճականաւ աստիճանին իւրում. Նաւախումբն ձման այնմ, որ վաղիւկ հանեալ էր 'ի դուրս վս

երկ-

երկրածանօթութեան 'ի տղայութեան նաւարկութեանն , էր անսահմանաբար տկար . քանզի բաղկանայր միայն յերից նաւուց . որք ոչ մեծութիւն , և ոչ տոկացողութիւն հաւասարեալ էին նպատակին. Եւ քան զի Եւրոպացիք յայնմ դարու դեռ ևս ոչ էին տեղե֊կացեալ պարբերական Մուսոնոյն՝ կոչեցելոյ հող֊մունք վաճառականութեան , որք զնաւարկութիւն յԱթլանտեան Ովկիանոսի , և նմանապէս 'ի ծո֊վուն , որ զատուցանէ զԱփրիկէ 'ի Հնդկաստանէ, առնեն յեղանակս ինչ տարւոյն դիւրին , և յայս վտանգաւոր , և իբր անգործադրելի , ժամանակն ընտրեալ վս ճանապարհորդութեան Գամայի եղև նուազ յարմարականն բոլոր տարւոյն. Գնաց 'ի 1497
ծով յինն յուլիսի . և ուղղելով ը հարաւ , եղև նմա մարտնչել ընդ ամիսս չորս ընդ ներհակ հող֊մոց յառաջ քան զկարողանալն դիմել 'ի Քափօ տի պօնա ըսփերանցա . Անդէն սաստկութիւն նոցա 20 Նոյ
սկսաւ զնտոիլ , և շահաւորելով 'ի միջոցէ փոք֊ եմբ .
րիկ իմն հանդարտութեան , Գամա կրկնեաց ընդ այն ահարկու գերսար . որ լեալ էր այնպէս ընդ եր֊կար կոպար նաւարկութեան . և ուղևորեաց զըն֊թացս իւր ընդ հիւսիսային արևելս առ Ափրիկեան ծովեզերօք . Մատեաւ առ զանազան կողմանս . և յետ պէսպէս բաղդից զորս փորձուկեղ վիպա֊սանք բարձր , այլ իրաւացի գովասանութեան վերա֊գրեն առ առաջնորդութեան իւր և առ կատարելութեան , եհաս արկանել խարիսխ յանդիման քաղաքին Մե֊լինտայ . Ընդ բովանդակ ընդարձակ գաւառսն , որք տարածին առ ծովեզերօքն Ափրիկոյ 'ի գե֊տոյն Սենեկալ ցսահմանս Զանքուէպարայ , հան֊դիպեալ էին փորձուկեզք զարմի իմիք շինական և անկիրթ մարդկան . որք էին առանց դպրութեան , արհեստից և տուրևառութեան , և տարբերք 'ի բնակ֊չացն Եւրոպիոյ եթէ 'ի կազմուածս և 'ի գոյն մարմնոյ , և եթէ 'ի խառնուածս և 'ի բարս . Ա֊պա յառաջելով առելի ևս , նշմարեցին անպատ֊

մե֊

մելի ցնծութ իւրեանց, զի մարդկեղէն կերպարանս աստիճանաբար այլայլիւր 'ի լաւ անդր․ զի դժագրութիւնք ասիականք սկսան տիրել, և զի երևէին նշանք քաղաքականանալոյ․ Ճանաչէին անդէն ըղգիրս․ Մահմետական կրօնն հաստատեալ էր անդ․ և մտադրէին ոչ սակաւ երևելի տուրևառութեան խմբք․ Զանազան նաւք եկեալք 'ի Հնդկաց գտանէին 'ի նմին ժամանակի 'ի նաւահանգստին Մելինտայ․ Կամա շարունակեաց յայնժամ զճանապարհորդութի իւր գրեթէ բացարձակ իմն ստուգութ բարեյաջողութն․ և ընդ առաջնորդութ նաւուղղի ուրումն Մահմետականի եհաս 'ի Կալէքութ 'ի վր ծովեզերն Մալապարու 'ի քսան և երկուսն մայիսի․ 'ի հազար չորեք հարիւր իննսուն և ութերորդի․ Ոչինչ ետես նա զբազմամարդութն, զհողագործութն, զճարտարմութն, զարհեստից, և զինչ յայնմ աշխարհի մեծապէս քաղաքականացելոյ․ գերազանցէր բազմօք քան զինչ և իցէ ճանաչումն, որ կերպաւորեալ էր յանկատար պատմութեցն, զորս Եւրոպացիք յայնժամ լուեալ էին զնոցանէ․ Բայց ոչ ունելով նա ընդ իւր ոչ զզօրութի բաւական վն տնկելոյ անդէն զհարգունութի ինչ, և ոչ զդրամագլուխս վաճառաց սեպհականս առ 'ի մուծանել անդր զտուրևառութի իմն երևելի, դարձաւ հապճեպ 'ի Փորթուկալլիա հանդերձ պատմութ երջանկութն իրոյ 'ի հանելն 'ի գլուխ զճանապարհորդութի իմն երկայնագոյն և առաւել տարժանելի քան զոր լեալ իցէ երբեք յառաջին ժամանէ նաւարկութն․ Եհաս 'ի Լիսպոնա 'ի չորեքտասաննն սեպտեմբերի հազար չորեքհարիւր իննսուն և իններորդի․ ամք երկու և ամիսք նոյնչափ և աւուրք հինգ, յորմէհետէ թողեալ էր նա զայն նաւահանգիստ ։

Այսպէս մինչդեռ տևէր յընթացս հնգետասաներորդ հարիւրեակն, արար ազգ մարդկան զմեծագոյն զարգացմունս 'ի ճանաչելն զվիճակ բնակ երկրագնտոյս, քան թէ յայլ բովանդակ անցեալ

դարս յառաջ քան զայն շրջան. Հոգին երկրածանօթութեան տկար 'ի սկզբանէ և զգուշաւոր՝ շարժիւր 'ի ներքս անձուկ իմն պարունակի. և առներ զճգունս իւր երկբայութ̃ և երկիւղիւ. Թաջալերեալ 'ի յաջողութէ, եղև սրտեայ. և ընդարձակեաց համարձակ զգործողութիւս իւր. Յընթացս յառաջադիմութ̃ իւրոյ հանապազորդ ստացաւ զոյժ. և աճեաց 'ի վախճանի այնպիսի արագութ̃ և կարողութ̃, զի մարթացաւ խորտակել զամ̃ կապարսն, որոց 'ի ներքս տգիտութիւն և երկիւղն պարագրեալ էր զմարդկեղէն միտս. Երբև զամս յիսուն ծախեցին փորձութեկէգք 'ի քերելաափամբն Ափրիկոյ 'ի Կափօ Նօնայ ց՝Կափօ վէրտէն. որոց վերջինն կայ միայն երկոտասան աստիճանս հ̃ հարաւակողմն առաջնոյն. Յամս նուազ քան զերեսուն ձեռներէց եղեն անդր քան զգիծերահաւասար գիծն յայլ իմն կիսագունտ. և ընդմտին 'ի հարաւային ծագն Ափրիկոյ՝ 'ի հեռաւորութն քառասուն և ինն աստիճանաց 'ի Կափօվէրտեայ. 'Ի վերջին եօթն ամսն նոր իմն աշխարհ յայտնեցաւ յարևմուտս, ոչ վայրագոյն քան զբոլոր մասունս երկրի. որոց մարդիկ ցայնժամ ծանօթացեալ էին. Յարևելս ծովք և աշխարհք անծանօթք գտան. և հաղորդութի իմն հ̃ երկար ցանկացեալ բացաւ ընդ Եւրոպիա և ընդ ընչաւէտ կողմանսն Հնդկաստանի. 'Ի բաղդատութն այսպիսի հիանալի և անակնկալ դիպուածոց այն բովանդակ, որ արդէն համարեալ էր մեծագործ և պայծառ, խաւարեցաւ և աներևութացաւ. Յանդիման եղեն ներգործութ̃ առարկայք սքանչելիք. Հոգին մարդկային զարթուցեալ և զմայլեալ ընդ գեղեցիկ տեսարանն, դիմագրաւ եղև եռանդիւ 'ի հետամուտ լինել նմա. և վարժեայց զգործաւոր կարողութիւն իւր 'ի նոր ընթացս ինչ:

Այս յօժարութի առ ձեռնարկութին, թէպէտ և

նո-

Եւրոպա- [illegible] գոր-ծոյ.

Նորոգ գաղթուցեալ ՚ի Սպանիա, սկսաւ վաղվաղակի ներգործել և տարածանիլ. Այլ ջանք արարեալք յայնմ թագաւորութեն առ այս վախճան՝ շարունակեալ էին ցայնժամ ՚ի Քօլոմպոսէ միայնոյ ծախուք թագուհւոյն. Բայց բաղդորդք ՚ի մեծաշուք ստորագրութեցն, զորս նա ետքն ետ զտեղեացն այց արարելոց ՚ի նմանէ, որպ և յառաջ հաւատչէից ձոխ տարազուցն, զորս եբեր անտի, յառաջ մատուցին զանձինս հանդերձելոյ զնաւախումբ սեպհական վտանգաւ իւրեանց, և երթալոյ ՚ի խնդիր նորոց աշխարհաց: Արքունիքն Սպանիոյ, որոյ չափաւոր հասոյթք սպառեալ էին ՚ի մեծ քերին առաքմանց իւրոց ՚ի նոր աշխարհն. (որ թէպէտ և առաջի առնէր զտեսութի իւր ապագայ բարութեց, օնյն տայր դուզնաքեայ իմն վարձներգործական շահու) ունէր զմեծագոյն ևս յօժարութի ընտանձնելոյ զծանրութի երկրագտութեն հայատակաց իւրոց. Կալաւ ուրախութբ պարապ՝ փոխատրելոյ զագահութի, զօրամոլութի և զթեւակոխութիս առաջարկորդաց իբր գործիք իմն յառաջ շարժելոյ զխորհուրդս անքոյթ իմն հրապարական շահեկանութեն. Թէպէտ յաջողութին երկրայական էր նկատմամբ նոցին առաջարկորդաց. Մի յայս տեսակ առաջադրութեց արարեալ եղև Ալլոնծոսէ Օյետայ. ՚ի նաւելի և յարդինական պաշտօնատարէ. որ ընկերեալ էր Քօլոմպոսի յերկրորդ ճանապարհորդութեն. Ստիճան նր և հանդամանքն նախահոգացան նմա ըհամբաւ իմն այնպէս մեծ առ վաճառականսն Սեվիլլիոյ, մինչզի ձեռնարկին սոքա հանդերձել զչորս նաւս, միայն թէ ընկալցի նա զարքունի հաւանութին, որ իշխանաւորեսցէ զճանապարհորդութին. Զօր պաշտպանութի եպիսկոպոսին Փատայոսայ կարողացաւ տպահովացուցանել դիւրակի ընպատաւոր պատասխանագիրն առ աղերսանս ինչ այնչափ հաճոյականս արքունեաց. Ստանց խորհրդակցելոյ ընդ

Քօ-

Փոլոմպոսի, և առանց հայելոյ յիրաւունս և յիշ-
խանութիւն, յորս վաղիսկ վայելէր նա դաշնադ-
րութբն հազար չորեքհարիւր իննսներորդի երկ-
րորդին, Օյէտա ընկալաւ զբարեհաճութն չուելոյ
առ Նոր աշխարհն. Այս բարւոք ուղղաւորելոյ զըն-
թացս նր, եպիսկոպոսն հաղորդեաց նմա զօրըստ-
օրեայն վերջին ճանապարհորդութեն ծովակալին, և 1499
զաշխարհացոյցս երկրացն, զորս գտեալ էր. Օյէ- Մայիս.
տա հաւատաց զանձն 'ի Նոր ճանապարհ նաւար-
կութեն. բայց ծառայարար՝ զհետ երթալով գնա-
ցիցն, զոր կալեալ էր Փոլոմպոս առ ծովեզե-
րօքն փարիոյ, շահավաճառ եղև ընդ ազգայնոցն,
և թեքելով ընդ արևմուտս, յառաջացաւ մինչև
ցՔափօ Վելայ. և գնաց թափառելով առ տա-
րածութբ իմն ծովեզեր առաւել երևելի, և առա-
ւել յառաջ քան զայն, յոր դիպեալ էր Փոլոմ-
պոս. Այսպէս ճշմարտեալ զկարծիս Փոլոմպոսի,
թէ երկիրն այն էր մասն ինչ շարունակի, Օյէ- [illegible]
տա դարձաւ ընդ ճանապարհ Ապանիոլայի 'ի Սպա- [illegible]
նիա համբաւով իմիք երկրագտողի, բայց սակաւ
բարեբարութբ այնոցիկ, որք եղեալ էին 'ի միասին
զհիմունս վծ աւաքմանն։

Ամերիկոս Վեսփուչչի սեպուհն Ֆիորէնցացի ընկեր [illegible]
եղև Օյէտայ յայսմ ճանապարհորդութեն. Ոչ [illegible]
լինի գիտացեալ, թէ յորում պաշտօնի ծառայէր [illegible]
նա. Այլ քանզի էր հմուտ նաւորդ, և գերա- [illegible]
զանց վարժ 'ի ծովային գիտուն, ստացաւ զայն- [illegible]
քան համարումն 'ի մէջ ընկերաց իւրոց, մինչզի [illegible]
միաբանեցան տալ նմա կամակար զնախապետական [illegible]
ինչ մասն յուղղաւորութեն գործողութեց իւրեանց [illegible]
յայն ընթացսն. Նոյնհետայն յետ դարձին իւ-
րոյ առաքեաց նա զպատմութիւն իմն դիպուածոց
իւրոց և երկրագտութեց առ միոմն համաշխարհիկ
իւր. և ջանալով ընապարծութբ ճանապարհորդի
մեծացուցանել զարարս իւր, կալաւ զաչալրջութն
և պհամարձակուն յարդարելոյ զպատմութին այնպ,

զի

զի երևեցոյց․ թէ իւր իցէ փառքն լինելոյ առաջին 'ի գտանել զշարունակն Նորոյ աշխարհի․ Պատմութիւն Ամերիկոսի գրեալ էր ոչ միայն արհեստիւ, այլ և գեղեցիկ ոճով․ Պարունակէր զերկրական իմն վիպասանութիւն ճանապարհորդութեան իւրոյ, և զհանճարեղ նշմարութիւնս 'ի վերա բնական բերոց, բնակչաց, և սովորութեանց գաւառացն, զորս տեսեալ էր․ Իսկ այս առաջին ստորագրութիւն մասին իրիք Նորոյ աշխարհի, որ ոչ երբէք էր հրատարակեալ․ և վասն այսորիկ ոչ են զարմանք, թէ պատմութիւն իմն այնպէս բարեյարմար 'ի հաճել զկիրս մարդկան, և որ գնէ 'ի տեսութիւն զնորս և զհիանալիս, շուրջ յածեալ իցէ այնչափ յափշտակութեամբ և ընթերցեալ ագահութեամբ․ Աշխարհն, որոյ Ամերիկոս ենթադրեալ էր գտիչ, էհաս առ սակաւ սակաւ կոչիլ անուամբ նորա․ Մարդկեղէն իղձն՝ անբանաւոր՝ և անիրաւ մշտնջենաւորեաց յետոյ զնմանակ իմն մոլորութի․ Ընդհանուր համախոհութեամբ ազգաց Ամերիկա է անունն շնորհեալ այսմ Նորոյ մասին երկրագնտոյս․ Յանդուգն ձկտութիւք բախտաւոր ուրումն խաբեբայի բարձեալ են 'ի ճշմարիտ գտողէ Նորոյ աշխարհի զարտօնութիւն, որ նմա միայն անկն էր․ Անունն
1496 Ամերիկոսի ղօղեաց զԿօլոմպոսինն․ և ազգ մարդկան պարտի ողբալ զներգործութի իմն անիրաւութեան․ որ ընկալեալ զվաւերացեալ հաստատութի ժամանակի ոչ ևս է յաստիճանի ուղղելոյ։

(22) Նկատելի իմն է, զի ոչ Կօմարա, և ոչ Օվիետոս նախնագոյն Սպանիացի վիպասանք Ամերիկոյ, և ոչ Հերրէրա համարին զՕյէտա, կամ զընկեր իւր Վեսփուչչի իբր առաջին գտողս շարունակին Ամերիկոյ։ Նոքա միօրինակ առագրեն զայս պատիւ Կօլոմպոսի․ Ոմանք ենթադրեցին, թէ որոշ իմն ոխութի ազգային ընդդէմ Վեսփուչչեայ վասն հաստատելոյ նր 'ի ծառայութէն Սպանիոյ, և մտանելոյ 'ի ծառայութիւն Փօրթուկալլիոյ կարէ լինել, թէ դրդեալ իցէ

զայ-

զայսոսիկ պատմագիրս առ 'ի թաքուցանել զգործողութիւն, զորս արար նա. Բայց Պետրոս Մարտիրոսն և Պէնծօնի երկոքեան իտալացիք ոչ թողին զանձինս սխալել 'ի նոյն նախադատութենէ. Մարտիրոսն էր հեղինակ ժամանակակից. կայր նա յարքունիսն Սպանիոյ. և ունէր զլաւագոյն դիպողութի տեղեկանալոյ կատարելապէս բովանդակ հրապարական գործոցն. ոչ ինչ ընդ հատ՝ ոչ 'ի տասնեակս իւր, որք են առաջին ընդհանրական պատմութի հրապարակեալ զնորոյ աշխարհէ, և ոչ 'ի թուղթս իւր. որք պարունակեն զծանօթութի ինչ բովանդակ նշանաւոր դիպուածոց ժամանակին իւրոյ, տայ Վեսփուչչեայ զպատիւ լինելոյ առաջին 'ի գիւտ շարունակին. Պէնծօնի գնաց իբր բաղդորդ Ամերիկա յամին 1541. և յամեաց անդ բազում յոյժ. Երևի թէ խրախուսեալ էր նա յեռանդնոտ իմն նախանձու վն փառացն իտալիոյ բնիկ երկրին իւրոյ. և սակայն ոչ առնէ զյիշատակ ինչ զգործոց և զգիւտիցն Վեսփուչչեայ. Հերրէրա որ հաւաքեաց իւր զընդհանրական մի- պատմութիւն Ամերիկոյ յառաւել արժանահաւատ յիշատակաց, ոչ միայն զհետ երթայ այսց առաջին պատմագրաց, այլ և բամբասէ զՎեսփուչչի վն խարդախելոյ զթուականս երկուց ճանապարհորդութեցն, զորս արար առ նոր աշխարհն, և վն շփոթելոյ զմինն ընդ միւսոյն առ 'ի յափշտակել զփառս գտիչ լինելոյ շարունակին. Սա պնդէ, թէ 'ի դատաստանական քննութեան միում այսր նիւթոյ արարեալ յարքունի գանձապետէն, հաւաստեցաւ վկայութի նորին իսկ Օջէտայ, թէ սա դիպեցաւ 'ի Սպանիոյ դառնալով 'ի Սպանիա յառաջին ճանապարհորդութե իւրմէ. ուր Վեսփուչչի ծառայեաց, թէ նորա դարձան ուղղակի 'ի Կռատիչէ 'ի ծովեզերէն Փարիոյ. և հասին 'ի Սպանիոյ միայն յերկրորդ ճանապարհորդութեն իւրեանց. և թէ նա աւարտեալ էր զճանապար-

հոր-

հորդութին 'ի վեց ամիս. և ըստ պատմութենն Վես-
փուչչեայ՝ ծախեալ էր զեօթնևտասն ամիս 'ի կա-
տարել զայն. Հերրերա տայ զկարգոյն ինչ տե-
ղեկութի զայսմանէ յայլում իմիք մասին մատե-
նին իւրոյ և առ նոյն արդիւնս. Քոլոմպոս էր 'ի
Սպանիոլա, յորժամ էհաս անդր Օյետա. և
շուրջ զայնու ժամանակաւ եկեալ էր յիրաւախո-
հութի իմն ընդ Ռոլտանոսի. որ ընդդէմ դարձաւ
թևակոխութեցն Օյետայ, վն յարուցանելոյ զնոր
իմն խռովութի. և վն այսորիկ ճանապարհորդութին
իւր պարտի լինել յետնագոյն քան զծովակալին.
Իսկ ըստ պատմութենն Վեսփուչչեայ մեկնեցաւ նա
վն առաջին ճանապարհորդութե իւրոյ 'ի տասն Մայի-
սի 1497. Յայնմ ժամանակի Քոլոմպոս կայր
յարքունիսն Սպանիոյ 'ի նախապատրաստել զանձն
վն ճանապարհորդութե իւրոյ. և թերևս թէ վայե-
լէր անդ յերևելի իմն աստիճան շնորհաց. Իրա-
կութիք նորոյ աշխարհի էին յայնմ լծակցութե
ընդ առաջնորդութբ Անտոնիոսի Ֆոռրեսայ որ էր
յոյժ բարեկամ Քոլոմպոսի. Ո՛չ է հաւանական,
թէ 'ի բովանդակ յայնմ՝ շրջանի տուեալ իցէ այ-
լում ումեք անձին յանձնարարութի կանխելոյ քան
զծովակալն, ձեռնամուխ լինելով 'ի ճանապարհոր-
դութի իմն առ որ նա ինքն ունէր զձկտումն կա-
տարելոյ. Ֆոնսէքա, որ պաշտպան էր Օյետայ,
և որ ետ նմա զհրաման ճանապարհորդութեն իւ-
րոյ, ոչ եղև վերակոչեցեալ յարքունիս, և կար-
գեալ յառաջնորդութի Հնդկային իրակութեց մինչև
ցմահն արքային Յօհաննու. որ դիպեցաւ 'ի սեպ-
տեմբերի ամին 1497. բազում ամսովք զկնի ժամա-
նակին, յորում Վեսփուչչի պնդէ մեկնել վն ճա-
նապարհորդութեան իւրոյ. Մարք ինչ Վեսփուչ-
չեայ հրատարակեալ եղև 'ի Ֆլորէնցա յաբբայէն
Պանտինեայ յամին 1745. Նա հնարի 'ի շնոր-
հուկս քաղաքակցին իւրոյ տալ նմա զփառս գըտ-
ման շարունակին. բայց անչափաւոր նախանձու

ազգային ակնառութեան, և առանց յառաջ ածե- Ի ձեռս
լոյ զվկայութիւնս, որք հաւաստեսցեն զայն յայտ Ալբէ-
յանդիման։ Այլ գիտեմք 'ի նմանէ, զի պատ- կուէ
մութիւն Վեսփուչչեայ զ՚անապարհորդութեց իւ- քէր-
րոց հրապարակեալ եղև յամին 1510. և հաւա- ծոյս-
նականաբար վաղագոյն ևս. յորում ժամանակի չէայ
անուն Ամերիկոյ, թէ սկսեալ իցէ ընծայիլ նորոյ յելէս.
աշխարհի, դեռևս ոչ է ստոյգ :|| 52.

Ի նմին ամի ձեռնարկեալ եղև յայլ իմն ճանա- Ճ՚ոնտ
պարհորդութեն մը երկրագունդ. Պտոլոմէոս և- պոր-
մոյծ 'ի Սպանիա ոչ միայն զհոգին նաւական գոր- հուղդա
ծողութեանց, այլև բովանդակ առաջին բաղդորդք, Եխան
որք հանդիպեցան յայն ընթացս, կերպաւորեալ Ի ըօ-
եղեն 'ի տեսականութեանց նր. և ստացան նաւար- ծոէ
կութիւնք նր զընդունակութի և զծանօթութիւնս. Աէն-
որոց միջնորդութե հռչակեալ եղեն իբր քաջ հե- ճէայ.
տևօղք օրինակի նորա. Ալոնծոս Նիկնոս, որ ծա-
ռայեալ էր 'ի ներքոյ ծովակալին 'ի վերջին առաք-
ման նորա, նախապատրաստեաց 'ի միասին ընդ
Քրիստափոնոսի Կուէրրայ Սաճառականի Սիվի-
լիոյ զմիմիայն նաւ. և առագաստեաց առ ծով-
եզրն Փարիոյ. Թուի թէ զայս ընթացս արարեալ
իցէ մանաւանդ գիտմամբ առանձնական շահուն,
քան թէ հրապարակական կամ ազգային առար-
կայի. Նիկնոս և Կուէրրա ոչ արարին զմեծա-
մարկ երկրագունութիւ. բայց բերին 'ի տուն զայն-
չափ իմն փոխարէն ոսկւոյ և մարգարտաց, զի 1500.
վաճեցին 'ի համաշխարհիկան զխափանդ գինագրաւ Յան-
լինելոյ յայսպիսի բաղդս : սոյէ.

Իսկ և իսկ զկնի Վինչէնցիոս Յանէզ Փինծոն՝ 13.
մի յընկերաց ծովակալին յառաջնում ուղևորութ Վինչէն
իւրում մեկնեցաւ 'ի Փալոսայ չորիւք նաւուք. ցէոսէ
Սուզեցաւ համարձակ ընդ հարաւ. և եղև առա- Յանէ-
ջին Սպանիացին, որ վտանգեաց զանձն անցանել պոյ
ընդ գիշերահաւասար գիծն. բայց՝ որչափ երեւի, Փին-
ոչ մատոյց առ ժամն ինչ ծովեզերն անդր քան ծոնէ.

1500. զԲերանն Մարակնոնեայ, կամ զգետն Ամազոնեաց. Ամենեքին սոքա նաւորդք յարեցան 'ի վերպակ կարծիսն Քոլոմբոսի, հաւատալով, թէ երկիրքն զորս գտեալ էին, իցեն բաժին ինչ համատարած շարունակին Հնդկաստանի :

Փորձու- Յայսմ առաջին տարւոջ վեշտասաներորդ հարիւ-
թիւն րեկին այն բերրի նահանգն Ամերիկոյ, որոյ 'ի
Գտանելնաւահամանսն Փինծօն զկայ առեալ էր, եղև ընդար-
Ամե- ձակագոյնս ծանուցեալ. Ըստ հաւէտ ճանապարհոր-
րիկէ. դութիւն Կամայի խրախուսեալ զարքայն փորձու-
կալելոյ 'ի նախապատրաստել զհզօր ինն նաւա-
հանգէս, որ ոչ միայն յառաջ շարժեսցէ զշա-
հավաճառութիւն, այլ և երթիցէ ձեռնարկել 'ի
տիրապետութիւն, տուեալ հրամանատարութիւն Պետ-
րոսի Ալվարեզայ Քապրալի. Նա 'ի խուսել 'ի
ծովեզերացն Ափրիկոյ, ուր հաւատի էր պատա-
հելոյ կամ այլայլելի հողմոց, կամ սոէպ անհող-
մութեանց, որք յամեցուցանէին զճանապարհորդու-
թիւր, Քապրալ եմուտ 'ի ծով, և կալաւ սոյնքան
ընդ արեւմուտս, մինչզի զարմացմամբ իւրով գտաւ
առ ափամբ անծանօթ ինն երկրի 'ի տասն աստի-
ճանս անդր քան զհասարակածն. Պատկերացոյց
յինքեան 'ի սկզբան անդ, թէ իցէ կղզի ինչ
յԱթլանտեան Ովկիանոսի մինչև ցայնժամ ոչ
նշմարեալ. բայց յառաջ խաղալով առ ծովեզերբն
ին զաւուրս ինչ, աստիճանաբար ընդ ածեալ եղև
'ի հաւատալ, թէ այսպիսի ինն մեծ երկիր կեր-
պաւորէր զմասն ինչ մեծի իրիք շարունակի. Այս
վերջին մտածութիւն էր կարի իսկ քաջ հիմնեալ.
Երկիրն, որում պատահեցաւ, պատկանի առ գա-
ւառն հարաւային Ամերիկոյ ծանուցեալ այժմիկ
ընդ անուամբ Պրասիլեայ. Կալաւ նա զցամաք.
և կերպաւորելով այլ ինն գաղափար արդեան-
դութեն գետնոյն և հաճոյականութ կլիմային, էառ
զստացումն նր վն թագաւորութն փորթուկալելոյ.
և արձակեաց զնաւ մի 'ի Լիզպոնա հանդերձ ծա-

նօ-

նօթութիւն այսր դիպուածոյ, որ դատեցաւ ոչինչ նուազ օգտակար՝ քան յեղակարծ. Գտանելն Կօլոմպոսի զնոր աշխարհ էր բացարձակ ճիգն արդիւնական իմն մտաց լուսաւորեցելոյ ի գիտուէ, առաջնորդեցելոյ 'ի ներհմտութէ. և որ գործէր 'ի վճ կանոնաւոր ինչ հանգամանաց կատարելոց ոչ փոքր քաջասրտութիւն՝ քան թէ յարատեւութեամբ. Բայց յայս բաղդից փորթուկեզաց քաջայայտ երևի, թէ դիպուածն կարէր կատարել զայն մեծ գաղափարն, զոր բանականութիւն մարդկային մեծամտի յարաժամ կերպաւորեալ և ընծայեալ առ բարի վախճան. Եթէ զգօնութիւն Կօլոմպոսի ոչ էր առաջնորդեալ ազգի մարդկան առ Ամերիկա, Կապրալ բաղդաւոր իմն պատահմամբ կարէր թերևս ուղևորել սակաւ ինչ ամօք ևս անագան առ ճանաչումն այնր համատարած շարունակի:

'Ի ժամանակին, յորում Սպանիացիք և փորթուկեզք այսու յաջորդական ճանապարհորդութիւնք իւրեանց երթային օր ըստ օրէ, և սաստկային զընդարձակագոյն ճանաչմունս տարածուն և ընչաւէտութիւն այնր մասին երկրագնտոյս, զոր Կօլոմպոս յայտնեալ էր նց. Նոյն ինքն հետի 'ի վայելելոյ յանդորրութեան և 'ի պատիւսն, որովք ծառայութիւնք իւր պարտ էին փոխարինել, պատերազմէր ընդ ամ տառապանաց, յորս յաչաղանք և չարակամութիւն ժողովրդեանն, որում հրամայէր, կամ ապերախտութիւն արքունեացն, որում ծառայէր, կարէին երբէք ընկղմել զնա. Թէպէտ վերահաշտութիւն իւր ընդ Սօլտանոսի խզեաց ըզկապն, և տկարացոյց զզօրութիւն ապստամբելոցն, այլ ոչ արար արմատախիլ զսերմանս երկպառակութեան 'ի կղզւոյն. Բազումք 'ի տժգոհիցն տակաւին կային 'ի զէնս, ոչ կամելով հպատակել ծովակալին. Ինքն և եղբայր իւր պարաւանդեալ եղեն ճակատել 'ի մարտ փոփոխակի առ 'ի խափանել զարշաւանս նոցա, և պատժել զյանցանս

Ամէ- րիգոյ-ան, ընդդէմ Կօլոմ- պոսի.

նց. Այս մշտնջենաւոր զբաղումն, և անհանգստութիւն պատճառեալ յայնմանէ, ոչ ետուն նմա ժամանակ մտադրելոյ արժանապէս վտանգաւոր մեքենայութեանցն, զորս առնէին Թշնամիք իւր յարքունիսն Սպանիոյ. Հարուստ մի բազմութիւն նց, որք էին առեալ անգոհ զմատակարարութէ նր, ընկալեալ էին պարապ դառնալոյ յԵւրոպիա նաւուքն, զորս նա արձակեաց 'ի Սան Տօմինիկոյ. Յոյժ անքանից 'ի դերևն ելեալք բորբոքեցին ըզկատաղութիւն այսց դժգոհ բազմութեան ընդդէմ Քոլոմպոսի. և այն 'ի բարձրագոյն աստիճանի. Աղքատութիւն նց և կրեալ տառապանքն զարթուցին զկարեկցութիւն. արարին զամբաստանութիւն նց հաւատալիս, և զպանգատանս նց հաղորդականս. Հանապազորդ յիշատակք, որք բացայայտէին մանրամասն զքքուճանս իւրեանց և զյօդուածս յանդիմանարարութեանց իւրեանց ընդդէմ Քոլոմպոսի, գիտացին շարժել և զՖերտինանտոս և զԵղիսաբեթ. Յամ նուագի, յորում Թագաւորն և Թագուհին երևէին 'ի հրապարակի, պատէին զնոքօք ամբոխմամբ իմն, պնդելով Թախանձողական աղաղակօք 'ի վճարման մնացեալ վարձուց իւրեանց, և խնդրելով զվրէժ 'ի սկզբնապատճառէ ընկանաց իւրեանց. Թշնամինքն զորդիս Ծովակալին, եթէ պատահէին նց, նախատելով զնս իբր սերունդս այնր առաջարկորդի, որոյ ճակատագրական հետաքրքրութիւն յայտնեալ էր զնաւակար դաւառն զայնոսիկ, որք յամաքեցուցին զՍպանիա 'ի զրամից իւրոց. և որք լինէին ժողովրդեան իւրում գերեզման. Այս հրապարակական Թախանձանք տժգոհից Ամերիկոյ առ 'ի կործանել զՔոլոմպոս, նպաստաւորեալ էին 'ի գաղտնի և յառաջել վտանգաւոր զգացուցմանց 'ի կողմանէ արքունականացն. որք միշտ ընդդէմ դարձեալ էին գաղափարաց նորա, և միշտ յաջողեալ զյաջողութիւն և զհամբաւ նորա :

Ֆեր-

Ֆերդինանդոս պատրաստական էր 'ի մատուցանել Կ°լբո-
ոչ միայն զթերթն, այլ և զմտահաճ ունելն առ նա
այսուհետև ամբաստանութիւն. Թէպէտ և Կօլոմբոս ոչ է
տուեալ էր զբարեկամս պատմութիւն զՀարստութեանն կէ Ֆեր-
Ամերիկոյ, սակայն վերատացեալ իւրն յայնց կող- դինան-
մանց լեալ էին միշտ այնպէս դաւանաքեալ, զի դոս ի
պակասէր տակաւին բազում ինչ առ 'ի հանել զնոսա Կողբա-
ծախուցն եղելոց 'ի նախապատրաստելն զպատ- ԲԵԵԻ.
րաստութիւն. Պարծանք երկրագործութեան միաւորել
ընդ անստեղծ հեռաւոր տերեւառական շահուցն
էր այն բովանդակ, զոր Սպանիա ցայսվայր ըն-
կալեալ էր 'ի փոխարէն ծախուցն արարելոց. Այլ
ժամանակն նուաղեցուցեալ էր զզգացմունս ու-
րախութեան պատճառեալս 'ի գիւտէ նորոյ աշխար-
հի. և համբաւն միայն ոչ էր առարկայ բաւական
առ 'ի յարգեցուցանել զշահասէր անձն Ֆերդի-
նանդոսի. Նորութիւն տերեւառութեան էր յայնժամ
այնպէս սակաւ իմացեալ, մինչ զի յորժամ շահն
ոչ լինէր անընդմիջաբար ստացեալ, յոյսն հեռա-
ւոր երկից բարութեան, կամ յուշիկ իմն և շահա-
ւոր օգտի՝ անգոսնեալ լինէր բնաւին. Ֆերդի-
նանդոս նկատէր յայսպիսի դիպուածի զՍպա-
նիա իբր կորուսեալ վասն ձեռնարկութեանն
Կօլոմբոսի. և պնդէր յառաջ եկեալ յանբաւի ա-
ռաջնորդութեան նր և յանընդունակութենէ 'ի կառա-
վարել. զի աշխարհ մի աստացեալ ոսկեօք ոչ
էր մատակարարեալ և ոչինչ արժանի ստացողաց իւ-
րոց. Ինքն իսկ Իսաբէլլա, որ մի բարի կար-
ծեացն, զոր տակաւին պահէր զԿօլոմբոսէ, հաս- 1500
տատութեամբ չատագովեալ էր զնա, մնաց յաղթեալ
և շրջեալ 'ի բազմութենէ և 'ի համարձակութենէ
ամբաստանողաց նորա. և սկսաւ կասկածել, թէ
այսպիսի իմն յՀանրական թշնամութիւն պարտ էր պատ-
ճառել յանկեղծ գանգատանաց. ուր խնդրէին զաւ-
ձեռն հնարս։ Եպիսկոպոսն Պատայոսայ իւր սովորա
կան յանդգնութեամբ ընդդէմ Կօլոմբոսի զօրացոյց զայ-

սոսիկ կասկածանս, և չարամտութ հաստատեցն զայն. Վաղվաղակի իբրև Թագուհին ետ զազատ իմն ճանապարհ ուղխին զըպարտութիւն, եւ անցանել 'ի վախճանական իմն որոշումն ընդդէմ Քոլոմպոսի. Ֆրանչիսկոս Պոտավիլլայ ասպետն Քալաթրավայ սահմանեալ եղէ բերիլ 'ի Սպանիոլա լիակատար իշխանութեամբ քննելոյ զգնացս Քոլոմպոսի. և եթէ դէպ լիցի նմա գտանել ճշմարտեալ զամբաստանութիւն զյոռի մատակարարութէն, արգելուլ զիշխանութի նր, և ինքն իսկ առնուլ յանձին զկառավարութի կղզւոյն. Անկարելի էր ապրիլն 'ի դատապարտութէ, յորժամ այսպիսի իմն անտեղի յանձնարարութեան շահաւոր էր դատաւորին ճանաչել յանցաւոր զնա, զոր 'ի քննել դատաստանական ճանապարհաւ առաքեալ էր. Թէպէտ Քոլոմպոս հանդարտեցուցեալ էր յայնժամ զամ երկպառակութիւնս կղզւոյն, թէպէտև հաւանեցուցեալ էր զՍպանիացիս և զՀնդիկս առ 'ի հպատակիլ խաղաղարար կառավարութե իւրում, և խորհեալ զհանգամանս գործոնեայս յոյժ վն աշխատելոյ 'ի մետաղսն, և մշակելոյ զհողն, մինչ զի ապաքէն 'ի վացուցեալ էին վն թագաւորին զերևելի իմն մուտս, և զմեծամեծ շահս վն անհատից. Պոտավիլլա առանց արժանի համարելոյ զմտաւ ածել զընութի կամ զվաստակ այսց ծառայութեանց՝ եցոյց անդստին 'ի վայրկենէ հասանելոյ իւրոյ 'ի Սպանիոլա զըացորոշեալ իմն ձկտումն վարելոյ ընդ Քոլոմպոսի իբր ընդ յանցաւորի. Տիրապետեաց տանն ծովակալին 'ի Սան Տոմինիկոս, յորում նա յայնմ ժամանակի դիպուածով 'ի բացեայ էր. տիրեաց արդեանց նր, ուր եթէ արդէն լեալ էր յաղթահարեալ. էառ բռնութ զամրոցն և զշտեմարանս արքային. կամեցաւ, զի ամենեքեան ծանիցեն զնա իբր դերագոյն կառավար. եդ յաղատութի զկալանաւորս բանտարկեալս 'ի ծովակալէն. և կոչեաց զնա երևիլ առաջի ատենին իւրոյ առ 'ի տալ պատասխանի վն գնացից

Ո՛ւխտա- պաշտը- կան ար- փառնէր ուրա.

իւ-

իւրոյ, առաքելով նմա միաւորեալ ընդ կոչմանն զպատճէն մի արքունի պատուէրանին, որոյ զօրութեն կարգաւորիւր Քոլոմպոսի լռելեայն իմն հնազանդութեն հրամանացն Պոտավիլլայի: 1500.
Քոլոմպոս թէպէտև խորապէս վրդովեալ վասն Քոլոմ-
ապերախտութեն Ֆերտինանտոսի և Իզապելլի, պոս տա-
ոչ եկաց վարանել վայրկեան մի 'ի վերայ եղանա- րաբերեալ
կին վարելոյ իւրոյ. Տեղի ետ կամաց ինքնակալաց 'ի Սպա-
իւրոց անձնածու լռութեն. և գնաց փութանակի նիա 'ի
ուր նստէր բռնաւոր և աչառու դատաւորն այն, շղթայս.
որում նոքա տուեալ էին իշխանութիւն քննելոյ դատաստանաւ. Պոտավիլլա առանց ընդունելոյ զնա նախ առաջի իւր, հրամայեաց նոյնժամայն կալանաւորել զնա, կապել շղթայիւք, և ածել 'ի նաւ. Նաև 'ի մէջ այսր մահացուցիչ ձախորդութեան բաղդի իւրոյ՝ հաստատութի ոգւոյն, որ զանազանէ զյատկութի Քոլոմպոսի, ոչ եթող զնա. վստահացեալ յանմեղութեն իւր, և քաջալերելով զանձն խոկմամբ 'ի վերայ մեծամեծ իրացն, զորս գործեալ էր, տարաւ այսմ՝ նախատանաց աստիճանի իւրում ոչ միայն համեստութեն. այլ և վեհանձնութեամբ. Եւ ոչ իսկ ընկալաւ զմխիթարութի կարեկցութեն, որ մեղմէր զտագնապս իւր. որովհետև Պոտավիլլա շնորհելով զպէսպէս ապահարկութիս հատուածոյն, և ազատական պարգևմամբ ընդ նոցա՝ այնոցիկ, որք դիմէին առ նա առ 'ի ստանալ զնն, և թուլացուցանելով զերասանակս կրթութեն և կառավարութե, եղեալ էր արդէն սիրելի ժողովրդեան ցայնվայր, մինչզի մեծագոյն մասամբ բաղդորդ Սպանիացիքն սախրլեալք 'ի կարօտութէ կամ 'ի յանցանաց 'ի թողուլ զերկի աշխարհ իւրեանց՝ ցուցին զառաւել դիւրավելի հաճութի ընդ թշուառութի և ընդ կալանաւորութիւն Քոլոմպոսի. Թեթևամտութեն հաւատային, թէ պարտ էին վայելել առ յարոյն յաղատուի իմն բացարձակ՝ առաւել յարմարական հանդամանաց իւրեանց, և նախկին սո-

վրդովմանց կենաց. ՚Ի մէջ այսպէս նախապատրաստեալ անձանց ՚ի դառնալ զգնացս և ՚ի նախանձել զաստիճանն Քոլոմպոսի, Պոտավիլլա հաւաքեաց զնիւթս ամբաստանութեանց ըզդէմ նր. և ամ՛ բանից մատոյց զունկն, եթէ անհաւանականք էին, և եթէ անբաղկացոյք. ոչ ոք ամբաստանօղ՝ եւ և անհամ՛ աւ, մերժեցաւ. և ապա առաքեցաւ ՚ի Սպանիա յառաջ եկեալն յայսպիսի բնաւին անկանոնաւոր և աչառու դատաստանէ. ՚Ի նմին ժամանակի պատրաստեաց Պոտավիլլա, զի Քոլոմպոս ընդ երկուց եղբարց իւ-
Տեառն րոյ ածցի անդր ՚ի շղթայս. և յաւելեալ ՚ի վերայ
Փրկ. անարգանացն զանիրաւութիւն, արգել զնա ՚ի զանա-
1500. զան նաւս, զրկելով զնա այսու օրինակաւ ՚ի քաջալերութենէ այնր բարեկամական խօսակցութեան, որ կարօղ էր մեղմել զհատուցակաց նր տառապանս. Եւ մինչ Սպանիացիք ՚ի կղզւոյն յայնմիկ տեսանէին ընդհանուր գովութիւ զատահանողից և ըղժպիրհ գնացս Պոտավիլլայ, որ վերածիւր յանպատռուութիւն անձանց և ազգի իւրեանց, մի միայն մարդ պահեաց միշտ զմշտական մեծաշուք գործողութեանց, զորս արարեալ էր Քոլոմպոս. և շարժեցաւ ՚ի ներգործութեանց յարգութե և գթութեն, որ պարտ էր առ աստիճան նր, առ հասակն, և առ վաստակն. Եփոնծոս Վալլէյոս նաւապետ նաւուն, յորում կապանաւորեալ էր ծովակալն, կորուսեալ ՚ի տեսութենէ զկղզին, մատեաւ առ կալանաւորն իւր մեծաւ ակնածութբ, և մատոյց զանձն լուծանել զնա յայնց կապանց երկաթից, որովք անիրաւաբար ծանրաբեռնեալ էր. Պատասխանի ետ
,, Քոլոմպոս ազնուական զայրացմամբ. ,, Ոչ.
,, ես կրեմ զայսոսիկ յաղագս հրամանի թագաւո-
,, րացն իմոց. և նոքա տեսցեն զիս հնազանդ
,, հպատակ յայսմ, որպէս և յայլ հրամանս
,, իւրեանց. Կամօք նոցա կալանաւորեցայ. և
,, նոցա կամքն միայն պարտի դնել զիս վերստին
,, յազատութեն:,,

Ըստ բարերախտութեան ճանապարհորդութեան 'ի Սպա- [illegible]
նիա եղև յոյժ կարճառօտ. Չաղէ թէ Ֆերտի- [illegible]
նանտոս և Եղիսաբեթ իրազեկ եղեն, թէ Քօ- [illegible]
լոմպոս դառնայր կալանաւոր, իսկ և իսկ ծանեան [illegible]
զգործմանն, զոր պարտ էր պատճառել այսպի- [illegible]
սի իմն դիպուած. և զոպաւորութիւն, զոր անե- [illegible]
լոց էր 'ի տուգանս նոյ. Նախատեսանէին, թէ յամե- [illegible]
նայն Եւրոպիա լցեալ լինէր սրտմտութ. վն այսր [illegible]
ապերախտ հատուցման առ այր մի, որ 'ի գլուխ [illegible]
տարեալ էր զգործառնութիւն արժանիս բարձրա- [illegible]
գոյն մրցանակի. և թէ աղաղակելոց էր ընդդէմ [illegible]
անիրաւութեն ազգի միոյ, առ որ եղեալ էր նա 1500.
գերաղանց բարերար. որպէս և ընդդէմ ապա- Նոյեմ.
շնորհութեն նաւապետացն, զորոց զթագաւորութիւն 23.
այնքան պայծառացուցեալ էր. Ամօթալիցք վասն
այնպիսի գնացից իւրեանց, և ըղձանալով կար-
կատել զայս անիրաւութի, և ջնջել զբիծն, որ
կարէր կռուել յաստիճան իւրեանց, արձակեցին
հրամանս, զի Քօլոմպոս գնիցի յազատութեան.
հրաւիրեցին յարքունիսն. և առաքեցին նմա
դրամս ոսկի զի պատրաստեսցէ զանձն երևիլ ան-
դէն պատշաճական իմն տարազու աստիճանին իւ-
րում. Քօլոմպոս հասեալ յանդիման արքայական
մեծվայելչութեն, ծունր եդ առաջի ինքնակալաց
իւրոց. եկաց է ժամանակ մինչ 'ի լռութ, բառնալով
'ի նմանէ զկարողութի խօսելոյ պէսպէս կիրքն, որք
յուզէին զմիտս իւր. 'Ի վերջոյ դարձաւ յինքն.
և արդարացոյց զգործած իւր երկայն իմն ատե-
նաբանութ, յառաջածելով զառաւել հանգու-
ցիչ հաւաստիս անմեղութեն իւրոյ, և բարի դիտա-
ւորութեն. և զբաշխայայտ յանդիմանութիս չա-
րակամութեն թշնամեաց իւրոց. որք ոչ յագեալք
կործանելով զբարդ իւր, հնարէին զրկել զնա յայն-
մանէ, որ միայն մնացեալ էր նմա. այս է, 'ի
պատւոյն և 'ի համբաւոյն. Ֆերտինանտոս ընկա- 17.
լաւ զնա վայելչական քաղաքավարութ. և Եղի- Դեկտ.

սա-

սաքեթ խանդակաթութիւ̃ և մեծարանօք. Յայտ արարին երկոքեան զտհաճիլ իւրեանց ընդ այն, որ պատահեալ էր. ասացին եղեալ առանց գիտութեան իւրեանց. և միաբանեցան խոստանալ նմա զպաշտպանութիւն և զշնորհ. Այլ թէպէտ և մեղադրեցին իսկապէս զՊօտավիլլա, առ 'ի քերել յանձանց իւրեանց զինչ և իցէ կասկած հրաման տալոյ բռնական գնացից նր̃, ոչ դարձուցին Քօլոմպոսի զիրաւարանութի̃ իւր. և ոչ զարտօնութիւն փոխարքայի դաւառացն, զորս գտեալ էր նա. Թէպէտ բաղձային երկու գերիշխանքն երևիլ վրէժխնդիր անիրաւութեանցն եղելոց ընդդէմ Քօլոմպոսի, սակայն կասկածոտ նախանձաւորութիւն, որ դրդեալ էր զնս̃ զգեցուցանել Պօտավիլլայի զայն աւագութիւն, որ դնէր զնա 'ի վիճակի վարելոյ ընդ Քօլոմպոսի այնպէս անարժանաբար, տակաւին տևէր. Երկնչէին կարի իմն վստահանալ առն միում, որում էին նոքա մեծապէս պարաւանդեալ. Նմին իրի պահելով զնա յարքունիսն ընդ այսպէս պատրուակօք. ընտրեցին զՆիքօլա Օվանտոս զասպետն զինուորական կարգին Ալքանթարայի բդեշխ Սպանիոլայի. Քօլոմպոս մնաց ներքսապէս խոցեալ յայսմ նոր անիրաւութէ̃. որ գայր 'ի ձեռացն, յորոց կարէր դարման մատուցանիլ անցեալ տհաճութեանցն. Պառնութին, որով մեծամեծ անձինք զգածին յամիրաց, որք գուշակեն զկասկած զանմեղութէ̃ իւրեանց, և որք բերեն ընդ ինքեանս զտարացոյց անարգանաց, է տարապայման իմն. Քօլոմպոս փորձեալ էր զայսոսիկ երկուս իրս 'ի Սպանիացւոց. և ապերախտ գնացք նր̃ զայրացուցանէր զնա ցայնվայր. մինչ ոչ ևս կարէր ընդ երկար թագուցանել զկիրսն, որք յուզէին 'ի նմա. Ուրև երթայր, տանէր ընդ իւր իբր յիշատակ ապերախտութե̃ նր̃ զշղթայսն զայնոսիկ, որովք ծանրաբեռնեալ էին զնա. Ունէր զայնս յարակայ

կա-

կախեալ 'ի սենեկի իւրում. և հուսկ յետոյ կար-
գաւորեաց, զի 'ի մահուան իւրում թաղեսցին ընդ
մարմնոյ իւրոյ 'ի ներքս 'ի գերեզմանի ։

Յայսմ վայրի հոգին երկրածանօթութեան Թէ-
պէտ և ուժգին ընկրկեալ էր 'ի տմարդի վար- 1501.
մանէն ընդ առն միում, յորմէ նախնաբար Յաստա
զարթուցեալ էր 'ի Սպանիա, շարունակէր 'ի լի- Ջուղէ-
նել կորովի և ներգործական. Ռոտէրիկոս Պաս- մոնէ
թիտաս անձն երևելի հանդերձեաց զերկուս նաւս Երկրո-
ընկերութբ Յոհաննու Լոզայի, որ գոլով ծա- գրոսէ.
ռայեալ 'ի ներքոյ ծովակալին յերկուս ճանապար- Յո-
հորդութիս նր՟, համարեալ էր ընդունակագոյնն հաննու.
'ի Սպանիացի նաւուղղացն. Սոքա ուղղեցան վաղ-
վաղակի դէպ շարունակին. հասին 'ի ծովեզրն
Փարիայց. և յառաջադէմ լինելով ընդ արև-
մուտս, ծանօթացան բովանդակ վայրաց գաւա-
ռին, որ ծանուցեալ է այժմիկս անուամբ Թէր-
րա ֆէրմայի 'ի Րաւիօ վէլայէն ցծոցն Տարիէնու.
Սէ յետ բազմաց չուեաց երկրորդ ճանապարհոր-
դութբ իւր Օյետա ընդ առաջին ընկերակցի իւ-
րում Ամերիկոսի Վեսփուչչեայ. և ոչ լինելով
տեղեկացեալ վիճակին Պասթիտասայ, կալաւ ըզ-
նոյն ընթացս. և դիպեցաւ 'ի նոյն տեղիսն. Ճա-
նապարհորդութիւն Պասթիտասայ եղև յաջողակ և
շահաւէտ. Օյետայինն ձախորդ. Բայց երկոքեան
դիմէին յաճեցուցանել զեռանդն երկրածանօթութե.
որովհետև ըստ չափուն, որով Սպանիացիք ստա-
նային զառաւել իմն տարածեալ ծանօթութի շա-
րունակին Ամերիկոյ, բազմացուցանէին և զգաղա- Օջեա-
փարս իւրեանց զձոյն ընդլինուէ նր ։ տսա

Նախ քան զդառնալն բաղդորդացս այսոցիկ 'ի ճա- Կուրզէն
նապարհորդութէ իւրեանց, պատրաստեցաւ նաւա- կառա-
հանգէս մի հրապարական ծախուք առ 'ի փո- վար
խարերել զՕվանտոս նոր ըդեաչին 'ի Սպանիո- Սպանիո
լա. Ներկայութի նր յայն կողմանս էր ամենա- լայէ.
հարկաւոր առ 'ի նահանջել զանշըջահայեաց գնացս 1501.

Պօ-

Պոպատիլլայի. որոյ անհանճար մատակարարութիւն սպառնայր հարգանութեանն զկործանումն. Նա ինքն գիտակ բնութեանց իւրոց և անիրաւութեանցն ընդդէմ Կոլոմպոսի, հանապազորդէր առնել իւր միակ առարկայ շահելն զշնորհս և զնեցուկ հայրենակցաց իւրոց, յարմարելով զանձն կրից և նախադասութեանց նց. Այսու նպատակաւ հաստատեաց զկանոնաւորութիւնս, որք էին բոլորովին հակադրեալք կանոնաւորութեանցն, զորս Կոլոմպոս համարեցաւ էական 'ի յաջող ժամանակին նժդեհութեան. փոխանակ խիստ խրատուն, որ պահանջէր առ 'ի ընտելացուցանել զցոփացեալ և զապականեալ անդամն, յորոյ ընկերութիւն բաղկացեալ էր, առ նուաճումն ընդ օրինօք, և առ ստարակարգութիւն, թողացոյց նց վայելել 'ի բացարձակ իմն ցոփութեան, որ յանդգնեցուցանէր զնոսա յառաւել մոլեկան եղեռունս. փոխանակ պաշտպանելոյ զտառապեալ Հնդիկսն, ետ զօրինական իմն ապահովութիւն այնմ, որ ճնշէր զտարաբախտ ժողովուրդն զայն. Արար զկատարեալ իմն համար այնոցիկ, որ մնացեալ էին կենդանի յանցեալ թշուառութեանց իւրեանց. զատոյց զնս 'ի դասս դասս. բաշխեաց լեր յատուկ ժառանգութիւն 'ի մէջ յարբելոյն իւրոց. և վերածեաց զկղզին ողջոյն 'ի վիճակ բոլորական ծառայութե. Ագահութի Սպանիացւոց էր կարի անյագ 'ի ձեռնամխել յինչ և իցէ հանգամանս ստանալոյ զինչս. Թող ըզհնարսն որոնելոյ զոսկի, և վն այսորիկ այս ծառայուհի բաց 'ի լինելոյն անիրաւ, եղև ևս ծանրաբեռն. Հնդիկք տեսանէին քարշեալք իւրեանց բազմութե 'ի լերինս. և բռնադատեալք յաշխատիլ 'ի մետաղսն 'ի տեարց իւրեանց. որք տային նց զսակ գործոյն առանց գթութե և ընտրողութե. Աշխատութի իմն այնպէս անհաւասար ուժոյ նոցա և իւրեանց նախկին սովորութե կերպ՝ ջնջեաց զայն տկար զարմ մարդկան այնպիսի սրընթաց աղարտ-

մամբ

ճամբ, մինչչի փոյթ ընդ փոյթ աւարտեցաւ ՚ի բոլո-
րական շրջումն նախկին բնակչաց կղզւոյն:
Հարկաւորութիւնն մատուցանելոյ զաւձեան իմն Հաստա-
դարման այսմ անկարգութեն փութացոյց զճանա- տումն
պարհորդութին Օվանտոսի. Այր նա զօրագլուխ Նոր կա-
տուեալ ակնածելի սպառազինութեն, որ մինչև ռավա-
ցայնժամ հանդերձեալ էր ՚ի Նորոյ աշխարհի. րու-
Նաւակամայր երեսուն և երկու նաւուք. յորս մտեալ թեան.
էին երկու հազար հինգ հարիւր անձինք խորհր- 1502.
դով մարդաբնակ առնելոյ զերկիրն. Ընդ ժամա-
նել Նորոյ բդեշխին այսու հզօր օժանդակութ̃ առ
հաստատեալն, Պոպատիլլա հրաժարեցաւ ՚ի պաշտօ-
նէ իւրմէ. և ընկալաւ զպատուէր դարձ առնելոյ 1503.
անընդմիջապէս ՚ի Սպանիա առ ՚ի տալ համար
գործոց իւրոց. Ռոլտանոսի և այլոց գլխաւորաց
վտարանջելոցն, որք լեալ էին առաւել սաստիկք
՚ի գլխադարձութեան ընդդէմ Քոլոմպոսի, ազդ եղև
՚ի նմին ժամանակի թողուլ զկղզին. Հրատարա-
կեցաւ ծանուցումն ինչ, որ յայտ առնէր, թէ
ազգայինքն էին ազատ հպատակ Սպանիոյ. յորոց
ոչ պահանջիւր ծառայութիւն ինչ ընդդէմ յօժա-
րութեան իւրեանց, և առանց վճարելոյ նոցա հաւասա-
րապէս զաշխատութիւն իւրեանց. Իսկ նկատմամբ
Սպանիացւոցն արարան զանազան կանոնաւորութիւնք.
և բնաւ դիմէին ՚ի սանձել զապարասան հոգին,
եղեալ այնպէս վնասակար նժդեհութեանն, և ՚ի
հաստատել զյարգանս առ օրէնս և առ կարգա-
ւորութիւն. իսկ, որք են հիմն ընկերութեն. որոց
պարտական է զածումն իւր՝ զշուք և զյարակայութ̃
իւր. Եւ ՚ի չափաւորել զառատապայման շահն,
զոր անձինք սակաւանք ենթադրեալ էին առնել
մետաղաց հանքաց, հրատարակեցաւ հրաման մի,
որ կարգաւորէր, թէ պարտ էր բերել զռովան-
դակ ոսկին առ հրապարակական քուրայս. և որ
յայտ առնէր, թէ կէսն անկ էր թագաւորու-
թեանն:

Մինչ

Ընդհա- ծայ յոյ- տարու- թէ Կո- լոմբոսի.

Մինչդեռ կալեալ էին այսպիսի ընթացք առ ՚ի ապահովացուցանել զանդորրութիւն և զբարին հատուածոյն, զոր տնկեալ էր Կոլոմբոս, նախնիքն տարժանէր ՚ի տաղտկալի զբաղման ժտելոյ զշնորհս արքունեացն. և հանդերձ համայն վաստակովք իւրովք և նշանաւոր ծառայութեն թախանձէր զայն ՚ի զուր. Խնդրէր բանիւք սկզբնական պայմանաւորութեն եղելոյ յամին հազար չորեքհարիւր իննսներորդի երկրորդի կարգիլ վերստին յիւր պաշտօնն փոխարքայի ՚ի մէջ գաւառայն գտելոց յիւրմէ. Այս տարապայման խնդ ծակատագրութեն, պարակայութին, յորոյ մէջ պնտէր առ ՚ի զօրացուցանել զպահանջումն իւր, որոշեաց զնախանձոտ Միապետն ոչ հայիլ յայն. Մեծութիւն երկրագտութեց իւրոց, և տեսութիւն բարգաւաճութեան զօրութեն նոյ շարժեցին զՖերտինանտոս ՚ի նկատել իբր չափազանցս՝ և ոչ ընաւ քաղաքականս զշնորհմունս առաջնոյ դաշնադրութեն. Երկնչէր վստահանալ հպատակի միում զգործածութիւն իշխանութեն իւրք, որ սկսանէր երևել մեծապէս ընդարձակեն. և որ կարէր յաւուր միում եղանել ահարկու.

1502. Ընչեաց զնոյն կասկածանս և յԻզաբէլթ. և ընդ պէսպէս պատրուակօք, որք հաւասարապէս էին սնոտիք և անիրաւք, ոչ պատասխանեցաւ խնդրոցն Կոլոմբոսի. որ խնդրէր, զի կատարեսցեն զայն, զոր հանդիսաւոր իմն դաշնաւորութի պարաւանդեալ էր զնա ՚ի պահել. Յետ յածախելոյ գրեթէ ընդ ամս երկուս յարքունիսն Սպանիոյ իբր խոնարհ աղերսարկու, ետես, զի անկարելի էր ցրել զնախադատութիւս և զըմբռնմունս Ֆերտինանտոսի. և ծանեաւ ՚ի վախճանի, թէ ընդունայն աշխատէր վարելով զդատ արդարութեան և վաստակոյ առ արքայի միում շահաքաղցի և նախանձոտի:

Այլ և ոչ այս անակնկալ հատուցումն կարող եղև նահանջել զնա ՚ի յառաջ տանելոյ զայն մեծ ա-

ռար-

ռարկայն, որ անդստին 'ի սկզբանէ զարթուցեալ [illegible]
էր զուշիմ պատկերակերպութի իւր. և դրդեալ [illegible]
զնա 'ի ձեռնարկել յերկրագտութի. Գտանել զնոր [illegible]
ճամ անցս առ արեւելեան Հնդկաստան էր իւր սկզբ- [illegible]
նական և բերկրալի խոհումն. Այս պատահեցու- [illegible]
ցանէր յարաժամ զմիտս նր̃. վն սեպհական դի- [illegible]
տողութեանց իւրոց 'ի ճանապարհորդութեան, զոր ա- [illegible]
րար նա առ Փարիա, կամ վն աղօտ ինչ նշանի [illegible]
ստացելոյ զայնմանէ յաղգայնոցն, կամ վն տեղե-
կութեան իւիք տուելոյ 'ի Գաստիտասայ և 'ի Բօ-
գոյէ զառաքմանց իւրեանց՝ յղացաւ զկարծիս,
թէ անդր քան զշարունակն Ամերիկոյ իցէ ծով
ինչ, որ տարածիւր յարեւելեան Հնդկաստան. և
յուսացաւ գտանել զնեղուց իմն, կամ զանձուկ
տարածութի ցամաքի. ը̃ որ մարթ իցէ ունել զհաղոր-
դակցութի նաև ը̃ մասն արդէն ծանուցեալ Ովկիա-
նոսին. Գերբարեբախտիկ իմն վարկածիւ ենթադ-
րէր, թէ այս նեղուց կայացուցեալ իցէ շուրջ զծո-
ցիւն Տարիէնու. Ըստ այսու գաղափարաւ, թէպէտ 1502.
և բազմօք անցեալ զաւուրբք, և մաշեալ յաշ-
խատութեանց, և վատեալ վն հիւանդութեանց, մա-
տոյց զանձն զօրաւորութեան բաղդորդ երիտասարդի
միոյ ձեռնամուխ լինել 'ի ճանապարհորդութիւն
իմն, որ ապահովացուցանէր զճշմարտութիւն այսր
ծանրակշիռ յօդուածոյ. և կատարելագործէր զմեծ
գաղափարն, զոր նա 'ի սկզբանէ հետէ ունէր 'ի
սրտի հասուցանել առ վախճան. Զանազան պա-
րագայք զուգընթաց լինէին յայնմ վայրի առ 'ի
հանդերձել զՖերտինանտոս և զԵղիսաբեթ 'ի
տալ զհաճոյական ունկն առ այս առաջադրութի.
Խնդրային նոքա ունել զպատրուակ իմն պատուա-
ւոր իրիք պաշտօնի առ 'ի հեռացուցանել յարքու-
նեաց զայր մի, որոյ խնդրոցն անսալ ոչ երբէք քաղա-
քականութի. և զորոյ արհամարհել զծառայութի ան-
վայելուչ գործողութի էր. Եւ թէպէտև օտարք 'ի փո-
խարինելոյ Քօլոմպոսի, այլ ոչ էին անզգայք առ
վաս-

վաստակ նր. և վն փորձառութեն, զոր ունէին զընդունակութէ նր և զգնացիցն, ընծայէին հաւաստ վարկածից նր. և յուսային զնոցանէ զերջանիկ իմն պատահումն. Եւ այսոսիկ նկատմունս 'ի դէպ է յարել զերրորդ իմն առաւել ազդողական. Զայնու ժամանակաւ նաւահանգէսն փորթուգեղաց ընդ առաջնորդութբ Գամայի դարձաւ 'ի Հնդկաց, և հարստութբ բեռին իւրոյ եբեր առ ազգս Եւրոպիոյ զկատարելագոյն իմն գաղափար քան զոր կարացեալ էին կերպաւորել յայնժամ զընչաւէտութէ և զարգաւանդութէ արևելից. Փորթուգեղք լեալ էին առաւել բաղդաւորք քան զՍպանիացիս յերկրածանօթութիս իւրեանց. Ստացեալ էին զհաղորդակցութի ընդ աշխարհացն, ուր ճարտարմտութի, արհեստք և վայելչութի ծաղկէին. և ուր շահավաճառութին յերկար ժամանակաց հետէ մուծեալ էր, և հաստցեալ առ մեծագոյն տարածութի քան յայլում իմիք կողման աշխարհի. Իսկ առաջին ճանապարհորդութիք նց յայն տեղիսն հոգացան վաղվաղակի բա ցի յօգտութէ մեծի իրիք շահու՝ զտարազս անմահմանաբար մեծագինս և աճ ուրեք ցանկալիս. Լիսպօնա եղև նոյնհետայն աթոռ տուրևառութեն և փարթամութեն. մինչդեռ Սպանիա ունէր միայն զակնկալութի հեռաւոր իրիք բարուն, կամ ապագայ շահու յարևմուտս. Զինչ իր կարէր յայնժամ լինել առաւել հաճոյական Սպանիացւոց, քան զյառաջ մատուցումն Քոլոմբոսի առաջնորդելոյ նց յարևելս ընդ ճանապարհ իմն, զոր նա պատկերէր առաւել կարճոյ և նուազ վտանգաւոր քան զայն, զոր փորթուգեղք վաղ իսկ կալեալ էին. Նոյն իսկ Ֆերտինանտոս զգաց յանձին զարթնուլ յայսմ առաջադ-
1502 րութե. և հաւանեցաւ իսկապէս դնել զայն 'ի գործ. Բայց որչափ և շահեկան լինէր այս ճանապարհորդութի վն այսմին, Քոլոմբոս ոչ կարաց նախահոգալ, բայց եթէ չորս փոքրիկ նաւս, որոց

Չորրորդ ճանապարհորդութիւն.

մեծագոյնն ոչ տանէր աւելի քան զեօթանասուն թօննէլաթս առ 'ի կատարումն ճանապարհորդութեն . Սովորեալ նա ընդառաջ ելանել վտանգի, և դիմագրաւ լինել 'ի մեծամեծ փորձանս՝ ես և անհաւասար զօրուն , ոչ տարակուսեցաւ վայրկեան մի յընդունել զհրամանատարութի այսր փանաքի նաւախմբի . Եղբայր իւր Բարթողոմէոս, և կրտսեր իւր Ֆերտինանտոս վիպասանն վարուց իւրոց ընկերացան նմա . Մեկնեցաւ 'ի Կատիչեայ յինն մայիսի . և դիմեցաւ ըստ սովորութեն իւրում 'ի 'ի կղզիսն Կանարիոյ . անտի առաջադրէր տարածանիլ ուղղակի ընդ շարունակն . բայց մեծագոյն նաւ իւր էր այնպէս խարխուլ, և եղեալ այնպէս անընդունակ 'ի ծառայել, զի տեսանիւր պարաւանդեալ 'ի ձգել յառաջ ընդ Սպանիոլա յուսով փոխանակելոյ զայն ընդ իմիք յայնց նաւուց նաւահանգիսին, որ ածեալ էր անդր զՕվանտոս . Իբրև եհաս մօտ 'ի Սան Տոմէնիկոս, եգիտ զութևտասն յայնց նաւուց գեղեցիկս և բեռնաւորս և 29.
'ի պատրաստի նաւելոյ 'ի Սպանիա . Կօլոմպոս Յու-
անընդմիջաբար տեղեկացոյց զդեսպանն զնպատա- նիս.
կէ այսր նոր ճանապարհորդութեն իւրոյ, և զպիպոճածոյն, որ ստիպեալ էր զնա այլայլել զընթացս իւր . Խնդրեաց հրաման մտանելոյ 'ի նաւահանգիստն ոչ այնչափ վն սակարկանելոյ զփոխանակութե նաւակին իւրոյ, որչափ վն ապաստանելոյ անդէն 'ի ժամանակի կատաղի իմն մրրկի զոր նա ճանաչէր մօտալուտ 'ի պէսպէս նշանացն, զորս փորձառութի իւր և լրջմտութին ուսուցեալ էին նմա նշմարել . Ս՛ այսր պատճառի խորհրդեա ես Օվանտոսի յապաղել զաւուրս ինչ զարձակումն նաւահանգիսին . այլ նա զլացաւ զխնդիր նր . և անգոսնեաց զյառաջատես ազգարարութի նր . 'ի մէջ պարակայութեցն , յորս մարդասիրութին շնորհեալ էր ապաւէն Ամերիկացւոյ ումեմն , բացաստցաւ Կօլոմպոսի ընդունելութին յաշխարհ իմն,

զորոյ ինքն յայտնեալ էր զգթութիւն և ստացեալ զստացումն. Փրկարար խրատն իւր, որում կարէր արդեօք ունկն դնել առանց դդըղն անպատշաճութեն, նկատեալ եղև իբր տեսիլ յերազողի, որ ձկտէր գոռոզութե՛ գուշակել զապագայն, որ կայ արտաքոյ բերման մարդկեղէն իմացողութե՛. Նաւահանդէսն ճանապարհորդեաց դէպ Սպանիոյ. Դեստադայ գիշերին եկն փոթորիկն սոսկալի ուժգնութե՛. Կոլոմպոս ուշադիր վտանգին կայաւ ՚ի դէպ ժամու զգուշութիւն իւր. և ապրեցոյց զփոքրիկ նաւախումբ իւր. Նաւահանդէսն սահմանեալ վն Սպանիոյ պատահեցաւ արկածին, որում արժանի էր յանդգնութի և կամակորութի հրամանատարաց իւրոց. Յութուտասն նաւուց երկու կմ երեք միայն փրծան ՚ի հանրական նաւաբեկութէն. կործաւ անդէն Պոտավիլլա, Ռոլտանոս և մեծագոյն մասն նց, որք լեալ էին առաւել կատաղիք ՚ի հալածելն զԿոլոմպոս, և ՚ի ճնշելն զՀնդիկս. ՚Ի միասին ընդ նս զբովանդակ ինչսն, զորս ստացեալ էին անիրաւութե՛ և անգթութե՛ իւրեանց՝ եկեալ ծովն. Այսքիկ անցանէին քան զարժողութ երկուհարիւր հազար փեսոսաց. անբաւ գումար յայնմ ժամանակի. և որ բաւական լինէր ոչ միայն յագատել զնս ՚ի խիստ իմն քննութէ գնացից իւրեանց, այլ և ապահովացուցանել զնս վս շնորհալի իմն ասպնջականութե՛ յարքունիսն. ՚Ի մէջ նաւուցն որք ապրեցան, էր մինն բեռնաւորեալ արդեամբքն Կոլոմպոսի, որք վերաստացեալք էին կանխաւ, յորժմ նաւաբեկեցաւ բաղդ. նր. Ցրուցեալ վիպասանք ՚ի ճշգրիտ անմնմանուէ մարդկեղէն յատկութեց, և յարդար բաշխմանէ վարձուցն և պատժոցն, որք կարի իսկ քաջ յայտնի են յայսպիսի դիպուածս, ընծայեն զայն բովանդակ անմիջական միջնորդութե՛ ամենայն յառաջատեսութեն առ ՚ի առնուլ զվրէժ անիրաւութեցն եղելոց տարապարտուց առն միում, և առ ՚ի պատուհասել զհարս-

տա-

ծաւհարողըն անմեղ ժողովրդեանն. Զանազան տպա-
ւորութիւք եղեն յոյժ դիպաւորութն 'ի վն հոգ-
ւոյ տգէտ և աւելորդապաշտ բաժնի արանցն որք
առաջիկայք եղեն գիպոճածոյն. Ռամկական զար-
մացումն ընդունակ է պահել զհամարումն իմն մեծ
նկատմամբ անձանց, որք նշանաւորք են զգօնութ
իւրեանց, և սեպհական իմն հնարագտութբ. և վն
այսպիսի պատճառի հաւատացին նոքա, թէ Քօ-
լոմպոս ունէր զկարողութիւն իմն գերբնական. և
պատկերակերպեցին, թէ նոյն ինքն նիւթեալ իցէ
զայն աչարկու ալեկոծութիւն մոգական արհեստիւ
և զօրութ հմայից առ 'ի առնուլ զվրէժ 'ի թըշ-
նամեաց իւրոց:

Քօլոմպոս եթող վաղվաղակի զՍպանիոլա, ուր 1502
պատահեալ էր այսպիսի իմն անհիւրասէր ընդու- 14 Յու-
նելութ. և դիմեաց դէպ շարունակին. Յետ ըն- լիս
թացից ինչ լի տաղտկութբ և վտանգաւ, եգիտ Խնդրէ
զԳուանայա կղզին ոչ յոյժ տարակաց 'ի ծովե- 'ի վեր
զերէն Հօնտուրասայ. Աստանօր կալաւ նա զխօ- զնոյն
սակցութի ընդ ոմանց 'ի բնակչաց շարունակին, ինչ ու-
որք հասին անդր յոյժ մեծ քանօէիւ միով. Երևէր Հընդ-
այս ժողովուրդ իմն առաւել քաղաքականացեալ. կային
և որ 'ի ճանաչման արհեստից արարեալ էր զմե- Ովկէա-
ծագոյն զարգացումն քան զայլ ո և իցէ յառա- նոսն.
ջագոյն գտեալս 'ի նմանէ. Առ հարցմունսն, զորս
առնէին Սպանիացիք սովորական ագահութեն առ
'ի գիտել զտեղիսն, ուր նոքա գտանէին զոսկի,
զոր կրէին վն զարդու, պատասխանեցին ակնար-
կելով զգաւառս գետեղեալս ընդ արևմուտս. ուր
ըստ գծագրութե նց գտանիւր ոսկի այնպիսի ա-
ռատութբ, զի 'ի գործ ածեալ էր յառաւել հա-
սարակ պէտս. փոխանակ երթալոյ 'ի խնդիր այս-
պիսի իմն բարեյոյս երկրի, որ ածեալ էր զնն առ
ծովեզերօքն Նուքաթանու ցհարուստ թագաւո-
րութիւն Մէսիքօի, Քօլոմպոս էր այնպէս զմայ-
լեալ ընդ առաւելապէս սիրեցեալ խորհուրդն իւր

գտանելոյ զայն նեղուցն, որ հաղորդէր ը̃ Հնդ-
կային Ովկիանոսի, մինչզի ձգեաց անդէն ը̃ ա-
րևելս դէպ ծոցոյն Տարիէնու. Յայսմ նաւար-
կութեան ծանօթացաւ բովանդակ ծովեզեր շարու-
նակին 'ի Կրացիա տիօ գլխոցն մինչև ցնաւահան-
գիստն. որ յաղագս գեղեցկութեան իւրոյ և ապա-
հովութեանն կոչի Փորթօ Պէլլօ. Շարունակեաց 'ի
նանիր որոնել զայն երևակայական նեղուցն, ընդ
որ ակն ունէր առնել ճանապարհ առ անծանօթ
իմն ծով. և թէպէտ ընդոստեաւ 'ի ցամաք բա-
զում անգամ, և տարրացաւ 'ի ներքս երկրին,
ոչ եմուտ այնպէս 'ի խորս առ 'ի անցանել ընդ
1502 անձուկ ցամաքալեզուն. որ զատուցանէ զծոցն
Մեքսիքոյ 'ի մեծ հարաւային Ովկիանոսէն. Այլ
այնքան հաճոյ եղև նմա բերրիութի տեղւոյն, և
յղացաւ զայնպիսի գաղափար զհարստութեանց նորա
յառհաւատչէից ոսկւոյն առաջի մատուցելոց յազ-
գայնոցն, մինչզի որոշեաց թողուլ զփոքրիկ իմն
բնակութի առ Պէլէմ գետովն 'ի գաւառին Վե-
րակուայի ընդ հրամանատարութե եղբօր իւրոյ. և
ինքն դառնալ 'ի Սպանիա առ 'ի նախահոգալ որ
ինչ կարևոր էր առ 'ի առնել զայն հաստատութի
1503 տևողական. Բայց ապարասան հոգի արանցն, որ
ընդ առաջնորդութե նր, զրկեաց զԿօլոմբոս 'ի
փառացն անկելոյ զառաջին նմդեհութին 'ի շարու-
նակին Ամերիկոյ. Խռովութի և յափշտակութի ա-
րանց իւրոց զրգռեցին զազգայինս առնուլ զէնս.
և քանզի սոքա էին տեսակ իմն ազգի համարձակ
և պատերազմական առաւել քան զբնակիչս կղզեացն,
Նաւաբեկ լինի առ ծովափամբ Ճամայկայ.
կոտորեցին զմասն ինչ Սպանիացւոց. և պարտա-
ւորեցին զայլս 'ի թողուլ զտեղին, զոր չէին բա-
ւական պահել:

Այս առաջին փնտումն, որում պատահեցան Սպա-
նիացիք յԱմերիկեան ազգաց ինչ ոչ եղև միայն
թշուառութին, զոր կրեաց Կօլոմբոս, նաև զհետ
եկին և այլ յաջորդական տառապանք. որոց ներ-

քս

քոյ անկեալ է նաւարկութիւն. Մոլեգին հողմունք հանդերձ ահարկու մրրկօք որոտմանց և կայծականց սպառնային փանաքի նաւուց իւրոց զկործանումն 'ի նմին ժամանակի, յորում տժգոհ խուժան իւր ընկձեալ յուսահատութէ և նուաղեալ 'ի ռոճկաց, կամ դիմադարձ լինէր հրամանաց նորա, կամ ոչ էր յաստիճանի բարւոք կատարելոյ զայնս. Մինն 'ի նաւակաց իւրոց կորեաւ. բռնադատեցաւ բարձի թողի առնել զմիւս ևս 'ի նոցանէ իբր անպիտան. և երկոքումբք մնացելովք եթող զայն մասն շարունակին, զոր յանձկուն իւրումն անուանեաց ծովեզր խոշտանգանաց. և ուղղեցաւ առ Սպանիոլա. Նոր ձախորդութիւք մնային նմա յայսմ ճանապարհորդութեն. Մղեցաւ յետս 'ի բուռն իմն փոթորկէ 'ի ծովեզերէն Քուպայի. Նաւք իւր ընդ հարան ը միմեանս. և մնային այնպէս վատթարեալք 'ի զարկմանէն, մինչզի մեծագոյն ևս դժուարութե հասին 'ի Ճամայիքա. ուր պարտաւանդեցաւ ունել միշտ զնս մօտ 'ի ցամաքն առ 'ի պահելոյ զնս 'ի խորասուզելոյ. Ուր ուրեմն երևեցաւ, թէ այս թշուառութի լցեալ էր զչափ իւր. Ընդոստեաւ նա յափն 'ի վն կղզւոյ միոյ յերևելի իմն տարակացուն 'ի միակ հարգունուէ Սպանիացւոց յԱմերիկա. Նաւք իւր իբր քայքայեալք ոչ ևս կարէին նորոգիլ. Առաքելն զլուր զկայաւորութէ իւրմէ 'ի Սպանիոլա երևէր անգործադրելի. և բաց յայսմանէ ընդունայն էր սպասել անտի օժանդակուե ինչ. Միտք նր բեղմնաւոր հնարից և առաւել կորովի 'ի ծագս թշուառութեանց, յորում անձինք տկարք լքանին 'ի յուսահատուե, եգիտ զմիակ հնարսն, որ կարէր ընձեռել զերևոյթ ինչ սփոփանաց. Դիմեաց առ ազնուական հիւրասիրութի ազգայնոցն. որք նկատելով զՍպանիացիս իբր էակս վերնագոյն բնուէ, անձկացեալ էին յայսմ դիպաւորութե հոգալ զպիտոյս նոցա. Ընկալաւ 'ի նոցանէ զերկուս 'ի քանօէից իւրեանց

իւրաքանչիւրն կերպացեալ 'ի միոյ բնոյ լոկ ծառոյ՝ փորուածոյ զօրութեամբ հրոյ. և այնպէս յոռի կազմեալ և անյարմար, զի հազիւ մարթ է տալ նոցա զանուն նաւակաց. 'Ի վերայ այսոցիկ, որք էին պիտանի միայն վս նաւելոյ առ ափամբ, կամ վասն անցանելոյ 'ի միոջէ լճէ 'ի միւս, Մենտեզ Սպանիացի, Ֆիեսքի Ճենովացի երկու ազնուականք մտաւորք և բարեկամք Կոլոմբոսի յառաջամատոյց եղեն վայելչապէս՝ գնալ 'ի Սպանիոլա ճանապարհաւ իմն աւելի քան զերեսուն փարսախս. Բայց կատարեցին զայն 'ի տասն աւուրս, յետ յաղթելոյ անհաւատալի վտանգաց, և կրելոյ զայնպիսի տաժանմունս. զի բազումք 'ի Հնդկաց, որք ընկերեցին նց, ընկճեցան և մեռան. Փոյթն ցուցեալ նց 'ի բդեշխէն Սպանիոլայի, ոչ եղև այն, որում արժանի էր քաջարտութեան նց. և ոչ այն, զոր պահանջէր տառապանք անձին, յորմէ նոքա յղարկեալ էին. Օվանդոս վս անարգ իմն նախանձոտութեանն ընդ Կոլոմբոսի՝ երկնչէր հաւանել նմա գնել զոմն
1503 'ի կղզին, զոր կառավարէր ինքն. Այս չանարգագուրդ կիրք կարծրացոյց զսիրտ նր, և շիջոյց 'ի նմա զամ գորովական զգայութի, զոր խոկումն 'ի վերայ ծառայութեց և տարապայմանութեց առն մեծի, կամ գութն վս քաղաքակցաց իւրոց շաղելոց 'ի նոյն թշուառութիւն պարտ էին զարթուցանել. Մենտեզ և Ֆիեսքի ծախեցին զամիս ութն 'ի թախանձել զօգնութի վս հրամանատարի իւրեանց, և վասն ընկերելոցն նմա առանց իրիք յուսոյ ստանալոյ երբեք:

Տառա- պանք Քր. և չարչա- րանք յայնժ փէլ-ոլոՁ.

Ընդ բովանդակ այս ժամանակ զանազան պատահմունք և անհանգստութիւնք տառապեցուցին զսիրտ Կոլոմբոսի և ընկերաց իւրոց 'ի ձախորդութեան. 'Ի սկզբան անդ ամբոխական յոյսն արագ իմն ազատութեն բարեյաջողութեն Մենտեզայ և Ֆիեսքեայ քաջալերէր զառաւել յուզեալ հոգիսն.

Յետ

Յետ սակաւ միոյ սկսան երկչոտքն կասկածիլ, թէ 1504
մոլորեալ իցեն նոքա 'ի յանդուգն յանձնառութե̃
իւրեանց. Կնքեցին բոլորեքեան 'ի վերջոյ թէ էին
բացարձակ կորուսեալք. Նշոյլն յուսոյ, որ փոքր
մի յառաջ շողայր զնոքօք, երեւեցոյց առաւել
սոսկալի զվիճակ նոցա. Յուսահատութիւն աճեցեալ
'ի խաբեալ ակնկալութենէ՝ տարրացաւ 'ի սիրտ իւ-
րաքանչիւր ուրուք. Վերջին կազդուրումն պակա-
սեալ էր նոցա. և ոչ այլ ինչ մնայր, բայց եթէ
վախճանել զեղկելի աւուրսն 'ի մէջ լոկ անտա-
ռացն՝ հեռի 'ի հայրենեաց իւրեանց և 'ի բարե-
կամաց. Նաւավարքն լի վառմամբ կատաղութե̃
յարեան 'ի յայտնի իմն ապստամբութի̃. սպառ-
նացան կենաց ծովակալին. զոր և նախատէին իբր
սկզբնապատճառ աղէտից իւրեանց. առին զտասն
քանօէս, զոր նա ինքն գնեալ էր 'ի Հնդկաց.
և առ հեծուկս սաստից նր̃ և աղաչանացն՝ գնա-
ցին 'ի բաց 'ի վր̃ այնց 'ի հեռաւորագոյն մասն
կղզւոյն. 'Ի նմին ժամանակի տրտնջէին ազգայինք
վն̃ յերկար յամելոյ անդէն Սպանիացւոց. Նա և զի
ճարտարութի̃ նոցա ոչ էր մեծագոյն քան զկրա-
ցեաց իւրեանց, որ 'ի Սպանիոլա, գտին և նոքա
զծանրութի̃ պարտականութե̃ն պահելոյ զայնքան
օտարս յամ̃ կողմանէ անհանդուրժելի. Սկսան
բերել նոցա զպարէնսն դժկամակութե̃. մատակա-
րարէին զայն ժլատ ձեռամբ. և յայտ առնէին
կամել արգելուլ բնաւին զնմանակ սատարս. Այս
որոշումն լեալ էր անընդմիջաբար մահաբեր վասն
Սպանիացւոց. փրկութի̃ նոցա կախէր զբարեկամութե̃
Հնդկաց. և եթէ ոչ դառնային սոքա 'ի կեն-
դանացուցանել վերստին զզարմացումն և զյար-
գանսն, որովք այն պարզամիտ ժողովուրդն ակնա-
ծեալ էր զնոսա անդստին 'ի սկզբանէ, անխոր-
շելի էր եղծումն նոցա. Թէպէտ ցոփ գնացք ապս-
տամբելոցն մեծագոյն մասամբ ջնջեալ էր զտպա-
ւորութիւն զայնոսիկ, որք կանխաւ լեալ էին նպաս-

տաւորք Սպանիացւոց, աշալրջութիւն Քօլոմպոսի
թելադրեաց նմա 'ի նմին վայրկենի զարմանատա-
կութի իմն երջանիկ, որ ոչ միայն անդրէն հաս-
տատեաց, այլ և մեծացոյց զբարձր կարծիսն, զոր
Հնդիկք կալան սկզբնաբար զՍպանիացւոց. Զօ-
րութ̅բ աստղաբաշխական գիտութ̅ն գիտէր Քօ-
լոմպոս, թէ 'ի սուղ ժամանակի լինելոց էր ան-
դէն բոլորական խաւարումն լուսնոյ. Ապա ժողո-
վեաց շուրջ զիւրև զբոլոր գլխաւոր անձինս այնր
նահանգի միով աւուրբ յառաջ քան զխաւարումն.
և յետ յանդիմանելոյ զանկայունութիւն նոցա 'ի
նահանջելն զնէր և զօգնութիւն յարանցն, զորս
փոքր մի յառաջ յարգեալ էին, ասաց նց̅, թէ
Սպանիացիք էին ծառայք մեծի հոգւոյ, որ բնա-
կի 'ի վեր յերկինս. որ արար և կառավարէ զաշ-
խարհ. և թէ նա ինքն սրտմտեալ վ̅ն ոչ կամելոյ
կերակրել զմարդիկն, որք էին առարկայք մասնա-
ւոր սիրոյ իւրոյ, կայր 'ի պատրաստի առ 'ի պատ-
ժել զայսպիսի իմն ոճիր յիշատակելի խստութ̅բ.
և եթէ 'ի նմին իսկ գիշերի լուսինն խափանելոց
էր զլոյս իւր, և երևելոց արիւներանգ իբր հա-
ւաստիք ածային ցասման, և իբր նշան մերձաւոր
վրիժուց առ 'ի թափել 'ի վ̅ր նց̅. Առ այս սքան-
չելի կանխասացութի ոմանք 'ի նոցանէ ունկն ե-
դին արհամարհոտ իմն անայլայլութ̅բ, որ է սեփ-
հական ժողովրդոցն Ամերիկոյ. և այլք դիւրահա-
ւատ ապշութ̅բ, որ է կարի յոյժ բնական բար-
բարոսաց. Բայց յորժամ լուսինն սկսաւ աստի-
ճանաբար մթագնիլ, և 'ի վախճանի մնաց կարմրա-
տեսիլ, ամենեքեան սրտաթափ եղեն 'ի մեծ սար-
սափմանէն. փախեան շրտուցեալք 'ի տունս իւ-
րեանց. և դարձ առնելով վաղվաղակի առ Քօ-
լոմպոս բեռնաւորեալք պարէնիւք, ընկեցին զայն
առ ոտս նորա, երդմնեցուցանելով զնա, հաճիլ
միջնորդել առ մեծ հոգին, որպէս զի հեռացու-
1504 ցէ զպատուհասն, որ կարկառեալ էր 'ի վ̅ր նց̅,
Քօ-

Կոլոմպոս ցուցանելով շարժեալ առ ժտանս նց, խոստացաւ զինչանի փափագանաց նց. և յայնմ օրէ հետէ Սպանիացիք ոչ միայն դարմանեալ եզեն կարևորօքն առատապէս, այլև ազգայինք սնոտիապաշտ ակնածութե զգուշացան առ յապայն յամենայն գործողութեանց, որք կարէին գրգռել զնոսա :

'Ի մէջ այսպիսի իրաց ապստամբեալքն արարեալ Ռողդոմ քին զԹևակոխութիւն առ 'ի անցանել 'ի Սպանիո- [illegible] լա 'ի վերայ քանօէիցն յափշտակելոց 'ի նոցա- [illegible] նէ. Բայց վս յոյժ առաջնորդութեան իւրեանց, [illegible] կամ վս բնութեան հողմոցն և յորձանացն՝ ամ [illegible] ջանք նց նանրացան. Վս այսորիկ գրգռեալք ա- [illegible] ռաւել ես, դարձան յայն կողմն կղզւոյն, ուր մնայր տակաւին Կոլոմպոս առ 'ի սպառնալ նմա զնորանոր վտանգս և զնորանոր յարձակմունս. Մինչդեռ սոքա յառաջադէմ լինէին, դիպեցաւ պատահար իմն առաւել անագորոյն և առաւել վշտացուցիչ քան զայլ զինչ և իցէ չար, յորմէ կարէր նա զանգիտել 'ի կողմանէ նց. Բդեաշխն Սպանիոլայի, որոյ միտն նսեմացեալ էր 'ի միգատարր կասկածանաց ընդդէմ Կոլոմպոսի, առաքեաց զփոքրիկ նաւ մի 'ի Ջամայիքա ոչ առ 'ի ազատել զնեղեալ քաղաքակիցս իւր, այլ առ 'ի լրտեսել զառաջիկայ պայման նց. Նա ահին, զի մի համակրութե այլոց անձանց կարգելոց յայն գործ՝ բերցէ նց զօժանդակութի ինչ ընդդէմ դիտաւորութե իւրոյ, ետ զհրամանատարութին այնր նաւակի՝ Էսքուպարայ հնացեալ Թշնամւոյ Կոլոմպոսի. որ յարելով չարամիտ խնամով 'ի խրատս թղեշխին՝ ընկէց զխարիսխ փոքր ինչ տարակաց 'ի կղզւոյն. մատեաւ յափն ծովուն մակուկաւ միով. նշմարեաց զողորմելի վիճակ Սպանիացւոց. ետ զթուղթ մի սնոտի քաղաքավարութե ցծովակալն. ընկալաւ զպատասխանին և մեկնեցաւ. Յորժամ Սպանիացիք 'ի սկզբան անդ տեսին զնաւն, որ

ուղ-

ուղղիւր դէպ կղզւոյն, ամ սիրտ ցնծացաւ, որ-
պէս եթէ ընդ երկար ակնկալեալ ժամ ազա-
տութեանն հասեալ իցէ 'ի վախճան. Այլ յոր-
ժամ աներեւութացաւ այնպէս հապճեպ, մնացին
ընկղմեալ 'ի խորագոյն վհատութն. եւ բովանդակ
յոյս նոցա չքացաւ. Գօլոմպոս միայն՝ թէպէտ եւ
'ի խոր խոցեցաւ յայսպիսի դառն թշնամանաց,
զոր Օվանտոս յաւելոյր յանցեալ անարգանս նր,
կալաւ զայնպիսի իմն յարդարումն մտաց, զի մար-
թացաւ նաեւ քաղցրացուցանել զհետեւողս իւր.
Ապահովացոյց զնս, թէ Մէնտէզ եւ Ֆիէսքի էին
ժամանեալք 'ի Սպանիոլա յանքոյթս. թէ նոքա
նախահոգայլին փոյթ ընդ փոյթ զայլ նաւս առ 'ի
փոխադրել զնոսա անտի. թէ նաւակն Ըսքու-
պարայ ոչ էր ընդունակ առնուլ զամենեսեան 'ի
ներքս. եւ թէ ինքն հրաժարեալ էր 'ի մնալոյ
յայն, 'ի մտի եդեալ ոչ երբէք բարձի թողի
առնել զհաւատարիմ ընկերսն տարաբախտութեան
իւրոյ. Մխիթարեալք յակնկալութենէ մերձակայ
սփոփանաց, եւ զուարթացեալք յայսմ առերեւոյթ
ազատականութէ Գօլոմպոսի՝ 'ի խորհելն առա-
ւել վն պահպանութն նր, քան թէ վասն անձին
իւրոյ, ընկալան ամենեքեան զոգի. եւ նա շահե-
ցաւ վերստին զվստահութիւն նոցա:

Առանց այսր վստահութն ոչ էր կարացեալ նա-
հանջել զընդվզեալսն, որք այն ինչ պատրաստք
էին գալ 'ի մարտ. Ամենայն ջանք իւր առ 'ի վե-
րածել զյուսահատեալսն զայնոսիկ՝ 'ի պարտակա-
նութիւն իւրեանց ոչ ունէին զայլ արդիւնս,
բայց եթէ աճեցուցանել զմոլեգնութիւն նոցա.
Խնդիրք նոցա լինէին օրըստօրէ առաւել ստա-
բոտիք. եւ ձկտմունք նոցա յայտնէին միշտ առա-
ւել բռունք եւ արիւնախանձք. Հասարակաց փրր-
կութին կարեւոր առնէր ախոյեան ելանել յայտ-
20 Մայիսի զօրութբ. Գօլոմպոս, որ լեալ էր ընդ եր-
1504 կայն ժամանակ տանջեալ 'ի յօդացաւութէ, ոչ
կա-

կարէր ճակատիլ 'ի մարտ. Եղբայր իւր եւ տեղա-կալն խաղաց ընդդէմ նոցա. Եկին փութանա-կի 'ի ճակատ. ընդվզեալքն 'ի բաց մերժեցին զայ-րացմամբ զպայմանս իրաւախոհութեանն. զոր նա մատոյց առաջի նոցա բազում անգամ. և խու-ժեցին յանդգնութեամբ 'ի մարտ պատերազմի. Բայց յարձակէին 'ի վերայ թշնամւոյ պատրաս-տեցելոյ յընդունել զնոսա. Յառաջնում ընդ-խառնմանն բազումք 'ի յանդգնագոյն առաջնոր-դաց նոցա սատակեցան. Տեղակալն, որ ունէր զգոյժ հաւասարեալ քաջասրտութեանն, կռուե-լով ընդ զօրագլխի նոցա, խոցեաց զնա. զկնըն-կէց արար. և կալանաւորեաց. Զայս տեսեալ փախեան ամենեքեան վեհերոտ իմն երկիւղիւ հա-մեմատ առաջին յանդգնութեան իւրեանց. Յետ սակաւ միոյ ենթարկեցան, միաւորելով ընդ գըն-դին Կոլոմպոսի. և պարաւանդեցին զանձինս հանդիսաւորագոյն երդմամբ հնազանդելոյ հրա-մանաց նորա. Զաղիւ թէ անդրէն հաստատեալ էր անդորրութիւնն՝ երևեցան նաւքն. զորս Կոլոմպոս խոստացեալ էր զհասանելն մեծաւ լրջմտութեամբն. թէպէտ ոչ կարէր նախատես լինել այնմ ապահովութեամբ. Ի հրճուանօք Սպանիացիք մեկնեցան 'ի կղզւոյն. ուր տմարդի նախանձոտութիւն Օվանտոսի թողեալ էր զնոսա հաշիլ զամ մի ողջոյն, նշաւակ թշուառութեան, որ յամենայն ահաւորագոյն կերպարանս շուրջ պատէր զնոքօք: 1504

Իբրև հասին 'ի սէն Տոմինիկոս, բդեաշխն ցա- յօգ. 13.
ծուն արհեստագործութեամբ անարգ ոգւոյ, որ [illegible]-
նկրտի մաքրել զորութիւնն խոնարհութեամբ, [illegible]
եւ զանձն 'ի պատուասիրել զնոյն մարդն, զոր [illegible]
յաչաղեալ էր և թեակոխեալ 'ի կործանել. Ընդ հա-
կառակն զԿոլոմպոս առաւել արուեստակեալ [illegible] 'ի
նածութեամբ. իջեւանեցոյց զնա 'ի տան իւրում, [illegible]-
և եցոյց նմա զամենայն սեպհական նշանս պատ[illegible].

ւոյ

ւոյ. Բայց 'ի մէջ այսց մտաբերեալ ցուցմանց
ոչ կարէր ունել թաքուն զատելութիւնն և զչա-
րութիւն, զոր տածէր նա 'ի սրտի. Եւ զաղա-
տութիւն զօրագլխի ապստամբելոցն, զոր Կօլոմ-
պոս ածեալ էր ընդ իւր 'ի շղթայս առ 'ի քննել
զնա դատաստանաւ վասն յանցանաց իւրոց. և
սպառնացաւ նոցա, որք յորեալ էին 'ի ծովա-
կալն, յառաջ խաղալով առ դատաստանական
1504 քննութիւն այնց արանց. Կօլոմպոս յարմարեաց
զինքն լռութեամբ առ այն, զոր ոչ կարէր յայն-
ժամ ուղղել. այլ եցոյց զվերջին անհամբերու-
թիւն թողլոյ զաշխարհն, որ էր ընդ իշխանու-
թեամբ առն միոյ, որ յաւմ դիպողութեան վա-
րեալ էր ընդ նմա անգթութեամբ և անիրաւու-
թեամբ. Նախապատրաստութիւնք իւր փութա-
նակի եղեն 'ի կարգի. և արար առագաստ դէպ
12. Սեպ- Սպանիոյ երկու նաւուք. Չախորդութիւնք հա-
տեմ. մանմանք այնց, որք ընկերակցեալ էին նմա ընդ
բովանդակ կեանս իւր, հանապազորդեցին հալա-
ծել զնա մինչև 'ի վախճան ընթացից իւրոց.
Մինն 'ի նաւուց իւրոց, որ մերկացեալ էր յաւմ
կահուց, հարկեցաւ վաղվաղակի դառնալ յետս
'ի Սէն Տօմինիկոս. միւսն ցնցեալ յուժգին մրրկաց.
հետևեցաւ զճանապարհ իւր ընդ եօթնհարիւր
փարսախս փոխանակեալ զկայմն ըստ կարի լա-
ւագոյնս՝ և եհաս մեծամեծ տաժանմամբ 'ի նա-
Դեկ- ւահանգիստն Սան Լուքարայ:
տեմ. Աստէն ընկալաւ նա զլուր իրիք դիպուածոյ ա-
Մահ ռաւել բօթալի՝ քան զոր երբէք կարէր պատա-
Թագու- հել նմա. որև եւ զլրումն չարեաց իւրոց. Այս
հւոյն եղև մահն պաշտպանին իւրոյ Թագուհւոյն Եղի-
Եղիսա- սաբեթի. որոյ յարդարութիւնն, 'ի մարդասի-
բեթի. րութիւնն և 'ի շնորհս վստահացեալ էր նա իբր
9. Դեկ- 'ի վերջին և յանքոյթ ապաւէն իւր. Աչօք մնա-
տեմ. ցեալ էր նմա առ 'ի դարմանել անիրաւութեանց
իւրոց. կամ փոխարինել նմա վն ծառայութեանց

իւ-

իւրոց, եթէ ոչ Ֆերտինանտոս, որ ընդ երկայն ժամանակ հակառակեալ էր նմա. և չարաչար վարեալ էր զնա այնպէս յաճախ. Թախանձելն զարքայ մի չարաչար նախապաշարեալ և ներհակ նմա՝ էր պատաղումն իմն տարժանելի, և յուսահատական. և հանդերձ այսու ամենայնիւ պարտաւորեցաւ Քոլոմպոս 'ի ծախել այսպէս զվախճան աւուրց իւրոց. Իսկոյն՝ իբրև առողջութիւն իւր հաստատեցաւ փոքր մի առաւել՝ չոգաւ նա յարքունիսն. և թէպէտ ընկալեալ էր անդէն լոկ հասարակ քաղաքավարութեամբ, խօսեցաւ առ Ֆերտինանտոս խնդրուածովք 'ի վերայ խնդրուածոց, պնդելով վասն պատժոց հարստահարողաց իւրոց, և վասն հատուցման բովանդակ արտօնութեանցն շնորհելոց նմա զօրութեամբ պայմանադրութեն հազար չորեքհարիւր իննսներորդի երկրորդի. Ֆերտինանտոս զբաղեցոյց զնա գեղեցիկ բանիւք և աննշան խոստմամբք. փոխանակ յառաջ տանելոյ զարդար պահանջմունս նորա, առաջի եդ զհանգամանս առ 'ի դերև հանել զայնս. և յերկարաձգեաց զիրակութիւնն այնպէս յայտնի արուեստիւ, զի ետ յայտնապէս տեսանել, թէ դիտաւորութիւն իւր էր, զի մի երբէք եղերեսցի. Առողջութիւն Քոլոմպոսի նուազելով միշտ առաւել, մտահաճ լինէր Ֆերտինանտոս յուսով փութանակի ազատեալ լինելոյ 'ի ձանձրացուցիչ թախանձողէ միոջէ. և այնպէս դիմագրաւ եղև առաւել ևս 'ի յարատևել յանիրաւ առաջադրութեան իւրում.
և ոչ վրիպեցաւ յակնկալութենէ իւրմէ. Յա- 1504
ւագնեալ Քոլոմպոս վասն ապերախտութեան Իսապելին, որում ծառայեալ էր ինքն այնպիսի հաւատարմութեամբ և շահեկանութեամբ, ընկճեալ յաշխատութեանց և 'ի վաստակոց, զորս կրեալ էր. թօթափեալ և խորտակեալ 'ի հիւանդութեանցն, զորս այս ամենայն ածեալ էր 'ի վե-

վախ-

Մահն Քոլոմ-բոսի. վախճանեաց զկեանս ՚ի Վալլիատօլիտ ՚ի քսանն մայիսի ՚ի հազարերորդի հինգհարիւրորդի վեց-երորդի. ՚ի վաթսունեւիններորդի ամի հասակի իւ-րոյ. Մեռաւ անդորրութեամբ իմն մտաց, որ յատուկ է վեհանձնութեանն, որ էր իւր սեպ-հական նշան, և ըղձիւք բարեպաշտութեան հա-ւասար այնմ գերագոյն ակնածութեանն որ առ կրօնն, զոր նա յամենայն ընթացս կենաց իւրոց յայտնեաց:



# ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅ.

## ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ։

Մինչ դեռ Քօլոմպոս արգեամբք պա- 1504
րապեալ էր 'ի վերջին ճանապարհոր- Մեծոյ
դութեան իւրում, եղեն 'ի Սպանիոլա զա- հոգածոյ
նազան պատահմունք արժանի գիտելոյ · ծոյն 'ի
Հատուածն կանգնեալ անդէն մայր և Սղո-
սնուցիչ հանօրէն յաջորդական հարգունութեանցն Նիւղ ·
Սպանիոյ 'ի նոր աշխարհին, ստացաւ աստիճան առ
աստիճան զկերպ կանոնաւոր իմն և յաջողակ ըն-
կերութեան · Սրտի մտօք հոգաբարձութիւն Եղիսաբեթի 'ի
պաշտպանել զՀնդիկս 'ի ձնշմանէն, և մասնաւորա-
բար հրովարտակն, որով արգելեալ էր Սպանիացւոց
ստիպել զնոսա յաշխատանս, արդարև յամեցուցին
առ ժամանակ ինչ զյառաջադիմութիւն 'ի կրթել
զնոսա · Նոքայինքն, որք նկատէին զզերծ լինելն յաշ-
խատութենէ իւր գերագոյն երջանկութիւն, անդոս-
նեցին հեռաւաբար զինչ և իցէ յանկոյց կամ զվարձ,
որ հրաւիրէր զնոսա յաշխատանս · Սպանիացիք ոչ
ևս ունէին զայնքան ձեռս, որք բաւեսցեն 'ի պե-

ղել

ղել զՀանքս և 'ի մշակել զՀողն . Նաղումք յառաջին Հաստատածորդաց այն ինչ սովորեալք ծառայիլ 'ի Հնդկաց , 'ի բաց թողին զկղզին վաղվաղակի իբրև տեսին զինքեանս զուրկս յայնց գործեաց . առանց որոց ոչ գիտէին , թէ զիարդ յառաջ տարցին զգործողութի ինչ . Նաղումք եւ յայնց , որք եկեալ էին ընդ Օվանտոսի , Հարան 'ի Հիւանդութեանց պատճառելոց 'ի կլիմայէն . որք 'ի սուղ ժամանակի կոտորեցին 'ի նոցանէ աւելի քան զՀազարս . Նաև խնդրելն զկէս բերոցն Հանքաց իբր բաժին արքունի՝ երևեցաւ պաՀանջումն իմն այնպէս տարապայման , զի ոչ ոք բաղդորդ կամէր գրաւիլ պայմանաւ իւիք 'ի գործել զայնս . Առ 'ի ապրեցուցանել զՀաստատածն 'ի կործանմանէն՝ Օվանտոս Համարձակեցաւ մեղմել զխստութի Հրամանացն յառաջնմէ եղելոց . Արար զնոր բաշխումս Հնդկաց 'ի մէջ Սպանիացւոց , բռնաբարելով զնս յորոշեալ ինչ ժամանակ 'ի փորել զՀանքս և 'ի մշակել զերկիր . Ապա առ 'ի զերծանիլ 'ի բարէ նուաճելոյ զնոսա վերստին 'ի ծառայութիւն , Հրամայեաց տերանց վճարել նց զորոշ իմն գումար իբր գին վարձուց նց . Ներածեաց զբաժն արքունի ոսկւոյն գտելոյ 'ի Հանքս 'ի կիսոյն ցերրորդն . և յետ սակաւ միոյ նուազեցոյց մինչև 'ի Հինգերորդն , ուր մնաց ընդ երկայն ժամանակ . Թէպէտ և Թագուհին Եղիսաբեթ գործակալաբար փոյթ էր վն բարւոք վարման ընդ Հնդկաց , և Ֆերտինանտոս շաՀաքաղց աճեցուցանելոյ միշտ առաւել զմուտս իւր , այսու ամենայնիւ յաջողեցաւ Օվանտոսի Հաւանեցուցանել զարքունիսն առ 'ի Հաստատել զայսոսիկ կանոնաւորութիւնս :

Պատերազմ ընդ Հնդկաց.

Նայց Հնդիկք յորմէՀետէ ոգի առնոյին սակաւ ինչ 'ի ճնշմանէն , թէպէտ և էր այս առ սուղ ինչ ժամանակ , զգային , զի լուծն գերութե էր ծանր այնպէս , զի արարին զանաղան թեակոխութիւ

վն̃ վերստին ստանալոյ զազատութիւն իւրեանց . Սպանիացիք դատեցան զայս լինել ապստամբութի իւն . և առին զէնս առ ՚ի նուաճել զնս . Յորժամ մարտն վառեալ է ՚ի մէջ երկուց ազգաց , որք են ՚ի նմանակ իւն աստիճանի ճանաչման , հայթհայթանք պաշտպանութեն տարազու իւն համեմատեալ են հայթհայթանաց մաքառմանն . և յայսմ հաւասար ընդդիմամարտութեան պարտին առնիլ այնպիսի նկրտմունք . ցուցանին ևս այնպիսի քաջքարք, և զարթուցանին այնպիսի կիրք , մինչ զի ՚ի դէմս ածեն պտեսարան իւն ազգի մարդկան ոչինչ ընհատ զարմանաւոր, քանթէ շահեկան . Այս է մի յառաւել նշանաւոր գործառնութեց վիպասանութեն , նշմարել և գծագրել զմարդիկ ՚ի միում կուզակցութե , յորժամ միտք նց մեծագոյն բռնութբ յուզեալ են , և բովանդակ յորդեալք ՚ի հոլանել զզօրութիս իւրեանց . Աստուստ գործողուիք պատերազմի , և հակառակուիք ՚ի մէջ երկպառակեալ ծրուեց դատեալ լինին ՚ի վիպասանից եթէ նախնեաց և եթէ արդեաց՝ նախապետական իւն և ծանրակշիռ յօդուած ՚ի տարեգրութիս մարդկային գործոց :

Բայց ՚ի հակառակութեն իմիք ՚ի մէջ մերկ վայրագաց , և ՚ի մէջ առաւել պատերազմական ազգացն Եւրոպիոյ , ուր գիտութիւն , քաջասրտութիւն և բարեկարգութիւն հակադրեալ ունէին ընքեանց զտգիտութիւն , զերկչոտութիւն և զանկարգութիւնն ՚ի միւս կողմանէ , մանրամասն պատմուի դիպուածոցն լինէր անհաճոյական և սակաւ հրահանգիչ . Եթէ պարզմտութի և անմեղութի հնդկաց չնչեալ էին ՚ի Սպանիացիս զմարդասիրութի . եթէ յեղաշրջեալ էին ՚ի կարեկցութի զհպարտութի վերնագունուե իւրեանց , և ներածեալ զնս մանաւանդ ՚ի հրահանգել զբնակիչս նորոյ աշխարհի , քանթէ ճնշել , յանկարծական ինչ գործք բռնութե լինէին պատմելի առանց ինչ սոսկման . ոչ առնի զկարի խիստ պատժոց անհամեր վարժապետաց

'ի վն աշակերտաց իւրեանց. Բայց մն դժբախ-
տուն՝ համարումն զանձանց իւրեանց լինելոյ վեր-
նագոյն տայր նը գործել այլազգ. Սպանիացիք
համարէին զինքեանս այնչափ աւելի քան զազ-
գայինսն Ամերիկոյ յամ սեռի կրթութե, մինչ զի
հայէին 'ի նն արհամարհանօք. Չևացուցանէին
ինքեանց զԱմերիկացիս իբր էակս վայրագոյն իմն
բնութե, և արտաքսեալս յիրաւանց և յարտու-
նութեց մարդկան. 'Ի ժամանակի խաղաղութեան
ներքոյ արկանէին զնն գերութե. 'Ի պատերազմի ոչ
ցուցանէին զգոյզն ինչ հայեցումն յայն օրէնսն,
որք լաւելայն իմն դաշնադրութբ 'ի մէջ պատե-
րազմօղ ազգաց կանոնաւորեն զթշնամութիւն. և
զնեն կոպարս ինչ մոլեգնութեան նը. 'Ի զրաւ՝
նկատէին զնն ոչ իբրև զմարդիկ, որք մարտնչէին
'ի պաշտպանումն ազատութե իւրեանց, այլ իբրև
զգերիս ապստամբեալս 'ի տեարց իւրեանց.
Քաղիքէք նը եթէ ըմբռնեալ լինէին, դատապար-
տեալ էին իբր զգլխաւորս՝ տարագրեալ առ անա-
գորոյն և խայտառակ պատուհասս. և համօրէն
ըստրուկք նը առանց հայելոյ 'ի զանազանութիւն
աստիճանացն հաստատելոց նաև 'ի մէջ նը, վե-
րածեալք էին 'ի նոյն վիճակ անարգ ծառայութե.
Այսու հոգւով և այսօրինակ զգացմամբք բերեալ
եղեն զէնք ընդդէմ Քաղիքէից Նիկուէսայ գա-
ւառին յարևելեան ծագ կղզւոյն. Այսպիսի իմն
պատերազմ պատճառեալ եղև 'ի Սպանիացւոց
լուծանելով զդաշն ինչ, զոր նոքա արարեալ էին
1505 ընդ ազգայնոյն. և աւարտեցաւ կախելով զՔա-
ղիքէն, որ պաշտպանէր զժողովուրդ իւր վերնա-
Անողորմութ. Նէնէ. գործոց գոյն իմն քաջութբ քան զհայրենակացն իւրոց.
և որ սահմանէր զնա առ լաւագոյն իմն ար-
դիւնս:

Գնայ. Օջեռ. պատէ. Գնացք Օվանտոսի յայլում իմիք մասին կղզւոյն
էր ևս առաւել խարդախական և անագորոյն. Գա-
ւառն վաղնջուց կոչեցեալ Քսարագուա, որ տա-
րա-

քածանի յարգաւանդ դաշտավայրէն , ուր այժմ կայանորեալ է Լէօկանէ յարևմտեան ծագ կղզւոյն, ենթարկեալ էր Կազիքուհւոյ միում անուանեցելոյ Անաքօանա մեծապէս ականածեալ 'ի կղզականացն . Սա վն այնր մասնական ըղձման, որով կանայք ամերիկացիք յարին Եւրոպացիս , զորոց զպատճառն յիւրում տեղւոջ մեկնեսցուք , մշակեալ էր միշտ զբարեկամութի Սպանիացւոց . Նաև ճոխացուցեալ էր զնա բարի օճանօք . Բայց ոմանք 'ի յարելոցն Ռօլտանոսի , որք դեգերէին 'ի գաւառի նր , գաղանացեալք վն փութոյ նր 'ի կամելն զպել զառանցանս նց , ամբաստանեցին զնա , որ թէ կերպաւորեալ իցէ զխորհուրդ թօթափելոյ զլուծն, և ջնջելոյ զՍպանիացիս . Օվանտոս քաջ իսկ գիտէր թէ սակաւ հաւատարմութի ընծայելի էր այնպիսի եղեռնաւորաց , սակայն հանդերձ այսուիկ առանց հետազօտելոյ այլ ևս , չու արար դէպ Քսարակուայի երեքհարիւր արամբք հետևակօք, և եօթանասուն հեծելովք . Նա 'ի խափանել զկասկածելն Հնդկաց զայսմ թշնամական երևութէ , ետ հռչակ հարկանել , թէ գիտաւորութի իւր էր միայն այց առնել Անաքօանայի , (որում համաշխարհիկք իւր պարաւանդեալ էին այնչափ) առաւելագոյն մեծարանօք . և կանոնաւորելոյ ընդ նմա զհանդամանս թափելոյ զհարկն վճարելի արքային Սպանիոյ . Անաքօանա առ 'ի ընդունել պարտուպատշաճ պատուով զայս երևելի հիւր, գումարեաց զգլխաւոր անձինս տէրութե իւրոյ մինչև ցթիւ երեքհարիւրոց . և յառաջելով իբրև գլուխ նց հանդերձ մեծ ամբոխիւ վայրագոյն աստիճանի բազմութ՝ աւետեաց զբարեաւ եկելն Օվանտոսի երգօք և պարուք ըստ սովորութե երկրին . և էած զնա յապարանս իւր . Նա եղև անդ 'ի խրախճանս զաւուրս ինչ ամ քաղաքավարութբ անպաճոյճ հիւրասիրութե . և զբօսաւ խաղուք և տեսարանօք , որք սովոր էին 'ի գործ ածիլ յԱմերիկաց-

ւոյ 'ի գիպողութեն ուրախութեն և տօնից. Բայց 'ի մէջ ապահովութեն, զոր այսպիսի ցոյցք պարաէին շնչել, Օվանտոս խորհէր զեղծումն անկեղծ ասպնջականին իւրոյ և ստրկաց իւրոց. և անարգ եղանակն, որով նա 'ի գործ եդ զայս առաջադրութի, հաւասարի խժականութեն կերպաւորելոյն գայն. Կեղծելով կամիլ ցուցանել Անդկաց զհանդէս զինախաղուէ ինչ Եւրոպացւոց` դասաւորեաց զգունդս իւր 'ի կարգի պատերազմի հանդէպ տանն, ուր Անաքօանա և մեծամեծքն, որք զհետ երթային նր, ժողովեալ էին. Հետևակազօրն կալաւ զամ անցս ճանապարհացն, որք ածէին 'ի գիւղն. և հեծելազօրն պատեաց զտունն. Այսպիսի շարժմունք եղեն առարկայ զարմացման և զուարճութեն. և ոչ իսկ ընդխառնեցաւ երկիւղն. մինչև ցնշան ինչ կանխաւ պայմանաւորեալ` յորում Սպանիացիք մերկացուցին զսուսերս իւրեանց և խուժեցին 'ի վր Անդկաց ոչ նախապատրաստելոց վն պաշտպանութեան, և շրտուցելոց առ ներգործութի դաւոյն անըմբռնելի մտաց մարդկան, որք ոչ տածէին զերկրորդ վախճանս. 'Ի միում վայրկենի ապահովացան 'ի վր Անաքօանայի. բովանդակ հետևողք նր կալեալ և կապեալ եղեն. և արկին հուր 'ի տունն. և առանց քննութեն և առանց հաւաստեաց համօրէն այն հէգ անձինք առաւել երևելիք աշխարհին բոցակիզեցան. Անա-
1505. քօանա վերապահեալ եղև առ վախճան ինչ ա-
Հնդիկք ռաւել նշաւակ. Ածեալ շղթայիւ 'ի քղքն Տօմինի-
անյնու- կոս, և յետ կերպաւորութեն իրիք փուշիշի առա-
տուրլէ- ջի դատաւորաց Սպանիացւոց, դատապարտեալ
նէն. և վկայութեամբ նոցին իսկ, որք մատնեալ էին զնա,
որդէնք սպանաւ հրապարակաւ:
հեղին- Զարհուրեալք և վաստարտեալք յայսմ դժնեայ
ուԼէք վարմանէ ընդ նահապետաց և իշխանաւորաց իւր-
յայնմա- եանց, որք էին առարկայ մասնաւոր յարգանաց
ծը։ իւրեանց, Անդիկք յամ դաւասս Սպանիոլայի թե-

քե-

քեցին զզօրանոցս առանց այլեւս զխմազարձուն
եան նոր լծոյն. 'Ի մահուան Եղիսաբեթի բովան-
դակ կանոնաւորութիւնք, որք կային դիմել 'ի մեղ-
մել զխստութի գերութեն նց, մնացեալ եղեն.
Փոքրիկ երախտաւորութիւնք վճարեալք նց իբր վարձ
աշխատանաց իւրեանց տեսան խափանեալք. և 'ի
նմին ժամանակի ծանրութիւնք եդեալք 'ի վր նց ա-
ճեցին. Ովանդոս առանց ինչ արգելման բաշ-
խեաց զհնդիկս 'ի մէջ բարեկամաց իւրոց 'ի կղզ-
ւոջն. Ֆերտինանդոս, որում թագուհին թողեալ
էր կտակաւ զկէս մտիցն յառաջ եկելոց 'ի կալուա-
ծոցն Նորոյ աշխարհին, եւ զընդարձակագոյն
շնորհմունս արքունականաց իւրոց իբր սակաւա-
ծախ եղանակ երախտագէտ լինելոյ առ ծառայութիւն
նց. Աղքա 'ի վարձու ետուն զհնդիկսն, որոց ե-
ղեալ էին սեպհական տեարք, հայրենակցաց իւր-
եանց հարգանացելոց 'ի Սպանիոլա. և այն տա-
քաքաղելեկ ժողովուրդն զոլով ստիպեալ յաշխա-
տիլ առ 'ի յագեցուցանել զյափշտակողութի եր-
կաքանչիւրոցն, յայնմանէ հետևեցաւ, զի պա-
հանջմունք հարստահարողացն ոչ ևս ծանեան
զկրպար ինչ. Այլ որչափ և խժական էր քաղա-
քական կառավարութի նց և մահարեր վն բնակ-
չացն Սպանիոլայի, յառաջ էած առ ժամանակ ինչ
զարդիւնս յոյժ շահեկանս. Արծարծանելով այս-
պէս զզօրութի ամբողջ ազգի միոյ, և վարժելով
զայն առ նոյն առարկայ, գործ հանքացն յառաջ
խաղաց աքանչելի սրընթացութբ և յաջողութբ.
Ընդ ամն բազումս ոսկին բերին ամի ամի 'ի բովն
Սպանիոլայի ամբառնայր 'ի չորեքհարիւր վաթսուն
հազար փեսոս. այսինքն է, աւելի քան զերկու-
հարիւր հազար ոսկիս վենետիկոյ. որ եթէ զմտա-
ծցի մեծ փոփոխումն դրամոյ անդստին 'ի սկզբա-
նէ վեշտասաներորդ հարիւրեկին մինչև 'ի ներկայ
ժամանակս, պարտի համարիլ գումար իմն անբաւ.
Այնչափ ճոխութիւնք 'ի սուղ ժամանակի կուտեալ 1506.

եղեն յոմանց. Այլք վատնեցին 'ի հանդիսական զուարճութիս զայն, զոր դիւրակի ստացեալ էին. Նոր բաղդորդք զօշատեալք 'ի նոցանէ և 'ի սոցանէ՝ երթային խմբովին յԱմերիկա ազահագոյն ըղձանօք մասնակից լինելոյ այնց գանձուց, որք պարարեալ էին զքաղաքակիցս իւրեանց. և ոչինչ ընդդիմակայելով կատարած մահուն պատճառեալ անդէն յանբարեխառնութենէ օդոյն՝ նժդեհութիւնն շարունակէր ընդարձակիլ:

Յաղա Զօրէ- ձուլէի հապատա ծոյն։ Օվանտոս կառավարէր զԱպանիացիս խոհեմութեա և արդարութեա հաւասար խստութեն, որով վարէր զՀնդիկս. Սահմանեաց օրէնս միակերպս. և անաչառութեա տալով կատարել զայնս, սովորեցոյց զժողովուրդ նժդեհութենն ակնածել յայնցանէ. Հիմնեաց զանազան նորանոր քաղաքս 'ի զանազան մասունս կղզւոյն. և քարշեաց անդր զբնակիչս, շնորհելով նոցա զպէսպէս արտահարկութիւնս. Ջանացաւ դարձուցանել զմտադրութիւն Ապանիացւոց առ ճիւղս ինչ ճարտարութեան առաւել օգտակար քան զխնդրելն ոսկի 'ի հանքս. Տունկք ինչ եղեգանց շաքարի գոլով բերեալք 'ի կղզեացն Քանարիոյ առ 'ի առնել փորձ, արմատացան այնպիսի յաջողութեա յերկրորդ գետնին և 'ի ջերմ կլիմային ուր էին փոխաբերեալք, մինչզի մշակութեն նոցա վաղվաղակի եղև առարկայ խմն մեծի տուրևառութեն. Արարան 'ի նոցանէ շամփք երկայնաձիգք. և գործարանք շաքարի, զորս Ապանիացիք կոչէին

1506. Բնակ- ժողով կառավա- տար- ճարտարմտութեն վն բազմապատիկ աշխատութենն, որ պիտոյ էր անդ, մուծեալ եղեն. և 'ի սակաւ ամս ձեռակերտութի այսր տարազու եղև գործառնութի մեծ բնակչացն Ապանիոլայի, և երևելագոյն աղբիւր շահու նոցա:

Մահն Ֆերդի- նան- դոսի։ Խմաստուն փոյթք Օվանտոսի 'ի յառաջ տանելն զբարին մարդասիրութենն նպաստեալ էին հզօրաբար 'ի Ֆերտինանդոսէ. Աերասքանչելն, զորս ընդունէր յորդառատութե 'ի նոր աշխարհէն, բացին

ցին զաչս նր 'ի վախճանի նկատմամբ ծանրակըշ-ռութեն այնց երկրագունց, զորս ցայնժամ ցու-ցեալ էր նա արհամարհել. Բաղդն և յաջողա- 1507
կութի իւր ազատելով զնա յայնց դժուարութեց, յորս պատահեալ էր վս մահուան Թագուհւոյն իւրոյ, և յաղագս վիճմանցն ընդ փեսային իւրոյ 'ի վս կառավարութե տրութեց իւրոց, կալաւ նա զիմ դիւրութի դարձուցանելոյ զհայեցուածս իւր առ իրակութիս Ամերիկոյ. Պարտի առ յառաջա-տես զգաստութի նր Սպանիայն զբաղումն յայնց կանոնաւորմանց, որք սակաւ առ սակաւ կերպա-ւորեցին զայն կազմուած խորին՝ Թէպէտ և նա-խանձաւոր՝ քաղաքականութեն. որով կառավարէ նա զսահմանս իւր 'ի Նոր աշխարհին. Կանգնեաց նա զատեան մի որոշեալ անուամբ տան դաշնակցութե կամ սեղան վաճառականութե, բաղկացեալ յան-ձանց երևելեաց զարմիւ և ընդունակութեն. որոց յանձն արար զմատակարարութի Ամերիկեան իրաց, Գումարիւր այս ատեան կանոնաւորաբար 'ի Սե-վիլիա և ունէր զտեսակաւոր իմն և զընդարձակ իրաւարանութի. Նա ևս զկերպ իմն և զկարգ ինչ եկեղեցական կառավարութե, անուանելով արք-եպիսկոպոսունս, եպիսկոպոսունս, ատենապետս կմ աւագերիցունս 'ի միասին ընդ վայրագոյն դասուց կղերիկոսաց. ոչ զի առցեն զհոգ Սպանիացւոց, որք հաստատեալ էին անդէն. և զազգայնոցն, որք ընդ-գրկեցին զքրիստոնէական հաւատս. Բայց հան-դերձ հպատակաւոր եռանդնոտութեն դաւանել 'ի նմանէ առ սբ հաւատն՝ այնպիսի էր հոգածութի նր վս խափանելոյ, զի մի իշխանութի ինչ օտար վրդովեսցէ զիրաւարանութի իւր, կամ ներգոր-ծեսցէ 'ի նոր տրութիս իւր, մինչզի վերապա-հեաց Թագաւորութեն Սպանիոյ միայն զիրաւունս Պաշտպանութե առ եկեղեցական Բարերարութիս Ամերիկոյ. և պայմանեաց, զի մի քահանայապե-տական կոնդակ ինչ կամ պատուէր հրատարակես-

ցի անդէն, եթէ ոչ իցէ նախնական քննեալ և հաստատեալ 'ի խորհրդոյ իւրմէ. Նովին հոգւով նա-
1507 խանձաւորութե արգել, զի մի տարագինչ տուեալ լիցի Ամերիկա, կամ զի մինչ անձն բնակեսցի անդ յերկար առանց բացայայտ հրամանի այնր խորհրդեան։

Թիւ Հնդկաց ապա նուաղէ.

Չանդերձ այս ամ ուշադրութբ առ բարի կառավարութիւն, և առ օգտութի Նժդեհութեն կայր 'ի վն աղէտ իմն, որ սպառնայր զքակտումն նր. Բուն բնակիչք, որոց յաշխատութե կախեալ էին Սպանիացիք վն յաջողութե և դիւրութե իւրեանց, ջնջեցան այնպէս արագ՝ զի երևէր անխորշելի բնաւին շիջումն զարմի նց. Յորժամ Կօլոմպոս եգիտ զՍպանիոլա, համար ազգայնոցն հաշուեալ եղև գէթ միլիոն մի. և էին այն ինչ վերածեալք առ վաթսուն հազարս 'ի միջոցի վեշտասան ամաց. Այսպիսի իմն եղծումն մարդկային սեռի անդէն հապճեպ և հիանալի՝ էր գործ բազում պատճառաց, որք զուգընթացան յայնմ. Ազգայինք Ամերիկեան կղզեաց ունէին զտկարագոյն իմն խառնուած քան զբնակիչս միւս կիսագնտոյն. Նոքա ոչ կարէին առնել զնոյն գործս, և ոչ տակալ աշխատանացն այլոց մարդկան, որոց կազմուածք էին առաւել ուժեղ կերպաւորեալք. Պարապորդ անհոգութիւն, յորում ախորժէին անցուցանել զաւուրս իւրեանց, որ էր արդիւնք տկարութե նց. օժանդակէր ևս առ աճումն նր. և առնէր զնս ոչ այնչափ վն ունակութեն. որչափ վն հանգամանացն անընդունակս աշխատելոյ. Կերակուրն, որով կեային, սնուցանէր զնս յոյժ սակաւ. և էին սովորք առնուլ զայն փոքր քանակութբ ոչ բաւական 'ի զօրացուցանել զմարմին իմն թուլացեալ, և առնել զնա յարմար տանելոյ ջանից մտավարժութե. Սպանիացիք առանց ուշադրելոյ առ այսօսիկ մասնաւորութիս 'ի խառնուածս Ամերիկացւոց, դնէին 'ի վր նց բեռինս այնպէս անհաւասարս ուժոյ նց, զի բազումք 'ի

նո-

նոցանէ ճմլէին 'ի ծանրութենէ , և վախճանէին զաւուրս իւրեանց թշուառաբար . Այլք ստիպեալք յանհամբերութենէ և 'ի յուսահատութենէ , 'ի միում վայրկենի բառնային զկեանս ձեռօք իւրեանց . Այսպէս պատճառեալ 'ի պարաւանդելոյ զայնքան բազմութիւն ազգին առ 'ի բարձի թողի առնել զմշակութիւն գետնոց իւրեանց՝ որպէս աշխատեցին 'ի հանքս , եղև մահաբեր յոլովից . Ազգի ազգի հիւանդութիւնք , ոմանք յառաջ եկեալք 'ի խիստ ծառայութեանցն , յորս մատնեալ էին , և այլք վն հաղորդութեան նց ընդ Եւրոպացւոց՝ իսպառ անշէն արարին զկղզին . Սպանիացիք գտանելով այսպէս զուրկ 'ի գործեացն , զորս սովորեալ էին 'ի գործ ածել , տեսին անկարելի զտարածանելն այլևս զյառաջադիմութիւն իւրեանց , և զշարունակելն զարդէն սկսեալ աշխատութիւնս իւրեանց . Առ 'ի մատուցանել արագ իմն դարման այսպիսի ահարկու չարի , Ովանտոս առա- 1509
ջարկեաց փոխաբերել զբնակիչս Լուքայօս կղզեացն 'ի Սպանիոլա ը̄ պատրուակաւ , ոպ̄ թէ մեծագոյն դիւրութ̄ կարէին քաղաքականանալ , և կրթիլ մեծագոյն օգտիւ 'ի քրիստոնէական կրօնի , յորժամ լինիցին միաւորեալք ընդ Սպանիացի հատուածոյն . և 'ի ներքոյ անմիջական վերատեսչութեան Միսիոնարաց . Ֆերտինանտոս խաբեալ յայսմ արուեստակութենէ , կամ կափուցեալ զաչս առ վարումն ինչ բռնութեան , զոր քաղաքականութեան ներկայացուցանէր կարևոր , ետ զհաւանութիւն իւր առաջադրութեան . Զանազան նաւք պատրաստեցան վն Լուքայօսաց . Հրամանատարքն հասեալ անդր՝ զգացուցին ազգայնոցն , գոլով վաղնջ ուսեալ զլեզու նոցա , թէ գային 'ի փափկալի իմն աշխարհէ , ուր հանգչէին վախճանեալ նախնիք նց . յորոց հրաւիրեալ էին պատսպարել անդր . քանզի կամէին զնս լինել մասնակիցս օրհնութեանցն , յորս նոքա վայելէին յետ մահուան . Այն պարզամիտ ազգն ունկնդիր եղև այսմ առասպելի հիացմամբ

և դիւրաւատութ՟ և յափշտակեալ 'ի սիրոյ վերս-
տին տեսանելոյ զազգականս իւր և զբարեկամս
յայնմ երանելի աշխարհին զուարթութ՟ չոգաւ
զհետ Սպանիացւոց․ Այսու նենգութ՟ աւելի քան
զքառասուն հազարս որսացեալ եղեն երթալ 'ի
Սպանիոլա առ 'ի մասնակցիլ չարչարանացն, որ
էր վայելումն այնր կղզւոյ․ և առ 'ի խառնել
1508 զիւրեանցն ընդ հեկեկանաց և ընդ արտասուաց
ամենաթշուառ զարմին այնորիկ ։

Նոր Եր- Սպանիացիք ընդ ժամանակս ինչ շարունակեալ էին
կրա- զգործողութիս իւրեանց ի հանքսն Սպանիոլայի
գտութ․ այնչափ եռանդիւ և շահեկանութ՟, մինչ զի երևէին
Եւ նորա- գրաւեալ զբովանդակ ուշադրութի իւրեանց․ Աւա-
նոր Բնա- տի հոգին երկրագտութեն թուլանայր․ և յետ
կութիւնք ։ վերջին ճանապարհորդութեն Կոլոմպոսի ոչ էր
ձեռնամխեալ 'ի մեծ ինչ գործառնութի․ Բայց
նուազութի Հնդկաց անկարացուցանելով զշահա-
ւորիլն յայնմ կղզւոջ նովին արագութ՟ ըստ ա-
ռաջնոյն, այս դրդեաց զնս որոնել զնորանոր կող-
մանս, ուր ագահութի նց կարասցէ առաւել դիւ-
րութեամբ յագիլ․ Յօհաննէս Փոնչէտէ Լէոն, որ
հրամայէր 'ի ներքոյ Օվանտոսի յարևելեան նա-
հանգին Սպանիոլայի, էանց 'ի կղզին սբյն Յօ-
հաննու Փորթօրիքու, զոր Կոլոմպոս գտեալ էր
յերկրորդ ճանապարհորդութեն իւրում․ և մխեցաւ
'ի ներքսագոյն մասն նր․ Անդէն եգիտ զհողն ար-
գաւանդ․ և հաւատալով 'ի նշանաց ինչ և 'ի տե-
ղեկութեց բնակչացն պատահել հանքաց ոսկւոյ
'ի լերինս, խնդրեաց և ընկալաւ 'ի Օվանտոսէ
զհրաման փորձելոյ առնել զհարգանութի իմն 'ի
նմին կղզւոջ․ Այս դիւրակի 'ի գործ եդեալ եղև
յոստիկանէ միոջէ, որ համբաւեալ էր խոհե-
մութբն և քաջասրտութբն․ 'Ի սակաւ ամս Փոր-
թօրիքոն անկաւ 'ի ներքոյ ծառայութե Սպանիաց-
ւոց․ ազգայինքն վիրածեալ եղեն 'ի ծառայութի․
և զոլով վարեալք նովին անխոհեմական խստութ՟,

որ

թող դրացիք իւրեանց 'ի Սպանիոլա, նաև նոքին սպառեալք յաշխատանաց և 'ի տաժանմանց, փաղփաղակի բնաջինջ եղեն. Յայնու ժամանակաւ Յո- 1508
հաննէս Տիազ տէսօլիս 'ի միասին ընդ Վինչէնցիոսի Եանեծայ փինծօնի, որ էր մի յառաջնոց ընկերացն Քօլոմպոսի, արար զընթացս ինչ 'ի շարունակին. Կալան զնոյն ճանապարհ Քօլոմպոսի մինչև ցկղզին Կուանայօս. բայց անտի դարձուցանելով ըստ արևմուտս, գտին զծոց իմն և զտարածեալ գաւառ, ծանուցեալ յետոյ ընդ անուամբ Իւքաթանայ. և յառաջ խաղացին ընդ երևելի իմն տարածութիւն առ ծովեզերօք այսր գաւառի. Թէպէտ ոչ պատահեցաւ իր ինչ յիշատակելի յայսմ ճանապարհորդութեան, բայց արժան է տալ զայնմանէ զծանօթութիւն. վասն զի առաջնորդեաց առ մեծագոյն գիւտս. Պարտ է նովին պատճառաւ առնել զյիշատակ և զճանապարհորդութենէ Սեբաստիանոսի Օքամփօի. Հրամանաւ Օվանտոսի առագաստեաց նա շուրջ զԿուպայիւ. և եղև առաջին 'ի ճանաչել ստուգութեամբ, թէ այս գաւառ զոր Քօլոմպոս կանխաւ ենթադրեաց լինել մասն շարունակին, էր կղզի ինչ մեծ:

Այս պարայածումն շուրջ զԿուպայիւ եղև մի 'ի վերջին դիպուածոց առ մատակարարութեան Օվանտոսի. Ընդստին 'ի Մահուանէն Քօլոմպոսի որդի իւր տէրն Դիեկոս պարապեալ էր 'ի թախանձել զարքայն Ֆէրտինանտոս շնորհել նմա զպաշտօնս փոխարքայի և ծովակալի 'ի նոր աշխարհին 'ի միասին ընդ այլոց ապահարկութեանց և շահուց, որք անցանէին 'ի նա ժառանգութեամբ յաղագս սկզբնական պայմանադրութեան եղելոյ կանխաւ ընդ հօր իւրում. Այլ եթէ արժանապատուութիւնս այսոքիկ և եկամուտք երևեցան այնպէս ծանրակշիռք Ֆէրտինանտոսի, զի կողոպեաց յայնցանէ զՔօլոմպոս առանց ինչ հոգալոյ զայնցանաց անիրաւութեան և ապերախտութեան, ոչ է մեծ ինչ, եթէ

Դիէկոս Քօլոմպոս կոչի կառավարիչ Սպանիոլայ:

զլա-

զլացաւ նա յետոյ տալ զայնս որդւոյ նր. Աս-
տուստ տէրն Դիեկոս ծախեաց զամս երկուս 'ի շա-
րունակ իմն և յանպատուղ թախանձաւորութե.
Տաղտկացեալ 'ի վախճանի՝ հնարեցաւ 'ի ձեռս բե-
րել օրինական վճռով զայն, զոր ոչ կարէր ըն-
դունել 'ի շնորհաց նախանձաւոր Միապետին.
1508 Յորոց զվճիռ իմն ընդդէմ Ֆերտինանտոսի առա-
ջի ատենին, որ վերակացու էր Հնդկային իրա-
կութեանց. և այն ատեան արդարութե իմն, որ առ-
նէ զմեծ պատիւ դատողութեանց իւրոց, արտասա-
նեաց ընդդէմ նմին իսկ արքայի. և ջատագովեաց
զիրաւունսն տեառն Դիեկոսի առ փոխարքայութիւն,
և առ այլ ամ արտօնութիւնս դաշնադրեալս 'ի
պայմանադրութեան. Նաև զկնի այս վճռոյ ընդ-
դիմամարտութե Ֆերտինանտոսի առ գնումն հպա-
տակի միոյ 'ի ստացման այնպիսի տարածեալ իրա-
ւանց՝ եղեալ էր 'ի մէջ զնորանոր խոչս, եթէ
տէրն Դիեկոս ոչ էր յառաջացեալ յընթացս ինչ.
որ գրաւեաց զանձինս հզօրս յոյժ առ բարի ելս
դատին իւրոյ. Միւռն խորհրդեան Հնդկաց տայր
նմա զիրաւունս առ աստիճան իմն այնպէս ամբար-
ձեալ, և առ բաղդ իմն այնպէս ճոխ, զի ոչ ե-
գիտ նա զդժուարութի 'ի կատարել զամուսնութի
ընդ Մարիամու դստեր տեառն Ֆերտինանտոսի
Տոլետոյ մեծ հրամանատարին Լէօնու, և եղբօր
դքսին Ալպայ Մեծի առաջնոյ դասու և անձուկ
ազգականի արքային. Դուքսն և տուն իւր այն-
չափ փոյթ յանձին կալան վն շահուց նորոյ փե-
սային. զի Ֆերտինանտոս ոչ կարաց ընդդէմ կալ
փութոյ նց. Յետոյ կոչեաց զՕվանտոս, և կար-
1509 գեաց նմա յաջորդ զտէրն Դիեկոս. Թէպէտ և 'ի
ներգործութեան ընձեռելոյ զայս շնորհ ոչ կարաց
թաքուցանել զնախանձոտութի իւր. որովհետև
ետ նմա անուն միայն զանուն բդեշխի, և ոչ
զփոխարքայի. որ դատեալ էր անկ լինել նմա:
Դիեկոս բերաւ վաղվաղակի 'ի Սպանիոլա ընկե-
րեալ

բեալ յեղբօրէ իւրմէ, 'ի Հօրեղբարց իւրոց, և 'ի Տէրն
Կնոջէն. զոր քաղաքավարութի Սպանիացւոց պատ- Դիէկոս
ուէր անուամբ փոխարքայութեան. և Հանդերձ յոգ- Երբնոց
նաւթիւ գերդաստանաւ անձանց բարետոհմից ա- 'ի Բօ-
րանց և կանանց. Կեայր նա շքով իմն և մեծա- ղոմպո-
գործութեամբ, որ չէր տեսեալ մինչև ցայնժամ 'ի ը.
Նոր աշխարհին. և տունն Բօլոմպոս երևէր վայե-
լեալ արդեամբք 'ի պատիւն և 'ի վարձսն, որք
պարտ էին առեղծիչ մնաց վախճանելոյ ծովակա-
լին. յորոց նա ինքն այնպէս անողորմաբար զրկեալ
էր. Նոյն իսկ Հատուածն ստացաւ զնոր պայծառութի
յաւելմամբ այնչափ բնակչաց աստիճանաւ և յատկութե
ամենեին տարբեր եղելոց 'ի մեծագոյն մասնէ այնո-
ցիկ, որք վաղ փոխադրեալ էին յԱմերիկա. որովհետև
բազումք յերևելագոյն տանց 'ի մէջ Սպանիական
Հարգուննեց սերեալ են յանձանց, որք յայնմ ժա-
մանակի զՀետ չոգան տեառն Դիէկոսի Բօլոմպոսի.
Յայսմ փոփոխումն կառավարութե ոչ վերաստա-
ցաւ բարերարութի ինչ առ տառապեալ Հնդիկսն.
Տէրն Դիէկոս ոչ միայն իշխանաւորեալ էր զօրութե
արքունի Հրովարտակի միոյ 'ի շարունակել զբա-
ժանմունսն և զբաշխոյս աղգայնոցն, այլև ուրոշեալ
էր մասնաւոր թիւն, զոր նա կարէր շնորհել իւրա-
քանչիւր անձին ըստ աստիճանին, զոր ունէր այնպիսին
'ի մէջ Նժդեհութեն. Շահաւորեցաւ այսպիսի թշուա- 1509
ռութիւն. և վաղվաղակի իբրև եՀաս 'ի սէն Տօմի-
նիկոս, արար զբաժանումն այնց Հնդկաց, որք
ոչ էին տակաւին յատկացեալք այլոց տեարց, 'ի
մէջ ազգականաց իւրոց և Հետևողաց:

Նախապետական Հոգ նորոյ բդեշխին եղև Հնա- Սէր Տոմ
զանդիլն նրատու իմիք, զոր ընկալեալ էր յար- Գոց-
քայէն շուրջ զօնկելով զբաղմամարդութի իմն 'ի պտուղ
Բուպակուայի փոքրիկ կղզւոջ, զոր գտեալ էր Բօ. Բոտոլ-
լոմպոս յերրորդ ճանապարհորդութե իւրում. Թէև յոպոյ.
պէտ այս տարածութի ամուլ երկրի Հաղիւ թէ
տայր զապրուստ ողորմելի բնակչաց իւրոց, գտաւ

'ի

'ի ծովեզեր խրում այնչափ բազմութի ոստրէից, որք գոյացուցանեն զմարգարիտս, մինչզի ագահութի Սպանիացւոց ոչ կորոյս զնս ընդ երկար ժամանակ 'ի դիտմանէ. Իսկ այս տեղի իմն երևելի շահու. և հարստութիք մեծամեծք ժողովեալ եղեն որսով մարգարտաց. որ փութանակի հոգացեալ եղև բազում եռանդեամբ. Հնդիկք և մանաւորաբար բնակք Լուքայոս կղզեաց տեսան բռնադատեալք երթալ 'ի ներքոյ ջուրց 'ի յորոնել զայնս. և այսպիսի իմն վտանգաւոր և անառողջարար պարապումն եղև յաւելուած իմն թշուառութեն. որ ոչ սակաւ հանգանակեաց առ շիջումն այնց տարաբախտից:

1509 Զայսու ժամանակաւ Յոհաննէս Տիազ տէսօլիս, և Փինծօն մեկնեցան 'ի միասին վս երկրորդ ճանապարհորդուե իւրք. Թևաքեցին Ը հարաւակողմն դէպ գիշերահաւասար գծին Ը որ Փինծօն յառաջագոյն անցեալ էր, և յառաջեցին մինչև 'ի քառասներորդ աստիճան հարաւային լայնուե. Մնացին ապշեալք 'ի տեսանելն, թէ շարունակն Ամերիկոյ երկայնաձգիւր յաջմէ նց ընդ բովանդակ այն աշխարհին տարածութի Ովկիանոսի. Կալան զցամաք 'ի զանազան տեղիս առ 'ի տիրանալ նց յանուն արքային իւրեանց. այլ որչափ և ցուցանէր երկիրն լինել արգաւանդ, և յանկուցանէր զնս, 'ի մեծագոյն աստիճանի, զօրութի նց էր այնպէս փոքրիկ, (գոլով արձակեալք մանաւանդ 'ի ծանօթանալ քան 'ի բազմամարդ առնել) զի ոչ հիմնեցին և ոչ զմի հաստուած. Բայց ճանապարհորդութի նց պիտանի եղև առ 'ի տալ Սպանիացւոց զբարձրագոյն և զառաւել հաւասարեալ գաղափարս չափմանց այնր նորոյ մասին երկրագնտոյ:

Նոր ճնհոր- դութի.

Իսկ իբր ամք տասն, յորմէհետէ Քօլոմպոս գտեալ էր զնախապետական ցամաքն Ամերիկոյ. բայց Սպանիացիք տակաւին ոչ ունէին անդէն յիմիք մասին զկայունութի իմն. Այն, որ յառաջ

Հաստ- գու- թուէ փորձէլ 'ի շինա- կութն.

լեալ

լեալ էր այնպէս ընդ երկար ստունգանել, յայնժամ հօգացեալ լինէր խնկութք և բացորոշմտօքթէպէտ և գաղափարն չև ևս էր կերպաւորեալ 'ի թագաւորութէն. և ոչ 'ի գործ եդեալ ծախուք ազգին. այլ միայն յառաջ շարժեալ 'ի ձեռներեց հոգւոյ սոսկական բաղդորդաց, Առաջարկութին էառ զծագումն իւր յԱլոնծոսէ Օյետայ. որ արարեալ էր արգեօք զերկուս ճանապարհորդութիս իւր երկրագնտ. յորս ամբարձաւ 'ի ծայրագոյն համարումն առանց հարստանալոյ. Յատկուն անվեհերութն իւրոյ, և իմաստուն առաջադրութն պաճարեաց նմա գնւրակի զընկերակիցս, որք վճարեցին կանխիկ զդրամն վն ծախուց առաքմանն. Դիեկոս Նիքուէսայ, որ փարթամացեալ էր 'ի Սպանիոլա, յղացաւ 'ի նմին ժամանակի զհաւասար իմն գծագրութի. Ֆերտինանտոս քաջալերեց զերկոսեսն. և թէպէտ ոչ կամեցաւ հանգանակել նց զւղզն գումար, սակայն մեծապէս եղև աղատական վն պատուանուանց և հրովարտակաց. Նա կանգնեաց զերկուս բդեշխութիս 'ի շարունակին. զմինն որ տարածիւր 'ի Դարիօ մեւլայէն ցծոցն Տարինէնու, և միւսն աստի ցգլուխն Կրաչիաս ատիօս. Առաջինն տուաւ Օյետա. վերջինն Նիքուէսա. Օյետա եդ 'ի կարգի զնաւ մի և զերկուս պրիկանթինս հանդերձ երեքհարիւր արամբք. Նիքուէսա զվեց նաւս վեցհարիւր ութսուն արամբք. Արձակեցան 'ի նմին աւուր 'ի սէյն Տօմինիկոսէ առ իւրաքանչիւր իւրեանց սահմանել կայանս. Գիտոյ էր ամլզստոյգ իմն երևոյթ վաւերուն առ իշաւունս նց 'ի վն այնց գաւառաց. Նաղումք 'ի գերազանցագոյն ածաքանից և օրինականացն Սպանիոյ պարապեցուցեալ եղեն 'ի պայմանել զեղանակն. որով պարտ էր առնուլ զստացումն նոցա. Նոյն ամենեին եղական և նոր կերպն, զոր նոքա ոզոշեցին առ այս վախճան. Հրահանգեցին զերկուս բդեաշխսն թէ խկոյն իբրև գիցեն զոտս 'ի շարունակին, յայտ

արուեստն ազգայնոցն զգլխաւոր յօդուածս քրիստոնէական հաւատոյ. տեղեկացուսցեն զնս վն իրաւարանութեն Հռոմէական քահանայապետին 'ի վե ամ Թագաւորութեանց երկրի. և զշնորհմանէ գաւառաց նց, զոր արարեալ էր նա առ Թագաւորն Սպանիոյ. և թէ խուսամտեցուսցեն զնս ընդդրկել զվարդապետութիս կրօնին, զոր տալոց էին ճանաչել նց. և հպատակիլ ինքնակալին, զորոյ քարոզէին զաւագութին. Իսկ եթէ ոչ կամիցին անսալ այսմ ծանուցման, Օյէտա և Ենքուէսոս ընկալեալ էին զիշխանութի յառնելոյ 'ի վր նոցա զինուք և վերածելոյ զնս և զկանայս նց և զորդիսն 'ի վիճակ իմն գերութեան.

(1) Սղանակն 'ի գործածել յայսմ դիպւորութեն ծառայեաց Սպանիացւոց իբր գաղափար 'ի բոլոր յաջորդական տիրապետութիս նց Ամերիկա. Այս այնպէս մասնաւոր իմն է 'ի բնութեան իւրում, և տայ մեզ զայնպիսի իմն գաղափար զընթացից Սպանիացւոց և զսկզբանցն, յորոց վերայ հիմնէին նոքա զիրաւունս իւրեանց առ ընդարձակ տրութիւն, զոր ստանային 'ի նոր աշխարհին, զի արժանի է ուշադրութն ընթերցողաց. Ի մէջ բերեալ էր 'ի Հերրէրայ վիպասանէ (Դեկ. 1 դպր. Է գլ. ժԴ.) Ես Ալօնծոս Օյէտա ծառայ գերաբարձր և ամենազօր Թագաւորացն Կաստիլիոյ և Լէօնու տիրապետողաց խուժադուժ ազգաց՝ պատգամաւոր և զօրագլուխ նց՝ ծանուցանեմ ձեզ և յայտ առնեմ ընդարձակագոյն ձեւով, որչափ ընդունակ եմ, թէ ած մեր Տր, որ է մի և յաւիտենական, հաստեաց զերկին և զերկիր և զմարդ մի և զկին մի. յորոց սերեալ եմք մեք և դուք և բովանդակ մարդիկ, որք եղեալ են, կամ լինելոց են յաշխարհի. Բայց քանզի յաղագս բազմութեն ծննդոց տեղեաց աւելի քան զհինգ հազար ամս սփռեցան մարդիկ 'ի զանազան մասունս տիեզերաց. և բաժանեցան 'ի պէսպէս Թագաւորութիւ

և 'ի գաւառս, վն զի մի միայն երկիր ոչէր բաւական տանել զնն. և ոչ նոքին կարէին գտանել 'ի միում և նմ զհայթհայթանս ապրելոյ և պահպանելոյ զինքեանս, վն այսորիկ ած մր տր ետ զհոգ համօրէն ժողովրդոցն այնոցիկ մի միայն մարդոյ կոչեցելոյ սր Պետրոս. զոր կացոյց նա տր և գլուխ բովանդակ մարդկային ազգի. ոպ զի ամ մարդիկ յորում և իցէ տեղւոջ ծնեալք, կամ յորում և իցէ աղանդի և տեղւոջ դաստիարակեալք, մատուսցեն նմա զհնազանդութի. Նա ինքն նդեռ էր զբովանդակ աշխարհս 'ի ներքոյ իշխանութե նր. Նա խոստացաւ նոյնպէս, և ետ նմա կարողութի հաստատելոյ զիշխանութի իւր յայլ ամ մասին աշխարհի՝ դատելոյ և կառավարելոյ զբովանդակ քրիստոնեայս և զայլ ամ ժողովուրդ յինչ աղանդս կամ 'ի հաւատս և իցեն. Նմա տուեալ է անունս պապ, որ նշանակէ սքանչելի, մեծ հայր և պահապան. վն զի նա է հայր և կառավար համօրէն մարդկան. Նոքա, որք կենդանի էին 'ի ժամանակի ոփյ ‾օրս՝ հնազանդէին նմա և ճանաչէին զնա իբր տր և թագաւոր և վերնագոյն տիեզերաց. Նոյնն 'ի գործ ածեալ է մինչև ցայժմ ընդ նն, որք յետ այնր ժամանակի յաջորդաբար ընտրեալ են առ քահանայապետութի. և այսպէս յառաջատէ յարաժամ. և յառաջատեսցէ մինչև 'ի կատարած աշխարհի:

Սինն յայսց քահանայապետաց իբր տր Ձի արարեռ է զշնորհումն իմն այնց կղզեաց և ցամաք երկրի առ ուղղափառ թագաւորս Բասթիլիոյ տէր Ֆերտինանտոս, և պանծալի յիշատակաց արժանի, տիրուհին Եղիսաբեթ, և առ յաջորդս նց ինքնակալս մեր հանդերձ ամին, որ պարունակի, և որ լիապէս բացայայտեալ է յարարս ինչ պայմանեալս յայնմ դիպուածութն. զոր և կարէք տեսանել երբ և կամիցիք. Նա այսպէս մեծվայելչութի իւր է թագաւոր և տր այնց կղզեաց և հաստատուն երկրի

գործութիւն այսր պարգևաբաշխութեան. և իբր այսպիսի բազումք 'ի կղզեացն, առ որս իրաւունք նց ծանուցաւ, վերածանեան զնա. և զարդիս ընծայեն նմա զհնազանդութիւն և զհպատակութիւն կամաւորաբար և առանց ընդդիմութեան իբրև դերագոյն իշխանի իւրեանց. և նմանապէս իսկոյն իբրև ընկալան զծանօթութիւն զայնմանէ, հնազանդեցան արանց կրօնաւորացն առաքելոց 'ի թագաւորէն, ոյք զի քարոզեսցեն բնակչաց նց, և կրթեսցեն զնս 'ի սբ̃ խորհուրդս հաւատոյ մերոյ. և ամենեքին սոքա ազատ կամօք իւրեանց առանց ինչ փոխարինի կամ բարերարութեան՝ եղեն՝ և հանապազորդեն լինել քրիստոնեայ. և մեծվայելչութիւն իւր ժողովելով զնս շնորհաւորաբար ընդ պաշտպանութիւն իւրով, պատուիրեաց, զի վարեսցին ընդ նս նոյնպէս, ոպ ընդ այլոց հպատակաց իւրոց և ստրկաց. Դուք ևս պարաւանդեալ էք և պարտական բերել նովին եղանակաւ. Ապա արդ աղաչեմ զձեզ, և երդմնեցուցանեմ զմտաւ ածել աւշադրութիւն զայն, զոր յայտ արարի ձեզ. և ոպ զի կարող լինիջիք կատարելագոյնս հասու լինել այնմ, առէք զժամանակ, որ է բանաւոր. զի կարիցէք վերաձանաչել զեկեղեցին իբր վերնագոյն և առաջնորդ հանուրց. և ևս զսբ̃ հայրն կոչեցեալ պապ իբր ստացող իրաւանց նորա. և զմեծվայելչութիւն իւր կարգմամբ նր իբր թագաւոր և դերագոյն տր այնց կղզեաց և հաստատուն երկրին. և հաւանել, զի վերոյ ասացեալ կրօնաւոր հարքն քարոզեսցեն ձեզ. և բացայայտեսցեն զնախայիշեալ վարդապետութիւն. Եթէ դուք առնէք զայն, գործէք իմաստնաբար. և կատարէք զայն, առ որ պարաւանդեալ էք. և մեծվայելչութիւն իւր, և ես յանուն նր ընկալցուք զձեզ սիրով և բարութբ. և թողցուք ձեզ զկանայս ձեր և զորդիս ազատս և ապահարկս 'ի ծառայութէ. և 'ի վայելումն այնր ամի, զոր ժառանգէք, ըստ տարազուն բնակչացն

կղզ-

կղզեաց . Նաեւ յայսմանէ մեծվայելչութիւն իւր շնորհեսցէ ձեզ զբազում արտօնութիւնս, ապա- հարկութիւնս եւ փոխարինութիւնս . Այլ եթէ դուք ոչ անսայցէք, կամ չարութեամբ դանդաղիցիք հնազան- դիլ կարգաւորութեանց իմոց, յայնժամ օգնակա- նութեամբ երկնից մտից յերկիր ձեր բռնութեամբ . տաց ընդ ձեզ պատերազմ մեծագոյն ուժգնութեամբ . եւ նուաճեսցից զձեզ ընդ լծով հնազանդութեան եկե- ղեցւոյ եւ թագաւորին . առից եւ գերեցից զկանայս ձեր եւ զորդիս առ ՚ի վաճառել զնոսա առ յապայն, կամ կարգադրել զնոցանէ ըստ հաճոյից հրամայո- ղին . տիրեսցից ընչից ձերոց . եւ արարից ձեզ զամ չարիս, իբրեւ հպատակաց ապստամբից . որք ոչ կամին վերաճանաչել եւ ենթարկիլ օրինաւոր արքայի իւրեանց . Նա եւ վկայութիւն դնեմ՝ թէ բոլոր հեղումն արեան եւ աղէտքն, որք կարեն ծագել յայնմանէ, համարիցին ձեզ, եւ ոչ մեծ- վայելչութեան իւրում, կամ ինձ, կամ սեպուհեացն, որք ծառայեն ընդ առաջնորդութեամբ իմով . Նա արդ արարեալ իմ ձեզ զայս յայտարարութիւն եւ զհար- ցումն ՚ի ներկայութեան ձերում, ատենադպիրն, որ է աստէն առաջիկայ, արասցէ ինձ զայնմանէ վկայական մի ստորագրեալ սեպհական կնք- պիռն : ||

Այլ քանզի բնակիչք շարունակին ոչ կարէին նոյն- 1509
հետայն հաւանել իրացն կարի նորին եղելոց վս Տառա-
անկիրթ մտաց իւրեանց, եւ մեկնելոյ ՚ի թարգման- պանք,
չաց չեւես քաջավարժից ՚ի լեզուս նց, այնու զի ուր
ոչ ՚ի միտ առնոյին, թէ իցէ յաշխարհի անձն, զՆէս
որ ունիցի զիրաւունս կարգադրելոյ զկայից նց, Էրեան
կամ թէ նախապետ ոք անծանօթ պահանջիցէ զի- ցին .
րաւարանութիւն ՚ի վս նց իբրեւ ՚ի վս հպատակաց իւրոց, ընդդէմ դարձան գաղանաբար նոր տիրա- պետողաց երկրաստանաց իւրեանց . Օյէտա եւ Նիքուէսսա թեւակոխեցին արդիւնացուցանել բռնու- թեամբ զայն, զոր ոչ կարէին ստանալ խնլամտե-

ցուցմամբ. Ժամանակակից պատմագիրք մոռանեն 'ի յոյժ մանրամասն իմն պատմութե̃ արարից ն̃ց. բայց քանզի ոչ ուրուքն զծանրակշիռ ինչ երկրագլուխ, և ոչ անկեցին զտևողական իմն հարգունու̃, բաղդ ն̃ց ոչ արժանաւորի ուրոյն տեղւոյ 'ի յընդհանրական վիպասանութե̃ միջոցի իրից ժամանակի, ուր առասպելաբանական քաջութիւն 'ի պայքարման անհաւատալի տարապայմանութիւնք ոչ այլ ինչ է, բայց եթէ առարկայ սնոտի զարմացման. Բայց գտին զազգայինս այնց գաւառաց, զորոց երթային առնուլ զկառավարութիւն, տարբերս յոյժ հանդամանօք 'ի հանդամանաց հայրենակցաց իւրեանց 'ի կղզւոջն. Այն գունդք և պատերազմասէրք. Թաթաւէին զդէնս իւրեանց 'ի թոյն ինչ այնպէս նրբին, զի ա̃մ խոցուածոյ հետևէր անշուշտ մահ. 'Ի միում և եթ մաքառման կոտորեցին զեօթանասունս 'ի հետևողացն Օյետայ. և այս եղև առաջին նուաղն, յորում ուսան Սպանիացիք ունել զահ 'ի բնակչացն նորոյ աշխարհին. Նիքուէսսայի ընդդէմ եկաց ազգ մի դիմադրաւեալ հաւասարապէս վ̃ն պաշտպանութեան ստացուածոց իւրոց. Ոչ ինչ կարէր մեղմել զամեհութի̃ ն̃ց. Թէպէտ Սպանիացիք 'ի գործ արկին զա̃մ արուեստակութի̃ առ 'ի ամոքել զնոսա յանկուցանել յինքեանս զվստահութի̃ ն̃ց, սակայն նոքա հրաժարեցան յունելոյ զդաշն ինչ, կամ փոխադարձելոյ զբարեկամական ինչ օճան ընդ արանցն, զորոց զբնակութիւն 'ի մէջ իւրեանց նկատէին իբր մահաբեր ազատութե̃ իւրեանց և ան-
1510 կախութե̃. Այս անհաշտելի հակակրութի̃ ազգայնոցն առնէր ծայրագոյնս դժուարին և վտանգաւոր զհաստատելն զբնակութի̃ իմն յայնմ երկրի. Այլ սակայն լեալ էր այս յաղթելի 'ի յարատևութե̃ Սպանիացւոց, եթէ վ̃ն մեծագոյն թըւոյ զինուց իւրեանց, և եթէ վ̃ն վարժութե̃ ն̃ց յարհեստի պատերազմելոյ. Յայսմ ժամանակի ա̃մ

ձա-

ձախորդութի, որ կարիցէ կուտել 'ի մի թշուառացեալ իրք ժողովրդեան, միաբանեցաւ 'ի լրացուցանել զկործանումն Սպանիացւոց. Կորուստ նաւուց նց վն զանազան պատահարաց յանծանօթ խմիք ծովեզեր, հիւանդութիւնք մասնաւորք առաւել վատառողջ կլիմայի միում Ամերիկոյ, պակասութի պարենից անխորշելի յերկրի միում անկատարապէս մշակեցելոյ, երկպառակութին 'ի մէջ իւրեանց և անդադար թշնամութիւնք ազգայնոց ընկղմեցին զնս 'ի շար ինչ թշուառութեանց. որոց սոսկ պատմութին լնու սարսափմամբ. Արդարև ընկալան զերկուս երևելի զօրավիգութիւնս 'ի Սպանիոլայէ, բայց մեծագոյն մասն նց, որք գրաւեցան յայսմ թշուառական առաքման, կորեան 'ի միջոցի նուաղ քան զտարի մի յառաւել տագնապալի թշուառութն. Սակաւքն, որք մնացին կենդանի, հարդունացան իբր տկար նժդեհութի 'ի Յանթա մարիա էլանթիքուա 'ի ծոցին տարիէնու ընդ հրամանաւ Վասքոյի Նունեզայ Պալպօայ. որ 'ի մէջ առաւել յուսահատեալ ալէկոծութենց եցոյց զքաջասրտութի իւր և զհանճարեղութի, որք շահեցան նմա վաղվաղակի զվստահութի քաղաքակցաց իւրոց. որք կարգեցին զնա առաջնորդ իւրեանց 'ի չքնաղագոյն և յաջողագոյն գործառնութիս. Սա ոչ եղև միայն յայնմ շահատակուն բաղդորդն, որ ունիցի առնել լուսաճաճանչ երևոյթ յառաւել ազնուական կերպարանս. Ֆրանչիսկոս Պիծծարրոս եղև մի յընկերացն Օջէտայ. և յայսմ դպրոցի ձախորդութն պաճարեաց կամ կատարելագործեաց զքանքարս. յորմէ հանդիսացաւ յարտաքոյ կարգի գործողութիս, զորս արար յետոյ. Ֆէրտինանտոս Քօրթէս, որոյ անունն եղիցի միշտ առաւել հռչակաւոր, սիրահարեալ էր կանխաւ առ այս յանձնառութի. որ զօրթուցեալ էր առ զէնս զբովանդակ գործունեայ երիտասարդն Սպանիոլայի. բայց բարեբաղդութին, որ նպաս-

տուող եղև նմա 'ի յաջորդական պատահմունս իւր, միջնորդեաց ապրեցուցանել զնա յայնց թշուառութեանց. որոց գտան ներքոյ անկեալ սենեկակիցք իւր. Սա հիմնադրեաց 'ի սէն Տոմինկոս յառաջ քան զմեկնիլն անտի նաւահանգիսին. և անպատրաստութիւն իւր արգել զնա անդէն.

1510 Թւէպէտ և տարաբաղդ եղև ելք այսր շահատակութեան, Սպանիացիք ոչ էին զարհուրեալք յընդգրկելոյ զնորանոր առաջարկութիւս նմանօրինակս. Յորժամ հարստութիւն աստիճանաբար տացեալ է 'ի յարատևական ձեռանէ ճարտարմտութեան. կամ կուտեալ 'ի դանդաղ գործողութեանց կանոնաւոր իմն շահավաճառութեան, հայթհայթանք 'ի գործ արկեալք անդէն այնպէս համեմատեալ են վախճանին ստացելոյ, մինչզի չիք ինչ, որ պարտ իցէ շլացուցանել զերևակայութիւն. և ոչինչ առ 'ի շարժել զներգործական կարողութիւս ոգւոյն առ արտաքոյ կարգի ջանս. Բայց յորժամ մեծամեծ քաղաքք գոյացեալ էին գրեթէ 'ի միում վայրկենի, յորժամ ոսկի և մարգարիտք ընկալեալ լինէին փոխանակ չնչին իրաց, յորժամ գաւառքն որք գոյացուցանէին զայսոսիկ մեծագին տարազս, պաշտպանեալք միայն 'ի մերկ վայրագաց, կարէին տիրապետիլ յառաջին անվեհեր ասպատակողէ, աշխարհայք այսպէս եղականք և հրապուրիչք զարթուցանէին զոգի իմն ազանչելի ձեռներէցութեան 'ի Սպանիացիս. որք սլանային եռանդիւ յայս նոր ընթացս բացեալս առ գանձս և առ հանդիսացումն. Յորչափ այս ոգի տակաւին եռանդնոտ էր և կորովի, ամ թևակոխութիւն երկրածանօթութեան կամ տիրապետութեան գովասանեալ էր. և բաղդորդքն դիմադրաւ լինէին առ այն փոխամրցարար. Զարչարանքն վտ նորանոր ձեռնարկութեանց, որ նշանաւորէ զչարն երկրագտութեան 'ի վերջին մասին հնգետասաներորդ հարիւրեկին, և 'ի սկզբան հետագային պարտ էր միայն բաւական լինել արգելուլ



Տէրա- ղէպա- Ըէ-ն ·Բա- դայէ·

լուլ զՍպանիացիս կասիլ յընթացս իւրեանց․ Բայց նոքա կամեցան տարածանել առաւել ևս զնաւարկութիւ իւրեանց և զտիրապետութիւն մն մասնաւոր ինչ պարակայից, որք յայնմ լծակցութեան հանդիպեցան 'ի Սպանիոլա․ Խստութիւն վարվին Է բնակչաց կղզւոյն գրեթէ ընաջինջ առնելով զզարմն, բազումք 'ի հողագործացն Սպանիացւոց, ոչ վերագոյնդ նշմարեցաք, տեսանելով անկարելի զյառաջ տանելն զգործս իւրեանց նովին պարաւանդութբ և շահեկանութբ հարկեցան որոնել այլուր զկայունութիւն ինչ 'ի գաւառի իմիք, որոյ ժողովուրդն չիցէ տակաւին շիջեալ 'ի թշուառութենէ․ Նայք այնու անխորհուրդ թեթեւութբ, որ բնական է մարդոց, յորոց մի՛ անձրեւէ բաղդն միանգամայն, վատնեալ էին վարկպարազի շռայլութբ զայն, զոր ստացեալ էին առանց աշխատութե․ և էին հարկադրեալք մխիլ յառաւել յուսահատեալ առաջարկութիւ առ 'ի ուղղել զշահաւորութի անձանց իւրեանց․ Վն այսց ա՛մ պատճառաց յորժամ տր Դիեկոս Քօլոմպոսն առաջադրէր առնել զտիրապետութի կղզւոյն Քուպայի, և տնկել անդէն զբազմամարդութի իմն, բազում անձինք գլխաւորք երեւելիք 'ի Սպանիոլա յարէին յայն հաճութբ․ Սա ետ զհրամանատարութի գնդացն կարգելոց առ այն ծառայութի ցորն Դիեկոս Վելասքուեզ մի յընկերացն հօր իւրոյ յերկրորդ ճանապարհորդութե․ որ և կալով ընդ երկայն ժամանակ 'ի Սպանիոլա՝ ժողովեալ էր զմեծամեծ հարստութիս, և արարեալ էր իւր անուն առն պատուականի և հանճարեղի, և հետեւաբար կարի ըմբռնի առ 'ի բարւոք առաջնորդել այսպիսի իմն ծանրակշիռ շահատակութե․ Երեքհարիւր արք համարեցան բաւականք յաղագս տիրապետութե կղզւոյ միոյ, որ ունէր աւելի քան զեօթնհարիւր մղոնս երկայնութի և լի բնակչօք․ Այլ սոքա էին համանմանք ժողովրդեան Սպանիոլայի․ այս է, ոչ

բնաւ պատերազմականք. Այլ սարսափեցան յե-
րեսանէ նոր թշնամեաց իւրեանց. և ես ոչ նա-
խապատրաստեալ առ 'ի ընդդէմ կալ. Իսկապէս
'ի ժամանակէն, յորում Սպանիացիք տիրացան
մերձակայ կղզւոյն, թէպէտ և գոյր պատճառ
սպասելոյ, թէ նոքա արասցեն զչանս ինչ 'ի սահ-
մանս իւրեանց, ոչ դք 'ի փոքր հասարակութեց,
յորս Կուպա էր բաժանեալ, հաւաքեալ էր ըն-
համբարս մն պաշտպանութն, կամ կերպաւորեալ
զխորհուրդ ինչ մն հրապարական ապահովութն.
Այլ միայն խոյն, որում պատահեցան Սպանիա-
ցիք՝ եղև 'ի կողմանէ Հաթուէյ քաղքեայ փա-
խուցելոյ 'ի Սպանիոլայէ, որ բնակեալ էր յա-
րևելեան ծագ Կուպայի. Սա եկաց ախոյեան
յառաջին ընդոստն, զոր արարին նոքա 'ի ցամաք.
և զուն գործեաց մղել զնս յետս 'ի նաւս իւր-
1511 եանց. Բայց տկար խումբք նր վաղվաղակի խոր-
տակեցան և ցրուեցան. և նոյն ինքն կալանաւո-
րեալ, Վէլասքուէզ կամեցաւ համարիլ զնա իբրև
զգերի մի, որ առեալ իցէ զէնս ընդդէմ տն իւ-
րոյ, և դատապարտեաց զնա 'ի բոցակիզումն.
Յորժամ Հաթուէյ կապեալ էր 'ի ցիցն առ 'ի այ-
րիլ, կրօնաւոր մի Փրանչիսկան աշխատելով առ 'ի
դարձուցանել զնա՝ զեկոյց նմա զանընդմիջական
մուտն յերկնային ուրախութիւն, եթէ կամիցի նա
ընդգրկել զքրիստոնէական հաւատն. Ասաց Հա-
թուէյ զկնի դադարման ինչ. յայդմ երանական
գաւառի, զոր դու ստորագրես, են արդեօք Սպա-
նիացիք. պատասխանի ետ կրօնաւորն. այո՝ բայց
միայն նոքա, որք արժանի են այնմ և բարի. Բա-
րեգոյնքն 'ի նոցանէ, կրկնեաց զայրացեալ քա-
ղիքէն, ոչ ունին ոչ զարժանաւորութի և ոչ
զբարութի. ոչ կամիմ երթալ 'ի տեղին. ուր կա-
րիցեմ պատահել այսպիսի ազգի. Այսպիսի իմն
ահարկու օրինակ վրէժխնդրութն 'ի կողմանէ Վէ-
լասքուէզայ եհար զժողովուրդն Կուպայի այնպի-

սի

ռք ահի՛ն, մինչզի հազի՛ւ արարին ընդդիմակայութն ինչ յառաջադիմութեանց յարձակողաց իւրեանց. և Մէլասքուէզ առանց կորուսանելոյ զմարդ մի յաւել զայս ընդարձակ և բերրի կղզի 'ի միապետութիւն Սպանիացւոց :

Դիւրութիւն, որով կատարեցաւ ստացումն 'Բու- Օրանօ-պայի, եղև գրգիռ առ այլ ձեռնարկութիւն. Յօ- Պօ-նէ հաննէս փօնչէ տէլէօն գոլով ստացեալ զհամբաւ Ֆլօրիէ- և զհարստութե՛ վն անձնատուր լինելոյ փօրթօ-պայէ. ռիքու, էր անհամբեր հանդիսանալոյ նորանոր քաջագործութե՛. Նախապատրաստեաց զերիս նաւս ծախուք իւրովք առ 'ի երթալ յերկրագտութիւն. և համբաւ իւր ձգեաց վաղվաղակի զկնի զերևելի բիմ խումբ հետևողաց. Ուղղեաց զընթացս իւր առ կղզիսն Լուքայօս. և յետ դիպելոյ յոմանս 'ի նոցանէ, ուր և արար կղզեացն Պահամայ, դարձաւ 'ի հարաւային արևմուտս, և պատահեցաւ անդէն երկրի միում, որ անծանօթ էր ցայնժամ Սպանիացւոց. զոր նա անուանեաց Ֆլօրիտա՝ ծաղկաւէտ. կամ վն զի դէպ եղև ծանօթանալ այնմ 'ի կիւրակէի ծաղկազարդին. կամ յաղագս զուարճալի և զմայլելի կայաւորուն իւրոյ. Գուն գործեաց ունել զցամաք 'ի զանազան տեղիս, բայց եգիտ անդէն զայնպիսի բուռն ընդդիմակայութ 'ի կողմանէ ամէհի և պատերազմական ազգայնոցն, մինչզի յաղթահարեաց զնա թէ պարտ էր աճեցուցանել զզօրութիւն, որ պիտոյ էր նմա առ 'ի հաստատել անդէն զնժդեհութի մի. Հատացեալ բանալոյն զհաղորդակցութի ընդ նորոյ իմիք գաւառի, զորոյ զքաջութէ և զծանրակշռութէ արդէն յղանայր զուրախալի յոյս, դարձաւ 'ի փօրթօրիք ընդ քանակն կոչեցեալ այժմ ծոց Ֆլօրիտայի :

Ոչ եղև միայն կիրքն հետաղօտելոյ զնորանոր վայրս, որ դրդեաց զփօնչէ տէ լէօն մտանել յայս գնացս, այլև որոշեաց զնա մի յայնց երազական

գա-

գաղափարացն, որք յայնմ ժամանակի խառնէին ընդ ոգւոյ երկրագտութ̃ն. և տանէին զնա առաւել համարձակ. Հոջէր աւանդութ̃ի իմ̃ 'ի մէջ բնակացն փօրթօրիքու, թէ 'ի կղզւոյն Պիմինի 'ի միում 'ի Լուքայօսաց գտանիւր աղբիւր մի այնպիսի սքանչելի զօրութ̃բ, որ վերստին պարգևէր զերիտասարդութիւն, և վերադարձուցանէր զոյժ ա̃մ անձին, որ լողանայցէ յայն առողջարար ջուրսն. Հաւատալով վայելել յայս մեծ կազդուրիչ փօնջէ տէլէօն և հետևօղք իւր բաժանեցան ը̃ կղզիսն անպտուղ աշխատութ̃բ 'ի խնդիր աղբերն, որ էր առարկայ երթալոյ նց̃. Եթէ պատմուի ինչ այսպէս առասպելական գտցէ հաւատս 'ի մէջ պարզամիտ և տգէտ հնդկաց՝ ոչ պարտի բերել զզարմացումն. բայց յայսմ դարու երևի բնաւին անհաւանական, թէ պատրեսցէ զժողովուրդ մի լուսաւորեալ. Սակայն եղեալն է ամենաստոյգ. և առաւել արժանահաւատ Սպանիացի վիպասանք յիշատակեն զնմանակ տարապայման մոլորութ̃ի հայրենակցաց իւրեանց կարի դիւրահաւատ եղելոց. Սպանիացիք էին յայնժամ ընկղմեալք յընթացս յաջողակութ̃ն, որ տայր պատկերակերպութ̃ն նց̃ խորհիլ իմ̃ առասպելապատում. և առաջի առնէր նց̃ յա̃մ օր առարկայս օտարս և հրէշականս. Նոր աշխարհ մի բացեալ էր առաջի նց̃. Երթայքն այց առնելով կղզեաց և շարունակաց, զորոց տգ. մարդկան յանցեալ ժամանակս ոչ ունէր ընկալեալ ըղծանօթութ̃ի. Այն բերկրալի գաւառսն երևէր, թէ բնութ̃ին առնոյր զպարագան կերպարան. ա̃մ ծառ, ա̃մ տունկ, ա̃մ շնչաւոր էր տարբեր յեղելոցն 'ի վաղեմի կիսագնտին. Կարծէին լինել փոխաբերեալ յերկիրս դիւթեալս. և յետ սքանչելի իրացն, զոր տեսանէին 'ի մատչելն, և 'ի նորութ̃ն ապշութ̃ն իւրեանց ոչ ինչ երևէր նց̃ այնպէս արտաքոյ կարգի, որ չիցէ արժանի հաւատալոյ. Եթէ սրընթաց յաջորդութ̃ի միշտ նորանոր

և

և մեծագործ տեսարանաց արար զայնպիսի տպաւորութի 'ի խորին միտս Քրիստափորի Քօլոմպոսի, զի էհաս պարծիլ թէ գտեալ իցէ զկայան դրախտին, ոչ պարտի դատիլ օտարոտի իմն. եթէ Փոնչէ տէլէօն երազէր գտանել զաղբիւր երիտասարդութեան.

Փոքր մի զկնի առաքմանն 'ի Ֆլորիտա արարաւ գիւտ ինչ ևս առաւել շահեկան յայլում իմիք մասին Ամերիկոյ. Պալպօա գոլով ամբարձեալ յառաջնորդութի փոքրիկ նժդեհութեն 'ի Սանթա մարիայն 'ի Տարիէն 'ի միակերպ և 'ի կամաւոր ուխտից ընկերաց իւրոց, փափագէր եռանդիւ ստանալ զհաստատութի ընտրութեն 'ի թագաւորէն. և առ այս վախճան արձակեաց 'ի Սպանիա զմի 'ի պաշտօնատարաց իւրոց վս ընդունելոյ աղաչանօք զարքունի իմն վճիռ, որ վերստին զգեցուսցէ նմա զօրինաւոր իմն թուղթ առ գերագոյն հրամանատարութիւն. Բայց խելամտեալ, թէ ոչ կարէր նա սպասել զբարի ելս 'ի պաշտպանութէ գործակալացն Ֆերտինանտոսի, ընդ որոց ոչ ունէր զմտերմութի. կամ 'ի լարելոյ է միում յարքունեաց, զորոյ ոչ գիտէր զարուեստս, խորհեցաւ շահիլ զարժանաւորութիւն, որում ցանկայր, առնելով զծառայութի ինչ այնպէս նշանաւոր, որ ապահովացուսցէ նմա զնախադասութիւն 'ի վս որոյ և իցէ խնդրակցի. Այսու խորհրդով արար յաճախ արշաւանս ընդ մօտակայ գաւառն. նուաճեաց ընդ լծով զբազումս յայնց քաղաքեայց. և ժողովեաց զմեծ քանակութի ոսկւոյ, որ առատանայր առաւել յայնմ մասին շարունակին, քան թէ 'ի ներքս կղզւոյն. Յարեաւ յայնմ առթի հակառակութիւն ինչ 'ի մէջ Սպանիացւոց 'ի վս բաժանման ոսկւոյն. և էին 'ի պատրաստի անցանելոյ 'ի գործս բռնութե ընդդէմ միմեանց. Երիտասարդ ոմն քաղիքէ անդէն առաջիկայ պաշին ընդ բարձր արժողութին, զոր տային նոքա իրի

միում

միում, զոր ոչ գիտէր նա տարորոշել զպիտա-
նութին, ընկեց զայրացմամբ զոսկին 'ի կշռորդէն.
և դարձուցեալ զերեսս առ Սպանիացիս ասաց.
,, Ընդէ՞ր վիճէք դուք վն այսպիսի չնչին իրաց.
,, եթէ այսպէս ախտաւորաբար Հարեալ էք 'ի սէր
,, ոսկւոյ, մինչև թողուլ զՀայրենիս ձեր և գալ
,, վրդովել զՀանդարտութի Հեռաւոր ազգաց,
,, առից զձեզ 'ի գաւառ մի, ուր Հրահալելին,
,, որ երևի նպատակ զարմացման ձերոյ և բաղ-
,, ձանաց, է այնքան Հասարակ, մինչև անարգա-
,, գոյն կաՀք յայնմանէ կազմեալ են.,, Պալպոա
և ընկերք իւր գումարեալք յայնմանէ զոր լսէին,
Հարցին ցնա անձկանօք, ու՞ր էր այսպիսի ին տե-
1512 ղի, և թէ զիա՞րդ կարէին ժամանել անդր. Նա
ասաց ցնո, թէ 'ի Հեռաւորութե վեց արևուց,
այս է գնալով զվեց տիՀս ընդ Հարաւ՝ տեսցեն
զայլ Ովկիանոս ինչ. որում առընթեր կայաւորեալ
էր այսպիսի ին երջանիկ թագաւորութի. այլ ե-
թէ խորՀէին մարտնչել ընդ այնմ Հզօր տրութե.
պարտ էին միաւորել զօրութիս յոյժ վերնագոյնս
թուով և կորովութե քան զոր ցուցանէին ունել
ներկայաբար:

Նշանա գծաւ Բէրուն. զոր էր պատուէր նա:

Նոյն այս առաջին տեղեկութին, զոր ընկալան Սպա-
նիացիք զմեծ Ովկիանոսէ Հարաւայնոյ, և զայն
ընդարձակ գաւառէ ծանուցելոյ յետոյ ը անուամբ
Փէրու. Պալպոա ունէր յայնժամ առաջի աչաց
զառարկայս յարմարեալս անկոպար փառասիրութե
իւրում, և ձեռներէց կայտառութե մտաց իւրոց.
Կնքեաց նոյնՀետայն, թէ Ովկիանոսն յիշատակեալ
'ի կազիքեայ անտի՝ պարտ էր լինել նոյնն,, զոր
Քօլոմպոս որոնեալ էր 'ի զուր յայսմ մասին Ա-
մերիկոյ յուսով բանալոյ զառաւել ուղղակի Հա-
ղորդութի ընդ արևելեան Հնդկաց. և մակաբե-
րեաց, թէ փարթամ երկրաստանն, որ ստորագ-
րեալ էր նմա, իցէ անշուշտ մասն ինչ այնր Հա-
մատարած և ընչաւէտ կողման աշխարՀի. Հպար-
տա-

ծացեալ խորհրդով կատարելոյ զայն, զոր այն-
պիսի մեծ այր ձեռնարկեալ էր առանց ինչ օգ-
տուն. և փոյթ առ 'ի արդիւնացուցանել զգիւտ մի,
զոր ճանաչէր լինել ընդունելի թագաւորին, միան-
գամայն և օգտակար հայրենեաց իւրոց, անհան-
գիստ էր, մինչև ոչ կարողացաւ գտնել 'ի կարգի
մն այսր առաջադրութեան. որոյ բաղդատութիւն այն
ամ, զոր նա յառաջագոյն արարեալ էր, ոչինչ
էր. Բայց պահանջէին նախ տրամադրութիւնք և
պատրաստութիւնք առ 'ի ապահովացուցանել զքարի
նս նր. Սկսաւ աքրանեկել և յանկուցանել զբա- 1518
րեկամութիւն մօտաւոր քաղեքեայց. Առաքեաց զո-
մանս 'ի պաշտօնատարաց իւրոց 'ի Սպանիոլա մե-
ծաւ բազմութեամբ ոսկւոյ իբր ցոյց անցելոց իւրոց
յաջողուածոց, և իբր առհաւատչեայ ապագայ յու-
սոյ իւրոյ. Պաշտօնատարքն առնելով յայնմանէ
զյանկաւոր իւր բաշխումն՝ ստացան զշնորհս բդեշ-
խին. և ամոքեցին զկամակարսն առ ծառայութիւն.
Իսկն առ Պալպօա նշանաւոր իւր օգնականութիւն
յայնմ կղզւոյ. և նա համարեցաւ զանձն 'ի վի-
ճակի երթալոյ առ 'ի ձեռնամուխ լինել 'ի
գործն:

Յամաքալեզուն Տարիէնու ոչ է աւելի քան զվաթ- Դիծառա
սուն մղոն յերկայնութիւն. բայց տարածուին ցա- բու-Լէէն
մաքի, որ միաւորէ ը̃ միմեանս զշարունակսն հիւ- խոտա-
սիսային. և հարաւային Ամերիկոյ՝ ամրացեալ է 'ի մէջ
շղթայէ իմեքէ բարձր լերանց, որք հաստատեն զայն.
զրուանդակ տարածութիւն նր. և որք առնեն զնա
սերտ և հաստատուն պատնէշ դիմակաց լինելոյ
ընդհարման երկուց հակադրեալ Ովկիանոսաց. լե-
րինքն են ծածկեալ թանձրախիտ անտառօք. հո-
վիտք յայնմ խոնաւ կլիմայի, ուր անձրևէ ընդ
երկուս երրորդս տարւոյն, են ճախճախուտք և
հեղեղեայք, այնպէս յաճախակի, զի բնակիչք կա-
րեւոր վարկանին շինել զտունս իւրեանց 'ի վերայ
ծառոց առ 'ի կալ ամփարձակ տարականցութեան ի-
հեք

ճիք 'ի աղմայլին գետնոյ և 'ի տաղտկալի ժամանց ծնելոց 'ի նեխեալ ջուրց. Այտոր գետք վայրաքերին ուժգին հոսանօք 'ի բարձրաւանդակաց. 'Ի միում գաւառի սակաւ բնակեցելոյ 'ի վտարանդի վայրենեաց՝ ձեռն ճարտարութեան ոչ էր արարեալ ինչ առ 'ի մեղմել, կամ ուղղել զայսոսիկ բնական պակասութիւս. Երթալն ընդ ճանապարհ իմն անփորձ՝ ոչ այլով առաջնորդութեամբ, բայց եթէ Հնդկաց. զորոց զհաւատարմութիւն ոչ էր մարթ վստահանալ, էր առաւել յանդուգն ձեռնարկութիւն, յոր յայնժամ դիմագրաւեալ իցեն Սպանիացիք 'ի նոր աշխարհին. Բայց անվեհերութիւն Պալպոայ էր այնպիսի՝ որ տարորոշէր զնա 'ի մէջ հայրենակցաց իւրոց 'ի դարու միում, ուր ամ բաղդորդ լինէր երևելի մն իւրոյ քաջասրտութեան. Քաջութիւն ոչ էր միայն արդիւնք Պալպոայ, այլև երևէր նա հանճարեղ 'ի գնացս իւր, ազնուական, քաղցրաբարոյ և հանդերձեալ մարդասէր քանքարօք, որք յաւել յուսահատեալ դիպուածս շնչեն զվստահութիւն առ 'ի փոխատրել զխրոս բարկյօժարս. Նոյն և զկնի միաւորութեան կամակարացն եկելոց նմա 'ի Սպանիոլայէ ոչ թըւէին արք աւելի քան զհարիւր յիսնսուն մն հահատակութեան իւրոյ. բայց էին ամենեքեան համարձակագոյնս եւ բազմաժամանակեայ զօրականք
1512 սովորեալք առ կլիմայն Ամերիկոյ, և պատրաստականք հետևելոյ նմա յաւել մահաբեր վտանգս. Հազար Հնդիկք երթայն զկնի նց առ 'ի տանել զռոճիկս. և առ 'ի լրացուցանել զկարգն զինուորական. առին զբազում յայնց ամեհի շանց ահարկուաց և ապականչաց մերկ հակառակորդաց Ոստանօ. իւրեանց :

Գտանէ Հարաւային ծովու. Պալպոա չուեաց մն ծանրակշիռ նպատակին իւրոյ յառաջնում սեպտեմբերի. համոզեալ թէ 'ի ժամանակին, յորում պարբերական անձրևք սկսանին նուազել. Գնաց յառաջ ընդ ծով, և առանց

ինչ

ինչ դժուարութեն մինչև 'ի սահմանս քաղաքեայց ուրումն, զորոյ ստացեալ էր զբարեկամութիւն. Բայց հազիւ թէ սկսեալ էր յառաջ խաղալ 'ի ներքսագոյն մասին երկրին, կասեցուցեալ եղև յայնց խոշընդակաց, յորոց ունէր իրաւունս երկնչելոյ 'ի բնութէ տեղւոյն և 'ի հանգամանաց բնակչացն. Ամենք 'ի քաղաքեայց 'ի մերձենալ նր ընթացան 'ի լերինս ամբոխիւ իւրեանց. և տարան 'ի բաց, կամ ապականեցին զայն ամ, որ կարէր մատակարարել ապրուստ զօրաց նր. Նյլք ժողովեցին զհպատակս իւրեանց առ 'ի ընդդէմ կալ յառաջագիմութեանց նր. և նա վաղվաղակի իրազեկ եղև, թէ դժուարին գործողուի էր ածելն զայնպիսի իմն գունդ մարդկան 'ի մէջ թշնամի ազգաց ընդ ճախինս, ընդ գետս և ընդ անտառս. ընդ որ ոչ էին երբեք անցեալ, բայց եթէ թափառական հնդիկք. Բայց տալով զանձն յառաւել խիստ աշխատանս ընդ ևս վայրագոյն զօրականի, ցուցանելով զինքն առաջին յընդառաջ ելանել վտանգի, և խոստանալով աներկբայ գնդի իւրում ըզվայելումն իմն պատւոյ և գանձուց առաւել քան զփարթամագոյն համաշխարհիկս իւրեանց, շնչեաց 'ի նս զայնպիսի իմն որոշեալ աշխոյժ, զի զհետ գնացին նմա ընդ ամ ուրեք առանց տրտնջելոյ. Իբրև մխեցան ևս յառաջ 'ի լերինս, երևեցաւ հզօր քաղաքէ մի 'ի նեղ անցս ինչ յողնաթիւ կաճառաւ հպատակաց իւրոց առ 'ի արգելուլ զյառաջագիմութի նց. Բայց արքն, որք այնինչ գեր 'ի վերոյ լեալ էին այնչափ տառապանաց, անգոսնեցին զդիմադարձութի այնպիսի տկար հակառակորդաց. Ի դիմի հարան նց ուժգնուք. և ցրուեալ զնն դիւրութք և մեծաւ կոտորածիւ, հետևեցան զճանապարհ իւրեանց. Թէպէտ առաջնորդքն ասացեալ էին, թէ երկայնութի ցամաքալեզուին էր միայն վեց աւուրց ճանապարհ, սակայն նոքա արդէն ծախեալ էին զաւուրս քսան և հինգ 'ի բոնա-

զբօ-

զբօսել զշուն ընդ անտառս և ընդ լերինս. 'Ի մէջ նց էին բազումք 'ի պատրաստի ընկճելոյ յանընդհատ աշխատանացն յայնմ տագնապիչ նահանգի. յոլովք ըմբռնեալ էին 'ի հիւանդութեանց գաւառին. և ամենեցուն երևէին հազար ամք ժամանելն յեզր կոչկոծմանցն. 'Ի վախճանի Հնդիկք սպահովացուցին զնն, թէ 'ի գագաթանէ մերձակայ լերինն տեսանելոց էին զՈվկիանոսն, որ էր նպատակ փափագանաց նց. Յորժամ մեծամեծ տաժանմամբ սողեցան գրեթէ 'ի կատար սեպացեալ զառ'իվերին, Պալպօա հրամայեաց իւրոցն բարձրանալ. և կամեցաւ յառաջել ինքն միայն 'ի գագաթն առ 'ի լինել առաջին 'ի վայելել 'ի տեսարան իմն այնպէս ընդ երկար ցանկացեալ 'ի նմանէ. Իսկոյն իբրև հայեցուածոյ իւրում ընծայեցաւ ենթակայ անբաւ հարաւային ծովն, ծունր եդ և ամբարձեալ զձեռս յերկինս, գոհացաւ զԱյ, որ առաջնորդեալ էր նմա առ գիւտ իմն այնպէս օգտակար հայրենեաց իւրոց, և այնպէս պատուաւոր վն անձին իւրոյ. Ընկերօք իւր նշմարելով զպեղումն հրճուանաց նր, խուժեցին 'ի շտապ առ 'ի լինել մասնակից հիացման, ցնծութե և գոհութե նր. Շարունակեցին զընթացս իւրեանց մինչև ցծովափն մեծաւ ուրախութբ, մինչ Պալպօա յառաջելով, և մտանելով 'ի մէջ ալեացն ասպարաւ իւրով և սուսերաւ, էառ զստացումն այնր Ովկիանոսի յանուն արքային տն իւրոյ. և երդուաւ պաշտպանել զնա այնորքիւք զինուք ընդդէմ ամ թշնամեաց իւրոց. Այն մասն մեծի խաղաղական կամ հարաւային Ովկիանոսի պահէ մինչև ցայժմ զանունս ծոց սրբյն Միքայէլի եդեալ 'ի նմանէ. և է կայացեալ ընդ արևելս Փանամայի. 'Ի բազմաց յայնց փոքրիկ նահապետաց, որք կառավարէին յանձուկս ընթերակայս այնմ ծոցոյ, էհան զդարմանս և զոսկի բռնութբ զինուց. Այլք առաքեցին նմա զայնս ինքնայօժար կամօք. Ընդ

այսոսիկ հաճոյագոյն ընծայս ումանք 'ի քաղաքեայց յարեցին զմեծ ինչ քանակութիւն մարգարտաց. և նա իմացաւ 'ի նոցանէ բազում հաճութեամբ, թէ սատափք առատ էին 'ի ծովուն. զոր նա ճշդրտիւ գտեալ էր: 1513

Ընդ ստացման այսպիսի մեծագին տարափուց, որք Ինդոա-
պլտոյացան 'ի հեղացուցանել և 'ի խրախուսել զն պտե-
զհետեւողս իւր, ընկալաւ զծանօթութիւն, որք հաւ- ղէկոսթէ
աստեցին զանյագ նա յոյս ապագայ և ընդարձա- հաստա-
կագոյն բարութեանց հանելեաց 'ի շահատակութէն. տեղւոյն
Լուսանդակ ազգն առ ափամբ հարաւային ծովուն Էդէն
ընթացաւ առ 'ի յայտնել նմա, թէ էր անդէն Եւէդէ.
հզօր և ամենահարուստ թագաւորութիւն ինչ երևե-
լի իմն տարակացուի ընդ արևելս կոյս. ուր ընա-
կիչք ընտելացուցեալ էին զչնչաւորս առ 'ի տանել զբեռինս նց. Այլ առ 'ի տալ զնմանէ զգաղափար ինչ, գծագրեցին 'ի վն աւազոյ զձև անասնոյն գտելոյ յետոյ 'ի փէրու. որում փէրուցիք ուսուցեալ էին առնել զծառայութիւնս ստորագրեալս յայնմ ազգէ. Այլ քանզի այս շնչաւոր 'ի կերպարանս իւր նմանի կարի շատ ուղտու բեռնակրի անասնոյ համարեցելոյ մասնաւոր Ասիոյ, այս պարագայութիւն յարակցեալ ընդ գիւտի մարգարտաց, այլ իմն ըերք այն ինչ ծանուցեալ այնր երկրի, եկն 'ի հաստատել զԱլպանիացիս 'ի մոլորական տեսականութեան իւրեանց նկատմամբ մերձաւորութեան Նորոյ աշխարհին յարևելեան Հնդկաստան:

Բայց որչափ և տեղեկութիւն, զոր ընկալաւ 'ի ծո- Պորտու-
վեզերեայ ազգէն, ոչ և վարկածք իւր և յոյսք անդէն
առնէին զնա չափազանցօրէն անհամբեր երթալոյ առ 'ի
յայս անծանօթ երկիր, խոհեմութիւն իւր նահան- տեղ
ջեաց զնա 'ի փորձելոյ մխիլ յայն սակաւաձեռն տանել.
մարդկամբ պարտասեցելով յաշխատութէ և տկաբացելով 'ի տառապանաց:

(2) Պալպօա 'ի գրի իւրում առ թագաւորն նշմարէ, թէ 'ի հարիւր իննսուն արանցն, զոր եառ ը

իր , ոչ եղեն երբէք աւելի քան զութսունս յարմարք ծառայելոյ 'ի մի և 'ի նոյն ժամանակի . Այնչափ նեղեալ էին նոքա 'ի սովու , յաշխատութե՛ և 'ի հիւանդութենց . Հերրերա և Պետրոս մարտիրոս պատմիչք : ||

Նացորոշեաց տանել յետս զհետևօղս իւր 'ի հարգունութեի իւրեանց 'ի սանթա Մարիա 'ի Տարիէն. և դառնալ անդրէն 'ի բարւոք յեղանակի զօրութ իմն , որ իցէ առաւել հաւասարեալ այնպիսի տարժանելի ձեռնարկութե . Առ 'ի ստանալ զստուգագոյն իմն ծանօթութի յամաքաշեզրոյն , յետս չուեաց ընդ այլ իմն ճանապարհ ոչ նուազ դժուարին և վտանգաւոր քան զայն , զոր կալեալ էր 'ի սկզբան. Բայց մարդոց փքացելոց բարեյաջողութ , և խրախուսելոց ակնկալութե մեծագունից՝ ոչ ինչ էր անյաղթելի . Պալպօա դարձաւ 'ի Սանթա Մարիա , ուստի հեռացեալ էր ընդ ամիս չորս առաւել փառօք և հարստութե քան զոր Սպանիացիք ստացեալ էին յիմէք 'ի շահատակութենց իւրեանց առ. նոր աշխարհն . Ոչ ոք 'ի պաշտօնատարացն Պալպօայ հանդիսացաւ յայսմ ծառայութե լաւագոյն
1514 քան զՖրանչիսկոս Փիծծարրօս , կամ սատարեաց աւելի քաջարութ և եռանդեան 'ի բանալն զհաղորդութի իմն ընդ այնց գաւառաց . ուր նա յետոյ եղև այնպէս երևելի :

Փիծարրօ ըներ խորհէ նուաճել Պերուան :

Առաջին մտածութիւն Պալպօայ եղև առաքելն 'ի Սպանիա զպատմութի իմն մեծի գիւտին , զոր արարեալ էր . և խնդրել թիկունս հազար արանց 'ի ձեռնամուխ լինել 'ի տիրապետութի այնր երկրին . զորմէ լուեալ էր ծանօթութիս այնպէս հրապուրականս . Լուր գիւտի նորոյ աշխարհի հազի՛ պատճառեաց 'ի ժամանակին Քօլոմպոսի զմեծագոյն իմն ուրախութի քան զայս , որ հասուցանէր 'ի վախճան զանցս դանեալս առ հարաւային մեծ Ովկիանոս . Հաղորդութիւնն ընդ արևելեան Հնդկաստանի ճանապարհաւ իմն յարևմուտս կոյս

գծին

գծին սահմանաւորութեան, զոր տուեալ էր ձգել Պապն, երեւէր արդ իսկ ստոյգ. Նորա հարստութիւնք, որք ժողովէին 'ի փորթուկալէա 'ի հարգունութեանց իւրոց, եւ 'ի տիրապետութեանց 'ի կողմանսն յայնոսիկ, գրգռէին զմախանս, եւ զարթուցանէին զնախանձ այլոց տէրութեանց. Ջանայր Ֆերտինանտոս ժամանել վաղվաղակի եւ ինքն 'ի մասնակցութիւն այնր շահաւէտ տուրեւառութեան, եւ մոլեգնութիւն իւր ստանալոյ զայն՝ ստիպեաց զնա առնել զջանս ինչ մեծագոյն եւս քան զայն, զոր խնդրէր Պապաս. Բայց 'ի սոյն յոյս ջան նախանձաւոր կիրք իւր, որպէս եւ ճակատագրական հակակրութիւն, զոր Ֆոնսէքա եպիսկոպոսն յայնմ ժամանակի Պուրկօսայ ունէր վասն այնր մարդոյ վաստակաւորի երեւելւոյ 'ի Նոր աշխարհին, յայտնեցան վերստին. Թէպէտ եւ արդի էին ծառայութիւնք Պալպօայ, որք յայտ առնէին զնա իբր անձն յարմարագոյն առ 'ի բարեպէս կատարել զիրակունին, զոր սկսեալ էր, սակայն Ֆերտինանտոս եղեւ այնպէս սակաւ երախտագէտ, զի ոչինչ փոյթ եղեւ զնմանէ. եւ կարգեաց զՓետրարիաս Տաւիլա բդեաշխ Տարիէնու. Ետ նմա զհրամանատարութիւն վեշտասան ստուար նաւուց, եւ հազար երկերիւր զօրականաց. Այսքան հանդերձեցան հրապարակական ծախուք առատաձեռնութիւն իմն, զոր Ֆերտինանտոս չէր ցուցեալ երբէք 'ի նախնագոյն իմիք սպառազինութեան կարգեցելոյ վասն Նորոյ աշխարհին. եւ այնպիսի եղեւ եռանդն սեպուհեացն Սպանիացւոց առ 'ի զհետ երթալ առաջնորդի միում, որ ածէր զնոսա յերկիր մի, ուր որպէս պատմէր համբաւն, ոչ ունէին նոքա առնել զայլ ինչ, բայց եթէ ընկենուլ զուռկանս իւրեանց 'ի ծով, եւ քարշել անտի 'ի վեր զոսկի, մինչզի հազար վեցհարիւր անձինք նաւեցին ընդ նաւահանգիսին. եւ եթէ ոչ էին արգելեալք, մեծագոյն եւս թիւ լինէր գրաւեալ առ ծառայութիւնն. Փետրարիաս եհաս 'ի

ճորշն Տարիէնու առանց ինչ նշանաւոր պատահարի, և նոյն ժամայն արձակեաց զոմանս ՚ի գլխաւոր պաշտօնատարաց իւրոց ՚ի ծովեզրն ծանուցանել Պալպօայ զհասանել իւր, և զյանձնարարութիւն թագաւորին լինելոյ բդեաշխ նժդեհութեան. Այդքան հիացմամբ իւրեանց գտին զՊալպօա, զորոյ զմեծամեծ գործողութեանց լուեալ էին զայնչափ բանս. և զորոյ ճոխութեան կերպաւորեալ էին զայնպիսի բարձր գաղափարս, զգեցեալ զանձապանակ մի կանեփեայ հանդերձ հողաթափօք արարեալ ՚ի չուանաց, և պարապեալ ՚ի միասին ընդ հնգկաց ՚ի ծածկել եղեգամբք զհիւղ իւր. Նա և յայսմ պարզ կահու, որ ոչ համեմատիւր ակնկալութեան նոր հիւրից իւրոց, Պալպօա ընկալաւ զնս արժանաւորութեամբ. Համբաւ գտմանց իւրոց քարշեալ էր զայնքան բաղդորդս ՚ի կղզեացն, մինչ զի կարող էր նա յայնժամ թուել ՚ի գունդս իւր զչորեքհարիւր քսան արս. և եթէ եդեալ էր ՚ի գլուխ այնց համարձակ բազում ժամանակեայ զինուորաց, լեալ էր մարմինն այն աւելի քան զբաւականն առ ՚ի ընդդէմ կալ զօրացն, որոց առաջնորդէր Փետրարիաս. Տրանչէին զօրականք իւր մեծապէս ընդդէմ անիրաւութեան Ֆերտինանտոսի ՚ի մերժելն զհրամանատար իւրեանց. և մորմոքէին, զի օտարք
1514 պարտէին յայնժամ հաւաքել զպտուղս աշխատանաց իւրեանց և յաջողուածոց; բայց Պալպօա ենթարկեաց զինքն լռելեայն հնազանդութեամբ կամաց արքային իւրոյ. և ժողովեաց զՓետրարիաս հպատակութեամբ վայելչականաւ աստիճանի նորա:

Տարաբաղդութիւն ՚ի Դեզնէ և Պալպոյ. Հանդերձ այս ամ չափաւորութեամբ Պալպօայ, Փետրարիաս, որ պարտական էր նմա վասն խաղաղական ստացման բդեշխութեան իւրոյ, հրամայեաց, զի առնիցի դատաստանական քննութիւն զգնացից նորա, յորժամ էր նա ընդ հրամանօքն Նիքուէսսա և Էնցիսոսի, և զի դնիցին ՚ի վերայ նորա երևելի իմն տուգանք վասն անկանոնաւորութեանց, որոց երևէր յանցա-

ցաւոր. Անհացուցումն ենթադրեալ լինելոյ այսպիսի քննութեան և պատժոյ 'ի տեղւոջ միում, ուր այնպէս նորոգ կալեալ էր նա զառաջին դիրս, կարեւէր լոցեաց զՊալպօա. Փետրարիաս ոչ կարէր թաքուցանել զնախանձաւորութի իւր առ գեր 'ի վերոյ վաստակ նր. այնպէս զի զայրացումն առաջնոյն և յաջողանք միւսոյն եռուն տեղի տարաձայնութեանց ծայրագոյն վնասակարաց նժդեհութեան. որում ապառնացեալ էր ևս չարագոյն թշուառութի. Փետրարիաս հասեալ էր 'ի Տարիէն յառաւել վտանգաւոր ժամանակի տարւոյն շուրջ զկիսով անձրեւուտ եղանակին յայնմ մասին այրեցած գօտւոյն, ուր ամպք հոսեն զայնպիսի հեղեղս, որք ոչ տեսանին երբեք յառաւել բարեխառն նահանգս. Կայր գիւղն սանթա Մարիայի 'ի հարուստ տափարակի միում, բայց շրջապատելոյ 'ի ճախնոց և յանտառաց. Խառնուած Եւրոպացւոց անընդունակ էր տոկալոյ ժանտաբեր ազդեցութե այնր կայաւորութեան 'ի ներքոյ երկնի միոյ բնականաբար վատառողջի, և մասնաւորաբար 'ի մէջ չարագունին յեղանակաց. Գժնեայ իմն սխտ ապականիչ յափշտակեաց զբազումս 'ի զօրականացն, որք ընկերեցին Փետրարիասայ. Վերջին նուաղութի դարմանոց աճեցուցանէր զաղէտսն. և առնէր անկարելի զգտանելն զողջացուցիչ յատուկս վն ախտացելոց, և զկարեւոր կազդուրումն վն առողջաց. 'Ի միջոցի միոյ ամսոյ գրեթէ վեցհարիւր անձինք կորեան յառաւել տարօրէն թշուառութեն. լքումն և յուսահատութիւն ծաւալեցաւ ընդ նժդեհութիւն. բազումք 'ի գլխաւորաց խնդրեցին զարձակումն իւրեանց. և եղեն շատացեալք թողուլ 'ի բաց զյոյս իւրեանց հարստանալոյ, միայն թէ փախիցեն յայն սատակիչ երկրէ. Փետրարիաս հոգացաւ դեգերեցուցանել զմնացեալսն, զի մի ունիցին պարապ խորհելոյ 'ի վր թշուառութեն իւրեանց գտանելով նց զզբաղումն իմն.

Առաքեաց զանազան հատուածս 'ի ներքս գաւառին առնել զընտրութիւն ոսկւոյ 'ի մէջ ազգայնոցն. և որոնել զհանքս, յորս էր գոյացեալ. Այս յափշտակօղ բաղդորդք առաւել ձգտեալք առ ներկայ շահն, քանթէ առ հանդամանս դիւրացուցանելոյ զապագայ յառաջադիմութիւն իւրեանց, աւար հարին անխտիր յոր վայր և խաղացին. Ոչ նկատելով զդաշինսն, զոր Պալյօս արարեալ էր ընդ բազմաց 'ի Կազիքեայց, կողոպտէին զնն յամիրաց, որ ունէր զարժողութի. և սպառնային եւ հպատակաց նց ժպրհութի և խստութի. Պատճառաւ հարկապահանջութեց նց, զոր փէտրարիաս կամ վն պակասութն իշխանութն, կամ բարի սրտի, ոչ կամեցաւ բնաւ թեթևացուցանել. բովանդակ այն մեծ տարածութին 'ի ծոցոյն Դարիէնու ցլիճն Նիքարակուայ մնաց անշէն. և Իսպանիացիք անխորհրդաբար զրկեցան 'ի շահեկանութեցն, զոր հանելոց էին 'ի բարեկամութենէ ազգայնոցն 'ի տարածանելն զտիրապետութի իւրեանց գծոյն հարաւային. Պալյօս, որ տեսանէր տհաճութի, թէ այն վատախորհուրդ ընթացք յամեցուցանէր զկատարումն բերկրալի գաղափարին իւրոյ, առաքեաց 'ի Սպանիա զհզօր յանդիմանութիւ ընդդէմ անխոհեմ կառավարութեն փէտրարիասայ. որ գնացեալ էր 'ի կործանել զծաղկեալ իմն և զերջանիկ մարդաբնակութին. փէտրարիաս 'ի միւս կողմանէ ամբաստանէր զնա խարեալ զարքայն մեծացուցանելովն զգործս իւր, և վերառաքելովն

1514 զսուտ իմն բացայայտութի հարստութեն և արժողութեն երկրին այնորիկ:

Նախանձ յառաջխաղութեն ընդդէմ Պալյօսյ. Ֆէրտինանտոս ծանեաւ 'ի վախճանի զվիճակ իւր յապաստիճանելն զառաւել գործօնեայ և զառաւել հմուտ զօրագլուխն, զոր ունէր նա 'ի Նոր աշխարհին. և անոճամբ փոխարինի կարգեաց զնա ատէյանթատ, կամ փոխանակ բդեշխի գաւառացն 'ի վը հարաւային ծովուն հանդերձ մեծամեծ ար-

տու-

տուեալք և աւագութ․ Միանգամայն և պատուիրեաց Փետրարիայ նպաստ լինել Պալպօայ յամ ձեռնարկութիս իւր, և խորհրդակցել ընդ նմա 'ի մջ իւրաքանչիւր չափու, զոր նոյն ինքն առնլոց էր․ Բայց պատճառեն 'ի մէջ նց զայնպիսի յեղակարծ 1515
իմն անցս 'ի հնացեալ թշնամութե 'ի բոլորական վստահութի 'ի վեր էր քան զկար Փէրտինանտոսի․ Փետրարիաս ոչ դադարեաց 'ի վարելոյ արհամարհանօք ը նախանձաւորին իւրում․ և նուաղելով դրամն Պալպօայ յաղագս վճարման տուգանացն իւրոց, և այլոց բռնազբօսութեանցն Փետրարիայ, ոչ կարէր նա առնել այլազգ զնախապատրաստութիս իւր առ 'ի առնուլ զստացումն նորոյ իշխանութե իւրոյ․ Ան միջնորդութե և բարի ջանացն եպիսկոպոսին Տարիենու երկոքեան հաշտեցան 'ի միասին․ և առ 'ի ապահովացուցանել հաստատագոյնս զմիաբանութի նց՝ Փետրարիաս հաւանեցաւ տալ զդուստր իւր 'ի կնութիւն
Պալպօայ․ Առաջին արդիւնք նորոյ միաբանութեն 1516
եղև այն, զի Պալպօա ընկալաւ հրաման առնելոյ զանազան փոքրիկ արշաւանս ընդ գաւառն, որում գիտաց առաջնորդել այնպիսի խոհականութե, զի աճեցոյց զհամարումն, զոր վաղուց ստացեալ էր․ Բազում բաղդորդք ընթացան առ նա․ և հաւանութե և սատարութե Փետրարիայ սկսաւ դնել 'ի կարգի զշահատակութի իւր ընդ ծովն հարաւային․ Առ 'ի բարւոք կատարել զայն՝ հարկաւոր էր շինել նաւս ընդունակս պատսպարելոյ զգունդս իւր մինչև 'ի գաւառն, զորս 'ի մտի եդեալ էր տիրապետել․ Գեր 'ի վերոյ եղեալ բազմաց խոչընդակաց և հանդուրժեալ պէսպէս խստութեց, որք էին թոշակ տիրապետողացն Ամերիկոյ, ետես նա 'ի վախճանի կերտեալս զչորս փոքրիկ պրիկանթինս․ Յայսոսիկ հանդերձ երեքհարիւր ընտիր արամբք՝ վերնագոյն զօրութե քան զայն, որով
Փիծարրոս յանձն էառ զնի այնր շահատակութեն, 1517

եր 'ի պատրաստի բառնալ զխարիսխ դէպ փերուայ, յորժամ ընկալաւ զպատգամաւոր մի անակնկալ 'ի փետրարիայ. Այս քանզի հաշտութի նր ընդ Պալպօայ ոչ եր լեալ երբեք անկեղծ և 'ի սրտէ, յառաջադիմութին, զոր սա արարեալ եր, կենդանացոյց վերստին զհին թշնամութի նր, և կրկնապատկեաց զատելութին. Երկնչէր նա 'ի յաջողուէ և 'ի յամբարձմանէ առն միոյ, յոր այնպէս դժնէաբար անիրաւեալ էր. և կասկածէր, թէ բարի ելքն խրախուսեսցէ զնա 'ի ձկտիլ առ ազատութի յիրաւաբանութէ իւրմէ. Ատելութին, կասկածն և նախանձոտութին ներգործեցին այնքան բռնութբ 'ի վր հոգւոյ նր, մինչզի առ 'ի թափել զքինախնդրութի իւր, ոչ խղճեաց ապականել զձեռնարկութի իմն մեծակշիռ վս հայրենեաց իւրոց. Ընդ պատրուակաւ, որք էին բնաւ սուտք, բայց առ երևոյթս հաւանականք, գրեաց առ Պալպօա, աղաչելով զնա յապաղել զճանապարհորդութի իւր առ սուղ ինչ միջոց, և բերել յԱքլա, ուղղի կարիցէ խօսել ընդ նմա. Պալպօա յայտնի վստահութբ առն միոյ, որ ոչ ունիցի զխիղճ իրիք յանցանաց, հնազանդեցաւ վաղվաղակի կոչմանն. բայց հազիւ թէ եդեալ էր զոտն յայն տեղին, կալանաւորեցաւ հրամանաւ փետրարիայ. որոյ անհամբերութի վրէժխնդրութեն ոչ եթող զփորձանաւորն զայն հաշիլ ընդ երկայն ժամանակ 'ի բանտի. Անընդմիջաբար կարգեցան դատաւորք, ուղղի արասցեն նմա զդատաստանական քննութին. Եդաւ 'ի վր նր ամբաստանութ իմն անհաւատարմութե առ թագաւորն, և խորհեալ գիտաւորութե վտարանջելոյ ընդդէմ բդեշխին. Հատաւ դատավճիռ մահու. և թէպէտ դատաւորքն, որք արտասանեցին զայն, 'ի կողմն իւրեանց ունելով զհամօրէն ժողովուրդն, միջնորդեցին պնդագոյնս վս թողութե նր, փետրարիաս մնաց անամոքելի և հիացմամբ և սրտցաւութբ

իւր-

իւրեանց Սպանիացիք տեսին գլխատեալ հրապա-
րակաւ զանձն ոք, զոր ամենեքեան համարէին ա-
ռաւել ընդունակ քան զայլ ո՛ և իցէ երբէք հրա-
մանատար յԱմերիկա՝ յղանալոյ և կատարելոյ զմե-
ծամեծ գաղափարս․ Յաղագս մահուան նր, ա-
ռաքումն յարդարեալ 'ի նմանէ նանրացաւ․ Փէտ-
րարիաս հանդերձ բռնութբն և անիրաւութբ գնա-
ցից իւրոց ոչ միայն եղև զերծ 'ի պատուհասէ վճ
ազդու պաշտպանութեն եպիսկոպոսին Պուրկոսայ և
այլոց արքունականացն, այլև հանապազորդեաց 'ի
սովորական բռնութեն իւրում․ Յետ սակաւ միոյ
ընկալաւ հրաման 'ի բաց շարժելոյ զնժդեհութին
յանառողջ կայանէ իւրմէ և փոխաբերելոյ զայն 'ի
Սանթա Մարիա 'ի Փանամա 'ի հակադրեալ նիստ
ցամաքալեզուին․ և թէպէտ ոչ շատ շահեալ եղև
ըստ առողջութեն մասին 'ի տեղափոխութեն անդ․
սակայն հեշտին կայաւորութի այսր նորոյ հար-
գունութեն հանդանակեաց մեծապէս 'ի դիւրացու-
ցանել զյաջորդական տիրապետութիս Սպանիաց-
ւոց 'ի համատարած գաւառն առ հարաւային Ովկ-
կիանոսին ։ 1515
Յայսպիսի վեճակի իրաց 'ի Տարիէն, զորոց ոչ էր Նոր
պարտ կրճատել զընթացս պատմութեն, պատա- Երկրա-
հեցան և այլ իրք մեծավարկք, և բնաւք վերա- գնացք․
բերականք առ երկրագտութի, առ տիրապետութի
և առ կառավարութի մնացեալ գաւառացն 'ի նոր
աշխարհին․ Փերտինանտոս էր այնպէս յօժարեալ
'ի բանալ զհաղորդութիւն իմն ընդ Մօլուքքայից․
կամ կղզեացն համեմանց ընդ արևմուտս, մինչև
յամին հազար հինգհարիւր հնգետասաներորդի
հանդերձեաց զերկուս նաւս ծախուք իւրովք առ
'ի մխիլ յայսպիսի ճանապարհ․ և ետ զհրամա-
նատարութին տն Յօհաննու Տիազայ տէսօլիս․ որ
էր համարեալ ընդունակագոյն նաւորդ Սպանիոյ․
Յառաջ խաղաց սա առ ծովեզերօքն հարաւային
Ամերիկոյ․ և յառաջնումն յանուարի 'ի հազար
հինգ-

հինգհարիւր վեշտասաներորդի եմուտ 'ի գետ մի, զոր կոչեաց Ռ՛իաննէիրոս. ուր առնի այժմիկ երեւելի իմն շահավաճառութի. Անտի բերեալ յընդարձակ իմն խորշ, զոր նա ենթադրէր լինել անցս առ ներքուս ինչ, որ հաղորդէր ընդ հնդկային Ովկիանոսի. բայց և նա յառաջնելով եգիտ, զի էր բերան վտակին փլաթայ՝ միոյ 'ի մեծամեծ գետոցն, յորոց ոռոգեալ է հարաւային շարունակն
1517 Ամերիկոյ. 'Ի ջանալն ելանել 'ի նաւէ յայն գաւառ, Տէսօլիս և յոգունք այլք յարանց իւրոց սատակեցան յաղգայնոցն. որք հանդէպ նաւուցն յօշատեցին զմարմինս նց, խորովեցին և մազգայլեցին. Արտաքսեալք ի կորստեան հրամանատարի իւրեանց, և զարհուրեալք յայնպիսի սոսկալի տեսարանէ Սպանիացիք, որք կենդանի մնացեալ էին, արարին զառագաստ ընդ Եւրոպիա առանց ձկտելոյ առ անդրագոյն գործողութիւն. Թէպէտ այս Թեակոխութիւն 'ի դերև ել, այլ ոչ եղև առանց ինչ օգտի. Եւ նոյնն դարձուցանել զուշադրութիւն մտավարժ արանց առ այս ընթացս նաւարկութն. և նախապատրաստեաց զճանապարհ առ երջանկագոյն իմն նաւարկութի. յորում յետ սակաւ ամաց լրացաւ մեծ գաղափարն. զոր Փէրտինանտոս ունէր 'ի մտի:

Մէճաջ
նժդե-
հաւըն
Նաւանիս
ըոյէ.

Արշաւի և Սպանիացիք այսպէս եռանդիմ դիմագրաւեալ էին յերկրագտութիս իւրեանց և 'ի բաղմամարդութիս յԱմերիկա, այսու միջէ նկատելին զՍպանիոյա իբր նախապետական հատուած իւրեանց և աթոռ կառավարութէ. Ոչ պակասէր Դիեկոսի Քօլոմպոսի, ոչ յօժարութի և ոչ ընդունակութի շահեցուցանելոյ և առնելոյ շատացեալ զանդամս այսր նժդեհութեն, որք կային աւելի անընդմիջարար ընդ իրաւարանութե նր. Բայց նա յամ գործողութիս իւր խոչընդոտեալ էր 'ի թերեհաւատ քաղաքականութե Փէրտինանտոսի. որ յամ դիպուածս, և ընդ առաւել մնոտի պատրուա-

կոք նուաղեցուցանէր զարտօնութիւնս նր, և քաջալերէր զգանձապետն, զդատաւորս և զայլ ստորակարգեալ սպասաւորս առ 'ի հակառակիլ խորհրդոց նր, և վրիժել 'ի վր աւագուն նր. Նուաւել մեծավայլ արտօնութիւն, զոր ունէր ըղեաշխնէր բաշխելոյ զՀնդիկս 'ի մէջ Սպանիացւոց հարգունացելոց 'ի կղզւոջն. Խիստ ծառայութիւն այնց թշուառացեալ մարդոց էր սակաւիկ ինչ մեղմացուցեալ 'ի կանոնաւորմանցն կանխաւ արարելոց 'ի շնորհուկս նց. և վն այսորիկ իշխանութիւն բաշխելոյ ըստ հաճոյից իւրոց զգործիս այնպէս կարևորս առ աշխատութիւն, ապահովացուցանէր ըղեաշխին զմեծ ազդեցութի իմն 'ի նժդեհութիւն. Վերտինանտոս առ 'ի կողոպտել զնա յայնմանէ, հաստեաց զնոր իմն պաշտօն հանդերձ կարողութ. բաշխելոյ զՀնդիկս. և շնորհեաց զայն Ռոտրիկոսի Ալպուքուէրքուեայ ազգականի `Զափաթայ մտերիմ պաշտօնատարի իւրոյ. Անհացուցեալ տէրն Դիեկոս յանիրաւութէ և յանպատեհութէ յափշտակութեն իրաւունց իւրոց յայնքան էական յօգուածի իմիք, ոչ ևս կարէր մնալ 'ի տեղւոջ միում, ուր կարողութի իւր և ազդողութիւն էին գրեթէ չքացեալք. Գնաց 'ի Սպանիա ընդունայն յուսով հանելոյ զվնասն. Ալպուքուէրքուէ եմուտ 'ի տեղի նր յափշտակողութ. կարօտ բաղդորդի միոյ անհամբերի կուտելոյ զհարստութիս. Սկսաւ առնել զկատարեալ համար զՀնդկաց 'ի կղզւոջն. և եգիտ, զի 'ի վաթսուն հազարաց, որք յամին հազար հինգհարիւր ութերորդի յաւելեալ էին 'ի խոշտանգանաց իւրեանց, էին մնացեալք 'ի չորեքտասան հազարս. 'Ի սոցանէ արար զայնքան բաժանմունս, կամ վիճակս. և ետ զնն նոցին, որք կամէին գնել զնն բարձրագոյն գնով. Առ այսպիսի ըստ հաճոյից բաշխման, բազումք յազգայնոցն վտարեցան ի սկզբնական բնակութենց իւրեանց. բազումք բարձան 'ի նախկին տեարց իւրեանց

եանց

եանց. և ամենեքեան արկան ընդ ծանրագոյն բեռամբք և 'ի ներքոյ առաւել անտանելի աշխատութեան առ 'ի վճարել նոր տուրս իւրեանց. Այս յաւելուած աղէտից լրացոյց զթշուառութիւն, և փութացոյց զբոլորական ջնջումն այնր անմեղ և ամենեքին տարաբախտ զարմի մարդկան:

Ապստա- 'Ի բռնութենէ այսր փնացից և 'ի յաղէտալի գոր-
տամբութ- ծոցն, որք այնմ ընկերեցին, ոչ միայն ծնաւ դառ-
իւնանն նութիւն 'ի մէջ նց, որք համարէին զանձինս կարի
Նիւա- իմն ծանրաբեռնեալս, այլ կակղացան ևս սիրտք
Սամբ այլոց, որք ունէին զզգայութիւն ինչ մարդկութեն.
Հարման 'Ի ժամանակէ անտի, յորում եկեղեցականք ա-
ընդ ռաքեալ էին յԱմերիկա 'ի հրահանգել և 'ի դար-
Անգ ձուցանել զազգայինս, զգացեալ էին նոքա, թէ
ջաց. խստութիւն, որով վարէին Սպանիացիք ընդ նս, առնէր բնաւին անպիտանս զպաշտաւորութիւն իւրեանց. Պարոզիչքն համեմատ քաղցր հոգւոյ այնր կրօնի, զոր պարապեալ էին 'ի հրատարակել՝ առաքին զյանկաւոր պարսաւանս ընդդէմ սկզբանց
1517 հայրենակցաց իւրեանց նկատմամբ Ամերիկացւոց. և դատապարտեցին զբաժանմունսն, որովք բաշխեալ էին նոքա իբր գերիս տիրապետողաց իւրեանց, իբրև ոչինչ ընդհատ ներհակս բնական արդարութեան և պատուիրանաց քրիստոնէութեան, քան թէ ողջամիտ քաղաքականութեան. Դոմինիկեանք, որոց սկզբնարար յանձնեալ էր կրթութիւն Ամերիկացւոց, էին առաւել սաստիկք 'ի քարոզել ընդդէմ բաժանմանցս. Յամին հազար հնգհարիւրերորդի մետասաներորդի, Անթէսին՝ մի 'ի գերազանցագոյն քարոզչացն յարձակեցաւ ընդդէմ այսր վարման յաւագ եկեղեցւոջն 'ի Սէն Դոմինիկոս ամ ուժգնութբ հրապարակական ճառամխօսութ. Տէրն Դիեկոս Քոլոմպոս, և նախապետական ոստիկանք նժդեհութեան, և բովանդակ աշխարհականք, որք լեալ էին ունկնդիրք նր, դանգատեցին զկրօնաւորէն առ վերնագոյնս իւր. Ամէ

սո-

աղքա փոխանակ դատապարտելոյ զնա, գովեցին զվարդապետութիւն նր իբր բարեպաշտական և հաւասարապէս կարեւոր. Ֆրանչիսկեանք շարժեալք 'ի հոգւոյ հակառակութեան և նախանձաւորութեան, որ կայ 'ի մէջ երկուց կարգաց, ցուցին զինքեանս փոքր ինչ հակեալս 'ի կուսակցութիւն աշխարհականաց և 'ի ջատագովութիւն բաշխմանց. Այլ քան զի ոչ կարէին հաստատել վայելչապէս զօձ իմն բռնաւորութեան այնպէս դիմամարտ հոգւոյ կրօնին, հնարեցին պատրուակել զայն, զոր ոչ յաջողէր նց արդարացուցանել. և յառաջ բերին 'ի ջատագովութիւն գնացից հայրենակցաց իւրեանց, թէ անկարելի էր յաջողել հատուածոյն, եթէ Սպանիացիք ոչ ունէին զայնպիսի իմն տրութիւն 'ի վր ազգայնոցն առ 'ի բռնադատել զնոսա յաշխատութիւն :

Դոմինիկեանք առանց հայելոյ յայսոսիկ քաղաքա- Ներհակ
կանութիւս, և 'ի շահասէր նկատմունս՝ ոչ կամէին յօժ
մեղմել և ոչ իսկ ը̄ դուզնաքեայ մասին զխստութի ճճէտք
կարծեաց իւրեանց. և զանայլին զարձակումն և 'ի ճճէրոյ
զխորհուրդս այնց հայրենակցաց իւրեանց, որք տայր
ունէին զխնդիրս 'ի գերութեան. Երկոքին կողմանք յօրինա-
ուղղեցան յարքունիսն վր որոշման. Արքայն առ ժոյ.
ւագացոյց զոստիկան մի առանձին խորհրդեան ի- 1517
րոյ՝ ընթերակայութբ ոմանց յառաւել հռչակաւոր օրինականաց և ածծաբանիցն Սպանիոյ ունկն դնել պատուիրակացն առաքելոց 'ի Սպանիոլայէ առ 'ի ջատագովել զիւրաքանչիւր կարծիս իւրեանց. Յետ երկար իմն քննութեան՝ հայեցողական կէտն հակառակութեան որոշեցաւ 'ի շնորհս Դոմինիկեանց. և խնդիրք յայտ արարան ժողովուրդ իմն ազատ, և բաժանորդ ամ բնական իրաւանց մարդկան. բայց ոչինչ օգտելով այսմ վճռոյ, բաժանմունքն տակաւին տևէին 'ի վր նախկին ոճոյ իւրեանց. Տեսանէին Դոմինիկեանք, թէ տուեալ դատավճիռն յենոյր 'ի թղթին, յորոյ վր հիմնէին նոքա ըղ-

ձար-

կարծիս իւրեանց. և վն այսորիկ ոչ կային 'ի լռութեն. և ոչ ցուցանէին յաղթահարեալք. 'Ի վախճանի՝ առ 'ի հանդարտեցուցանել զխժդեհութին՝ ահաբեկեալ 'ի կշտամբանաց և 'ի նզովից նց, եւ որոշումն ինչ յառանձին խորհրդենէ արքային, որ յայտ առնէր, թէ արդարեալ զհասուն իմն խորհրդածութի պատճառացն, վն որոց թագաւորութին Կաստիլիոյ պահանջէր զստացմունս նորոյ աշխարհին, ծառայութին Հնդկաց երևէր օրինաւոր ըստ ածային օրինաց, (ակնարկելով թերևս զառաքելական կոնդակն) և ըստ մարդկային օրինաց. և թէ անկարելի էր դարձուցանել զՀնդիկս 'ի կռապաշտութէ. և վարժել զնս 'ի սկզբունս քրիստոնէական հաւատոյ, յորժամ ոչ լինէին ենթարկեալ ծառութեն Սպանիացւոց, և պարաւանդեալ 'ի կեալ 'ի ներքոյ վերադիտողութեն նց. և թէ ոչ ևս պարտ էր ունել զխիղճ ինչ նկատմամբ օրինաւորութեն բաժանմանցն, որովհետև Թագաւորն և ատեանն կամէին առնուլ զբեռն 'ի վր խղճի մտաց իւրեանց. և թէ վն այսորիկ Տոմինիկեանք և միաբանք այլոց կարգաց կարէին 'ի բաց կալ առ յապայն յայնց դարովանաց, զորս չափազանցութեն սիրալիր նախանձայուզութեն արտասանեալ էին ընդդէմ սովորութեն վաղնջ հաստատելոյ. և որպ զի դիտաւորութին զհետ երթալոյ վճռոյն իցէ լիով իմացեալ, Ֆէրտինանտոս արար զնոր բաժանմունս Հնդկաց 'ի մէջ արքունականաց իւրոց:

(3) Ֆոնսէքա եպիսկոպոսն Պալէնցայ նախապետական ուղղաւորիչն Ամերիկեան իրակունց զունին հարիւր Հնդիկս ունէր իւր սեպհական. Խոշակաւորն Լօփէ Գոնքիլօսեան իւր առաջին ընկերն յայնմ բաշխման զհազար հարիւր. և այլ սիրելիք ունէին 'ի նոցանէ զանազան քանակութ. Սոքա առաքեցին զվերադիտողս 'ի կղզիսն. և ետուն 'ի վարձու զայսոսիկ գերիս հողագործաց. Հէրրէրա:

Բայց

Բայց առ 'ի ոչ երևել բնաւին մոռացեալ զիրաւունս մարդկութեան, հրատարակեաց Ֆերդինանդոս զհրովարտակ մի, որով ջանայր նախահոգալ զառաւել չափաւորեալ վարումն Ինդկաց ընդ նովին լծով, ընդ որով դնէր զնս. և կանոնաւորեաց զորպիսութիւն աշխատութեան, զոր պարտաւորէին առնել. նախագրեաց զկերանակ ապրուստի և ագանելեաց նց. և կարգաւորեաց, թէ զիարդ կրթելոց էին զնս 'ի սկզբունս քրիստոնէութեան։

Սակայն Դոմինիկեանք, որք փորձառութբ իւրեանց ըստ զանցելոց իրաց դատէին զապագայից, ծանեան վաղվաղակի զանգործութիւն այսպիսի նախատեսչութեանց. և գուշակեցին, թէ ցորչափ շահաւոր էր անհատից վարիլն խստութբ ընդ Ինդկաց, ոչ ինչ հրապարական օրէնք առնէր զծառայութի նց կամ մեղմ, կամ հանդուրժելի. Նմին իրի խորհէին, թէ ընդունայն էր ծախելն զժամանակ իւրեանց և զջան 'ի նկրտել հաղորդել զխստմական ճշմարտութիս կրօնի մարդոց, որոց ոգիքն ընկճեալ էին, և կարողութիւն տկարացեալ 'ի ճնշմանէն. Ոմանք 'ի նոցանէ խնդրեցին 'ի վերնագունից իւրեանց զթոյլատրութի փոխաբերելոյ անդէն զառարկայ առաքման իւրեանց 'ի մէջ այնց ազգայնոց, որք ոչ էին տակաւին ապականեալք յօրինակէ Սպանիացւոց, կամ օտարացեալք 'ի քրիստոնէական հաւատոյ յաղագս այլանդակութեց նց. Նոքա, որք մնացին 'ի Սպանիոլա, ոչ դադարեցին 'ի բողոքելոյ վայելչական համառութբ ընդդէմ գերութեան Ինդկաց։

Ընդդիմութիւնք նց.

Բանական գործն Ալպուքուէրքուեայ նորոյ բաշխողի Ինդկաց վերստին զարթոյց զնախանձայուզութի Դոմինիկեանց ընդդէմ բաժանմանցն. և առ-բար ելանել 'ի դուրս զփաստարան մի վն տագնապեալ ազգին այնորիկ հանդերձեալ ամ քաջասրտութբ, քանքարօք և յաջողակութբ, որք պահանջէին առ 'ի ջատագովել զզգամ իմն այնպէս կոյ.

Բողբո- ջումն դէ Մո- [illegible]

յու-

յուսահատ. Սա եղև Բարթողոմէոս տէլաս Քա-զաս բնիկ Սիվիլլիոյ և մի յեկեղեցականացն առա-քելոց ընդ Քոլոմպոսի յերկրորդ ճանապարհոր-դութեն իւրում առ Սպանիոլա. Նա յարեցաւ վաղագոյն 'ի կարծիսն, որք նախազօրացեալ էին յեկեղեցական վիճակին նկատմամբ անբանաւորուե վերածելոյ զազգայինս առ ծառայութի. և առ 'ի ցուցանել զանկեղծութի խելամտութ իւրոյ եթող զամ Հնդիկս, որք անկեալ էին նմա վիճակաւ 'ի բաժանման բնակչացն 'ի մէջ տիրապետողաց իւր-եանց. յայտ առնելով թէ դատէր միշտ իւր ծանր յանցանք և տարադիպութի, եթէ 'ի գործ ածէր ևս և ընդ վայրկեան մի զայն ամբարիշտ ո̃րութ 'ի վ̃ր հաւատարից իւրոց. Յայնմ ժամանակէ հե-տէ եղև յայտնի պաշտպան Հնդկաց. և 'ի սակս եռանդնոտ միջնորդութն իւրոյ յօգուտ նց̃, ոչ և 'ի սակս ակնածութն, որ պարտ էր առ ընդունա-կութ և առ աստիճան իւր, շահեցաւ բազում ան-գամ գնել սանց չափազանցութեց հայրենակցաց իւրոց. Ոչ պակասեցաւ բարձրաձայն գոչել ընդ-դէմ գնացիցն Ալպուքուէրքուեայ. և թէպէտ տե-սանէր, թէ յամառեալ բերումն առ շահ անձին առնէր զնա խուլ առ ազդարարութիւն, ոչ բար-ձի թողլի արար զայն տառապեալ ժողովուրդն, զորոյ յանձնառեալ էր զպաշտպանութիւն. Անդէ չուեաց վաղվաղակի 'ի Սպանիա վստահագոյն յու-սով բանալոյ զաչս, և քաղցրացուցանելոյ զսիրտ Ֆերտինանտոսի արդահատական նկարագրութեամբ չարչարանաց նոր հպատակաց իւրոց, զորս ձկտէր յանդիման առնել տեսութ նորա:

Մարէ գրուատ նց̃ յար- ժանենան Սղա- նկայ:

Ընկալաւ փութանակի զմուտ առ արքայն, զոր ե-գիտ 'ի վիճակի խիք առողջութն, որ երթալով երթայր և նուաղէր. Բազում համարձակութե և ոչ փոքրագոյն ճարտարախօսութե 'ի դէմս էած նմա զամ մահաբեր արդիւնս բաժանմանցն 'ի նոր աշխարհին, համարելով նմա 'ի մեղս հրա-

մանաւորելն զայս անմարդի սովորութիւն, որ բե-
րեալ էր զթշուառութիւն և զաւերումն 'ի վն ան-
համար և անմեղ մարդկան, զորս յառաջատե-
սութիւն եղեալ էր 'ի ներքոյ պաշտպանութն նր.
Ֆերտինանտոս, որոյ հոգին տկարացեալ էր զոյգ
ընդ մարմնոյ պատճառաւ հիւանդութն իւրոյ, խռո-
վեցաւ մեծապէս առ այս բասիր անողորմութեան.
որ արտաքոյ այսպիսի լծակցութն թերևս ոչ էր
հոգացեալ ինչ. և մատոյց զունկն խորին իմն խռո-
վութք բանիցն Տէլաս քաղասայ, խոստանալով
խորհրդածել իսկապէս զհանգամանս դարմանելոյ
չարին, վն որոյ եկեալ էր նա 'ի գանգատել.
Բայց մահ իւր խափանեաց զկատարումն որոշման
իւրոյ. Քարոլոս Աւստրիոյ, որում հասանէին
բոլոր թագաւորութիւնք նր, նստէր յայնմ ժամա-
նակի 'ի հայրենի տէրութիս իւր 'ի ստորին գաւառսն.
Լասքազաս իւր սովորական վառմամբն պատրաս-
տէր զանձն երթալ փութանակի 'ի Ֆլանտրա առ
'ի նախապաշարել զունկն երիտասարդ Միապետին,
յորժամ կարդինալն Քսիմենէս, որ իբր թագա-
ւորող առնոյր յինքն զերասանակս կառավարութն
'ի Քասթիլիա, հրամայեաց նմա 'ի բաց կալ 'ի
ճանապարհորդութենէն. և մատոյց զանձն լսել զգան-
գատանս նր ինքնին : 1517
Ապա նա ինքն կշռեաց զնիւթն ուշադրութք հա- [illegible]
մեմատ ծանրութն իւրոյ. և քանզի ուժգին միտք
իւր բերկրիւր համարձակ և արտաքոյ կարգի ա-
ռաջարկութիւնք, յառեցաւ նոյնհետայն 'ի գաղա-
փար իմն, որ ապշեցոյց զգործակալսն սովորեալս
առ շրջահայեաց և կերպականութք լի մտածա-
րարուն 'ի գործ ածել 'ի Ֆերտինանտոսէ. Ա-
ռանց ուշադրելոյ բնաւ իրաւանց տեառն Դիէկոսի
Քօլոմպոսի, կամ կանոնաւորութեանց հաստատելոյ
'ի վախճանել թագաւորէն, որոշեաց յղել յԱ-
մերիկա զերիս անձինս իբր վերատեսուչս բովան-
դակ նժդեհութեան հանդերձ իշխանութք յետ

քննելոյ զնմ՝ պարտականն առ նոեղ տալ զվախճանական իմն վճիռ 'ի վՏ յօդուածոյ հակառակութեան. Իր իրողուի իմն արժանի հասուն խորհրդածութեան, նաև ըստ ինքեան փափուկ ընտրելն զմարդիկ, որք ունիցին զպահանջեալս վՏ այսպիսի ծանրակշիռ պաշտօնի. Աշխարհականք բնակացեալք յԱմերիկա, և որոց խորհրդակցեալ էր 'ի մատակարարութեան այնր բաժանման, տուեալ էին զկարծիս իւրեանց. այսինքն, թէ Սպանիացիք ոչ կարէին պահել զժառանգութիւն Նոր ստացուածոցն, եթէ ոչ լինէր նՑ շնորհեալ իրաւն 'ի վՏ Հնդկացն. և վՏ այսորիկ ծանեաւ, թէ ոչ էին համարելի անաչառ. և ջանացաւ փոխաբերել զբոլոր վստահութիւն 'ի յեկեղեցականսն. Դոմինիկեանք և Ֆրանչիսկանք վաղնջ ընդդրկեալ էին զերկու հակառակեալ կողմանս վիճաբանութեան. և նա նովին սկզբամբ արտաքսեաց զերկոսեան զայսոսիկ կարգս յայնպիսի յանձնարարութենէ. Վստահացաւ զընտրուն իւր 'ի միանձունս սրբոյն Յերոնիմոսի, փոքրիկ, բայց ակնածելի կարգին 'ի Սպանիա. Ընթերակայութիւն ընդհանրական մեծաւորի նՑ, և խորհրդակցութիւն ընդ Լասքազասայ, կարգեաց նա վաղվաղակի զերիս անձինս դատեալս 'ի նմանէ յարմարս առ պաշտօնն. 'Ի սոսա յաւել զ՝Օուազօ զոսկական իրաւագէտն ծանուցեալ լաւութ՛ հանդերձ անկապար իշխանութ՛ կանոնաւորելոյ զբովանդակ դատաստանական կարգն 'ի Նժդեհութեն. Լասքազաս ընտրեալ եղև առ 'ի ընկերել նՑ ա-
1517 նուամբ պաշտպանի Հնդկաց :

Հանգա- մանքն, որոշ 'ի գործ- եղան.

Վերագրեցուցանելն այսպիսի արտաքոյ կարգի իշխանութ՛, որ և կարէր տապալել 'ի միում վայրկենի զկարգ կառավարութեան անկեցելոյ 'ի Նոր աշխարհին զչորս անձինս, որք վՏ ցածուն պայմանի կենաց իւրեանց էին սակաւ յարմարք առ 'ի բառնալ զայնքան ուագութի, երևեցաւ ՝Օնափփալթայի և այլոց գործակալաց մեռեալ արքային

դեղ

դեղ իմն այնպէս մոլեկան և վտանգաւոր, զի հրաժարեցան տալոյ 'ի դուրս զնամակս կարևորս վս գնելոյ զայն 'ի գործ. Այլ Քսիմենէս ոչ էր այնպիսի խառնուածով, զի տայցի համբերութե զհակադարձութե յիմիք 'ի յառաջադիմութենց իւրոց. Ետ կոչել զամբաստ գործակալսն. և գրեաց 'ի վր նց այնպիսի որոտմամբ բարբառոյ, զի հնազանդեցոյց զնս կարգաւորութենց իւրոց անպատմելի իմն արհաւրօք. Վերատեսուչքն 'ի միասին ը Ռուազըյի գործակցի իւրեանց առագաստ վերացուցին դէպ ուղղն Տոմինիկեայ. Առաջին ներգործութիւն իշխանութ իւրեանց, զոր պարտ էին կատարել հասեալ անդր, էր գնելն յազատութե զամ Հնդիկս շնորհեալս արքունականացն Սպանիացւոց, կամ որոց և իցէ աստիճանի անձանց ոչ բնակացելոց յԱմերիկա. Այսպիսի իմն նորութի միաւորեալ ընդ տեղեկութեն, զոր ընկալան 'ի Սպանիոյ 'ի վր առարկայի յանձնարարութե նց, ծառալեաց ամ ուրեք զերկիւղ. Կարծէին հատուածքն, թէ մերձ էին մնալ զուրկ 'ի միում վայրկենի 'ի բաղկացն, որովք յառաջ տանէին զգործս իւրեանց. և թէ հետևաբար անխորշելի էր կործանումն նց. Այլ հարքն ուխտին Հերոնիմոսի յառաջ խաղային ամ զգուշութբ և խոհեմութբ. և ցրուեցին վաղվաղակի զկասկածանս նոցա. Ցուցանէին յամ գործս իւրեանց զճանաչումն աշխարհի և իրակութեց, որ հազիւ երբէք ստացեալ լինի 'ի վանս. և զչափաւորութի իմն և զազնուականութի եւս և առաւել անզուգական 'ի մէջ անձանց դաստիարակելոց 'ի միայնութե և 'ի խոշորութե միանձնական կենաց. Ականջք նց էին միշտ բաց առ պատմութիւս յամ կողմանց: բաղդատէին զտարբեր տեղեկութիւնս, զոր ընդունէին. և յետ հասուն իմն քննութե ամի, յաղթահարեցան լիով, թէ վիճակ նժդեհութեն անկարելի առնէր զընդունելն զհանգամանս առաջադրեալս 'ի Լասքազա-

նայ և ընծայեցուցեալս 'ի Կարտինալէն. Տեսին յայտ յանդիման, թէ Սպանիացիք հարդունացելք յԱմերիկա էին այնպէս սակաւ թըւով, զի ոչ կարէին՝ ոչ աշխատել 'ի հանքս մաղխսկ բացեալս, և ոչ մշակել զանդս. և թէ նոքա կախեալ էին վն այսց երկուց գլխոց 'ի գործաւորութէ ազգայնոցն. և թէ երբ զրկեալ լինէին յայնմանէ, պարտ էին անընդմիջաբար 'ի բաց թողուլ զտիրապետութի իւրեանց, կամ հրաժարել 'ի շահուցն, զորս հանէին յայնցանէ. և թէ ոչ գոյր հզօրագոյն հայթհայթանք, բայց եթէ յաղթել բնական ատելութն Հնդկաց առ զինչ և իցէ աշխատալի ջան. և եթէ ոչ այլ ինչ բաց յիշխանութէ ան ուրուք կարէր ստիպել զնս յաշխատել. և եթէ ոչ պահեալ լինէին յարակայ առաջի աչաց, և կախեալ 'ի վերնադունէ միոջէ, այնպէս մեծ էր հեղգութիւն նց և անհոգութին, զի ոչ մտադնէին և ոչ իսկ կրօնական կրթութեցն. նաև ոչ պահէին զծէսսն քրիստոնէութն. որք արդէն ուսուցեալ էին նց. Սն այսց ամպատճառաց երևէր նոցա կարևոր ներելն զբաշխոյսն, և հանդուրժել կալոյ մնալոյ Հնդկաց յենթարկուն ծառաց Սպանիացւոց. Բայց կալան զմեծագոյն փոյթ վն խափանելոյ զաղէտալի արդիւնս այսր սահմանադրուն. և վն ապահովացուցանելոյ Հնդկացն զփոփանս քաւագոյն վարման, միասնական ընդ վիճակի ծառայութն. Առ այս վախճան թուլացուցին զոյժ անցելոց կանոնաւորունց, և սահմանեցին զնորս. ոչ անհոգացան զպարակայէ իմէքէ, որ դիմէր 'ի թեթևացուցանել զծանրութի լծոյ նց. և իշխանութբ իւրեանց, օրինական և յորդորման աշխատեցան 'ի շնչել 'ի համաշխարհիկս իւրեանց զզգայութիս արդարութն և քաղցրութն առ այն թշուառական ժողովուրդ, յորոյ ճարտարուէ կախեալ կային նոքա. Յուսալ 'ի բաժանման իւրում ըստ աշխողութն վերադիտողացն նորոգեաց

կա-

զատենանս դատաստանին յեղանակի առնելոյ զվճիռ
նց իմաստնականս և արագս. և նմին պէսպէս
կանոնս, որք բարեգունացուցին մեծաւ զներքին
քաղաքականութի նժդեհութեն. Ապա ընդհանրական
էր հաճութին ընդ գնացս նր, և ընդ գնացս վե-
րադիտողացն 'ի մէջ Սպանիացւոց հարգունացելոց
'ի Նոր աշխարհին. և զարմանային ամենեքեան ը
համարձակութի կարդինալին 'ի հեռանալն 'ի սո- 1517
վորական ճանապարհէ իրակութենցն 'ի կերպաւո-
րելն զգաղափար իւր, որպ և ընդ լռմութի նր
յըստրելն զենթակայս, զորս հանճարեղութին, հա-
ւատարմութին և անշահասիրութին առնէին ար-
ժանիս այսպիսի իմն ծանրակշիռ յանձնարարութե.
Լասքազաս միայն մնաց տժգոհ ընդ այն. Խոհե- Լասքա-
մական նկատմունքն, զորս առաջի եդին վերատե- զաս ոչ
սուչքն, ոչ արարին զօգաւորութի ինչ 'ի մտի նր. Յոյ
Համարեցաւ զհնարս յարմարելոյ նց գնացից իւր- Հաւա-
եանց առ ներկայ վիճակ նժդեհութեն իբր զսկիզբն նեալ
ինչ երկչոտ և աշխարհային բացորոշութեան, որ
թոյլ տայր անիրաւութե, վն զի էր օգտակար.
Պնդէր, թէ Հնդիկք էին ազատք բնութ. և որ-
պէս պաշտպան նց պահանջէր 'ի վերադիտողացն՝
մի կողոպտել զնս 'ի հասարակաց արտօնութե
մարդկութենն. Լռեան նոքա զբուռն բարդութիս
նր առանց ինչ շարժելոյ. և կացին պնդութբ 'ի
սեպհական ոճ իւրեանց. Նժդեհորդք Սպանիա-
ցիք ոչ առնէին նմա այնքան համբերութբ, և էին
'ի պատրաստի յօշյօշ կոտորել զնա, եթէ կայր
մնայր յայնպիսի թախանձանս, որ այնչափ ատե-
լի էր նց. Լասքազաս առ 'ի պաշտպանիլ 'ի մո-
լեգնութէ նց, կարևոր վարկաւ ապաւինիլ 'ի վանս
ինչ. և իրազեկ եղեալ, թէ ամ ջանք իւր յԱ-
մերիկա անպտուղ լինէին, չուեաց վաղվաղակի
յԵւրոպիա հաստատուն խորհրդով ոչ դարձի թո-
ղլ առնելոյ զգատ ժողովրդեան իւրք, զոր դատէր
նա խժաբար ճնշեալ։

Մահ- Եւ թէ Քսիմենէս պահեալ էր զայն կայտառութի
ուան մտաց, որով սովոր էր տալ զանձն յիրակութիս,
Եւր ըն- Լաքազաս ոչ էր պատահեալ բազմաշնորհ ասպն-
դործա ջականութեն իմիք 'ի վերադարձի իւրում 'ի Սպա-
կալոյն նիա. Բայց եգիտ նա զկարդինալն թալկացեալ
Կառո- վն մահաբեր իրիք հիւանդութե, և նախապատ-
լոսէ րաստեալ 'ի փոխանցել զիշխանութի իւր 'ի ձեռս
Հինգե- երիտասարդ արքային, որ օր յօրէ սպասեալ էր
րորդէ: 'ի ստորին գաւառաց. Քառլոս էհաս. էառ զժա
1517 ռանգութի կառավարութեն. և մահուամբն Քսի-
մենեայ կորոյս զգործավար մի, որոյ քանքարք և
կատարելութիք առնէին զնա արժանի վարելոյ զի-
րակութիս իւր. Բազում ազնուական Ֆլանտրա-
ցիք ընկերեալ էին արքային իւրեանց 'ի Սպանիա.
Վն այնր խանդակաթ առաւելութեան ուրոյն առ
հայրենակիցս իւր; որ էր բնական հասակի իւրում,
Քառլոս խորհրդակցէր ընդ նս յամ իրս Նորոյ
Թագաւորութեն. և նոքա անհանճար ագահութե
խառնէին յամ գործառնութե, և առնոյին յան-
ձինս իւրեանց զմատակարարութի գրեթէ իւրա-
քանչիւր բաժնի. Բաժին Ամերիկեան իրակութեց
էր այնպէս մարդելուզական; զի ոչ կարէր խու-
սափել յուշադրութէ նց. Լաքազաս նշմարեաց
զաճեցուն ազդականութի նց. և թէպէտ առաջար-
կորդք յոլովակի են կարի վառեալք առ 'ի ընդա-
ծել յաջողակութի զխորհուրդս իւրեանց, այլնա
ունէր զանհանգիստ իմն և զանխոնջելի գործօ-
նէութի, որ երբեմն հասանէ վախճանի իւրում
լաւ ևս յաջողութե, քան զոր առնէր ընտրելա-
գոյն հանճարն և առաւել զգօն աչալրջութիւնն.
Արբանեկեաց հանապազորդու Ֆլանտրացի գոր-
ծավարաց. բացատրեաց նց զժպատեհութի ամ
սկզբանցն ողջագուրելոց մինչև ցայնժամ հայեց-
մամբ կառավարութեն Ամերիկոյ. և մասնաւորա-
քար զպակասութիս այնց կարգադրութեց, զորս
մուծեալ էր Քսիմենէս. Յիշատակ Ֆերտինան-

դոս

տօսի ոչ էր ընդունելի առ Քսիմենէս. Առաքի-
նութին վերնագոյն և ընդունակութին Քսիմէնեայ
լեալ էին ընդ երկայն ժամանակ առարկայ մախա-
նաց նց. Ըղձանային սրտի մտօք ունել զպատրուակ
մի գովելի դատապարտելոյ զխորհուրդս Սիապե-
տոին և եպարքոսին, և դնելոյ 'ի վատահամբաւութե
իմիք դքաղաքական գիտուն նց. Բարեկամք տեառն
Դիեկոսի Քօլոմպոսի, ուր և արքունական Սպա-
նիացիք տժգոհք զմատակարարութե Կարդինալին
միաբանէին ը Լասքազասայ առ 'ի կշտամբել ըզ-
զհնարսն առաքելոյ զվերադիտօղս յԱմերիկա. Սխա-
ւորութին այնչափ անձնաշահունց և այնքան կրից
էր անըստանանելի. և հետևաբար հարքն այն Յե-
րոնիմոսի և Զուազօ ընկերակից նց վերակոչեցան.
Ռոտէրիկոս Ֆիկուէրոա օրէնսգէտ նշանաւոր իմն 1517
արդեամբք ընտրեալ եղև առաջին դատաւոր կղզ-
ւոյն. և 'ի շնորհս խնդրոյ Լասքազասայ ընկալաւ
հրահանգս քննելոյ վերստին խղճմտ ուշադրութբ
զկէտն հակառակութե 'ի մէջ նր և ժողովրդեան
նժդեհութեանն վերահայեցմամբ եղանակին, թէ
զիարդ պարտ էր վարիլ ընդ ազգայնոցն. և նա-
խահօգալոյ յայնմ միջոցի զայն ամ, որ էր յիշ-
խանութեան իւրում առ 'ի թեթևացուցանել ըզ-
չարչարանս նց, և խափանել, զի մի շիջցի զարմ
նոցա ։

Ահաւանիկ որքան նախանձայուզութին Լասքազա- Առա–
սայ կարող եղև գործել յայսպիսի լծակցութեան ջարկէ
առ շնորհուկս Հնդկաց. Անկարելութին երթա- լուծա–
լոյ յառաջ 'ի յարդարմանն Ամերիկոյ, եթէ հա- նելոյ
տուածորդք Սպանիացիք ոչ հրամայէին ազգայ- պէտս–
նոցն աշխատիլ՝ էր խստագոյն ներհակութի բաղ- ռատման
ձանաց իւրոց վարելոյ ընդ նս իբրև ընդ ազատ խափշ–
հպատակաց. Լասքազաս առաջի եդ, զի գնեսցի կօք, իմ
բաւական իմն թիւ խափշկաց 'ի հարգունութեցն սևա–
Պորթուկեղաց 'ի ծովեզերն Ափրիկոյ առ 'ի փո- Աֆրէ–
խադրել զնս յԱմերիկա, ուր զի կարասցեն սպա- կեցւոց

պարապեցուցանիլ իբր գերիս յաշխատանս պեղելոյ զհանքս և մշակելոյ զերկիր. Ա՛ն 'ի նախապետական շահուց, զորս փորձուկեղբ համին յերկրագործութեց իւրեանց յԱ՛փրիկէ, յառաջ եկն 'ի շահավաճառ լինելոյն 'ի վն գերեացն. Զանազան պարագայք զուգընթացան առ 'ի տալ վերընծիւղել զայս ատելի շահավաճառութի, որ յերկայն ժամանակաց հետէ խափանեալ էր յԵւրոպիա, և որ ոչ նուազ դիմամարտ է զգայութեց մարդկութե, քանթէ սկզբանց կրօնիւն. Աչ յառաջքան զամ հազար հինգհարիւր երեք՝ սակաւ գերիք 'ի Մեկրաց այս է սեաւ ափրիկեցւոց առաքեալ էին 'ի Նոր Ա. Յամն հազար հինգհարիւր մետասաներորդի Ֆերտինանտոս թոյլ ետ փոխաբերումն նց մեծագոյն քազմութ. Երեւի, թէ նք էին տեսակ իմն մարդկան առաւել ուժեղք, և առաւել պնտացեալք քան զազգայինսն Ամերիկոյ. Եւին առաւել ընդունակք տոկալոյ աշխատանաց, և առաւել համբերողք 'ի մէջ գերեացն. և գործ միոյ և եթ խափշկի հաշուիւր հաւասար գործոյ չորից Հնդկաց. Բայց Կարդինարն Քսիմենէս, յորժամ թախանցեալ եղև զօրացուցանել զայս շահավաճառութի, 'ի բաց մերժեաց վերջնաբար զառաջադրութինն. որովհետև ճանաչէր զանիրաւութի ենթադրելոյ ծառայութե զազգ բնչ մարդկան, մինչ խորհրդածէր գտանել զհանգամանս դարձուցանելոյ յազատութիւն զայլ իմն ազգ. Սակայն Լասքազաս վն բնական անյարիրութե մարդկան, որք գնեն զանձն յառաջ. և երթան թափով և չտապաւ առ սիրելի նպատակ իւրեանց, ոչ գիտաց առնել զայսպիսի իմն տրոհութի. Մինչդեռ դիմամարտէր նա վն ազատութե ժողովրդեան ծնեցելոյ 'ի միում մասին երկրագնտոյս, հնարէր առնէր գերի զբնակիչս միւսոյ կողման. և 'ի ջերմութե նախանձայուզութե իւրոյ վն ապրեցուցանելոյ զԱմերիկացիս 'ի լծոյն, վճռեաց լինել օրինաւոր և օգտակար զընելն զեւ ծանրա-

գոյնն

գոյնն 'ի վճ պարանոցի Ափրիկեցւոց . Այս դժբաղդութեն այսորիկ վերջնոց՝ առաջարկութիւն Լասքազասայ ընկալեալ եղև . Բարոլոս շնորհեաց զհրովարտակ մի միում 'ի սիրելեաց իւրոց Ֆլամանդացւոց , որ պարունակէր զբացառոցական իշխանութեն փոխաբերելոյ զչորս հազար խափշիկս յԱմերիկա. Սա վաճառեաց զհրովարտակ իւր ոմանց վաճառականաց Ճէնովացւոց քսան և հինգ հազար դուկատից . և Ճէնովացիք եղեն առաջինք , որք վերածին առ կանոնաւոր իմն կերպ զայն շահավաճառութիւն գերեաց 'ի մէջ Ափրիկոյ և Ամերիկոյ. որ յայնմ ժամանակէ հետէ շարունակեալ է այնչափ տարածութեամբ : 1518

Սաստուականք Ճէնովացիք գործելով անդստին 'ի սկզբանէ ագահութեն փերեզակաց՝ պահանջէին զայնպիսի տարապայման գին խափշկաց, զի թէև փոխաբերեալ 'ի Սպանիոլա ոչ առնէր զմեծ փոփոխութի 'ի վիճակի նժդեհութեն . Լասքազաս , որոյ նախանձայուզութիւնն ոչ էր նուազ գաւիչ , քանթէ անխոնջելի, դիմեաց առ այլ իմն հնարս յառ 'ի սփոփել զՀնդիկս . Սա նկատեալ էր , զի մեծագոյն մասն անձանց , որք ցայնժամ հարգուացեալ էին յԱմերիկա բաղկանային 'ի զինուորաց և 'ի նաւավարաց պարապելոց 'ի գտման կամ 'ի տիրապետութեն այնց գաւառաց , 'ի կրտսեր որդւոց ազնուական տանց յորդորելոց յակնկալութէ ստանալոյ զբաղդ յանկարծակի , 'ի բաղդորդաց բռնադատելոց 'ի կարօտութէ իւրեանց, կամ 'ի յեղեռնութեանց առ 'ի թողուլ զհայրենիսն . փոխանակ այսպիսի մարդկան՝ որք էին ցոփք , յափշտակօղք, և անընտելք առ այն զգաստ և անյողդողդ մտավարժութի , որ պահանջի առ 'ի կերպաւորել զնոր իմն նժդեհութի , առաջադրեաց նախահոգալ զնոր հարգունութիս 'ի Սպանիոլա և յայլ կղզիս բազական իմն թուոյ դեղջկաց և հողագործաց յանկուցելոց նրթալ ընդ միջնորդութ պատշաճա-

Լասքազաս առաջարկէ, զի տարցեն Նեգրոսս 'ի Սպանիոլա .

ւոր

ւոր վարձուց. Այդքան գոլով պնտեցեալք առ աշխա-տանս կատարելոց էին զգործն, առ որս Անգլիք վն տկարուն խառնուածոյ իւրեանց ոչ էին յար-մարեալք. և եղանելոց էին վաղվաղակի պիտանի և հարուստ քաղաքացիք. Այլ Թեպէտ և Սպա-նիոլս ունէր զմեծ պիտոյս լրման իւրք բնակչաց վն անչէն լինելոյ յայնմ ժամանակի 'ի պկսակ ախ-տէն, որ յափշտակեալ էր զբազումս յազգայնոցն, և Թեպէտ և Լաքազաս ունէր զհաւանութի գոր-ծակալացն Փլամմնգաց, առաջարկութի իւր ա-ղաւաղեցաւ յեպիսկոպոսէն Պուրկոսայ, որ եդ 'ի միջի զխոչս:

Կերպա- ւորէ զգործա- ծուր նոր երկ- րիմե- կուրէ. Ապա յուսահատէր Լաքազաս գտանել զփոփանս Անգլկաց 'ի տեղիսն, ուր կայունացեալ էին Սպա-նիացիք. Ախտն այնպէս հնացեալ էր, զի ոչ ըն-դունէր զդարման. Բայց յայնմ վայրի առնէին յնմ օր նորանոր երկրագիւտք 'ի շարունակին, որք տային զբարձր իմն ճանաչումն ընդարձակութե իւրոյ և բազմամարդութե. Յայն նմ ընդարձակ գաւառսն էր տնկեալ միմիայն նժդեհութի. և բաց 'ի փոքրիկ միջոցէն 'ի ցամաքալեզուէն Տարիէնու-ազգայինքն տեղակալէին զայն բոլոր մեծ երկրաս-տան. Այսպէս բացեալ լինէր նոր իմն և ընդար-ձակագոյն դաշտ առ մարդասիրութի և առ նախան-ձայուզութին Լաքազասայ. որ կարծէր լինել յաս-տիճանի խափանելոյ, զի մի այնպիսի վնասակար ոճ մուծցի անդր. Թեպէտ և 'ի դերև ելեալ էր Թեակոխութի իւր շրջելոյ զայն, ուր վաղնիվ ար-մատացեալ էր. Ի այսու գաղափարաւ խնդրեաց զշնորհումն գաւառի միոյ ոչ տիրապետեցելոյ և կայացելոյ առ ափամբ ծովուն 'ի ծոցոյն Փարիոյ ցարևմտեան սահման այնր գաւառի ծանուցելոյ այժմ ընդ անուամբ սանթա Մարթայի. Առա-ջադրեաց կայունանալ անդէն հաստատուած միով բազկացելով յերկրագործաց, 'ի գիւղականաց և յեկեղեցականաց. Դիմագրաւ եղև քաղաքակա-

նա-

նացուցանել յընթացս երկուց ամաց զատան հազարս յազգայնոցն և կրթել զնս յարհեստս ընկերական կենաց այնպէս, զի 'ի պտղոց մտավարժութեն նց գայցէ թագաւորին մուտք ինչ վեշտասան հազար տուգաթից յամին. 'Ի տասն ամս սպասէր նա, զի բարեգունացուցմունք իւր ածեսցեն այնչափ, մինչև պտղաբերել ամի ամի վաթսուն հազար տուքաթս. Պաշնադրեցաւ, զի մի ոք նաւավար կամ զօրական ունիցի երբէք թոյլատրութիւն բնականալոյ յայնմ նահանգի. և զի մի ոք Սպանիացի դնիցէ անդ զոտն առանց բարեհաճութեն իւրոյ. Յառաջամտոյց ևս եղև վերազգեցուցանել զմարդիկն, զոր ածելոց էր ընդ իւր մասնաւոր իմն հանդերձիւ, որ ոչ նմանիցի Սպանիացւոց. ոպ զի երևեսցին նոքա ազգայնոցն զարմ ինչ մարդկան տարբեր 'ի նոցանէ, որք ածեալ էին զայնչափ աղէտս 'ի վր աշխարհին իւրեանց. Յայսմ գաղափարէ, զորոյ ստուերագրեցի միայն զառաջին գիծսն, յայտնապէս տեսանի, թէ Լասքազաս կերպաւորեալ էր զխորհուրդս նկատմամբ հանդամանացն վարելոյ Ը Հնդկաց նմանս այնց, որովք յետոյ Յեսուանք այնպէս քաջ ուղղաւորեցին զգործողութիս իւրեանց յայլում իմիք մասին նոյն շարունակին. Ենթադրէր նա, թէ Եւրոպացիք 'ի գործ ածելով զճարտն, զոր ունէին յաղագս վերնագոյն զարգացման իւրեանց 'ի գիտուլժ և 'ի կատարելութն, կարող էին սակաւ առ սակաւ կերպաւորել զմիտս Ամերիկացւոց. և տալ նց ճաշակել զհեշտութիւն, յորոց զուրկ էին, դաստիարակելով զնոսա յարհեստս քաղաքական կենաց, և փոխատրելով զնս ընդունակս պաշտամանց նորա : 1517

Եպիսկոպոսին Պուրկոսայ և խորհրդարանին Հնդ- Ինչակաց երևէր այս առաջարկութի եղջերուաքաղ և չէուլէ ծայրագոյն լտանդաւոր. Համարէին, թէ միտք ննրողաԱմերիկացւոց էին այնպէս կոպարաւորք և գուլք, նոյ.

և

և այնպէս չափազանց անհոգութի նը, մինչ զի առ-
նէր անօգուտ զամ փոյթ կրթելոյ զնն, և հարթելոյ.
Մնտէին լինել անխոհեմական իմն տալն զհրամանա-
տարութի գաւառի իւրք իբր հազար մղոնաց շուրջ զծո-
վափամբ մոլեկանի ումէք և մեծամիտ ապշեցելոյ
ագիտի իրակութենց աշխարհի, և ոչ բնաւ տեղե-
կացելոյ արհեստի կառավարելոյ. Լասքազաս հե-
ռի 'ի զգալոյ յանձին սրտաբեկիլ վն մերժմանն,
որում ունէր պատճառ սպասելոյ, միւսանգամ դի-
մեաց առ թարեկամ Ֆիմմինգսն, որք եռանդա-
գին պաշտպանէին զառաջարկութի նր, ճշգրտիւ
վն զի 'ի բաց ընկեցեալ էր 'ի գործակալացն Սպա-
նիացւոց. Նոքա կարողացան հաւանեցուցանել
զնր իւրեանց փոքր մի յառաջ ամփոփեալ 'ի կայ-
սերական արժանաւորութի յանձն առնել զգա-
ղափարն այնպիսի կարգաւորութենց ընտրեալ թր-
ւոյ իմիք առանձին խորհրդականաց իւրոց. և քան-
զի Լասքազաս յառաջ եած զբացառութիս ընդդէմ
բաղկացուցանողաց խորհրդեան Հնդկաց, ամենե-
քին սոքա արտաքսեցան. Որոշումն ենթակայիցն
ընտրելոց յանձնարարութին Ֆիմմինգաց եղև բո-
լորովին համակերպ կարծեաց իւրեանց. Նոքա
հաստատեցին լրապէս զգաղափարն Լասքազասայ.
և ետուն հրաման կատարելոյ, բայց ամփոփեցին
զսահմանն շնորհեալ նմա առ երեքհարիւր մղոնս
1517 միայն առ ծովեզերաւն Քումանայ, սակայն հա-
Հաւանէ ւանելով նմա կարող լինել տարածանել զայն որ-
ստոյոն չափ և հաճոյ իցէ նմին 'ի ներքսագոյն կողմն
որոշմանն գաւառին:
Ժխտում- Նոյնպիսի իմն բացորոշութի ոչ եանց առանց կշտամբա-
նումն է- նաց. Գրեթէ ամ անձն, որ լեալ էր յարևմտեան
ղանոյին Հնդկաստան բողոքեաց ընդդէմ սորա. և ջատա-
կողմնէ գովեաց զկարծիս իւր այնպէս համարձակութե՝ և
ըստ այնպիսի հաւանական փաստիւք, զի 'ի ճահ դատե-
Հնդկա- ցաւ 'ի կախ թողուլ և վերստին քննել զնիւթն
ցոյ. առաւել խկութե. Նոյն ինքն Քառոլոս թէպէտ

և

և յառաջնում շրջանի թագաւորութեան իւրոյ յարեցաւ 'ի կարծիսն գործավարաց իւրոց զղջմամբ իմն, որ ոչ խոստանայր զայն որոշեալ կորովութ մտաց, որ հանդիսացոյց յետոյ զառաւել հասուն ամն իւր, սկսաւ կասկածիլ, թէ կաթոգնութին. որով Ֆլամմինգք ջատագով լինէին յամ իրողութիս վերաբերելոյ Ամերիկոյ, յառաջ դայցէ յանիրաւացի իմն պատճառէ. և եցոյց զփափագ քննելոյ անձամբ զորպիսութիւն խնդրոյն պատկանեցելոյ առ յատկութիւն Ամերիկայեաց, և առ պատշաճագոյն հանգամանս վարելոյ ընդ նս. Առաջին մատուցաւ նոյնհետայն դիպողութիւն առնելոյ զայս հետազօտութիւն. և այն մեծաւ շահեկանութեամբ. Քուէվերոս եպիսկոպոսն Տարիէնու, որ ընկերացեալ էր փէտրարիայ առ շարունակն յամին հազար հինգհարիւր երեքտասաներորդի, եհաս նաւաւ 'ի Պարչէլօնա, ուր յայնժամ դադարէր արքունին. Գիտացեալ եղև յետ սակաւ միոյ, թէ կարծիք իւր շուրջ զընդունակութ և զխառնուածով Հնդկաց տարբեր էին 'ի կարծեացն Լասքազասայ. և Քառոլոս յայնմանէ հեռաւեցոյց իմաստնապէս, թէ բերելով 'ի միասին զերկուս ակնածելի անձինսն, որք 'ի ժամանակի կալոյ իւրեանց յԱմերիկա կալեալ էին զամ դիւրութի նշմարելոյ զբարժողովրդեանն, զոր ձկտէին ստորագրել, կարող էր ճանաչել, թէ ո՛ յերկուց 'ի նոցանէ կերպաւորեն իցէ զկարծիս մեծագոյն ընտրողութ և հոգաբարձութեամբ :

Սահմանեալ եղև օր մի վասն այսր հանդիսական ունկնդրութեան. Նստեաւ կայսրն արտաքոյ կարգի շքով. և բազմեցաւ 'ի գահոյսն 'ի մեծ սրահի պալատանն. Ընկերէին նմա գլխաւոր արքունականք իւր. Տէրն Դիեկոս Քօլոմպոս ծովակալն Հնդկաց կոչեցաւ առ 'ի լինել առաջակայ. Եպիսկոպոսն Տարիէնու կոչեցեալ նախ՝ ասաց զկարծիս իւր. կարճառօտ իմն զրուցաբանութեամբ գանգատեցաւ ընդ-

ճա

ճակատագրական աւերմանէ Ամերիկոյ պատճառեցելոյ 'ի պակասութենէ այնչափ բնակչաց իւրոց. հաւաստեաց, թէ այս վերագրելի էր ըստ իմիք մասին չափազանց խստութեան և անխոհեմ գնացից Սպանիացւոց. բայց յայտ արար, թէ բովանդակ ժողովուրդն նորոյ աշխարհին, զոր ինքն տեսեալ էր 'ի շարունակին կամ 'ի կղզիսն, երևէր նմա տեսակ ինն մարդկան սահմանեցելոյ 'ի վայրագունութենէ քանքարաց իւրոց առ գերութիւն. և թէ անկարելի էր կրթել զնոսա կամ յարդարել, եթէ ոչ լինէին կալեալ 'ի ներքոյ հանապազորդ վերադիտողութեան տեառն միոյ. Լասքազաս ճոխագոյնս և առաւել եռանդիւ ջատագովեաց զառաջարկութիւն իւր. 'ի բաց մերժեաց ցասմամբ իբր ամբարշտական և անմարդի զդատումն, թէ զարմ ինչ մարդկան ծնեալ իցէ առ ծառայութիւն. Հաւատատեաց, թէ իմացական կարողութիւն Ամերիկացւոց ոչ էին անգոսնելի բնականաբար, բայց միայն ոչ էին մշակեալք. և թէ նոքա ընդունակք էին 'ի միտ առնլոյ կարի իսկ քաջ զվարդապետութիւն սկզբանց կրօնին, ոմ՛ և ստանալոյ զճարտարութիւն և զարհեստս, որք առնելոց էին զնոսա յարմարս առ այսպէս պաշտօնս ընկերական կենաց. և թէ հեզութիւն և երկչոտութիւն բնաւորութեան նոցա առնէր զնոսա հպատակս և հլուս ցայն աստիճան, զի մարթ էին կերպաւորել և առաջնորդել 'ի հանճարեղ ձեռանէ միոջէ. և կնքեաց հուսկ յետոյ, զի թէպէտ և 'ի լրմանէ գաղափարին իւրոյ կարէին ծագիլ մեծամեծ բարերարութիւնք Թագաւորութեանն Գաստիլիոյ, այլ նա ոչ էր պահանջեալ երբէք և ոչ պահանջեսցէ զփոխարէն ինչ վա այսպիսի պատճառի:

Առա- ջարկու-է

Քառոլոս լուեալ զերկոսեան, և խորհրդակցեալ ընդ գործակալաց՝ ոչ զգաց զանձն բաւականապէս տեղեկացեալ առ 'ի հաստատել զընդհանրական իմն կարգադրութիւն նկատմամբ վիճակի Հնդկաց.

Յաջո- ղու- ճառա- դէտ.

Բայց

Բայց նա ունելով զօրաւորական իմն վստահութիւն յանձնութիւն Լասքասասայ, և եպիսկոպոսն Տա- 1520
րիենու համախոհ լինելով, թէ առաջարկութիւն նորա էր այնպէս ծանրակշիռ, զի պիտոյ էր փորձել զարդիւնս նորա, էհան 'ի դուրս զհրովարտակ մի. որով շնորհէր Լասքասասայ զվերոյիշեալ նահանգն Գումանա հանդերձ լիակատար իշխանութեամբ հաստատելոյ անդէն զհատուած մի ըստ դաղափարին իւրոյ:

Լասքասաս փութացոյց զնախապատրաստութիւն մն ճանապարհորդութեան իւրոյ սովորական եռանդեամբ. բայց կամ մն սակաւ փորձառութեան իւրոյ յառաջնորդութեան իրակութեանց, կամ մն զաղտնի հակառակութեան ազնուականացն Սպանիացւոց, որք առ հասարակ երկնչէին 'ի բարեյաջողութենէ առաջադրութեան իւրոյ, որ կարէր զրկել զնոսա 'ի ճարտար և 'ի պիտանի ձեռացն, որք մշակէին զստացուածս նոցա, յառաջադիմութիւն իւր 'ի գրաւել զհողագործս և զշինականս էր ամենևին դանդաղ. և ոչ կարաց հաւանեցուցանել 'ի նոցանէ աւելի քան զերկերիւրս առ 'ի ուղեկցիլ նմա 'ի Գումանա:

Այլ ոչինչ կարէր թուլացուցանել զնախանձայուզութիւն իւր. Այսու նուազ հետևակաւ, որ հազիւ բաւական էր յառնուլ զստացուած այնպիսի ընդարձակ երկրատանի, և որ ոչ էր համեմատեալ առ 'ի ձեռնամուխ լինել 'ի քաղաքականացուցանել զբնակիչս նորա, զառագաստ վերացոյց. Առաջին տեղին, յոր գնաց դիպիլ, եղև կղզին Փորթօռիքայ. Աստանօր ընդունի զծանօթութիւն նորոյ խռչընդակի առ գործադրութիւն խորհրդոյ իւրոյ առաւել անպարտելի քան զայլ ամ, որում մինչև ցայնժամ պատահեալ էր. Յորժամ եթող նա զԱմերիկա յամին հազար հինգհարիւր եօթն և տասներորդի, Սպանիացիք ունէին սակաւ հաղորդութիւն ընդ իմիք մասին շարունակին, բայց միայն ընդ գաւառացն առ երի կացելոց ծոցոյն

Տա-

Տարիէնու. Այլ քանզի զինչ և իցէ տեսակ ներ-
քին ճարտարութեն սկսանէր սերտիլ 'ի Սպանիո-
լա, յորժամ արընթաց աշխատամամբ ազգայնոցն
Սպանիացիք մնացին զուրկ յայնց բազկաց, որովք
շարունակեալ էին զգործողութիւնս իւրեանց, այս
մղեաց զնս առնել զփոյթ պէսպէս հայթհայթա-
նաց առ 'ի դարմանել այսպիսի իմն կորստեան։
Արևելի իմն թիւ խափշկաց կանխաւ փոխաբերեալ
էր անդր. բայց պատճառաւ տարապայման գնոյ
նց բազումք 'ի հատուածորդաց ոչ մատուցանէին
գնել զնս. Ապա առ 'ի պաճարել զգերիս դիւ-
րագնի, ոմանք հանդերձէին զնաւս յելուզակել ընդ
ծովեզերեայս շարունակին. 'Ի տեղիսն, յորս գտա-
նէին վայրագոյն զօրութբ, շահավաճառ լինէին
ընդ ազգայնոցն. և տային զէնչին իւրս փոխանակ
կտտորակաց ոսկւոյ, զոր նոքա կրէին առ 'ի զարդ.
բայց յորժամ կարէին յանկարծակի 'ի վր հասա-
նել և ըստնանել Հնդկաց, տանէին զնս 'ի բաց
բռնուբ, և վաճառէին գերիս 'ի Սպանիոլա. Յայ-
սոսիկ յելուզական արշաւանս գործէին զառաւել
անմարդի գործս անողորմութե. Աստուստ էր, զի
յորում նուագի երևէր նաւ մի, բնակիչքն կամ
փախչէին յանտառս, կամ խուժէին զինեալք 'ի
ծովափունս առ 'ի յետս ընկրկել զատելի վրդո-
վիչս անդորրութե իւրեանց. Բռնադատէին զոմանս
'ի Սպանիացւոց առ 'ի խոյս տալ շտապաւ. զայլս
կոտորէին մասն մասն. և 'ի թափ վրէժխնդրութե
իւրեանց սպանին զերկուս քարոզիչս Դոմինիկեանս.
որք 'ի նախանձայուզութէ եկեալ էին բնականալ
'ի գաւառին Գումանայ. Այսպիսի իմն թշնամանք
ընդդէմ անձանց յարգոյից վն սրբութե իւրեանց
յարոյց զայնպիսի ցասումն 'ի մէջ ժողովրդեանն
Սպանիոլայի, որ հանդերձ ցափ և անագորոյն
գնացիւք իւրովք տակաւին պահէր զքանչելի իմն
յարումն առ կրօնն, և զչափազանց ակնածութիւն
առ պաշտօնեայս իւր, մինչզի բացորոշեաց տալ

զպատուհաս իմն, որ եղիցի օրինակ, ոչ միայն
սկզբնապատճառացն այնր եղեռնութեան, այլ բո-
վանդակ ազգին. Այսու նպատակաւ վստահացեալ 1517
եղև հրամանատարութիւն հինգ նաւուց և երեքհա-
րիւր արանց Դիեգոսի Ոքամփոյ պատուիրանաւ
արշաւելոյ զգաւառն Քումանա 'ի սուր և 'ի հուր.
և փոխարէնելոյ զամբնակիչսն իւր գերիս 'ի Սպա-
նիոլա. Լասքազաս եգիտ զայս սպառազինութիւն
'ի Փորթօրիք 'ի ճանապարհորդութեան իւրում առ
շարունակն. և ոչ կամելով Ոքամփօ յապաղել
զելսն ըստ խնդրոյ նր, զգաց նա առժամայն, թէ
անկարելի էր ձեռնարկել 'ի կատարումն խաղա-
ղարար խորհրդոց իւրոց 'ի գաւառի միում, որ էր
յայնժամ տեղի պատերազմի և անշինութեան:
Արդ 'ի գտանել գործանս ընդդէմ արտագործութեանց
այր ամենագժբաղդ խոչընդակի, որպ նմանապատ
ուղղակի առ սէն Տօմինիկոս, թողլով զհետևողս 'ի յ
իւր խորշացեալս 'ի մէջ հատուածորդացն Փօրթօ-
րիքու. Այլ բազում պատճառաց, որք ղուղընթաց
եղեն այնմ, ապնշականութիւն, զոր ընկալաւ Լաս-
քազաս 'ի Սպանիոլա, եղև յոյժ ներհական. Նա
'ի վճռմունս իւր վն սփոփանաց Հնդկաց կանխաւ
կշտամբեալ էր զգնացս հայրենակցաց իւրոց այն-
պիսի համարձակ խստութբ, զի ամենեքին առնէ
եղեալ էր ամենեցուն. Նկատէին նոքա զկործա-
նումն իւրեանց իբր հետևութիւն բարի ելից ձեռ-
նարկութեն նր. Իսկ ևս առաւել բարձրամիտք վն
յուսոյն ընդունելոյ 'ի սուղ ժամանակի զօգնու-
թիւն հաւաքումն գերեաց 'ի շարունակէն Քումա-
նայի. որք ոչ լինէին այլազգ ենկեալք, եթէ Լաս-
քազայ նպաստաւորութիւն լեալ էր առ 'ի անկել
ընդէն զհատուած մի. Փիկուէրոա ըստ սովորաբ
հրահանգացն տուեալոց նմա 'ի Սպանիա արարեալ
էր զփորձ իմն 'ի վն ընդունակութեան Հնդկաց. որ
ներկայացուցեալ էր ընդդէմ կարծեացն Լաս-
քազայ. որ հանդերձ այսու հաւաքեաց 'ի Սպա-

նիոլա զհարուստ մի բազմուն ազգայնոց. և հար-
գունացոյց յերկուս գիւղս, թողլով զնա 'ի կա-
տարեալ ազատութեան, և բացարձակ տրութեան գոր-
ծողութեանց իւրեանց. Բայց ժողովուրդն այն սո-
վորեալ յեղանակ ինչ կելոյ ամենեւին տարբեր՝
անընդունակ յարմարելոյ զինքն առ նոր վարմունս
'ի սուղ ժամանակի, և ընկճեալ 'ի թշուառութեանց
իւրոց, և 'ի թշուառութեանց երկրին՝ այնպէս սակաւ
վարժէր զճարտարութեան իւր 'ի մշակել զերկիր, և
երեւէր այնպէս պակասեալ 'ի հոգածութենէ և 'ի
յառաջատեսութենէ պիտոյից իւրոց, և ճանաչէր
այնպէս սակաւ զկարգն յառաջ տանելոյ զիրա-
կութիւն իւր, մինչզի Սպանիացիք յայտ արարին
զնա անընդունակ վերածեալ լինելոյ 'ի կեալ իբրեւ
զմարդիկ 'ի մէջ ընկերական կենաց. և նկատէին
զնա իբր բաղկացեալ յայնքան տղայոց պահելեաց
'ի ներքոյ մշտնջենաւոր խնամակալութեան անձանց
վերնագունից զգօնութեամբ և խոհականութեամբ:

Մոխծու- Հանդերձ այս ամ պարակայինք. որք օտարացու-
նախան ցանէին զազգն, առ որ ուղղէր, յանձնէ իւրմէ
անկ—ման և 'ի խորհրդոց իւրոց, Լասքազաս գործունէութ
——— իւրով և յարատեւութեան հանդերձ շնորհմամբք
Զօրէն— իւիք և բազում սպառնալեօք ընկալաւ 'ի վախճա-
է—րոյ. նի զփոքրիկ ինչ գունդ զօրաց առ 'ի պատսպա-
րել զանձն և զնժդեհութիւն իւր յառաջին ելն
իւր 'ի նաւէ. Բայց դարձ արարեալ 'ի փորթո-
րիք, եգիտ, զի հիմնադրութիւնք նահանգին մահա-
բեր լեալ էին բազմաց քիւրոցն. և զի այլք պատ-
ճառելով զպարապմունս յայնմ կղզւոջ հրաժա-
րէին 'ի զհետ երթալոյ նմ. Հանդերձ այնու թե-
ւով անձանց, որ մնայր նմա, եբաց զառագաստ,
և էհաս 'ի Կումանա. Օքամփոս 'ի գործ եդեալ
էր զպատուհասակութիւն իւր յայնմ գաւառի այն-
պիսի խժական մոլեգնութեամբ (սատակելով զբազումս
'ի բնակչացն, առաքելով զոմանս 'ի նոցանէ 'ի
շղթայս 'ի Սպանիոլա, և բռնադատելով զմնա-
ցեալն

ցեալն պատսպարել յանտառս) մինչզի ժողովուրդն փոքրիկ իւրեք նժդեհութեն, զոր նա տնկեալ էր 'ի տեղւոջ միում կոչեցելոյ 'ի նմանէ Թիօլէտօ, մերձ էր կորնչել վն պակասութն ամ իրաց 'ի քանդեալ գաւառի միում. Լասքազաս այսու ամին պարաւանդեալ եղև հաստատել անդէն զնիստ իւր, թէպէտ և բարձի թողի եղեալ և 'ի գնդացն կարգելոց 'ի պատսպարել զնա, և յայնցանէ, որք էին ընդ հրամանատարութբ Ոքամփոսի. զի նախատեսանէին և երկնչէին 'ի թշուառութեանցն, յորս վտանգելոց էր նա յայնմ ապերջանիկ կայանի։ Արար դարմանս որչափ ձեռնհաս եղև լաւագոյնս վն փրկութն և վն ապրստի հետևողաց իւրոց. բայց մեծագոյն ջանքն սակաւ օգտելով առ 'ի ապահովացուցանել զերկոսեան, դարձաւ 'ի Սպանիոլա թախանձել զզօրաւոր իմն օգնուի վն նախապահելոյ զմարդիկն. որք 'ի սակս վտահութեն, զոր ունէին 'ի նմա, համարձակեն էին կեալ յայնպիսի դժուարին տեղւոջ. Սակաւ մի զկնի մեկնելոյ իւրոյ՝ ազգայինքն իրազեկ լինելով տկար վիճակին Սպանիացւոց, խմբեցան զանխլաբար, յարձակեցան 'ի վր նց կատաղութբ մարդկան զայրացելոց 'ի բազում անիրաւութեց. կոտորեցին զհարուստ մի բազմուի 'ի նոցանէ. և ստիպեցին ըզմնացեալն փախստական լինել մեծագոյն շտապուցմամբ 'ի կղզին Քուպակուա. Փոքրիկ հատուածն, որ կայունացեալ էր անդէն վն որսոյ մարգարտաց, հարեալ յահէն եթող զկղզին. և ոչ իսկ մի ոք Սպանիացի մնաց յիմիք մասին շարունակին, կամ ընթերակայ կղզեացն խորշին Փարիոյ յաւազակոյտսն Տարիէնու. Զարհուրեալ Լասքազաս յայնչափ յաջորդական դժբաղդութեց ամաչէր ցուցանել զերեսս յետ այնպիսի սգալի աւարտման մեծաշուք գաղափարացն իւրոց. Ամփոփեցաւ 'ի վանս Բնչ Տօմինիկեանց 'ի սբն Տօմինիկոս. և յետ սակաւ միոյ զգեցաւ զհանդերձ այնր կարգի։

Թէպէտ և արտաքսումն նժդեհութեն Քօլոմպոսի պատահեցաւ յամին հազար հնգհարիւր վեցերորդի, սակայն պատշաճ համարեցայ յանդիման առնել զյառաջ խաղացմունս հնարագործութեանցն Լաս-Քազասայ յառաջին ծագմանէն մինչև ցվախճանն առանց ընդմիջահատութեն. Կարգադրութի՛ւն որ էր առարկայ երկար իմն և ուշադիր քննութե. և թէպէտ փոյթք իւր յօգուտ ճնշեալ Ամերիկացւոց՝ մասն ինչ վն յանդգնութե և անխոհեմութե իւրոյ, և մասն ինչ վն չափավէտ դիմադարձութե հակառակորդաց իւրոց ոչ եղեն ընկերացեալ յայնմ յաջողութե, զոր նա յուսայր կարի իմն ծանծաղամիտ վստահութե, սակայն եռանդն զշարժումն առ զանազան կանոնաւորութիւնս, որք եղեն բարեբարութի ինչ այնմ տառապեալ ժողովրդեան. Այժմ դարձցուք առ պատմութի երկրագտութեցն Սպանիացւոց. որք առաջի մատուցանեն ըստ կար-
1517 դի ժամանակին :

Պէյոր Երկրա- գէտք Ը տեղե- հատայ ջայ.

Դիեկոս Վէլասքուէզ, որ տիրապետեաց Քուպայի յամին հազար հնգհարիւր մետասաներորդի, յառաջատեր 'ի պահել զկառավարութի այնր կղզւոյ իբր կարգեալ 'ի ձո Դիեկոսէ Քօլոմպոսէ. Թէպէտ սակաւ անգամ ճանաչէր զնա իւր վերինագոյն, ձկտելով միշտ առնել զիշխանութի իւր անկախ. 'Ի ներքոյ հանճարեղ մատակարարութեն նր Քուպա եղև մի յառաւել ծաղկեալ կայունաւորութեանցն Սպանիացւոց. Համբաւն այնորիկ հրաւիրեր զբազում անձինս այլոց նժդեհութեանց յուսով գտանելոյ անդէն զանազական իմն դադար, կամ զպարապումն իմն վն գործոնէութեն իւրեանց. Քուպա գոլով կայանորեալ ընդ արևմուտս բովանդակ կղզեացն տիրապետելոց 'ի Սպանիացւոց. և Ովկիանոսն, որ տարածանի անդր քան զնա, ոչ եղեալ մինչև ցայնժամ փորձեալ, այսորիկ պարագայք քարշէին բնականաբար զ[illegible], առ նորանոր երկրագտութիւն. Առաքումն ինչ վն այսր վախճանի, ուր յաջողա-

կու-

կութիւն և քաջասրտութիւն կարէին ընդդիմել առ
Երոպ. իմն փարթամութի, էր առաւել յարմար յօ-
ժարութն դարուն, քանթէ յամր մտավարժութն
խնդրել առ զուսմն հողոյ և առ ձեռագործութի շաքա-
րի. Հարժեալք յայսմ հոգւոյ զանազան պաշտօնա-
տարք, որք ծառայեալ էին ընդ փէտրարեաւ ՚ի
Տարիենու, արարին զընկերութի մի առ ՚ի ձեռ-
նարկել ՚ի ճանապարհորդութի իմն երկրագտութն.
Հաւանեցուցին զՖրանչիսկոս Հեռնանտեց Գօր-
տովա զամենահարուստ հատուածորդն ՚ի Գուպա,
և զայլն նշանաւոր անվեհեր առ ՚ի միանալ ընդ
նս ՚ի բաղդին. և ընտրեցին զնա հրամանատար.
Վելասքուեց ոչ միայն գովեաց զխորհուրդն, այլ
և ձեռնտու եղև առ ՚ի յառաջ շարժել զայն.
Եւ քանզի հին զօրականքն Տարիենու էին աղքատք
՚ի վերջին աստիճանի, նա ինքն և Գօրտովա յա-
ւելին զդրամ առ ՚ի գնել զերիս փոքրիկ նաւս.
և մատակարարել զինչ և իցէ կարևոր իր վասն
շահավաճառութն, կամ վն պատերազմի. և հա-
րիւր և տասն արք մտին ընդ նս ՚ի նաւ. և զառա-
ջաստ վերացուցին ՚ի սմյն Յակոբայ քուպայի ՚ի
յութն փեբրվարի ՚ի հազար հինգհարիւր եօթն- 1517
և տասներորդի. Խորհրդով գլխաւոր նաւուղղին
իւրեանց Անտոնիոսի Ալամինօսայ, որ ծառայեալ
էր ՚ի ներքոյ առաջնոյ ծովակալին Գօլոմպոսի,
գնացին ընդ արևմուտս կոյս, յենլով ՚ի կարծիս
այնր մեծի նաւորդի, որ հաստատութբ պնդէր,
թէ այն արևմտեան քնթացք հորդելոց էին ճա-
նապարհ առ առաւել ծանրակշիռ երկրագտու-
թիւնս:

՚Ի քսան և մերորդ աւուր յետ մեկնելոյ իւրեանց
՚ի սմյն Յակոբայ տեսին զցամաք. որ ճշմարտե-
ցաւ լինել գլուխն Գօթօքէ. արևելեան ծագ այնր
ընդարձակ ցամաքակղզւոյն որ նշմարի ՚ի շարու-
նակէն Ամերիկոյ. և որ պահէ յարաժամ զսկզբնա-
կան անուն իւր Խուքաթան. Մինչդեռ մերձենային

նոքա 'ի ծովեզրն, երևեցան հինգ քանօէք լի մարդկամբ վայելչապէս զգեցեալք զհանդերձս բամբակեղէնս, աքանչելի տեսարան մի Սպանիացւոց, որք գտեալ էին զայլ ամ մասն Ամերիկոյ կալեալ 'ի մերկ վայրագաց. Կորտովա հոգացաւ փոքրիկ ընծայիւք շահել զբարեկամութի նց. Նոքա թէպէտ և ապշեալք ընդ օտար տարակայն, որք յառաջին նուագ ընծայէին 'ի տեսութի նց, հրաւիրեցին զՍպանիացիս այց առնել բնակութեց իւրեանց առերևոյթ իմն սիրելութ. Ապա եղին զոտս 'ի ցամաք. և յառաջելով 'ի գաւառին՝ նշմարեցին հիացմամբ զմեծամեծ տունս քարաշէնս. Բայց ծանեան ևս փութանակի, զի եթէ ժողովուրդն Յուկատանու յառաջադէմ լեալ էր 'ի զօրման առաւել քան զայլ համաշխարհիկս իւր, էր ևս՝ առաւել խորամանկ և պատերազմական. Թէպէտ և քաղաքէն ընկալեալ էր զԿորտովա բազում նշանօք բարեկամութե, սակայն թաքուցեալ էր զերևելի իմն խումբ ատրկաց իւրոց 'ի դարանի յետկոյս թանձր ծառաստանիս միոյ. որք առ նշան իմն տուեալ 'ի նմանէ՝ յարձակեցան 'ի դուրս և ընդհարան 'ի Սպանիացիս մեծաւ յանդգնութե և աստիճանաւ իմիք պատերազմական կրթութե. Յառաջին թափչս նետից իւրեանց վեշտասան Սպանիացիք խոցեալք եղեն. բայց Հնդիկք միայն հարեալք յայնպիսի իմն մեծ սարսափմանէ մի յանկարծակի ճայթման հրացան զինուցն, և այնպէս շրտուցեալք 'ի ներգործութեց բարանացն և այլոց զինուց թշնամեաց իւրեանց, մինչզի փախեան խուճապաւ. Իսկ Կորտովա 'ի բաց եթող զգաւառն, ուր հանդիպեալ էր այնպիսի իմն մոլեկան
1520 ապնջականութե, տանելով ընդ իւր զերկուս կալանաւորս 'ի միասին ը զուգուց փոքրիկ տաճարի միոյ, զոր կողոպտեաց 'ի յետս ընկրկման իւրում:

Կոռտէզ. Շարունակեաց զընթացս իւր ընդ արևմուտս առանց կորուսանելոյ զտեսութի ծովեզերն. և 'ի

վեր-

վեշտասան աւուրս եհաս 'ի Կամիէաքչի. Աստանօր ազգայինքն ընկալան զնա առաւել հիւրընկալութեամբ. Բայց Սպանիացիք զարմացան յոյժ, զի 'ի բովանդակ երկայնութեան եզերն, յորում առագաստեալ էին, և զոր պատկերակերպէին լինել մեծ իմն կղզի, ոչ էին պատահեալ գետոց ինչ. և սկսանելով պակասիլ նց̃ ջուրն, յառաջ խաղացին յուսով գտանելոյ զայն. և գտին 'ի վերջոյ զբերան գետոյ միոյ 'ի փօթօնեան փարսախս ինչ անդր քան զԿամիէաքչի:

(փ) ‖ Թէպէտ և Ամերիկա իցէ առատագոյնս զարմանեալ ջուրբք քան զայլ կողմանս երկրագնտոյս, սակայն 'ի Իւքաթան ոչ գոյ գետ կամ հոսանք ջուրց. Այս ցամաքակղզի տարածանի 'ի դուրս հարիւր փարսախ 'ի շարունակէն. բայց ուր է առաւել լայն՝ ոչ ձգի աւելի քան զքսան և հինգ. Է տափարակ իմն հարթ առանց լերանց. Բնակիչք ընդունին զջուր ճանապարհաւ փորելոյ ըզհողն. և յա̃մ հողի, յորում փորեն, գտանեն զայն առատութբ̃. Հաւանական է յոյս ա̃մ պարագայից, թէ այս գաւառ լեալ իցէ երբեմն ծածկեալ 'ի ծովէ. Հերրէրա և Մ. Պուֆֆոն: ‖

Կօրտովա ընդոստոյց 'ի ցամաք զբովանդակ զօրս իւր առ 'ի պատսպարել զնաւավարսն, մինչդեռ պարապեալ էին 'ի լնուլ զտակառակս իւրեանց. բայց հանդերձ այսօրինակ զգուշութբ̃ք, ազգայինք խոյացան 'ի վր̃ նց̃ այնքան մոլեգնութբ̃, և այնչափ բազմութբ̃, մինչզի քառասուն և եօթն Սպանիացիք սպանան առ տեղ, մի միայն այր 'ի բովանդակ գնդէն փրծանելով առանց ինչ վնասու. Հրամանատարն Թէպէտ և ընկալեալ էր զերկոտասան խոցուածս, ուղղեաց զյետս ընկրկումն ներկայութբ̃ ոգւոյ հաւասար քաջասրտութեն̃, որով առաջնորդեալ էր արանց իւրոց 'ի մաքառմանն. և բազում դժուարութբ̃ դարձան 'ի նաւս իւրեանց. Յետ այսր վախճանական վարման ոչ ևս մնայր ինչ

բայց եթէ երթալ շտապաւ 'ի Եւրոպա հանդերձ
խարխալեալ զօրութիւնք իւրեանց. 'Ի դարձին իւր-
եանց կրեցին վս պակասութեան ջրոյ գտանել խոշ-
տանգիչ նեղութիս, զորս մարդիկ վիրաւորք և
հիւանդք փակեալք 'ի փոքրիկ նաւակս՝ և արտադ-
րեալք տօթոյ այրեցած գօտւոյն, մարթ է ենթադ-
րել, թէ կրեալ իցեն երբէք. Ամենք 'ի նոցանէ
ծնշեալք յայնչափ տառապանաց՝ մեռան զճանա-
պարհայն. և Եօրտոմա հրամանատարն փչեաց
զոգին յետ սակաւ միոյ ժամանելոյ նց 'ի Եւրո-
1520 պա:

Ճ՛անա- Մաժէլան և գծբաղդ եղև ելք այսր շահատակութե,
պարհոր- այլ այն հանգամանեաց մանաւանդ յաճեցուցա-
դութիւն նել, քան թէ 'ի նուաղել զոգի ձեռներէցութեան
Մաժէլա- 'ի մէջ Սպանիացւոց. Սոքա բացեալ էին զգա-
նայ. ւառ իմն մեծ կայսերութեալ ոչ յոյժ հեռի 'ի Եւրո-
պայէ բերել առ երևոյթս՝ ստացեալ յաղթ յոյժ
վերնագունէ ճանաչմամբ քան զայլ ո և իցէ մինչև
ցայնժամ տեսեալ յԱմերիկա: Նախահոգացեալ
զփոքրիկ իմն տուրևառական հաղորդակցութի ընդ
ազգայնոցն, հանին յայնմանէ զզարդս ինչ ոսկեղէ
ոչ բազմագին, այլ եղական արուեստիւ. Ըյսպի-
սի պարակայք պատմեալք բարդութե բնակչաւ
մարդոց փափագողաց մեծացուցանել զվաստակ գոր-
ծողութեց իւրեանց՝ եղեն աւելի քան զբաւականն
առ 'ի զարթուցանել զառասպելական ակնկալութիւ
և զխրախոյս. Յոլովք անձնամատոյցք եղեն գրա-
ւիլ յայլ իմն շահատակութիւն. Մելաքուէց փոյթ
հանդիսանալոյ արժանաւոր իմն ծառայութե, որ
բացցէ նմա ճանապարհ ունելոյ իրաւունս առ
բդեշխութիւն Եւրոպայի անկախ 'ի ծովակալէն.
ոչ միայն բորբոքեաց զեռանդն նց, այլև հան-
դերձեաց ծախուք իւրովք զչորս նաւս վս ճա-
նապարհորդութեն. Երկերիւր քառասուն կամա-
կարք, յորոց միջի բազում անձինք երևելիք և
ընչաւէտք մտին 'ի նաւ վս այսր ձեռնարկութեան.

Ըն-

Ընկալաւ զհրամանատութիւն նորա Յօհաննէս Կրիալ-
վա երիտասարդ ծանուցեալ առաքինութեամբ՝ հան-
դերձ խրատուք քննելոյ ուշադրութեամբ զբնութիւն գա-
ւառացն, զորս բանայցէ առ 'ի փոխանակել ան-
դէն ընդ ոսկւոյ. և եթէ պարագայքն լինիցին
նպաստաւորք՝ հաստատելոյ զհաստատած ինչ 'ի յար-
մարեալ իմիք կայաւորութեան. Նա զառագաստ վե-
րացոյց 'ի սոյն Յակոբայ Քուպայի 'ի յութն Ապ-
րիլի յամին հազար հինգհարիւր ութուտասներոր-
դի. Նաւուղիղն Ալամինոս կալաւ զնոյն ընթացս,
որ յանցեալ ճանապարհորդութեան. բայց բռնաւ
յորձանացն թեքելով գնաւն ընդ հարաւակողմն,
առաջին ցամաքն, զոր տեսին նոքա, եղև կղզին
Քօզումէլայ ընդ արևելս Իւքաթանու. Իսկ քան 1518
զի ամ բնակիչք փախեան յանտառս և 'ի լերինս Մայի. 3.
յերևիլ նոցա, նոքա ոչ դադարեցան անդէն յեր- Գտա-
կար. և առանց ինչ նշանաւոր պատահարի դի- նէ զՆորն
պեցան 'ի փօթօնխան 'ի հակադրեալ մասին ցա- Սպա-
մաքակղզւոյն. Ըղձութեան առնելոյ զվրէժ հայրե- նիա :
նակցաց իւրեանց, որք սատակեալ էին անդէն,
խառնեցաւ ընդ գաղափարաց բարի քաղաքակա-
նութեան, թելադրելով նոցա իջանել անդր. որպէս զի
կարօղ լինիցին պատուհասել զՀնդիկսն այնր նա-
հանգի այնպիսի օրինակաւ, որ զարհուրեցուսցէ
զամ շրջակայ մարդաբնակութիւն. Արարին ելա-
նել 'ի նաւէ զզօրանդակ գունտս իւրեանց. և քար-
շեցին 'ի ցամաք զհատորս ինչ թնդանօթոց. բայց
Հնդիկք 'ի դիմի հարան այնքան քաջասրտութեամբ,
մինչ զի Սպանիացիք ընկալան զյաղթութիւն մեծաւ
դժուարութեամբ. և մնացին յաղթահարեալք 'ի միտս
իւրեանց, թէ ազգայինք այնր գաւառի լինելոց
էին թշնամիք առաւել զարհուրելի քան ըզ-
գնոսա որոց պատահեալ էին կանխաւ ընդ
այլ մասունս Ամերիկոյ. 'Ի փօթօնխանու յառա-
ջացուցին զգնացս իւրեանց ընդ արևմուտս, ու-
ղեւորելով զնաւսն, որչափ կարօղ էին, առ ընթեր ծո-
վե-

վեզերն, և ընկենլով զխարիսխ յամերեկոյի առ ոտնի
վտանգաւոր պատահարացն, որոց արտադրեալ էին
յանծանօթ խմբք ծովու. 'Ի տուէ աչք նց էին միշտ
դարձուցեալք առ ցամաքն հանդերձ խառնմամբ
իմն ապշութե և զարմացման վն գեղեցկուե երկ-
րին և վն նորութե առարկայիցն, զորս նկատէին.
Բազում գիւղօրէք սփռեալ էին առ ծովեզերբն.
յորս կարէին տարորոշել տունք քարաշէնք, որք
'ի տարակացութե երևէին սպիտակք և պերճք.
'Ի ջերմութե պատկերակերպութե ձևացուցանէին,
թէ այսոքիկ էին այնքան քաղաքք զարդարեալք
աշտարակօք և գմբեթօք. և միում 'ի զօրականաց
նշմարելով պատահմամբ, թէ այս գաւառ ըստ ե-
րևութին նմանէր Սպանիոյ, Գրիալվա ընդհանուր
կայթմամբ կոչեաց զնա Նոր Սպանիա. անուն, որ
զանազանէ հանապազ զայս տարածեալ և ճոխ
գաւառ Սպանիական թագաւորութեն յԱմերիկա.
Գյոմնի. Իջին 'ի նաւէ առ գետով միով. զոր աղգայինք
Թաբասքա- կոչէին Թաբասքօ. և համբաւ յաղթութե նց 'ի
ցւ: Փոթօնխան գոլով հասեալ 'ի տեղին յայն, քա-
ղաքէն ոչ միայն ընկալաւ զնս բարեկամաբար,
այլև ետ նց զընծայս այնպիսի արժողութե, զի
հաստատեցին զբարձր ճանաչմունսն յղացեալս 'ի
Սպանիացւոց զհարստութէ և զճոխութէ գա-
ւառին. Այսոքիկ մեծացան ևս առաւել 'ի տեղ-
ւոջն ուր հասին յետ սակաւ միոյ. որ էր կայա-
ցեալ երևելապէս ընդ արևմուտս Թաբասքօի 'ի
Կոտոր- գաւառին ծանուցելոյ զկնի անուամբ Կուաքսաքա.
ածոյն: Աստէն ընկալեալ եղեն նովին ակնածութե, որ
ընծայի իբր հարկ վերնագոյն էից. Ժողովուրդն
խնկեաց զնս յերանելն 'ի նաւէն խնկով քօփալ
խէժին, և մատոյց նց իբր նուէր զառաւել ըն-
տիր և զփափուկ իրս այնր երկրասանի. Առնէին
զվերջին բերկրութի տուրևառիկ լինելոյ ընդ նս. և
և 'ի վեց աւուրս ստացան Սպանիացիք զարդս
ոսկւոյ օտարոտի իմն ձևագործով արժողութե

վեհ-

վեշտասան հազար փեզոսաց փոխանակ փանաքի
իրաց Եւրոպացւոց, որք ոչ արժէին ինչ. Երկու
կալանաւորքն, զորս Քորտովա բերեալ էր 'ի
Յուքաթանու, ծառայեցին իբր թարգմանք. այլ
քանզի նոքա ոչ իմանային զլեզու գաւառիս այ-
սորիկ, Սպանիացիք գիտացին յազգայնոցն զօ-
րութեամբ նշանացն, թէ նոքա ենթարկեալ էին
մեծի միապետին կոչեցելոյ Մօնթէ ցումա. որոյ
տէրութիւնն տարածանէր 'ի վր̃ այնր, և 'ի վերայ
այլոց բազմաց գաւառաց. Գնաց յայսմ վայրի
առ կղզեակ մի, զոր նա անուանեաց կղզի զոհից.
վասն զի Սպանիացիք տեսին անդ զառաջինն ըղ- 16. յու-
տոսկալի տեսարանն մարդկային զենմանց, զորս նիս.
խժական ըժժանք ազգայնոցն մատուցանէր աս-
տուծոյ իւրեանց. Զկնի մատեաւ առ այլ կղզեակ
մի, զոր վերանուանեաց սբ̃ Յօհաննէս Ուլուայի.
'Ի տեղւոջէ աստի առաքեաց զՊետրոս Ալվարա-
տոս զմի 'ի պաշտօնատարաց իւրոց առ Վելաս- 1518
քուէզ կարճ 'ի կարճոյ պատմութ̃ ծանրակշիռ Յօ-
երկրագտութեանցն, զորս արարեալ էր, և հան- հաննէս
դերձ բոլոր գանձիւն, զոր ստացեալ էր անդէն Ուլուայէ.
'ի շահավաճառ լինելն ընդ բնիկ ժողովրդեանն.
Յետ մեկնելոյ Ալվարատոսի, նոյն ինքն մնացեալ
նաւուքն յառաջ խաղաց յափնկոյս մինչև ցդետն
Փանուքօ, միշտ նշմարելով զերկիր իմն փարթամ
արգաւանդ և բազմամարդ:

Նազումք 'ի պաշտօնատարացն Կրիալվայ, պնդէին Պատ-
թէ ոչ էր բաւական գտանելն զայլ փափկութե̃ ճառք
գաւառսն, և առնելն 'ի զանազան տեղիս ելանե- ձ̃ ուշ-
լոյն 'ի նաւէն զխտրութիւնն առնլոյ զստացումն նց̃ Եռոյց
վասն թագաւորութեանն Քասթիլիոյ. այլ թէ անդէն
փառք նոցա անկատար էր, եթէ ոչ տնկէին ըղ- ընծայե-
հատուած իմն 'ի սեպհական յիմիք կայի. որ կա- հալեն
րիցէ ապահովայուցանել Սպանիացւոց զհաստա- նեմ.
տուն իմն կայանս յայնմ գաւառի. և եթէ օգնա-
կանութքն, զորս ստոյգ էին ընդունել, ոչ նուա-

ճէին

ճէին զայն բովանդակ սակաւ առ սակաւ ընդ տէ-րութեամբ ինքնակալին իւրեանց. Բայց խումբ զօ-րացն արդէն կացեալ էր շուրջ զամիս հինգ 'ի վերայ ծովու. մեծագոյն մասն ռոճկաց նոցա էր սպառեալ. և այն որ մնացեալ էր 'ի համբարս իւրեանց՝ էր այնպէս ապականեալ 'ի տօթոյ նա-հանգին, զի ոչ էր մարթ հանել յայնմանէ զօ-գուտ ինչ. կորուսեալ էին՝ զարս ոմանս վն կոտո-րածի մահուան. այլք էին հիւանդք. Նորկրա-տանն լի էր ժողովրդեամբ, որ ըստ երևութին ճոխացեալ էր իմաստութ̄, և քաջութ̄. և կեայր ևս 'ի ներքոյ կառավարութեան միոյ և նէթ և հզօր ծնի. որ կարող էր ածել զնա առ 'ի ներ-գործել միաւորեալ զօրութ̄ ընդդէմ յարձակո-ղաց. Տեսեալն զհատուած իմն 'ի մէջ այսպիսի մնա-ցական պարականութեանց՝ էր դնել զայն յանխորշելի կործանումն. Գրիալվա թէպէտ և լի փառասիրութ̄, և քաջասրտութ̄, զուրկ էր յայնց վերնագոյն քան-քարաց կարևորաց 'ի կերպաւորել և 'ի կատարել զայսպիսի իմն մեծ գաղափար. Այս խոհեմագոյն էր վարկաւ վերադառնալ 'ի Քուպա. գոլով վճա-րեալ զվախճան ճանապարհորդութեան իւրոյ և կա-տարեալ զայն ամենայն, զոր սպառազինութեանն հրամայեալ յիւրմէ պահանջէր առնել. Դարձաւ 'ի սքն Յակոբ Քուպայի 'ի քսան և վեցն հոկ-տեմբերի. ուստի մեկնեալ էր իբր վեց ամսօք յա-ռաջ։

1518 Այս եղև երկայնագոյն, միանգամայն և՛ առա-ւել բարեբախտ ճանապարհորդութիւն, զոր Սպա-նիացիք արարեալ էին 'ի նոր աշխարհին. Աշխա-րհեալ էին, զի Իւքաթան ոչ էր կղզի, որպէս են-թադրէին, այլ մասն ինչ մեծի շարունակին Ա-մերիկայ. 'Ի փօթօնխոնու յառաջեալ էին յըն-թացս իւրեանց ընդ բազում հարիւրաւոր մղոնս մերձ ծովեզեր իմիք փորձեցելոյ յառաջ. և ձգե-լով 'ի սկզբան անդ ընդ արևմուտս և ապա դառ-

Նախա- պատրաստութիւնք վն այլոյ յաղ- թութեան նուա- ճումն:

նայով ընդ հարաւակողմն, բովանդակ գաւառն ծանուցեալ 'ի նոցանէ երևէր լինել ոչ ինչ նուազ մեծագին քան թէ լայնատարր. Զայսն թէ Ալվարատոս եհաս 'ի Պերուա, Ալմաքրուէց յափշտակեալ վասն յաջողութեանն, որ այնպէս գեր 'ի վերոյ էր քան զանյագ յոյսն իւր, առաքեաց նոյնհետայն զանձն ոք իւր հաւատարիմ առ 'ի տանել զծանրակշիռ ծանօթութին 'ի Սպանիա, և առ 'ի յանդիման առնել զհարուստ բերսն գաւառացն գտելոց, և միջնորդութեամբ նորա թախանձել զայնպիսի աճումն իշխանութեան որ կարիցէ բաւականացուցանել զնա առ 'ի քաջասըրտիլ և ձեռնարկել 'ի տիրապետութեն. Նորանց տեսանելոյ դարձի պատգամաւորին իւրոյ կամ հասանելոյ Կրիալվայի, առ որ նոյն ինքն եղեալ էր այնպէս թերեհաւատ և նախանձաւոր. մինչ զեեդ 'ի մտի ոչ ևս ծառայեցուցանել զնա երբէք, սկսաւ նախապատրաստել զպատռազմնութիւն իմն այնպէս հզօր, զի մարթասցի հաւասարել ձեռնարկութեան իմիք այնքան վտանգաւորի և ծանրակշռոյ:

Այլ քանզի շահատակութիւնն, որում Ալմաքուէց մտադրեր յայնժամ այնչափ դիմադրաւութեամբ, աւարտեցաւ 'ի տիրապետութիւնս յոյժ առաւել ծանրակշիռս քան զայլ ամենայն, զոր Սպանիացիք արարեալ էին յառաջագոյն, և էած զնա 'ի ճանաչումն ժողովրդեան իւրեք, որ եթէ բաղդատեսցի ընդ Ամերիկացւոց տեղեաց մինչև ցայնժամ, պարտի համարիլ ծայրագոյն կրթեալ, 'ի դէպ է առնուլ հանգիստ, նախ քան զյառաջ խաղալն առ վիպասանութիւն դիպուածոյն մնաւին տարաղան եղելոց յայնցանէ, զորս յառաջ բերաք մինչև ցայս վայր, առ 'ի տալ ըզգաղափար իմն վիճակի նորոյ աշխարհին՝ յորժամ զառաջինն ծանուցեալ եղև. և առ 'ի նկատել զքաղաքականութիւնն և զհանգամանս 1538

բնոր

քիրտ և անկիրթ ցեղիցն. որք տեղակալէին զամենայն մասունսն, զորոց Սպանիացիք տեղեկացեալ էին յայնժամ։



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿՈՅ․

## ԴՊՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ․

Անցեալ էին արդեօք ամք քսան և մեծ, յորմէհետէ Քօլոմպոս ածեալ էր զայգս Եւրոպացւոց 'ի նոր աշխարհն. Սպանիացիք յայնմ ժամանակի առաւեալ էին զմեծամեծ յառաջադիմութիւս 'ի ճանաչման պէսպէս գաւառաց նր, և յայցելութն համօրէն կղզեացն սփռելոց յաճախութբ ընդ այն մասն Ովկիանոսի, որ կայ 'ի մէջ Հիւսիսային և Հարաւային Ամերիկոյ. Նաւեալ էին առ արևելեան ծովեզերբ շարունակին 'ի գետոյն Փլաթայ ցբարձրուն Մեքսիքեան խորշին, գտանելով զայն տարածեալ առանց խրամատուն ընդ այն ահագին բաժին երկրագնտոյ. Բացեալ էին զմեծ Հարաւայինն Ովկիանոս. որ առաջի առնէր զնոր առարկայս. և ստացեալ զծանօթութի ինչ ծովեզերն Ֆլօրիտայի. որ տարաւ զնն 'ի նշմարել զշարունակն, որ կայր 'ի հակադրեալ ուղերձման. և թէ-

պէտ

պետ ոչ մինչև զերկրագործութիւն իւրեանց և ևս անդր ընդ հիւսիսակողմն, սակայն այլ ազգք այց արարեալ էին այնց տեղեաց. որք 'ի նոցանէ անհոգացեալ եղեն. Անգղիացիք, 'ի ճանապարհորդութեն միում, զորոյ զպատճառսն և զյաջողուածն յառաջ բերցուք յայլում մասին այսր պատմութե, առագաստեալ էին առ ծովեզերբն Ամերիկոյ 'ի Լապրատորեայ ցսահմանս Ֆլօրիտայ. և փորձուկեզք որոնելով զանցս ինչ կարճագոյն առ արևելեան Հնդկաստան, վտանգեալ էին զանձինս ընդ ծովս հիւսիսոյ. և քննեալ զնոյն կողմանսն. Այսպէս 'ի ժամանակին, յորում եդի 'ի մտի ակնարկել առ անգամ մի 'ի վիճակ նորոյ աշխարհի, տարածութի իւր էր ծանուցեալ դրեթէ 'ի ծագէ իւրմէ հիւսիսայնոյ ցերեսուն և հինգ հարաւային աստիճանս հասարակածին. Գաւառքն, որք տարածին անդր քան զհարաւային սահմանն Ամերիկոյ՝ մեծ կայսերութեն Փերուայ, և համատարած տէրութիւքն ենթադրեալք արքայիցն Մէքսիքօի էին տակաւին անծանօթք:

Ընդարձակ տարածութիւն նորոյ աշխարհի.

Յորժամ նշմարի նոր աշխարհն՝ առաջին պարագայն, որ հիացուցանէ զմեզ, է անբաւ տարածութի իւր. Ոչ էր փոքրիկ իմն բաժին երկրի և ոչ այնպէս արհամարհ, որ կարէր վրիպել 'ի նշմարութենէ կամ 'ի հետազօտութենէ անցելոց դարուց այն, զոր եգիտ Կոլոմպոս. Նա ծանոյց զնոր իմն կիսագունտ մեծագոյն ընդարձակութբ քան զԵւրոպիա, կամ քան զԱսիա, կամ քան զԱփրիկէ զերիս ծանօթ բաժանմունս հնոյ շարանակին. և ոչ յոյժ փոքրագոյն 'ի չափմունս քան զերրորդ մասն բնակ երկրագնտոյս:

Ամերիկա երևելի է ոչ միայն վն մեծութեն իւրոյ, այլև վն դրից իւրոց. Նա տարածանի 'ի հիւսիսային բևեռական շրջանակէ առ բարձր իմն լայնութի հարաւային աւելի քան զհազար հինգհարիւր մղոնս անդր քան զհեռաւորագոյն ծագ հնոյ շա-

քունանկին յայնմ մասին հասարակած գծին. Աշխարհ իմն այսու ընդարձակութ անցանէ զամ կլիմայս ընդունակս լինելոյ բնակութ մարդոյ, և յարմարս մատակարարելոյ զպէսպէս մասնաւոր բերս՝ կամ առ բարեխառն, կամ առ այրեցած կողմանս երկրի :

Յետ տարածութեն նորոյ աշխարհին, մեծութիւն Ատ- տուարկայից, զորս ակն յանդիման առնէ նոյնն, Ջի — ոչ կարէ չզարթուցանել զաչս որոյ և իցէ նշմա- նէ վե- րողի. Նրեւ թէ բնութին յառաջ շարժեալ իցէ ձախձ աստանօր զգործողութիս իւր առաւել համարձակ —ր- ձեռամբ. և թէ տարորոշեալ իցէ զկազմուածս, Յոյս վե- ոմ բանից կարգ է ասել, այսր աշխարհի մասնա- —րՆԷ ւոր իմն մեծագործութբ. Լերինքն ամէրիկոյ են Լերինք բազում գեր 'ի վերոյ 'ի բարձրութեն քան զլե- ներ. րինս այլոց մասանցն երկրագնտոյս. Նա և դաշտն Քուիթօյի, որ կարէ համարիլ իբր պատուանդան Անտեայ, է առաւել ամբարձեալ 'ի վր ծովու քան զգագաթն փիրէնէից. Աշխէլի գերակայուի Անտեայ, ոչինչ նուազ նշանաւոր վն տարածուեն, այլև վն վերամբարձութեն իւրոյ, ամբարձեալ լենի 'ի զանազան տեղիս աւելի քան զերրորդ մասն 'ի վր փիքօի Թէնէրիֆֆայի, որ է առաւել բարձր երկիր 'ի հին կիսագնտի. Անտեայք՝ մարթ է ասել գրաւորաբար, թէ դնեն կամ թաքուցանեն զգլուխ իւրեանց 'ի մէջ ամպոց. մրրիկք յաճախագոյնս կատաղին, և որոտումն շառաչէ 'ի ներքոյ գագաթանց նց. ուք թէպէտ և յանդիման շառաւիղացն արևու 'ի կեդրոնի այրեցած գօտւոյն՝ ծածկեալ են մշտնջենաւոր ձեամբք :

(5) Բարձրութի կեդրին առաւել ամբարձելոյ 'ի փիրէնէս ըստ մն Քասսինոսի է վեց հազար վեց հարիւր քառասուն և վեց ոտք. բարձրութի լերինն Մ'էմմեայ 'ի խորշին Պէռնայի է տասն հազար հարիւր տասն ոտք. Բարձրուի փիքօի Թէնէրիֆֆայի ըստ չափոյ Հօրն Ֆէօյլլեայ է երեք-

տասն հազար հարիւր եօթանասուն ոտք. բարձրութի Չիմպորացոյ առաւել ամբարձելոյ կէտին Անտեայց է քանհազար երկերիւր ութսուն ոտք. Ճանապարհորդութիւն տն Յօհաննու Ռելլօսյի. բարձրութի այնր մասին Չիմպորացոյ, որ ծածկեալ է մշտնջենաւոր ձեամբ, է երկու հազար չորսհարիւր ոտք. փրէվօթ, ընդհանրական պատմութի ճանապարհորդութեանց :‖

Գեէթ. Յայսց լերանց իջանեն գետք լայնատարածք 'ի համեմատութե. որոց ոչ են համեմատելի հոսանք հնոյ շարունակին եթէ վս երկայնութե ընթացից, և եթէ վս մեծի կուտակութե ջրոյ, որք վերադառնան ընթանալով դէպ Ովկիանոսի. Մարաւնոն, Օրինոքոս Լափլաթա 'ի հարաւային Ամերիկայի, Միսսիսիփփի և սբ Լօրէնցիոս 'ի հիւսիսայնում երթան ընդ այնպիսի ընդարձակ խոխոմս, մինչզի բազմօք յառաջ քան զզգալն զաղդումն ծովու, երևին մնալուանդ այնքան բազուկք ծովու, քան թէ գետք քաղցր ջրոյ :

(6) ‖Ամլ քանզի մասնաւոր ստորագրութին առնէ հզօրագոյն իմն տպաւորութի քան զընդհանրական պատմութիւս, զմինն յայնցանէ տաց զմտակէն Լափլաթայի արարեալ յականատես վկայէ միօջէ. Հայրն Բաթթանէոս Յնեան Սնտոնացի էհաս նաւաւ 'ի Պուէնօս Այրէս յամին հազար եօթնհարիւր քառասուն և իններորդի. և առաջի աճնէ այնպէս զայն զոր ինքն փորձեաց, յորժամ այնք նոր առարկայք յանդիման եղեն նմա զառաջինն 'ի տեսութի.‖ Մինչդեռ կայի ես յԻտալիա, և ընթեռնույի 'ի գիրս վիպասանութե կամ երկրագրութե թէ բերան վտակին Լափլաթայի էր հարիւր յիսուն մղոն 'ի լայնութե, համարէի զայն իբր բարդութի իմն. վս զի յայսմ կիսագնտի ոչ ունիմք մեք զօրինակ այսպիսի մեծամեծ գետոց. Այս մերձենալով իմ յայս բերան ունէի զառաւել բուռն փափաք հաւաս-

տե-

տեսլոյ զճշմարտութիւն աչօք իմովք. և զսի զլրն այնպիսի, որպիսի ներկայացուցեալ էր ինձ. և ես հետեւեցուցանեմ զայն ժամանակօրաբար 'ի պարակայէ միջէ. Յորժամ մեկնիմք մեք 'ի Լիտէոս լեռնէն, որ է ամրոց իմն կայացեալ աւելի քան զհարիւր մղոն 'ի բերանոյ վտակին, և ուր լայնութի իւր երեւելաբար նուազեալ է, նաւեալ լինի զօր մի ողջոյն յառաջ քան զնշմարելն զցամաք 'ի հակադրեալ եզեր. և 'ի լինելն 'ի մէջ գետոյն ոչ է հնար տարորոշել զցամաքն ոչ 'ի միոյ և ոչ 'ի միւս կողմանէ. և ոչ տեսանի այլ ինչ, բայց եթէ երկինք և ջուր. ո՞չ եթէ լեալ էաք յիմիք համատարած Ովկիանոսի. Ո՛նք ճշմարտիւ առեալ էաք փոխանակ ծովու իրիք, եթէ քաղցր ջուրն, թէպէտ և պղտոր իբրև զջուրն փոսի, ոչ էր հաւանեցուցեալ զմեզ լինել գետ իմն. Բայց առ Պուէնոսիւ Այիրեաւ այէք մղոնք հարիւր 'ի վե՛ր գետոյն, և ուր տալաւին ես առաւել անձուկ է, մարթ է տարորոշել զհակադրեալ եզրն. որ է ամենեւին ցածուն և տափարակ. բայց ոչ կարեն տեսանիլ տունք, կամ գագաթունք զանգակատանց 'ի փորթուկէզաց կայանութեն 'ի հաստածին 'ի միւս կողման գետոյն. Մուրաթօրի. Թուղթ. Ի. [illegible]. Նայլն :‖

Լիճք նորոյ աշխարհի ոչինչ նուազ երեւելի են մեծութեամբ քան զլերինս և զգետս. Զիք ինչ յայլ մասունս երկրագնտոյ, որ նմանիցի հրաշալի շղթայից լճաց 'ի հիւսիսային Ամերիկայի. Յատկապէս կարեն կոչիլ ներքին ծովք քաղցր ջրոյ. և ես լիճք երկրորդ և երրորդ դասու են առաւել լայն շրջապատիւ քան զմեծագոյն լիճ հնոյ շարունակին: Լիճք։

Նոր աշխարհն ունի զկերպ իմն նպաստաւոր անսահմանաբար առ շահավաճառական հաղորդակցութիւն. Յորժամ շարունակ ինչ, որպէս Ափրիկէ, բաղադրեալ է յընդարձակ իմն և 'ի ներտ [illegible]

 ղանէ

զանգուածոյ, ոչ խրամատեալ 'ի բաղկէ ծովու, որ ընդմտանիցէ 'ի ներքին մասունս իւր, հանդերձ սակաւ գետովք, և սոքա յերևելի տարակացութեն 'ի միմեանց, մեծագոյն մասն իւր երևի սահմանեալ 'ի միալ զուրկ մշտնջենաւոր 'ի քաղաքական կրթութենէ. և լինել արտաքսեալ մինչ և իցէ յաջողակ և յընդարձակ հաղորդութենէ ընդ մնացելոյ ազգի մարդկան. Յորժամ, զոր օրինակ Եւրոպիա, շարունակ մի բացեալ է յանցից ընդարձակ իմն բաժնի Ովկիանոսի, որպէս Միջերկրականն և Պալթիականն. և յորժամ, որպէս Ասիա, ծովեզրն իւր ընդմիջահատեալ է 'ի խորին խորշից, որք մտանեն յոյժ 'ի ներքս յերկիրն, որպէս սևու ծովն, ծոցքն Արաբիոյ, Պարսից, Պէնկալայի, Սիամու և Դեօթանկայ, յորժամ շրջակայ ծովք լի են բերրի կղզեօք, և նոյն իսկ շարունակն ոռոգեալ է 'ի պէսպիսութենէ նաւարկելի գետոց, մարթէ ասել, թէ այնք կողմանք ունին զայն ամ, որ կարէ դիւրացուցանել զզարգացումն բնակչաց նց 'ի սեռի շահավաճառութեն և ղտուն. Ամերիկա ըստ ամ նկատմանցս այսոցիկ կարէ համեմատիլ ը այլոց մասանց երկրագնտոյս. Խորշն Մէքսիքոյ, որ ընթանայ 'ի մէջ հիւսիսային և հարաւային Ամերիկոյ, կարէ նկատիլ իբր ծովն միջերկրական, որ բանայ ծովային տուրևառութիւն ընդ բոլոր բերրի սահմանաց, յորոց շրջապատեալ է. Կղզիք սփռեալք 'ի նմա են փայլագոյնք միայն քան զկղզիսն Արքիպեղագոսի հնդկայնոյ թուով, մեծութբ և արժողութբ. Երկայնելով զմեզ առ հիւսիսային բաժանումն Ամերիկեան կիսագնտոյն. խորշն Հ. Հէտսոնեանքու առաջի առնէ զընդարձակ իմն մաս, որ ածէ զնաւորդն 'ի ներքսագոյն մասունս գաւառացն արդաւանդեաց և մեծամեծաց. և եթէ երբէք յառաջադիմութեն երկրագործութեն և բազմամարդութեան մեղմացուցէ զխստութի կլիմային յառաւել հիւսիսային սահ-

մանս

մանս Ամերիկոյ, խորշն Հուտսոնու եղելի այնպէս հեշտին առ վաճառականութի յայնմ մասին երկրագնտոյս, որպէս է Բաղդիականն յԵւրոպիա. Այլս մեծ բաժինն նորոյ աշխարհի շուրջ պատեալ է բոլորովին 'ի ծովէ. 'ի բաց առեալ յայնմանէ զմի միայն անձուկ տարածութի երկրի, որ զատուցանէ զԱթլանթեանն 'ի խաղաղականն Ովկիանոսէ. և թէպէտ ոչ է բացեալ յընդարձակ խորշից կամ 'ի բազկէ ծովու, ներքին մասունք իւր եղեալ են մատչելի 'ի բազմութէ յորդառատ գետոց մշտնջենաւոր պահելոց յայնքան զօրավիգն հոսանաց. որք և ընթանան ընդ այնպէս զանազան ուղերձմունս, մինչզի առանց ինչ ստաբութն ձեռին ճարտարութն և արհեստի, մարթ է տանել զներքին նաւարկութն ընդ ամ գաւառն 'ի գետոյն Լավլաթայ ցխորշն Փարիոյ. Այս բարութի բնութն ոչ է ամփոփեալ առ հարաւային բաժանումն Ամերիկոյ. այլև հիւսիսային շրջանակն իւր առատ է գետովք նաւարկելեօք գրեթէ յաղբերակունս իւրեանց. և յիւր անրաւ շղթայէ լճաց բացեալ լինի մուտ առ ներքին իմն հաղորդութի առաւել յառաջացեալ և առաւել հեշտին, քան յորում և իցէ այլում մասին աշխարհի. Գետաքն, որք տարածանին 'ի ծոցոյն Ջարիէնու 'ի միջէ կողմանէ ցծոցն Քալիֆօրնիայի 'ի միւսմէ, և որք կերպաւորեն զշղթայն, որ շաղկապէ զերկուս մասունս Ամերիկեան շրջանակին, ոչ են զուրկք 'ի մասնաւոր շահեկանութեանց իւրեանց. Նոյն նոցա 'ի միջէ կողմանէ ոռոգեալ է յԱթլանթեան Ովկիանոսէ և 'ի միւսմէ 'ի խաղաղականէն. Ոմանք 'ի գետոց նց անկանին յառաջինն. ոմանք 'ի վերջինն. և ապահովացուցանեն նց զամ բարերարութիս շահավաճառականս, որք կարեն ծագիլ նմա, որ ունի զհաղորդութի ընդ երկոսեան:

Իսկ այն, որ տրոհէ զԱմերիկա յայլոց մասանց

Որակ- ըն նա- հանգին երոյ . երկրի, է մասնաւոր որակութիւն կլիմայի իւրոյ, և զանազան օրէնքն, որոց ներքոյ անկեալ է ըստ բաշխման տօթոյ և ցրտոյ. Ոչ կարէ որոշակի սահմանիլ բաժին տօթոյ զգացելոյ յիւրաքանչիւր մասին երկրագնտոյս լոկ չափմամբ հեռաւորութեան իւրոյ 'ի հասարակածէն. 'Ի վր̅ կլիմայի իւրք գաւառի ներգործեն մասամբ իմն ամբարձումն իւր 'ի վր̅ ծովուն, տարածութիւն շարունակին, բնութի̅ գետնոյն, բարձրութիւն ընթերակայ լերանց և այլ բազում պարագայք. Բայց ազդեցութիւն այսպիսի իրաց է 'ի պէսպէս պատճառաց ոչ յոյժ նկատելի 'ի մեծագոյն մասին նախկին շարունակին. և յորժամ ճանաչի կայութիւն իւրաքանչիւր գաւառի իւրոյ՝ կարէ որոշել առաւել ստուգութե̅, թէ որպիսի եղիցի տօթ նահանգին իւրոյ և բնու̅ բերոց իւրոց :

Ամա- -ելութ- բարա- ցերոյ . Ասածք հիմնեալք 'ի վր̅ դիտողութե̅ մերոյս կիսագնտոյ ոչ են մերձեցուցանելի 'ի միւսն. Ընդ առաւել տիրէ ցուրտն. խստութի̅ ցրտային գօտւոյն ծաւալի 'ի վր̅ կիսոյ այնր, որ վ̅ն դրից իւրոց պարտ էր լինել բարեխառն. Գաւառք. ուր խաղողք և թուզք հասունանային, ընդ կէս տարւոյն թաղեալ են 'ի ներքոյ ձեան. և երկիրք կայացեալք 'ի նմին զուգահեռականի ընդ առաւել բերրի և մշակեալ գաւառացն Եւրոպիոյ՝ թմրեալք են 'ի յաւէժական սառանց. որք գրեթէ եղծանեն զզօրութիւն ամենայնին:

(7) ‖ Նոր երկիրն մասն մի նորոյ Սկօցիոյ և Քանատայի են գաւառք կայացեալք 'ի նմին զուգահեռականի լայնութե̅ ընդ թագաւորութե̅ Ֆրանսիոյ. և յիւրաքանչիւրում 'ի նոցանէ ջուր գետոց սառուցեալ է 'ի ժամանակի ձմեռան 'ի թանձրութի̅ զանազան ոտնաչափից. երկիրն ծածկեալ է ձեամբ հաւասարապէս բարձր. գրեթէ ա̅մ թռչունք ցորչափ շարունակէ այս յեղանակ 'ի բաց թռանին 'ի նահանգէն, ուր ոչ կարեն կեալ. Գա-

ւառ

ւանն Էսքիմաուքս մասն Լապրատորայ, և գաւառքն 'ի հարաւային խորշին Հուտսոնու են 'ի նմին զուգահեռականի ընդ մեծին Բրիտաննիայ. և սակայն յամենեսին ցուրտն է այնպէս սաստիկ, մինչզի և ոչ իսկ ճարտարմտութիւն Եւրոպացւոց փորձեաց մուծանել անդր զմշակութիւն:

Եթէ յառաջագէմ լինիցիմք յայն մասունս Ամերիկայ, որք կան 'ի նմին զուգահեռականի ընդ գաւառացն Ասիոյ և Ափրիկոյ՝ որք երջանիկ են վասն միակերպ վայելման բնական երից ջերմութեան, որ է առաւել նպաստաւոր կենաց և ծննդեան, տերունին ցրտոյ շարունակէ զգացուցանել. և ձմեռն՝ թէպէտ և տևէ սակաւ, թագաւորէ յաճախակի վերջին խստութիւ. Եթէ յառաջ խաղասցուք առ Ամերիկեան շարունակաւ յայրեցած գօտին, գտցուք զցուրտն, որ առաւել զօրանայ 'ի նոր աշխարհին. ընդմտանել նաև յայս կողմն երկրագնտոյս և մեղմել անդէն զչափազանցութիւս տօթոյն. Մինչդեռ խափշիկն առ ծովեզերըն Ափրիկոյ խոշտանգեալ է 'ի ներքին իմն տօթոյ, բնակիչն փերուայ շնչէ զօդ իմն հաւասարապէս քաղցր և բարեխառն. և է մշտնջենաբար հովանաւորեալ 'ի ներքոյ խորանի իրիք ամպոց. որք պատսպարեն 'ի տօչորոց շառաւիղացն արևու առանց խափանելոյ զբարեմոյն ազդեցութիւն նր. Առ արևելեան ծովեզերօքն Ամերիկայ՝ կլիմայն թէպէտ և համանման կլիմային այրեցած գօտւոյն յայլ մասունս երկրի, երևելաբար է առաւել մեղմ, քան յայլ գաւառս Ասիոյ և Ափրիկոյ, որք կան 'ի նմին լայնութեան. Եթէ 'ի հարաւային արևադարձէ շարունակեսցուք զճանապարհորդութիւն մեր առ ծագ Ամերիկեան շարունակին, պատահեսցուք սառուցեալ ծովուց, սոսկալի և անբեր գաւառաց. յորս հազիւ թէ բնակին վասն ցրտութեանն. որ անդէն արագագոյնս զգացուցանի քանթէ 'ի հիւսիսի:

Պատճառ ցրտոյն.

Պէսպէս պատճառք զուգաւորին առ ՚ի առնել ըզկլիմայն Ամերիկոյ այնպէս տարապայման զանազան ՚ի կլիմայէ այլոց նախկին շարունակաց. Թէպէտ հեռագոյն տարածութիւն Ամերիկոյ ընդ հիւսիսակողմն տակաւին ոչ է յայտնեալ, սակայն գիտեմք զի այս ձգի առաւել մօտ ՚ի բեւեռն քան զԵւրոպիա կամ քան զԱսիա. Աշխարհքս այսորիկ ունին զընդարձակ ծովս ընդ հիւսիս. որք բացեալ են ընդ մասն ինչ տարւոյն. նաև յորժամ փակեալ են ՚ի սառնէ. Հողմն, որ շնչէ ՚ի վերայ, է նմանապէս ցուրտ քան զայն, որ շնչէ ՚ի վերայ ցամաքի ՚ի մէջ նոյն ամբարձեալ լայնութեանց. Նաև Ամերիկա ցամաքն տարածանի ՚ի գետոյ սրբոյն Լօրէնցիոսի դէպ բեւեռին. և յառաջ խաղայ ընդարձակաբար ընդ արեւմուտս. Շղթայ ինչ վիթխարի լերանց ծածկելոց ձեամբ և սառամբ ձգի ը̄ բովանդակ այս սոսկալի կողմն. Հողմն անցանելով ընդ այսպիսի մեծ միջոց բարձրաբերձ և սառուցեալ ցամաքաց, մնայ այնպէս լցեալ ցրտութեամբ, մինչ զի սաստիկ զխայթողական իմն սրութի. զոր յետոյ պահէ յընթացս իւր ընդ ջերմագոյն կլիմայս. որ և ոչ մեղմանայ բնաւին, բայց եթէ յորժամ դիպի ՚ի խորշն Մեքսիքոյի. Ընդ բովանդակ շարունակն հիւսիսային Ամերիկոյ հողմն հիւսիսոյ և ցուրտ ինչ չափազանց փաղանունանք են մէջ նոյն. Նաև ՚ի ժամանակի տապնապիչ տօթոյ իսկոյն ը̄ փոփոխիլ հողմոյ յայնմ կողմանէ՝ ընդմտանող ազդեցութիւն իւր զգացեալ է անցմամբ ինչք ՚ի ջերմութենէ ՚ի ցրտութիւն ոչինչ նուազ բռնական քան թէ յանկարծական. Առ այս հզօր պատճառ կարէ վերագրել արտաքոյ կարգի նախազօրացումն ցրտոյ, և ուժգին փոխանցումն իւր ՚ի հարաւային գաւառն յայնմ մասին երկրագնտոյ:

Այլք պատճառք ոչինչ ը̄ հաստ նշմարելիք նուազեցուցանեն զներգործական զօրութիւն տօթոյն ՚ի մասունս Ամերիկեան շարունակին, որք են ՚ի մէջ

ա-

արեւադարձից . Ընդ բոլոր լայն գաւառս երկրագնտոյս հողմն շնչէ անպայմանելի ուղերձմամբ յարեւելից յարեւմուտս . Եւ քանզի այս հողմն անցանէ խոտորնակի ընդ նախկին շարունակն , վասն այսորիկ հասանէ 'ի կողմանսն , որք տարածանին առ արեւմտեան ծովեզերբն Ափրիկոյ , բորբոքեալ յամ հրեղէն մասնկանցն , զորս հաւաքեալ է 'ի տապագին դաշտավայրացն Ասիոյ , և 'ի վառեալ աւազոյ Ափրիկեան անապատացն . Ծովեզրն Ափրիկոյ է տեղի երկրի , որ զգայ առաւել զլոց տօթոյ . և է արտադրեալ ոչ մեղմացեալ գոլորշեաց այրեցած գօտւոյն . Բայց սոյն այս հողմն , որ բերէ զայսպիսի իմն անձեցեալ ջերմուն 'ի գաւառսն , որք են 'ի մէջ գետոյն Սենէկալայ և Կաֆրարիոյ , անցանէ ընդ Աթլանթեանն Ովկիանոս յառաջ քան զհասանելն յԱմերիկեան ծովեզրն . Ցրտանայ յանցանելն իւրում 'ի վն այսր համատարած մարմնոյ ջուրց , զի երբեք զեփիւռ իմն զովացուցիչ առ ծովեզերբն Պրասիլեայ և Կուիանայ . և առնէ զգաւառս զայսոսիկ , թէպէտ և 'ի մէջ առաւել ջերմին Ամերիկոյ , բարեխառնս , եթէ զնիցեն 'ի բաղդատութեան ընդ այնց , որք հակադրեալ կան նոցա յԱփրիկէ :

Այս հողմն յառաջ խաղալով յընթացս իւր խոտորնակի Ամերիկոյ պատահի անբաւ դաշտավայրաց ծածկելոց յանընդմտանելի անտառաց , 'ի ճախնոյ , և 'ի լճացեալ ջուրց , ուր ոչ կարէ վերստին ստանալ զերբեմն ինչ աստիճան ջերմութեն . Հասանէ 'ի վախճանի յԱնտեայսն , որք ճղճղկին 'ի հիւսիսոյ ընդ հարաւ ընդ բոլոր շարունակն . և յանցանելն 'ի վն բարձրաբերձ և սառնապատ կատարաց նց՝ ցրտանայ ցայն աստիճան , մինչզի մեծագոյն մասն գաւառացն անդր քան զնն՝ հազիւ թէ զգան զտապն , որում երբեմն ներքոյ անկեալ վն կայսրութեն իւրեանց . Յայլ գաւառսն Ամերիկոյ 'ի հաստատուն երկրէ յարեւմուտս կայ

Սես-

Մէքսիքեան կայսերութեն ջերմութի կլիմային չափաւորեալ է 'ի տեղիս ինչ վն ամբարձման ցամաքի 'ի վր ծովու, և յայլս վն տարապայման գիձուն իւրեանց, և 'ի բոլորեսին վն աՀարկու լերանց սփռելոյ յայնմ տարածութն. Կղզիքն Ամերիկոյ յայրեցած գօտւոջ են կամ փոքրիկք կմ լեռնայինք, և զովանան փոփոխ 'ի մեղմ Հողմոց ծովու և ցամաքի ։

(8. 9.) ‖ Աքօսթա է առաջին փիլիսոփայն, որչափ գիտեմ ես, որ Հնարեցաւ տալ զՀամար զանազան աստիճանացն ջերմութե 'ի Հին և 'ի Նոր շարունակին ներգործութե Հողմոցն, որք շնչեն յիրաքանչիւրումն. Մէջաս. Ամերիկ. Պարոն Պուֆֆօնեանն յարեցաւ յայս տեսականութիւն. և ոչ միայն աճեցոյց զայն նոր դիտողութք, այլ և եդ 'ի գործ զբովանդակ զիւր Հրաշալի ճարտարախօսութին 'ի գեղեցկացուցանել զայն և 'ի դնել 'ի պայծառագոյն լոյս. Բայց մարթ է յաւելուլ յայն զդիտողութիս ինչ, որք դիմեն առ 'ի լիագոյնս պայծառացուցանել զվարդապետութիւն իմն յոյժ ծանրակշիռ յամ Հետազօտութիս պատկանեալս առ խառնուրդ զանազան կլիմայից ։

Յորժամ Հողմ ինչ ցուրտ շնչէ 'ի վր երկրի, պարտի յանցանելն իւրում փոխանցել յինքն 'ի մակերևութե նր զջերմին ինչ տօթոյ նր. Ասորիկ աղագաւ ցրտութի Հողմոյն մեղմացուցանի. Բայց եթէ շարունակեսցէ շնչել 'ի նմին ուղերձման, ժամանեսցէ աստիճան առ աստիճան անցանել 'ի վր լերք մակերևութեի վաղ իսկ ցրտացելոյ. և ոչ ևս կրեսցէ զնուազումն ինչ խստութն իւրոյ. Այսու օրինակաւ մինչ յառաջ խաղայ 'ի վր երկայնաձիգ իմն տարածութն երկրի, բերէ անդր զբովանդակ զառաւել խայթողական խստութի սառին ։

Դնեալ, թէ նոյն Հողմն ձգիցի 'ի վր ընդարձակ իրիք և խորին ծովու, մակերևոյթ ջրոյն իսկոյն ցրտանալոց է յորոշեալ իմիք աստիճանի, և Հողմն

ջեր-

ջերմանալոյ ըստ չափակցութեան. Այլ ջուրն մակերևութական և առաւել ցուրտ՝ լինելով մասնաւորաբար առաւել ծանր քան զջերմագոյն ջուրն, որ 'ի ներքոյ ստոր իջանէ, և այն, որ է առաւել ջերմ մտանէ 'ի տեղի նր. և այս փոփոխակի յորժամ ցրտանայ՝ տակաւին ջերմացուցանէ զօդն, որ անցանէ 'ի վերոյ. կամ նուազեցուցանէ զցրտութիւն նր. Այս փոփոխութիւն մակերևութական ջրոյ, և այս յաջորդական նկատողութիւն յերեսս առաւել ջերմ ջրոյն, և յաջորդական նուազումն ցրտութեան յօդն, օժանդակեալ են 'ի յուզմանէ պատճառեցելոյ ի ծովու 'ի մեքենական ներգործութենէ հողմոյն, նաև 'ի շարժմանէ տեղատուութեան և մակընթացութեան. Այս շարունակեսցէ, և խստութիւն հողմոյն տևեսցէ նուազիլ, մինչև բոլոր ջուրն իցէ այնչափ ցրտացեալ, զի ջուր մակերևութին ոչ ևս ընդ երկար 'ի բաց շարժեսցի 'ի ներգործութենէ բաւական երագ հողմոյն առ 'ի խափանել զայն 'ի պնդանալոյ 'ի սառն. Հաւաստի թէ սառնու մակերևոյթն, հողմն ոչ ևս ջերմացեալ է 'ի ջրոյն, որ 'ի ներքոյ. և ձգի յառաջ յարակայ իւրով ցրտութեամբ:

Այսոքիկ սկզբամբք կարէ մեկնիլ խստութիւն սառանց ձմեռան յընդարձակ շարունակսն. չափաւորութիւն նց 'ի փոքրիկ կղզիսն, և մեծագոյն սաստկութիւն ձմեռան յայն մասունս հիւսիսային Ամերիկոյ. զորոց լաւ ևս տեղեկացեալ եմք. 'Ի հիւսիսային արևմտեան մասունս Եւրոպիոյ խստութիւն ձմեռան մեղմացեալ լինի յարևմտեան հողմոց, որք շնչեն յոլովակի յամիսն նոյեմբերի, դեկտեմբերի և 'ի մասին ինչ յանուարի:

Յայլմէ կողմանէ յորժամ հողմն ինչ ջերմ շնչէ 'ի վր ցամաքի ջերմացուցանէ զմակերևոյթ նորա. որ վս այսորիկ դադարի 'ի նուազելոյ զեռանդն հողմոյն. Այլ նոյն հողմն շնչելով 'ի վր ջրոյ յուզէ զնա. բերէ 'ի վեր զջուրն առաւել ցուրտ,

որք

որ 'ի ներքոյ. և այսպէս անընդհատ երթալով երթայ և կորուսանէ զաստիճան ինչ սեպհական ջերմութեն իւրոյ. Բայց մեծ զօրութիւն ծովու առ 'ի մեղմել զջերմութիւն հողմոյ կամ օդոյ, որք անցանեն 'ի վ՟ր, յառաջգայ 'ի հետագայ պարակայէ. այս է, զի պատճառաւ ընդունացանողութեն ծովու՝ մակերևոյթ նր՟ ոչ կարէ լինել մեծապէս ջերմացեալ 'ի շառաւիղացն արևու, ուր հողն ներքոյ անկեալ ազդեցութեն նր՟ ստանայ վաղվաղակի ըղբաղում ջերմութիւն. Սա այսօրիկ յորժամ հողմն շնչէ 'ի վ՟ր այրեցած իրիք շարունակի, նոյնհետայն անցանէ առ ջերմութիւն ինչ իբր անհանդուրժելի. բայց յանցս իւր 'ի վ՟ր ընդարձակ իրիք Ովկիանոսի ցրտանայ աստիճանաբար. այնպէս զի 'ի հասանելն իւրում առ հեռագոյն ծովեզր, է վերստին յարմար շնչառութեան:

Սոյն այս սկզբունք ծառայեսցեն փոխանակ պատճառի վ՟ր տագնապիչ տապոց մեծամեծ շարունակաց այրեցած գօտւոյն, վ՟ր զուարճալի կլիմայի կղզեացն 'ի նմին լայնութեն, և վ՟ր վերնագոյն տօթոյ յամառան, յոր մեծամեծ շարունակք կայացեալք 'ի բարեխառն կամ 'ի ցրտագոյն գօտիս վայելեն յորժամ բաղդատիցի ընդ ջերմութեն կղզեացն. Տօթ իրիք կլիմայի կախի ոչ միայն յանընդմիջական արտադրութենէ շառաւիղացն արևու, այլև 'ի շարունակ ներգործութենէ նր՟ 'ի վ՟ր գործոյն, զոր վաղ ինկ յառաջ ածեալ են. և որ առ ժամանակ ինչ մնայ յերկրի. Այս է պատճառն, յոյր սակս ա՟ւն է առաւել տօթ զերկու ժամու զկնի միջօրէին. և ամառն առաւել տօթ յամսեանն յուլիսի, և ձմեռն ցրտագոյն շուրջ զկիսովն յանուարի:

Անտառքն, որք ծածկեն զԱմերիկա, և արգելուն զշառաւիղս արեգական 'ի ջերմացուցանելոյ զերկիրն՝ են մեծ պատճառ բարեխառն կլիմայի հասարակածի կողմանցն. Երկիրն ոչ գոլով ջերմա-

ցեալ

ցեալ ոչ կարէ ջերմացուցանել զօդն. և տերևքն, որք ընդունին զճաճանչս յափշտակեալս յերկրէ, ոչ ունին զդանդաղած ինչ նիւթոյ բաւական առ 'ի ծծել զջերմութին ըստ բաւականի. Բաց յայսմանէ ամենևին քաջայայտ է, թէ կարողութին ամեթական իրք տնկոյ պատճառէ զարտաշնչումն ինչ 'ի տերևոցն չափակցեալ ընդ ջերմութեանն, որում ենթարկեալ են նոքին. և վն բնութեան գոլորշեացն այս արտաշնչումն յառաջածէ 'ի տերևն զցրտութի իմն չափակցեալ ընդ նմին արտաշնչման. Ըստ այսմ արտադրութի տերևոյն 'ի ջերմացուցանել զօդն 'ի հպմանէ նորա հրաշապէս նուազեալ է. Այս պարտական եմ տն Ռոպիսոնի անգղիական բարեկամի իմում և ուսուցչի բնական փիլիսոփայութե 'ի համալսարանին Էտիմպուրկայ՝ վն այսց գիտողութեանց, որք լուսաւորեն միշտ առաւել զայսպիսի իմն հետաքրքրական նիւթ:

Կլիմային Պրասիլիայ ստորագրեալ է յերկուց գերագանց բնագննից 'ի Փիսոնէ և 'ի Մարկրաւիոսէ. որք նշմարեցին զայն այնու իմաստասիրական խնամոտութե, որում մեք կամեաք պատահիլ նաև 'ի տեղեկութիս այլոց բազմաց գաւառացն Ամերիկա. Առաջի առնեն զայն երկոքեան հաւասարապէս բարեխառնեալ և հաճոյական 'ի բաղդատութե կլիմային Ամերիկոյ. Ներագրեն զայս նախապետաբար զօդ հողմոյ, որ հանապազորդ գայ 'ի ծովէ. Օդն ոչ միայն ցուրտ է, այլև սառուցեալ 'ի գիշերի. այնպէս զի ազգայինք լուցանեն յամ երեկոյի հուր 'ի հիւղս իւրեանց. Միէվհօֆ, որ նստաւ յերկար ժամանակ 'ի Պրասիլէ, հաստատէ զստորագրութի նց. Կումիլլա, որ եկաց զբազում ամս յայնմ գաւառի առ ծովեզերբն Օրենօքու, տայ մեզ զնմանակ իմն ստորագրուե բարեխառնութե կլիմային. Հայրն Աքուկնա զգաց զաստիճան իմն ցրտոյ յոյժ նշանաւոր 'ի գաւառսն առ ափամբ գետոյն Ամազոնեաց. Տէրն Պիէթ,

որ

որ յաճեաց ընդ երկայնագոյն ևս ժամանակ 'ի Բահիէնիա, առնէ զհամանման իմն պատմութիւն զօրպիսութէ այնր կլիմայի. և վերագրէ զայն նմին պատճառի. Այլ իմն կարէ լինել առաւել տարբեր յայսց ստորագրութեանց քան զայն զոր ետ տէրն Ստանսօն զվառեալ ջերմութէ Ափրիկեան ծովե-զեր. Դաշտավայրութենէն առ Սենէկալ:

Բուռել աճեռն և առաւել հաւանական պատ-ճառ այսր վերնագոյն աստիճանի ցրտոյ դէպ 'ի հարաւային ծագն Ամերիկոյ երևի թէ իցէ ձեն այնր շարունակի. 'Ի լայնութն նուազի աստիճանաբար 'ի տարածանիլն 'ի սկզբն Անտօնիոսէ ը կողմն մի-ջօրէի. և 'ի խորշէն սկզբն Յուլիանու ցնեղուցն Մաճելլանու չափմունք իւր ամփոփին յոյժ. Յա-րևելեան և յարևմտեան մասանց ոռոգեալ է յԱթ-լանտեան և 'ի Խաղաղական Ովկիանոսաց. 'Ի Հարաւային կետէ իւրմէ հաւանական է, թէ ծով իմն բացարձակ տարածանիցի մինչև ցհակարջային բևեռ. Յորում և իցէ յայսց ուղերձմանց շնչի-ցէ հողմն, ցրտացեալ է յառաջ քան զմերձիլն 'ի Մաճելլանեան գաւառան, անցանելով 'ի վր ա-հագին իմն մարմնոյ ջուրց. և ոչ իսկ ցամաքն է յայնքան տարածութն, որ կարասցէ վերստա-նալ զերևելի իմն աստիճան ջերմութն 'ի յառա-ջագիմութն իւրում 'ի վերայ նորա:

Այս պարագայք զուգընթաց լինին առ 'ի առնել զխառնուած օդոյն յայսմ նահանգի Ամերիկոյ մա-նաւանդ նման բարեխառնութն իւիք կղզւոյ, քան թէ խառնուածոյ իւիք շարունակի. և արդելուն գնա 'ի ստանալոյ զնոյն աստիճան ջերմութն ա-մառան, զոր ստանան տեղիքն 'ի յԵւրոպիա և յԱսիա կայանորեալք 'ի համապատասխանօղ իմիք հիւսիսային լայնութն. Հողմն հիւսիսոյ է միայն, որ հասանէ յայս մասն Ամերիկոյ յետ քարշելոյ 'ի վր մեծի իրիք շարունակի. Բայց զօրութ ու-ժագին ինչ նշմարման գրեց իւրոց տեսանիցի, թէ

այս

այս դիմէ մանաւանդ 'ի նուաղեցուցանել քանիցս յաճեցուցանել զաստիճան ջերմութեն. Հիւսիսային ծագն Ամերիկոյ է յատկապէս աւարտումն անբաւ գագաթանն Անտեայց, որ ձգի գրեթէ ուղիղ գծիւ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ ը̅ ամբողջ տարածուի շարունակին. Առաւել վառեալ կողմանքն 'ի մէջ Հարաւային Ամերիկոյ, Կուիանա, Պրասիլէ, Փարակուայի և Թուքուման կան բաղում աստիճանօք ընդ արևելս կողմանցն Մաճելլանեանց. Տափարակ դաւառն Փէրուայ, որ վայելէ 'ի ջերմութիս արևադարձից, երևելապէս կայացեալ է ընդ ազդմունս նց̃. Այս ուրեմն հողմն հիւսիսային, թէպէտ և շնչիցէ 'ի վր̃ ցամաքի, ոչ բերէ առ հարաւային ծագն Ամերիկոյ զաճումն ինչ ջերմութեն հաւաքեցելոյ յանցանելն իւրում 'ի վր̃ այրեցած կողմանցն. բայց յառաջ քան զհասանելն անդր՝ պիտոյ է նմա քարշիլ 'ի վր̃ ծայրից Անտեայց, և տոգորիլ 'ի ցրտոյ այնր սառուցեալ երկրի: ‖

Պատճառք չափազանց ցրտոյ դէպ հարաւային սահմանացն Ամերիկոյ, և 'ի ծովս անդր քան զնն ոչ կարեն նշանակիլ հաւաստապէս հաւանական իմն եղանակաւ. Ընդ երկար ժամանակ ենթադրեալ եղև, թէ ընդարձակ իմն շարունակ տրոհեալ անուամբ հարաւային անծանօթ երկրի, գտանիցի 'ի մէջ հարաւային ծագին Ամերիկոյ և հակարջային բևեռին. Նոյն սկզբունքն, որք զօրեն վս̃ անսովոր աստիճանի ցրտոյ 'ի հիւսիսային կողմանսն Ամերիկոյ, 'ի գործ ածեալ եղեն առ 'ի մեկնել ըզցուրտն, որ զգացեալ է 'ի Քափօ Հօռն և 'ի մերձակայ դաւառսն. Անբաւ տարածութի̃ հարաւային շարունակին, և սառնամ գետքն, որք անտի անկանին 'ի յՈվկիանոսն, յիշատակեալ էին և ընկալեալ 'ի փիլիսոփայից իբր պատճառս բաւականս յառաջ ածելոյ զանսովոր զգայութն ցրտոյ, և զմիշտ առաւել արտաքոյ կարգի երևումն սա-

ռու-

ուցեալ ծովուց յայնմ կողման երկրագնտոյս. Բայց այն երեւակայական շարունակն, որում առագրեալ լինէր այնպիսի իմն ազդեցութի, գոլով խնդրեալ 'ի զուր. և միջոցն, որ ենթադրեալ էր տեղակալել, գոլով գտեալ լինել բացարձակ իմն ծով, 'ի դէպ է կերպաւորել զնոր բաղարկոցուն Նկատմամբ պատճառացն որակութեն իւրք կլիմայի այնքան տարագան եղելոյ յայնմանէ, զորոյ զփորձ առնումք 'ի հեռաւոր գաւառն 'ի նմին տարակացութեան հակադրեալ բեւեռին:

(10) Երկու նաւք փրեգատք անուանեալք Գաղղիացիք առաքեալ եղեն 'ի ճանապարհորդութի իմն երկրածանօթութեն յամին 1739. 'Ի հարաւային լայնութեն 44, սկսան գտալ զերեւելի իմն աստիճան ցրտոյ. 'Ի լայնուն 48, պատահեցան կղզեաց սառին ծփելոց 'ի վր ալեաց. Աշխր. նաւորդ. ատ հարաւային երկիրս. Վարդապետն Հալլէյ դիպեցաւ սառին 'ի լայնութեն 59. Հրամանատարն Գուքն յորժամ եղև 'ի վր ծովեզերն փաթակոնիոյ 'ի հարաւային լայնութեն 50. 33. 'ի վեշտասանն դեկտեմբերի, որ է ամառնամէջ յայնմ մասին երկրագնտոյ, 'ի քսան և մին դեկտեմբերի գոլով անդէն տիւն երկայնագոյն, համեմատէ զկլիմայն կլիմային Անգլիոյ 'ի ձմեռնամիջի. Ճանապարհորդ. [illegible]. Տէրն Պանքս գոլով մերձեցեալ յերկիրն Ֆուէկոյ 'ի խորշին բարեյաջողութեն 'ի լայնութեն 55. 'ի 16. յանուարի, որ համեմատի ամսեանն յուլիսի 'ի մերում կիսագնտի. երկուքն 'ի հետևողաց իւրոց կորեան վասն ծայրագոյն ցրտութեն. և բովանդակ հետևակն գտաւ յեւս ծանրագոյն վտանգի մեռանելոյ: Ընդ չորեքտասանն մարտի, որ համեմատի սեպտեմբերի 'ի մերում կիսագնտի, ձմեռն արդէն յառաջացեալ էր մեծաւ խստութի. և լերինքն անձանէքն ծածկեալ ձեամբ. Անդէն:

Յետ նկատելոյ զայսոսիկ յարակոյ և յատկել

 որ-

արդիւնութիւն Ամերիկեան ցամաքին, որք յա- Յորում
ռաջ գան 'ի մասնաւորութենէ կայանութեան իւրոյ պայմա-
և 'ի տրամադրութենէ մասանց իւրոց. առաջին ա- նի էր,
ռարկայն, որ արժանի է հետազօտութեան, այն է, յաղթեալ
թէ որպիսի էր պայման իւր յորժամ զառաջինն զառա-
յայտնեալ եղև, ըստ որում նոյն պայմանն կա- ցջնն
րէր կախիլ 'ի ճարտարութենէ և 'ի գործողութենէ գործա-
մարդոյ. Արդիւնք մարդկեղէն ճարտարմտութեան և ելև,
աշխատանաց են առաւել տարածեալ և առաւել
երևելի քան զոր ունայնութիւն մեր իցէ ընդունակ
պատկերակերպելոյ զնն. Յորժամ նկատեմք մեք
զերեսս բնակ երկրագնտոյ, ամ, թէպէտ և գոյն
մասն այնր բերրիութեան և գեղեցկութեան, զոր վե-
րագրեմք ձեռին բնութեան, է գործ մարդոյ. Զանք
իւր, յորժամ ցամաքեալ են յաջորդութ իւրք
դարուց, փոխեն զերևոյթն և բարեգունացուցա-
նեն զօրութիւն երկրի. Մեծ մասն հնոյ ցամա-
քին կալեալ է յազգաց յոյժ զարգացելոց յարհեստս
և 'ի ճարտարութիւնս. և վն այսօրիկ աչք մեր սո-
վոր է տեսանել զերկիրն յայն կերպարան, զոր
առնու լինքն, յորժամ յարմարեցուցեալ է առ
'ի լինել հանգրուան յոգնութեան իմն ազգատոհմի
մարդկան, և առ 'ի մատակարարել նց զսնունդ:
Բայց 'ի նոր աշխարհին վիճակ մարդկային ազգի Նշաւակ
էր բիրտ, և տեսիլ բնութեան մեծապէս զանազան. Եւ որ
'ի բովանդակ ընդարձակ կողմանս իւր էին միայն և ան-
երկու միապետութիւնք նշանաւորք վն ընդարձակութե գործ.
սահմանացն, և տրոհեալք զարգացմամբ իւիք 'ի
սեռի մշակութեան. Մնացեալ ցամաքն այն ժա-
ռանգեալ էր 'ի փոքրիկ անկախ ցեղից զուրկ ե-
ղելոց յարհեստից և 'ի մտավարժութենէ, և անըն-
դունակ ուղղելոյ զպակասութիւս և անտարբեր 'ի բա-
րեգունացուցանել զպայման այնր մասին երկրի շնոր-
հեալ նց 'ի բնակութիւն. Գաւառք կալեալք յայս-
պիսի ազգէ էին գրեթէ 'ի նոյն վիճակի, որպ եթէ
լինէին առանց մարդոյ. Ընդարձակ անտառք ծածկէին

զմեծ տարածութիւն այնր անգործ երկրի. և քանզի ձեռն ճարտարութեան ոչ էր ցուցեալ գետոց ընթանալ 'ի խոխոմս իւրեանց, կամ ցամաքեցուցեալ զճահիճացեալ ջուրս, բազումք յարգաւանդագոյն դաշտավայրաց հեղեղեալ էին յորդութեամբ ջուրց, կամ փոխարկեալ 'ի ճախինս. 'Ի հարաւային գաւառսն, ուր ջերմութիւն արևու, խոնաւութիւն կլիմայի և բարութիւն հողոյն ընծայեցին 'ի պարզել զկորովագոյն ոյժս առոյգութեան, անտառք են այնպէս հեղձուցեալք 'ի յուռացեալ սաղարթելոյ նոցա, մինչև եղանել գրեթէ անընդմատանելի. և երեսք երկրի ծածկեալ են յաչաց 'ի ներքոյ թանձր ծածկութեան մոլախոտոց և շառաւիղաց. Յայսպիսի վիճակի զեղխեալ և ոչ օգնեալ բնութեան մեծ մասն ընդարձակ գաւառացն հարաւային Ամերիկոյ, որք տարածանին 'ի ստորոտէ Անտեայց մինչև ցծովն, տակաւին տկարանան. Հատուածք Եւրոպացւոց ջնջեցին զանտառս և մշակեցին զսակաւիկ ինչ տեղիս առ ծովեզերբ. բայց սկզբնական բնակիչքն միշտ առաւել սուղ և անհոգք ստունգանեցին բնաւ զայն ամ, որ պիտոյ էր 'ի մաքրել և 'ի բարեգունացուցանել զերկիր մի, որ ստացեալ ունի գրեթէ զամ առաւելութիւնս կայաւորութեան և կլիմայի. Յառաջ խաղալով դէպ հիւսիսային գաւառացն Ամերիկոյ, բնութիւն շարունակէ ցուցանել զնոյն ագեղ կերպարան. և ըստ չափուն, որով աճէ խստութիւն կլիմային, երևի ինքն առաւել անշէն և առաւել սոսկալի. Անդանօր անտառքն թէպէտ և պաշարեալք 'ի նոյն զեղեալ ամեթացմանէ, ունին զհաւասար տարածումն անբաւութեան. սքանչելի ճախինք ծաւալին ընդ դաշտավայրսն. և հազիւ ուրեք երևին նշանք մարդկային գործունէութեան 'ի թեակոխել մշակել կամ յարդարել զերկիրն. Ոչ է մեծ ինչ, եթէ հատուածքն առաջեալք Եւրոպիոյ հիմնային յառաջին մուտն 'ի նոր աշխարհ. որ 'ի սկզբանէ ե-

երևեցաւ նմա ահագին, անշէն և անհաճոյ. Յոր-
ժամ Անգղիացիք սկսան կայուն առնել յԱմերիկա,
կոչեցին զգաւառն զայնոսիկ, զորոց առնոյին ըզ-
ժառանգութիւն, անապատս. Եւ այլ ինչ, բայց
եթէ ագահ անհնարութեան գտանելոյ զհանքս ոս-
կւոյ կարէր ներածել զՍպանիացիս ընդմտանել
յանտառս և 'ի ճահիճս Ամերիկոյ. որ նկատէին
յամ քայլս զվերջին աղքատութիւն 'ի մէջ ան-
գործ երեսաց բնութեան, և 'ի մէջ այնր, զոր առա-
նայ 'ի ներքոյ վերաստեղծիչ ձեռին ճարտարութեան
և արհեստի։

(11) Վարոն Քոնտամինէ է մինն 'ի վերջին և
յառաջել խնամոտ դիտողաց ներքին վիճակի հա-
րաւային Ամերիկոյ. Յետ խզանելոյ յԱնտեայցն,
ասէ, տեսանի համատարած իմն և միակերպ տե-
սարան ջուրց և դալարեաց, և ոչինչ այլ աւելի.
Երկի զգնալ 'ի վերայ երկրի. բայց այս ոչ երևի,
գոլով այնպէս բոլորովին ծածկեալ յամենայնա-
անկոց, խոտոց և թփոց, մինչզի անրաւ աշխա-
տութի պիտեր մեզ 'ի մաքրել զայն, եւ և ընդ
միջոց միոյ ոտնաչափի. Սինն 'ի յեզականութեանց
յանտառն է տեսակ իմն ուռեաց կոչեցելոց պէյու-
քօս 'ի Սպանիացւոց, և լիանէս 'ի Ֆրանսէզաց.
և նմանապէս յԱնգղիացւոց. որք յԱմերիկա հա-
սարակաբար 'ի կիր արկեալ են փոխանակ առա-
սանաց. Այս տունկ պատատի զծառովք, ուր գը-
տանի. և ամբառնալով 'ի վերայ բարձրագոյն ճիւ-
ղոց նորա, փափուկ ծայրք իւր իջանեն զառ 'ի թափ,
մտանեն 'ի հող, անդէն արմատանան, և աճեն
շուրջ զայլ իմն ծառով. և այսպէս ելանեն և ի-
ջանեն փոփոխ. Այլք ծայրք խոտորնակի տարեալ
են 'ի հողմոյ, կամ 'ի պատահմանէ իմիք. և կեր-
պաւորեն զշփոթութիւն ինչ իբր շուանաց փաթու-
թելոց, որք նմանին պատրաստութեան իրիք նաւու.
Պրոտեսոֆըր Վինտա. Բնա. Կոմսանդայ. Այս ուռիք
են երբեմն ստուարք իբր բազուկ մարդոյ. Պատ-

մութի մն Պոուկուէրայ զանտառացն 'ի Փերու նմանի կատարելապէս այսմ ստորագրութեան. Ովիէտոս տայ զնմանակ իմն ստորագրութե զանտառացն յայլ մասունս Ամերիկոյ. Գաւառն Ա՛զբօօսաց է այնչափ հեղեղեալ, մինչզի պարաւանդեալ են դադարիլ 'ի վն դագաթան բարձրաւանդակ ինչ հողոյ ընդ մասունս ինչ տարւոյն առանց ունելոյ զհաղորդութի ընդ հայրենակցաց իւրեանց յորում և իցէ տարակացութեան. Խուղէ. Ճիօղնոյլէ. Կարծիս տայ մեզ գլխագոյն և զարդար ստորագրութի գետոց, լճաց, անտառաց և ճախնոց այնց գաւառացն Ամերիկոյ, որք կան 'ի մէջ արևադարձից. Անհաւատալի անձկութին, յորս վտանգեցաւ Կօնծալէզ Փիծծարօ 'ի փորձելն առնել զշու իմն 'ի ներքս գաւառին ընդ արևելս կուս Անտեայց՝ տան մեզ զապշեցուցիչ իմն գաղափար զայնմ մասնէ Ամերիկոյ, 'ի սկզբնական և յանգործ վիճակի իւրում։ ‖

Անառողջարար. Աշխատութի և գործողութիք մարդոյ ոչ միայն ողորկեն և գեղեցկացուցանեն զերկիր, այլ և առնեն զնա առաւել առողջարար և օգտակար կենաց. Յորժամ երկիր իմն զինչ և իցէ՝ կայ բարձթողի եղեալ և զուրկ 'ի մշակութէ՝ օդն գանդաղամած լինի յանտառս, նեխեալ գոլորշիք ելանեն 'ի ջուրց, մակերևոյթ երկրի ծանրացեալ 'ի կարի իմն ուռճացմանէ ոչ զգայ զմաքրարար ազդեցութի արեգական. չարութի հիւանդութեանց բնականաց կլիմային աճէ. և ծնանին նորանոր ախտք անսահմանարար ապականիչք. Նմին իրի ամենայն գաւառք Ամերիկոյ յառաջնում նուաճի, յորժամ ծանուցեալ եղեն, փորձեցան նշանաւորարար անառողջարարք 'ի Սպանիացւոց յամառաքման իւրեանց 'ի նոր աշխարհն՝ սահմանեալ վն տիրապետութե, կամ վն բազմամարդութե. Թէպէտ և վն բնական կազմուածոյ մարմնոց իւրեանց, վն ունակական խառնուածոց իւրեանց, և

վն

մէ յորակայ կորովութեան մնաց իւրեանց էին կերպարանք որպէս զի և իցէ այլ ժողովուրդ Ամերիկոյ առ 'ի կարող լինել ծառայել նաև 'ի ներքոյ տապացեալ իմն կլիմայի. սակայն պարտ եղեն նց կրել բազում վնասուց զմահաբեր և զվտանգաւոր որակութիս այնց անվար կողմանց, ընդ որ անցանէին, կամ ուր նախահօրայլն տնկեալ ըն-հատուածս. Յոլովք բարձեալ եղեն 'ի կենաց յանծանօթ և 'ի բուռն ախտէ, որք վարակեցին զնոսա. Այնքա որք կենդանի մնացին յետ ապականարար մոլեգնութեան տարափոխիկ ախտին, ոչ եղեն զերծ 'ի չար արտադրութեանց կլիմային. դարձան յԱմերիկա ըստ գծագրութեան առաջնոց վիպասանից Սպանիացւոց տկարք և ծնգեալք, վատեալ հայեցուածովք և դեղնեալ մարմնով. որ ցուցանէր զանառողջարարութիւն գաւառացն. ուր կացեալ էին:

Նոր աշխարհն ոչ մշակեալ ապականէր ոչ միայն զօդն, այլ և զորակութիս բերոց իւրոց. Նորեւ թէ կենդանական սկիզբն լեալ իցէ անդէն նուաղ կորովի և նուաղ գործօնեայ քան թէ 'ի նախկին շարունակին. Զանգերձ մեծ տարածութեան Ամերիկոյ և պէսպիսութեան կլիմայից իւրոց՝ զանազան տեսակք շնչաւորաց նմա մասնաւոր եղելոց են առաւել նուաղք բաղդատութեամբ գաւառացն այլոյ կիսագնտոյ. Ի կղզիսն էին միայն չորք ազգք չորքոտանեաց ծանուցելոց. որոց մեծագոյնն ոչ առաւելոյր զմեծութեամբ փէյէնկերի. Ի շարունակին պէսպիսութիւն էր մեծագոյն. և թէպէտ անհատք իւրաքանչիւր տեսակի ոչ կարէին պակասիլ 'ի բազմանալոյ յանբաւս, ոչ լինելով խանգարք 'ի մարդկանէ, որք ոչ էին այնպէս յոգնաթիւ, կամ այնպէս միաւորեալք յընկերութիւն՝ լինելոյ աշխարհի թշնամի շնչաւոր արարածոց. սակայն քանակութիւն զանազանեալ տեսակացն պարտի նկատիլ միշտ իբր փոքրիկ. Յերկերիւր ցեղից զանազան շնչաւորաց սփռելոց 'ի մէջ

Շնչա-ւորք Եւր.

երկրի միայն շուրջ երրորդ մի կային յԱմերիկա 'ի ժամանակի յայտնութեան իւրոյ. Նուեմին, որ էր նուաճող զաւակագործ 'ի նոր աշխարհին, երևի լինել լեալ նաև նուազ ուժեղ 'ի բերս իւր. Ընչաւորք սկզբնաւոր սեպհականք այնմ մասին երկրագնտոյ երևին լինել վայրագոյն կարգի. և ոչ այնպէս կորովիք, և ոչ այնպէս ամեհիք իբրև զչնչաւորս միւսոյ շարունակին. Ամերիկա ոչ գոյացուցանէ զէակս այնպիսի մեծութեան, որ համեմատեսցի փղի, կամ ռնգեղջեր. և որք համասարցին առիւծու և վագեր 'ի զօրութեան և 'ի գազանութեան. Թուականքն Գրասիլեայ չորքոտանի առաջնոյ մեծութեան 'ի նոր աշխարհին ոչ է աւելի մեծ քան զփոքրիկ որթ մի վեցամսեայ. Փումայ և յակուար իւր գժնէագոյն գազանքն որսոյ, զորս Եւրոպացիք ոչ յոյժ խնամառութեամբ առիւծունս և վագերս կոչեցին, ոչ ունին զորտեղ ուժգնութեան առաջնոցն և ոչ զնոյնպէս գժնէութիւն երկրորդացն. Են ամենապղերգք և երկչոտք, և հազիւ ահարկուք մարդոյ. և սակայ դարձուցանեն զթիկունս առ փոքր ինչ երևումն ընդդիմակայութեան:

(11) Ընչաւորքն Ամերիկոյ ոչ երևի, թէ լեալ իցեն միշտ վայրագոյն մեծութեամբ քան զայլոց մասանցն երկրագնտոյս. Գտեալ եղև երևելի թիւ քանակութ ոսկերաց տարապայման մեծութեամբ մերձ 'ի ծովափունս Օհիու. Տեղին, ուր այս գիւտ արարեալ եղև, կայ իբր հարիւր յիսուն մղոն սորա լծակցութեան Ճխտոս գետոյն ընդ Օհիու, և է իբր չորս մղոն բացակայ յափանց վերջնոյն 'ի կողմանէ ձախմին կոչեցելոյ Քենթէքեան աշխարհին. Ոսկերքս այսոքիկ կան 'ի մեծ քանակութեան իբր հինգ կամ վեց ոտնաչափ 'ի ներքոյ հողոյ. և յատակն երևելի է 'ի ծովեզերն առ ափամբն Լիքայ, Օրինաւորեալն հաղորդագրեալքն Գիւեգոյ Պրոֆէսորին. Ձեռագիրն կայ առ իս. Այս կատոր երկրի երևի, թէ խնամով իցէ գծագրեալ յԱնգղիոյ յաշխար-

խառնացուցի իւրում. Այս ոսկերք պարտին լինել ընչաւորաց տարապայման մեծութեք. և բնաշնինք ոչ լինելով տեղեկացեալք զնմանակ արարածոց, եղեն 'ի սկզբան անդ պատրաստեալք 'ի խորհիլ, թէ էին գոյացութիւնք հանքայինք. Յետ ընդունելոյ զմեծագոյն թիւ առհաւատչէից 'ի պէսպէս մասանց երկրի, և յետ աննելոյ զառաւել ուշադիր իմն զիտողութիւն, ասի այժմ, լինել ոսկերս կենդանեաց իրիք. Իսկ քանզի փիղն է մեծագոյն 'ի չորքոտանեաց ծանուցելոց, և ժանիքն, որք գտեալ եղեն, նմանին անվթար 'ի կերպն և 'ի յորակութե ժանեաց փղի, կրկնեցաւ, թէ ոսկերոտին աւանդեալ 'ի դետն Օհիոս էր յայնմ տեսակէ. Բայց վարդապետն Հունթեր՝ մի 'ի յանձանց դարուս մերոյ առաւել ընդունակ բարուք վճիռ հատանելոյ նկատմամբ այսր յօդուածոյ, զոլով քննեալ զզանազան մասնիկս ատամանցն, եւս և զծնօտականացն, և զնոյն իսկ ծնօտս առաքեալս 'ի Օհիոս 'ի Լոնտրա, տայ զայնմանէ զկարծիս իւր. և դնէ, թէ ոչ պատկանին առ փիղ իմն, այլ առ անհեթեթ իմն գիշակեր ընչաւոր յանծանօթ տեսակէ. Մնացուածք Փղաց. Նոյն ազգ ոսկերաց և հաւասարապէս նշանաւորք վն մեծութեն իւրեանց՝ գտեալ եղեն մերձ 'ի բերանսն մեծամեծ գետոցն Օպի, Յենիսեա և Լենա 'ի Սիպերիա. փիղն երեւի թէ լցէ սահմանաւորեալ յայրեցած գօտւոյ. և թէ ոչ բազմանայցէ երբէք արտաքոյ նր. 'Ի ցրտային կողմանսն, ուր յայնս, որք սահմանակից են սառուցեալ ծովուն, նա ոչ կարէր կեալ. Գոյութիւն այսպիսի մեծամեծ ընչաւորաց յԱմերիկա կարէր բանալ զընդարձակ իմն դաշտ բաղարկացութեան. Որչափ առաւել նշմարին երեսք բնութե, և նկատի պէսպիսուն բերոց իւրոց, այնչափ առաւել պարտիմք մնալ յաղթահարեալք 'ի վի սքանչելի փոփոխութեցն, որք եղեալ են 'ի հողագնդոյս գնտի պատճառաւ խռովութեց և ապստամբութեց. զոր

վիպասանութիւն ոչ է պահեալ զծանօթութիւն ։ Նոյն տկարութիւնք 'ի կլիմայն Ամերիկոյ, որք կոպարաւորէին զանձն, տկարացուցանէին զոգին ընիկ շնչաւորաց իւրոց, եղեն պատճառք նոյ, որք տեղափոխէին այնր իւրովի յայլմէ շարունակէ. կամ փոխաբերեալ եղեն անդր յեւրոպացւոց. Վարաղք, գայլք, և այծեամն Ամերիկոյ ոչ են հաւասարք 'ի մեծութեան որոց 'ի հին աշխարհին. Ընտանի շնչաւորք, որովք ընդին Եւրոպացիք զգաւառսն, ուր հարգունանային, այլասեռեալ են կամ 'ի մեծութեան կամ յորակութեան յերկրի միում, որոյ օդն և գետինն երեւին լինել ոչ յոյժ նպաստաւորք առ 'ի զօրացուցանել և կատարելագործել զշնչաւորական գոյացումն ։

(13) Այս այլասերումն ընտանի շնչաւորաց Եւրոպացւոց յԱմերիկա պարտի համարիլ ըստ մասին իւրաքանչիւրում յայլոց պատճառաց. 'Ի կալուածս Սպանիացւոց կայացեալս 'ի ներքս այրեցած գօտւոյն, կամ 'ի գաւառսն, որք սահմանակից են, անձումն տօթոյ և զանազանութիւն կերակրոյն արգելուն զխաշինս և զեղջերաւոր անասունս 'ի հասանելոյ 'ի նոյն մեծութիւն, որ 'ի յԵւրոպիա. Հազիւ երբեք լինին այնպէս պարարտք. և միս նոց ոչ է այնպէս հիւթեղ, կամ փափկահամ. 'Ի մէջ հիւսիսային Ամերիկոյ, ուր կլիմայն է առաւել երախտաւոր և նման կլիմային Եւրոպիոյ, խոտքն, որք բուսանին բնականաբար յարօտս նոյ, ոչ են բարի. Հողագործութիւն տակաւին տեւէ 'ի տղայութեան իւրում. և արհեստական կերակուրն ոչ է ժամանեալ 'ի մեծ քանակութիւն. 'Ի ժամանակի ձմեռան, որ 'ի բազում գաւառս է երկայն, և յամենեսին խստագոյն ևս, ոչ կարեալ լինի զանասնոց մտադիր իմն հոգ. Վարեն ընդհանրապէս ըզձիս իւրեանց և զեղջերաւոր անասունս առանց ինչ նկատման և բազում խստութեամբ յամ հարգունութիւս Ինկլէզաց. Այսքիկ պարակայք օժանդակեն

թեր-

թերևս աւելի քան զայլ զինչ և իցէ մասնաւոր առ տրակուէ կլիմային յայտնելով զարմի ձիոց, կովուց եւայլն յայն գաւառսն :‖

Նոյն պատճառք, որք ներհակէին աճելոյ և զօրանալոյ Նշանաւորագոյն շնչաւորաց, էին նպաստաւորք ծննդեան և բազմանալոյ զեռնոց և ժժմանց. Թէպէտ այս ոչ է մասնաւոր Նորոյ աշխարհին, և թէպէտ առաւել ճնտքս այսոքիկ ծնունդք ջերմութեն, խոնաւութեն և ապականութեն հարստահարեն զմի մասն այրեցած գօտւոյն, սակայն բազմանան թերևս արագագոյնս յԱմերիկա. և լինին անդէն առաւել հրէշական խիստ մեծութբ. Եւ քանզի այս աշխարհ է բոլորն միանգամայն Նուազ մշակեալ և Նուազ բազմամարդ քան զայլ մասունս երկրի, սկիզբն շնչաւորիչ կենաց ճապաղէ և ցրուէ զոյժ իւր 'ի գոյացուցանել զայսոսիկ վայրագոյն կերպարանս. Օդն քաջ ստէպ թխպացեալ է յամպոց ժժմանց, և երկիրն ծածկեալ 'ի վնասակար և 'ի տաղտկալի սողնոց. Գաւառն շուրջ զգեղեցիկ Նաւահանգստիւ լի է ոստին գորտամբք այնպիսի մեծ բազմութբ, մինչզի ծածկեն զերեսս երկրի. 'Ի Կուիաքուիլ օձք և խժք չեն ինչ ընդհատ թըւով. Քարթագենա հարստահարեալ է 'ի թանձրախիտ երամոց չղջկանց որք անհանգիստ առնեն ոչ միայն զանդեայս, այլև զժողովուրդն. Ի կղզիսն գունդք մրջմանց սպառեալ են 'ի զանազան ժամս զամենայն բուսական բերս. և թողեալ զերկիրն բնաւին մերկ, որպէս եթէ լինէր տաչորեալ 'ի հրոյ. Գիճին անտառք և հողն զեղեալ մոլախոտիւք առ ծովեզերբն Օրինոքու և Մարակնօնեայ լի են գրեթէ ամենայն Նեղացուցիչ և թունաւոր կենդանեօք. զորս զօրութի առաւել տապացուցիչ արեւու կարող է զարթուցանել 'ի կեանս :

(14) ‖ Յամին 1518, կղզին Սպանիոլայի չարչարէ եղև յահարկու խիստ հարուածոյ այսց ապականիչ ժժմանց. զորոց Հէրրէրա գծագրէ զմանաւո-

րու.

րութիւն ; յիշատակելով 'ի նմին ժամանակի զեղական ինն օրինակ չափազանց ջերմեռանդութեան Հողագործացն Սպանիացւոց. Յետ փորձելոյ զպէսպէս եղանակս բնաջինջ առնելոյ զմրջմունսն, որոշեցին աղերսել զպաշտպանութիւն սրբոյ. բայց Թշուառութիւն լինելով բնաւին նոր, ոչ գիտէին, թէ ո՛ր սուրբ կարող էր տալ նմա զառաւել ազդու օգնութի. Արկին վիճակս առ 'ի յայտնել զպաշտպանն, առ որ դիմեսցեն. և վիճակն որոշեաց 'ի շնորհս սրբոյն Սատուրնինոսի. Կատարեցին զտօն նորա բազում հանդիսիւ. և անընդմիջապէս, յարէ վիպասանն, սկսաւ նուազել Թշուառութիւն: ||

Թռչու- գաւառին. Թռչունք նորոյ աշխարհին ոչ են տարորոշեալք այսպիսի երեւելի և նշանաւոր որակութեամբք, որպիսի էին այնք, զորս նշմարեցաք 'ի չորքոտանիս իւր. Թռչունք են աւելի անկախք 'ի մարդկանէ. և զպան նուաղ զփոփոխութիւն, զորս մարդկային ծառայութիւն և աշխատութիւն առնէ 'ի վերայ վիճակի երկրի. Սոքա ունին զմեծ յօժարութի տեղափոխ լինելոյ 'ի միջէ յայլ գաւառ. և կարող են կատարել զայս բնական ազդումն իւրեանց առանց դժուարութեան կամ վտանգի. Ստոյգ է, զի Թիւ Թռչնոց հասարակաց երկաքանչիւր շարունակի է յոյժ մեծագոյն քան զԹիւ չորքոտանեաց. Նաև այնք, որք մասնաւորք են Ամերիկոյ, նմանին բազմօք այնց, որք ծանուցեալ էին յառաջ մարդկան 'ի կողմանս համանմանս կողմանցն հնոյ կիսագնտոյն. Թռչունք Ամերիկացիք այրեցած գօտւոյն իբրեւ զայնս նորին կլիմայի յԱսիա և յԱփրիկէ, են ծածկեալք փետրօք, որք խաղտեն զաչս կենդանի գեղեցկութեամբ գունոց իւրեանց. Բայց բնութիւն շատացեալ զգեստաւորելով զնս այնպէս նազելի, զլացաւ մեծագոյն մասին նց զայն քաղցրանուագութի երգոց, և զայն պէսպիսութի եղանակաց, որ յափշտակս կացուցանէ և կախարդէ զլսելիս. Թռչունք բարեխառն նահանգաց, որպէս 'ի մե-

բում

քում շարունակի ոչ են յոյժ գեղեցիկ նկարեալք, այլ փոխանակ այսր պակասութեան ունին զամ զօրութիւն և զքաղցրութիւն երաժշտութեան 'ի բարբառս իւրեանց. Յանձուկս ինչ Ամերիկոյ անառողջարար որակութիւն օդոյն երևի, թէ իցէ ներհակ այսմ մասին արարածոյ. Իսկ Թռչնոց է փոքրագոյն քան յայլ աշխարհս. և ճանապարհորդն հիանայ ընդ զարմանաւոր միայնութիւն և լռութիւն ընդ անտառս նր. Այլ նշանաւոր է այն, զի Ամերիկա, ուր չորքոտանիք են այնպէս փոքրիկք և երկչոտք, գոյացուցանէ զկոնդոր. որում տուեալ է գերակայութի 'ի վ̃ր բովանդակ Թռչական ցեղի 'ի մեծութեան, յուժեղութեան և 'ի քաջասրտութեան:

Գետքն 'ի միում շարունակի այնպիսի մեծ տարածութեան, որպէս Ամերիկա, պարտի լինել հետևաբար անսահմանաբար պէսպիսացեալ. Իւրաքանչիւրում 'ի գաւառաց իւրոց գտանեմք մեք զեզական իմն մասնաւորութի. և ստորագրելն զայն պատկանի նց, որք ձկտէին հասանել զպատմութի այնց. Գե- տքնն,

Կարէ ընդհանրապէս նշմարիլ, զի գիճութիւնն և ցուրտն, որք տիրեն այնպէս զգալաբար յամ մասին Ամերիկոյ՝ ունին ազդել բազում յոյժ յոյժ 'ի վ̃ր բնութեան հողոց իւրոց. Գտաւաք եղեալք 'ի նմին զուգահեռականի ընդ այնց կողմանց որք ոչ զգան երբէք զվերջին խստութի ձմեռան 'ի վաղեմի շարունակին, սառուցեալ են յԱմերիկա ընդ մի մասն տարւոյն. Պաղեալ երկիրն 'ի սաստիկ իմն ցրտոյ ոչ ստանայ զջերմութի բաւական 'ի հասունացուցանել զպտուղս, որք գան 'ի մասունս համեմատս այլոյ շարունակի. Եթէ կամէր ոք բուսուցանել յԱմերիկա զտունկս, որք առատանան յորում և իցէ նահանգի աշխարհի, պարտ էր յառաջ խաղալ զանազան աստիճանս առաւել մօտ 'ի հասարակածն, պահանջելով այսպիսի իմն աճման ջերմութեն առ 'ի զուգակշռել զբնական ցրտութի գետնոյն և կլիմային:

(15) ‖ Հեղինակն փիլիսոփայական հետազօտութեանց 'ի վր Ամերիկացւոց ենթադրէ զայս տարբերութի 'ի ջերմութե լինել հաւասար երկոտասան աստիճանաց. և թէ տեղի ինչ յերեսուն աստիճանս 'ի հասարակածէն 'ի հին շարունակին է այնպէս ջերմ, որպէս կայացեալն յութևտասն աստիճանս յայնմանէ յԱմերիկա. Վարդապետն Միթքհէլլ յետ դիտողութեանց շարունակելոց ընդ երեսուն ամս՝ պնդէ, թէ տարբերութիւն է հաւասար չորեքտասան կամ հնգետասան աստիճանաց լայնութեան ։ ‖

'Ի Քափօ տի պոնա սփէրանցայն զանազան տունկք և պտուղք մասնաւորք գաւառացն 'ի ներքս արևադարձից՝ միակին յաջողուին. ուր 'ի սբն Աւկուսթին, 'ի մէջ Ֆլորիտայ՝ 'ի Քհարլէսթոյն, և 'ի մէջ հարաւային Քարօլինայի, թէպէտ և տեղիք նշանաւորաբար մօտաւորագոյնք հասարակած գծին, ոչ կարեն արմատանալ երջանկաբար ։

(16) ‖ 'Ի 3. յունուարի 1765, տէրն Պէրթրամ մօտ յաղբերակն գետոյն սբյն Յովհաննու 'ի մէջ Ֆլորիտային արևելից՝ նշմարեաց զսառուցումն իմն այնպէս ահարկու, զի 'ի միում գիշերի հողն սառուցեալ էր 'ի չափ թանձր մատին միոյ առ ափամբք գետոյն. Լիմոնք, կիտրոնք և ծառքն Պանանա 'ի սբն Աւկուսթին ապականեցան. Այլ օրինակք անսովոր գործողութեանց ցրտոյ 'ի հարաւային գաւառսն հիւսիսային Ամերիկոյ հաւաքեալ են 'ի վարդապետէն Միթքհէլլա. 'Ի 7. փետրուարի 1747, սառն Քհարլէսթոյնի էր այնպէս սաստիկ, զի անձն ոք բերեալ 'ի մահիճս զերկուս դորակս ջերմ ջրոյ, առքա յառաւօտուն մնացեալք էին 'ի կտորս. և ջուրն եղեալ էր սերտ կարկառ սառին. 'Ի խոհարանի միում, ուր դոյր հուր, ջուրն 'ի բղուղ ինչ, յորում կայր օձաձուկն մի կենդանի, սառուցեալ եղև մինչև 'ի յատակն. զրեթէ բովանդակ թուփինջք և ձիթենիք խահրեցան. Գ. Ծառ-քուէ հարաւային Քարօլինայի ։ ‖

Բայց

Բայց շնորհեալ զայս և եթ զանազանուն, հողն Ամերիկոյ բնականաբար բերրի է և փարթամ, զոր օրինակ յայլ ամ մասին աշխարհի. Այս աշխարհ գոլով սակաւ բնակեալ, և 'ի փանաքիմաց ժողովրդոց, որք ոչ ունէին զուսակ իմն յընտանի չնչաւորաց՝ մնուցելոց այնպիսի մեծ բազմուք 'ի քաղաքականացեալ ազգաց, հողն իւր ոչ էր սպառեալ մշ ծախման նց. Բուսական բերք, զորս արգաւանդութի իւր տայր ընձիւղել, միայն յաճախակի անհուպք. և եղծանելով 'ի մշ երեսաց երկրի վերադառնային աճեցմամբ 'ի ծոց իւրեանց. Ծառք և տունկք քարշեն ըստ մեծի մասին ըզծնունդ իւրեանց յօդոյ և 'ի ջրոյ. և յորժամ ոչ են խաչրեալ 'ի մարդոյ կամ յայլոց շնչաւորաց, հատուցանեն երկրի աւելի քան զոյն թերևս, զոր ընդունին 'ի նմանէ. և մանաւանդ թէ փոխանակ աղքատացուցանելոյ, պարարտացուցանեն զնա. Այս ոչ տիրեալ գետինն Ամերիկոյ կարէր տեւել ընդ բազում դարս 'ի պտղաբերել առատութք. Գերամեծ քանակութի և տարապայման բարձրուի ծառոցն յԱմերիկա ցուցանէ զարտաքոյ կարգի ուժգնութի գետնոյն 'ի բնական վիճակի իւրում. Յորժամ Եւրոպացիք սկսան զառաջինն մշակել զնոր աշխարհն՝ միացին ապշեալք ընդ զեղխեալ զօրութի ամեթացմանն 'ի սկզբնական կերպի իւրում. և 'ի զանազան տեղիս գործ մշակին պարապեալ է միշտ 'ի յատանել և 'ի յապաւել զչափազանց յուռթութի նց առ 'ի զցածուցանել զայն, և վերածել առ վիճակ իմն յարմարական առ օգտակար մշակութիւն:

(17) Նշանաւոր իմն օրինակ այսորիկ տեսանի 'ի Կուբանա Հոլանտեզաց՝ գաւառ ամ ուրեք տափարակ, և այնպէս ցածուն, մինչզի յանձրևային յեղանակս սովորաբար ծածկեալ է 'ի ջրոյ գրեթէ երկու ոտնաչափ բարձրութբ. Այս փոխարէ ըզհողն այնպէս պարարտ, զի 'ի մակերևութին երա-

կո-

կոստան մատանց խորութիւն է հանք ինչ կատա-
րեալ աղեկի և իբր այսպիսի փոխաբերեալ է 'ի
Պարպատոս. Ա՛ռ ծովեզերօքն Խասէքուէպայ երե-
սուն քաղաքք եղեգանց կոչեցելոց ռամթմօն ա-
րարեալ եղեն յաջողագարար. ուր յարևմտեան
կողմն Քոնդկաց ոչ սպասեալ լինին երբեք աւե-
լի քան զերկուս. փոքրքն, որովք երկրագործք
քանան նուաճեցուցանել զայս չափազանց արգա-
ւանդութիւն գետնոյն, են զանազանք. Պլան-
տօֆըն: ||

Ծնունդ ժողովր- բնակե- ցն Ա- մերիկա: Նկատեալ զվիճակ Նորոյ աշխարհի 'ի ժամանակի
ծանօթութեան իւրոյ, և զկերպարանս և զմասնա-
ւոր որակութիւնս, որք արուեստին զնա և նշանաւո-
րեն, առաջին խնդիրն արժանի ուշադրութեան այն
է, թէ զեա՞րդ մարդաբնակ եղև Ամերիկա. ընդ ո՞ր
ճանապարհ տեղափոխեցաւ ազգ մարդկան 'ի միոջէ
'ի միւս շարունակ. և յորո՞ւմ տեղւոջ է առաւել
հաւանական բանիլ հաղորդակցութեան իւրեք 'ի մէջ
նոցա.

Զէ. պայմա- ռան- դուէն 'ի Յղ Ամեր- կոյ: Գիտեմք մեք անվրէպ ստուգութեամբ, թէ բովան-
դակ զարմ մարդկան յառաջ եկն 'ի նոյն սկզբնէ.
և թէ սերունդք միոյ մարդոյ ընդ պաշտպանութ[եամբ]
երկնից և 'ի հնազանդութեան նո՛ր բազմացան և լցին
զերկիր. Բայց ոչ տարեգրութիւնք ազգաց, և ոչ
աւանդութիւն 'ի վեր ամբառնան առ այն հեռաւոր
դարս, յորս նոքա տիրեցին աշխարհացն. ուր բնա-
կացեալ են այժմյս. Ոչ է կար գտանել զճշգրկ-
մունս այսր առաջնոյ առհմի, և ոչ ակնարկել զգ-
ժամանակն և զեղանակն, յորում բաժանեցաւ և
սփռեցաւ 'ի վ[ե]ր երեսաց երկրագնտոյս. Նա և 'ի
մէջ կիրթ ազգաց պարզերութիւն արժանահաւատ
պատմութեան է կարճառօտ[յն] ես. և ամ ինչ քան
զայս վաղնջագոյն առասպելական է և աղօտ. Ա-
պա ոչ է հիանալի, թէ տխմար բնակիչքն Ամերի-
կոյ, որք ոչինչ բնաւ փոյթս են զապագայէ և
սակաւ հոգածք զանցելոյ, լինէին բոլորովին 'ի
խա-

խաւարի շուրջ զծագմամբ իւրեանց. Կալիֆորնիացիք և մասնաւորաբար Էսքիմաւք, որք կալեալ ունին զայն գաւառն Ամերիկոյ, որք առաւել մերձենան 'ի նախկին շարունակն, են այնպէս տխմարք, զի բնաւին ընդունայն է խնդրելն 'ի մէջ նց, թէ ուստի եկեալ իցեն նոքա, և նախնիքն յորոց սերեցան. Ինչ և իցէ բացայայտութիւն, որ տուեալ է յայս պէտս, ոչ է յառաջ եկեալ յազգայնոցն Ամերիկոյ, այլ 'ի հետազօտ ճարտարմտութենէ տիրապետողաց իւրեանց ։

Յորժամ ժողովուրդն Եւրոպիոյ եգիտ յանկարծ [illegible] զնոր իմն աշխարհ ամենևին հեռի յիւրաքանչիւր [illegible] մասնէ հնոյ շարունակին ծանուցելոյ յայնժամ, և նուէր. լի բնակչօք, որոց արտաքին ձևն և վարքն տարբերէին ողջոյն յայլոց մարդոց, յօդուածն վերաբերեալ առ ծագումն նց եղև առարկայ իմն հետաքրքրութեան և հետազօտութեան. Տեսականութիւնք և հայեցողականութիւնք ուշիմ մարդկան 'ի վր այսր գլխոյ լնոյին զբազում մատեանս. բայց այնք յաճախակի են այնպէս մտացածինք և եղջերոճաքաղք, մինչզի նախատինս դնէի զգօնութեան ընթերցողաց իմոց, եթէ ձեռնարկէի բերել զայնս, կամ հերքել. Ոմանք յանդգնաբար պատկերակերպեցին, թէ ժողովուրդն Ամերիկոյ ոչ էր զաւակ նորին հասարակաց հօր ընդ այլ մարդկային ազգի. և թէ կերպաւորեր զարմ իմն մարդկան զատուցեալ, զանազանելի 'ի մասնաւոր կազմուածոյ մարմնոյն և 'ի տարորոշիչ որակութենէ ոգւոյն. Այլք պնդեն, թէ նոքա սերեալ իցեն 'ի մնացուածոյ իմեքէ բնակչաց երկրի, յառաջ քան զջրհեղեղն եղելոց, որք կենդանի մնացին 'ի հանրական հեղեղէն, որ ընկղմեաց գրեթէ զբովանդակ մարդկային տեսակ յաւուրս Նոյի. և տարադէպ ենթադրեն, թէ բիրտ և անքաղաքական ցեղք սփռեալք 'ի վերայ սոսկալի իմն շարունակի իցեն վաղնջագոյն ազգ մարդկան, զոր ունիցի աշխարհս. Հազիւ թէ գտա-

նի

նի ժողովուրդ իմն 'ի հիւսիսոյ ցհարաւային բեւեռ, որում վաղնջայոյ ոք 'ի մոլեգնութեան վարկածելոյ ոչ վերագրէր զպատիւ առաջին բնակչաց Ամերիկոյ. Եբրայեցիք, Քանանացիք, Կարթագինեցիք, Հելլենացիք, Սկիւթացիք ենթադրին 'ի վաղնջուց ժամանակս հարգունացեալ յայսմ աբեւեռեան աշխարհի. Չինացիք, Շվէտք, Նորվէգք, Գաղղիացիք և Սպանիացիք, ասի, թէ աւաքեալ իցեն անդր հատուածս 'ի մէջ վերջին դարուց 'ի զանազան ժամանակս և 'ի պէսպէս դիպաւորութիս. Նախանձայոյզ փաստաբանք յամառին 'ի ջատագովել զիւրաքանչիւր իրաւունս սոյնց ազգաց. և թէպէտ ոչ յենուն 'ի լաւագոյն հիմն, բայց եթէ 'ի պատահական նմանութի սովորութեց ինչ, կամ 'ի կարծեցեալ մերձաւորութ սակաւ խօսից 'ի պէսպէս լեզուս նց, բազումներհունութի և մեծ նրբութիւն 'ի կիր արկեալ եղև սակաւ պտղով 'ի պաշտպանութ հակադրեալ կարծեաց. Այսքիկ փաստք վարկածի և հակառակաբանութ ոչ են վն վիպասանի ուրումն. Գտաւ իւր է առաւել կոպարաւորեալ, ամփոփեալ յայն, որ յեցեալ է 'ի յայայանդիմանութիւն, կամ գոնէ յես մեծագոյն հաւանականութի. Ոչ վտանգեցից զիս յանցանել ըստ այսոսիկ սահմանս 'ի հաղորդելն զխորհրդութիս ինչ, որք կարօղ են օժանդակել 'ի պայծառացուցանել յիմիք մասին զայսպիսի հետաքննական և զլուզեալ խնդիր:

Ո՛չ պտուղ- քն հնէ- նել 'ի վե- րոյ վար- կածից: Տի. Եղեն հեղինակք, որք հնարեցան լոկ վարկածիւք տալ զհամար մարդաբնակութե Ամերիկոյ. Սմանք ետուն զանձինս 'ի հաւատալ, թէ Ամերիկա սկզբնաբար միաւորեալ էր ընդ նախկնոյ շարունակին, և 'ի նմանէ անջատեալ ցնցմամբ իւիք դեանաշարժի. կամ վն ողողանաց մեծի իրիք ջրհեղեղի. Այլք պատկերակերպեցին, թէ նաւ ինչ մղեալ արտաքոյ ընթացից իւրոց 'ի բռնութէ աբեւեռեան ինչ հողմոյ հարթուցեալ իցէ դիպոճա-

իմ ծով

ծով 'ի կողմն Ամերիկեան ծովեզեր. և այնպէս տուեալ սկիզբն մարդաբնակութեն երից յայն անշէն վայրան. Բայց խաղաղութիւն այս ամ դրից ընդունայն է կամիլն 'ի վր այսօրիկ տրամաբանել և հմայել. գոլով անկարելի հետևեցուցանել յայնմանէ զվճիռ ինչ. Այս ամ ենթադրեալ դիպուածք կարելի են. և թերևս եղեալ են. բայց ոչ ունիմք զվկայութիւն, ոչ 'ի պատմական յիշատակարանաց, և ոչ 'ի գոյզն նշմարանաց աւանդութեան։

Բ. Զի՞նչ ինչ առաւել սնոտի և առաւել անստոյգ, Իսկ ո՞չ քանթէ նկրտիլ յայտնել զծագումն Ամերիկացւոց, 'ի ՃԷ հետազօտելով մասնաւորաբար զնմանութի 'ի մէջ նմանութե բարուց նց և 'ի մէջ բարուց մասնաւոր իրիք ազգի վաղեմի շարունակին. Եբրայեցւոց։ Եթէ մեք ենթադրեսցուք զերկուս խումբս մարդկան, թէպէտև 'ի հեռաւորագոյն կողմանս երկրագնտոյս, եղեալս 'ի միում վիճակի ընկերութեն, 'ի միում հաւասար աստիճանի զուտման, զգայցեն նոքա զնոյն պէտս, և ունիցին զնոյն փոյթ նախահոգալոյ զայնս. Նոյն առարկայք յանկուսցեն զնն. քաջալերեսցին նոյն կիրք, և նոյն գաղափարք և իմացութիւնք զարթնուցուն 'ի միտս նց. Յատկութի և կրթութի որսորդի միոյ յԱմերիկա պարտի լինել սակաւ տարբեր յունակութէ միոյ Ասիականի, որ կեայ յորսոյ. Յեղ ինչ վայրագաց յափունս Գանոբոյ պարտի նմանիլ կատարելապէս այլում իմիք 'ի դաշտավայրսն ոռոգեալս 'ի Միսիսիպպեայ. Ապա փոխանակ յանդգնելոյ յառաջ ածել յայսմ նմանութէ, թէ իցէ 'ի մէջ նց մերձաւորութիւն ինչ, պարտ էր մանաւանդ հետևեցուցանել, թէ խառնուած և բարք մարդկան կերպացեալ են 'ի կայաւորութէ նց. և թէ ծնանին 'ի վիճակէ ընկերութե, յորում կեան. 'Ի վայրկենին, յորում այս սկսանի այլայլել, յատկութի երից ժողովրդեան պարտի փոխարկեիլ. Ըստ չափուն, որով այս յառաջադէմ լինի 'ի զտման, բարք անհատից ազգ-

նուանան. կարողութիւնք և քանքարք նց յայտնին. Յամ անկեան երկրի յառաջադիմութիւն մարդոյ լեալ է գրեթէ նոյն. և կարող եմք դիւրակի նկատել զայն յանցս իւր 'ի տխմար պարզմտութենէ վայրագ կենաց առ մտավարժութիւն, առ արհեստս և առ վայելչութիւն քաղաքական կելոյ. Ապա չեն ինչ զարմանք 'ի նմանութեան 'ի մէջ Ամերիկացւոց և խուժադուժ ազգաց մերոյս շարունակի, եթէ Լաֆիթաւ, Կարծիա, և այլ բազում հեղինակք մատուցեալ էին մեզ, ոչ լինէին այնքան կնճռեալք 'ի նիւթ ինչ, զոր ձկային պայծառացուցանել անօգուտ թեակխութիւնք իւրեանց, կայացուցանելով զմերձաւորութիւն ինչ 'ի մէջ պէսպէս զարմից ժողովրդոց 'ի հին և 'ի նոր շարունակի, ոչ այլով ցուցմամբ, բայց եթէ նմանութիւն վարուց նց, որ ծնանի 'ի համակերպութենէ պայմանի նց. Դժուարին է, թէ 'ի մէջ ամ ազգաց են վարք ինչ, զք ոչ ունելով զծագումն իւրեանց 'ի բնական պիտոյից ինչ, կամ 'ի մասնաւոր ըղձմանէ առ կայաւորութիւն իւրեանց, կարեն որոշել սովորութեամբք կամայական սահմանադրութեան. Եթէ 'ի մէջ ազգաց հարգունացելոց 'ի հեռաւոր մասունս երկրի յայտնեալ լինէր կատարեալ միաբանութիւն յիմք յայնց, կարէր ծնանել կասկած, թէ կանխաւ ընտելացեալ էին նոքա մերձաւորութեամբ իւիք. Եթէ գտանէր յԱմերիկա ազգ մի, որ նուիրէր զօրն եօթներորդ առ կրօնական իմն հանգիստ (բայց յարգելի սովորութիւն և յածային պատուիրանէ,) եթէ յայլում իմիք նոր երևումն լուսնոյ հռչակեալ լինէր տօնիւ, մարթ էր բանաւորաբար ենթադրել, թէ առաջինն հանեալ իցէ զծանօթութի այնր սովորութեան 'ի սահմանադրութենէ նախադրեցելոյ հրէից. և վերջինն ոչ պարտ էր համարիլ ինչ աւելի, քանթէ բացայայտութիւն ուրախութեան բնական եղելոյ մարդոյ 'ի վերադարձի այնր մոլորակի, որ առաջնորդէ նմա և զօրացուցանէ 'ի գի-

շե-

չէրի. Օրինակք վարուց հասարակ եղելոց բնակ-չաց երկաքանչիւր կիսագնտոյ, ճշմարտիւ են այնպէս սակաւք և այնպէս հոմանոճանք, մինչզի ոչ է պարտ հիմնել 'ի վ̃ն զտեսականութ̃ի ինչ վերահայեցմամբ մարդաբնակութեան նորոյ աշխարհի:

Գ. Տեսականութիք, որք կերպաւորեալ են շուրջ Սոմկբօ-ղծագմամբ Ամերիկացւոց 'ի նկատմանէ ծխից նշ̃նոյնս և ա̃ծպաշտական գործողութ̃ց նշ̃, երևին ոչ ծնուէց. ինչ ընդհատ մնացածինք և զուրկք 'ի սերտ հիմանէ. Յորժամ կրօնական կարծիք իւրք ազգի ոչ են ծագեալ 'ի տրամաբան հետազօտութենէ, կամ ոչ յառաջ գան 'ի ճշմարիտ դաստիարակութ̃է ա̃ծային յայտնութ̃, պարտին համարիլ բացարձակ ցնորականք և վտարանդիք. Խուժադուժ ազգք անընդունակ են առաջնոյն. և յետոյ յայտ է, թէ ոչ օրհնեցան շահեկանութ̃ն, որ զգացեալ լինի յերկրորդէն. Բայց միշտ մարդկեղէն միտք, ես և ուր դիտողութ̃ք իւր ցուցանին առաւել յիմարականք և ծիծաղականք ունի զընթացս ինչ այնպէս կանոնաւոր, զի յամ̃ դարս և յամ̃ աշխարհի տրուի մանաւոր կրից ընկերակցեալ է յամենեսին համանման գործոց. Այսրագն Եւրոպիոյ, կամ Ամերիկոյ՝ յորժամ լի է աւելորդապաշտական զարհուրանօք անհրևոյթ էակաց, կամ հետազօտ տատամնութ̃ խելամուտ լինելոյ ապագայ դիպուածոց, դողայ հաւասարապէս առ երկիւղն, կամ վասն անհամբերութ̃. Դիմէ առ ծէսս և առ սովորութս նորին ազգի առ 'ի հեռացուցանել յիւրմէ զվրէժխնդրութիւն, զոր ենթադրէ կալ 'ի վ̃ն, կամ առ 'ի գուշակել զգաղտնիս, որ է առարկայ հետաքրքրութ̃ն իւրոյ. Վ̃ն այսորիկ աւելորդապաշտութին 'ի միում շարունակի երևի 'ի բազում մանաւորութիս լինել օրինակ իմն այնր, որ է հաստատեալ 'ի միասնում. և երկոքեան յարին 'ի սահմանադրութիս ինչ երբեմն այնպէս անոտխս. զի

շարժեն 'ի կարեկցութի. և երբեմն այնպէս խժականս և արիւնալիցս, զի պատճառեն զսոսկումն. Բայց առանց ենթադրելոյ զարենակցութիւն իմն 'ի մէջ այնպէս տարակայց ազգաց, կամ առանց պատկերակերպելոյ, թէ կրօնական խորութիւնք նչ փոխաբերեալ իցեն աւանդութեամբ 'ի միջէ յայլ տեղի, մարթ է քաջ վերագրել զայս միակերպութիւն, որ 'ի բազում պարակայս երևի զարմանահրաշ, առ բնական գործ աւելորդապաշտութեան, կամ յափշտակութեան 'ի վս տկարութեան մարդկային մտաց, որ իցէ անկիրթ:

Աչենա ծոցեալ յաղագս ամենայն ձեւեա- ճառ... ... ...

ԺԶ. Կարէ հաստատել իւր սկիզբն ստոյգ յայսմ հետախուզութեան, թէ Ամերիկա ոչ եղև մարդաբնակ յազգէ իմիք վաղեմի շարունակին, որ արարեալ իցէ զերևելի իմն զարգացումն 'ի քաղաքականութեան. Բնակիչք նորոյ աշխարհի էին 'ի միում վիճակի ընկերութեան այնպէս տարապայման ուրոմականի, զի ոչ երևէին տեղեակք այնց արհեստից. որք են առաջին առհաւատչեայք մարդկային զգօնութեան 'ի յառաջադիմութեան իւրում առ կրթութիւն. Մինչև առաւել կիրթ ազգքն Ամերիկոյ ոչ ունէին զգաղափար այնց պարզ գիւտից, որք են գրեթէ ժամանակակիցք վիճակի ընկերութեան յայլ մասունս աշխարհի. և որք ծանուցեալ էին 'ի սկզբունս քաղաքական կենաց. Յայսմանէ յայտնի է, թէ ցեղքն, որք տեղափոխեցան սկզբնաբար յԱմերիկա, էին եղեալք յազգաց, որք պարտ էին լինել ոչինչ նուազ բարբարոսք քան զյետնորդս իւրեանց 'ի ժամանակին, յորում յայտնեցան Եւրոպացւոց. որովհետև թէպէտ արհեստք վայելչութեան և նրբութեան կարեն յանգոյն լինել, կամ կորնչել 'ի մէջ բուռն սասանութեանց այնց խռովութեանց կամ թշուառութեանց, որոց ազգք ենթարկեալ են, սակայն կարևոր արհեստք կենաց մուծեալք առ անգամ մի 'ի մէջ ժողովրդեան իրիք ոչ բառնին երբեք. Ոչինչ փոփոխութի մարդ-

կային

կային իրողունց թօթափէ զնն. և տեսեն 'ի գործածութեն ցորչափ կայ զարմ մարդկան. Եթէ կիրառութեն երկաթոյ ծանօթ եղեալ էր վայրենեաց Ամերիկոյ կամ Նախնեաց նց. եթէ 'ի գործածեալ էին երբէք զարօր, զգործի ոստայնանկաց, փուռն, պիտանութի այսց գիտոց տակաւին պահեալ էր զնն. և անկարելի է բարձի թողի լինել նց, կամ 'ի մոռացօնս անկանիլ, Ապա մարթ է հետևեցուցանել, թէ Ամերիկացիք էին յազգաց, որք էին ըստ ինքեանց 'ի միում վիճակի՝ կամ Նորածնեալ, կամ ոչ հրաժանգեալ ընկերութեան առ 'ի ոչ լինել տեղեակ ամ կարևոր արհեստից. որք մնացին անծանօթ նաև յետնորդաց իւրեանց.

Ե. Ոչ երևի նուազ յայտնի, թէ Ամերիկա ոչ եղև բնակ 'ի հատուածոյ իմիքէ առաւել հարաւային 'ի հին ազգաց նախկին շարունակին. Ոչ ոք յանկիրթ ցեղից յայնմ մասին մերոյս կիսագնտոյ կարէ ենթադրիլ այց արարեալ այնպիսի հեռաւոր աշխարհի միում. Նոքա ոչ էին նախահոգացեալ ոչ համարձակութեամբ, ոչ իմաստութեամբ, և ոչ զօրեղութեամբ որ դրդէր զնն, կամ բաւականս առնէր 'ի ձեռնարկել և 'ի կատարել զայնպիսի հեռաւոր ճանապարհորդութի. Թէ առաւել քաղաքականացեալ ժողովուրդքն Ասիոյ և Ամերիկոյ ոչ իցեն նախահարք Ամերիկացւոց՝ երևի ոչ միայն վն դիտողութեանցն, զորս արդ իսկ արարի յաղագս տգիտութեն նց պարզագոյն և կարևորագոյն արհեստից, այլև վն պարականյի իրիք ևս. Քանիցս անգամ ազդ մի որպիսի և իցէ փորձեալ է զշահեկանութիւն, յորս մարդիկ վայելեն միջնորդութեամբ ծրուն իւրեանց 'ի վն վայրագոյն չնչաւորաց, ոչ կարէին նոյն իսկ մարդիկ կեալ առանց ոննդեանն, զոր հանեն 'ի նոցանէ. և ոչ շարունակել զգործողութիւս իւրեանց առանց ծառայութեն և աշխատութեն նոցին չնչաւորաց. Ա՛ այսք պատճառք

առաջին հօդն Սպանիացւոց , յորժամ կայունացան յԱմերիկա , եղև փոխարերել անդր զամ ընտանի անասունս Եւրոպիոյ . և եթէ յառաջ քան զնոսա Տիւրացիք , Կարթագինեցիք , Փինէկացիք , կամ զինչ և իցէ այլ կրթեալ ազգ առեալ էին զստացուածս այնր շարունակի . գտեալ էին անդէն շնչաւորք տարբերք յայնց կողմանց երկրագնտոյս . ուր եդեալ էին սկզբնաբար . Սակայն 'ի բովանդակ Ամերիկայի ոչ գոյ շնչաւոր ընտելացեալ , կամ ամէհի , որ յատկապէս պատկանիցի առ ջերմ կամ առ առաւել բարեխառն գաւառս վաղեմի շարունակին . Անլուխն , տաճիկ ուղտն , ձին , կովն էին այնպէս անծանօթք յԱմերիկա , որպ փիղն և առիւծն . Նայսմանէ տեսանի , թէ ժողովուրդն , որ եղև առաջին 'ի գագարել յարևմտեան աշխարհին , ոչ էր յերկրէ , ուր առատ էին այս շնչաւորք , և ուր մարդիկ վն լինելոյն յերկար ժամանակ սովորեալ առ օգնութի նց , համարեալ էին զնս ոչ միայն պիտանիս , այլև կարևորս անտնօրինելաբար առ 'ի բարեգունացուցանել և նախապահել զքաղաքական ընկերութին :

Անբնա- Է . ՚Նկատեալ զշնչաւորս , որովք դարմանեալ է
շարու- Ամերիկա , կարէ տեսանել , թէ մերձաւորա-
նակէ գոյն կետն հպման 'ի մէջ հին և նոր շարունակին
Եւրոպին է գեպ 'ի հիւսիսային ծագ երկոցունցն . և թէ
ընթեր անդէն բացեալ եղև հաղորդակցութին և համա-
շարժ պատասխանուի կերպաւորեալ 'ի մէջ նոցա . Նո-
հաղա- լոր ընդարձակ գաւառքն յԱմերիկա , որք գտա-
ւոր ՃԷ նին 'ի ներքս արևադարձից , կամ որք առաւել
Հիւսիս մերձին յայնս , լի են պէսպէս ցեղ սկզբնական
ջոկին . շնչաւորօք՝ բոլորովին տարազան եղելովք 'ի շնչաւորաց համապատասխանօղ կողմանցն հնոյ շարունակին . Նայց հիւսիսային գաւառքն 'ի նոր աշխարհին առատանան բազում վայրենի շնչաւորօք . որք հասարակք են յայն մասունս մերոյ կիսագնտի , որք համեմատին այնց վն կայաւորութեան

իւր-

իւրեանց. Մարալ, գայլ, աղուէս, նապաստակ, եղջերու, սօքրուք, էլք և այլ զանազան տեսակք յաճախեն յանտառսն հիւսիսային Ամերիկոյ ոչինչ ըհատ յանտառացն հիւսիսոյ Եւրոպիոյ և Ասիոյ. Այս որեմն յայտ յանդիման երևի, թէ երկու շարունակք մերձին ընդ միմեանս յայնմ մասին. և թէ են կամ միացեալք, կամ այնպէս անձկարար ընթերակայք, ուր զի չնչաւորք այսոքիկ կարիցեն անցանել 'ի միոջէ յայլ:

է. Ներգործական մերձաւորութի երկուց շարունակաց ապացուցեալ է այնքան յայտնի վն արդի ծանօթութեանց, մինչզի բնաւայ զնախապետական է յէշէգձուձարութիւն նկատմամբ մարդաբնակութեն Ամերիկոյ. Յորժամ այն անդրաւ կողմանք, որք տարածէին ը արևելս 'ի գետոյն Օբի ցծովն Քամչհաթքայ էին անծանօթք, կամ անկատար ծանուցեալք, ծագք ընդ հիւսիսային արևելս մերոյ կիսագնտի ենթադրեր լինել տարակաց յորմէ և իցէ մասնէ նորոյ աշխարհի այնպէս, զի ոչ էր դիւրին 'ի միտ առնուլ, թէ զիարդ կարէր երբէք կերպաւորիլ 'ի մէջ նց հաղորդակցուի իմն. Բայց Ռուսք նուաճելով զարևմտեան մասն Սիբերիոյ ընդ ճրութի իւրեանց՝ աճեցուցին աստիճանաբար զճանաչումն իւրեանց 'ի վն այնր ընդարձակ երկրի, յառաջ խաղալով ընդ արևելս 'ի գաւառս ոչ տեսեալս երբէք. Այսօրիկ ծանօթացան նախ յորսորդաց յարշաւանս իւրեանց զկնի երէոց, կամ 'ի զօրականաց պարապելոց 'ի թափել զսակս. և արքունիքն Մոսկովիոյ ծանրակշիռ վարկաւ զտեղիս զայսոսիկ միայն վն փոքրիկ աճմանն, որ գայր յայնմանէ 'ի վն մտից իւրոց. Մեծն Պետրոս 'ի վերջոյ ամբարձաւ յաթոռ Ռուսաց. Միտք իւր լուսաւորք՝ պայծառ՝ գիտող ամ պարակայի, որ կարէր մեծացուցանել զօրութի իւր, կամ պայծառացուցանել զթագաւորութի իւր, էհաս հանել յայսց ծանօթութեանց զհետևութիս, որք վեր-

Այս հաուսթէն բուծանօ Նուէնց.

պիտալ էին 'ի նշմարութենէ նոճաց աշխարհիւք նախորդաց իւրոց. Նա իրաւեկ եղև, թէ ըստ համեմատութեան, որով կողմանքն Ասիոյ տարածանէին ընդ արևելս, պարտ էին միշտ առաւել մերձենալ յԱմերիկա. Թէ հաղորդակցութիւն 'ի մէջ երկուց շարունակաց ընդ երկայն ժամանակ խնդրեալ 'ի զուր գտանիւր հաւանականապար յայնմ մասին. և թէ բանալով զայս անցս, բաժին ինչ տարալուց, կամ շահավաճառութե արևմտեան աշխարհի հասելոց էր 'ի ծրութիւն իւր ընդ նոր իմն ազուգայ. Այսպիսի իմն ակնարկայ փայլեր ճարտարմտութեն, որ բերկրիւր ընդ մեծամեծ գործս. Ինքն Պետրոս շարագրեաց զխրատոն ձեռամբ իւրով առ 'ի յառաջ տանել զգաղափարն. և հրամայն ետ դնել 'ի գործ:

Յաջորդք իւր յարեցան 'ի խորհուրդս նր, և զհետ գնացին գաղափարի նր. Պաշտոնատարքն, զորս Ռուսեան արքունիք 'ի գործ եած յայսմ գիւտաւորութե, ունէին մարտնչել ընդ այնչափ դժուարութեանց, մինչզի ամենեին դանդաղ եղև յառաջադիմութի նց. Բաջասրտեալք 'ի տկար աւանդութեց ինչ 'ի մէջ ժողովրդոցն Սիպերիոյ նկատմամբ յաջողակ իրիք ճանապարհորդութե յամին հազար վեցհարիւր քառասուն և ութն շուրջ ըզգերսարիծն հիւսիսային արևելից Ասիոյ, ձեռակոխեցին հետևիլ 'ի նոյն ընթացս. Զանդերձեցան նաւք այսու դիտմամբ 'ի զանազան ժամանակս 'ի մէջ գետոցն Լենայ և Քոլիմայ. բայց 'ի սառուցեալ իմիք Ովկիանոսի, զոր բնութիւն ոչ երևէր սահմանեալ առ նաւարկութի, անսահման ձախորդութեանց էին նոքա ենթակայ, առանց բաւական լինելոյ տանել 'ի գլուխ զձեռնարկութիւն իւրեանց. Եւ ոչ մի 'ի նաւուց նախապատրաստելոց յարքունեացն Ռուսաց կարող եղև երբէք կրկնել ընդ այն աչեղ ծագ:

(18) Երևի թէ պարոն Միւլլերն հաւատացեալ

իցէ

քցէ, բայց առանց բաւական հաւաստեաց, թէ գերսարն այն իցէ կրկնեալ. և կայսերական համալսարանն փեթրօպօլկու ըստ իմիք համախոհ է այնմ վն կերպին, յորում Զուքօզբօինօսս եդեն է յաշխարհացոյցս իւր. Սակայն եա ստուգեալ եղէ յաներկբայ վկայութն, թէ ոչինչ նաւ Ռուսսաց առագաստեաց երբէք շուրջ զայնու երկրածագիւ. և երկիրն Զուլթքի ոչ գոլով ենթարկեն կայսերուն Ռուսաց, նմին իրի է անկատար ծանուցեալ։ ‖

Մ՚եք պարտական եմք վն այնր, զոր ինչ գիտեմք զվերջին կողմանցն Ասիոյ յայտնութեցն պարբերոց միջնորդութ ցամաքային արշաւանաց. 'ի բոլոր գաւառսն յայնոսիկ նախազօրանայ կարծիք իմն, թէ երկիրք մեծամեծ տարածութ և բերրիութ կան յոչ կարի իմն բացատ տարակացուէ 'ի սահմանաց իւրեանց. Ռուսք պատկերէին յինքեանս լինել այս մասն ինչ Ամերիկոյ. և զանազան պարականք զուգընթաց լինէին ոչ միայն 'ի հաստատել զնն յայնպիսի կարծիս, այլ և հաւանեցուցանել զնն, թէ բաժին ինչ այնր շարունակի ոչ պարտ էր լինել յոյժ հեռի. Պէսպէս ազգք ծառոց անծանօթք յայն մերկ կողմանսն Ասիոյ աճեցուցեալ եղեն առ ծովեզերբն յարեւելեան հողմոյ իմեքէ. 'ի նոյն հողմոյ բերինէ անդր 'ի սակաւ աւուրս սառն ծփեալ 'ի վն ալեաց. երամք թռչնոց հասանեն ամի ամի 'ի նոյն կողմանէ, և թագաւորէ 'ի մէջ բնակչաց աւանդուի վաղեմի իմն հաղորդակցութն ընդ գաւառս ինչ կայացեալս ընդ արևելս։

Աշուեալ զայս ամ մանաւորութիս, և բաղդատեն զնիրս գաւառացն, զորս գտեն էին 'ի մէջ Ասիոյ, ընդ այնց մասանցն հիւսիսային արևմտից Ամերիկոյ, որք վաղնիկ ծանուցեալ էին, արքունիքն Ռուսաց կերպաւորեն զգաղափար իմն, որ դժուարաւ լինէր կերպաւորեալ յինչ և իցէ այլմէ ազ-

գէ նոճազ սովորեցելոյ դիմագրու լինել 'ի տարժանելի ձեռնարկութիս, և ընդդէմ կալ մեծամեծ դժուարութեանց. Եղին հրամանք շինելոյ զերկուս նաւս 'ի Օքհօց 'ի ծովուն Քամշաթքայ առ 'ի երթալ 'ի ճանապարհ երկրագտութեան. Թէպէտ այնք սոսկալի և անգործ վայրք ոչ մատակարարէին ինչ, որ կարէր լինել 'ի պէտս շինման նց, բայց եթէ զծառս ինչ հացեաց, և թէպէտ ոչ միայն երկաթ, առասանք, առագաստք, և բովանդակ յօգնաթիւ յօդուածք պահանջեալք առ կատարումն նց, և մինչև դարմանք ևս վճ ամրացուցանելոյ զնն ուծկօք պարտ էին գալ ընդ անբաւ անապատսն Սիբերիոյ առ դժուարանաւելի դետովք և ը ճանապարհս գրեթէ անկոխս, սակայն հրաման ինքնակալին և տոկ ժողովրդեանն յաղթեցին
1741 վերջապէս ամ խոչընդակաց. Երկու նաւք կազ-
'ի 4 մեցան. և ընդ հրամանատարութբ նաւապետացն
Յու- Պէհրինկայ և Չիրիքովայ նաւեցին 'ի Քամշաթ-
նիսի. քայ 'ի խնդիր նորոյ աշխարհի 'ի տեղւոջ միում, ուր ոչ ոք մինչև ցայնժամ մերձեցեալ էր, ուղղեցին զընթացս իւրեանց ընդ արևելս. և հանդերձ աշէկոծութբն, որ վաղվաղակի անջատեաց զնաւսն, ոչք ոչ ևս միացան վերստին, և բազում ձախորդութքն պատահելովք նց, յոյսն, զոր յղացեալ ունէին զայնմ ճանապարհորդութէ, ոչ եւ բոլորովին 'ի դերև. Իւրաքանչիւրն 'ի հրամանատարաց եգիտ զերկիր, որ երևեցաւ նց մասն ինչ Ամերիկեան շարունակին. և ըստ դիտողութեանց նց սակաւ աստիճանօք հեռի 'ի ծովեզերէն հիւսիսային արևմտից Կալիֆօրնիայի. Իւրաքանչիւրն եւտ իջանել 'ի ցամաք զխումբ մի յարանց իւրոց. բայց 'ի միում տեղւոջ բնակիչքն փախեան իսկոյն ընդ յանդիման լինելն Ռուսաց. և յայլում ըմբռնեցին և տարան 'ի բաց զորս հասին անդր. և զնաւս նց քայքայեցին. Ռնութի փոթորկին և թշուառութի խուժանի նց պարտաւորեաց զերկո-

սեան

սեան թողուլ 'ի բաց զայն ծովեզր անհիւրընկալ. 'Ի դարձին իւրեանց մերձեցան 'ի զանազան կղզիս, որք ձգին շղթայաձև յարևելից յարևմուտս ընդ երկիրն, զոր գտեալ էին, և ընդ ծովեզրն Ասիոյ. Կալան զխօսակցութի ինչ ընդ ազգայնոցն, որք երևեցան նց նմանել արևմտեան Ամերիկացւոց. Արդ առաջի մատուցին Ռուսաց զքաղուածքն, կամ՝ զամփարայն խաղաղութե. որ է հանդանակ ընդհանուր խաղաղութեան 'ի մէջ ժողովրդեանն հիւսիսային Ամերիկոյ, և սովորութիւն իմն կամայական սահմանադրութե նց մասնաւոր. Կղզիք այսր նորոյ արքիպեղագոսի յետ այնր ժամանակի յաճախեալ եղեն յորսորդաց. բայց արքունիքն եցոյց բարձի թողի արարեալ զառաջարկուն իւր յառաջատելոյ յերկրագիւտս 'ի կողմանսն յայնոսիկ. Եղև վերառեալ անակնկալ յամին հազար եօթնհարիւր վաթսուն և ութերորդի. և նաւապետն Քրէնիցին ընկալաւ զհրամանատարութիւն երկուց փոքրիկ նաւուց հանդերձելոց առ այս վախճան. 'Ի նաւարկութե իւրում պահեաց գրեթէ զնոյն ընթացս առաջնոց նաւորդաց, դիպեցաւ 'ի նոյն կղզիսն. ուսաւ առաւել խնամով զկայաւորութիս նց և զերրսն. և եգիտ 'ի նոցանէ զայլ նորս. յորս նոքա չէին հանդիպեալ. Թէպէտ ոչ յառաջ խաղաց այնչափ անդր քան արևելս առ 'ի այց առնել գաւառին, զոր Պէհրինկ և Չիրիքով ենթադրեցին մասն Ամերիկեան շարունակին, բայց վերադառնալով յընթացս ինչ երևելաբար ընդ հիւսիսակողմն այնց, կարող եղև ուղղել զսխալանս ինչ գլխաւորս, յորս այլք անկեալ էին. և այսպէս օժանդակեաց առ դիւրացուցումն յառաջադիմութե նաւորդաց յայն ծովս:

(19) Եթէ այս լինէր տեղի, ուր մտանէաք յերկայն իմն և մանրածոյ ստորագրութի երկրագրական, բազում հետաքրքրական դիտողութիք կարէին ծնանել 'ի բաղդատելոյ 'ի միասին զվէպս եր-

երկուց ճանապարհորդութեանցն Անսոնայ և զաշխարհացոյցս իւրաքանչիւր նաւարկութեանց իւրեանց. Մի՛ միայն մտածումն մերձեցուցանելի է 'ի մինն և 'ի միւսն. Մե՛ք ոչ կարեմք յենուլ բացարձակ ստուգութեամբ 'ի դիրսն, զորս նշանակեն նոքա զանազան տեղեացն, որոց այց արարին. Օդն էր այնպէս տարապայման միգապատ, զի ցանցաղակի տեսին զափն կամ զատտեղս. և դիրք կղզեացն և ենթադրեալ շարունակացն էր յոլովակի որոշեալ զօրութեամբ հաշուելեաց և ոչ նշմարելեաց. Պէէրինկ և Չիրիքով յառաջխաղացին ևս առաւել անդր դէպ արևելից քան զԿրէնիցին. Երկիրն յայտնեալ 'ի Պէէրինկայ, զոր նա պատկերակերպեաց լինել մասն ինչ Ամերիկեան շարունակին է 'ի 336 աստիճանին երկայնութեան յառաջին միջօրականէն 'ի կղզւոյն Երկաթոյ, և 'ի 58. 28. լայնութ. Չիրիքով գնաց 'ի վր նոյն ծովեզեր 'ի երկայնութ 241. լայն 56. առաջինն պարտի լինել յառաջացեալ վաթսուն աստիճանս 'ի նաւահանգստէն Փեթրոփաւլովսքայ. ուստի մեկնեցաւ. և միւսն աստիճանս 65. Բայց յաշխարհացուցէ ճանապարհորդութեան Կրէնիցինաւ երևի, թէ նա ոչ առաջացեալ աւելի յառաջ դէպ յարևելս քան զ280 աստիճանս և միայն երեսուն և երկու աստիճանս 'ի Փեթրոփաւլովսքայ. 'Ի 1741 Պէէրինկ և Չիրիքով երկոքեան յերթան և 'ի դառնալն կալան զընթացս ինչ, որ եղև մեծագոյն մասամբ ընդ միջօրէ այնր շղթայի կղզեաց, զորս հետազօտեցին, և նկատելով զլեռնային և զառապար տեսիլ գլխաւոր երկրացն, զորս նշմարէին ընդ հիւսիսակողմն, ենթադրեցին զնա դերսարս վերաբերեալս առ մասն ինչ Ամերիկեան շարունակին. որ ըստ երևակայելոյ նց տարածանէր ընդ միջօրէ ց լայն. 56. Ըստ այսմ սարասի գրեցին նոքա յաշխարհացոյցն հրատարակեալ 'ի Միւլլէրայ. և նմանապէս 'ի ձեռագիր աշխարհացուցի միում արարելոյ 'ի միոջէ, որ հրամանա-

տալք

տար էր Նաւու ընդ Պեէրինկաւ հաղորդեալ ինձ 'ի վարդապետէն Ռոպիսոնու. Բայց յամին 1769 Քրէնիկին յետ անցուցանելոյ զձմեռն 'ի կղզւոյն Ալասքա, ուղղեցաւ այնքան 'ի հիւսիսակողմն 'ի դալարին իւրում, մինչզի ընթացք իւր եղև ԿԷ ԱՋ ոյնս, զոր նոքա ենթադրեալ էին լինել շարունակ իմն, և որ 'ի նմանէ գտաւ լինել ծով ինչ ընդարձակ, առնլով փոխանակ կղզեաց լցելոց ժայռիւք զբարձր կատարս լերանց հաստատուն երկրի. Հաւանական է, թէ գաւառք յայտնեալք յամին 1741. դէպ յարևելս ոչ պատկանին առ շարունակն Ամերիկոյ, այլ են շարունակութիւն իմն շղթայի կղզեաց. 'Ի ծայրագոյն զով ամառանէ բոլոր այնց կղզեաց կարէ մակաբերիլ, թէ ոչ իցէ մօտ այնց մեծ ինչ շարունակ. Եւ իւր հրաբուղխ լերանց յայսմ կողման երկրագնտոյ է նշանաւոր. են զանազանք 'ի սոցանէ 'ի Քամշքաթքա. և ոչ մի 'ի կղզեաց մեծ կամ փոքր է առանց հրաբուղխից ցորվայր տարածի նաւարկութիւն Ռուսական. Բազումք վառին ներգործաբար. և լեռինք ամ ուրեք ունին նշանս, թէ արարեալ են երբեմն զժայթքմունս հրոյ. Յորժամ ես պատրաստեցայ ընդունել զվարկածսն, որք կալեալ էին զտեղի յայլ խնդիրս վերաբերեալս առ մարդաբնակութիւն Ամերիկոյ, կարող էք ենթադրել, թէ այս մասն երկրի գոլով կրեալ զբուռն ցնցմունս յերկրաշարժից և 'ի հրաբուղխից, ցամաքալեզուին, որ 'ի վաղնջուց ժամանակս կարէր միաւորել զԱսիա ընդ Ամերիկոյ, խորամատեալ իցէ և կերպաւորեալ զխումբ ինչ կղզեաց վասն սասանութեանն:

Ոչ եղական իմն, զի 'ի նմին ժամանակի, յորում նաւորդք Ռուսեանք թևակոխէին առնել զերկրագիւտս ի հիւսիսային արևմուտս Ամերիկոյ, Սպանիացիք 'ի գործ դնէին զնոյն խորհուրդ յայլմէ կողմանէ. 'Ի 1769 երկու փոքրիկ նաւք զառա-

դաստ

դատ վերացուցին 'ի Լօրէթթա 'ի Գալիֆօրնիա առ 'ի ճանաչել զծովեզերս գաւառին ընդ հիւսիսակողմն այնր ցամաքակղզւոյ. Ես յառաջադէմ եղեն եւ անդր քան զնաւահանգիստն Սոնթեռէցեայ 'ի լայնու". 36. Բայց 'ի զանազան յաջորդական առաքմունս ելեալս 'ի նաւահանգստէ սբ̃յն Վլասայ 'ի Նոր Գալիցիայի՝ Սպանիացիք յառաջեցին մինչեւ 'ի լայն. 58. Օրագրոյն Մօրէլեայ 19. Մարտի, և 14. Մայիսի. 1776. Այլ քանզի օրըստորեայք այսց ճանապարհորդութեանց տակաւին ոչ են հրատարակեալք. ես ոչ կարեմ բաղդատել զյառաջադիմութիւն նց̃ ընդ յառաջադիմութեն Ռուսաց. և ցուցանել, թէ որչափ նաւորդք երկուց ազգաց մերձեցեալ են 'ի միմեանս. Բայց յուսալի է, թէ լուսաւորեալ գործակալն, որ ունի ներկայաբար զառաջնորդութի Ամերիկեան իրակունց 'ի Սպանիա, ոչ զլասցէ զհրատարակն յայսմ ծանօթութէ: ‖

Ապա կարելութի հաղորդակցութեն իւրք 'ի մէջ շարունակաց յայսմ մասին այժմ ոչ եւ յենու 'ի սոսկ մակաբերուիս, այլ որոշեալ է աներկբայելի յայտյայտնդիմանութի. Ցեղք ինչ, կամ տոհմք ամենք թափառական թաթարաց վասն շրջողական հոգւոյն սեպհականի զարմի իւրեանց կարէին տեղափոխել յառաւել մօտաւոր կղզիսն. Եւ որպէս սովորական էր ծանօթութի նց̃ զնաւարկուէ, կարէին անցանելով 'ի միջէ յայլ ժամանել 'ի վերջոյ յեզր Ամերիկոյ. և տալ զսկիզբն իմն մարդաբնակութեն յայնմ շարունակի. Հեռաւորութին 'ի մէջ կղզեաց Մարիանու, կամ Լատրօնեայ և մերձաւորագոյն ցամաքացն Ասիա, մեծագոյն է քան զհեռաւորութին 'ի մէջ մասին Ամերիկոյ, զոր գտին Ռուսք, և ծովեզերն Գամչքհաթքայ. և սակայն բնակիչք այնց կղզեաց են Ասիական զարմէ. Եթէ ոչինչ խափան լինելով հեռաւոր կայառութի նց̃ ընդունիցիմք մեք, թէ կղզեքն Մարիա-

բնանու բնակացեալ իցեն 'ի մերում շարունակէ.
միայն հնաւորութիւն ոչ է պատճառ ինձ, որոյ
վն պարտ իցէ մեզ տարակուսիլ 'ի վն ընդունե-
լոյ, թէ ծագումն Ամերիկացւոց գայցէ 'ի նոյն
աշխարհէ. Հաւանական է, թէ ապագայ նաւորդք
յայն ծովուն ուղղելով առաւել քն հիւսիսակողմն
կարեն գտանել, թէ շարունակն Ամերիկոյ մերձե-
նայ միշտ առաւել յԱսիա. Ըստ պատմութե խու-
ժադուժ ազգին, որ բնակի 'ի գաւառին շուրջ ըզ-
գերասարին հիւսիսային արեւելից Ասիոյ կայ 'ի բաց
'ի ծովեզերէն կղզեակ մի, ուր նոյն իսկ ազգն նա-
ւէ նուազ քան զմի օր. Անտի կարեն նշմարել
զմեծ շարունակ մի. որ ըստ տարազու գծագրութե
նց ծածկեալ է անտառօք. ասացեալ յազգէ իմե-
քէ, զորս ոչ գիտեն զկոչումն. Յայսմ ազգէ
հանդերձեալ են մորթովք կզի՝ ընչաւոր անծա-
նօթ հիւսիսային մասանցն Սիպէրիոյ. եւ որ ոչ
գտանի երբէք, բայց եթէ 'ի գաւառն, որք ա-
ռատ են ծառովք. Եթէ կարէաք մեք վստահանալ
յայս պատմուի, մարթ էր հետեւեցուցանել, թէ
շարունակն Ամերիկոյ զատուցեալ է 'ի մերմէս մի
միայն փոքրիկ նեղուցաւ. եւ չքնաղին բովանդակ
դժուարութիւնք հայեցմամբ հաղորդակցութեն 'ի
մէջ նց. Թերեւս վաստակ ճշմարտելոյ զայն վե-
րապահեալ է արքայուհւոյն, որ նստի այսօր յա-
թոռ մեծին Պետրոսի. որ տալով զանձն առ ամ-
բողջ կատարումն գաղափարին խորհեցելոյ 'ի նմա- Ասիա հա-
նէ, կարող է յաւելուլ զայս շքեղ պատահումն ղորդ
'ի վն այնքանեաց այլոց. որք հանդիսացուցանեն ցոյց ը
զփառահեղ թագաւորութիւն նոցա։ հիւսի-
Այն եւս քաջայայտ է վն նորոգ երկրագտութեց, սային
թէ հաղորդակցութի իմն 'ի մէջ շարունակին մե- արեւ-
րոյ եւ Ամերիկոյ կարէր հոգացեալ լինել հաւա- մտից.
սար դիւրութբ 'ի ծագաց հիւսիսային արեւմտից Յամ
Եւրոպիոյ. Ոչ աւելի անագան քան թէ յիննե- դարուն
րորդ հարիւրեկին Նորվէգք բացին զԳրօէնլանտիա. 830.

և անկեցին անդէն զհատուածս. Հաղորդակցութիւն ընդ այնմ երկրի յետ երկայն իմն ընդմիջահատութեն վերստին նորոգեցաւ 'ի վերջին անցեալ հարիւրեկին. Ոմանք քարոզիչք Լուտերականք և և Մորավիացիք դրդեալք 'ի նախանձուէ առնելոյ եկամուտս՝ վտանգեցին զանձինս հարդունանալ 'ի սառուցեալ և 'ի կորդ կողմանսն յայնոսիկ. Նոցա պարտական եմք մեք բազմաց և հետաքրքրական տեղեկութեանց վերահայեցմամբ բնութեանց և բնակչաց նոցունց. Գիտեմք, զի հիւսիսային արևմտեան ծովեզրն Գրօէնլանտիոյ զատուցեալ է յԱմերիկոյ ևս անձկագոյն իմն նեղուցաւ. և զի 'ի վերջ խորշին, առ որ ընդածէ նեղուցն, մեծապէս հաւանական է, թէ միաւորիցին. և զի բնակիչք երկուց աշխարհացն ունին զհամեմատութիւն ինչ ընդ իրեարս. և զի Էսքուիմաուքսք Ամերիկոյ նմանին կատարելապէս Գրօէնլանտացւոց 'ի կերպարանս, 'ի զգեստս և յեղանակին կելոյ. և զի ոմանք 'ի նաւավարաց, որք ստացեալ էին զծանօթութի սակաւուց բառից 'ի լեզուէն Գրօէնլանտիոյ, պատմէին, թէ այսորիկ հասկացեալ էին 'ի Էսքուիմաուքսաց. և զի հուսկ յետոյ քարոզիչ ոմն հմուտ լեզուին Գրօէնլանտիոյ այց առնելով երկրին Էսքուիմաուքսաց եգիտ հիացմամբ իւրով, զի խօսէին զնոյն լեզու բնակչացն Գրօէնլանտիոյ. և զի նմ եղանակաւ էին նոյն ժողովուրդ. և զի մեք այսորիկ ընկալան զնա և վարեցան ընդ նմա իբրև ը բարեկամի և եղբօր:

Յայսոց որոշից գործոց ոչ միայն հաստատեալ լինի արենակցութի Էսքուիմաուքսաց և Գրօէնլանտացւոց, այլև ցուցանի կարելութին մարդաբնակ լինելոյ Ամերիկոյ 'ի հիւսիսոյ Եւրոպիոյ. Եթէ Նորվէգք 'ի խժական դարու միում, յորժամ գիտութիւն ոչ էր սկսեալ և ոչ իսկ փայլածել 'ի մէ հիւսիսոյ Եւրոպիոյ, ստացեալ ունէին զայնպիսի իմն ճանաչումն նաւական առ 'ի բանալ զհա-

զորդակցութիւն իմն ընդ Գրօէնլանտիոյ, նախնիք նց այնպէս անձնատուրք 'ի թափառիլ ընդ ծով, որպէս անձնատուրք էին Թաթարք 'ի շրջիլ ընդ ցամաք, կարող էին 'ի հեռաւորագոյն իմիք դարու կատարել զնոյն ճանապարհորդութիւն և հաստատել զհաստատած իմն. որոյ սեռունդք յառաջանալմամբ ժամանակի ընդունակ լեալ էին 'ի տեղափոխել յԱմերիկա. Բայց եթէ փոխանակ համարձակելոյ առագաստել ուղղակի 'ի սեպհական ծովեզերէ իւրեանց 'ի Գրօէնլանտիա, ենթադրեսցուք, թէ Նորվեգք կալեալ իցեն զընթացս ինչ առաւել շրջահայեացս և յառաջ խաղացեալ 'ի Շէթլանտայ առ կղզիսն Ֆերօէ, և 'ի սոցանէ առ Իսլանտա, ուր ՚ի Թ դարու տնկեալ էին հարգունութիւ, յառաջադիմութի նց կարէր լինել այնից աստիճանական, զի այս նաւարկութի ոչ պարտ էր նկատել կամ առաւել երկայն, կամ վտանգաւորագոյն քան զճանապարհորդութիւն, զորս յայնմ համարձակ և ձեռնարկեց զարմէ մարդկան գիտեմքկատարեալ յամ դարս։
Թէպէտ կարելի է, թէ Ամերիկա ընկալեալ իցէ զառաջին բնակիչս իւր 'ի մերմէ շարունակէ կամ 'ի հիւսիսային արևմտից կամ 'ի հիւսիսային արևելից Ասիոյ, սակայն երևի լինել բաւական պատճառ ենթադրելոյ, թէ նախահարք բոլոր Ամերիկեան ազգաց 'ի գլխոյն Հօռնայ ցհարաւային սահմանս Լապրատորեայ տեղափոխեալ իցեն 'ի հիւսիսիրջնոյն ժամանակն, քան թէ յառաջնոյն. Էսքումոութք են միայն ժողովուրդ յԱմերիկա, որ 'ի տեսիլն և 'ի յատկութեան բերէ զնմանութի ինչ ը հիւսիսային Եւրոպացիս. Նոյնպէս են նոքա տեսակ իմն մարդկան զատուցեալ, տրոհեալք յամ ազգաց այնր շարունակի 'ի լեզուի, 'ի խառնուածն և յեղանակն կելոյ. Ապա ծագումն նց կարէ հաւանականաբար հետազօտել յայն ազգերական կանխաւ ակնարկեալ յինէն. Բայց 'ի մէջ այլ ամ բնակչաց Ամերիկոյ է այնպիսի իմն հիանալի նմա-

Հատ- նոյն- նոքա բազմ- մարդ- ցեալ՝ն հիւ- ռոյէն ուրն- ընչ.

նութի 'ի կերպարանս մարմնոց նց և յօրակութիւ
մտաց նց. մինչզի հանդերձ զանազանութբն պատ-
ճառեցելով յազդեցութե կլիմային, կամ 'ի հա-
ւասար զարգացմանէն 'ի քաղաքականութե պար-
տիմք դատել զնս իշխալս 'ի նոյն զարմէ. Կարէ
լինել 'ի նս պէսպիսութի իմն 'ի թխութե. բայց
կարէ դատնիլ ամ ուրեք նոյն սկզբնական գոյնն.
Իւրաքանչիւր ցեղ ունի զմասնաւոր ինչ, որ զա-
նազանէ զնա. բայց յամենեսեան նշմարին կազ-
մուածք ինչ հասարակք բովանդակ զարմին. Է
նկատելի իմն, զի յամ մասնաւորութիս եթէ յան-
ձինս նց, եթէ 'ի հանդամանսն, որք նշանաւորեն
զԱմերիկացիս, ունին նոքա զնմանութի ինչ ընդ
բիրտ ցեղիցն սփռելոց 'ի մի հիւսիսային արեւելից
Ասիոյ. բայց գրեթէ և ոչ մի ոք 'ի նոցանէ ընդ-
ազգայնոցն բնակելոց 'ի հիւսիսային ծագսն Եւ-
րոպիոյ. Արդ կարող եմք վերածել զնս առ նա-
խասացեալ սկիզբն. և կնքել, թէ գոլով Ասիա-
կան նախահարք նց զետեղեալք յայն մասունս
Ամերիկոյ, ուր Ռուսք յայտնեցին զմերձաւորու
երկուց շարունակաց, սփռեցան սակաւ առ սակաւ
'ի մի պէսպէս կողմանց նր. Այս պատմու յա-
ռաջադիմութե մարդաբնակութենն յԱմերիկա հա-
մակերպ է աւանդութեց Մեքսիքացւոց, որք հային
'ի սեպհական ծագումն նց. և որք թէպէտ և ան-
կատարք նախապահեալ եղեն առաւել հօգաբար-
ձութբ. և արժանի են մեծագոյն հաւատարմութե
քան զայլ որոյ և իցէ ժողովրդեան 'ի Նոր աշ-
խարհին. Հաւաստեն Մեքսիքացիք, թէ հին նա-
խահարք իւրեանց եկեալ իցեն 'ի հեռաւոր իմն
աշխարհէ կայացելոյ ի՛ հիւսիսային արեւելս Մեք-
սիքոյ. Նկարեն զպէսպէս կայանս ըստ չափուն,
որով յառաջ խաղացին նոքա անտի 'ի ներքսագոյն
գաւառսն. և է հաւաստեաւ նոյն ճանապարհն.
զոր պարտ էին ունել, եթէ փոխադրեալ էին յԱ-
սիոյ. Մեքսիքացիք 'ի ստորագրելն զկերպարանս
նա-

նախահարց իւրեանց, զարարս և զսովորութիւնս կենաց նց յայնմ միջոցի ժամանակի գծագրեն կատարելապէս զսոպռ թաթարսն. յորոց ենթադրեմ զնն կանխաւ ածանցեալս ։

Այսպէս աւարտեցի զքննութի իմն համարեալ յինէն այնքան ծանրակշիռ, զի դժպատեհ իմն լեալ էր 'ի բաց թողուլն զայն 'ի գրելն զպատմութիւն Ամերիկոյ համարձակեցայ հետազօտել առանց յանդըգնելոյ վճիռ հատանել. Մատուցեալ առաջի ընծայելով զվարկածս, ոչ ձկտիմ հաւատացուցանել զդրութի իմն. Յորժամ հետախուզութի իմն 'ի բնութէ իւրմէ է այնպիսի կնճռեալ և մթին, զի համարի անկարելի գալն յաւարտարանութիւ ստոյգս, կարէ լինել վաստակ ինչ 'ի նշանակելն զհաւանականն ։

Պայման և յատկութի Ամերիկեան ազգաց յորժամ ծանօթացեալ եղեն Եւրոպացւոց արժանաւորին առաւել ուշադիր իմն խորհրդածութեան քան զհետազօտութի ծագման նց. Վերջինն է առարկայ իմն սոսկ հետաքրքրութե, ուր առաջինն է մի յառաւել ծանրակշիռ և յառաւել հրահանգիչ ծանօթութեց, որ կարող իցէ զբաղեցուցանել զփիլիպասանն և զիմաստասէրսն. Առ 'ի բովանդակել զպատմութի մարդկեղէն մտաց և ժամանել առ կատարեալ իմն ճանաչումն բնութե իւրոյ և գործողութեց իւրոց հարկաւոր է քննել զմարդն յամ պէսպէս կայաւորութիս, ընդ որս անցեալ է. Պիտոյ է զհետ երթալ նր 'ի յառաջադիմութիս իւր ընդ զանազան վիճակս ընկերութեն ըստ չափուն, որով յառաջադէմ լինի աստիճանաբար 'ի տղայական վիճակէ քաղաքական կենաց առ հասունութի իւր և առ խոնարհումն. Պարտիմք նշմարել յամ հասակս, թէ որպէս կարողութիք իմացման իւրոյ փթթին. պարտիմք զմտաւ ածել զջանս ներգործական կարողութեց իւրոց, հսկել 'ի վր շարժմանց յօժարութեն ըստ համեմատութեն, որով

Պայման և յառաջնոյն Ամերիկացւոց ։

ծնանին նոքա 'ի սրտի իւրում. և նկատել, թէ յո՛ դիմեն և յինչ վախճանէ խրախուսեալ են. Իմաստասէրք և վիպասանք նախկին Յունաստանի և Հռոմայ առաջնորդք մեր յայսմ, ո՛չ և յայլում հետազօտութե՛ կալան միայն զկողպարաւոր իմն տեսութի՛ այսպիսի առարկայից, այնու զի կալան աշխատութիւ՛ զպարապ նկատելոյ զմարդն 'ի նախկին և յառաջեալ ուրուական վիճակի. 'Ի բովանդակ յայն կողմանսն երկրի, զորոց տեղեկացեալ էին նոքա, քաղաքական ընկերութիւն արարեալ էր զնշանաւոր զարգացմունս. և ազգք աւարտեալ էին զհարուստ մի մասն ընթացից իւրեանց, յառաջ քանթէ սկսանէին նոքա նկատել զայն. Սկովտացիք և Գերմանացիք առաւել բիրտ ժողովուրդք քան զորոց նախկին հեղինակ ոք փոխանցուցեալ իցէ առ մեզ զարժանահաւատ պատմութի իմն, ունէին զհօտս և զանդեայս և ստացեալ էին զյատկութի զանազան տարազուց, այնպէս զի բաղդատելով զնս ընդ մարդկային ազգի 'ի նախկին վիճակի իւրում, մարթ է ասել, թէ ժամանեալ էին նոքա յոչ փոքրիկ իմն աստիճան քաղաքականութեան:

Նոր աշխարհ ներկայացանէ վայրենիս և կերպ մանկ ծերէրէ:

Բայց ծանօթութի՛ նորոյ աշխարհի ընդարձակեաց զծիր հայեցողութե՛. և ակն յանդիման արար զազգս նս 'ի ճանապարհի յառաջադիմութե՛ իւրեանց յոյժ նուազ զարգացեալս այսպիսի նկատմամբ քան զազգս մերոյ շարունակի. Ամերիկամարդն երևի ընդ առաւել ուրուական կերպարանաւ, յորում կարիցեմք պատկերել, թէ իցէ. Տեսանին հասարակութի՛ք, որք սկսանին առ ժամայն անդ միաւորիլ. և կարեն քննել զզացմունս և գործողութի՛ն մարդկեղէն էակի 'ի տղայութե՛ ընկերական կենաց. այս է, յորժամ զգան նոքա անկատարելապէս զոյժ կարից իւրեանց, և հազիւ թէ թողեալ են զնախնական ազատութի իւրեանց. Այն վիճակ նախկին միամտութե՛, որ 'ի մերում շա-

չարունակի ճանաչիւր միայն երեւակայական գծագ-
րութիւնք բանաստեղծից, գէթ իրաւէս յայլում։
Ամենագոյն մասն բնակչաց իւրոց ոչ ճանաչէին
ոչ զաշխատութիւն և ոչ զմտավարժութիւն. ագիտա-
նոյին զարհեստս. ոչ ունէին զանուն յանկուն
՚ի միտս, վայելելով ՚ի հասարակի ՚ի պարգևս ա-
ռատաձեռննալս իւրովի ՚ի բարութէ բնութէ. Այն
երկու ազգք միայն յայնմ ընդարձակ շարունակի
ելեալք ՚ի գուրս յայսմ ուրուական վիճակէ. որք
և արարեալ էին զառաջադիմութիւն ինչ ՚ի ստա-
նալն զմտաւոր տեսակս, կամ յարկն յօրինադ-
րութիւնս որք պատկանին առ քաղաքական ընկե-
րութիւն. Կառավարութիւն և վարք նց մացեն բնա-
կանաբար ՚ի ներքոյ քննութեն մերոյ յորժամ խօ-
սեսցուք զգտմանէ Մեքսիքոյ և Փերուայ. և յայն-
ժամ ունիցիմք գաշտ նկատելոյ զԱմերիկացիս ՚ի
բարձրագոյն աստիճանի զուէ, յոր երբէք ժա-
մանեալ իցեն:

Առ այժմ դարձուսցուք զուշադրութ մեր և զհե- Այս հե-
տազօտութի առ փոքրիկ անկանւ ցեղս. որք տե- տուղ-
ցակալեն զայլ ամ մասն Ամերիկոյ. Ի մէջ նց, տուեր
թէպէտ և հանդերձ աննմանութբ իւիք ՚ի յատ- սահմա-
կութն, ՚ի վարս, և ՚ի սահմանադրութիս, վիճակն նոցա-
ընկերութ էր միակերպ. այլև այնպէս բիրտ, զի բեւ-
կարէ ճշգրտիւ մերձեցուցանել առ ամ անհատս առ
նց յարանմանութի վայրագաց. Յընդհանրական ծեր-
ժմք վիպասանութն Ամերիկոյ լինէր յայժ տարա- գոյն
դէպ ստորագրելն զպայման որ և իցէ փոքրիկ ցեղ.
հասարակութ, կամ հետազօտելն զամ մանր պա-
րակայ, որ համգամանկեցէ ՚ի կերպաւորել զյատ-
կութի անդամոց իւրոց. Այսպիսի իմն որոնումն
ածէր առ մանաւորութ անբաւ և տաղտկալի տա-
րածութն. Արակութիւնք պատկանեալք առ ժող-
վուրդ համօրէն զանազան ցեղից ունին զայնպիսի
մերձաւոր վերաբերութի, զի կարեն նկարիլ նո-
քիմբք կաղմուածովք. Յորժամ պարակայք ինչ

երևեցին ակնարկել զտարազանութիւն 'ի յատկութե նց և 'ի վարս, և որք արժանի իցեն մտադրութե, բաւական լիցի ակնարկելն զնն յամ Նուագի, յորում ընդառաջ եկանեն, և հետազօտել զմասնաւոր պատճառս նոցա:

Պիտանա- քին է փոփոխա- ցեալ քննելն զայն- ձանէ. Զօրագոյնս դժուարին է նախահոգալն զգուշիլ և զարժանահաւատ տեղեկութի նկատմամբ ազգացն յորժամ սկսանին լինել քաղաքականացեալ. Նշմարելն զճշմարիտ յատկութի նց ըստ այսմիկ ուրուական կերպարանաց և որոշելն զգծագրութիւն, որք տրոհեն զայն լինէր գործ դիտողի ուրուք ճոխացելոյ անաչառութբ և նուրբ ընտրողութեամբ. Յամ կետի ընկերութե ճոխութիւք, իմաստք և փափագք մարդկան այնչ յարմարեալ են առ սեպհական վիճակ նց, մինչզի եղանին գաղափարք գերազանցութե անձանց իւրեանց. ընկերակցին զտեսակս կատարելութե և երջանկութե ընդ իրացն, որք երևին նոցին պատկանեալ. և յայն տեղիսն, ուր պակասին առարկայքն և վայելմունքն, առ որս սովորեալ են նոքա, արտասանեն համարձակ լինել անդ ժողովուրդ խուժադուժ և տառապեալ. Ստուգութ ծնանի այն փոխադարձ անգոսնութի, որով անդամք անհաւասար հասարակութեց յաստիճանս կրթութե իւրեանց նկատեն զայլս ամենեսին. Մեզք հրահանգք խելամուտեալք շահեկանութեցն, զորս հանեն նոքա 'ի լուսոյ իւրեանց և յարհեստից, բերեալք են 'ի նկատել զբիրտ ազգս մասնաւոր իմն արհամարհութբ. և վն հպարտութե վերնագունութե իւրեանց դժուարին հաւանել, թէ պարապմունք նց, կամ զգածմունք նց, կամ հաճութիւնք իցեն արժանի մարդոյ. Հազիւ երբեք հասարակութիւնք 'ի նախկին և յուրուական վիճակի իւրեանց ստացան զբաւդ անկանելոյ ընդ դիտողութբ մարդոց ճոխացելոց կորովութբ մտաց՝ վերնագոյն եղելոց ուսմնական նախադատութեց և ընդունակ նկատելոյ ձըստակ տարորոշիչ աչօք ըն-

մարդն

մարդն ընդ որում և իցէ տեսլեամբ, որում երևիցի:

Սպանիացիք, որք եղեն առաջինք յայց առնելն [illegible] Ամերիկոյ, և կալան պարապ քաջ նկատելոյ զպէս- [illegible] պէս ցեղս իւր, յորժամ էին տակաւին անխախտք, [illegible] և ոչ նուաճեալք ընդ լծով, ոչ ունէին բնաւ զօ- [illegible] րութիւն պահանջեալս տա 'ի նշմարել զխորալի [illegible] տեսարանն, որ յանդիման լինէր աչաց նց. Մ՚է Նոյ տէ 'ի դարուն, յորում կեային, և ոչ յազգէն, յոր- [illegible]. մէ էին, արարեալ էր զարգացումն 'ի ճշմարիտ գիտութեն, որ չնչէ զազնուական և զհանրական իմաստս. Տիրապետօղք նորոյ աշխարհի էին մեծագոյն մասամբ տգէտ բաղդորդք՝ զուրկ յայն ամ մտաւոր տեսակաց, որք կարացեալ էին ուղղել զնն 'ի նկատել զառարկայս այնչափ զանազանս 'ի նոցանէ, որոց կանխաւ տեղեակք էին. Յանապազորդ 'ի մէջ վտանգաց և 'ի մշտնջենաւոր հակառակութեն ընդ խստագոյն դժուարութենց, կալան սակաւ դիւրութի և նուազ ընդունակութիւն առ 'ի առնել զհայեցողական հետազօտութիս. Ոչ արաւելք առնելոյ զստացումն այնպիսի ընդարձակ և ճոխ երկրի, և երջանիկք մն գտանելոյ զայն կալեալ 'ի բնակչաց անզմբռնից 'ի պաշտպանել, վաղվաղակի վճռեցին զնն իբր մարդիկս պարապեալ իրիք կարգի, սահղծեալք միայն մն ծառայութե. և պարապեցան մանաւանդ 'ի համարել զօգուտս աշխատանաց իւրեանց քանթէ 'ի քննել զգործողութիս մտաց նց. և զպատճառս օրինաց և սովորութենց նց. Նոքա, որք մտին յաջորդաբար 'ի ներքս գաւառացն, ուր ոչ հասին երբէք աւերմունք առաջնոց տիրապետողաց, էին ընդհանրապէս նովին հանգամանօք, քաջք և ձեռներէցք 'ի բարձրագոյն աստիճանի. բայց այնպէս սակաւ լուսաւորեալք, զի ոչ գիտէին նշմարել, և ոչ ստորագրել զայն, զոր տեսանէին:

Ոչ միայն անընդունակութիւնն, այլև նախատա-

Մ. Նա- տութիւք Սպանիացւոց առնեն յոյժ սխալական
խոտա- զպատմութիւն նց շուրջ զծողովրդեամբ Ամերի-
տունեց կացւոց. Իսկոյն ընդ անկելն զհաստատեալ 'ի նոր
նց. տիրապետութիւն իւրեանց յարեալ հակառակութի
իմն կարծեաց վերահասութեամբ վարմանն ընդ ազ-
գայնոց. Սոսն մի փոյթ մշանջենաւորելոյ զգե-
րութի նց, ներկայացոյց զնոսա իբրև զանասունս,
իբրև զարմ ինչ յամառեալ, անընդունակ կարող
լինելոյ ստանալ զկրօնական վարդապետութիս. և
յաջողակ լինելոյ առ պաշտամունս քաղաքական
կենաց. Մնւս մասն խրախուսեալ 'ի բարեպաշտ
ջահասիրութէ վն դարձման նց պնդէր, թէ Ամե-
րիկացիք, թէպէտ և բիրտք և տգէտք, էին հե-
զաբարոյք, անսացօղք, սիրունք. և թէ յարմա-
րեալ կրթութք և կանոնաւորմամբք կարէին կեր-
պաւորիլ սակաւ առ սակաւ 'ի բարի քրիստոնեայս
և 'ի պիտանի քաղաքացիս. Այս հակառակութի,
զոր պատմեցի կանխաւ, վարեալ եղև ամ ջեր-
մութբ, որ բնական է յորժամ կիրք առանձին
շահուն 'ի միոյ կողմանէ, և նախանձ կրօնին 'ի
միւսմէ խրախուսեն զվիճողսն. Նազունք յաշխար-
հականաց յարեցան յառաջին կարծիսն. բովան-
դակ եկեղեցականք եղեն ջատագովք երկրորդին,
և մեք տեսանեմք միօրինակ, զի ըստ որում հե-
ղինակ ոք վերաբերիւր առ մի յերկուց կողմանցն
էր յարմար 'ի մեծացուցանել զառաքինութիս, կամ
'ի բարդել 'ի վեր քան զչափն զպակասութիս Ամե-
րիկացւոց. Այս հակադրեալ պատմութիք անհե-
ցուցանեն զդժուարութիս ժամանելոյ առ կատա-
րեալ իմն ծանօթութի յատկութեն նց. և առնեն
կարևոր ընթեռնուլ թերահաւատութբ զամ ստո-
րագրութիս տուեալս զնոցանէ 'ի Սպանիացի հե-
Դի պլա- ղինակաց, կամ գոնէ ընդունել զպատմական բանս
Ընտանց նց յապաւմամբ իմիք:
Ճիշտա- Ասցին գրեթէ երկու հարիւրեակք յետ ծանօ-
ծոյից. թութեն Ամերիկոյ յառաջ քանթէ բարք բնակ-

չաց

չաց իւրոց զարմացուցանէին մասնաւոր եղանակաւ զուշագրաւն իմաստասիրաց. Տեսին նոքա 'ի վախճանի, թէ յայտնութի պայմանի և յատկութեան նց կարէր տալ նց զասպարէզ ընդ զգաստարկութիւն իմն մեծ 'ի վիճակասանութեան մարդկային տեսակի, և քննադատել զնոսա առ հայեցողութիւս ոչինչ նուազ հետաքրքրականս, քանթէ ծանրակշիռս. Ապա մոլին նոքա յայս նոր ընթացս ուսման բազում եռանդգին. բայց փոխանակ ծաւալելոյ զլոյս 'ի վր առա, կային, հանգամանակեցին տարապալու իմն 'ի պատատել զայն 'ի թանձրագոյն խաւար. Կարի անհամբերք 'ի յօրինել, փութացան ևս 'ի վճռել. և սկսան հաստել զգրութիս, յորժամ պարտէին երթալ 'ի խոյզ եղելոցն առ 'ի կայացուցանել անդէն 'ի վր զհիմունս իւրեանց. Յարեալք յերեւութէ իմէքէ այլասեռութեան 'ի մարդկային տեսակի նորոյ աշխարհին, և շփոթեցեալք 'ի տեսանելն զհամատարած իմն ցամաք տեղակալեալ 'ի մերկ, 'ի տկար և 'ի տգէտ մարդոց, ոմանք 'ի հեղինակաց յոյժ անուանեաց հաստատեցին, թէ այս մասն երկրագնտոյ էր նորոգ ելեալ 'ի դուրս 'ի ծովէ, և եղեալ յարմար բնակութեան մարդոյ. և թէ ամ ինչ ունէր անդէն զտպաւորեալ նշան արդի իւրք ծագման. և թէ բնակիչք իւր կոչեցեալք դեռևս 'ի կոյսաւորութե, և տակաւին 'ի սկզբան ընթացից իւրեանց էին անարժանք եղեալ լինելոյ 'ի համեմատութե ընդ ժողովրդեանն առաւել նախկին և լուսաւորեալ ցամաքին: Այլք պատկերակերպեցին, թէ ընդ ազդեցութե խիստ նահանգի իւրք, որ ճնշէ և տկարացուցանէ զկենսական սկիզբն, մարդն Ամերիկայ ոչ հասանէր երբէք առ կատարելութիւն, որ անկ է բնութե իւրում, այլ մնայր շնչաւոր ինչ վայրագոյն կարգի, պակասեալ յուժոյ 'ի կերպի իւրում մարմնոյ և զուրկ 'ի զգայականութե և 'ի զօրութե 'ի գործողութիս մտաց. Ընդ հակառակս այսց երկուց այլք իմաս-

տա-

տասէրք համարեցան հասանել մարդոյ առ բարձրագոյն արժանաւորութիւն իւր և գերազանցութիւն բազմօք յառաջ քան զժամանելն առ վիճակ իմն զտութեն. և թէ 'ի տխմար պարզմտութեն վայրագ կենաց ցուցանէ զամբարձումն իւր մտաց, զանկախութիւն ոգւոյ և զեռանդն իմն ըղձի, զոր ընդունայն է խնդրել 'ի մէջ անդամոց կանոնաւորեալ ընկերութեանց. Դոքա երևին համարել իբր կատարելագոյն վիճակ մարդոյ զայն, որ ոչ է քաղաքականացեալ. Ստորագրեն զբարս անկիրթ Ամերիկացւոց այնպիսի յափշտակութ. մտաց, որպ եթէ առաջադրէին զնս իբր զգաղափարս մնացեալ ազգի մարդկան. Այս հակառակն տեսականութիւնք առաջի եդեալ են հաւասար վստահութ. և անսովոր զօրութ. մտաց և ճոռոմաբանութեն, գոլով հեղինակք նց նրբացեալք առ 'ի տալ նց զերևոյթ իմն ճշմարտութեն:

Սա քանզի այս ամ պարագայք զուգընթաց լինին առ 'ի կնճռել և աղօտացուցանել զհետազօտութիւն վիճակի անկիրթ ազգացն Ամերիկա, կարևոր է ցուցանել զայն բազում զգուշութ. Յորժամ 'ի հետախուզութիւս մեր թողումք զմեզ առաջնորդել 'ի զգուշաւոր քննութ. այնց սակաւ փիլիսոփայից, որք այց արարեալ են այնմ մասին երկրագնտոյս, կարեմք համարձակիլ 'ի վճռահատել. Բայց ստիպեալք 'ի դիմել առ վեր 'ի վերոյ դիտողութիւս ռամիկ ճանապարհորդաց, նաւավարաց, վաճառականաց և նաւարտակաց, պիտոյ է երբեմն երթալ դանդաղ. և բաղդատելով զգործսն 'ի վերացեալսն ջանալ պարզաբանել զայն, որ ոչ բարւոք նշմարեցաւ 'ի նոցանէ վն պակասութեն լրջմտութեան Առանց նպաստելոյ մակաբերութեց, կամ ցուցանելոյ զմիտումն կամ առ մինն կամ առ միւս կարգադրութիւն, պարտիմք հնարել հաւասար խնամով առ 'ի ոչ բերել 'ի ծաղր, կամ տարապայման իմն զարմացման, կամ կարի իմն վարդա-

պե-

պետական քամահման բարուցն, որք ստորագրին։ Ա․ 'ի ածել զիս առ այս խոյզ մեծագոյն հոգա. Ոճն բարձութեամբ, պարզեցից զայն որչափ կարելի է․ պահել Մարդն զոյր իբր անհատ իմն յառաջ քան զի-'ն հենելն անգամ իրիք հասարակութե․ և 'ի դէպ է պաշճանաչել զորպիսութիւն, որք պատկանին նմա պա-ե, ընդ առաջնով երևմամբ յառաջ քան զիմեն 'ի քննել զայնս, որք ծնանին 'ի վերջին վերաբերութեն․ Այս մանաւորաբար կարեոր է, յորժամ պատրաստի ոք 'ի հետազօտել զբարս բիրտ ազգացն․ Քաղաքական միութի նոցա է այնպէս անկատար, սահմանադրութիք նց այնպէս նուազք, և քաղաքական կանոնաւորութիքն այնպէս պարզք և այնպէս սակաւ իշխանականք, մինչզի արժանի են նկատել մանաւանդ իբր մարդիկ անկախք քան թէ իբր անդամք կանոնաւոր իրիք ընկերութեան․ Յատկութի վայրագ մարդոյ ծագի գրեթէ ողջոյն 'ի զգացմանց իւրոց և 'ի կրից, ըստ որում է անհատ․ և զգայ զամենափոքր ազդեցութի յանկատար ենթարկուէ իւրմէ առ կառավարութին և առ կարգն․ Ապա յառաջատեցայց 'ի խոյզս իմ 'ի վ՛ բարուց Ամերիկացւոց այսու բնական ոճով․ այս է, յայնմանէ, որ է պարզ, առ այն, որ է առաւել մանուածոյ․ Նկատեցից նախ՝ զմարմնաւոր բաղկացութ Ամերիկացւոց 'ի կողմանս յայնոսիկ, որք անցանեն այժմիս ընդ հանդիսիւ մերով․ Երկրորդ՝ զորպիսութի մտաց նց․ Երրորդ զառտնին կացս նց․ Չորրորդ՝ զքաղաքական կացս նց և զսահմանադրութիս․ Հինգերորդ՝ զկարգ պատերազմի նց և զհրապարական ապահովութե․ Վեցերորդ՝ զարհեստն, յորս էին վարժեալք․ Եօթներորդ՝ զը-կրօնական ճանաչմունս և զծէսս նց․ Ութերորդ՝ զուրոյն վարմունս ինչ, որք ոչ են վերածելի առ իմն յատացեալ յօդուածոց․ Իններորդ կնքեցից ընդհանրական իմն քննութե և վարկմամբ առաքինութեանց և պակասութեանց նոցա։

Աս.

Բնակչաց Ա. ցուցանէ տարբերութ ծագ. Կլիմայն ազդէ նուազ 'ի վ͞ր մարդկային մարմ-
նոյ քան 'ի վ͞ր մարմնոյ զինչ և իցէ այլ շնչաւո-
րի. Այն շնչաւորք սահմանաւորեալք առ մասնա-
ւոր ինչ կողմն երկրագնտոյս. և սոքա ոչ կեան
արտաքոյ այնր. այլք թէպէտ և կարեն վերածիլ
'ի հանդուրժել տուգանաց իւրեք կլիմայի օտար ե-
ղելոյ ն͞ց. սակայն դադարին 'ի բազմանալոյ ընդ-
տարեալ լինելն արտաքոյ այնր նահանգի, զոր
բնութիւն սահմանեալ է ն͞ց. Նաև նոքա, որք
երևին ընդունակք լինելոյ իբր բնիկք 'ի զանազան
կլիմայս՝ զգան զարդիւնս երթալոյ հեռի 'ի սկզ-
բնական գետնոյն. և սակաւ առ սակաւ թօշնին
և այլասեռին 'ի կատարելութենէն, որ է յատուկ
տեսակի իւրեանց. Մարդն է միայն 'ի կենդանի
ստեղծուածոց, որոյ կերպն է միանգամայն այն-
պէս տոկացող և դիւրադարձ, զի կարէ սփռիլ
'ի վ͞ր ա͞մ երկրի, լինել բնակիչ ա͞մ կողման,
աճել և բազմանալ ընդ որով և իցէ կլիմայիւ.
Բայց և մարմին մարդկային ենթադրեալ ընդհան-
րական օրինաց բնութե͞ն ոչ է բնաւին զերծ յազ-
դեցութե͞ կլիմային. և յորժամ գտանի նշաւակ
ծաղաց կամ ջերմութե͞, կամ ցրտութե͞, նուազի
'ի հասակէ և 'ի յուժոյ. Յառաջնում նուագի
իբրև տեսին գտիչք զբնակիչս նորոյ աշխարհի,
լցան այնպիսի հիացմամբ, զի սկսան պատկերա-
կերպել զնոսա զարմ ինչ մարդկան տարբեր 'ի
Որա- նոցանէ, որ 'ի միւս կիսագնտի. Գոյն մարմնոյ
ճոլէ նոցա թուխ խառնեալ իբր նման գունոյ պղնձոյ.
ծագմանց. Հերք գլխոյ ն͞ց են միշտ սևաւք, երկայնք, կրնճ-
ռեալք ևնուրբք. Ոչ ունին զմօրուս և ա͞մ մասն
մարմնոյ ն͞ց է լերկ կատարելապէս. Անձինք նոցա
են միջասահմանք ըստ մեծութե͞ն, ուղիղք, և բա-
րիոք չափակցեալք :

(20) ‖ Սակաւ ճանապարհորդք կալեալ են զպա-
րապ նշմարելոյ զազգայինս Ամերիկոյ 'ի պէսպէս
նահանգս իւր որպէս տէրն Անտոնիոս Ուլլօա. 'Ի

գոր-

գործում իմիք հուսկ յետոյ հրատարակեցելոյ յիւրու-
մ. ստորագրէ նա այնպէս զյատուկ կազմուածս
այնր զարմի ‖ Սա փոքրագոյն իմն ճակատ ծած-
կեալ հերօք դէպ 'ի վերջն իւր, այս է, մինչև
ցկէս յօնիցն. աչք փոքրիկք, ունչք իմն նուրբ,
նուաղ և կախեալ դէպ 'ի շուրթն, որ 'ի վերոյ.
դէմք լայն, ականջքն նմանք, վարսք ամենևին
սևաւք, նուրբք և կնճռեալք, անդամքն բարեկազմ,
ոտքն փոքրիկ, մարմինն բարեչափ, և բոլորն ո-
ղորկ և առանց հերաց մինչև ցծերութին, յորում
ստանան սակաւ ինչ մօրուս, բայց ոչ երբեք 'ի
կզակն. ‖ Ասպետն Փինթօ, որ եկաց զամս բա-
զումս 'ի միում մասին Ամերիկոյ, զոր Ուլլօա ոչ
ետես երբեք, տայ մեզ զստորագրութիւն իմն
զընդհանրական կերպարանաց Հնդկաց այնց տե-
ղեաց. Ամենեքեան են պղնձագոյն զանազանութբ
իմիք ստուերի, ոչ համեմատութբ տարակացութն
նց 'ի հասարակածէն, այլ ըստ աստիճանի ամ-
բարձման երկրաստանին, ուր բնակին. Նոքա,
որք կան 'ի բարձր գաւառի միում, են առաւել
գեղեցիկք քան զբնակիչս ցածուն ճախին երկրացն
առ ծովեզերբն. Երեսք նց է բոլորակ, սակաւ
ինչ աւելի տարակայց թերևս 'ի ձուաձև երեսաց
որոց և իցէ այլոց ժողովրդեան. Ճակատ նց է նեղ,
ծայրք ականջաց նց հեռիք 'ի դիմաց, շրթունքն
ստուարք. քիթն տափարակ, աչք սևաւք, կմ գունով
շագանակի, փոքրիկք, բայց ընդունակք տարորոշե-
լոյ զառարկայս 'ի մեծի իրիք տարակացուն. Վարսք
նց են միշտ թանձունք և ձաղկք և առանց դոյզն
ինչ տրամագրուն առ խոպոպումն. Ոչ ունին հերս
յիմիք մասին մարմնոյ, բայց եթէ 'ի գլուխն. Յա-
ռաջին հայեցուածս Ամերիկացի ումն հարաւային
երևի հեզ և անմեղ. բայց 'ի նկատելն զնա առաւել
ուշադրութբ, նշմարի յերեսս նր մոլեկանութիւն
իմն, թերեհաւատութի, և ախշութի իմն. Ձեռագիրն է
այս. Այս երկու պատկերք նկարեալք 'ի ձեռաց

ա-

ամենևին տարբեր եղելոց 'ի հասարակ ճանապարհորդացն , բերեն զկատարեալ իմն նմանութի՛ : ‖ Կազմուածք նց կանոնաւորք են , թէպէտ և սակաւ ախեղծեալք 'ի քիմարական փութոյ ամենացուցանելոյ զգեղեցկութի՛ բնական կերպարանաց իւրեանց, կամ փոխատրելոյ զտեսիլ իւրեանց առաւել ահարկու թշնամեաց . 'Ի մէջ կղզեացն , ուր շնչաւոր չորքոտանիք էին սակաւք և փոքրիկք , և ուր երկիրն մատակարարէր զբերս իւր իբր ինքնին , խառնուած ազգայնոցն ոչ զօրացեալ 'ի ներգործական կրթութէ որսոյ , և ոչ կորովացեալ յաշխատութէ մշակելոյ , էր անսահմանաբար տկար և թոյլ . 'Ի ցամաքին , ուր անտառք առատ են ամ ազգ էրէիւք , և ուր նախապետական պարապումն բազմաց ցեղից էր որս նց . կազմուած մարմնոյ նց ստանայր զմեծագոյն հաստատութի . Սակայն Ամերիկացիք եղեն միշտ նշանաւորագոյնք մն արագութե քանթէ մն ուժոյ . Նմանէին յափշտակիչ անասնոց աւելի քանթէ շնչաւորաց ստեղծելոց մն աշխատութե :

Տկարու- թիւնք .

(21) ‖ Տուեալ լինին մեզ ապշեցուցիչ տեղեկութիւնք զյարակայ արագընթացութե Ամերիկացւոց . Ատաիր պատմէ զփոխուածս պատերազմականի ուրումն Ըհիքքասահ , որ ընթանայ ընդ անտառս և 'ի մն լերանց զերեքհարիւր մղոնս համարեալս 'ի մի տիւ և կէս և յերկուս գիշերի : ‖

Նչին ոչ միայն օտարք յաշխատելոյ , այլ և անընդունակք առնելոյ զայն . և ըսթափեցուցենք բռնութե 'ի բնական պարապորդութէ իւրեանց և ստիպեալք ի գործել , մեռանին ճնշեալք 'ի ներքոյ աշխատութե իւրեք . զոր ժողովուրդ այլոյ շարունակի կատարել էր ծայրագոյն դիւրութի . Այս թուլութի խառնուածոյ էր ընդհանրական 'ի մէջ բնակչաց այնց կողմանց , զոր նշմարեմք այժմ . և կարէ նկատիլ իբր տարորոշիչ իմն այնր տեսակի մարդկան . Ձեռք առանց մօրուաց և մորթն լերկ Ամերիկացւոյն ե-

րեւին

րեւին նշանակել զպակասութիւն իմն կորովութեան պատճառեալ յախտէ իմիքէ 'ի կերպաւորման իւրում. Այսպէս զուրկ է նա 'ի նշանէ իմիքէ այրականութեան եւ կորովութեան. Այս մասնաւորութիւն, որովք բնակիչք նորոյ աշխարհի զանազանին են յայլ ամենայն ազգաց, ոչ կարէ ընծայեալ լինել, որպէս ոմանք ճանապարհորդք կամեցան ենթադրել, արակութեան կերակրոց նոցա. Որչափ եւ սնունդ բազմաց Ամերիկացւոց իցէ բնաւին անհամ, ոչ ճանաչելով նոցա զպէտս աղի, ոչինչ ընդհատ՝ են ցեղք բիւրք յայլ մասունս, որք առնուն զսնունդս հաւասարապէս պարզս. որք ոչ ունին զայս նշան ապաշտիճանուն եւ ոչ զաներեւոյթ ցուցակս նուազելոյ ուժոյն :

Նուազ յօժարութիւն կերակրոյ.

Արտաքին կերպարանք Ամերիկացւոց տայ մեզ ենթադրել. թէ իցէ բնական ինչ տկարութիւն 'ի կազմուածի նոցա. եւ նուազ յօժարութիւն նոցա առ կերակուրն ծառայեաց բազմաց մատենագրաց իբր հաստատութիւն այսպիսի իմն կարծեաց. Քանակութիւն կերակրոյ, զոր ծախեն մարդիկ, զանազանի ըստ որակութեան կլիմային, յորում կեան, ըստ աստիճանի գործաւորութեան, զոր վարեն, եւ ըստ բնական կորովութեան բաղխացուեց իւրեանց. Մարդիկ 'ի ներքոյ տօչորիչ տապոյ այրեցած գօտւոյն, եւ յորժամ անցուցանեն զաւուրս իւրեանց յանհոգութեան եւ 'ի հանդստեան, խնդրեն զնուազ սնունդ, քանթէ զբաղեալ բնակիչք ցրտային կամ բարեխառն գաւառացն. Բայց ոչ ջերմութիւն կլիմային եւ ոչ չափազանց դատարկութիւն ծառայեն առ 'ի տալ պատճառ արտաքոյ կարգի պակասութեան յօժարութեան կերակրոյ յԱմերիկացիս. Հիանային Սպանիացիք 'ի նկատելն զայսպիսի ինչ ոչ միայն 'ի կղզիսն, այլ եւ 'ի զանազան մասունս ցամաքին. Համալսնական ժուժկալութիւն ազգայնոցն գեր 'ի վերոյ էր բազմօք ըստ կարծեաց նոցա քան զծոմ առաւել մահացեալ անապատաւորաց. ուր յայլմէ կող-

կող-

կողմանէ որկորստութե Սպանիացւոց երեւէր Ա-մերիկացւոց անյագ. ուստի պնդէին նոքա, թէ Սպանիացի մի սպառէր 'ի միում աւուր զայն կերակուրն, որ լեալ էր աւելի քան զբաւականն մի տասն աւուրց Ամերիկացւոյ ումեք:

Նուազ [illegible] 'ի ցանկութեն. Առաւել ապշեցուցիչ ցոյց ինչ տկարութեան, որ գտանի 'ի կազմուածի նց, է անզգայութի Ամերի-կացւոց առ հրապոյրս գեղեցկութեն եւ առ կարո-ղութի սիրոյ. Այրքն, որ սահմանեալ եղեն առ 'ի մշտնջենաւորել զկեանս, առ 'ի լինել կապ ընկե-րական միաւորութեն եւ աղբիւր խանդակաթութեն եւ բերկրութեն, սովոր է լինել ևս առաւել վա-ռեալ 'ի մարդկային սրտի. Թէպէտ վտանգք եւ խստութիւնք վայրագութեն վիճակին, թէպէտ չա-փազանց աշխատութիւն 'ի գիւղածս ինչ եւ հա-նապազորդ դժուարութիւն պաճարելոյ զպարուստ կարեն երեւիլ նոյնչափ թշնամիք այսմ կրից, որք գիտեն նուաղեցուցանել զուժգնութի նր, սակայն ոչինչ ընդհատ բրտագոյն ազգք յորում եւ իցէ այլում մասին երկրագնտոյս ցուցանեն զգալ զաղ-գեցութի նր հզօրագոյնս, զոր ոչ զգան բնակիչք նորոյ աշխարհի. Խափշիկն բարբարի այսպիսի ինչ ցանկութե հանդերձ բովանդակ ջերմութեն բնա-կանս կլիմային իւրում: եւ տաուել անկիրթ Ա-սիականք ցուցանեն ունել զայն զգայականութի, որ սղաւոր լինի 'ի կայաւորութէ իւրեանց. Բայց Ամերիկացիք զերծք են 'ի սքանչելի ատոմանի ի-միք յայսմ աղըմանէ բնութե. Յամ մասին նո-րոյ աշխարհի ազգայինք վարեն զկանայս իւրեանց անտարբերութե ինչ եւ ցրտութե. Նոքա ոչ են ներթակայ ոչ այնր խանդակաթ սիրոյ, որ թա-գաւորէ 'ի մէջ քաղաքականացեալ ընկերութեց, եւ ոչ այնր վառեալ ցանկութեն այնպէս հրալից եղելոյ 'ի մէջ սոյոց բիրտ ազգաց. Ի նոյն կլի-մային, ուր այս կիրք սաստիկ սովորաբար զմեծա-գոյն աճումն իւր, վայրագն Ամերիկոյ հայի 'ի կին

իւր արհամարհանօք և իբր 'ի շնչաւոր իմն վայրագոյն տեսակի. Ոչ աշխատ լինի շահել զշնորհ նր̃ հանապազորդութիւն արբանեկութե̃ն . և ոչ 'ի կիր արկանէ զխնճումն և զազնուորութի̃ առ 'ի նախապահել իւր զայն. Նոյն իսկ քարոզիչք հանդերձ ամ̃ խստակրօնութեամբ, որք առաքինաբար պահեն զմիանձնական գաղափարս, մնան աշխեալք ընդ անկրաւոր ցրտութի̃ երիտասարդացն Ամերիկացւոց 'ի կենցաղավարիլն ընդ կանանց: Եւ ոչ իսկ զզուշութիւն պարտի վերագրել առ բարի ինչ կարծիս, որ թէ նոքա հայիցին 'ի վատտակ ժուժկալուն կանանց. Լինէր այս ճանաչումն իմն կարի նոցին վ̃ն վայրագի ոսոմն, իբր թելադրեալ 'ի փափկութէ̃ իմեքէ իմացման և ախորժակի. որում ոչ է նա ընդունակ:

'Ի խոյզս վերա երեսաց առ օրպխութիս մարմնոյ Խորհր-
կամ մոաց զարմից մանաւոր մարդոց՝ չիք մոլուի գործո-
իմն տուաւել հաստակ և տուաւել պարզողական Ինչ
քան զվերագրելն առ մի միայն պատճառ զորոհիչ նկա-
մանաւորութիւն զայնոսիկ, որք են արդիւնք բազ- նմէ ա-
մաց և բազմաց 'ի միասին զուգաւորելոց. Կլիմայն աշխարհ
և գետինն Ամերիկոյ տարբերին յայնքան գլուխս, երկաց.
'ի կլիմայէ և 'ի գետնոյ միւս կիսագնդոյ. և տարբերութիւն է այնպէս ակներև և զարմանալի, մինչ զի իմաստասէրք յոյժ անուանիք առեալ են զայն իբր բնական հաստիս այնր, որ է մանաւոր 'ի խառնուածի բնակչաց իւրոց. Նոքա յենուն միայն 'ի բնական պատճառս, և նկատեն զոխար կերտուած և զթոյլ ցանկութի̃ Ամերիկացւոց իբր հետևութի̃ խառնուածոյ այնր բաժնի երկրագնդոյ բնակեցելոյ 'ի նոցանէ. Բայց ոչ էր պարտ 'ի բաց թողուլ զքաղաքական և զբնական պատճառս, որք ներգործեն գործունէութբ̃ ոչինչ վայրագունիւ քան զայն, յորոյ վ̃ն հիմնին, առ 'ի մեկնել զմանաւոր երևոյթս կանխաւ յիշատակեալս. Ուր ընկերութիւն է այնպիսի, զի տացէ ծնանիլ զպի-

տոյս և զողձութիւս, որք ոչ կարեն յագեցուցա-
նել առանց կանոնաւոր իմն կրթութեան ճարտարութեան,
մարմինն ընտել աշխատանաց եղանի ուժեղ և հան-
դուրժող. 'Ի պարզագոյն իմիք վիճակի, ուր բաղ-
ձանք մարդկան են այնպէս սակաւք և այնք չա-
փաւորեալք, զի կարեն վճարել ինքնեկ բերոք բնութեան,
առանց առնելոյ մարդոյ զջան ինչ, անպիտան է
ունելն զհամարումն զկարողութեանց մարմնոյ, որք
ոչ կարեն երբէք հասանել առ ուժեղութիւն իւր-
եանց. Ազգայինք Բրազիլեայ և Հիւսիսային Ամերի-
կոյ երկուց բարեխառն կողմանց նորոյ աշխարհի,
որք կեան յորսոյ, կարեն նկատիլ իբր զարմ ինչ
գործունեայ և ուժեղ մարդկան բաղդատեալ ընդ
բնակչացն կղզեաց և այնց մասանց ցամաքին, ուր
ծայրագոյն տաժանմամբ պիտոյ է պաճարել զապ-
րուստ. Բայց վարժմունք որսորդի միոյ ոչ են
այնպէս շարունակք որպէս զվարժմունս անձանց
պարապելոց 'ի մշակել զերկիր և 'ի պէսպէս ար-
հեստս քաղաքական կենաց. և թէպէտ արագութիւն
իւր կարէ լինել մեծագոյն քան զնոցայն, սակայն
զօրութիւն իւր յամի և ամիմ է վայրագոյն. Եթէ
գործաւոր կարողութիւն մարդոյ 'ի նոր աշխարհին
առաջի եղեալ էր այլ իմն նպատակ, և զօրութիւն
իւր աճեցուցեալ էր 'ի կրթութեան, կարող էր նա
ստանալ զաստիճան իմն կորովութեան, զոր ոչ ունի
յայժմու վիճակի իւրում. Ներհմտութիւն հաստա-
տէ զճշմարտութիւն այնր. Յայն տեղիսն, ուր Ա-
մերիկացիք սովորեն աստիճանաբար հանդուրժել
աշխատանաց, մարմինք նոցա եղեալ են զօրեղք և
կարողք կատարելոյ զգործսն զայնոսիկ, որք ե-
րեւէին ոչ միայն զանցանել զչափ կազմուածոյ
նոցա՝ համարեցելով մասնաւոր աշխարհի նոցա, այլ և
հաւասարել որում և իցէ ճգանց մարդոց ծնելոց
յԱփրիկէ կամ յԵւրոպիա:

(22) Տէրն Կօտին երիտասարդ, որ եկաց զամս
վեշտասան 'ի մէջ Հնդկացն փէրուայ և Բուխ-

թօփ

Թոփ, և զամս քան 'ի Գաղղիական Հարգունուն Բայքանեայ, յորում է յարակայ հաղորդակցուն 'ի մէջ Կալիպիսաց և այլոց ցեղից առ Օրինոքո- սիմ, զի ըժ բազկացութն 'ի մէջ Ամերիկացւոց է կատարելապէս չափակցեալ սովորուն նց յաշ- խատանս. Հնդիկք 'ի ջերմ կլիմայս որպէս լինէին նոքա, որք առ եղերօք Հարաւային ծովուն, կամ առ գետովն Ամասոնեաց և առ Օրինոքոս գետով, ոչ են համեմատելի 'ի զօրութեան ընդ բնակչաց ցրտային գաւառաց. և սակայն հանդերձ այսու՝ ամէ, մեկնին օր ըստ օրէ նաւակք 'ի փառայէ կա- լուածոյ փօրթուկէզաց առ գետովն Ամասոնեաց առ 'ի անկանիլ յայն գետ ընդդէմ սրընթացուն հոսանացն. և նովին խուժանաւ յառաջ խաղան մինչև 'ի սան փաւլօ, որ է բացակայ ութնհարիւր փարսախ. Այլ ինչ խումբ 'ի սպիտակ կամ 'ի սեաւ- ազգէ կարէր գտանիլ բաւական հանդուրժելոյ այս- պիսի յարակայ աշխատանաց. որպէս զփորձ առին փօրթուկէզք. և սակայն Հնդիկք ընտելք եղով 'ի տղայութէ հեռէ՝ հանդուրժեն այնմ. Ձեռա- գիրն է առխս :‖

Օօրէ նոյն տրամաբանութին վն այնր, որ նշմա- րեցաւ շուրջ զսակաւ պիտոյիցս կերակրոյն, զոր ունին. Նա 'ի հաւաստել, թէ այսպիսի ինչ կա- րէր վերագրել ոչ այնչափ առ վերջին անհոգութ նց և առ բոլորովին անզգաղութին, որ յաճախա- գոյնս հանդիպի նց, որչափ առ մասնաւորութիւն ինչ 'ի կերտուած մարմնոյ նց, նկատեալ եղև, զի յայն նահանգսն, ուր Ամերիկացիք պարաւան- դեալ են առնել զանսովոր նկրտմունս ջանից առ 'ի պաճարել զապրուստ, կամ պարապին 'ի խիստ աշխատանս, ախորժակ նց ոչ է վայրագոյն քան զախորժակ այլոց մարդոց. և 'ի տեղիս տեղիս ապշեցոյց զնս, որք դիտէին զայն, մինչև համա- րել ամենակեր :

Պատճառք քաղաքականք և բարոյականք զօրին

գործունէութիւն իւրեանց յաղթանակաւորել զաստի-ճան յարելոյն 'ի մէջ արուի եւ իգի. 'Ի միում ժո-ղովրդեան, որ իցէ խորապէս քաղաքականացեալ, կիրքն այն, որ լուցանի ենթարկութիւն, որ փափ-կութիւն նորանայ եւ տածի սովորութիւն, հաստատէ եւ պաշարէ զսիրտն. Միտքն աճեցուցանէ զվառ ցանկութիւնն. եւ խանդաղատագոյն զգածմունք, ո-րոց մեքենայն մեր է ընդունակ, քաղցրացուցա-նէն եւ յուզեն զմարդն ներքսապէս. Բայց այս դիտողութիւն մերձեցուցանելի է միայն առ նս, որք վս կայաւորութեան իւրեանց զերծք են 'ի հոգոց եւ յաշխատութեանց կենաց. 'Ի մէջ վայրագոյն կար-գի անձանց, որք դատապարտեալ են 'ի պայմանէ իւրեանց առ հանապազորդ իմն տաժանումն, տե-րութիւն այսր կրից է նուաղ բանական. եւ հոգա-ծութիւն նց 'ի պաճարել զապրուստ եւ 'ի նախահո-գալ զառաջին կարեւոր պէտս բնութե թողացուցա-նէ սակաւ ժամանակ մտադրելոյ այսոցիկ նուազ կարեւորաց. Այլ եթէ եղանակն կենցաղավարե-լոյ 'ի մէջ սեռից զանազանի այնքան 'ի զանազան կարգի անձինս 'ի մէջ կերպաւորեալ ընկերութե, պայման մարդոյ յորժամ լինի քաղաքականացեալ, պարտի պատճառել յայսմիկ սեռի զայլայլութիւն իմն եւս եւ յայտնագոյն. Կարի իսկ քաջ կարէ ենթադրիլ, թէ 'ի մէջ վտանգաց, խառուեց, եւ պարզութե վայրագ կենաց, ուր ապրուստն միշտ է անստոյգ, եւ յաճախակի թշուառ, ուր մարդիկ գրեթէ անընդհատ պատաղեալ են 'ի հետամուտ լինել թշնամեաց իւրեանց, կամ 'ի զգուշանալ 'ի յարձակմանց նց, եւ ուր կանայք ոչ ունին զպատ-րողական արհեստն զգենլոյ եւ անձնապահ լինելոյ, ուշադրութի Ամերիկացւոց առ կանայս պարտի լի-նել յոյժ տկար, առանց կամելոյ ընծայել զայն բնական իմիք պակասութե, կամ թերութե ինչ 'ի կերտուածի նոցա:

Առ այսորիկ նկատեալ եղեւ, զի յայն գաւառս

Ամե-

Ամերիկոյ, յորս հայթհայթանք ապրելոյ են առաւել առատք, և ոչ յոյժ խիստ տառապանք վայրագ կենաց պատճառաւ բերրիութե՛ն գետնոյն, քաղցրութեն կլիմային կամ զարգացմանց ինչ, զոր ազգայինք արարեալ են 'ի քաղաքական կրթութե, փոխադարձ կիրք երկուց սեռից ցուցանի առաւել վառեալ. Ընդ առաջ եղանեն զարմանալի օրինակք այսր ամի 'ի մէջ ոմանց ցեղից կայացելոց առ ափամբք մեծամեծ գետոց բարւոք զարմանելոց կերակրովք, և 'ի մէջ այլոց, որք ժառանգեն գետինս յարմարս որսոյ, առատս էրէիւք և որք ունին զկանոնաւոր ինչ և զճոխ զարման ապրելեաց սակաւ կամ ոչինչ աշխատութի. Ներնագոյն աստիճանի ապահովութեն և առատութե, յոր վայելեն, հեռեակ են սովորական գործք. Կիրքն տնկեն 'ի մարդն 'ի ձեռանէ բնութեն սաստիկ զօրութիւն իմն աւելի. Նոր ճաշակք և ցանկութիւն գան 'ի ծնունդ. և կանայք քանզի առաւել համարեալ են անգէն և առաւել զմայլեալք, ուշ դնեն առաւելաբար զգեստաւորելոյ և զարդարելոյ զանձինս. և մարդիկ սկսանելով ճանաչել, թէ որչափ 'ի նոցանէ սեպհական երջանկութե իւրեանց կախեալ կայցէ, ոչ ևս անգոսնեն ընդ երկար զարհեստս յանկուցանելոյ զինքեանս զշնորհս և զյօժարութի նց. Հաղորդակցութի սերից եղանի 'ի մէջ գոցա բոլորովին զանազան յայնմանէ, որ տեսանի 'ի մէջ բրտագոյն հայրենակցաց իւրեանց. և ոչ լինելով եղեռ սանձ իմն հեշտութեն ցանկութեց նոցա կամ 'ի կրօնից կամ յօրինաց կամ 'ի վայելչութե, նմին իրի երանէ ըստ չափն ցոփութե վարուց նոցա:

Ոչինչ վնասելով տկար խառնուածն Ամերիկացւոց գրգեթէ ոչ ոք 'ի նոցանէ է տգեղ, կամ խեղ կամ զուրկ յիմեքէ 'ի զգայարանաց. Ամենայն ճանապարհորդք ապշեալ են յայսպիսի իմն պարագայէ, և հաչակեալ զմի օրինակ չափակցութե և զկատարելութե արտաքին ձևոյ նց. Ոմանք 'ի հե- Ոչոք 'ի նոցանէ է տգեղ:

զլինակաց խնդրեն հետազօտել զպատճառ սորին 'ի բնական վիճակի նց. և ենթադրեն, թէ ոչ գոլով ծնօղքն ընկճեալ և ճնշեալ 'ի վշտալից աշխատութէ, որդիք նց հեշտաբար ծնանին առողջք և քաջ համակերպեալք. Ին ես, որք պատկերակերպեն, թէ յազատութն վայրագ կենաց մարմին մարդկային մերկ և արձակ անդստին յառաջին հասակէ իւրմէ լաւագոյն պահիցէ զբնական կերպ իւր. և թէ բոլոր անդամք իւր. և բոլոր մասունք իւր ստանայցեն զպատշաճագոյն իմն չափակցութի քան յորժամ կապին արհեստական կապանօք. Դէք խափանեն զաճումն և եղծանեն զարտաքին ձև անձին. Իրս ինչ մարթ է անտարակոյս ընծայել ներգործութն այսց պատճառաց. բայց ճշմարիտ պատճառք այսպիսի իմն յայտնի առաւելութն, որ է հասարակ ամ Ամերիկեան ազգին, են առաւել թաքունք և ըծակցեալք ընդ բնութ և ընդ բերման վիճակի իւրեանց. Տղայութի մարդոյ է այնպէս երկայն և կարեօք լի, մինչ զի եղանի անսահմանաբար դժուարին սնուցանելն զերեխայս առ վայրենի ազինս. Հայհայթանք ապրուստ նց են ոչ միայն նուաղք, այլ և անստոյգք. Նոքա, որք կեան որսօք պարտին երթալ թափառական ը մեծ տարածութիս գաւառի, և երբեմն փոխաբերել տեղւոջէ 'ի տեղի: Հոգ տղայոց, որ և այլ ամ աշխատալի գործառնութի թողեալ լինի կանանց. Տառապանք և անհանգստութք վայրագ կենաց, որք կարի յաճախ են այնպէս մեծամեծք, զի ոչ կարեն տոկալ անձինք ևս զօրեղք և չափահասք, պարտին լինել մահաբեր այնց մատաղագոյն տիոց. Կանայք ըմբռնեալք յերկիւղէ այնպիսի աշխատալի և յերկարատև պաշտօնատարութն 'ի կողմանս ինչ Ամերիկոյ շիջուցանեն զառաջին կայծակունս այնր կենաց, զոր կամին, և զոր ոչ կարեն սիրել վն այսպիսի իմն դժնեայ հետեւութ. և կիրառութ խոստոց ինչ պատճառեն զյաճախ վիժմունս.

Այլք

Այլ ազգք ճանաչելով, թէ միայն ուժեղ և բարեկազմ մանկունք ունին զօրութիւն տոկալոյ այնպիսի վշտալի տղայութեան, բարձի թողի առնեն, կամ եղծանեն զտղայս աղքատոհմի իւրեանց, որք երևին տկարք կամ պակասաւորք իբր անարժանք հոգաբարձութեան իւրեանց. Ապա յորժամ հնարին անուցանել զամենայն որդիս իւրեանց առանց ինչ խտրութեան, այնքանիք կորնչին համեմատութեամբ մեծ թուոյ նոցա ընդ այնուհետև խիստ վարմամբն, զոր ընդունին 'ի մէջ վայրագ կենաց, մինչզի սակաւք գեթ 'ի նոցանէ, որք ծնանին սկզբնական իմն անտրամադրութեամբ, հասանին յարբունս. Բայց 'ի մէջ կերպաւորեալ ընկերութեանց, ուր հայթհայթանք ապրուստի ապահովացուցեալ են, կամ ստացեալ լինին դիւրակի. ուր որպիսութիւնք օդոյն են գտեալք առաւել ծանրակշիռք քան զկարողութիւն մարմնոյն, տղայք նախապահեալ են, ոչինչ վնասելով պակասութեան և տգեղութեան նց. և ամենն աւ 'ի լինել պիտանի քաղաքացիք. 'Ի մէջ վայրենի ազգաց այսպիսի անձինք կամ մեռեալ են խեղոյն ընդ ծնանիլն, կամ եղանելով բեռն ինքեանց և հասարակութեան ոչ յերկարաձգեն կարի զկեանս իւրեանց. Սակայն յայն գաւառսն նորոյ աշխարհի, յորս վն կայունաւորութեան Եւրոպացւոց արարեալ են առաւել կանոնաւոր զգուշութիւնք վն գոյաւորութեան բնակչացն, և յորս արգելեալ է նց ամբառնալ զբռնական ձեռն 'ի վն որդւոց իւրեանց, Ամերիկացիք փոխանակ լինելոյ տրոհեալք 'ի նշանաւոր կատարելութեամբ իմիքէ 'ի կերպի իւրեանց, տան կասկածիլ զտկարութենէ իմիքէ սեռահականէ զարմի իւրեանց, հայելով յարտաքոյ կարգի բազմութեան անհամիցն, որք են տգեղք, գաձաձք, հաշմք, կոյրք և խուլք:

Արշաւի և տկար իցէ բազկացութեան Ամերիկացւոց նշմարի, զի է նուազ պէսպիսութեան 'ի մարդկային կերպի 'ի նոր աշխարհին քան 'ի նախկին ցամաքին

Ամենէր պատճ. 'է թեսէլ նց:

քին. Յորժամ Հումպօլտ և այլ դիտիչք այց արարին զառաջինն պէսպէս գաւառացն Ամերիկոյ, որք կան 'ի ներքոյ այրեցած գօտւոյն, սպասէին բնականաբար գտանել անդէն զժողովուրդ մի նովին գունով մարմնոյ ընդ ժողովրդեանն, որ 'ի համապատասխանող կողմանն միւսոյ կիսագնտի. Յեսքին հիացմամբ իւրեանց, զի Ամերիկա ոչ ունէր սևաւս. և պատճառ այսր սեպհական տարբերութեն եղև այնչափ առաւել առարկայ հետաքննութեն, որչափ առաւել եղեալն էր նիւթ զարմացման. Յորում մասին կամ թաղանթի մարմնոյ դադարեցի այն հիւթն, որ ներկէ զգոյն մարմնոյ խափշկին այնպիսի իմն մուգ սևով, անդամազննից անկ է քննել զայն և ստորագրել. Նախախնամ գործողութեն ջերմուե յայտնապէս երևի լինել այս պատճառ, որ յառաջ ածէ զհիանալի պէսպիսութիւն 'ի մարդկային անսակի. Ի բոլոր ողջոյն և զբեթէ բովանդակ Ասիա և բարեխառն մասունք Ամերիկոյ չև են գեղեցկագոյն մարդկանք. Բոլոր այրեցած գօտին Ափրիկէ, մանք 'ի ջերմագոյն կողմանց, որք առ երի կան նմա, և սակաւ գաւառք Ասիա ունին ժողովուրդս սևատեսիլս յոյժ յոյժ. Եթէ երթիցուք մեք 'ի հետազօտել զազգս միոյս ցամաքի, անցանելով 'ի ջերմից առ բարեխառն գաւառս, դէպ յայն մասունս, որք ենթադրեալ են այրեցութեն մեծ իմն և միշտ յարակայ տօթոյ, գտցուք, զի չափազանց սպիտակութի մորթոյ սկսանի նոյնհետայն նուազել, աղօտանայ գոյն իւր ըստ չափուն, որով յառաջադէմ լինիմք. և զի զկնի անցանելոյ ընդ ամ յաջորդական աստիճանաւորութիւն սահմանի՝ երթայ յանգիլ 'ի նոյն անայլայլելի սևութի. Բայց Ամերիկա, ուր գործողութի տօթոյն խափանեալ է, կամ նուազեցուցեալ 'ի պէսպէս պատճառաց, զոր կանխաւ մեկնեցաք, երևի թէ կլիմայն իջէ զուրկ յայնմ զօրութէ, որ յառաջ ածէ զգործս այն-

քան

քան զարմանաւորս 'ի մարդկային կերպի. Դոյն ողջայնոցն այրեցած գօտւոյն յԱմերիկա հազիւ կարէ ասիլ, թէ իցէ առաւել մթին քան զայն, որ տեսանի յառաւել բարեխառն մասունս ցամաքի իւրեանց. Ամենք 'ի խնամոտ դիտողաց, որք կալան պարապ այց առնելոյ Ամերիկացւոց յամենայն տարբեր կլիմայս և 'ի գաւառս յոյժ հեռաւորս 'ի միմեանց, միացին շոմարեալք յապշելի նմանութիւն տեսլեան և ձևոյ նց:

(23) Տէրն Անտոնիոս Ուլլօա, որ այց արար մեծի մասին իմիք Փերուայ և Քիլեայ, և թագաւորութեն Նորոյ Գրանատայի և բազմաց գաւառաց, որք սահմանակից են ընդ խորշին Մեքսիքոյ, յորժամ պարապեցուցեալ էր 'ի նմին ծառայութեն ընդ քանակարանից Գրանսեզաց ընդ միջոցս տասն ամաց, և զկնի կալոյ զառիթ յայց ելանելոյ հիւսիսային Ամերիկոյ պնդէ, թէ իբրև տեսաք զմի միայն Ամերիկացի կարեմք ասել տեսեալ զամենեսին զնս, զոյն նց և կերտուած գոլով ամենեին նոյն. Նմանութիւն Ամերիկեանց. Պետրոս Զէքա Լէոնեան մակնջագոյն դիտող և մի 'ի տիրապետողացն Փերուայ, որ անցեալ էր ևս ընդ բազում գաւառս Ամերիկոյ՝ հաստատէ, թէ 'ի մէջ ժողովրդեան արք և կանայք, թէպէտ և իցէ այնպիսի իմն բազմութիւն ցեղից և ազանց մինչև լինել իբր անհամար, և այնպիսի իմն զանազանութիւն կլիմայից, կարծեալ լինէին ամենեքեան որդիք միոյ ևեթ հօր և միոյ ևեթ մօր. Աննմանութիւն Փերուայ. Առանց երկրայութեն է որոշեալ ինչ զուգաւորութիւն կազմուածոց և մասնաւորութիւն կերպարանաց, որք կերպաւորեն զայն, որ կարէ կոչիլ դէմք Եւրոպական կամ Ասիական. Այս ասորիկ պարտի լինել ևս մի յայնցանէ, որ անօրանեցի Ամերիկեան հասարակ բոլանդակ զարմին. Այս կարէ ենթադրել, թէ հարկանէ զճանապարհորդն յառաջին տեսութեն, թէպէտ և պէսպէս ըս-

ըստամերք, որք զանազանեն զժողովուրդն զանազան կողմանց, վրիպեցին ՚ի նշմարմանէ իւրմէ. Բայց յորժամ անձինք, որք կալեալ են այնպէս ընդ երկար ժամանակ ՚ի մէջ Ամերիկացւոց, զուգընթաց լինին ՚ի տալ զվկայութի զնմանութէ կերպարանաց նց յամ կլիմայի, կարէ հետևեցուցանիլ, թէ այս է առաւել նշանաւոր քան զայն իւրաքանչիւր այլ զարմի. Տեսցի Կարծիս՝ Ուաֆա՛ն Հնդկաց և Թորքուեմատա՝ Միապետութիւն Հնդկաց:

Այլ թէպէտ և ձեռն բնութե զարտուղեալ իցէ այնպէս սակաւ ՚ի միոջէ և նեթ գաղափարէ ՚ի կազմելն զձև մարդկային յԱմերիկա, երևակայութին լեալ է պէսպ և օտար ՚ի ստեղծանելն զենթադրութիս. Նոյն իսկ առասպելք, որք ընթանային ընդ նախկին շարունակն, վերստին կենդանացուցեալ եղեն վերահայեցմամբ նորոյ աշխարհի. և այսպէս նաև Ամերիկա բազմամարդացուցեալ եղև ՚ի մարդկեղէն էակաց հրէշական և չքնաղ իմն ձևակերպութե. Բնակիչք գաւառաց ինչ գծագրեալ էին իբր թզուկս երեք ոտնաչափ բարձրութ. այլոցն իբր հսկայս տարապայման մեծութ. Ոմանք ՚ի ճանապարհորդաց հրատարակեցին ծանօթութիս ազգի մի միայն ականբ. այլք պնդեցին տեսեալ զմարդիկ առանց գլխոյ. որոց աչք և բերան տնկեալ էին ՚ի լանջս նոցա. Պէսպիսութիւն բնութե ՚ի բերս իւր է արդարև այնպէս մեծ, զի գործ յանդգնութե է կամիլն դնել կապարս բերրիութե իւրում, և մերժելն ՚ի բաց աներկբայաբար զամ պատմութի, որ ոչ համաձայնի ընդ անձուկ դիտողութե մերում և ընդ փորձառութե. Բայց ոչ է նուաղ դժպատեհ իմաստասիրի միում խնդրողի զմիտս ծայրն՝ ընծայելն շտապ զհաւատս վն ամ թեթևագին վկայութե որում և իցէ իրի, որ ունի զերևոյթ հրաշալւոյ. որովհետև մարդիկ յամ ժամանակի են առաւել յարմարք ՚ի թողանիլ ձգիլ ՚ի մոլորութի վն տկարութե իւրեանց

՚ի

'ի հաւատալն կարի իմն, քանթէ մծ ամբարհաւա-ճութե իւրեանց 'ի հաւատալն կարի սակաւ. Ըստ չափուն, որով ընդարձակի գիտութիւն, և բնութիւն քննեալ լինի տարորոշող ականք, զարմանք, որք ունէին զպարս տգիտութե, չքանան. Նաւապետք դիւրահաւատ ճանապարհորդաց պատկանեալք առ Ամերիկա մոռացեալ եղեն. Հրէշք, զորս ստորագ-րեն նոքա, 'ի զուր խնդրին. և զգաւառսն զայ-նոսիկ, ուր պնտէին գտեալ բնակիչս եզական կեր-պարանօք, այժմ գիտեմք տեղակալեալ յազգէ, որ չէ բնաւ աննման յայլոց Ամերիկացւոց:

(24) ‖ Ասպետն տէ Փինթօ նշմարէ, զի 'ի ներքս-սագոյն մասունս Պրասիլեայ գտեալ են անձինք ոմանք համանմանք սպիտակ ազգին Տարիէնու, բայց զարմն ոչ շարունակէ անդէն. և զի որդիք նոցա եղանին նմանք այլոց Ամերիկացւոց. Սակայն այս զարմ ճանաչի անկատարապէս. Ձեռագիրն է առխ: ‖

Զ վերոյ ասացեալ պատմութիւն առանց ինչ կրկ-տելոյ կարեմք հերքել 'ի բաց իբր առասպելա-կանս. բայց են այլ տեղեկութիւնք պէսպիսութեանց ինչ 'ի մարդկային տեսակի յայլ մասունս նորոյ աշխարհի. որք յենուն 'ի լաւագոյն վկայութիւնս, և արժանի են մտադրագոյն իմն քննութե. Այս պէսպիսութիւնք մասնաւորաբար նշմարեալ են յե-րիս տարբեր նահանգս. Առաջինն կայացեալ է առ ցամաքալեզուին Տարիէնու մօտ 'ի կեդրոնն Ամե-րիկոյ. Լիոնէլլօ Ուաֆէր ճանապարհորդ ճոխացեալ հետաքրքրութբ և իմացողութբ առաւել քան զոր հաւատացեալ լինէր գտանել յառն միում ընկե-րացելոյ ընդ նաւարտակաց, եգիտ զփոքրիկ ինչ, բայց ամենևին եզական զարմ մարդկան. Են նո-քա նկնահասակք, տկար խառնուածով ընդ գծագ-րութե իւրում, և անընդունակք տոկալոյ աշխա-տանաց. Գոյն նց է սպիտակ իմն կաթին թալ-կացեալ, որ ոչ նմանի բնաւ գեղեցիկ գունոյ մարմ-

նոյ

նոյ Նաւրոպացւոյ, բայց առանց ներկուածոյ ինչ արիւնային կարմրոյ. Մորթ նց ծածկեալ է նուրբ աղուամաղիւ սպիտակաւ իբրև զխիր. վարսք, յօնք, մազք աչաց են նոյնագոյն. Նաև աչք ունին ըզմասնաւոր իմն կերպ. և երևին այնպէս վատեալք, զի հազիւ կարեն հանդուրժել լուսոյ տուընջեան, բայց 'ի գիշերի են առաւել զօրաւորք և կենդանագոյնք. Օտար ինչ նման այսմ ոչ է պատահեալ յայլում իմիք մասին Ամերիկոյ. Արդարև Պօրթէս եգիտ զոմանս անձինս ամենևին նմանս սպիտակ ազգին Տարիէնու 'ի մէջ այնոց ցանցառագիւտ և հրէշաւոր շնչաւորաց հաւաքելոց 'ի Մօնթէծումայ. Այլ քանզի իշխանութիւն թագաւորուն Մեքսիքոյ տարածանիւր առ գաւառսն, որք են շուրջ զցամաքալեզուաւն Տարիէնու, անձինքս այսոքիկ հաւանականաբար լեալ էին փոխաբերեալք անդր յայնմ մասնէ. Որչափ և եզական երևոյթ տեսիլ այսց ժողովրդոց ոչ պարտին նկատիլ իբր բաղկացուցիչ տարորոշ իրիք տեսակի. 'Ի մէջ սևոցն Ափրիկոյ, որպէս և 'ի մէջ ազգայնոցն Հնդկային կղզեաց բնութիւն գոյացուցանէ երբեմն զփոքրիկ ինչ թիւ անհատից հանդերձ նմին նշանօք և բովանդակ կազմուածովք և որպիսութիւք սպիտակ ժողովրդեանն Տարիէնու. Առաջինք կոչեցեալ են Ալպինօս 'ի փորթուկեզաց՝ և վերջինք Պաքքերլաքէս 'ի Հօլանտեզաց. 'Ի Տարիէնու ծնօղք սպիտակացս այսոցիկ են նոյնագոյնք ընդ այլոց ազգայնոց գաւառին. և այսպիսի իմն նշմարումն մերձեցուցանի հաւասարապէս առ անկանոն ազգատոհմ Խափշկաց և Հնդկաց. Նոյն մայրն, որ ծրկնէ զոմանս որդիս գունով իւիք, որ ոչ պատկանի առ զարմն, սովոր է յառաջ ածել զմնացեալն գունով մարմնոյ սեպհականաւ գաւառին իւրում. Ապա կարէ հետևեցուցանիլ նկատմամբ ազգացն սորագրելոց 'ի Վաֆերայ, այս է, Ալպինօսաց և Պաքքէրլաքէսաց, թէ են զարմ ինչ այլասեռեալ

և

և ոչ գոյս ինչ մարդկան դատուցեն. և թէ վս հիմանդուն ինչ, կամ պակասութեն ծնողաց փոխանցեալ է 'ի նն մասնաւոր գոյնն և տկարութին. որք ապստամբանեն զնոսա. Նշմարեալ եղև իբր հաստիք վճռահատական այսր ամի, թէ ոչ սպիտակ ժողովուրդն Տարիէնու և ոչ Եղպինոսք Ափրիկոյ սերեն զգարմ իւրեանց. որովհետև որդիքն ունին զգոյն և զխառնուած մասնաւոր ազգայնոցն իւրաքանչիւր գաւառի իւրեանց:

Երկրորդ նահանգն, որ է կալեալ 'ի բնակչաց զանազան եղելոց առ երևոյթս յայլոց ազգացն Ամերիկոյ, կայացեալ է 'ի բարձր աստիճանի հիւսիսային լայնութեն. որ տարածանի 'ի ծովեզերէն Լապրատորեայ 'ի բևեռն կոյս ցոր վայր գաւառն է բնակելի. Ժողովուրդն սփռեալ ընդ այն սասկալի կողմանս ծանուցեալ է Եւրոպացւոց ընդ անուամբ Էսքիմոսաց. Նոքին իսկ վս ճանաչման, զոր ունին զվերնագունութէ իւրեանց, որ քաջալերէ զկրտագոյն և զթշուառագոյն ազգս, առնուն զանուանս քերականն կամ մարդիկ. Են միջահասակք և ուժեղք հանդերձ գլխով անհեթեթ ստուարութբ և ոտիւք նշանաւորաբար փոքումբք. Գոյն մարմնոյն թէպէտ և խարշատեալ վս ընտեղ հանապազորդ ենթադրեալ խստութե ցրտային իրեք կլիմայի, գիմէ մանաւանդ առ սպիտակն Եւրոպացւոց քան առ ձիթագոյնն Ամերիկացւոց. և մարդիկ կրեն զմօրուս ևս թանձրագոյն և երկայն. Յայսց զանազանիչ նշանաց և մասնաւորապար 'ի միջէ յոյժ նուազ համանմանէ, դր, 'ի մերձաւորութէ լեզուի նց ը լեզուին Գրօէնլանտացւոց, զորս յիշատակեցի 'ի վեր անդր. կարէ հետևեցուցանիլ աստիճանս իմիք հաւանականու, թէ Էսքիմոսք են զարմ ինչ զանազան 'ի մնացեալ Ամերիկացւոց:

Ոչ կարէ լինիլ հաւաստի ճշմարտանմանութ նկատմամբ բնակչացն երրդ նահանգին կայացելոց 'ի հարաւային ծագ Ամերիկոյ. Որքա են համբաւաւոր

փա-

Փաթակոնք, որք են մէջ երկուց գարուց և կի-տոյ մատակարարեցին գրականաց զգրուի ինչ հա-կառակուէ և ռամկին զառարկայ իմն զարմացման. Ենթադրի, թէ իցեն մի յայնց թափառական ցե-ղից, որք տեղակալեն զհամատարած, այլ ոչ դեռ ևս ծանօթ գաւառն Ամերիկոյ, որ տարածանի 'ի գետոյն Փաթայ ցնեղուցն Մաճելլանու. Նմ յատուկ կայան է այն մասն ներքին գաւառին, որ կայ առ ափամբ սեաւ գետոյն. Թէպէտ յեղանա-կին, որ հրաւիրէ յորս, փոխարերին յաճախակի մինչև ցնեղուցն, որք զատուցանեն զերկիրն Փուէ-կօի 'ի շարունակէն. Առաջին ծանօթութիւք այսր ժողովրդեան բերեալ եղեն յՆաւքոպիս յընկերացն Մաճելլանու. որք ստորագրեցին զնս իբր զարմ հսկայաձև. որ ունէր աւելի քան զութն ոտնա-չափ բարձրութի և զոյժ ինչ համեմատ վիթխա-րի ձևոյ նց. Տարաղուգութի իմն հաւասարապէս նշանաւոր նշմարի անդէն նաև 'ի մէջ տարբեր տե-սակացն շնչաւորաց. Են անդ ծնունդք ձիոց մե-ծամեծաց և շանց. որք 'ի բարձրութե և 'ի կո-րովութե զանցանեն զփոքրագոյն զարմիւք, որչափ Փաթակոնք ենթադրին անցանել 'ի վր հասա-րակ հասակի մարդկային մարմնոյ:

(25) ‖ Վկայութիւնք զանազան ճանապարհորդաց նկատմամբ Փաթակոնաց հաւաքեալ են մեծաւ հո-գաբարձութ 'ի հեղինակէ փիլիսոփայական խուզ-մանց. Յետ հրատարակման այսր գործոյ զանա-զան նաւորդք այց արարեալ են Մաճելլանեան կող-մանցն. և ըստ օրինակի նախորդաց իւրեանց տար-բերին բազմօք 'ի պատմութիւն շուրջ զընակչօքն. Ըստ պիւրօնայ հրամանատարին և խուժանին իւ-րոյ, որք առագաստեցին ընդ նեղուցն յամին 1764, հասարակ բարձրութիւն Փաթակոնաց համարեալ եղև ութն ոտնաչափ, և 'ի բազումս 'ի նոցանէ նաև մեծագոյն. 'Ի Վալլիս և 'ի Քարթերէթ նաւապետաց, որք չափեցին զնոսա յամին 1766,

գտեալ

գտեալ եղեն մեծ ոտնաչափ՝ հինգ և եօթն մատն բարձրութ. Փիլիսոփայական Միտ. Սոքա երևին լինել նոյն ժողովուրդք, որոց հասակն տարապայման եղև պանծացուցեալ յամին 1764. որովհետև զանազանք 'ի նոցանէ տանէին փօլօթթօլինս եզկանաչ պայէթթօնս նոյնասեռս ընդ այնմ, որ եդեալ էր 'ի նաւն նաւապետին Ուալլիսայ. և նա բնականաբար հետևեցոյց, թէ նոքա ընկալեալ էին զայսպիսի իրս 'ի Պիւրոնայ. Յամին 1767, չափեալ եղեն նորոգ 'ի պարոն Պուրկայինվիլլեայ, որոյ պատմութիւն համաձայնի մանրամասնաբար Է պատմութեան նաւապետին Ուալլիսայ. Ընդ այսոսիկ յարեցից ես զվկայութիւն իմն ծանրակշիռ. Յամին 1762, տէրն Լեոնարդոս Իպակնեց Էքհավարբեան ընկերացաւ ընդ մարքէզին Ուալտէլրիօսայ 'ի Պուէնօս Այրէս. և անդ դեգերեցաւ զամս բազումս. Սա է հեղինակ ոմն բազմիմաստ. և համբաւ իւր լինելոյ այր ճշմարտաբան է անխախտ 'ի մէջ հայրենակցաց իւրոց. Խօսելով զգաւառէն դէպ 'ի ծագն Ամերիկոյ՝ ասէ, յորոց արդեօք Հնդկաց իցէ ժառանգեալ. Ոչ ստուգիւ յառաջելական փաթթակօնաց, որք ենթադրին տեղակալեալ կայս նահանգ. 'Ի բազում ականատես վկայից, որք եղեալ են 'ի մէջ այնց Հնդկաց և շահավաճառ լեալ բազմօք ընդ նս, ընկալայ ես զճշմարիտ և զնմանօղ իմն ստորագրութի անձանց նց. Նոքա նոյնահասակք են ընդ Սպանիացւոց. ես ոչ տեսի 'ի նոցանէ զոք, որ հասանէր առ բարձրութի երկուց վարասաց և երկուց կամ երից մատանց. այս է, շուրջ ութսուն կամ ութսուն և մի մատն Անգղիական, եթէ Էքհարրեան առնէ զհաշիւ իւր Ը վարասացն Մատրիտու. Այս ճշգրտիւ միաբանի ընդ չափուն նաւապետին Ուալլիսայ. Սէյինս յնեան, Տէրն Ֆալքնէր, որ նստաւ իբրև միսոնար զամս քառասուն 'ի հարաւային մասունս Ամերիկոյ, ասէ, թէ փաթթակօնք են ազգ յաղթան-

թանգամ. բայց ես ոչ երբեք լուայ խօսիլ զհըս-կայական զարմն յիշատակեցելոյ յայլոց, թէպէտ և տեսեալ եմ զանձինս բազմանգամ տարբեր ցեղից հարաւային Հնդկաց. Ներածութեան. եր. 26:||

Բայց ընչաւորք ժամանեն առ բարձրագոյն կատարելութիւն տեսակի իւրեանց միայն 'ի բարեխառն կլիմայս, կամ ուր գտանեն զառաւել սնուցիչ ճարակ և 'ի մեծագոյն առատութեն. Անբանաւոր իմն է սպասելն գտանել զմարդիկ, որ ունիցին զառաւել վերամբարձ պատիւ զարմի իւրեանց, և որք գեր 'ի վերոյ իցեն 'ի մեծութեն և 'ի զօրութեան քան զազգս այլ ում մասին երկրագնտոյ, յանշէն անապատին Սանճէլանեան կողմանցն 'ի մէջ ցեղի միոյ անխորհուրդ վայրագաց. Պիտոյ է մեզ առաւել յայտնի և անշուշտ վկայութե առ 'ի հաւատարմացուցանել զգործ ինչ, որ դիմամարտի այնց ընդհանրական սկզբանց և օրինաց, որ երևին ազդել 'ի մարդկեղէն կերտուած ըստ ամ հայեցուածոյ. և որք վճիռ հատանեն զբնութենէ և զօրպխութէ նր. և այսպիսի իմն յանդիմանուի ոչ է երևեալ մինչև ցայժմ. Թէպէտ զանազան անձինք, որոց վկայութե պարտի մեծ ակնածութի, այց արարեալ իցեն այսմ մասին Ամերիկոյ յետ ժամանակին Սանճէլանու, և տեսեալ իցեն զազգայինսն զայնոսիկ, և թէպէտ պնդէին ոմանք, թէ էին հսկայ հասակաւ, և յառաջ ածէին այլք զնոյն հետևութիւ 'ի չափելոյ զհետս ոտից նց և զոսկերատիս մեռելոց նց, սակայն պատմութիք նց զանազանին յայնքան էական գլուխս 'ի միմեանց, և են խառնեալք այնքան յայտնի սուտ և առասպելական պարագայիւք, զի նուաղեն յոյժ զհաւատս նց. Յայլմէ կողմանէ ոմանք նաւորդք և եւ գերազանցք յարհեստի իւրեանց վն ճանաչողութեն և խնամոտութեն, հաստատեալ են, թէ ազգայինք Փաթակօնիոյ, զ որոց խօսակից եղեն,

թէպէտ և ուժեղք և բարեկազմք, ոչ են այնպէսի արտաքոյ կարգի մեծութ, որով կնոքին զանազանիլ 'ի մնացեալ ազգէ մարդկան. Իսկ թէ այս հսկայ զարմ մարդկան գուցէ, 'ի մի յայնց յօդուածոց 'ի բնական պատմութեան, որոյ նկատմամբ զգուշաւոր ոք հետազօտիչ տարակուսեսցի բազում. և ապա վերլուծցէ 'ի կախ պահել զհաւանութիւն իւր, մինչև լրագոյն իմն ապացուցութիւն ոչ եկեսցէ 'ի բացորոշել, միթէ պարտ իցէ ընդունել զեր ինչ անմիաբանական առ երևոյթս ընդ այնմ, զոր տրամաբանութիւն և փորձառութիւնն յայտնեալ են նկատմամբ կերտուածոյ և պայմանի մարդոյ յամ պէսպէս կայացութիս, յորս նշմարեալ եղև:

Նա 'ի կերպաւորել զկատարեալ իմն գաղափար բաղկացութեան բնակչաց այսր և միւսոյ կիսագնտի պիտոյ է քննել ոչ միայն զկերտուած և զդէմ մարմնոց նց, այլ և նկատել, թէ յոր աստիճան առողջութեան վայելեն նոքա, և յոր երկայնութի կենաց ժամանեն սովորաբար. 'Ի պարզուն վայրագ վիճակի, ուր մարդն ոչ է ճնշեալ յաշխատութէ, կամ տկարացեալ յանժուժկալութէ, կամ նեղեալ 'ի հոգւոց, դիւրին է պատկերակերպել, թէ կեանք իւր հասեսցէ առանց վրդովման կամ կրից կամ չարեաց, մինչև զրաւեսցին աւուրք իւր 'ի վերջին խմիք ծերուն մն յաջորդական իմն անկման բնուն. 'Ի մէջ Ամերիկացւոց, որպ և 'ի մէջ այլոց բիրտ ժողովրդոց գտանին անձինք, որոց զառամեալ և խորշոմեալ կերպարանն ցուցանէ զկեանս ինչ արտաքոյ կարգի տևողութե. Սակայն ոչ գիտելով նոքա մեծագոյն մասամբ զկարգն թուելոյ. և կելով մտացօղք անցելոյ՝ և անհոգք զապագայէ, անկարելի լինի ճշմարտելն զհասակ նց ճշգրիտ իմէք որոշմամբ. Այս ճշմարիտ է, թէ շրջան երկայն կենաց նց երևելաբար պէսփոխանելի է ըստ պէսպիսութե կլիմայից և ըստ զանազան եղանա-

Մեծութ տարբե Չափերէ նց.

կաց ապրուստի ն՛ց. Սակայն երեւին լինել ա՛մ ուրեք զերծք 'ի բազմաց հիւանդութե՛նց, որք ներքին զառաւել կիրթ ազգս. Ոչինչ յայնցանէ, որք են բնական արտադրած ցրտութեան եւ դատարկութեան այց արար ն՛ց երբէք. եւ լեզու ն՛ց ոչ ունի զե-զերս առ 'ի զանազանել զայս յոգնաթիւ հետեւակս եկամուտ ախտից:

Հիւան- դութք. Որպիսի եւ իցէ կայաւորութիւն, յորում եղեալ է մարդն, ծնեալ է նա առ 'ի կրել. եւ հիւանդութիւնք իւր ի վայրենի վիճակին, թէպէտ եւ սակաւք թըւով, են որպէս զընչաւորացն, որոց ճշգրտիւ նմանի յեղանակն կենաց, առաւել բնական եւ առաւել մաշարեր. Եթէ վաւաշոտութիւն ծնանի եւ տածէ զհիւանդութիւնս միոյ տեսակի, տաժանումն եւ տառապանք վայրագ կենաց պատճառեն զայլ տեսակս. Եւ քանզի մարդիկ յայսմ վիճակի են անյառաջատեսք կարի յոյժ, եւ հայթհայթանք ապրելոյ ն՛ց անստոյգ, անցանեն նոքա կարի ստէպ 'ի վերջին ի՛մն չքաւորութէ առ զեղեալ ի՛մն առատութի ըստ փոփոխութե՛նց բաղդին յորսն, կամ ըստ պէսպիսութե՛ն 'ի բերս յեղանակացն. Նոցա անխորհուրդ որկորամոլութիւն 'ի միում կայաւորութե՛ն եւ խստագոյն անսուաղութիւն 'ի միւսում են հաւասարապէս վտանգաւորք. Որչափ եւ խառնուած մարդկային կարասցէ սովորել զօրութ ունակութե՛ն, ոչ խառնուած յափշտակօղ շնչաւորաց. տանել երկայն ի՛մն քաղցու եւ յետոյ ուտել անյագաբար. սակայն ոչ սակաւ վնասի յայնց յանկարծ եւ բռնական անցից. Զօրութի եւ կորովութի Ամերիկացւոց տկարանան 'ի ժամանակս ինչ վասն այնր, զոր կրեն 'ի նուազութ կերակրոյ, եւ յայլս վ՛ց անկարգութե՛նցն, որք ծնանին յանմարսողութ եւ 'ի զեղխութ խոշոր իրիք սննդեան. Այս վերջին իրք հասարակք են, եւ կարեն նկատիլ իբր անխորշելի հետեւութիւք յեղանակէ սնանելոյ ն՛ց. եւ բառնան 'ի միջոյ ջոլովս 'ի նոցանէ 'ի ծաղկի

տիոցն

տիոցն. Նոյն և անսահմանաբար ենթարկեալք թո-
քացութեան, կշտայութեան, շնչարգելութեան, ան-
դամալուծութեան պատճառելոց 'ի մեծամեծ տար-
ժանմանց և յերկարատև աշխատանաց որսոյ և
պատերազմի, և յանբարեխառնութենէ օդոյ, որում
հանապազորդ արտադրեալ են. 'Ի վայրագ վե-
ճակի չարչարանք և աշխատութիւնք յարձակին 'ի
վր մարմնոց սաստկապէս. 'Ի մէջ քաղաքականա-
ցեալ ընկերութեանց անբարեխառնութիւն եղծանէ
զնս սակաւ առ սակաւ. Ոչ է դիւրին որոշելն,
որն յորոց պատճառաց գործիցէ առաւել մահա-
բեր արտադրութիւն, և դիմիցէ աւելի 'ի կար-
ճել զմարդկային կեանս. Ազդեցութիւն առաջնոց
ստուգիւ է առաւել տարածեալ. Աստանդաւոր հե-
տեւութիւնք հեշտախտութեան դիպին միայն սակաւ
անհատից յամ ցեղից. տառապանք վայրագ կե-
նաց զգացեալ են յամենեցունց. Որչափ ես կա-
րող եմ դատել զկնի մանրամասն քննութեան, ընդ-
հանրական շրջան մարդկային կենաց է կարճագոյն
'ի մէջ վայրագաց, քան 'ի մէջ բարւոք կարգա-
ւորեալ և հանճարեղ ընկերութեանց:

Զարհուրելի իմն հիւանդութիւն դժնդակագոյն պա-
տուհաս, որով յայսմ աշխարհի զայրացեալն ած
պատժէ զգեղումն մեղանչական ցանկութեանց, երևի
թէ լեալ իցէ մասնաւոր Ամերիկացւոց. Հաղոր-
դելով նոքա զայն տիրապետողաց իւրեանց՝ ոչ
միայն առին զվրէժ ընդարձակաբար զանիրաւութեանց
նց, այլ և յաւելլով զայս աղէտս 'ի վր այնքա-
նից, որք դառնացուցանէին զմարդկային կեանս,
թերևս աւելի կշռեցին քան զոսկեանդակ բարե-
բարութիւն, զոր Եւրոպիա հանեալ է 'ի գիւ-
տոյ Նորոյ աշխարհի. Այս հիւանդութիւն յերկրէն,
յորում սկսաւ նախ՝ զայրանալ, կամ 'ի ժողովր-
դենէն, յորմէ ենթադրի ախտեալ ընդ Եւրոպիա,
կոչեցեալ է երբեմն Նէապօլսական, և երբեմն
Գաղղիական. 'Ի Նոր երևման իւրում ապակա-

նութիւն էր այնպէս չար, պարագայք իւր այնպէս բանական, և գործք իւր այնպէս յափշտակիչք և անհրաժեշտք, մինչ զի 'ի դերև հանէին զամ ջանս բժշկական արհեստի. Ճշմարումն և սաստկումն ընկերէին այսմ անծանօթ ցաւոյ 'ի յառաջադիմութիս իւր. և մարդիկ սկսանէին երկնչել, մի գուցէ բնաջինջ լինիցի ազգ մարդկան այսպիսի իմն անողորմ ժանտիւ. Սարժումն և ճարտարմտութի բժշկաց գտին աստիճանաբար դեղս այնպէս զօրաւորս, զի բժշկեցին կամ մեղմացուցին զախտն. Յընթացս երկուց հարիւրեկաց և կիսոյ երևի թէ թոյն իւր նշանաւորապէս լիցէ նուազեալ. 'Ի վախճանի զօրէն բորոյ, որ ը հարիւրաւորս ինչ ամաց ապականեաց զԵւրոպիա, կարէ կորուսանել զոյժ իւր և աներևութանալ. և յառաւել երջանիկ դարու իմիք այս արկածեան ապականութի, որպէս և արևելեանն ճանաչիցի միայն 'ի ստորագրութէ իւրմէ:

(26) Անտոնիոս Սանքեզ Ռիպէյրոս գիտնական և ճարտար բժիշկ հրատարակեաց ճառ ինչ յամին 1765. յորում հնարի հաւաստել, թէ այս հիւանդութի ոչ եղև մուծեալ յԱմերիկոյ, այլ ծնաւ յԵւրոպիա. և պատճառեցաւ 'ի տարափոխիկ իմն կամ 'ի չարաբար անկարգութէ. Եթէ կամէի ես աստանօր մտանել 'ի քննութիւն այսր նիւթոյ, զոր ոչ էի յիշատակեալ, եթէ ոչ էր ներքսապէս յարակցեալ ընդ այսմ մասին հետախուզութեց իմոց, ոչ լինէր դժուարին ակնարկել զսխալանս ինչ նկատմամբ եղելոցն, յորոց վերայ հիմնի նա, և նկատմամբ մոլորութեց ինչ 'ի հետևութիւն, զորս նա հանէ յայնցանէ. Արագընթաց ճարակումն այսր ախտի 'ի Սպանիոյ ը Եւրոպիա, երևի թէ նմանիցի ծաւալման տարափոխիկ ախտին մանաւանդ՝ քանթէ հիւանդութե իմիք փոխանցելոյ ապականութե. Առաջին յիշատակութի այնր արարեալ եղև յամին 1493. և յառաջ քան զամն

1497

1497 երեւեալ էր 'ի բազում գաւառս Ամերիկոյ այնպիսի աշխարհու նշանօք, մինչզի պարտաւանդեն զբազմաջանս մեծաւորս միջամուխ լինել վն տեսանելոյ նախահանչել զնմեթացս նր ։

Ի. Յետ նկատելոյ զայն, որ երեւի մասնաւոր 'ի մարմնաւոր բաղկացութեն Ամերիկացւոց, ուշադրութի մեր դառնայ բնականապար առ կարողութի եւ առ արակութի մտաց նց. Ուրաքանչիւր անհատ անցանէ 'ի տգիտութէ եւ 'ի տկարութէ տղայական վիճակին առ կորովութի եւ առ հասունութի մտաց. եւ է շրջան ինչ տղայութե, յորում զանազան կարողութիք մտաց ոչ են պարզեալք, եւ ցուցանին տկարք եւ պակասաւորք 'ի գործողութե իւրեանց. Յառաջին ժամանակս ընկերութե, յորժամ պայման մարդոյ է պարզ եւ ուրոճական, բանականութի նր է սակաւ վարժեալ, եւ բաղձանք իւր ամփոփին առ անձկագոյն իմն միջոց. Աստուստ ծնանին երկու նշանք տարորոշիչք մարդկեղեն մտաց յայնմ վիճակի. Իմացական կարողութիք իւր են անսահմանաբար կապարաւորեալք, եւ շարժմունք իւր եւ թեւակոխութիք են սակաւք եւ թոյլք. Բայց այս զանազանութիք են առաւել տեսանելի 'ի մէջ բիրտ եւ անկիրթ ցեղից Ամերիկացւոց, եւ կերպացուցանեն զմեծ մասն ինչ վիպասանութեան նոցա ։

Այն, որ 'ի մէջ քաղաքականացեալ ազգաց կոչի իմաստական տրամաբանութի, կամ հետախուզութի, չէ ինչ բնաւին անծանօթ յուրոճական վիճակի ընկերութե. եւ ոչ լինի պատաղումն կամ պարապումն մարդկային կարողութեց, մինչեւ մարդն ոչ իցէ այնքան կրթեալ, զի եղիցի ապահով ստուգութե 'ի վն հայթհայթանաց ապրուստի եւ ստացման հանգստեան եւ անդորրութե. Խորհմունք եւ ուշադրութի վայրագի սահմանաւորին 'ի ներքս փոքրիկ շրջանակի այնց առարկայից, որք ածեն անընդմիջաբար առ նախապահպանութի իւր, կամ առ վայելումն.

Կարո- ղութիւն եւ ուշիմութիւն մտաց նց.

Իմացա- կան կա- րողութիւնք յայտ կա- պարա- բերեալ.

Այլ ամ իմն արտաքոյ սորա մնայի 'ի նշմարմանէ նորա, կամ նմա է բոլորովին անտարբեր. Այն, որ է առաջի աչաց իւրոց, շարժէ և պարաւանդէ զնա. այն, զոր ոչ տեսանէ, կամ գտանի 'ի հեռաւորութեան, ոչ առնէ նմա զտպաւորութիւն. Այն զանազան ազգք Ամերիկա, որոց սահմանաւոր իմացումն ոչ երբեք լինել ընդունակ 'ի կերպաւորել զկարգադրութիւն իմն մի ապագայ աւուր, հոգածութիւն ինչ և նախատեսութիւն ոչ տարածելով ցայնքան. Մինչ նոքա բարձր համաբուռն ունին զիրաց, որք պիտանի են նոցա ներկայաբար, կամ մատակարարեն զներգործական իմն վայելումն, ոչ վարկանին բնաւ զայնս, զորս ոչ են առարկայ անմիջական իմն պիտոյից. Յորժամ ընդ մերձենալ երեկոյին Քարայիպպ ումն զգայ տրամադրեալ առ 'ի երթալ 'ի հանգիստ, ոչինչ նկատումն փորձեցէ զնա վաճառել զանկողին իւր. բայց յառաւօտուն յորժամ ելանելոց է 'ի դուրս մի խրճիթէն իւրոց, կամ 'ի զբօսանս որսնջեան, աղաւաղի մի փոքրագոյն չէջին իրաց. ընդ որս զմայլեցի. Յաւարտի ձմեռան, յորժամ տպաւորութիւն այնր, զոր կրեալ է նա 'ի խստութենէ կլիմային տակաւին թարմ է 'ի միտս Ամերիկացւոյ ուրումն հիւսիսայնոյ, ջանայ փութով նախապատրաստել զատաղձս առ 'ի կանգնել զպատշաճ իմն հիւղ, որ պատսպարեսցէ զնա յանբարեխառնութենէ յաջորդական յեղանակաց. բայց իսկոյն ընդ բարեխառնիլ օդոյն, մոռանայ զանցեալն, մինչև դարձ ցրտոյն ոչ ստիպէ զնա առնուլ վերստին խորհուրդ զայնմանէ, յորժամ է կարի անագան:

Եթէ յիրս շահեկանագոյնս և երեւելաւոր պարզագոյնս՝ բանականութեան մարդոյ, յորժամ է բիրտ և առանց կրթութեան այնպէս սակաւ տարբերի 'ի տխմար թեթևութենէ տղայոց, գործողութիւնք իւր ոչ կարեն լինել յոյժ երեւելիք. Առարկայք, առ որս դառնայ նա, և խոյզքն, յորս զխմաղրաւ լի-

նի

նի, պարտին կախիլ 'ի վիճակէն, յորում է նգեալ. և այս ամ Թելադրի նմա 'ի կարեաց իւրոց և 'ի բաղձանաց. Հետազօտութիք, որք երևին անտնօրինելիք և կարևորք մարդկան 'ի միումվիճակի ընկերութե, ոչ են նոյնպիսիք վն յայլում վիճակի եղելոցն. 'Ի մէջ ազգաց քաղաքականացելոց՝ Թըւաբանութին կամ արհեստն Թըւելոյ համարեալ է գիտութի իմն էական և սկզբնական. և 'ի ցամաքի մերում գիւտ իւր և գործածութի ամբառնան առ այնպիսի իմն հեռաւոր սկիզբն, մինչզի պատմութին ոչ ժամանէ անդր. 'Ի մէջ վայրագաց, ոյք ոչ ունին զյատկութի համարելի, և ոչ զգանձս մթերեալս հաշուելիս, և ոչ զպէսպիսութի առարկայից, և ոչ զբազմապատկութիւն տեսակաց Թըւելիս, Թըւաբանութին է արուեստ իմն աւելորդ և անպիտան. և հետևաբար առ ոմանս ցեղս երևի լինել բնաւին անծանօթ. Են բազումք 'ի նոցանէ, որք ոչ կարեն երթալ աւելի յառաջ քան զերիս, և ոչ ունին զեզերս առ 'ի տրոհել զԹիւ ինչ, որ անցանէ զայնու. Այլք կարեն ժամանել ցտասն և ցքսան. Յորժամ կամին հաղորդել զգաղափար ինչ բարձրագոյն իրիք Թըւոյ, ցուցանեն զհերս գլխոյ իւրեանց, կամելով ասել այնու, Թէ այնպիսի Թիւն է հաւասար այնց. և լի աղշութբ. յայտ առնեն զայն այնպէս, ոմ զի ոչ կարէ բացայայտիլ. Ոչ միայն Ամերիկացիք, այլև ամ ազգք յորժամեն չափազանցօրէն բիրտք, երևին ոչ գիտել զարհեստ հաշուելոյ. Բայց իսկոյն իբրև ստանան զճանաչումն կամ զյարակցութի ընդ պէսպիսութե իմիք առարկայից, և իցէ անդ յաճախ պատճառ զուգաւորելոյ զնս, կամ բաժանելոյ, գաղափար Թըւոյ նոցա աճէ այնպէս, զի աստիճանն, յորում գտանի այս արհեստ 'ի մէջ որոյ և իցէ ժողովրդեան, կարէ նկատիլ իբր փորձ իմն, յորմէ յառաջ ածելի է յառաջադիմութիւն զտման նց. Իրոգքքացիք 'ի մէջ հիւսիսային Ամե-

ընկոյ մն զի են յոյժ առաւել քաղաքականացեալք քան զվայրի բնակիչս Պրասիլեայ, Փարակուայեայ և Կուիանայ, արարեալ են և զմեծագոյն զարգացմունս յայսմ սեռի, թէպէտ և թուաբանութի նց ոչ տարածիցի աւելի քան զհազարն, ոչ ունելով նոքա 'ի փոքրիկ դաշնակցութիս իւրեանց զպէտս բարձրագոյն թուոց. Իրօքքհէզք՝ ազգ նուաղ երևելի 'ի նմին շարունակի կարեն թուել միայն մինչև ցհարիւր. և ցասուկայր ունին զանուանս մն տարբեր թուոց. Փոքրագոյն ցեղք մօտաւորք նց ոչ են գիտացեալ անցանել անդր քան զտասն:

(27) ‖ Ժողովուրդն Օթահէյիթեայ ոչ ունի զբառ մն իւրք թուոյ, որ անցանիցէ զերկերիւրիւ. որ և բաւական է մն դաշնակցութեց նց. Ճանապարհորդութիւն Քուքեայ: ‖

Ունակութիւն ազգ վայրենաց խոկման. — Հայելով յայլ իրս վարժութի մտաց 'ի մէջ անհրահանգ ազգաց է միշտ կոպտագունեաւ. Ի միտս մարդոյ՝ յորժամ է 'ի վայրագ վիճակի, հազիւ երևի, թէ օթիցին 'ի նմա այլ գաղափարք արտաքոյ այնց, որք մտանեն անդր ընդ ճանապարհ զգայութեց. Շրջակայ առարկայք առաջի աննին աչաց իւրոց. այնք, որք կարեն ծառայել 'ի պէտս իւր, քարշեն և սևեռեն զնոյն իւր. և յայլս հայի անհոգաբար և առանց ինչ ուշադրութեան. Շատացեալ նկատելով զնն ընդ այնպիսի պարզ տեսլեամբ, յորում երևին նմա, այս է, բաժանեալք և անջատեալք, ոչ զուգաւորէ զնն առ 'ի կերպաւորել զընդհանրական դասս. ոչ հայի ուրոյն յատկութիս նց, և ոչ սևեռէ զխորհուրդ իւր 'ի վն գործողութեց մտաց իւրոց նկատմամբ նց. և այսպէս երևի, թէ իցէ 'ի խաւարի իմ իմանալի տեսակաց անուաներոց ընդհանրական կն վերացեալ, կամ խոկման. Միջոց իմացման իւրոյ պարտի հեռաւորապար լինել յոյժ ամփոփեալ. և տեսակք իւր դրաւեալք սոսկապէս քայն, զոր ունի

Հուրջ

ջուրց զկուրև. Այնչափ ճշմարիտ է, թէ այս է վիճակ բնիկ ազգացն յԱմերիկա, զի բարբառք նց, որք տեսցուք 'ի մօտոյ, ոչ ունին զբառ ինչ առ 'ի նշանակել զիր ինչ, բայց եթէ զայն, որ է երևելի. Ժամանակ, միջոց, գոյացութիւն, և այլ հազարաւոր եղերք, որք յանդիման տանին զմերացեալ և զընդհանրական տեսակս, են նց բնական անծանօթ. Մերկ վայրագ մի կորացեալ առ հող 'ի տառապեալ հիւղի իւրում, կամ տարածեալ 'ի ներքոյ սակաւ ճիւղոց, որք ընձեռեն նմա ժամանակաւոր իմն ապաստանարան, ունի սակաւ յօժարութիւն կամ ընդունակութիւն վն պիտանի հայեցողութեանց. Խորհուրդք իւր ոչ տարածանին անդր քան զայն, որ վերաբերի առ ինքն. և յորժամ այրաքիկ ոչ են ուղղեալք առ շահս ինչ անձին իւրոյ, միտք իւր երևի թմբրեալ. 'Ի կայանորունս, յոր ոչ պահանջի արտաքոյ կարգի թևակոխութիւն կամ քանքարոյ, կամ աշխատութեան առ 'ի լնուլ զլոկ պէտս բնութեան, կարողութիւնք մտաց են այնպէս ցանցառ զարթուցեալք առ վարժութիւն ինչ, մինչզի երևին պահիլ նիրհեալք և առանց պաշտօնի. Յոգնաթիւ ցեղք սփռեալք ընդ հարուստ դաշտավայրսն հարաւային Ամերիկոյ, բնակիչք իրիք 'ի կղզեացն և մասին ինչ 'ի բերրի տարածութեանց ցամաքին գան ընդ այսոցիկ ստորագրութեամբ:

Նոցա աննշանակ հայեցուած, աչք շլացեալք և առանց բացայայտութեան, նց տխմար անհոգութիւն և բոլորովին ագիտութիւն առարկայից, որք երևին առաջին առ 'ի յանդիման լինել խոկման բանաւոր իրք էակի՝ արարին զայնպիսի տպաւորութիւն 'ի վն Սպանիացւոց, յորժամ տեսին զնս յառաջնում նուագի, մինչզի համարեցան զնս իբր շնչաւորս վայրագս իրիք կարգի, ոչ կամելով հաւատալ, թէ վերաբերեսցին առ մարդկային տեսակ. Պիտոյ եղև յարգոյ իմն աւագութի, այս է, քա-

հա-

Հանրապետական կոնդակ մի առ 'ի հակադրիլ այսմ կարծեաց, և յաղթահարել զնա, թէ Ամերիկացիք էին ընդունակք պաշտաման և արտօնութեանց մարդկութեան. Նոյն նաև զկնի այնր ժամանակի անձինք առաւել լուսաւորեալք և առաւել անաչառք քան զգտիչս կամ զտիրապետողս Ամերիկոյ կալեալ են զպարապ նշմարելոյ զվայրագագոյն բնակիչս իւր, և ապշեալ, տեսանելով զմարդն այնպէս օտարաբար նուաստացեալ. Նոյն 'ի խստագոյն կլիմայս, ուր ապրուստն ոչ կարէ պաճարիլ նովին դիւրութեամբ, ուր մարդիկ պարտին միաւորել անձկապէս և գործել առաւել միաբան, հարկաւորութիւն զարթուցանէ զքանքարս նց, և սրէ լըգիւտս նց այնպէս, զի իմացական կարողութիւնք են առաւել վարժեալք՝ և զտին առաւելաբար. Հիւսիսային Ամերիկացիք և ազգայինք Չիլեայ, որք բնակին 'ի բարեխառն կողմանս յերկուս մեծամեծ նահանգսն Ամերիկոյ, են ժողովուրդք իմացողութ. մշակեալք և ընդարձակեալք, եթէ նկատիցին յաղգաստուք ոմանց 'ի ժողովրդոցն զետեղելոց 'ի յԸղգիսն, կամ 'ի մերձակայ տեղիսն Անդալուսեայ կամ Օրինոքոսի. Զբաղմունք նոցա են առաւել պէսպիսացեալք, կարգադրութիւն քաղաքականութեան նց և պատերազմի է առաւել բաղադրեալ, արհեստք նց առաւել թըրճաւորք. Նոյն և 'ի մէջ նց իմացական կարողութիւնք են առաւել սահմանաւորեալք 'ի գործողութիւն իւրեանց. և բացառեցեալ յորժամ դառնան ուղղակի առ առարկայս, որք շահաւէրք են վայրագի մտում, ոչ են ինչ ի համարի. Նոյն հիւսիսային Ամերիկացիք և բնակիչք Չիլեայ, յորժամ ոչ են դրդեալք յիմք 'ի պաշտաման պատկանելոյ առ պատերազմական ոք կամ առ որսորդ մի, ծախեն զժամանակ իւրեանց յանխորհրդութ իմն անհոգութեան առանց տեղեկանալոյ զայլմէ իմէքէ առարկայէ, որ արժանի է ուշադրութեան նց, կամ ընդունակ պայծառացուցա-

նե-

նելոյ զմիտս նոցա. Եթէ ես 'ի դոսա միտքն է այնպէս պարագրեալ 'ի վարժմունս իւր, և ոչ հասանէ ծգամբք իւրովք առ ծանուցումն սկզբանց և ընդհանրական առածից, որք ծառայեն իբր հիմունք առ գիտութիւն, կարեմք հետևեցուցանել, թէ միտք մարդոյ 'ի վայրագ վիճակի զուրկ է 'ի ճշմարիտ առարկայէ իւրմէ. և թէ այսպէս ոչ ստանայ զերևելի ինչ աստիճան կորովութեան և աճման ։

Ըստ նոյին պատճառաց ներգործական ջանք մտաց Եւրոպացւոց վայրագ մարդոյ են սակաւք և թոյլք 'ի բաղում ծուլութեան առիթս. Գիտնելով զշարժիչս, որք զարթուցանեն ջանս զմարդիկ 'ի մէջ քաղաքականացեալ կենաց, և որք կապոց ստիպեն զնա տևել յաշխատալի կրթութիւնս մտաց [illegible] և կորովութիւն իւրեանց. տեսանեմք, զի սորա ծնա- [illegible] նին նախապէտարար 'ի ստացեալ պիտոյից և բաղձանաց, որք են բազմաթիւք և ձանձրացուցիչք, և ունին զմիտս 'ի յաւէժական յուզման, ճահելով մի լցուցանելոյ զնա, զի հնարագիտութիւն լցէ միշտ 'ի շարժման, և ճարտարմտութիւն անդադար պարապեցուցեալ. Բաղձանք պարզ բնութեան են սակաւք. և ուր կլիմայ ինչ նպաստաւոր մատակարարէ իւրովի զայն, որ բաւական է առ 'ի սնունդ, հազիւ շարժեն և զարթուցանեն զբնական ինչ յուզումն մարդոյ. Ըստ այսր պատճառի ժողովուրդք զանազան ցեղից Ամերիկա ծախեն զկեանս իւրեանց 'ի հեղգ իմն անհոգութեան. Ինելն ազատ յաշխատութենէ երևի, թէ լցէ միակ վայելումն, առ որ ձգտին նոքա. Անցուցանելին զաւուրս ողջոյն տարածեալք 'ի վր̃ ակմբի իւրեանց, կամ նստելով 'ի գետնի 'ի մշտնջենաւոր իմն դատարկութեան առանց փոխելոյ զդիրս և առանց ամբառնալոյ զաչս իւրեանց 'ի գետնոյն կամ յօդաւորելոյ զմի միայն բառ ։

Այնպիսի է ատելութիւն, զոր ունին առ աշխատանս, մինչզի ոչ յոյս ապագայ շահուն և ոչ եր-

երկիւղ ապառնի ինչ չարի կարեն յաղթել այնմ . Նորեկին հաւատարապէս ունայնաբերք վն այսց երկուց իրաց, ցուցանելով սակաւ հոգածութի, և ոչ ածնելով զգուշութի առ 'ի խորշել 'ի վերջնոյն, կամ առ 'ի ապահովանալ վն առաջնոյն . Սորակք քաղցուն ապաքէն ծառայեն 'ի զարթուցանել զնս . այլ քանզի մազգայլեն նոքա սակաւ խորութի, զինչ և իցէ իր կարէ լինել զբնականն պէտս նց . և կրթութք, որք պատճառեն զխնդիր կերակրոց, են միշտ կարճատեւք . Զուրկք 'ի վամանէ և 'ի պէսպիսութէ ըղձից, ոչ զգան զզօրութի այնց հզօր պատճառաց, որք զօրացուցանեն զշարժմունս ոգւոյն . և որք գլխաւն զհամբերատար ձեռն ճարտարուն առ 'ի տեսել խապաւ 'ի ջանս իւր . Մարդն յիմէք մասին Ամերիկոյ է այնպէս տխմար բարուք, մինչզի ոչ կարէ նշմարել արդիւնք ինչ գործունէուն իւրոյ, և սկիզբն իմացման, որ պարտ էր ուղղաւորել զայն, երևի դժուարին առ 'ի բանիլ . Նման այլոց շնչաւորաց ոչ ունի զկայուն օթեվան . ոչ ունի զբնակարան կանգնեալ առ 'ի պատսպարիլ 'ի տուգանաց օդոյ . ոչ լինի նախատես առ 'ի ապահովանալ վն որոշեալ ինչ ապրուստի . ոչ սերմանէ, ոչ հնձէ այլ շրջի թափառական 'ի խնդիր բուսոց և պտղոց, զորս երկիրն ինքն յառաջ ածէ . և յորս երէոյ, զոր սպանանէ նա ընդ անտառս, կամ ձկան, զոր նա ըմբռնէ 'ի գետս :

Պէսպէ-սութիւն ինչ նկատ-մամբ տար-ազի.

Այլ այս ստորագրութի մերձեցուցանի միայն առ ցեղս ինչ . Մարդն ոչ կարէ շարունակել յերկար ժամանակ յայսմ վիճակի տկար տղայութեան և զուրկ 'ի ճանաչմանց . Նա արարեալ եղև վն գործողութե, և վն մտավարժութե . և կարողութիք նմա բնականք, այլ և կարիք պայմանի իւրոյ տանեին զնա 'ի լինել զվախճան իւր . Յայսմանէ հետեւի, զի 'ի մէջ մեծագոյն մասին Ամերիկեան ազգաց, և մանաւորապէս յայնս, որք կայաւորեալ

են

են 'ի խիստ կլիմայս, գուն գործին և առնէ լինին նախաշաւիղ զգուշութեան ինչ առ 'ի գտնել յապահովլի զապրուստն. Ընթացք կանոնաւոր ծարտարուն վաղ իսկ սկսեալ է անդէն. և աշխատաւոր բազուկն տուեալ է զառաջին ճաշակս ուժոյ իւրոյ. Սակայն այսու ամենայն անյառաջատես և պղերգ բնաւորութեան վայրագ վիճակին տիրէ առաւել. Նաև 'ի մէջ առաւել զուեալ ցեղից աշխատանքն դատեալ է փառահամբաւ և անարգ. Մարդն արժանի համարի մնել զձեռն յորոշեալ ինչ ազգ աշխատանաց. մեծագոյն մասն նր եղեալ է 'ի վ̃ կանանց. Կէս մի հասարակութեան մեայ առանց գործելոյ ինչ, մինչ միւս կէսն ճնշեալ է 'ի բազմութեան և 'ի պէսպիսութէ զբաղմանց իւրոց. Նոյնպէս ճարտարութիւն նց է մանկական. և յառաջատեսութիւն նց, որ ուղղաւորէ զայն, ոչ է նուազ սահմանաւորեալ. Նշանաւոր օրինակ ինչ այսր ամի ներկայացուցանի մեզ 'ի նախապետական կանոնաւորմանն նկատմամբ եղանակի կենոյ նց. Կախին նոքա վն ապրուստի իւրեանց զմասն ինչ տարւոյն յորսոյ ձկանց, զմիւս մասն յորսոյ էրէոց, և զերրորդն 'ի բերոց երկրագործութեան իւրեանց. Թէպէտ փորձառութեն ուսուցեալ է նց նախատեսանել զգարձ ներհակ եղանակաց ինչ և առնել համբարս վն խրախճանքի պիտոյից, սակայն կամ պակասի նց զգօնութի չափակցելոյ զայսոսիկ համբարս ընդ ծախմանն, կամ են այնպէս անընդունակք սանձելոյ սակաւ ինչ զախորժակ իւրեանց, մինչզի պատճառաւ նոյն իսկ ծախման իւրեանց ոչ բնաւ նկատեցելոյ, կրեն բազում անգամ զաղէտս սովու այնպէս դժնէաբար. որք կրեն տխմարագոյն ցեղք վայրագացն. Նյն, զոր կրեն 'ի միում ամի, ոչ ծառայէ աճեցուցանել զճարտարութի նց, կամ փոխատրել զնն առաւել յառաջատես առ 'ի զգուշանալ 'ի նմանակ տառապանաց. Նյս անմտածութի շուրջ զապագային գործ

ագի-

տգիտութեան և պատճառ դատարկութեան ընկերակցի դրոշմէ զմարդն յամ վիճակս վայրագ կենաց. և վն խելագարական իմն եղականութեան 'ի գործելն իւրում ցուցանէ զինքն այնչափ նուազ թոյլ 'ի նախահոգալ զկարիս իւր, որչափ առաւել անըստոյգ են հայթհայթանք զարմանելոյն. և պիտի պաճարել զայն մեծագոյն գժուարութեամբ:

Այլ քանզի գաղափարն, զոր ետու զբիրտ ազգաց, տարբերի ծայրագոյնս 'ի գաղափարէ ծանր ծանր հեղինակաց, պատշաճ եղիցի յառաջ ածել ինչ ինչ 'ի բազմաց վկայութեց, յորոց վերայ հիմնեալ եմ զգծագրութի իմ. Նորք վայրագ ցեղիցն յԱմերիկա ոչ եղեն երբէք նկատեալք յանձանց առաւել ընդունակ եղելոց 'ի նշմարել զնս ընտրողութբ՝ քան 'ի փիլիսոփայից կարգելոց 'ի Ֆրանսիոյ և 'ի Սպանիոյ յամին 1735. առ 'ի որոշել զձև երկրի. Պարոն Պուկուէրն, տէրն Անտոնիոս Ուլլոա և տէրն Գէորգ Խուան նստան յերկար ժամանակ 'ի մէջ բնակաց գաւառացն նուազ քաղաքականացելոց 'ի Փերու. Տէրն Գոնտամինէ ոչ միայն կալաւ զպարապ նշմարելոյ, այլ և 'ի ճանապարհորդութեան իւրում առ Մարաննոնաւ կալաւ միտ քննելոյ զվիճակ պէսպէս ազգացն կալաւորելոց առ ափամբք նր՝ 'ի համատարած ընթացս այնր գետոյ խոտորնակի ընդ շարունակն հարաւային Ամերիկոյ. Ես սքանչելի իմն նմանութի յերևեցուցման նց յատկութեան Ամերիկացւոց. Ամենեքեան են ամենևին անհոգք, ասէ պարոն Պաուկուէրն. են թմբեալք, անցուցանեն զաւուրս ամբողջս 'ի նստիլ 'ի նմին տեղւոջ առանց շարժելոյ, կամ յօդաւորելոյ զմի միայն խօսս. Ոչ է դիւրին ստորագրելն զաստիճան անտարբերութեան նց վն հարստութեանցն և վն շահեկանութեցն, որք յայնցանէ ածանցին. Ոչ լինի գիտել, թէ որով աղուգաւ պարտ իցէ շարժել զնս, յորժամ կամի ոք ներածել 'ի առնել զծառայութի ինչ. Ընդու-

նայն

նայն է մատուցանել նմա զդրամս․ պատասխանեն, թէ ոչ ունին զքաղց․ Պ'ատողութեան ատ փէ-րու․ Եթէ ոք նկատէ զնա իբր մարդիկ, փոքր-կութի մնաց նմա երևի անմխանական ընդ գերա-զանցութե մարդկեղէն ոգւոյն․ Զաղփաղփութիւն նմա է այնքան երևելի, մինչզի հազիւ կարէ կեր-պաւորել զաղափար ինչ զնոցանէ տարբեր 'ի զա-ղափարէ անասնոց․ Մինչ վրդովէ զանդորրութի սրտի նմա անզգայ եղելոյ հաւասարապէս առ ձա-խորդութիս և առ յաջողութի․ Թէպէտ և կես մրկք, են շատացեալք իբր միապետ մի 'ի շքե-ղագոյն հանդիսի իւրում․ Ոչ են բնաւ հրապու-րեալք 'ի փարթամութեց․ և իշխանութիք կամ արժանաւորութիք, առ որս կարեն ձկտիլ, են այն-պէս փոքրիկ առարկայք վս փառասիրութեան նմա, մինչզի Հնդիկ ոք ընդունիցի նովին անտարբերութ զպաշտօն ալքալեայ դատաւորի, և զպաշտօն դահ-ճի, յորժամ զրկեալ յառաջնոյն կարգեալ լինի առ երկրորդն․ Մինչ կարէ շարժել զնա կամ փո-փոխել․ Ճաշասիրութի անձին ոչ ունի իշխանութ 'ի վր նմա․ և բազում անգամ հրաժարին 'ի կա-տարելոյ զծառայութիւն ինչ փոքրիկ, թէպէտ և ստոյգք 'ի վր մեծի իրիք փոխարինի․ Երկիւղն ոչ առնէ զտպաւորութի 'ի վր նմա, և յոյժ սակաւ առնէ զայն ակնածութին․ Հանգամանք նմա է այն-պէս եղական, մինչզի չիք եղանակ խելամտեցու-ցանելոյ զնա, և ոչ զարթուցանելոյ յայնմ ան-տարբերութէ, որ ընդդէմ կայ ամ հաւաստեաց իմաստուն անձանց․ և ոչ գոյ հանգամանք, որ կարիցէ հաւանեցուցանել զնոսա քակտել յայն թանձր ագիտութէ․ կամ դնել 'ի բաց զայն ան-խորհուրդ ըստունգանութին, որք ադմեն զհան-ճար, և'ի դերև հանեն զհոգ այնոցիկ, որք խոր-հին առ բարին նմա․ Պ'ատողութեան Միւլոտ․ Ըս զայսց մանաւոր որպիսութեց յառաջածէ նա զքաղում օրինակս անսովորս․ Ընզգայութին, ասէ

ակյն

տէրն Գօնտամինէ, է խարիսխ յատկութեան Ամե-
րիկացւոյ. Թողում որոշել այլոց, եթէ այս ար-
ժանաւորիցի տրոհիլ անուամբ անկրելութեան, եթէ
անպատուիլ անուամբ ախմարութեան. Այս անզգայութի
ծնանի առանց երկբայութեան 'ի փոքր թուոյ գաղա-
փարաց նց, ոյք ոչ տարածանին անդր քան զպ-
պէտս նց. Անյագք մինչև ցորկրամոլութի, յորժամ
ունին, որով լնուցուն զախորժակ իւրեանց. Ժուժ-
կալք՝ յորժամ պարաւանդէ զնս հարկաւորութիւն,
ցայն աստիճան, մինչև կարող լինել հանդուրժել
անսուաղութեան առանց ցուցանելոյ բաղձալ իրի ի-
միք. Փոքրոգիք և վեհերոտք տարապայման, սա-
կայն եթէ ոչ առնէ զնս յուսահատեալս արբե-
ցութիւն. Ատեացք յաշխատանաց, անտարբերք առ
ամ խթան փառաց, պատուոյ, երախտագիտութե.
Պատուելիք ողջոյն յառարկայէն, որ է նց ներկայ,
և միշտ որոշեալք յայսմանէ միայն առանց ինչ հո-
գածութեան զապագայէ. Անընդունակք նախատե-
սութեան կամ խորհրդածութեան. անձնատուրք՝ յոր-
ժամ ոչ ունին զարգել, առ մանկական իմն
հրճուանս, զոր յայտ առնեն խայտալով շուրջ և
անչափաւոր կարկաչմամբ ծաղու. Ծուլիք յառար-
կայէ կամ 'ի գաղափարէ անցուցանեն զկեանս
իւրեանց առանց խորհելոյ. և ծերանան առանց
բնաւ զարգանալոյ 'ի վեր տղայութենէ. զորոյ պա-
հեն միշտ զամենայն պակասութիւն. Եթէ այս ստո-
րագրութի լինէր մերձեցուցանելի միայն առ Հնդիկս
յիմիք գաւառի Փերուայ, մարթ էր հաւատալ,
թէ այս աստիճան այլասերութեն պատճառեալ իցէ
'ի ծառայական կախմանէն, առ որ վերածեալ են
նքա, կարելով օրինակ արդի Յունաց ծառայել
փոխանակ հաւաստեաց, թէ զկարգ դերութեն կա-
րիցէ ապաստիճանել զմարդկային տեսակն. Բայց
Հնդիկք յառաքելութիս Յիսուսեանց, և վայրագքն,
որք միշտ վայելեն յամրողջ իմն ազատութեն, գո-
լով սահմանաւորեալք 'ի կարողութիս իւրեանց,

առ 'ի ոչ ասել տխմարս լիովին զայլս, ոչ է կար նշմարել առանց խոնարհութեան, թէ զկիրթ մարդն բարձի թողի եղեալ 'ի լոկ բնութե, և զուրկ յառաւելութէն, որ ծագի 'ի դաստիարակութէ և յընկերութէ, տարբերիցի խուն ինչ ամենևին յանբանից. Ճանապարհորդութիւնք Գէորգեայ Ֆորստերայ. Տէրն Հանվալօն իմաստուն և իմաստասէր նշմարօղ, որ այց արար Մարթինիքայի յամին 1751. և եկաց անդ զամս վեց, տայ զհետագայ ստորագրութի զԿարաիպեաց. Ոչ է, ասէ, խարտեաշ գոյն մարմնոյ նց, ոչ է եզականութին կազմածոյ նց, որք բաղկացուցեն զնախապետական տարբերութին 'ի մէջ նց և մեր, այլ է չափազանց պարզմտութի նց, և կոպարաւոր աստիճան կարողութեց նց. Բան նց ոչ է աւելի լուսաւորեալ, կամ յառաջատես քան զազգումն շնչաւորաց. Բանականութի խափշկաց մնելոց 'ի մասունս Ափրիկոյ առաւել հեռաւորս 'ի հաղորդակցութէ ընդ Եւրոպացւոց է այնպիսի, յորում նշմարեմք զնշան ինչ իմացողութե. որ թէպէտ և փայլութեալ, ընդունակ է աճման. Բայց այսմ երևի. թէ միտք Կարաիպեաց ոչ իցէ ընդունակ. Եթէ կրօնն և բարի իմաստասիրութին ոչ մատուցանէին մեզ զլոյս իւրեանց, եթէ պարտէաք վճիռ հատանել ըստ առաջին տպաւորութեն. զոր առնէ 'ի վերայ մտաց տեսութի այնր ժողովրդեան, պատրաստ էաք հաւատալ, թէ նոքա ոչ պատկանիցին առ նոյն տեսակ ընդ մեզ. Ապուշ աչք նոցա են ճշմարիտ հայելի ոգւոց նց. որք երևին առանց իմացական կարողութե. Անհոգութի նց է ծայրագոյնս. ոչ ունին բնաւ զգոյշ ինչ հոգածութի 'ի վայրկենէն, որ յաջորդելոց է առ այն, որ է ներկայ. Ճանապարհորդութիւնք առ Անտիլեանս. Պարօն Պօրտէն, Թէերթրէ, և Ռօշէֆօրթ հաստատեն զայս ստորագրութի. Յատուկ նշանք Կալիֆօռնիացւոց ասէ Հայրն Վէնէկաս, ոյց և նշանք այլ ամ

Հնդկաց են ապշութիւն և անզգայութիւն, պակասութի ճանաչման և խորհրդածութեան, անկայունութի, գահավիժութիւն և կուրութիւն բաղձանաց. տարապայման իմն դատարկութի, խորշումն 'ի գործոյ և յաշխատանաց. անչափաւոր իմն սէր առ զբօսանս և առ ամ ազգ բերկրութի, որչափ և աղտեղականք կամ անասնականք իցեն. փոքրոգուի և միանգամայն ահել՝ ողբալի իմն պակասուի ամ իրաց, որք բաղկացուցանեն զճշմարիտ մարդն, և առնեն զնա բանաւոր, գործիչ, կենցաղավարելի, և պիտանի անձին իւրում, և ընկերուն. Այս է դիրին մն Եւրոպացւոցն, ոյք ոչ երբեք եղեալ են յերկրէ իւրեանց յղանալ զհաւաստարեալ իմն գաղափար այսր ժողովրդեան. որովհետև ես և յառաւել բարձի թողի եղեալ անկիւնս երկրագնտոյս չէիք ազգ մի այնպէս տխմար, այնպէս ամփոփեալ գաղափարօք և այնպէս տկար մարմնով և մտօք, որպէս տարաբախտ Գալիֆօրնիացիք. Իմացումն նց ընդունի սակաւ ինչ աւելի քան զայն, զոր տեսանեն, լինելով բնաւին արտաքոյ կարողութեան նց վերացեալ տեսակք և շղթայ իմն տրամաբանութեն այնպէս, զի հազիւ երբեք բարեգունացուցանեն զառաջին ծանօթութիւս իւրեանց. և այսոքիկ ևս ընդհանրապէս են սուտք կամ գէթ անկատարք. Անօգուտ է առաջի առնելն նց զշահս ինչ ապագայս, որք պարտին ծագել 'ի առնելոյ կամ յոչ առնելոյ զայս ինչ կամ զայն, առնչուի հայթհայթանաց և մախճանաց ոչ եղով բնաւին խելամտեալ 'ի կարողութենէ նց. Այս ունին և ոչ իսկ զդոյզն գաղափար պնտելոյ զկնի այնց իրաց, որք կային պատճառել անձանց նոցա զբարի ինչ ապագայ, կամ ապահովացուցանել զնն յապանի չարէ իմիքէ. Կամք նց չափակցեալ է մտաւոր կարողունց նց. և բովանդակ կիրք իւրեանց շարժին յեւս անձկագոյն իմիք ծրի. Այս ունին զփառասիրութի, և փափագին առաւել համարեալ լի-

նել

նել քաջք, քանզի վեհանձինք. Առաքեալք փառասիրուն, ոյք ներգործեն 'ի միջի մերում, պատիւ, համբաւ, համարումն, պատուանուանք, աստիճանք, և զանազանութիւնք վերնագոյնութեան են անծանօթք 'ի մէջ նոցա, այնպէս զի հզօր առաձգութիւն մարդկային գործողութեան, պատճառն այնքան առ երևոյթ բարւոյ և այնքան կրական չարի յաշխարհի՝ ոչ ունի զազդեցութիւն ինչ 'ի վր̃ նց̃. Եւ զոր օրինակ այս հանգամանք մնաց բարձի թողլի առնէ զնս̃ առ ապշելի իմն թուլութիւն և պարտասութիւն, ապառնլով կենաց նց̃ 'ի մշտնջենաւոր իմն անգործութեան աշխատանաց, այնպէս ներածէ զնս̃ զմայլել ընդ առաջին առարկայն, զոր երևակայութիւն իւրեանց, կամ յորդորումն այլոց դնեն նց̃ առաջի. և 'ի նմին ժամանակի առնէ զնս̃ տրամադրեալս առ 'ի այլայլել նովին դիւրութբ̃ զորոշմանս իւրեանց. Նոյն անհոգութիւն յամ մարդասիրութեն, որ արարեալ լինի նց̃, և ոչ իսկ մարթ է սպասել զգոյշն յիշատակութի զայնցանէ. Անով բառիւ՝ այս ապերջանիկ մահկանացուք կարեն համեմատիլ տղայոյ, յորս բացումն բանականութեան ոչ է լրացեալ, և կարեն կոչիլ ազգ մի, որ ոչ երբէք հասանէ առ մարդկային էականութի. Ակոստա. Բուֆֆօնէոյ. Պարոն Ուլլիս 'ի վիպասանութեան ճանապարհորդութեն իւրոյ տայ զնմանակ իմն տեղեկութ զպակասութէ նախատեսութեան և անխորհուրդ տրամադրութեն ժողովրդեանն եղելոյ առ խորշին Քուտօնու. Անընդունակութի Ամերիկացւոց է այնպէս յայտնի, մինչ զի սեաւքն բովանդակ տարրեր գաւառացն Ափրիկոյ երևին առաւել ընդունակք բարեգունանալոյ ճանապարհաւ կրթութեան. Աղքաստանան զծանօթութի զանազան մասնաւորութց, զոր Ամերիկացիք ոչ կարեն 'ի միտ առնուլ. Նատուստ յառաջգայ, զի սեաւք թէպէտ և գերիք համարին իբր կարգ մի վերնագոյն էութ. և Ամերիկացիք հայեցեալ լինին արհամարհանօք իբր

զուրկս յընդունակութենէ և 'ի բանաւոր տարորոշութենէ. Աւլոտ. Ոստանօէնաւոնեան Օրէնսդրաց ։

Ընկերու- թեան ձե- ւոյ նոց. Գ․․ Նշմարեալք զաղկացութիւն մարմնոյ Արերկացեալ և նկատեալ զկարողութիւս մտաց նց, ահաւասիկ ընդածեալք 'ի բնական կարգէ հետագօտութեան 'ի նկատել զնն իբր միաւորեալս 'ի միասին յընկերութեան. Մինչև ցայս վայր քննութիւն մեր սահմանաւորեալ եղև առ գործողութիւնս մտաց նկատմամբ նոցին իբր անհատից, այժմ դարձցի առ աստիճան զգայութեանն և գթոյ, զոր ունին նոքա առ տեսակ իւրեանց:

Առաջնոյն ձեռա- բաժին. Ընտանի վիճակն է առաջին և պարզագոյն կերպ մարդկային ընկերակցութեան. Միաւորութիւն սերից 'ի մէջ տարբեր շնչաւորաց է առաւել երկարատև կամ կարճատև բատ չափու դիւրուն կամ դժուարութեան սնուցանելոյ զձագս իւրեանց. 'Ի մէջ այնց ցեղից, ուր հասակ տղայութեան է սուղ, և ուր տղայք ստանան արագ զոյժ և զդիւրաշարժութիւն, ոչ տեսանի կերպաւորեալ երևելի միաւորութիւն. Բնութիւն ուսուցանէ զհոգ սնուցանելոյ զծնունդս մօր միայնում. և գոլով նոյ առանց այլ ինչ օգնութեան հաւասարեալ է գործառնութեանն, Բայց ուր վիճակ տղայութեանն է երկայն և անօգնական, և խնդրի համապատրաստութիւն երկոցունց ծնողաց լծակցեալ 'ի միասին առ 'ի սնուցանել զտկար զաւակ իւրեանց, յայնժամ հաստատի 'ի մէջ նոյ առաւել ներքին լծակցութիւն. և շարունակի մինչև վախճան բնութեան լցցի, և նոր ծնունդն զարգասցի 'ի հասունութեան. Տղայութիւն մարդոյ լինելով առաւել տկար և լի կարեօք քան զայլ զինչ և իցէ շնչաւորի, և կախեալ կալով ընդ երկայնագոյն ժամանակ 'ի յառաջատես հոգոյ ծնողաց իւրոց՝ միաւորութիւն 'ի մէջ առն և կնոջ նմին իբր եղև պատշաճապէս նկատեալ ոչ միայն իբրև սրբ և հաստդիւաւոր, այլև իբր յարակայ դաշնակցութիւն. Ընդհանրական քան վիճակ վաայրանգի և խառնակ

տուր-

տարբերութիւն 'ի մէջ սոցա ոչ գոյ բնաւ ուրեք, բայց եթէ յերեւակայութեան բանաստեղծից. 'Ի ազգայութեն ընկերութեն՝ յորժամ մարդիկ զուրկք յարհեստից եւ 'ի ճարտարութեանց վարեն զկեանս ինչ բազմաչխատ եւ անստոյգ, սնուցանելն զծնունդս իւրեանց պահանջէ զուշադրութիւն եւ զհոգս երկոցունց ծնողաց. եւ եթէ միաւորութիւն նց ոչ էր կերպաւորեալ եւ շարունակեալ այսու դիմամբ, ոչ լինէր նախապաշտեալ զարմ նց. Այն այսուիկ Ամերիկա եւս եւ 'ի մէջ բրտագոյն ցեղիցն թափառականաց? թագաւորէր ընդհանրապէս կանոնաւոր միաւորութիւն 'ի մէջ առն եւ կնոջ. եւ իրաւունք ամուսնութեան էին 'ի նս իմացեալք եւ ծանուցեալք. Յայն կողմանսն, ուր էր կարի նուազ ապրուստն, եւ դժուարութիւն պահելոյ զտունն էր մեծ, մարդն զպիւր առ 'ի ունել զմի միայն կին. 'Ի ջերմագոյն եւ յարգաւանդագոյն գաւառսն դիւրութիւն պաճարելոյ զապրուստ զուգընթաց լինէր ընդ աղաղուն կլիմային 'ի շարժել զբնակիչս յաճեցուցանել զթիւ կանանց. 'Ի գաւառս ինչ ամուսնական միաւորութին տեւէր ընդ բոլոր կեանս. յայլս դիմամարտութիւն Ամերիկացւոց առ զինչ եւ իցէ ազգ կապոյ. բնական թեթեւութի նց եւ ժոկլագարութին խթէր զնս 'ի լուծանել զայն առ ամ թեթեւ պատրուակ. եւ քաջ յաճախակի առանց նշանակելոյ զպատճառ ինչ այնր: Բայց զկարգ եւ նկատէին նոքա զպարտաւորութի այնր դաշին իբր մշտնջենաւոր, կամ ժամանակաւոր, պայման կանանց էր հաւասարապէս ողորմելի եւ ցածուն. Նա խնդիր մի ջերմապէս յուզեալ 'ի փիլիսոփայից, մի թէ մարդն զպայման իւր իցէ բարեգունացուցեալ յառաջադիմութի արհեստիցն եւ քաղաքականացմամբ ընկերութեն. Թէ կանայք իցեն պարտական կատարելուն աղնուական եղանակին մն երջանիկ փոփոխութեն վիճակի իւրեանց, է յոգ մի, որ ոչ ընդունի զերկբայս ինչ. է դրոշմ իմն վայրագի յամ մասին երկրագնտոյս անգոս-

Պայման կանանցն

նելն և ապստամբանելն զկանայս. Մարդն հպարտացեալ վն գերազանցութեն իւրոյ 'ի կարողութեն և 'ի սրտեղութեն, որք են նախապետական նշանք 'ի մէջ վայրենի ազգին, վարի քաջամանօք ընդ կնոջ իբրև ընդ վայրագունի. Ամերիկացիք թերևս վն այնր ցրտութեն և անզգայութեն, զոր նկատեցաք իբր մասնաւորս խառնուածոյ նց, յաւելու զանհոգատարութի և զգժնէութի 'ի վն արհամարհանացն. Այս անմտադրութի նց առ կանայս ելից զարմացման զիմաստնագոյն ճանապարհորդս. Անհնարի Ամերիկացին շահիլ, ոդ կանխաւ նշմարեցաք, խորհրդածեալ իմն ցուցմամբ գործոյ և ըղձի զսիրտ կնոջն, զոր ցանկայ հարսնացուցանել ինքեան. Այն իսկ ամուսնութիւն փոխանակ լինելոյ կապ իմն սիրոյ և առանձին շահու 'ի մէջ հաւասարից՝ եղանի 'ի մէջ նոցա անընական իմն առնչութի ծն ընդ նաժշտի իւրում. Նշմարի մնացի ոմն հեղինակ, որոյ կարծիքն համարեալ է արժանապէս ծանրակշիռ, թէ ուր կանայք գնեալ լինին, պայման նց 'ի մեծագոյն ստրկանի նուաստացեալ է. Եղանին նորա ստացուած և գերիք գնողին. Յորում և իցէ երկրի, ուր այս սովորութի զօրանայ, իրաւացի է այսպիսի իմն պահպանութիւն. 'Ի տեղիս, ուր զտումն արարեալ է զյառաջադիմութի ինչ, կանայք արտաքսեալք յընկերութէ և փակեալք 'ի զատուցեալ օթեվանս՝ կալեալ են ընդ արթուն պահպանութբ ծն իւրծանց. Եւ այլ ազգիս են ներգևեալք մինչև ցցածագոյն պաշտօնս. 'Ի բազում ցեղս Ամերիկոյ դաշնակցութի ամուսնութն է յատկապէս գնումն իմն. Մարդն սակ որկանէ վն կնոջ ընդ ծնողաց իւրոց. Թէպէտ անտեղեակ կիրառութն դրամոյ, կամ այնց տուրևառական դաշնադրութեց, որք ունին զտեղի 'ի մէջ առաւել կիրթ ընկերութեց, սակայն ճանաչէ զհամազօրն տալի վն զինչ և իցէ իրաց, զոր փափագի նա ստանալ. 'Ի տեղիս ինչ

սի-

տիրողն նուիրէ զծառայութիւն իւր ընդ որոշեալ ինչ ժամանակ՝ ծնողաց աղջկանն, որում հետամուտ է. յայլս երթայ յառանձին որս վասն նոցա, կամ օգնէ նոցա 'ի մշակել զանդս իւրեանց և 'ի կազմել զբանուէս իւրեանց. և յայլս մատուցանէ նոցա յընծայ զայն իրս, որք համարեալ են առաւել յարգոյք յաղագս լինելոյ նոցա պիտանի կամ ցանցաղ. 'Ի փոխարէն այսր ընդունի նա զկին իւր. և այսպիսի ինչ պարական յաւելեալ 'ի վերայ ցածուն համարման սերին 'ի մէջ վայրագաց, ածէ զնա հայիլ 'ի կին իւր իբրև յաղախին մի, զոր նա ինքն ստացեալ է, և զոր ունի իրաւունս վարելոյ իբր ողջոյն նուաճեալ ընդ իւրև. 'Ի մէջ համօրէն ազգաց ոչ քաղաքականացելոց ճշմարիտ է, թէ պաշտօնք ընտանի տնտեսութեան, որք անկանին ընականաբար 'ի վերայ կանանց, են այնքան, մինչ զի մեան ենթարկեալք խիստ աշխատանաց. և տանին հետևաբար շատ աւելի քան զբաժին իւրեանց ըզհասարակաց բեռն. Բայց յԱմերիկա պայման նոցա մանաւորաբար է այնպէս վշտալի, և ճնշումն նոցա է այնպէս լրացեալ, մինչ զի եղբ ծառայութեան է կարի քաղցր առ 'ի բացայայտել զապերջանիկ վիճակ նոցա. Կին մի 'ի մէջ մեծագոյն մասին ցեղիցն զօրէն բեռնակիր գրաստու սահմանեալ է առ ամ պաշտօն գործոյ և աշխատութեան. Մինչդեռ արք վատնեն զօրն 'ի դատարկութեան, կամ 'ի զբօսանս ծախեն, կանայք դատապարտեալ են առ հանապազորդ տաժանմունս. Գնին 'ի վերայ նոցա գործք առանց գթութեան. և ծառայունք ընկալեալ լինին առանց հաճութեան և երախտագիտութեան. Զամ առթի զգան կանայք զայս մահացուցիչ վայրագութիւն, նաև 'ի խորշման մերձենալոյ առ տեարս իւրեանց պատկառանօք, և հայելոյ 'ի նոսա իբրև 'ի բարձրագոյն էակս, ոչ եղով նոցա թոյլատուեալ և ոչ իսկ ուտել առաջի նոցա. Են նահանգք ինչ յԱմերիկա, ուր այս ճղմութիւն է այնպէս ցաւագին և

այնպէս կենդանաբար զգացեալ, մինչզի կանայք 'ի մոլեկան իմն վառման մայրենի գորովոյ սպանեալ են զփոքրիկ դստերս իւրեանց առ 'ի ազատել զնս յայն անտանելի գերութենէ, առ որ գիտէին սահմանեալ զնս. Այսպէս թիւրեալ է առաջին սահմանադրութիւն ընկերական կենաց. Այն վիճակ ընտանի միաւորութեան, առ որ բնութիւն ածէ զմարդկային տեսակն առ 'ի քաղցրացուցանել ըզսիրտն ազնուականութեամբ և մարդասիրութեամբ, եղեալ է այնպէս անհաւասար, զի կացուցանէ զանազորոյն իմն զանազանութիւն 'ի մէջ սեռիցն, կերպաւորելով զմի 'ի նոցանէ, ոչ զի լցէ դժնեայ և անզգայ, և ցածուցանելով զմիւսն առ գիտութիւն և առ նուաճութիւն:

Կանայք ոչ են զաւակաբերք յոյժ. Թերևս պարտ է համարել յիմիք մասին առ այս վիճակ ճնշման, զի կանայք բնիկ ազգաց են յոյժ հեռի 'ի լինելոյ զաւակագործ. Օրութիւն բաղկացուն նոցա է իբր շիջեալ 'ի չափազանց աշխատութենէ. և պէտք և տառապանք վայրագ կենաց են այնպէս յոգնաթիւք, զի պարաւանդեն զնոսա առնուլ զայնպէս զգուշութիւն ի խափանելոյ զկարի իմն սրընթաց աճումն ազգատոհմի իւրեանց. 'Ի մէջ թափառական ցեղից կամ 'ի մէջ այնց, որք կախեալ կան նախապետաբար յորսոյ և արելոյ՝ մայրն ոչ կարէ պատրաստել 'ի սնուցանել զերկրորդ որդին, մինչև առաջինն չիցէ ժամանեալ առ այն աստիճան ուժոյ առ 'ի լինել տարագու իմն անկախ 'ի խնամոց նորա. Այսու աղագաւ է ընդհանրական իմն սովորութիւն կանանց Ամերիկոյ դիեցուցանելոյ զծնունդս իւրեանց ընդ զանազան ամս. և քանզի ցանցառակի ամուսնանան կանուխ ժամանակ բնութիւն նց անցեալ է յառաջ քան զկարող լինելն աւարտել զերկար, բայց զկարևոր ընթերակցութիւնն առ երկուս կամ երիս յաջորդական ամս. Ամենք 'ի նուաղ կիրթ ցեղիցն, որոց ճարտարութիւն և զգուշութիւնն ոչ երբեք

այն-

այնքան յառաջ, զի արասցեն զկանոնաւոր իմն համբար վն ապրուստի իւրեանց, սովոր են ոչ բնաւ նաւորիլ սնուցանելով աւելի քան զերկուս որդիս. և 'ի մէջ մարդկան յայսմ վիճակի ոչ գտանին տոհմք այնպէս յոգնաթիւք, որպէս տեսանին յաճախակի 'ի մէջ քաղաքականացեալ ընկերութեանց. Յորժամ ծնանին երկուորեակք, մի 'ի նոցանէ հասարակաբար բարձի թողի եղեալ է. վն զի մայրն ոչ կարէ տանիլ զծանրութիւն սնուցանելոյ զերկոսեան զնոսա :

(29) ‖ Ո՛չ նշմարեցաք, զի վն նորին պատճառի Ամերիկացիք ոչ նկրտին երբեք սնուցանել զերեխայս, որք են տկարք, խեղք, կամ պակասաւորք 'ի կազմուածս իւրեանց. Երկոքեան այս գաղափարք էին այնպէս խորապէս տպաւորեալք 'ի միտս Ամերիկացւոց, մինչզի և փերուվիացիք ժողովուրդ քաղաքականացեալ բազմաւուր խուժադուժ ցեղիցն, զորոց այժմ ստորագրեմ զբարս, տակաւին պահեն զայնս. Նաև հաղորդութիւն նց ընդ Սպանիացւոց ոչ է լեալ բաւական բառնալ զայն 'ի բաց. Յորժամ երկուորեակք ծնանին 'ի միում տան, միշտ նկատեալ է այս իբր դէպ իմն չարագուշակ. և ծնողք դիմեն առ խիստ ներգործութիւն մահացուցման առ 'ի հեռացուցանել զփորձանսն, որք սպառնացեալ են նց. Յորժամ ծնանի տղայ մի տգեղութիւն իմիք, նոքա ոչ կամին աճել զնա 'ի մկրտութիւն, մինչ թէ կարասցեն խորամանկութիւն խուսել յայնմանէ. և դժուարութիւ չարժին 'ի սնուցանել զնա. Ռոբերդսոն՝ Ամերիկականին պատմութեան գիրք չորրորդ :‖

Իբրև մեռանի մայրն 'ի ժամանակին, յորում դիեցուցանէ զորդին, բովանդակ յոյսն նախապահելոյ զնա 'ի կենաց լինի պակասեալ. և է թաղեալ 'ի միասին ընդ նմա 'ի նմին խորխորատի. Այն զի ծնողքն յաճախակի ներքոյ անկեալ են թշուառութեան վն անյառաջատես ստունգանուն իւրեանց, դժուա-

դժուարութիւն պահելոյ զորդիս իւրեանց լինի այնպէս մեծ, մինչզի ոչ է անսովոր ինչ բազընկեցիկ առնելն զնս, կամ եղծանելն. Այլ աՀա՝ որպէս փոքր դժուարութեն նց 'ի Հասուցանել զորդի մի յարբունս 'ի մէջ խստութեանց վայրագ կենաց զոպէ զբարբարոս բնութեն 'ի մէջ Ամերիկացւոց, և Հեղձուցանէ զՀզօր մղմունս Հայրենի գորովոյ:

Հայրական գութն և պարտականութիւն որդւոց.

Այլ թէպէտ և Հարկն ստիպէ զԱմերիկացիս 'ի գնել այսպէս խոյս առ անձուկ տօՀմից, սակայն ոչ պակասին նոքա 'ի գթոյ և 'ի սիրոյ առ զաւակս իւրեանց. Ոչ ան զկարողութի այսր ազդման 'ի տոՀր ուժգնութե իւրում. և ցորչափ ծնունդ նց տակաւին տղայ է և անօգնական, չիք ազգ, որ գերազանցեսցէ զնոքօք 'ի գորովս և 'ի խնամս. Բայց 'ի մէջ բիրտ ազգաց կախումն որդւոց 'ի ծնողաց է առաւել կարճառօտ քան 'ի մէջ քաղաքականացեալ ընկերութեանց. Յորժամ մարդիկ պարտին սնուցանել զն պէսպէս գործոց քաղաքական կենաց նախապատրաստել իմն կրթութ և դաստիարակութի, յորժամ պարտ է ուսուցանել նց զճանաչումն խրթին գիտութեանց ինչ, և զի կարևոր է զն նց ըստացումն որոշ իմն յաջողակութն յառաւել մանուածոյ արՀեստս, յառաջ քան թէ նախապատրաստեալ իցէ մանուկ մի առ 'ի սկսանել զընթացս իւր. մօտագիւտ փոյթք Հօրն ոչ են սաՀմանաւորեալ միայն առ ամս տղայութենն, այլ տարածանին մինչև ցկայունաւորութի այնպիսի որդւոյն յաշխարՀի. Բայց և ոչ աստանօր դադարէ Հոգածութի իւր. տակաւին է կարևոր պաշտպանութի իւր. և իմաստութի և ներՀմտութի նց եղեցին միշտ Հարկաւոր առաջնորդք. Այերպաւորի այսու սարասին սևողական իմն ըծանկցութիւն, 'ի գործ արկանի գորովն Հայրական. որում Համեմատի որդիական անձնածութին ընդ բոլոր ընթացս կենաց. Սակայն 'ի պարզութեն վայրագ վիճակին

գութ

գութ ծնողաց , ուր խանդաղատութիւն ազդման 'ի շնչաւորս դադարէ գրեթէ ողջոյն , իսկոյն իբրև ծնունդք նոցա ժամանեն 'ի չափահասութիւն . փոքր ինչ կրթութիւն պիտի առ 'ի ընդունակ առնել զնա այնմ եղանակի կենաց , առ որ սահմանեալ են նոքա . Ծնողք , ուր եթէ պարտ նոցա լինէր լրացեն , յորժամ առաջնորդեալ են որդւոց իւրեանց ընդ տկար ամին տղայութե , զկնի թողուն զնս ամբողջ ազատութե իւրեանց . Հազիւ երբէք խորհուրդ տան նոցա կամ խրատեն զնս . ոչ սաստեն նոցա երբէք և ոչ պատժեն զնս . այլ բարձի թողի առնեն իբրև բացարձակ տեարս գործոց իւրեանց . 'Ի միում Ամերիկեան հիւղի հայրն՝ մայրն և զաւակք նոցա կեան 'ի միասին իբրև անձինք ժողովեալք 'ի դիպուածոյ առանց ցուցանելոյ զհալ զպարտաւանդութիւն և զպարտս , որք ծնանին փոփոխակի 'ի նմանակ իմն առնչութե . Եւ քանզի սէրն որդւոյ ոչ է զօրացուցեալ 'ի հանապազորդ մտադրութե հօրն , յիշատակութիւն բարերարութեց ընկալելոց 'ի տղայական ամին է կարի անզօր 'ի զարթուցանել զայն . Խնամտեալք զազատութե իւրեանց , և օտարք յամ կապոյ՝ մանկունք Ամերիկեանք սովորին գործել , որպէս եթէ լինէին անկախք . Ծնողք իւրեանց ոչ են մն նոցա առաւել իմն աւելի ակնածութե քան զայլ անձինս . Վարին ընդ նս միշտ այնպիսի քամահանօք . և յաճախակի այնպիսի խստութե և լրբութե . մինչզի լցեալ են սոսկմամբ զնս , որք լեալ են վկայք գնացից նոցա . Այսպէս գաղափարք , որք երևին բնականք մարդոյ 'ի վայրագ վիճակի մն զի ծագին 'ի պարականցից իւրոց և 'ի պայմանէ իւրմէ յայնմ շրջանի զարգացման իւրոյ , ներգործեն 'ի վր երկուց նախապետական վերաբերութեց յընտանեկան կենաց . և առնեն անհաւասար զմիաւորութիւն 'ի մէջ առն և կնոջ . կարծեն զտևողութին , և ջլատեն զոյժ յարակցութե 'ի մէջ ծնողաց և որդւոց :

Պո

Սահմա- նադրու- թիւնք քաղա- քականք. Գ. Յընտանի վիճակէ Ամերիկացւոց բնական է անցումն առ խորհրդածութիւն քաղաքական կառավարութեան և սահմանադրութեանց նոցա. Յայս հետախուզութեան պատկանեցելոյ առ գործողութիւնս մարդկան. յորժամ 'ի միասին միաւորեալ են ընկերութեան, առաջին տարրկայն արժանի քննութեան է նոյն կերպն ապրելոյ. Ըստ չափուն, որով այս այլայլի, օրէնք և քաղաքականութիւնք նոյն լինելոյ են տարբերք. Սահմանադրութիւնք յարմարեալք գաղափարաց և պիտոյից ցեղիցն, որք կեան նախապետարար ձկնորսութեամբ, կամ որսով երէոյ, և որք հազիւ թէ կերպաւորեալ են զծանօթութիւն ինչ յատկութեան, եղիցին յոյժ առաւել պարզ քան զայնս, որք պարտին ունել զանազի, յորժամ երկիրն մշակեալ է կանոնաւոր ճարտարութեամբ, և յորժամ հաստատապէս սահմանեալ է իրաւունք յատկութեան ոչ այնչափ 'ի բերս իւր, որչափ 'ի նմին իսկ գետնի:

Նախա- նոյք · աշխարհէն. Բովանդակ ժողովուրդք Ամերիկոյ, որք անցանեն այժմոյս 'ի հանդէս, պատկանին առ առաջին դասն. Այլ որչափ և կարիցեն ամենեքեան բովանդակիլ 'ի ներքոյ ընդհանրական անուանակոչութեան վայրագաց, զորս զարգացմունքն արարեալ էին յարհեստի նախահօգալոյ անձանց զպարհովլինն և զառատ ապրուստ, էին յոյժ անհաւասարք. Ընդարձակ դաշտավայրսն հարաւային Ամերիկոյ մարդն երևի 'ի միում յառաւել բիրտ վիճակացն, յորս լեալ իցէ երբէք, կամ յորս կարիցէ առ յապայն լինել. Զանազան ցեղք կախին բնաւին 'ի պահպանութեան իւրեանց 'ի բարութեան բնութեան. Ոչ ցուցանեն զփոյթ, ոչ ունին զյառաջատեսութիւն. և հազիւ 'ի կիր արկանեն զճարտարութիւն ինչ վն ապահովացուցանելոյ զայն, որ է կարևոր յապրուստ. Խոփախէրս Գուարինեաց, Կուագուէրոս ցամաք երկրին, Բոսիկուտս, Օտոմոս և այլք զանազան ժողովուրդք փարակուայեայ են բնաւին 'ի խաւարի որոյ և իցէ

սեռի

աւելի մշակութեան․ Ոչ սերմանեն, ոչ տնկեն երբեք․ Նաև մշակուի մանիոքի, յորոյ ալեւրէ առնեն զհաց, և արհեստ իմն կարի կնճռեալ վասն մնայց նց, և կարի աշխատալի մծ հեղգութեն իւրեանց․ Արմատք, զորս երկիրն ինքնին բերէ, պտուղք, հատք և ունդք, զորս ժողովեն յանտառս, 'ի միասին ընդ մողեսաց և այլոց ժժմանց, զորս ջերմութիւն ծնանի 'ի պարարտ իմն դետնի խոնաւացեալ 'ի յաճախ անձրևաց, մատակարարեն նց, որով կերակրիցին ընդ մասն ինչ տարւոյն․ Զայլ ժամանակս կազդուրին որսով ձկանց և թռչի, թէ բնութիւն նպաստաւորեալ իցէ դատարկապորտութե այսպիսի ազգաց․ ուստի առատաձեռնութբ բաշխէ նց զհայթհայթանս դարմանելոյ այսու սպառածէ զկարիս իւրեանց․ Անձամեծ գետք Հարաւային Ամերիկոյ առատացեալ են անսահման պէսպիսութբ փափկագոյն ձկանց․ Լիճք և ճահիճք կերպացեալք 'ի տարեկան ողողմանէ ջուրց՝ լի են ամ տարբեր տեսակօք, որք մնան անդէն փակեալք իբր 'ի բնական իմն պահարանի առ 'ի պէտս բնակչացն․ Կուտակին այնպիսի բազմութբ, մինչզի 'ի տեղիս տեղիս ըմբռնին առանց դոյզն ինչ արհեստագործութեան:

(30) Բազմութի ձկանց 'ի գետս Հիւսիսային Ամերիկոյ է այնպէս տարապայման, մինչզի արժան է տալ զայնմանէ զծանօթութի ինչ մասնաւոր․ 'Ի Մարանեօնի, ասէ հայրն Աքուկնա, ձկունք են այնպէս առատք, զի առանց ինչ արհեստի կարեն ըմբռնիլ ձեռօք․ Յօրինոքոսի պատմէ հայրն Կումիլլա, թէ բաց 'ի յանսահման պէսպիսութե այլոց ձկանց՝ լինին կրիայք այնպէս հրէշական բազմութբ, մինչզի ոչ կարեմ գտանել բառս առ 'ի բացայայտել զայն․ Նոքա, որք ընթեռնուցուն զպատմութի իմ, ամբաստանեսցեն զիս աներկբայ մծ դիւրահաւատութե․ բայց կարեմ հաւաստել, թէ թլբին աշխատութբ, ոչ թլբին սակաւք առ ափունս

նո

նորին գետոյ. Կարէ տանիլ զթլւոյ նց 'ի հիւ-նալի ծախմանէն, որ լինի. որովհետեւ բովանդակ ազգք հուպք 'ի գետն, նաեւ բազումք յայնց, ոյք են տարակայք անտի, երթան անդր խուռն 'ի բուռն յեղանակին. եւ ոչ միայն գտանեն 'ի նմա զապրուստ ցորչափ տեւէ ժամանակն այն, այլ եւ բերեն 'ի տուն զմեծ իմն բազմութիւն կրիայից եւ ձուոց նց. Սելլաս. Օրենօքոյ. Պարոն Քօն-տամինէ հաստատէ զսոյն զայս պատմութիւն:‖

Յայլ տեղիս ազգայինք գտեալ են զեղանակ հա-մակերոյ զջուրն հիւթով տնկոց ինչ. որով ձկունք են այնպէս թմբեալք, մինչզի լողեն յերեսս ջուրց. եւ առեալ լինին ձեռօք :

(31) Սփիքսն ստորագրէ զերկուս յայսց տնկոց՝ զԲուրուափէ եւ զԿուայանա թիմպօ. Գիտելի է, զի թէպէտ եւ ասացեալ տունկք յառաջածեն զայս մահաբեր արդիւնս 'ի վր ձկանց, սակայն այնպէս հեռի են 'ի լինելոյ վնասակար մարդկային տեսա-կի, մինչզի 'ի կիր արկանին 'ի բժշկականութեան օգուտ. Բանքրօֆթ յիշատակէ զմիւս այլ կոչե-ցեալ Նիաբրէկ. որ յամենափոքրիկ քանակութե բաւական է արբեցուցանել զամ ձկունս յերեսէ իմիք տարակացութե, այնպէս զի 'ի սակաւ վայր-կենանս գան 'ի լողել յերեսս ջրոյ զուրկ 'ի շարժ-մանէ, եւ ըմբռնին դիւրաւ. Բնական պատմութիւն Գուայանայ.‖

Այն ցեղք, որք ունին զայնքան սրութի ուշեղութե, զի պահեն զայնս առանց աղի, ցամաքեցուցանե-լով զայնս եւ ծխելով 'ի վր կասկարայից մեղմ հրոյ. Ընդգական սովորութի գետոց 'ի հարա-ւային Ամերիկա ներածէ զյոլովս յազգայնոց ա-պաւինիլ շուրջ յափունս նց, կախեալ կալով զբե-թէ ողջոյն զն ապրուստ իւրեանց յայնմանէ, զոր ջուրք բերեն նց այնչափ ճոխութե. Յայսմ մա-սին երկրագնտոյ ոչ երեւի, թէ որսն լեալ իցէ ա-ռաջին ճարտարուէ մարդկան, կամ առաջին ջանք

գաման

գտման նջ կամ աշխատութեան առ 'ի նախահոգալ անձանց զուտել. Այլն ձկնորսք յառաջ քան զե-նելն որսորդք. և քանզի պարապմունք առաջնոց ոչ պահանջեն զներգործականութիւն և զքանքարս, որք պահանջին յերկրորդսն, ժողովուրդք այս-պիսի վիճակի ցուցանեն ոչ ունել՝ ոչ զնոյն աս-տիճան վառման, և ոչ զնոյն ճարտարմտութիւն մտ նորանոր ձեռնարկութեանց. Փոքրիկ ազգք ընկերա-կոյք Մարանօնեայ և Օրինոքոյի նշմարին յա-ռաջին հայեցման պղերգագոյնք և նուազ իմացողք քան զամ Ամերիկացիս :

Ոչինչ ցեղ բաց յայնց, որք են հուպք մեծա-մեծ գետոց, կարէ կեալ այսու եղանակաւ. Անե-ծագոյն մասն Ամերիկեան ազգաց ցրուելոց ընդ անտառս, յորոց երկիր նջ է ծածկեալ, ոչ պա-ճարեն զապրուստ նովին դիւրաւ. Թէպէտ այս-պիսի անտառք և մասնաւորապէս 'ի հարաւային շարունակին Ամերիկոյ են ամենառատք երէւք, հանդերձ այսու պիտոյն երեւելի թեակոխութիւնք ներգործականութեան և խորամանկութեան առ 'ի հե-տամուտ լինել այնմ. Զարկն զորթոյց զազգայինս առ առաջինն, և ապա ուսոյց նջ զերկրորդն. Աղե-ղան նախապետական զբաղումն նջ. և այս մտ զի յաջողակս գործեր առ կորովի վարժմունս սրտե-ղուն, քաջուն, և աչալրջուն. դառնեալ եղե պաշտօն խնա ոչ նուազ կարեւոր, քանթէ պատուական. Ալրէր ևս արարեալ զխումբս մտ մարդկան, որք սնեալք էին 'ի նմա յառաջին ամաց հետէ. Համարձակ և ընդունակ որսորդ մի հաւասարի 'ի համբաւն ընդ տուել նշանաւոր պատերազմականի, և ազգակա-նութիւն ընդ նմա յաճախագոյնս որոնեալ է նա-խադասութիւն այլոց. Այնք զիտք, զորս ճարտար-մտութիւն մարդոյ այլուր հնարեալ էր առ 'ի թա-կարթել, կա՛մ սպանանել զվայրի նշանաւորն գժուա-րաւ էին անծանօթք Ամերիկացւոց. Մինչ ընկըղ-մեալ են նոքա յայնմ ոլորելի կլթութեն, 'ի բաց Աղուէլ.

վտա-

վտարեն յանձանց զբնական անհոգութի իւրեանց , զարթնուն կարողութիւք թաքուցեալք և կորովութի մտաց նոցա . և նոքա եղանին զբաղեալք , յարատևօղք և անխոնջք . Օգնութիւն նց 'ի խնդրել զորս զարթուցանէ զյաջողակութի նց 'ի սպանանել զայն . Տրամաբանութի և զգայութիւք նց գոլով յարակայ ուղղեալք առ այս միակ նպատակ , առաջինն պարզէ զայնպիսի իմն արգաւանդութիւն գիտի , և երկրորդքն ստանան զաստիճան իմն սրութեն այնպէս մեծ . մինչ զի երևի անհաւատալի իմն . Գիտեն տարորոշել զհետս իրիք գազանի , որ կարէ վրիպել յաչաց այլոց . և երթան զկնի հաւատեաւ ընդ առաւել թանձրախիտ անտառս . Յորժամ մաքառին յայտնապէս ընդ չնչաւորաց , նետք նոցա հազիւ երբէք շեղին 'ի դիտմանէ . և յորժամ հնարին պատրել զնս արհեստիւ , զրեթէ անկարելի է ապրել 'ի ձեռանց նց . 'Ի զանազան ցեղս ոչ էր թոյլ տուեալ երիտասարդաց առնուլ կին , մինչև ոչ էին տուեալ զփորձս ընդունակութե իւրեանց յորսն , որ յայտ առնէր զնս անտարակոյս ընդունակս դարմանելոյ զպէտս գերդաստանի միոյ . Խելք նոցա միշտ ձգտեալ յանօրէլ . և նրբացեալ 'ի հարկաւորութէ և 'ի նախանձաւորութէ յառաջեկած զբաղում գիտս , որք դիւրացուցանեն մեծապէս զյաջողութիւն յորս . Առաւել եղականն 'ի սոցանէ է գիտն որոշեալ թունոյ իինչ , յորում թաթաւեն զնետս իւրեանց . Փոքրագոյն վէրքն արարեալ 'ի թունաւոր հարուածոցս յայսցանէ է մահացու . Եթէ դիպուածով կռուին միայն 'ի մորթն , արիւնն թանձրանայ և մահանի անընդմիջաբար . և առաւել հզօր չնչաւորն անկանի յերկիր զուրկ 'ի շարժմանէ . և թոյնն թէպէտ և իցէ բուռն և նուրբ՝ ոչ անցանէ 'ի միս կենդանւոյն , զոր սպանանէ . որ և կարէ ուտիլ առ ապահովութե , և պահէ զհամ իւր և զբնական որակութի իւր . Ամենայն ազգք առ Ամերակ-

կնճնեաւ և առ Օրինոքոսի ճանաչէին զայս բազդրութի. յորում առաջին մնացօղն է Հիւթ արմատոյն Բոռոբոլէոյ, որ է տեսակ ինչ սպիտակի. Յայլ մասունս Ամերիկոյ 'ի կիր արկանեն ըզՀիւթ Մանքէնիլլեայ վն նորին վախճանի. և այս ես գործէ զգործ ոչ նուազ մնհարեր. Առ ժողովրդեան միում, որ ունի զայսպիսի գաղտնիս, աղեղն է առաւել եղծիչ քան զհրացանն. և 'ի յաջողակ ձեռս իւր առնէ զմեծ կոտորած Թռչնոց և գազանաց յանտառսն Ամերիկոյ ։

Բայց կեանքն որսորդի ընծայէ զմարդն աստիճան առ աստիճան առ լաւագոյն վիճակ ինչ. Որսորդութեն նաև յորժամ առատ է որսն, և յաջողակութի որսորդին առաւել ներհուն եղելոյ ոչ կարէ մատակարարել, բայց եթէ զանստոյգ ինչ ապրուստ. որ յեղանակս ինչ մնայ բնաւին խափանեալ. Եթէ վայրագն վտահանայ միայն յաղեղն իւր առ 'ի ապրիլ, ինքն և գերդաստան իւր բազում անգամ եղիցին վերածեալք առ վերջին լկանս ։ Երէրո- գործո- ընկալք .

(32) Ան նշանաւոր օրինակք Թշուառութեց, զոր կրեն վայրենի ազգք վն սովու. Ալվարոս Նուկնեց Քապէքա Տէվաքա մի 'ի քաջագոյն բաղդորդաց Սպանիացւոց նստաւ գրեթէ զամն ինն 'ի մէջ վայրագաց Ֆլօրիտայի. Սոքա ոչ ճանաչէին զտեսակ ինչ երկրագործութեան. Ապրուստ նց է ողորմելի և անստոյգ. Կեան ասէ նախապետաբար արմատովք զանազան տնկոց. զորս պաճարեն մեծաւ դժուարութե աստանդելով տեղւոջէ 'ի տեղի առ 'ի որոնել զայնս. Սպանանեն երբեմն զէրէս. ըմբռնեն երբեմն երբեմն զձուկն. բայց այնպէս փոքր քանակութ, զի քաղց նց գոլով չափազանց ստիպէ զնս ուտել զորտունս, զձուս մրջմանց, զորդունս զմողէսս, զօձս, զտեսակ ինչ խողոն հողոյ. և հաւատամ, զի եթէ յայսմ երկրի լինէին քարինք, կլանէին զայնս. Պահեն զփուշս ձկանց և

տողնոց, զորս վերածեն 'ի փոշի և ուտեն. Ոչ միայն յեղանակ, յորում ոչ նեղին այնքան վս սովու է այն, յորժամ պտուղ ինչ որիշ, զոր նաքա կոչեն Թունաս, հասուն է. և երբեմն ստիպեալ են տարագնաց լինել 'ի տեղւոջէ բնակութ իւրեանց առ 'ի գտանել զայն. 'Նորֆրանձիա. և այլում իմիք տեղւոջ նշմարէ նա ինքն, թէ քաջ առէպ հարկեալ են անցուցանել զերկուս կամ զերիս աւուրս առանց կերակրոյ:||

Չիք գաւառ 'ի վն երկրի, որ տայցէ իւրովի մարդոյ զայն, զոր խնդրեն պիտոյք իւր. Յառաւել բարեխառն կլիմայս և յառաւել բերրի հողս պիտոյ է նմա 'ի կիր առնուլ զճարտարութի և զնախատեսութի իւր կերպիւ իմիք առ 'ի ապահովացուցանել զկանոնաւոր իմն հաւաքումն պարենի. Փորձն, զոր արարեալ են զայնմանէ ազգք վայրագք, յաղթեաց բնական խորշման նց առ աշխատանս. և ստիպեաց զնոսա դիմել առ հողագործութի իբրև առ նպաստ օրսորդութե. 'Ի մանաւոր կայաւորութիս ինչ ոմանք փոքրիկ ցեղք կարեն ապրիլ ձկնորսութի անկախ յինչ և իցէ բերոյ երկրի բուսուցելոյ զօրութբ ճարտարութե. Բայց ընդ բոլոր Ամերիկա հաղիւ պատահի ազգ օրսորդաց, որ ոչ 'ի գործ ածցէ զտեսակ ինչ հողագործութեան:

Պէտք պատուոյ մշակութե նց.

Բայց հողագործութի նց ոչ է տարածեալ և ոչ աշխատալի. Այն զի եթէ և ձուկն են նախկին կերակուր նց, բովանդակ գիտմունք իւրեանց 'ի մշակելն դիմեն առ 'ի զգուշանալ վասն պատահական իմն պակասութե այսց երկուց գլխոց. 'Ի հարաւային շարունակին Ամերիկոյ ազգայինք ամփոփէին զճարտարութի իւրեանց 'ի գործածել զբոյս ինչ, որք 'ի պարարտ իմիք գետնի և 'ի ջերմ ինչ կլիմայի դիւրաւ գային 'ի հասունութի. Առաջինն 'ի սոցանէ է մայիծէ՝ բազմօք քաջ ծանուցեալ յԵւրոպիա ընդ անուամբ ցորենոյ կամ կորեկի տաճկաս-

կաստանի կամ Հնդկաստանի. որ է անսահմանաբար պտղաբեր, դիւրամշակ, ախորժ ի ճաշակելեաց, և որ տայ զուժեղ և զգոյացական սնունդ. Երկրորդն է մանիոք. որ աճէ 'ի մեծութիւն լայն թփոյ միոյ, կամ փոքրիկ ծառոյ. և բերէ արմատս նմանս ըստ իմիք մասին գազարի. Յետ մտադիւր մզեալ լինելոյ հիւթոյն՝ արմատքս այսոքիկ քերին 'ի փոշի. և ապա կազմի նորը ինչ նկանակ կոչեցեալ քասսատա՝ հաց. որ թէպէտ և անհամ քմաց, ոչ լինի խոտելի կերակուր. Այն զի հիւթ մանիոքին ըստ ինքեան է սարսափելի իմն թոյն, ոմանք 'ի վիպասանից հաւաստեալ են զուշիմութիւն Ամերիկացւոց 'ի գործածանելն զվնասակար տունկն յառողջարար իմն տարազ. Այլ պարտ էաք նկատել զայն մանաւանդ իբր մի 'ի յուսահատեալ հայթհայթանաց առ 'ի դարմանել զկեանս, առ որս հարկն վերածէ զվայրենի ազգսն. և թերևս մարդիկ շարժեալ եղեն 'ի կիր առնուլ զայն յայնպիսի իմն յառաջաձգութէ, որ բառնայ 'ի նշմարմանէ զնմ հրէշ, Այլ իմն տեսակ մանիոքի է բնաւին զուրկ 'ի թունաւոր որակութէ. և կարէ ուտիլ առանց այլ ինչ նախապատրաստութե, բայց եթէ խորովել զայս 'ի մէջ ջերմ մոխրոց. Այս եղև հաւաստելաբար առաջինն, զոր Ամերիկացիք 'ի կիր առնոյին իբր կերակուր. և հարկն սակաւ առ սակաւ ուսուցանելով նց զարհեստն զատուցանելոյ զվնասակար հիւթ իւր 'ի միւս տեսակէն, տեսակն, զի այս էր առաւել բեղմնաւոր, և առաւել ևս սնուցիչ յերկուց տնկոց անտի:

(33) Պարոն Ֆիլմին տուեալ է զննամուտ իմն ստորագրութի երկուց տեսակաց մանիոքի հանդերձ ծանօթութբ իմն մշակութե իւրոյ. առ որ ինքն յաւելեալ է զփորձս ինչ առ 'ի ճանաչել զթունաւոր որակութիս հիւթոյն մզեցելոյ յայնմ տեսակէ, զոր նա կոչէ խածանօղ քասսավօս, Այս 'ի մէջ Սպանիացւոց ծանուցեալ է անուամբ Յու-

քա պլտաւ . Սորոտգրութիւն Սուրինա : Է

Երրորդ տեսակն է փլանթային, որ թէպէտ և ամբարձեալ լինի 'ի մեծութիւն ծառոյ միոյ, աճէ այնպէս արագ, զի նուազ քան զտարի մի վճարէ ըզճարտարութիւն հողագործին պտղով խուռն. Յորժամ խորովեալ է այն, ծառայէ փոխանակ հացի. միանգամայն է և համեղ և գոյացական :

(34) Փլանթային գտանի յԱսիա, և յԱփրիկէ, որպէս յԱմերիկա. Օվիետոս պնդէ, թէ ոչ է տունկ ինչ այգեստանին նորոյ աշխարհի, այլ թէ մուծեալ եղև 'ի Սպանիոլա կղզին յամին 1516. 'ի Հօրս Թոմասեան Պէրլանկացւոյ. և թէ նա փոխադրեաց զայն 'ի կղզեացն Քանարիոյ, ուր սկըզբնական բարունակք տարեալ էին յարևելեան Հնդկաց. Բայց կարծիքն Ակոսթայի և այլոց բնագէտից, որք համարին զայն ընդ Ամերիկեան տնկոց, երևի լաւագոյն հիմնեալ. Այս մշակեալ էր 'ի վայրենի ցեղիցն յԱմերիկա, որք սակաւ հաղորդակցութիւն ունէին ընդ Սպանիացւոց, և որք էին զուրկք յայնմ ճարտարմտութենէ, որ հանդերձ զմարդիկ առնուլ զայն, որ է պիտանի յօտար ազգաց. Ճանապարհորդութիւն Կամպելլոյ և Մափէրս :

Չորրորդն է փօթաթօէ, որոյ այնպէս քաջ ճանաչի մշակութիւն և օրակութիւն, մինչզի ոչ պիտո ստորագրութիւն. Հինգերորդն է փիմէնթօն' ծառ փոքրիկ, որ առնէ զհզօր ինչ համեմ և խունկ. Ամերիկացիք, որք զորէն այլոց բնակչաց ջերմ նահանգաց հեշտանան յայնմ, որ է բարկ և կծուահամ, գտին զայսպիսի իմն համեմ կարևոր առ կեանս, և խառնեն զայն առատութեամբ ընդ ամ ցեղի կերակրոյ, զոր առնուն. Այսոքիկ էին պէսպէս բոյսք, որք կերպաւորէին զնախապետական տարիկս մշակութեան 'ի մէջ ժողովրդոց որսորդաց 'ի շարունակին Ամերիկոյ. և չափաւոր իմն վարժմամբ գործունէից և նախատես ճարտարմտութեան կարէին

տալ

տալ զլինելն նպաստ պիտոյից յոգնաթիւ ժողովրդեան իւրք. Բայց մարդիկ սովորեալք աշխատ և թափառական կենաց իբր որսորդս, են անընդունակք տալոյ զանձինս կանոնաւորաբար յաշխատանս. և հային 'ի հողագործութիւն իբր յերկրորդական և 'ի վայրագոյն պարապումն. Աստուստ է, զի դարմանք կարևորք առ ապրուստ և յառաջ եկեալք 'ի մշակութէ էին այնպէս սահմանաւորք և նուազք 'ի մէջ Ամերիկացւոց, մինչզի առ դուզնաքեայ ինչ պատահական պակասութեան բարեյաջողուն որսոյ տեսանէին երբեմն վերածեալք յառաւել մահաբեր աղէտս. 'Ի կղզեան եղանակն ապրելոյ էր ամենևին տարբեր, Ոչ էին ծանուցեալ անդէն մեծամեծ շնչաւորքն, որք լի էին 'ի ցամաքին. Կային 'ի նա միայն չորք տեսակ չորքոտանեաց՝ բայց 'ի տեսակէ միջէ փոքրիկ և համր շան. և մեծագոյնն 'ի նոցանէ ոչ զանցանէր ըզփայեն կերպաւ. Երթալն 'ի խնդիր այնպիսի մանր որսոյ ոչ խնդրէր ոչ զճիգն ներգործականութեան և ոչ զքաջասրտութիւն. 'Ի մէջ կղզեաց նախապետական պարապումն որսորդի միոյ էր սպանանելն զթռչունս, որք 'ի ցամաքին համարեալ են անարգ զբաղումն, և թողեալ էին առ 'ի զբօսանս մանկանց. Այս ցանցառութիւն շնչաւորաց և մասնաւոր կայաւորութիւն, յորում էին կղզականք, պարաւանդէին զնոսա նախապետաբար կախեալ կալ 'ի ձկանց առ 'ի ունել ինչ, որով սնանիցին. և պաճարեալ էին այնք 'ի գետոց իւրեանց և 'ի ծովէ, որ պատէ զնոսա. 'Ի մասնաւոր յեղանակս ինչ կրիայն, խաչափառք և այլ կայտառք փեծեկաւորք առատ էին այնպիսի քանակութ՟, զի կարէին նոքա ապրիլ այնու դիւրութ՟, ընդ որ հաճեալ է անհոգութ՟ նց՟. Այլ ժամանակս կերակրէին մողեսիւք և պէսպէս զեռնովք, եւ և զազրատեսլեամբք. Ննակիչք կղզեաց յաւելոյին 'ի վր՟ ձկնորսութեան զատոյծան ինչ հողագործութ՟. Մնա-

ծէն, մանիոքն, և այլ տունկք մշակեալ լինէին անդէն նովին եղանակաւ, որով 'ի շուրունակին :

(35) Նշանակելի իմն է, զի Աքոսթա մի յառաւել կատարեալ և 'ի լաւագոյն տեղեկացեալ պատմագրաց վերահասութեամբ արևմտեան Հնդկաց ստորասէ, թէ մաիծն՝ թէպէտ և մշակեալ 'ի շուրունակին՝ ոչ էր ծանուցեալ 'ի կղզիսն. որոց բնակիչք ոչ ունէին, բայց եթէ զՀացն քասաւա. Աքոստա. Բնախօս. Բայց հայրն Մարտիրոս յառաջին դպրութեան առաջնոյ Տէքային իւրոյ, որ գրեալ եղև յամին 1493, 'ի դարձին Քոլոմպոսի յառաջին ճանապարհորդութենէ իւրմէ յիշատակէ բացայայտակի զմաիծ իբր զտունկ ինչ, զոր մշակէին կղզականքն. և յորմէ գործէին զհաց. Նմանապէս Կոմարա հաստատէ, թէ էին տեղեկացեալք մշակութեան մաիծի. Ընդհան. պատմ. Ովիէտոս ստորագրէ զմաիծ առանց ասելոյ, թէ իցէ բոյս ինչ ոչ բնական Սպանիոլայի : ||

Սակայն բովանդակ պտուղք ճարտարութեան նոցա միաւորեալք ընդ այնմ, զոր գետինն և կլիմայն բերէին ինքնին, էին խուն ինչ պատսպարութի. Թէպէտ և Ամերիկացիք էին յոյժ ճիշդք 'ի կերակուրս, բազում աշխատութիւն պիտոյ էր նոցա 'ի հաւաքել տոքան բաւական էր վն ծախման իւրեանց. Եթէ սակաւ Սպանիացիք գային հարգունանել յիմիք նաւհանգի, այս փոքրիկ յաւելուած վերաթերեալ բերանոց դատարկացուցանէր վաղվաղակի զտառապեալ համբարանոցս նոցա. և բերէր զսով:

*Նշխա պատճառք անշխատութենոյ.*

Երկու պարագայք հասարակք համօրէն վայրագ ազգացն Ամերիկոյ զուգընթանային ը այնց, զորս կանխաւ յիշատակեցաք, ոչ միայն 'ի փոխարէնել զհողագործութիւն նոցա անկատար, այլև 'ի պարագրել զկարողութիւն նոցա յամ գործողութիւնս. Ոչ ունէին զընտանի կենդանիս և ոչ ճանաչէին զպէտս հրահալելեաց :

Յայլ մասունս երկրագնտոյս մարդն 'ի վայրենա-

գոյն

գոյն վիճակի եւ երեւի տէր արարածոց. ՚վն զի տայ Պօռ- օրէնս պէսպէս ջոկից կենդանեաց, զորս նա ըն- տանեցուցանէ, եւ վերածէ 'ի հպատակութի. Ակեւ. Ընչա- թացին երթայ զենի աւարի իւրոյ 'ի վե ձիոյ, զոր բոյդ ըն- նա սնուցեալ է, կամ սպասէ զյոգնամթին երամակս փղնեւյն նի, որք տան նմա զկերակուր եւ զհանդերձ. Արա- բացին արարեալ է զուղտն զխլրմանաց, եւ 'ի պէտս իւր առնու զյարակայ կորովութի նր. Լափ- փոն յաջողակացուցեալ է զռանձիֆերն իւր, ո՞ր զի հնազանդեսցի կամաց իւրոց. եւ ժողովուրդք Քամչհաթքայ կրթեալ են զշունս իւրեանց վե աշխատանաց. Այս հրամանատարութի 'ի վե վայ- րագոյն սանձուածոց է մի յառաւել աղնուական արտօնութեց մարդոյն. եւ թուելի է 'ի մէջ մեծա- գոյն նշանաց գիտութեն եւ կարողութեն իւրոյ. Ա- ռանց սորա տէրութի իւր է անկատար. է միապետ մի, որ ոչ ունի զատրուկս. տէր մի, որ ոչ ու- նի զծառայս. եւ պարտի կատարել զամ գործո- ղութի իւր զօրութ բազկի իւրոյ. Այսպիսի պայ- մանի երեւէին բովանդակ անկիրթ ցեղքն Ամերի- կոյ. Բնականութի նց այնպէս սակաւ բացեալ էր, եւ միաւորութի նց այնպէս անհեթեթ, զի երեւէին ոչ ծանուցեալ զվերնագունութի բնութ իւրեանց, հանդուրժելով պահել չորքոտանեաց զազատութին, եւ ոչ 'ի գործ ածելով 'ի վե երկք տեսակի նոցա զիշխանութի իւրեանց. Բազումք 'ի չորքոտանեաց՝ զճշմարիտն ասելով, որք ընտելացուցեալ են 'ի մերում ցամաքի, ոչ գոն 'ի Նորումն. Բայց նոքա, որք են մասնաւորք, ոչ գտանին՝ ոչ այնպէս ա- մեհիք, եւ ոչ այնպէս աւարկուք, որ զի մնասցեն զերծք 'ի ծառայութե. Տեսանին չորքոտանիք ինչ նոյնատեսակք յերկաքանչիւր շարունակին. բայց ռանձիֆերն, որ նուաճեալ է եւ ենթադրեալ լծոյ 'ի միում կիսագնտի, համարի իբր վայրենի 'ի միւսումն: Պիսօնն Ամերիկոյ է յայտնապէս նոյնա- տեսակ ընդ եզջերուաց անասնոց այլոյ կիսագնտոյ.

Այս եւս 'ի մէջ առաւել անկիրթ ազգաց մերոյս շարունակի ընտանեցուցեալ է. և մարդն 'ի հետեւութեան տրութեան իւրոյ 'ի վերայ նորա՝ կարող է կատարել զառաւել աշխատալի գործս մեծագոյն դիւրութբ. և մեծապէս աճեցուցեալ է զհայթհայթանս ապրելոյ. Բնակիչք բազմաց կողմանց 'ի նոր աշխարհին, ուր պիսօնն բազում է, կարէին հանել անտի զնոյն շահս. Ո՛չ է այնպէս անսաստ բնութբ, զի ոչ կարասցէ վերածիլ 'ի ծառայել մարդոյ, որպ անասունն մեր. Բայց վայրագն որ շարունակէ յայնմ տխմար վիճակի, յորում գտեալ եղեն Ամերիկացիք, թշնամի է այլոց ընչաւորաց և ոչ բա՛ վերնագոյն նց. Զրուէ զնս և եղծանէ և ոչ գիտէ, թէ զիարդ բազմացուսցէ զնս, կմ հօվեսցէ զնս. Այս է թերևս առաւելնշանաւոր զանազանութի 'ի մէջ բնակչացն հին և նոր աշխարհին. և է վսեմական իմն ցոյց գերակայութն մարդոց քաղաքականացելոց 'ի վր նց, որք դեռ ևս են անկիրթք. Առաւել գովելի գործողութք մարդոյ յեղափոխելն կամ 'ի բարեգունացուցանելն զկերպարանս բնութեան, որպէս և զիւր առաւել նշանաւոր ջանս 'ի մշակել զերկիր՝ վճարեալ են միջնորդութբ օգնականութն, զոր ընդունի 'ի կենդանեաց, զորս ընտանեցուցեալ է, և զորս պարապեցուցանէ յաշխատանս. Օգնութբ կարողութն նց նուաճէ զյամառ գետինն. և փոխարկէ զանապատն կամ զծովեզերեայս 'ի պտղաբեր դաշտս. Բայց մարդն 'ի քաղաքականացեալ վիճակի իւրում այնպէս սովոր է առ ծառայութի ընտանի շնչաւորաց, մինչ զի հազիւ երբէք լինի նմա զմտաւ ածել զմեծ բարերարութիւն, զորս ընդունի 'ի նոցանէ. Եթէ մարդն նաև 'ի մեծագոյն զամն իւրում մնայր զուրկ 'ի պիտանի սպասաւորուէ նց, հրամանատարութի իւր 'ի վր բնութն պարտ էր տարապու իմն դադարել. և նա ինքն մնայր տկար կենդանի մի անստոյգ զեղանակէ կելոյ իւրոյ, և

ան-

անընդունակ ձեռնարկելոյ ինքնին յայն գործ, առ
որ ընթերակայութի՛ նց ընդունակացուցանէ զնա
առ 'ի կատարել այնքան դիւրութբ:

Այն ևս է յօգուտ իմն խնդրելի, մինչ տրուի Պաշտա–
մարդոյ 'ի վե՛ր շնչաւորաց, կամ պիտառութին ստա– տոլէ
ցեալ 'ի նմանէ հրահալելեաց առաւել հանգանա– պիտութեան
կեալ իցէ 'ի մեծացուցանել զկարողութի իւր. Ոչ հրահա– Հրահա–
լենի գիտացեալ թըւականն այսր ծանրակշիռ գիւ– լելեաց.
տոյ. և 'ի մերում կիսագնտի բազմօք հեռի է այն
'ի մէնջ. Գիտեմք միայն յաւանդութէ և յուրոնա–
կան գործեաց ինչ նախնեաց մերոց գտելոց 'ի փո–
րելն զերկիր, թէ ազգ մարդկան ոչ էր սկզբնա–
բար տեղեակ պիտանութն հրահալելեաց. և թէ՝
հնարէր լցուցանել զպակասութի նց, 'ի գործ ա–
ռնելով զգայլախազս, զխեցիս, զոսկերս և զայլ
կարծր գոյացութիւնս առ նոյն վախճանս, առ որս
ծառայեն հրահալելիք 'ի մէջ կիրթ ազգաց. Նոյնն
է այն, որ տայ զկրումն կերպաւորութե ոմանց հրա–
հալելեաց. Ոսկին՝ արծաթն, պղինձն գտանին 'ի
կատարեալ վիճակի խուրեանց 'ի ծերպս ժայռից,
'ի կողս լերանց և 'ի յատակս գետոց. Այսքիկ
եղեն հետևաբար առաջին ծանուցեալ մետաղք, և
առաջինք առ 'ի դնել 'ի գործ. Բայց երկաթն՝
առաւել պիտանին քան զայլս ամ, և որում մարդն
է առաւել պարտական, ոչ գտանի երբէք 'ի կատա–
րեալ կերպի իւրում. Այն զի է խոշոր և կոշտ՝
պիտոյ է նմա զգալ երկիցս անգամ զզօրութիւն
հրոյ, և անցանել ը՛ երկուս գերաշխատալի փորձս
յառաջ քան զլինելն յարմար 'ի գործ. Մարդն
տեղեկացեալ էր զայլոց հրահալելեաց՝ ևս և յա–
ռաջ քան զստանալն զարհեստ գործելոյ զերկաթ,
և քան զհասանելն առ սրութի կատարելագործե–
լոյ զգիտ ինչ, որում պարտական է վասն գոր–
ծեաց, որովք նուաճէ զերկիր, և հրամայէ ամ
բնակչաց իւրոց. Բայց յայսմ, ոչ և յայլ բա–
զում իրս Ամերիկացիք էին նշանաւորաբար վայ–

րա–

թագուէնք. Բոլորանդակ վայրագ ցեղք սփռեալք 'ի վՐ շարունակին և ԶԵ կղզեաց, ոչ ճանաչէին բնագնտարս, զորս գետինն գոյացուցանէ մեծ առատութեամբ, 'ի բաց առեալ յայնմանէ զփոքրիկ ինչ քանակութիւն ոսկւոյ, զորս հաւաքէին 'ի հեղեղացն, որք իջանէին 'ի լերանց իւրեանց, և զորս նոքա գործէին իբր վՐ զարդու. Պիտոյք նց առ 'ի լնուլ զայս պակասուն էին առուլք և անյարմարք. Նոյս պարզ գործողութիւն լինէր վասն նց անբաւգժուարութեան և աշխատութեան. Հատանելն զծառ մի ոչ այլ գործեաւք, բայց եթէ տապարաւ քարի խնդրեր զաշխատութի միոյ ամսոյ. Ուռխէին զամս 'ի ձևացուցանելն զքանոէ մի, կամ 'ի փորելն զայն. և բազում անգամ սկսանէր այս փտիլ յառաջ քան թէ կարող լինէին աւարտել զայն. Գործողութիք նց 'ի հողագործութեան հաւասարապէս էին դանդաղք և պակասաւորք. 'Ի միում գաւառի ծածկեցելոյ անտառօք լցեալք կարծրագոյն փայտիւք մաքրութի փոքրիկ անդոյ միոյ սահմանեցելոյ առ մշակութի խնդրեր զմիաւորեալ ջանս ցեղի միոյ. և էր գործ մի բազմաժամանակեայ՝ վճարեալ մեծաւ տաղնապաւ սրտի. Այսպէս պատաղէին մարդիկ. և անհոգութիւն նց շատանայր աշխատելով յոյժ անկատար իմն եղանակաւ. Հողագործութիւն թողեալ լինէր կանանց, որք յետ բրելոյ կամ փորելոյ զանդն փայտեայ բահիւք և ցցովք կարծրացուցելովք առ հրով սերմանէին զայն և տնկէին. թէպէտ զընձիւղին և զաճելն պարտ էին մանաւանդ բարութեան հողոյն քան անկիրթ ճարտարութե իւրեանց :

Հողագործութին՝ ես և յորժամ ոյժ մարդոյ նպաստաւորեալ է յուժոյ կենդանեաց, զորս արկեալ է ընդ լծով, և յորժամ կարողութի իւր աճեցեալ է 'ի կիրառութեան պէսպէս գործեաց, զորս գիւտ հրահանգելեաց նախահօգացեալ է, այսու ամիճ է գործ ինչ մեծաշխատ, և պիտի ես քիրտն ե-

րե-

բեաց իւրոց առ 'ի առնել արգաւանդ զերկիրն . Ապա ոչ են զարմանք, թէ ժողովուրդք զուրկք յայսց երկուց նպաստից արարեալ իցեն զայնպիսի փոքր յառաջադիմութիւն յերկրագործութեան . և թէ պարտիցին նկատել իբր պարտականք վն ապրուստի իւրեանց՝ ձկնորսութեան և որսորդութեան մանաւանդ, քան պտղոց աշխատութեան իւրեանց ։

[Սահմանադրութիւնք քաղաքականք յատուկ. Ենթաւոր յայսմ վիճակի։ Բաժանեալք 'ի փոքրիկ հասարակութիւնս.]

Այսմ զանազանութեան նշանակի կելոյ 'ի մէջ բիրտ ցեղից Ամերիկացւոց կարէ յառաջ ածել կերպն, կամ հոգին քաղաքական սահմանադրութեանց նոցա, և հետազօտել ծագումն պէսպէս պարագայից զանազանութեանց 'ի մէջ նց և 'ի մէջ առաւել քաղաքականացեալ ազգաց ։

Էին Ամերիկացիք բաժանեալք 'ի փոքրիկ անկախ հասարակութիւնս . Յորժամ որսն է նախապետական աղբիւր սննդեան, խնդրի ընդարձակ իմն տարածութիւն երկրատանի առ 'ի սնուցանել զմեծ իմն թիւ ազգի . Ըստ չափուն, որով մարդիկ բազմանան, կամ միաւորին վայրենի շնչաւորք, զորս երթան նոքա որսալ, նուազին, կամ փախչին 'ի բաց յանդաստանէ թշնամեաց իւրեանց . Աճումն իւիք ընկերութեան 'ի նմանակ վիճակի ամփոփեալ է բնութեամբ իւրով . և անդամք իւր պարտին կամ ցրուիլ իբր զեղչաւորսն, զորս հալածեն նոքա, կամ տալ զանձինս յայլ իմն ոճ պաշարելոյ զապրուստ լաւագոյն քան զորսորդութիւն . Գազանք յափշտակիչք են բնութեամբ իւրեանց միայնաւորք և անընկերականք . ոչ ելանեն 'ի դուրս յորս խմբովին, այլ դադարին 'ի թաքստարանսն անտառաց, ուր անվրդով կարեն շրջիլ և աղարտել . Ազգ մի որսորդաց նմանի նց ըստ պարապմանն և ըստ յօժարութեան . Նոքա ոչ կարեն կերպաւորիլ 'ի բազմութիւն հասարակութիւնս . քանզի անկարելի լինէր գտանելն զկերակուր . և պարտ էին, եւս վանել առ որիշ իմն բացակայութեան զնմ նախանձաւոր, որ կարէր յափշտակել զորսն, զոր նկա-

տեն

ռեն իւր խրնանց սեպհական. Այնպիսի էր վիճակն բոլոր Ամերիկեան ցեղիցն. Յիւրաքանչիւրումն գտանիւր փոքրիկ թիւ, թէպէտ և սփռեալ էին 'ի վր ընդարձակ գաւառայն. կային բազմօք տարակացք 'ի միմեանց. և դիմագրաւք 'ի մշտնջենաւոր թշնամութն և նախանձաւորութն. Յամերիկա բառս ազգ՝ ոչ 'ի մէջ բերէ զնոյն նշանակեալն, որպ յայլ մասունս երկրագնտոյ. և յառակացեալ փոքրիկ ընկերութեանց, որք թերևս ոչ են աւելի քան զերկու կամ զերեք հարիւր անձինս. բայց տեղակալեն զգաւառս առաւել տարածեալս քան զթագաւորութիս ինչ Եւրոպիոյ. Երկիրն Կոլոմբիա բաժանեալ 'ի մէջ մեծ բազմութն ազգաց ոչ պարունակէր աւելի քան զքսան և հինգ հազար բնակիչս։

'Ի գաւառսն, որք սահմանին Օրինոքոսիւ, կարէ ճանապարհորդել որ ընդ զանազան հարիւրաւոր մղոնս և ընդ պէսպէս ուղերձմունս առանց գտանելոյ զմի միայն հետ. կմ նշմարելոյ զհետս մարդկեղէն իրիք հաստատածոյ. 'Ի մէջ հիւսիսային Ամերիկոյ, ուր կլիմայն է առաւել խիստ, և գետինն նուազ բերրի, անշէն լինելն երևի միշտ մեծագոյն. Երկայնաձիգ ճանապարհորդութիք հարիւր և հազար փարսախաց արարեալ եղեն անդէն ընդ դաշտս և ընդ անտառս անբնակս։

(36) Նոր Հոլլանդիայն՝ երկիր, որ 'ի վաղ ժամանակս էր միայն ծանուցեալ, յայսոսիկ վերջին ժամանակս այց արարեալ եղև յիմաստուն նշմարողաց. Կայաւորեալ է 'ի միում կողման երկրագնտոյս, յորում պարտի վայելել 'ի քաղցր իմիք կլիմայի. որովհետև տարածանի 'ի 10, աստիճանաց մինչև ց38 աստիճանսն հիւսիսային լայնուն. Այս է երկիր իմն մեծ տարածութբ. և վն քառակուսի ձևոյ իւրոյ պարտի լինել յոյժ մեծագոյն քան զբոլոր Եւրոպիա. Ժողովուրդք, որք բնակեն 'ի զանազան մասունս նր, երևին 'ի նոյն

զար-

զարմ. Են յայտնապէս վայրենագոյնք քան զմեծագոյն մասն Ամերիկացւոց. և տարաբեալ են միշտ նուազ յառաջադիմութեն 'ի զտման և յարհեստս կենաց. Չիք յիմիք մասին այնպիսի ընդարձակ կողման գոյզն ինչ երևոյթ մշակութեան. Բնակիչք են այնպէս սակաւք, մինչ զի երկիրն երևի իբր անշէն. Ցեղք նց են առաւել ամփոփինք քան զցեղս Ամերիկոյ. և կախի նց ապրուստ իւրեանց միայն 'ի ձկնորսութենէ. Ոչ բնականան 'ի միում տեղւոջ և եթ, այլ երթան վտարանդի շուրջ 'ի խնդիր կերակրոյ. Երկաքանչիւր սեռք տեսանին բոլորովին մերկք. Նց բնակարանք, կահք ևայլն, են առաւել պարզք և ողորմականք քան զԱմերիկացւոց. Ճանապարհորդութիւն Հաստէլօր-Բոյ. Այս է թերևս երկիրն, ուր մարդն գտեալ է յառաջել նախկին վիճակի զարգացման իւրոյ. և ընծայէ զողորմելի իմն ցոյց պայմանի իւրոյ և կարողութեանց իւրոց յայնմ անկիրթ հասակի. Եթէ այս երկիր եղիցի լիագոյնս քննեալ յապագայ նաւորդաց, բաղդատութիւն բարուց բնակչաց իւրոց ընդ Ամերիկացւոցն լինիցի մեծ հրահանգ 'ի վիպասանութիւն մարդկային սեռի։ ‖

Որքան որսորդութիւն շարունակեսցէ լինել նախապետական արհեստ յոր վստահանայցէ մարդն ունել զսնունդ, հազիւ կարէ ասել, թէ նա կալեալ իցէ զերկիր։

(37) ‖ Հայրն Գաբրիէլ Սարէսթ, որ ճանապարհորդեաց 'ի կայանէ իւրմէ 'ի մէջ Իւրոնեզաց 'ի Սաքհիլլիմաքինաք, գծագրէ այսպէս զտեսիլ այնր երկրի. Մեք գնացաք աւելի զաւուրս երկոտասան առանց պատահելոյ միում և եթ մարդկեղէն ստեղծուածոյ. Երբեմն գտանէաք 'ի համատարած մարգս, զորոց ոչ էր հնար տեսանել զվերջն. և յորոց միջի ընթանային բազում վտակք և գետք, բայց առանց իւիք ճանապարհի ընդածելոյ զմեզ. Երբեմն պարտաւորեալ էաք բանալ մեզ զանցս

ինչ

մինչ 'ի մէջ թանձր անտառաց, 'ի մէջ թփոց լցեալոց մորենեօք և փշովք. Պարտ էր երբեմն երբեմն անցանել ը. խորին ճախճնս. յորս մնայաք ընկղմեալ մինչև ցգօտին. Զկնի աշխատութեան տունջեան էր անկողին մեր գետինն, կամ սակաւ տերևք. և էաք նշաւակ հողմոց, անձրևաց և բովանդակ տուգանաց օդոյ, Լաֆոնէ յէնօդ. Սարգայետն Պրիւքէլ յընթացս մինչ, զոր արար 'ի հիւսիսային Քարոլինայէ դէպ լերանց յամին 1730, գնաց զճանապարհ զաւուրս վեշտասան առանց դիպելոյ շնչոյ իմիք ծնելոյ. Բնախօսն վէլդ. Հիւսիսային Քարոլինայէ. Դիեկոս Օրտաս թեւակոխելով առնել զկայունութիւն իմն 'ի մէջ հարաւային Ամերիկոյ յամին 1532, գնաց զաւուրս յիսուն ը. երկիր մինչ առանց միոյ և նեթ բնակչի. Հերրէրա: ||

Անտեղեակ գաղափարացն յատկութեան.

Ազգք, որք կախին յորսորդուէ, ոչ ունին զճանաչումն յատկութեան. Եւ քանզի շնչաւորք, յորոց կերակրի որսորդն, ոչ են սնեալք ընդ տեսչութեամբ իւրով, և ոչ յանձանձեալք 'ի խնամոց իւրոց, ոչ կարէ պահանջել զիրաւունս ինչ 'ի վերայ նոցա, յորժամ ընթանան ընդ անտառս իբր վայրենիս. Ուր որսն է այնպէս յոլով, զի կարէ որսացեալ լինել առանց աշխատանաց, մարդիկ ոչ խորհին երբէք յատկացուցանել ինքեանց զոյն, որ է սակաւագին և դիւրաստաց. Ուր այն է այնպէս ցանցառագիւտ, զի աշխատութիւն կամ վտանգն որսացման խնդրեն զմիաւորեալ ջանս ցեղի միոյ կամ գիւղի, սպանեալն է հասարակաց, և պատկանի հաւասարապէս առ նա ամենեսին, որք վասն յաջողակութեան իւրեանց, կամ սրտեղութեան հանգանակեալ են առ յաջողումն արշաւանացն. Բովանդակ անտառք և բովանդակ տեղիք որսոյ դատեալ են յատկութիւն ցեղի. և նա ունի իրաւունս արտաքսելոյ յայնմանէ զամ ազգ նախանձաւոր. Ան այսորիկ ոչ ոք անհատ տայ անձին իրաւունս

'ի

'ի վ՟ր նահանգի իւրեք յայսց տեղեաց նախադասութիւն քաղաքակցաց իւրոց. Նոյորն պատկանի առ բոլորեսեան հաւասարապէս. և ամենեքեան երթան անդր լեր առ հանրական և անբաժան գետին 'ի խնդիր ապրուտի. Նոյն սկզբունք, յորոց վ՟ն կանոնաւորեն նոքա զևս մեծագոյն զբաղումն իւրեանց, տարածանին առ այն, որ է ստորակարգեալ. Եւ ոչ իսկ երկրագործութիւն մուծեալ է 'ի մէջ ն՟ց զբրացեալ ինչ գաղափար յատկութե. Մերք երթան յորս՝ և կանայք աշխատին 'ի միասին. և որովհետև գործք բաշխեալ են 'ի ն՟ս 'ի ժամանակի սերմանելոյն, յետոյ 'ի հունձոն վայելեն առ հասարակ. Մ՟ռ ոմանս ցեղս բերք մշակեալ երկրի աւանդեալ են 'ի հրապարական շտեմարանի, և բաժանեալ 'ի մէջ ն՟ց 'ի սահմանեալ ժամանակս ըստ պիտոյից նոցա ։

(38) Ես յոյժ կասկածիմ, թէ հասարակութիւն ընչից և անբաժան շտեմարանն իցէ միայն ծանուցեալ 'ի մէջ առաւել բիրտ ցեղիցն որսորդաց. և թէ իսկոյն ընդ ստանալն զգաղափար իւրեք տեսակի հողագործութե, կամ կանոնաւոր ճարտարութե 'ի ներքս ածիցի այլ գաղափար արտաքսողական իւրեք իւրաւանց յատկութե 'ի վ՟ր պտղոց իւրեանց. Հաստատեն զիս յայս կարծիս պատմութիւքն, զորս ընկալեալ եմ նկատմամբ վիճակի յատկութեան 'ի մէջ Հնդկաց յամենեւին տարբեր կողմանսն Ամերիկոյ. Գաղափար ազգայնոցն Պրուսիլեայ հայելով առ յատկութին այն է, զի եթէ անձն ոք մշակէ զանդ ինչ, սա միայն վայելելոց է 'ի բերս նր առանց այլոյ ուրուք ունելոյ զիրաւունս պահանջելոյ զայն. Եթէ անհատ ոք, կամ գերդաստան մի երթան յորսորդութի կամ 'ի ձկնորսութի, այն որ է որսացեալ անկ է անհատին կամ գերդաստանին. և ոչ հաղորդեն յայնմանէ զմասն ինչ, բայց եթէ քաղաքէին կամ ազգականաց իւրեանց, որք դիպուածով

ծով

ծով ախտացեալ են. Եթէ անձն ոք գեղջն երթայ 'ի հիւղ նց, կարէ համարձակ նստիլ և ուտել առանց խնդրելոյ նմին իրի շնորհման. Բայց այս է հետևութիւն ընդհանրական սկզբան հիւրասիրութեան նց. որովհետև ես ոչ երբեք տեսի զբաժանումն ինչ այնր, որ աճէ յանդս նց, կամ ըստ բոցն որսոյն, ոչ զի կարող լինէի նկատել իբր յառաջ եկեալ 'ի գաղափարէ իմեքէ վերահայեցման հասարակութեան ընչից. Ընդ հակառակս են նոքա այնքան յարեալք յայն, զոր համարին իւրեանց յատկութիւն, մինչզի անսահմանաբար լինէր վտանգաւոր երթալն յափշտակել զայն. Որքան տեսեալ եմ ես, կամ լուեալ, չէք ցեղ ինչ Հնդկաց 'ի մէջ հարաւային Ամերիկոյ, յորոց միջի այս հասարակուն ընչից, որ այնպէս մեծամեծս բարձ բացուցեալ է, իցէ ծանուցեալ. Պարակուայն կառավարութեան Յեսեանց, որ էր խստագոյն իմն առ Հնդիկսն փարակուայեայ, եղև հասարակուն ընչից, զոր նոքա մուծին. Այս դիմամարտ էր սկզբնական գաղափարացն այնր ժողովրդեան, որ էր տեղեակ իրաւանց առանձին արտաքսողական յատկութեան. որ և սմին իրի դիմամարտութեամբ հպատակեցաւ նոր կանոնաւորմանցն, որք եղծանէին զնա. Պարոն Ըէվալ տը Փինէօ. Ձեռագիրն է առ իս. Ներգործական ստացումն, ասէ քարոզիչ ոմն, որ եկաց զամս բազումս 'ի մէջ Հնդկաց հինգ ազգաց, տայ զիրաւունս ինչ 'ի վր հողոյն. բայց յամ հաղի, յորում ստացողն համարի բարի թողուլ զայն, այլ ոմն ունի իրաւունս առնլոյ զայն իբրև զնա, որ թողու. Այս օրէնք կամ սովորութիւն ոչ միայն հայի 'ի մասնաւոր երկիրն, յորում շինէ նա զտուն իւր, այլև 'ի հողն իւր սահմանեալ 'ի տնկել. Եթէ մարդ ոք նախապատրաստեալ է զմասնաւոր կտոր ինչ երկրի, ուր խորհի նա շինել, կամ տնկել առ յապայն, ոչ ոք ունի իրաւունս խուելոյ զնա. և նա տուեալ ոչ

ունի իրաւունս 'ի մի պտղոց աշխատանաց իւրոց. ցորքան ոչ երեւի յայտնի, թէ նա թողու կամաւորաբար զխորհուրդն զայնմանէ. Բայց ոչ լռեայ երբեք խօսիլ զկերպական դաշնակցութենէ իմեքէ Հնդկի ուրուք ընդ այլում 'ի բնական վիճակի իւրեանց. Կոպարք իւրաքանչիւր տեղւոյ պարագրեալ են. այս է ասել, շնորհեալ է նց երթալ անդր յորս՝ մինչեւ ցորվայր պատահի գետ մի 'ի միոջէ կողմանէ, կամ լեառն մի 'ի միւսմէ. Այս տեսակ կալոյ կալեալ է, եւ բարեգունացուցեալ յանհատից եւ 'ի գերդաստանաց նց. Անհատք եւ ոչ հասարակութիւն ունին զպէտս եւ զօգուտ աշխատանաց իւրեանց. կամ աւարի իւրեանց, յորսորդութեան. Գիւղէսն Հոլէկայ. Չեռագիրն է առիս :‖

Առ այլ ցեղս թէպէտ եւ 'ի հասարակաց շտեմարանն ժողովին զատուցեալ դարմանք, այլ ոչ ստանան զայնպիսի իմն արտաքսողական իրաւունս յատկութ, զի կարող լինիցին վայելել յաւելորդն, յորժամ դրացիք նց գտանին 'ի հարկաւորութ. Այսպէս զանազանութիւքն, որք ծնանին յանհաւասարութենէ ստացուածոց, ոչ ճանաչին. Նզլս հարուստ կմ աղքատ ոչ մտանէ 'ի բարբառ նց. եւ ոչ ունելով զգաղափար յատկութ՝ ոչ գիտեն եւ ոչ իսկ զայն որ է մեծ առարկայ օրինաց եւ քաղաքականութ. ոչ եղեւ նախապետական պատճառ, որ շարժեաց զազգ մարդկան 'ի հաստատել զպէսպէս կարգականոնաւոր իրիք կառավարութ :

Ժողովուրդ մի յայսմ վիճակի պահէ զխորին իմն ճանաչումն հաւասարութեն եւ անկախութեն. Յամ տեղւոջ, ուր գաղափար յատկութ ոչէ հաստատեալ, ոչ կարէ լինել անդ զանազանութի 'ի մէջ մարդկան բաց յայնմանէ, որ ծնանի յանձնական որպիսութենէ. եւ այսոքիկ կարեն արտափայլել միայն 'ի դիպաւորութիւն, յորս դնեն զայնս 'ի գործ. 'Ի ժամանակս վտանգաց, կամ 'ի դժուարին գործողութիւն երթան խորհուրդ հարցանել խոհեմուն

Յօրէնս ճանաչ- չունին հասարակաց զայն եւ անկախութ :

կամ ներհմտութեն ծերուն, որ օրինադրէ զհան-գամանսն, զորոց պարտ է բուռն հարկանել. Յորժամ նոքա ելանեն ընդդէմ թշնամւոյ երկրի իւրեանց, առաւել հռչակեալ քաջասիրտ մարդիկն ընդածէ զերիտասարդսն 'ի պատերազմ. Եթէ ելանեն 'ի դուրս առ 'ի երթալ խմբովին յորս, առաւել փորձեալ և առաւել յաջողակ որսորդն է առաջինն, և ուղղէ զշարժմունս նց. Բայց 'ի յեղանակս անդորրութեն և անգործութեն, յորժամ ոչ գոյ առիթ պարզելոյ զայսոսիկ քանքարս, դադարէ զինչ և իցէ գերակայութի. և իւրաքանչիւր դուզնաքեայ պարակայ ցուցանէ, թէ ամ անդամք հասարակութեն են հաւասարք. Զգենուն ամենեքեան նոյնօրինակ. կերակրին նովին պարզ եղանակաւ. տունք նց և կահք են ճշգրտիւ նոյնք. որովհետև անհաւասարութի ստացուածոց ոչ կարէ ծնանել 'ի նս զզանազանութի ինչ. Այն, որ կերպաւորէ զկախումն 'ի միում մասին, կամ կացուցանէ զվերինադունութի 'ի միւսում, ոչ ճանաչի 'ի մէջ նց. Ամենեքեան են ազատք, ամենեքեան զգան լինել այսպիսի. և ջատագովեն հաստատութեն զիրաւունս այնր վիճակի. Զգացումն անկախութեն այնպէս 'ի խորս քանդակեալ է 'ի բնութեն նց, մինչզի ոչինչ փոփոխութի կայուն կարէ արմատախլել զայն, և թեքել զմիտս նոցա առ ծառայութի. Սովորք 'ի լինել բացարձակ տր գնացից իւրեանց ոչ կամին կատարել զհրամանս այլոյ ուրուք. և ոչ գոլով երբէք ծանուցեալ զընդդիմաբանութի, անարժան համարին ենթարկել այնմ, որ ուղղէ զնս. Բազումք յԱմերիկացւոց յորժամ տեսին զանձինս վարեալս իբր գերիս 'ի Սպանիացւոց, մեռան 'ի ցաւոյ, և բազումք վն յուսահատութեն անձնասպան եղեն:

(39) ‖ Այս տարբերութի խառնուածոյ 'ի մէջ Ամերիկացւոյ և խափշկաց է այնչափ երևելի, մինչ զի եղեալ է առակ իմն 'ի մէջ կղզեաց Փրանսէ-

զաց

զաց ասելն. Խնեթին հայիլն 'ի վայրագ մի՝ է գա-
նել զնա. և գանելն է սպանանել. բայց գանելն
զխափշիկն է սնուցանել զնա : ‖

'Ի մէջ այս ազգ ժողովրդեան կառավարութիւն կա- Ճ՛անա-
րէ առնուլ յինքն սակաւ իշխանութի. և ճանա- չումն
չումն քաղաքական սորակարգութե ունի մնալ սորա- [illegible]
բազմօք անկատար . Որ ոչ ճանաչի, կամ ճա- [illegible]
նաչի ուրուականօրէն զաղափար յատկութե, և [illegible]
ուր ինքնին բերք երկրի և պտուղք ճարտարութե [illegible]
նկատեալ են իբր պատկանեալք առ հրապարական
գետին , հազիւ կարէ լինել անդ պատճառ իմն
հակառակութե և քննութե 'ի մէջ անդամոց նո-
րին հասարակութե , որ խնդրեսցէ զձեռն իշխանութե,
ոպ զի լինիցի յառաջ խաղալ առ արդարութիւն .
Յորժամ իրաւունք զատուցեալ և արտաքսողական
ստացուածոյ ոչ է մուծեալ, ոչ գոյ մեծ առար-
կայ օրինաց և իրաւարանութե . Յորժամ կոչե-
ցեալ են յասպարէզ, կամ վա սեպհական պաշտ-
պանութե իւրեանց , կամ վա յարձակելոյ 'ի սահ-
մանս թշնամեաց իւրեանց, յորժամ գրաւեալ են
յաշխատանս , կամ 'ի վտանգս որսորդութե , ան-
դամք միոյ ցեղի զգան լինել մասն միոյ քաղաքա-
կան մարմնոյ . հաւանեալ են ընդ զուգակցութե
իւրեանց ընդ ընկերաց , և գործեն լծակցեալք ը
նն , զհետ երթալով և ակնածելով նց , որք զա-
նազանին առաջնորդութբ և քաջութբ . Բայց 'ի
ժամանակս, յորս բառնին 'ի միջոյ այսպիսի ճգանք,
դժուարաւ յիշեն զկապս քաղաքական միաւո-
րութեան :

(40) ‖ Սորագրութի քաղաքական կացութե ժո-
ղովրդեան Չինալօայի նմանի կատարելապէս կա-
ցութե բնակչաց հիւսիսային Ամերիկոյ . Ոչ ու-
նին, ասէ քարոզիչ ոմն որ եկաց յերկար ժա-
մանակ 'ի մէջ նոցա , ոչ զօրէնս, ոչ զթագաւոր
առ 'ի պատժել զյանցանս ինչ . ոչ գոյ 'ի մէջ
նց տեսակ ինչ իշխանութե, կամ քաղաքական

կառավարութեան առ 'ի սանձահարել զնո՛ յիմիք մասին գնացից իւրեանց. Արդարև ճանաչեն զըսգլխէս ոմանս, որք են գլուխք տոհմից իւրեանց կամ գիւղից. բայց աւագութի նց, երբեմն նախապետաբար 'ի պատերազմի և 'ի շահատակութիւնս ընդդէմ թշնամեաց իւրեանց. Զայս աւագութի քաջքէք ստանան ոչ ժառանգական իրաւամբք, այլ 'ի շնորհս քաջութեն իւրեանց 'ի պատերազմի, կամ վն կարողութեն և թըւոյ տոհմից իւրեանց և ազգականաց. երբեմն զգերակայութիւն իւրեանց պարտին ճարտարութեն իւրեանց 'ի պատմելն զսեպհական քաջագործութիս իւրեանց. ՈՒԽՂՏՈՍ ՀԷՂՏՈՍ. Կացք Չ'եհիքուիթօսաց 'ի մէջ հարաւային Ամերիկոյ է ամենևին նոյն. Ոչ ունին զկանոնաւոր կերպ կառավարութե, կամ քաղաքական կենաց. բայց յիրակութիս հասարակաց բարւոյն ունկնդիր լինին խորհրդոյ ծերոց իւրեանց, և սովորաբար հետևին այնմ. Արժանաւորութի քաջքէի ոչ է ժառանգական, այլ տուեալ ըստ վաստակոյն իւր փոխարէն քաջութեն 'ի պատերազմին. Ազատութիւն 'ի մէջ նց է անկատար. Ընկերութի նց երբեք հասարակապետութի ինչ առանց իւիք գլխոյ. յորում ամ անհատ է տր ինքեան. և դոյզն ինչ տհաճութի անջատէ զնա 'ի նոցանէ, ընդ որս համարեալ էր կապակցեալ Հայրն Յօհաննէս Փէրնանդէզ. Այսպէս 'ի ներքոյ ամենևին տարբեր կլիմայից, յորժամ ազգք են 'ի միում նմանակ վիճակի ընկերութե, սահմանադրութիք նց և քաղաքական կառավարութիւն առնուն զնոյն կերպ :||

Ոչինչ երևելի կերպ կառավարութե հաստատեալ է 'ի նս. Անուանք մեծաւորութե և հպատակի ոչ են 'ի սովորութեան. Երբեք թէ իւրաքանչիւրոք վայելէ 'ի բնական և յամբողջ անկախութե իւրում. Եթէ առաջադրի առաջարկութի ինչ հրապարական օգտի, անդամք հասարակութեն թողեալ են յազատութեն ընտրելոյ ձեռնտու կամ ոչ առ 'ի

գնել

զնել զայն 'ի գործ․ Ոչ գոյ սահմանք ինչ 'ի նմ, որ զեղծ 'ի վր զծառայութի ինչ իբր պարտ, և ոչ օրէնք բռնադատիչ, որ պարտաւորեսցէ զնա առնել զայն․ Բովանդակ որոշմունք նց են կամայականք․ և բերին 'ի մըմանէ մտաց իւրեանց․ Յայն ուրուական ընկերութիւն ոչ է արարեալ երբէք առաջին քայլ առ կացուցումն հրապարակական իրք իրաւարարութե․ Իրաւունք վրէժխնդրութե թողեալ է 'ի սոսկական ձեռս․ և յորժամ գործի բռնութի ինչ․ կամ հեղանի արիւն, հասարակութին ոչ առնու յինքն զիշխանութին տալոյ կամ նուաճեցուցանելոյ զպատիժն․ Վերաբերի առ ոտնձն կամ առ բարեկամս անձին զրկեցելոյ կմ սպանելոյ վրէժխնդրելն անիրաւութե, կամ ընդունելն զվճարումն մատուցեալ 'ի բռնաւորէն․ Եթէ 'ի մէջ մտանեն երկիցագոյնք, առնեն զայն առ 'ի խորհուրդ տալ, և ոչ առ 'ի վճիռ հատանել․ Նաև հազիւ երբէք ունին զնի խորհրդոց նց․ քանզի որովհետև փոքրոգութի գտեալ է հանդուրժելն, եթէ վնասակար որք անցցէ անպատիժ, զմին իրի քէնն է անհաշտելի և մշտնջենաւոր․ Նահկայ կառավարուե 'ի մէջ վայրագաց է մանաւանդ արտաքոյ քան 'ի տան․ Նոքա ոչ գիտեն պահել զկարգն և զներքին քաղաքականութին հրապարակական կանոնաւորութք և վարմամբ յարակայ իշխանութե․ այլ հնարին նախապահել զմիաւորութին 'ի մէջ անդամոց ցեղին, որպէս զի կարող լինիցին հսկել 'ի վր շարժմանց թշնամեաց իւրեանց և գործել ընդդէմ նց միաբան և քաջութեամբ ։

Այսպիսի կերպ քաղաքական կարգի հաստատեցելոյ 'ի մէջ մեծագոյն մասին Ամերիկեան ազգաց․ Գիտան յայսմ վիճակի բազումք 'ի ցեղից սփռելոց ընդ մեծամեծ գաւառսն, որք տարածանին ընդ հիւսիս արևելս Միսիսիպպեայ 'ի բերանոյ Սան Լօրենցայ գետահմանս Ֆլօրիտայ․ 'Ի հանգունակ պայմանի էին ժողովուրդք Պրասիլեայ, բնակիչք Պէհիլեայ և զա- …

Տա ոյ ժողովուրդք … (margin note, partly illegible)



Նա-

Նաղան ցեղք փարակուսեալ և 'ի Կուիանա և 'ի դաւառսն, որք ձգին 'ի բերանոյ Օրինոքոսի ցցամաքակողմն Իւքաթան. 'Ի մէջ այսպէս անսահման իմն թուոյ փոքրիկ ընկերութեանց կարեն լինել իրք մասնաւորք, որք բաղկացուսցեն զզանազանութի իմն և նշանակեսցեն զաստիճանս քաղաքական իմն կրթութեան և բարեգունութեան իւիք. Բայց նկրտիլն հետազօտել զայնս և 'ի թիւ արկանել ընդունայն լինէր որովհետև մինչև ցայժմ ոչ են նշմարեալք յումեքէ, որ իցէ ընդունակ քաջ ճանաչելոյ զմանր և զնուրբ պարագայս. որք զանազանեն զազգս համանմանս միմեանց յընդհանրական յատկութեան և 'ի կազմուածս իւրեանց. Գծագրութիւն, զոր ետու ես, մերձեցուսցի սակաւ այլայլութ առ քաղաքավարութի որոյ և իցէ ժողովրդեան յԱմերիկա. որ ընդ ձկնորսութ և ը որսորդութեան առակցեալ է զաստիճան ինչ հողագործութ:

Որչափ և ուրուական և անկատար երևեսցին սահմանագրութիւնս այսորիկ, այսու ամենայնիւ էին բազում ցեղք ոչ այնչափ յառաջացեալք 'ի քաղաքական զարգացման իւրեանց. 'Ի մէջ այնց փոքրիկ ազգաց, որք վս ապրստի իւրեանց պարապին 'ի ձկնորսութ և 'ի յորսորդութ առանց իրիք տեսակի մշակութեան, ընկերութիւն էր այնպէս անկերպարան, և խելամտութ փոխադարձ կախման իւրեանց այնպէս տկար, մինչ զի դժուարաւ կարէ տեսանել 'ի նս երևոյթ ինչ կարգի և կառավարութեան. Նոն սակաւք պիտոյք նց, պարզք հետևելի առարկայք նց. ժողովին յուրոյն ցեղս, և գործեն 'ի միասին յաւէտ յազգմանէ, յունակութէ, կամ 'ի պատշաճողութէ, քան 'ի կերպական համախոհութէ և 'ի միաւորութէ. Պատկանին առ այս դաս ժողովուրդք Կալիֆօրնիայի, ոմանք 'ի փոքրիկ ազգացն 'ի համատարած երկիրն փարակուսեալ, և ոմանք յազգացն առ ափամբք Օրինոքոսի և առ գետովն նոյն Մատտալենայի 'ի Նոր Թագաւորութեն Կրանաթայի.

ԵՂ

Մ.Ա. Թէպէտև 'ի մէջ այսց փոքր մի յառաջ յի- Մ.Նչո-
շատակեալ ցեղից հազիւ գոյր ստուեր ինչ կանո- նանտո-
նաւոր կառավարութեն, նաև 'ի մէջ այնց, զորս -ւր էինչ
ստորագրեցի յառաջ, իշխանութիւն իցէ տկար և Էրի-
սահմանաւորեալ առ անձկագոյն ևս կոպար, սա- այնէր.
կայն էին տեղիք ինչ յԱմերիկա, ուր կառավարու-
թիւն բազմօք յառաջացեալ էր անդր քան զայն աս-
տիճան, որ երևի բնական անկիրթ ազգաց. 'Ի նկա-
տելն զքաղաքական գնացս մարդոյ 'ի վայրագ կամ
յանքաղաքականացեալ կացութեն իւրում նշմարին
եզական և արտակեդրոն սահմանադրութիք. որք ընդ-
ոստնուն 'ի դուրս, որպէս բանից կարգ է ասել,
'ի կայանէ իւրեանց, և 'ի բաց փախչին այնչափ հե-
ռի, մինչզի 'ի զուր աշխատիմք վերածել զնս 'ի
ներքս. ընդհանրական օրինաց իւիք կարգի, կամ
տալ պատճառ զնոցանէ այնոքիւք սկզբամբք, որք
ազդեն 'ի վն այլոյ իւիք հասարակութեն 'ի նմա-
նակ իմն կայաւորութեն. Պատահին օրինակք ինչ
'ի մէջ այնց ժողովրդոցն Ամերիկոյ. զորս բովան-
դակեցի ընդ հասարակ անուանակոչութեբ վայրա-
գաց: Այս օրինակք են այնպէս անսովորք և ծան-
րակշիռք, մինչզի ունիմ ստորագրել զնս և նկա-
տել մեկնել զծագումն նց ։

'Ի Նոր աշխարհին, որպէս յայլ մասունս երկրա- Սմանո-
գնտոյ, ցրտային և բարեխառն գաւառք երևի թէ -ւթեա-
իցեն հանգրուան նպաստաւոր ազատութեն և ան- Էոր
կախութեն. 'Ի նոսա միայն է հաստատուն և կորո- յամանս
վի հաւասար մարմնոյն. Մարդիկք գիտակք արժա- 'ի ջերմա-
նաւորութեն իւրեանց՝ ընդունակք մեծագոյն ճգանց գոյն
առ 'ի ջատագովել զայն՝ ձկտին առ անկախութեն, կողմանց.
և յամառեալ միտք նց դժուարաւ թեքին առ
լուծ ծառայութե. 'Ի ջերմագոյն կլիմայս, յորոց
ազդեցութե մարդկային կազմուածն է այնքան տկա-
րացեալ, մինչզի ներկայ բերկրութիւն կերպաւո-
րէ զգերագոյն երջանկութիւն և լոկ հանգիստն ։
վայելումն իմն, մարդիկ հանդարտին դիւրեթէ ա-

ռանց ինչ հակառակութեան առ տէրութիւն վեր-
նագունի ուրուք. Ապա ուրեմն եթէ մեք յա-
ռաջ խաղացուք 'ի հիւսիսոյ 'ի հարաւ առ շարու-
նական Ամերիկոյ տեսցուք զկարողութիւն նոցա,
որք են իշխանաւորք, աճել աստիճան առ աստի-
ճան, և հոգի ժողովրդեան լինել առաւել գի-
տնոց և առաւել համբերատար. Ի Փլորիտա
իշխանութիւն սաքհեմաց կամ քազիքէից, կամ
գլխոց ոչ միայն էր յարակայ, այլ և ժառան-
գական. Երևէին զանազանեալք 'ի մասնաւոր զար-
դուց. վայելէին 'ի պէսպէս ազգ արտօնուց. և
հպատակք նց վարէին ընդ նոսա այնու յարգանօք,
զոր ժողովուրդք ընտելք ընթարկութեն մատուցանեն
Ի Բըք առ տեարս իւրեանց. Առ ազգն Նաթքհեզաց կայա-
Լաւէ- ցեալ առ ափամբք Միսիսիպպեայ տեսանիւր. տար-
ժնեւոյ: բերութի ինն աստիճանաց բնաւին անծանօթ եղե-
լոյ առ հիւսիսային ցեղս. Յոհնք ինչ համարեալք
ազնուականք վայելէին 'ի ժառանգական ինն արժա-
նապատւութեան. Մարմին ժողովրդեան նկատիւր
անարգ և կերպաւորեալ միայն առ 'ի լինել հպա-
տակ. Այս զանազանութիւն նշանաւորեալ էր յո-
րոշեալ եղերաց, որք նշանակէին զգերամեծ ամ-
բարձումն միոյ կայուն և զանհամբաւ ցածուցումն
միւսոյն. Առաջինքն կոչեցեալ էին ակնածելիք.
և երկրորդքն անարգք. Երիցագոյն գլուխն, յո-
րում գերագոյն իշխանութիւնն կայանայր, հա-
մարեալ էր էակ ինն վերնագոյն բնութեամբ, եղ-
բայր արեգական՝ միակ առարկայ երկրպագութեան
նոցա. Մատչէին առ նա կրօնական պաշտամամբ,
և երկիր պագանէին նմա իբր ներկայացուցչի ածու-
թեան իւրեանց. Կամքն նորա էր օրէնք մի, ո-
րում ենթարկէին ամենեքեան անորոշ հնազան-
դութեամբ. Կեանք հպատակաց իւրոց կախիւր զնմա-
նէ այնպէս բացարձակ, զի եթէ ոք անկեալէր 'ի սրտ-
մտութի նորա, յանդիման առնէր նմա զանձն, և խորին
խոնարհութեամբ մատուցանէր նմա զգլուխն. Տէ-

րու-

րութի այսց գլխոց ոչ վախճանիւր կենօք իւրեանց . Նախապետական պաշտօնատարք նց , և նազելի կանայքն 'ի միասին ընդ բազմաց ծառայից վայրագոյն աստիճանի զոհեալ լինէին առ շիրիմս նց , որպէս զի 'ի միւս աշխարհին կարասցեն արբանեկել 'ի նոյն անձանց , որք ծառայէին նց յայսմ . և այնպիսի է յարգանքն , յորում կալեալ էին , մինչցի զոհքս այսոքիկ ընդառաջ ելանէին մահու մեծաւ զուարթութբ , դատելով հատուցումն իմն հաւատարմութեն իւրեանց , և նշան իմն զանազանութեան սահմանեալ լինելն յընկերել վախճանելոյ տեառն իւրեանց . Այս է կատարեալ տէրութիւն , որ հանդերձիւր ամբողջ հետևանօք աւելորդապաշտութեան , յանդգնութեան և անողորմութեան հաստատեալ է 'ի մէջ Նաթքհէցաց . և նզական իմն ճակատագրութեամբ ժողովուրդն այն կրեաց զառաւել սոսկալի թշուառութիւնս , որք յատուկ են քաղաքականացեալ ազգաց , թէպէտ և ոչ իցէ զարգացեալ 'ի քաղաքականութեան և 'ի ճանաչման աւելի քան զցեղսն , որք կան նմա մօտ . 'Ի Իսպանիոլա , 'ի Քուպա , և 'Ի Ճամա- յառաւել ընդարձակ կղզիսն քազիքէք և գլուխք ցեղին : նց ունէին զմեծ կարողութիւն . Արժանապատուութիւնն փոխանցեալ էր ժառանգական իրաւամբք 'ի հարց յորդիս . Ունէին զպատիւս և զարտօնութիւնս երևելիս . Հպատակք բերէին զմեծագոյն ակնածութիւն առ քազիքէս , և կատարէին զհրամանս նց առանց տարակուսանաց կամ դանդաղանաց . Երթային պաճուճեալք մասնաւոր զարդուք և առ 'ի պահել կամ աճեցուցանել զյարգումն ժողովրդեան . ունէին զաչալրջութիւն կոչելոյ յօգնութիւն զաւելորդապաշտութիւնն ալ 'ի լաւ ևս պահելոյ զաւագութիւնն . Հրատարակէին զհրամանս իւրեանց իբրև պատգամս երկնից . և պարծէին ունել զիշխանութիւն կանխանուորելոյ զեղանակս

ղանակս

զանակս և բաշխելոյ զանձրևս կամ՝ զլոյս արևու, որպէս զեարդ հպատակք իւրեանց ունէին պէտս:

Ի Պօ– կոթա: 'Ի մասունս ինչ շարունակին իշխանութիւն քաջիքէից երևի թէ իցէ այնպէս ընդարձակ որպէս ի կղզիսն. 'Ի Պօկոթա, որ այժմ է գաւառ ինչ 'ի Նոր Թագաւորութեանն Կրանատայ, էր բնակեցեալ ազգ մի առաւել երևելի Թըշուլ և առաւել կիրթ 'ի զանազան արհեստս քան զայլ զինչ և իցէ ազգ Ամերիկոյ բաց 'ի Մեքսիքացւոց և 'ի Փերուվիացւոց. Կեայր նախապետաբար երկրագործութեամբ. Գաղափար յատկութեան մուծեալ էր 'ի նոսա. և զիրաւունս նոց ապահովացուցանէին օրէնք փոխանցեալք աւանդութեամբ և պահեալք անվթարութեամբ. Կային ժողովուրդք իւր 'ի մեծամեծ քաղաքս. զգեցեալ էին վայելչապէս. և տունք նոցա կարեն ասիլ պատշաճաւորք բաղդատութեամբ տանց դրացեաց նոց. Գովասանէին տրդիւնք այսր ոչ հասարակ քաղաքականացման. Կառավարութիւնն արդէն առեալ էր զկերպ իմն մանաւոր. Տեանիւր 'ի նոսա հաստատեալ իրաւաբանութիւն իմն, որ առնոյր զծանօթութիւն զանազան յանցուածոց և պատժէր զայնս խստութեամբ. Էր 'ի նոսա զանազանութիւն ինչ աստիճանաց. Գլուխ նոցա, որում Սպանիացիք ետուն զանուն Սիպակետի, և որ արժանի էր այնմ 'ի շնորհս փառաց իւրոց և կարողութեան, թագաւորէր բացարձակ իշխանութեամբ. Ծառայէին նմա պաշտօնատարք զանազան պայմանաց. Ոչ երևէր երբէք 'ի հրապարակի առանց յոգնաթիւ իմն հետևորդաց. Տանէին զնա 'ի տեսակ իմն գահաւորակի և մեծաւ շքով. և առաջի երթային նմա կարապետք առ 'ի հորդել զճամփն և ծաղկասփիւռ առնել. Այս անսովոր հանդէս արարեալ լինէր ընծայիւք, կամ սակուքն, զորս ընդունէր 'ի հպատակաց իւրոց. որոց նաչապետ իւրեանց էր առարկայ իմն այնքան յարգանաց.

գանաց, մինչ զի ոչ ոք 'ի նոցանէ իշխէր հայել 'ի նա ուղղակի. և մատչէին առ նա զերեսս յետս ընդդէմ դարձուցեալ. Այլն և այլ ցեղք 'ի նմին շարունակի, յորս՝ թէպէտ և նշմարի զարգացեալս քան զժողովուրդն Պօկօթայի 'ի քաղաքականութեան և 'ի կրթութեան, ազատութիւն և անկախութիւն բնական մարդոյ 'ի վայրագ վիճակի իւրում էին յոյժ ամփոփեալք, գոլով քաջքեք նց սեպհականեալ անձանց զծայրագոյն իմն աւագութի:

Այլ է դիւրին ցուցանել զպարագայս, կամ յայտնել զպատճառսն, որք հանգամանակեցին 'ի մուծանել և 'ի սահմանել յիւրաքանչիւրում յայսց ժողովրդոց զկերպ ինչ կառավարութեան այնպէս տարբեր 'ի կառավարութենէ ցեղիցն դրացեաց իւրեանց, և այնպէս ընդդիմամարտ յօժարութեան բնիտ ազգացն. Եթէ անձինքն, որք կալան պարապ նշմարելոյ զնոսա 'ի սկզբնական էութեան իւրեանց, լեալ էին առաւել ուշադիրք և առաւել զգօնամիտք, ընկալեալ էաք արդեօք 'ի նոցանէ բաւական ծանօթութիւս առ 'ի բարւոք առաջնորդել մեզ յայսմ հետախուզութեան. Եթէ արարք իւրք ժողովրդեան անտեղեակ եղելոյ կիրառութեան գրոց ոչ էին մածեալք անընդմտանելի իմն խաւարաւ, հանեալ լինէր ծանօթութի ինչ յայսմ աղբերէ. Այլ քանզի ոչ կարէ հաւաքիլ ինչ, որ հանդուցէ զմիտս. ոչ 'ի պատմութեանց Սպանիացւոց և ոչ յաւանդութեանց նոցին ազգաց, 'ի դէպ է դիմել մեզ առ վարկածս առ 'ի մեկնել զանկանոնաւոր երևոյթս 'ի քաղաքական կացութեան ազգին, զոր յիշատակեցի. Համօրէն այն ցեղք, որք կորուսեալ էին զբնական ազատութի իւրեանց. բնակէին յայրեցած գօտւոջ, կամ 'ի գաւառս մօտաւորս այնմ. և վնկ կարէ ենթադրել, թէ կլիմայն ունիցի զազդեցութի ինչ առ 'ի յարմարել զխիրտս նց առ ծառայութի, որ երևի լինել վիճակ մարդոյ յայն

Պատ-
ճառք
այսպի-
կանոնա-
դրութե-
անց :

կող-

կողմանս երկրագնտոյ. Այլ թէպէտ և ազդեցութիւն կլիմայի հզօրագոյն քան զազդեցութիւն այլ զինչ և իցէ բնական պատճառի ոչ է անգոսնելի, սակայն այս միայն ոչ է բաւական պարզաբանել զկէտ խնդրոյն. Գործողութիւնք մարդկան են այնպէս բաղադրեալք որ զի ոչ է մարթ ընծայել զկերպարանն, զոր առնուն, զօրութեն միում և եթ սկզբան, և միում և եթ պատճառի. Թէպէտ բաց-արձակ տէրութիւն յԱմերիկա ամփոփեալ է առ նախասացեալ գօտին և առ ջերմային կողմանս, որք սահմանակից են այնմ, սակայն նշմարեցի ես, զի գաւառքս այսորիկ պարունակեն զանազան ցեղս, որոց ոմանք ունին զբարձր իմն աստիճան ազա-տութեն. և այլք անգիտանան բնաւին զսանձ կառա-վարութեն. Անզգայութիւն և երկչոտութիւն ՚ի սեպ-հական բնակչացն կղզեաց առնէին զնոսա այնպէս անընդունակս խմաստից կամ ջանից կարևորաց առ ՚ի պահել զանկախութիւն, մինչզի ոչ պիտի ո-րոնել զայլ ինչ պատճառ խոնարհ հպատակութեն նց առ կամս վերնագունի միոյ. Անթարքութեն ՚Նաթչեզաց և ժողովրդեան Պօկօթայի երևի լինել հետևութիւն զանազանութեն իրիք ՚ի կացու-թեն նց ՚ի կացութէ այլոց Ամերիկացւոց. Այսո-քիկ էին ազգք վաղեմն կայունացեալք, և բնակէին միշտ ՚ի նմին տեղւոջ. Որսորդութիւն ոչ էր նախա-պետական զբաղումն առաջնոց, և վերջինքն երևին հազիւ վստահացեալք յայն մի մասին ինչ ապրուս-տի իւրեանց. Արարեալ էին երկոքին այսոքիկ ազգք զայնպիսի յառաջադիմութիւն յերկրագործու-թեն և յարհեստս, զի ճանաչումն յատկութեն մուծեալ էր յիմիք ստացուածի ՚ի միում հասա-րակութեն, և կրկնապէս հաստատեալ ՚ի միաւումն. ՚Ի մէջ ազգին յայսմ վիճակի ազատութիւն և փա-ռաւորութիւն ստանան զառարկայս, և սկսանին վարել զկարողութիւն իւրեանց, զխոնարհս անձնա-սիրութեն ուղղեն զանձնասէրս, ըղձութիւն գերա-

փոյթ

կայութեն զարթուցանէ զձեռներէցն, և տէրութիւն որբանեկեալ է յերկոցունց. Մինչ անծանօթք մարդոյ 'ի վայրագ կացութեն խրոում խիթին զազանն և զփառասէրն 'ի յափշտակել զիրաւունս հայրենակցաց իւրեանց. Պատճառքն, որոց անկիրթ ազգք հաւասարապէս անգիտակ են, շարժեն զժողովուրդն ենթարկել հեղաբար յափշտակեալ իշխանութեն քաղաքէից իւրեանց. Նայց նաև 'ի մէջ ազգաց, որք գտանին յայսմ վիճակի հոգին ստորադրելոց ոչ լինէր այնչափ հպատակ, և իշխանութի կանոնաւորչաց այնպէս անկոպար, եթէ ոչ էր այնմ օժանդակեալ աւելորդապաշտութիւն. Վն անհրաժեշտ ազդեցութեն իւրոյ՝ միտք անհատից ընկճեալ է, և կայ նուաճեալ բնական կորովութի իւր և անկախութի. Վն Թշուառութեն այնր ժողովրդեան, որոյ սահմանադրութիւք են ենթակայ այսր քննութեն, զայս իշխանութի ունէին 'ի ձեռս գլուխք իւրեանց. Քաղդէք կղզեացն կարող էին գնել զպատասխանիս, որք հաճոյ էին նց, 'ի բերան չէմիսաց կամ աստուծոց իւրեանց. և ոչ այլազգ, բայց եթէ վն միջնորդութեն իւրեանց, կամ յանուն նց գնէին զինչ և իցէ հարկ կամ ծանրութի 'ի վն ժողովրդեան իւրեանց. Նախապետական գլուխն Նաթքհեղաց էր գերագոյն գործակալ և ներկայացուցիչ արեգական ածութեն իւրեանց. Ակնածութիւն, զոր ժողովուրդ Պօկոթայի ունէր առ միապետս իւրեանց, երևի շնչեալ յաւելորդապաշտական իմն խորհրդածութէ. որովհետև կարծեցեալ ժառանգն Թագաւորութեն մնուցանիւր 'ի ներքսագոյն շտեմարանս ամագագոյն տաճարի իւրեանց 'ի ներքոյ այնպիսի խստագոյն կրթուե, և այնպէս մնանաւոր ծիսովք, որք դիմէին ընուլ զհպատակս բարձրաբերձ զգացուածովք նկատմամբ սրբութե կարգի իւրոյ և վսեմութեն աստիճանի իւրոյ. Աւելորդապաշտութիւն, որ յառաւել ուրուական

ժամա-

ժամանակի ընկերուն կամ էր բնաւին անծանօթ, կամ ճապաղեալ 'ի տղայական վարմունս, ստացեալ էր զայնպիսի գերակայութի 'ի վր ժողովրդոցն Ամերիկոյ, որք առ սակաւ մի զարգացեալ էին 'ի զտման, մինչ զի կարող եղև խոնարհեցուցանել զմիտս նց առ ծառայութի, և 'ի սկզբան քաղաքական ընթացից իւրեանց ենթարկել զնս բացարձակ իմն տէրութեն ոչինչնուազ խիստ եղելոյ քան զվիճակ ազգացն վերածելոց առ վերջին աստիճան զեղծման և կործանման :

Արհեստ նց առ- ներքին պաշտպա- նութիւն: Լ․ Դիտեսցուք զքաղաքական սահմանադրութիւս բիրտ ցեղիցն Ամերիկա, առաջին առարկայն, որ իցէ արժանի ուշադրութե. է արհեստն պատերազմելոյնց, և յառաջատես հոգ նց վր հրապարական ապահովութեն և պաշտպանութե. Փոքրիկ ժողովուրդք սփռեալք ընդ Ամերիկա ոչ միայն են անկախք և արձակք 'ի մէջ իւրեանց, այլ և գրաւեալք 'ի մշտնջենաւոր թշնամութիս ընդդէմ միմեանց. Հետեւ եզուրկք 'ի գաղափարէ յատկութե ընձեռելոյ ումև իցէ անհատի, այսու ամիճ տեղեակ են իրաւանց իւրաքանչիւր հասարակութե 'ի սեպհական տէրութիւս իւր. Օայս իրաւունս հաւատան գերակատար և արտաքսողական, և որ իշխանաւորեսցէ զստացօղն առ 'ի ընդդէմ կալ յափշտակութե մերձակայ ցեղիցն. Այնզի մեծապէս կարևոր է նց խափանելն զկոտորումն, կամ զխառովելն զօրսն յանտառս իւրեանց. Հայէին յայս բնական տէրութի մտադիր և նախանձաւոր ակամբ. Բայց սահմանք նց ոչ գոլով տարածեալք, և ոչ եզերք նց կատարելապէս նշանակեալք, յառնեն անթիւ պատճառք վիճոյ, որ հազիւ երբէք աւարտի առանց հեղման արեան. Նաև յայսմ պարագ և նախկին վիճակի ընկերութե անձին շահն է աղբիւր իմն երկպառակութե, և խթէ ատէպ զվայրագ ցեղսն առնուլ զէնս առ 'ի վանել կամ պատուհասել զթշնամիսն, որք մխին յանտառս իւրեանց կամ 'ի դաշտս, յորս վստահանան տանել զայլրուստ :

Ա-

Սակայն առանձնական շահն ոչ է յաճախագոյն և ոչ հզօրագոյն պատճառ հանապազորդ թշնամութեանց 'ի մէջ վայրենի ազգաց. Պարտ է վերագրել զայն առ կիրս քինախնդրութեան, որ 'ի սիրտս վայրագացն կատաղի այնքան բռնութ[եամբ], մինչզի անձուկն թափելոյ զայն կարենկատիլ իբր որոշ նշան մարդկան ոչ քաղաքականացեալ կացութեան իւրեանց. Ի՞ն պարակայք սքանչելի ազդեցութ[եան] եթէ 'ի ներքին կառավարութեն վայրենի ցեղից, եթէ յարտաքին գործողութիւս իւրեանց ընդդէմ արտաքին թշնամեաց, որք զուգընթաց լինին 'ի հաճոյական առնել և 'ի զօրացուցանել զայս կիրս մահաբեր հասարակաց անդորրութե. Յորժամ իրաւունքն հանելոյ դքեն վրիժուցն թողեալ է 'ի ձեռս որոյ և իցէ անհատի, անիրաւութիւք զգացեալ լինին չափազանց դառնութ[եամբ]. և խնդրի վրէժ յամառ ոխակալութ[եամբ]. Ձիք ժամանակ, որ ջնջեսցէ զյիշատակ իրիք վնասու. և յոյժ ցանցաղակի պատահի մաքրել այսմ այլով եղանակաւ, բայց եթէ արեամբ վնասարարին. Ի ձեռնարկելն 'ի հրապարակական մարտս իւրեանց ազգք վայրագք շարժեալ են 'ի նոյն զաղափարաց, և խրախուսեալք 'ի նոյն հոգւոյ, յորմէ 'ի հետամուտ լինելն առանձնական վրէժխնդրութե. Ի մէջ փոքրիկհասարակութեանց իւրաքանչիւր մարդ խթեալ է յանիրաւութէ կամ 'ի նախատանացն արարելոց 'առ մարմինն, որոյ է ինքն անդամ, որպէս եթէ լինէր թշնամանք ինչ մասնաւոր սեպհական պատւոյ և ապահովութե իւրում. Նաղձանք վրէժխնդրութե հաղորդի սրտէ 'ի սիրտ, և 'ի միում վայրկենի փոխարկի 'ի կատաղութ[իւն]. Տկար ընկերուիք կարեն ելանել 'ի մարտ միայն փոքրիկ գընդօք, և վնկ իւրաքանչիւր մարտիկ ճանաչէ զմեծութիւն բազկի իւրոյ, և զդայ, թէ յայս վստահացեալ է երեւելի իմն բաժին հրապարակական վրէժխնդրութե. Պատերազմն, որ 'ի մէջ մեծամեծ թագաւորութեանց աբարեալ է փոքր սրտմտութ[եամբ],

Յոր- դէ- նոգրո- ընելոյ 'ի պատե- րազմ:

Միւ- սոյ վրէժ- խնդրու- թեն:

Նո- րա ծնանի նուէ- գնդա- րենի 'ի պատե- րազ- մունս 'ի նոյն:

փոք-

փոքրիկ ցեղիցն մնեալ է բովանդակ ուժգնութք ա-
ռանձին տարածայնուն իրիք, և ոխ ազգացն է ան-
հաշտելի, որպէս անհատիցն. Կարէ երբեմն թա-
քուցանիլ, կամ սանձիլ. այլ ոչ երբէք շիջանի.
և յաճախակի յորժամ ոչ ապաստեալ լինի, կամ
զանգիտեալ, յարձակին 'ի դուրս կրկնապատկեալ
մոլեգնութք. Յորժամ քաղաքականացեալ ազգք
ընկալեալ են զփառս յաղթութն, կամ ստացեալ
զաճումն ինչ սահմանի, կարեն աւարտել պատուով
զպատերազմն. Բայց վայրագք ոչ երբէք շատա-
ցեալ են, մինչև ոչ բնաջինջ արասցեն զհասարա-
կութիւն, որ է առարկայ ատելութն իւրեանց. Ոչ
պատերազմին առ 'ի ստանալ զերկիր, այլ առ 'ի
քանդել. Եթէ գինագրաւ լինին 'ի թշնամութիւս,
առնեն զայն որոշմամբ ոչ ևս երբէք տեսանելոյ զե-
րեսս թշնամւոյ իւրեանց 'ի խաղաղութն, այլ շա-
րունակելոյ զվէճն յաւիտենական հակառակութք,
Բաղձանք վրէժխնդրութն է առաջինն, և իբր միայն
ակիզբն, զոր վայրագն շնչէ 'ի սիրտս որդւոց իւրոց.
Այս անէ ընդ նոսա ըստ չափուն, որով յառա-
ջին 'ի կեանս. և քանզի ուշադրութի նց 'ի սա-
կաւ առարկայից է տարածեալ, նոյն իսկ բաղձանքն
ստանայ զաստիճան ինն ուժգնութն անծանօթ 'ի մէջ
այլոց մարդկան, որոց կիրք լուծանին, կամ գէթ
տկարանան 'ի պէսպիսութե ըղձից և զբաղմանց իւր-
եանց. Յանկութի վրէժխնդրութն, որ տիրէ սրտի
վայրագին, նմանի մանաւանդ ազդման կատաղուն
յիմիք շնչաւորի, քան կրից մարդոյ միոյ. Նա դառ-
նայ կոյր իմն բերմամբ նաև ընդդէմ անշունչ ա-
ռարկայից. Վայրագք եթէ հարկանին դիպուածով
'ի քարէ իմիք, 'ի բուռն առկանեն զայն տարա-
պայման ինն ցասմամբ. և դուն գործեն թափել 'ի
վը զվրէժ իւրեանց. Եթէ վիրաւորին 'ի նիզակէ
իմէքէ 'ի պատերազմի. 'ի բաց խլեն զայն 'ի վի-
րաց, բեկանեն, խածանեն, և ապա զարկանեն զ
գետին. Ակամայ թշնամեաց իւրեանց բորբոք

քինախնդրութեան ոչ ունի կոյարս. 'Ի ներքոյ տէրութեն այսր կրից մարդն եղանի առաւել անգութ քան զամ շնչաւորս. ոչ կարեկցի, ոչ խնայէ, և ոչ ներէ:

Զօրութիւն այսր կրից է այնպէս քաջ իմացեալ 'ի նոցունց իսկ Ամերիկացւոց, մինչ զի յայն անձնատուր լինին միշտ առ 'ի զարթուցանել զժողովուրդս իւրեանց առնուլ զէնս. Յորժամ երիցագոյնք ցեղի իւրեանց նկրտին սթափել 'ի դատարկութենէ զերիտասարդսն, եթէ ցանկայ գլխաւոր ոք հրաւիրել զգունդ մի մարտկաց զհետ երթալ ինքեան առ 'ի ասպատակել զգաւառ ինչ թշնամեաց, առաւել հաւանեցուցիչ պատճառք պատերազմական ճառամաբանութեն նց հանեալ են 'ի վրէժխնդրութենէ. « Ոսկերք համաշխարհկաց մերոց ասեն, անկեալ դնին անթաղք. անկողին նց արիւնաթաթաւ տակաւին ոչ է մաքրեալ, հոգիք նց աղաղակեն ընդդէմ մեր. 'ի դէպ է խաղաղացուցանել զնս. Արթիցուք գիշատել զազգն, յորմէ խոշոշեցան նոքա. Մի ևս կայք 'ի նստիլ գատարկ 'ի վն ակմբից ձերոց. բարձրացուցէք զտատուր, մխիթարեցէք զոգիս մեռելոց. և ասացէք նց, թէ խնդրեսցին վրէժք նց: »

Խրախուսեալք յայսպիսի յորդորանաց երիտասարդք՝ առնուն վաղվաղակի զզէնս իւրեանց սաստիկ յափշտակութեբ կրից, որոտան զցուցս պատերազմի. փափին անհամբերութեբ առ 'ի շաղախել զձեռս յարեան թշնամեաց իւրեանց. Ամենք 'ի սոսկական գլխոց ժողովին յաճախակի զփոքրիկ գունդս իւրեանց. և յարձակին 'ի վն ցեղի իւիք թշնամւոյ առանց խորհրդակցելոյ ընդ կանոնաւորչաց հասարակութեն. Մի միայն մարտիկ դրդեալ 'ի բերմանէ մտաց կամ 'ի քինախնդրութենէ առնու զվահանն, և երթայ ընդ բդմ հարիւրաւոր մղոնս յանկարծ հասանել 'ի վն և կոտորել զհակառակորդ ոք վտարանդի:

Նշա- Տուպինամբա- նաւորաւոր ճառն Նց:

(41) || Այս ծանեայ զՀնդիկս, ասէ անձն որ քաջ տեղեակ եղանակի կենցաղոյ նց. և տեսի զնս երթալ Հազար մղոնս միայն յաղագս վրէժխնդրութեան ընդ անմատոյց անտառս, ընդ լճորս և ընդ լերինս, ընդ երկայն և ընդ տաժանելի ճախինս, նշաւակք չափազանցութեանց տօթոյ և ցրտոյ, փոփոխմանց յեղանակաց, քաղցու և ծարաւոյ. Այնպիսի է մշտաբորբոք և վրէժխնդրական խառնուած նց, մինչ զի արՀամարՀեն զայս ամ վիշտս իբրև երևակայական իրս, յորժամ յաջողի նց շաՀիլ զգագաթ մարդասպանի միոյ, կամ թշնամւոյ ուրուք. և Հանգուցանել զանՀանգիստ Հոգիս մեռելոց ազգականաց իւրեանց. Ադոլէր Վէրա. Ամեր. Հնդկաց: ||

Կործողութիւնք նշանաւոր պատերազմականի ուրուք յոյն առանձին արշաւանն կերպաւորեն քաջ ատեալ զնախապետական մասն պատմութեան Ամերիկեան իրիք ճակատամարտի:

(42) || Ի պատմութեան Համբաւաւոր պատերազմին 'ի մէջ Անկղիացւոց և Իրոքեզաց քաջագործութիւնք Փիւքարեթայ Հաշակաւոր զօրավարի Անկղիացւոց արարեալ մեծագոյն մասամբ ի նմանէ միայնոյ կամ ընդ միում կամ ընդ երկուց ընկերաց նախապետարար Հանդիսանան. Աղէք Քօքէրէ եւ Բօլօրէն Վէրա. Հնդ. ազգաց: ||

Նորիգացիք նց ցուցանեն ոչ տեսանել կայսարիկ անկանոնաւոր յարձակմանս. վն զի զիմեն 'ի մալեցուցանել զժողովուրդ իւրեանց ընդ պատերազմական Հոգին, և յինտելացուցանել զնս առ ձեռներեցութի և առ փառս. Այլ յորժամ պատերազմն է ազգային և արարեալ Հրապարական իշխանութե, բացորոշութիւն են յամր և կերպականք. Քողոմին մեծագոյնքն, Հալորդեն զկարծիս իւրեանց Հանգիտական խօսակցութիւք. քննեն Հաստատութե զօրպիսութի ձեռնարկութեն, և կշռեն զօգտակար և զվնասակար Հետևութիւն նր ե-

րեւելի

բեւելի իմն մասամբ քաղաքական ընտրողութեն և զգօնութեն. Խորհուրդ հարցանեն քահանայից և հմայից իւրեանց, և երբեմն և ս կանանց իւրեանց. Եթէ որոշումն է մի պատերազմի, պատրաստին առ այն մեծաւ խորովք. Առաջնորդ որ մատուցանէ զանձն յառաջնորդել զօրաց, և է ընկալեալ. Այլայն ոչ որ ստիպեալ է հետևել նմա. Որոշումն հասարակութեն առ 'ի սկսանել զթշնամութիւն ոչ դնէ պարտաւորութի 'ի վ[երայ] անդամոյ ուրուք կցորդ լինել պատերազմին. Իւրաքանչիւր անհատ է միշտ տէր գործելոյ իւրոյ. և գիմագրաւ լինի առ ծառայութին բոլորովին կամաւորաբար:

Ակզբունք, ըստ որոց կանոնաւորեն նոքա զինուորական ընթացս իւրեանց, թէպէտև ամենեւին տարբերք 'յայնցանէ, որք ունին զտեղի 'ի մէջ ազգացն առաւել կիրթ և առաւել բազմամարդ եղելոց, յարմարին առ քաղաքական կայութի նց և պատեառ բնութեն երկրին, յորում գործեն. Ոչ բանակին երբէք յոգնախուռն բազմութք. քանզի այս պահանջէր զմեծագոյն ջան զգուշութեն և ճարտարութեն, քան զոր 'ի գործ ածիցի 'ի մէջ վայրագաց, առ 'ի նախահոգալ զպարուստ նց մինչև տէէ չուն հարկաւոր ինչ մղոնաց ընդ սոսկալի անտառս, կամ ճգհորդութի իմն երկայն 'ի վ[երայ] լճաց և գետոց. Խումբք նց ոչ երբէք ծանրաբեռնեալ են կարասեօք կամ համբարօք ռոճկաց. Ամենայն պատերազմական բաց 'ի զինուց իւրոց տանի զխախաթ մի և զքսակ մի լուսեալ մախծեի. և այսպէս երևի բոլորովին հանդերձեալ և պատրաստական առ զինչ և իցէ ծառայութի. Յորոշեալ ինչ տարակացութեն 'ի սահմանէ թշնամեաց՝ ցրուին ընդ անտառս. և կերակրին երէւքն, զորս սպանանեն, կամ ձկամբն, զոր ըմբռնեն. 'Ի մերձենալն յանդաստանս ազգին, որում ձկտին 'ի դիմի հարկանել, ժողովեն զգունդս իւրեանց և յառաջադէմ լինին միշտ մեծագոյն զգուշութք. Յա-

Նողա- նոկն շորո- նոկերց և պարտե- րուլն.

ռաջխաղան յաւէտ ծնգհաւ խաբէութիւն և դաւանաց. Ոչ գտնեն զփառս իւրեանց յարձակման 'ի վր թշնամեաց յայտնի զօրութեք. Յանկարծակի 'ի վր հասանել և աղարտելն է առաւել նշանաւոր վաստակ հրամանատարին, և բարձրագոյն հպարտութի հետեւողաց իւրոց. Պատերազմ և որսորդութիւն կարէ ասել միակ իրակութի նց. և մարքն զայն նովին հոգւով և նովին արհեստիւք. Երթան զկնի հետոց հակառակորդաց իւրեանց ընդ անտառս. հնարին յայտնել զապաստանարանս նց, թաքչին 'ի թաւ տեղիս մօտաւորս նց. շարունակեն կալ անդէն ընդ բազմաւորս, մինչև կարող լինիցին գահավիժել 'ի վր որսոյ իւրեանց, յորժամ է առաւել անքոյթ և անընդունակ ընդդէմ կալոյ. Եթէ ոչ պատահին թափառական հատուածովք թշնամեաց իւրեանց, յառաջխաղան դէպ գիւղօրէից. բայց այնպէս փոյթք 'ի գաղել զմերձիլ իւրեանց, մինչզի երթան սողալով ընդ անտառս, և մինչև ներկելով զմարմին նովին գունով չորացեալ տերևոց առ 'ի խորշել այսու սաքասիւ 'ի յայտնեալ լինելոյ. Եթէ ունին զայնքան բաղդ, զի ոչ լինիցին նշմարեալ, արկանեն հուր 'ի հիւղս նց 'ի խոր գիշերի. և սպանանեն զընակիչսն 'ի ժամանակին, յորում մերկ և առանց պաշտպանութե փախչին 'ի բոցոյն. Եթէ յուսան կարող լինել խոյս տալ առանց զհետ պնդելոյ 'ի թշնամեաց, տանին 'ի բաց զոմանս կալանաւորս. և պահեն զնս առ ահաւորագոյն իմն վախճան. Բայց եթէ հանդերձ ամ աչալրջութե իւրեանց և զգուշութե տեսանեն. թէ շարժմունք նց են ծանուցեալ, թէ հակառակորդն դիմեալ է 'ի զէնս, և թէ է նախապատրաստեալ առ 'ի ընդդէմ դառնալ, համարին յոլովակի խոհեմութե յետս ընկրկել. վարկանին իբր վերջին յիմարութե երթալ ընդդէմ թշնամւոյ միոյ, որ կայ 'ի պահպանութե 'ի հաւասար պայմանս, և տալն պատերազմ

տերազմ յընդարձակ դաշտի. Նաւել հանդիսա-
ցեալ յաջողութիւն է ձախորդութի իմն վն զօրա-
վարին, եթէ է գնեալ երևելի իմն կորստեամբ
հետևողաց իւրոց:

(43) ‖ Կեանք փորձանաւոր զօրավարի միոյ քաջ
սակայ է 'ի վտանգի. և է միշտ ընկեցեալ յատ-
ճանէն, զոր նա ստացեալ էր անցեալ քաջութբ
իւրովք. Ադամզ: ‖

Ոչ պարծին երբէք վն իւրեք յաղթութեան, եթէ
արատաւորեալ իցէ այն արեամբ հայրենակցաց
իւրեանց. Ընկանիլն 'ի պատերազմի փոխանակ հա-
մարեալ լինելոյ իբր մահ պատուաւոր, է ձախոր-
դութի իմն, որ արկանէ զնշաւակ պատերազմա-
կանի ուրուք ընդ բասրիւ յանդգնութեն և ան-
խոհեմութեն:

(44) ‖ Ամ զի գաղափարք հիւսիսային Ամերի-
կայեաց վերահայեցմամբ եղանակին տանելոյ զպա-
տերազմ ընդհանրապէս ծանուցեալ են, զխոս-
դութիս իմ, հիմնեցի միայն 'ի վն վկայութեն հե-
ղինակայն, որք ստորագրեն զայնս. Բայց նոյն
սկզբունք արմատացան նաև 'ի մէջ այլոց ազգաց.
Անտի ոմն քարոզիչ տուեալ է զծանօթութի
իմն զինուորական գործողութեց ժողովրդեանն մե-
ծին Տաքօի 'ի մէջ հարաւային Ամերիկոյ ան-
նեւն համանման գործողութեց Իրօքքհէզաց. Նո-
քա աւէ.շատ անձնատուր են 'ի պատերազմ, զոր
առնեն յաձախակի 'ի մէջ իւրեանց, բայց յաւէ-
ժարար ընդդէմ Սպանիացւոց. Սակայն արժանի
են կոչիլ մանաւանդ աւազակք քան զօրականք.
որովհետև ոչ երբէք ընդդէմ դատնան Սպանիացւոց,
եթէ ոչ յորժամ կարեն յարձակիլ 'ի վն նշգո-
ղաւար, կամ զգուշաւորիլ 'ի վերպանաց զօրու-
թե լրտեսաց, որք են բացարձակ անխոնջելիք.
Սոքա նշմարեն զհարդանութիս Սպանիացւոց ընդ
մի, ընդ երկուս կամ ընդ երիս ամս, դիտելով
նաև 'ի գիշերի զամ իւ, ու առնի 'ի նոսա մե-

ծագոյն հոգաբարձութիւն. եթէ կարեն գտանել անդէն կամ ոչ զինդդիմակայութիւն, և ցորքան ոչ են կատարելապէս ապահովք զգործոյն, ոչ վտանգեն երբէք զանձինս առ մարտուցմն ինչ, այնպէս զի յորժամ յարձակին 'ի վր, առոյգք են զյաջողելոյն՝ և զերծք յամ վտանգէ. Այս լռեսցուք առ 'ի ոչ յայտնել երբեմն սողալով իբրև զկատուս 'ի ժամանակի գիշերոյ. բայց իբրև յայտնին, փախչին 'ի բաց բազում յաջողակութբ. Այլ թէպէտ և ոչ կամին երբէք ճակատել ընդդէմ Սպանիացւոց, սակայն յորժամ գտանին պաշարեալք 'ի տեղւոջ ուրեք, ոչ կարեն փախչել. պատերազմին յուսահատ իմն քաջութբ, և վաճառեն զկեանս իւրեանց կարի իմն ծանրագին. Ծօ- ծանոթ աշխարհագրութեան Դէծէն Լոտօլ : ||

Ոչ հա- [illegible]

Այս հանգամանք պատերազմի էր ընդհանրական 'ի մէջ Ամերիկոյ. և փոքրիկ և ոչ քաղաքականացեալ ցեղք սփռեալք ընդ զանազան գաւառս և կլիմայս իւրեանց ցուցանէին առաւել զաչալրութիւն ինչ քան զհամարձակութիւն 'ի վարելն զթշնամութիս իւրեանց. Զարմացեալ զանազան հեղինակք ընդ նմանակ իմն գնացս ներհակ գաղափարաց և սկզբանց Եւրոպիոյ, մինչեն թէ այն յառաջ գայ 'ի տկար և 'ի վեհերոտ իմն հոգւոյ մասնաւորք Ամերիկացւոց, որք անընդունակք են ազնուական և այրական իմն կրթութեն. Սակայն յորժամ միտ դնեմք, թէ բազումք յայսց ցեղից յառիթմն, որք խնդրեն զարտաքոյ կարգի թեւակոխութիս, ոչ միայն պաշտպանեն զանձինս յամառ երեսաւորութբ, այլ և 'ի դիմի հարկանին թշնամեաց իւրեանց համարձակագոյն քաջասրտութբ, ունելով զքաջութի հոգւոյ վերնագոյն քան զըմբռնումն վտանգի, կամ քան զերկիւղ մահու, պարտիմք վերագրել զունակական զգուշութի նց այլում իմիք պատճառի, քան բնական երկչոտութեն նց. Իւր մարդկան յիրաքանչիւր ցեղի է

այնպէս

այնպէս փոքր, և գժուարութիւն սնուցանելոյ զնոր անդամն 'ի մէջ խստութեանց վայրագ վիճակին է այնպէս մեծ, մինչ զի կենանք քաղաքացւոյ ուրուք է անտաՀմանաբար մեծագին, և պաՀպանութի իւր եղանի ծանրակշիռ իմն առարկայ քաղաքականութեան նց. Եթէ պատուամոլութիւն լեալ էր նոյն 'ի մէջ տկար ցեղիցն Ամերիկացւոց, որպ 'ի մէջ կարող ազգացն Եւրոպացւոց, եթէ ուսուցեալ էր նց արՀամարՀամ վտանգի և մաՀու Հետամուտ լինել Համբաւոյ կամ յաղթութե, պարտ էր նց տապալել 'ի սկզբանց այնպէս անյարմար եղելոց պայմանի նց. Բայց ուր Հասարակութիք նց են աւելի բազմամարդք, որպ զի կարող լինիցին ներգործել երևելի ուժգնութ, և կրել զկորուստ ոմանց յանդամոց իւրեանց առանց ձնալոյ յայնմանէ զգալաբար տկարացեալ, զինուորական գործողութիք Ամերիկացւոց նմանին մօտաւորագոյնս գործողութեանց այլոց ազգաց. Պրասիլեանք, որպ և ցեղքն կայացեալք առ ափամբք գետոյն Փլաթայ բանակ կազմեն քաջ ստէպ յայնպիսի յոգնաթիւ գունդս, զի արժանի են անուան զօրաց. գրգռեն զՀակառակորդս իւրեանց, և զինուորեալ լինին 'ի կանոնաւոր իմն պատերազմ. և տեւեն կալ 'ի մաքառման այնպիսի յուսաՀատ մոլեգնութբ բնականաւ մարդոց, որք ոչ ունին զայլ նպատակ պատերազմի, բայց եթէ ջնջել զթշնամիս իւրեանց, և որք ոչ տան և ոչ ընդունին երբէք զներումն:

(45) Լէրի, որ եղև ականատես վկայ յառաջ խաղալոյ Թուփինամբոսաց Պրասիլեան ցեղի 'ի պատերազմի միում ընդդէմ Հզօր ազգի իմիք թշնամեաց իւրեանց, ստորագրէ զքաջասրտութի նց և զամեՀութիւն կենդանագոյն եղերօք. Ես ասէ ընդ այլում Գաղղիացւոյ փոքր մի Հետաքրքրագոյնս՝ մեծաւ վտանգաւ մերով, (զի եթէ 'ի թշնամեաց կալեալ կամ վիրաւորեալ լինէաք, զիշատման ենթակայ էաք) խուժադուժից մերոց 'ի պատերազմ երթելոց կամեցայ ընկերել. Արդա թըռչով

չորեքհազար արք ընդ թշնամեաց առ ծովեզերբն մարտեան այնքան գազանութեամբ, մինչև ո և լցէ կոտորեալ և մոլեգնելոց գեր 'ի վերոյ լինել. Իբրև զաւազակին տեսին զթշնամիս. մեծաձայն գոյժ բարձին. Այս ազգ այնչափ գազան է և գժնեայ, մինչ զի ցորչափ՝ եւս դուզնաքեայ ինչ ոյժ մնայ, անընդհատ մրցին. և ոչ երբեք փախուստ առնուն. Զայս 'ի բնէ տնկեալ համարիմ 'ի նս. Ակայեմ յայսմ վայրի, թէ ես, որ ոչ միանգամ եթէ զհետևակաց և եթէ զհեծելոց զահագին բազմութիւնս 'ի ճակատ յարդարեալս տեսի աստանօր, ոչ երբեք այնչափ հեշտութեամբ հայեցայ 'ի տեսանելն զգունդս հետևակացն զինուք շողշողեալս, որչափ 'ի պատերազմիլ նց. Ասէ Վեսպու-չիոսն Փլորենտացի: ||

'Ի հզօր թագաւորութիւն Մեքսիկոյի և Փերուայ գումարէին մեծամեծ զօրք. լինէին յաճախ պատերազմունք. և տեսակութիւն և գործածութիւն պատերազմին էին տարբերք յեղելոցն 'ի փոքրիկ ընկերութիւնս, որք առնուին զանուն ազգաց:

Անքնու- Այլ թէպէտ և հնարողութիւնն և ուշադրութիւնն են
թիւն հանգամանք կարևորք, և մանաւանդաբար՝ ուր ա-
կարգէ ռարկոյ պատերազմին է խաբելն, կամ յանկար-
կամ իր- ծակի ըմբռնելն, և թէպ Ամերիկացիք, յորժամ
թութիւն: գործեն իւրաքանչիւր առանձին. ցուցանեն զս-քանչելի ինչ աստիճան խորամանկութեան 'ի գաղելն զշարժմունս իւրեանց և 'ի հոլանելն զհակառակորդին, սակայն է նշանակելի ինչ, զի յորժամ առնուն ասպարէզ խումբ առ խումբ, գտանին յաճախակի պարաւանդեայք առ 'ի գործ ածել զզգուշութիւնս առաւել եականս առ ապահովութիւն իւրեանց. Այնպիսի է դժուարութիւն ընտելացուցանելոյ զվայրագս առ ստորակարգութիւն և առ 'ի գործել միաբան, այնպիսի է անհանդուրժողութիւն նց 'ի ներքոյ սանձի, և այնպիսի է մտաքերութիւն և նախադատութիւն նց, մինչև հազիւ երբեք

երբեք պատահի, զի հաւանեսցին համակերպիլ խորհրդոց և առաջնորդութեանց զօրավարացն. Մէ գնեն երբեք պահապանս շուրջ զանդեաւն, ուր ագանին. և յետ գնալոյ զհարկաւոր ինչ մղոնս առ 'ի յանկարծակի ըմբռնել զթշնամին ոք, ինքեանք իսկ ըմբռնեին և կոտորեին 'ի ժամին, յորում ննջեն 'ի խոր քուն, և առանց խորհելոյ, թէ 'ի վտանգի եղեալ են.

Եթէ հանդերձ այսու անփոյթութեամբ և յանդգնութեամբ, որք յաճախ վրիպեցուցանեն զառաւել արուեստագործ առաջարկութիւնս իւրեանց, գտանեն նոքա զթշնամին ոչ նախապատրաստեալ, խոյանան 'ի վր մեծագոյն ուժգնութեամբ. և կորզելով զգագաթամիջնիս նց ամենեցուն, որք անկանին զոհ կատաղութեան նց, տանին 'ի տուն հանդիսիւ զայնպիսի օտարոտի յաղթանակս.

(46) ‖ Ամերիկացիք, որպ և այլ ամենայն ազգք՝ հատանէին 'ի սկզբանն զգլուխս թշնամեաց սատակելոց 'ի նոցանէ 'ի պատերազմի, և տանէին 'ի բաց իբր յաղթանակս. Բայց գտանելով զայնս մեծ արգելս 'ի ժամանակի ընկրկման իւրեանց, զոր տանէին միշտ խուճապելով, և քաջ առէպ ընդ մեծ տարածութի իմն երկրի, յետոյ շատանային կորզելով զգագաթամիջնիս նց. Այս սովորութի թէպէտ և ամ իրօք 'ի գործ ածեալ 'ի մէջ հիւսիսային Ամերիկոյ, ոչ էր անծանօթ 'ի մէջ հարաւային ցեղիցն. Լօծանուս : ‖

Զայսոսիկ պահէին յետոյ իբր յիշատակարանս ոչ միայն քաջութեան իւրեանց, այլ և վրիժուցն, զոր բազուկ նց առեալ է 'ի ժողովրդենէ միոջէ, որ էր նպատակ հրապարակական ոխերիմութեանն. Ին և փոյթք յըմբռնելն զկալանաւորս. 'Ի ներգործութեան յետ ընկրկման իւրեանց՝ եթէ յուսան առնել զայն առանց հարստահարեալ լինելոյ, կալանաւորքն հասարակաբար են զերծք յինչ և լցէ թշնամեանց. և վարին ընդ նոսա օրոշեալ իմիք

առաք-

աստիճանս մարդասիրութեան, թէպէտ և պահեն զնս մեծագոյն հնազանդութիւն:

Մարտ ընդ կալանաւորոց:

Ես այսր կամիմ որոշել ինչ ժամանակի վերա-ռին մասի 'ի նոյն կառավարութիւն, նա զի ասացաք, մանկանց. Աշխարհականի իբրև մերձենան 'ի սահմանս խրեանց, ոմանք 'ի թուոյ նց արձակին առ 'ի ծանուցանել հայրենակցաց զսարի նոյն, զոր ընկալան շահաւորութեան. և յայնժամ սկսանին եղկելիքն այնոքիկ զգալ զդառնութի վիճակի խրեանց. Այնուք գեղջն 'ի միասին ընդ մանկանց, որք տակաւին ոչ են ժամանեալք 'ի հասակ կրելոյ զգէնս, ժողովին, և բաժանելով յերկուս չորս, ընդ որս պարտ է անցանել կալանաւորացն, հարկանեն զնս և կեղեքեն գաւազանօք կամ քարամբք անողորմաբար. Օրէնք այսր առաջնոյ հեղման կառավարութ ընդդէմ թշնամեաց, հետևին ողջք մն կորստեան այնց հայրենակցաց խրեանց, որք մեռեալ են 'ի ներգործական ծառայութեն, հանդերձ բանիւք և շարժմամբ, որք եւեթ յայտ առնել զխորագոյն անձկութի մորմոքմանն. Բայց 'ի միում վայրկենի 'ի սոյն զնչան ինչ դադարին արտասուք. և յանկարծական և անբացատրելի անցիւք 'ի տրտմութէ 'ի հաճութենն առ զեղմունս ուրախութե սկսանին առնել զյաղթութիւն խրեանց ամ մոլեկան հրճուանօք խմագոյն յաղթանակին. Իրողութի կալանաւորաց տակաւին մնայ անորոշ. անկ է ծերունեաց բացորոշել զայն. Ոմանք սահմանեալ են առ տանջանս առ 'ի մահ առ 'ի յազգեցուցանել զքինախնդրութի յաղթողացն. ոմանք առ 'ի լնուլ զտեղի արանցն, զորս հաստատակութեն կորուսեալ է յայնմ կամ 'ի նախնագոյն պատերազմունս. Ներապահեալքն մի այսր մեծմեծագոյն պիտոյից ածեալ լինին 'ի հերզն նոցա, որոց սպանեալ են սիրելիք. Կանայքն ընդ սոսա եղանեն նց առ գրան. և եթէ ընդունին զնոսա, չարչարանք նց վախճանեալ են. Չուծն որդեգրել զնս. և ը ամյ նց նստուցանին 'ի

վեր

մի՛ ակմբի մեռելոյն. Մոռանան ինքեանք զանձուն նմ, ունին զատուցեալ նմ. և լինին վարիլ ընդ նմ առ յապայն ամ գործով, որ պարտի հօր միում, եղբօր միում, ամուսնոյ միում, բարեկամի միում. Մի՛ եթէ մի բերման ինչ մնայ, կամ յարմար բղձանաց վրէժխնդրութեն կանայք ամն միոյ ոչ կամիցին ընդունել զկարանաւորն առաջի մատուցեալ նմ, հաւասար է դատապարտութի իւր. և չիք իշխանութիւն, որ կարող իցէ ապրեցուցանել զնա 'ի տանջանաց և 'ի մահուանէ:

Մինչ վախճան նոցա տակաւին է 'ի կախ, նոյն իսկ կալանաւորք երևին բոլորովին անտարբերք առ այն, որ կարէ պատահիլ նոցա. Խօսին, ուտեն, ննջեն, ոչ եթէ լինէին 'ի կատարեալ անգործութեն և ոչ ինչ վտանգ սպառնայր նմ. Յորժամ վախճանական վճիռն ծանուցանի նոցա, ունկնդրեն այնմ զուարթ դիմօք, գոչեն զցուցմն մահուան, և պատրաստին 'ի կրել այրաբար. Խողովին յաղթականք նմ իբր առ հանդիսական իմն տօն, հաստատեալք 'ի միտս դնել զքաջասրտութի կալանաւորացն առ վերջին փորձ. Նա զհետ գայ տեսարան իմն, որոյ պարզ գծագրութիւն բաւական է յընդարմացուցանել զսիրտս սարսափմամբ, ուր մարդիկ ընտիրք են առ հեզագոյն սահմանադրութիւն, յանձնածել զտեսակ իւրեանց և առ 'ի շարժիլ կենդանաբար առ տեսութի մարդկային չարչարանաց. Կալանաւորքն կապեալ են մերկ ընդ ցից ինչ, բայց այնպէս, զի կարիցեն շարժիլ շուրջանակի. Մեներեան նոքա, որք առաջի կան, արք, կանայք. մանկունք յարձակին 'ի վը նմ իբրև այսս մոլեգնութեան. Մենայն ազգ խոշտանգանաց, զորս ոխութի վրէժխնդրութեն կարէ երբէք գտանել, 'ի գործ ածի անդէն. Ոմանք զանգամս նմ հրացեալ երկաթովք, ոմանք պատառոտեն զմարմինս նոցա սրովք. այլք քանցեն զմիս յոսկերացն, իսկ են զեղնգունս նմ յարմատոց, և հատանեն և ոլորեն զմատն նոցա.

Մեցին

Որքին Ը. միմեանս 'ի հնարել զնորանոր տանջանս. Ոչինչ գիտէ կոպարուորել զվժականութիւն նոցա, երկնչելով ես և 'ի կարծելոյ զվրէժխնդրութիւնս իւրեանց, փութացուցանելով զմահ չարչարելոցն այնոցիկ. և այնպիսի է աշխուժութիւն նց 'ի խոշտանգելն, զի զգուշանան խորհրդով 'ի խոցելոյ զկենսականն ինչ մասն առ 'ի յերկարել այնպէս զայս ցաւագին տեսարան ընդ բազում աւուրս. Հանգերձ այնու ամ՟ի, զոր կրեն, շարունակեն զերգս յերգել զերգս մահուան իւրեանց համառօտն բարբառով. պարծին 'ի վ՟ս գործոց իւրեանց. նախատեն զտանջիչս իւրեանց, որպէս եթէ ոչ ունէին արհեստս բաւականս 'ի խնդրել զվրէժ բարեկամաց և ազգականաց իւրեանց. ազդ առնեն նց զվրէժխնդրութիւն, որ նախապատրաստեալ է նց. և զարթուցանեն զկատաղութիւն նց թշնամանօք և առաւել գրգռիչ սպառնալեօք. Ցուցանելն զանխռովախելի իմն քաջութիւն յայսպիսի սոսկալի կացուորութեն է առաւել նշանաւոր յաղթանակ պատերազմականի ուրուք. Խուսելն 'ի փորձոյ կամաւոր իմն մահուամբ, կամ դողալն յայնմ նկրդործութեան դատեալ է վատանուն և վեհերոտ մարդոյ. Եթէ ոք ցուցանէ զինչանս երկչոտութեն, զրաւեն զնա 'ի միում վայրկենի արհամարհանօք իբրև անարժան վարեալ լինելոյ առնարար. Խրախուսեալք յայսց սկզբանց կրեն առանց արձակելոյ զհառաչանս ինչ որ երևի անկարելի հանդուրժիլ 'ի մարդկային բնութե. Երևին ոչ միայն լինել անզգայ առ ցաւն, այլև ախորժել. || Խնայեա, ասաց ոմն 'ի ծերագունից Իրոքեզեաց յորժամ թշնամանք իւր գրգռեն էին զոմն 'ի տանջողաց իւրոց 'ի խոցել զնա, խնայեա զայդպիսիկ սրահարութիւդ, և արա զիս մեռանել հրով. որպ զի շունքս այսոքիկ 'ի դաշնաւորաց քոց ուսցին յօրինակէ իմմէ հանդուրժել այրաբար ||. Այս վեհանձնութիւն, որոյ են յաճախ օրինակք 'ի մէջ մարտկացն Ամերիկացւոց, փոխա-

նակ

նակ զարթուցանելոյ զզարմանս, կմ՛ շարժելոյ զկա-
րեկցութի, խմէ զամէնի հոգիս զայնոսիկ առ նո-
րանոր ներգործութիս անողորմութ. Պարտաւսալք
'ի վախճանի 'ի հակառակելոյ ը դ մարդկան, զո-
րոց ոչ կարեն զգեանել զկայունութիւնն, այն 'ի
գլխոյն յավշտակութեանս իմ կառաղութն առնէ
վախճան չարչարանաց նց. և բանոյ զնո 'ի կե-
նաց դաշունիմ իւրով կամ լախտիմ:

Օկնի այսր խժական տեսարանի բազում անգամ Եւրոպա
հետեւ միս այլ ոչ ինչ նուաղ սոսկալի. Եւ կա- ուղեն
րելով երբեք ցածուցանել զերջանաւոր հոգին վրէժ- խնդրու-
խնդրութե, որ եաց 'ի ներքս 'ի սրտի վայրագի նոցա
ուրուք, այս առիպէ յաճախակի զԱմերիկացիս յուշքղէնտեաց
ակ դաղանարար զերկեւլի անձինս զայնոսիկ, որք
լեալ են զոհ անագորոյնութե նց. 'Ի նախկին աշ-
խարհի աւանդութին պահեալ է զյիշատակ խու-
ժադուժ ազգացն Պ՝անոնիպալոց. որք կերակրին
մարդկային մսով. Բայց յամ մասին նորոյ աշ-
խարհի էին ժողովուրդք. որոց այսպիսի իմն բարք
էր ամենեին բնտանի. Նախաղօրանայր 'ի հարա-
ւային շարունակին, 'ի զանազան կղզիսն, և 'ի պես-
պէս նահանգս հիւսիսային Ամերիկոյ. Նաև յայն
մասունս, ուր պարակայք, որք ոչ գիտայեալ լի-
նին, խափանեցին ըստ մեծի մասին զայս սովորու-
թի, երեւի թէ իցէ այնպէս քաջ ծանուցեալ, զի
է տարրացեալ 'ի բարբառ լեզուի նց. 'Ի մէջ
Իռոքքհեզաց ոնն, որով բացայայտեն զլացորո-
շութի իւրեանց առնելոյ զպատերազմ ընդդէմ
թշնամւոյ միոյ այս է. ‖ Երթիցուք ուտել զազգն
զայն. ‖ Ամէ աղերսեն զօգնութի մերձաւոր ցե-
ղի ուրուք, հրաւիրեն զնա յմիգել զարդանակն
արբեալ 'ի մսոյ թշնամեաց իւրեանց:

(47) ‖ Ազգերք ցցն պատերազմին երեկին թեւադ-
րեալք 'ի նոյն դժնեայ հոգւոյ վրէժխնդրութե ‖
Ըստ երթամ 'ի պատերազմ առ 'ի առնուլ զվրէժ
մահուան եղբարց իւրոց. սպանից, ընկերաց. ազ-

գեցեց

րեցից զթշնամիս իմ. տարայց 'ի բաց զկալանաւորս. լափեցից զսիրտ նց, չորացուցից զմիս նց, արբից զարիւն նց, կորզեցից զգագաթամազնիս նց. և արարից դաշխուրանս 'ի գագաթանց նց. ‖ Պօսսու, ճնպհորդութիւնք ընդ Լուիզիանա. Այլև տեղեկացեալ եմ յանձանց, յորոց վկայութիւն կարեմ վստահանալ, թէ գոլով այժմիս նուաղեալ յոյժ թիւ ժողովրդեանն 'ի մէջ Հնդկային ցեղից, գրեթէ ուչ ոք 'ի կալանաւորաց նց ըունի զմահ. Համարեալ է իւր լաւագոյն քաղաքականութիւն խնայելն 'ի նոսա և որդէգրելն. Այն սոսկալի տեսարանք, զորս գծագրեցի, լինին այժմ այնպէս ցանցառակի, զի քարոզիչք և վաճառականք, որք կացեալ են ընդ երկայն ժամանակ 'ի մէջ Հնդկաց, չեն տեսեալ երբեք: ‖

Այլ ոչ իսկ այս սովորութիւն էր մասնաւոր բիրտ և անքաղաքական ցեղից. սկիզբն, յորմէ ծնեալ այն, արմատացեալ է այնչափ 'ի խորս ոգւոց Ամերիկացւոց, մինչեւ գոյր 'ի Մեքսիքօ 'ի միում յառաւել քաղաքականացեալ թագաւորութեանց 'ի Նոր աշխարհին. և կարեն նշմարել նշխարք ինչ սորա 'ի մէջ հեզագոյն բնակչացն Փէրուայ. Ոչ էր չքաւորութիւն կերակրոյ, որպէս ոմանք 'ի հեղինակաց պատկերեցին յինքեանս, ոչ էին ձանձրացուցիչ խթանք քաղցուն, որք բռնադատէին զԱմերիկացիս առ այս սոսկալի ճաշ 'ի վն թշնամեաց իւրեանց. Մարդկային միսն ոչ եղև երբեք ծառայեցուցեալ 'ի սնունդ յաշխարհի իմիք. և պէսպէս պատմութիւնք վերաբերեալք առ ժողովուրդս, որք համարէին զայն 'ի մէջ հայթհայթանաց սահմանելոց յապրուստ, յառաջ գան յանողորմութէ և 'ի սխալանաց ճնպհորդաց. Սաստումն վրէժխնդրութեն դրդեաց զառաջինն զմարդիկ առ այս խժական ներգործութի. Գազանագոյն ցեղք ոչ ուտէին, բայց եթէ զերիս կալեալս 'ի պատերազմի. կամ զայնոսիկ, որք էին նկատեալք իբր թշնամիս:

(48) Համօրէն ճանհորդք, որք այց արարեալ են մեծագոյն մասին ոչ քաղաքականացեալ Ամերիկեան ցեղից միաբանին յայսմ․ և է հաստատեալ յերկուց նշանաւոր պարագայից, որք դիպեցան յառաջին զանազան գաւառացն․ ՚Ի շահատակութեան Նարվաեզայ առ Ֆլօրիտա յամին 1528, Սպանիացիք էին վերածեալք առ այնպիսի վերջին թշուառութի մը սովու, մինչզի առ ՚ի պահպանել զկեանս իւրեանց ուտէին ՚ի հայրենակցաց իւրեանց զայնոսիկ որք մեռանէին․ Այս երևեցաւ այնպէս օտար ազգայնոցն, որք սովոր էին ուտել զկալանաւորս իւրեանց, մինչև եղեն զնա սոսկմամբ և ցասմամբ ընդդէմ Սպանիացւոց․ Թօրքուէմադա Մոնարքիա․ Հմտ․ Ռէլասիօնէն Ալվարոյ Նունեցոյ ՚Քապեցայ դէՎագայ․ ՚Ի ժամանակի պաշարման Մ՚էքսիքոյ Թէպլէան Մ՚էքսիքացիք ուտէին ագահաբար զՍպանիացիս և զԹլասքալացիս, զորս կալանաւորեալ էին, եւ մեծագոյն խստութեն սովոյն, զոր կրէին նոքա, ոչ ներածեաց զնա հպիլ ՚ի մեռեալ մարմինս հայրենակցաց իւրեանց․ Պէռ․ Տիազ տէլ Քաստիլլօ, Պատմութիւն Նորոյ Սպանիոյ։ Կանայք և մանկունք ոչ էին առարկայք թշնամութեն․ և եթէ ոչ լինէին կոտորեալք ընդ ժամ առաջին յարձակմանն ՚ի գաւառ թշնամւոյն, հազիւ երբեք կրէին զվրէժխնդրութի նց իւր խորհրդածեալ գործ։

Ժողովուրդն հարաւային Ամերիկոյ առնէ զվրէժխնդրութի իւր փոքր մի զանազան եղանակաւ, այլ ոչ նուազ յամառ մոլեգնութբ․ Կալանաւորք նց յետ պատահելոյ յառաջին մասս իւրեանց նոյն օտար ապաւնչականութեն, ուր ՚ի մէջ հիւսիսային Ամերիկացւոց, ոչ միայն են զերծք ՚ի թշնամանաց, այլ և վարեալ են մեծագոյն քաղցրութբ․ Հրճուեցուցանին և գգուին․ և ոմանք յառաջ դեղեցիկ կանանց սահմանեալ են առ ՚ի ընկերել նց և քաջալերել․ Այս է զիւրին աւելպատճառն այսմ
մասին

մասին վարման նց, եթէ ոչ վերադրեսցուք զայն նորութեան իմիք 'ի սեռի անողորմութեան. Մինչ դեռ երեւին նոքա ջանալ սիրելի առնել կալանաւորաց իւրեանց զկեանս, ներկայացուցանելով նց զնմ տեսակ վայելման, որ կարէ հաճոյական առնել զայն, դատապարտութեան նց աններհանջելի սահմանեալ է. Ի պայմաննեալ աւուր մտեալ յաղթական ցեղն ժողովլ. կալանաւորն բերի արտաքս մեծաւ հանդիսիւ. որ հայի 'ի նախապատրաստութիւս զոհագործութեանն այնչափ անտարբերութեամբ, ուր եթէ նա ինքն ոչ լինէր զենլին. և երթալով ընդ առաջ կատարածին իւրում անփոփոխ հաստատութեամբ՝ վճարեալ է միով և եթ հարուածով. Ի վայրկենին, յորում անկանի, կանայք առնուն զմարմինն, և եփեն զայն վս խրախճանի. Հաղախեն զօրգիս իւրեանց արեամբ առ 'ի վառել 'ի սիրտս նց զատելութիւն իմն առ թշնամիսն. որ ոչ ևս շիջցի երբէք. և ամենեքեան միաբանին յուտել զմիս նր սխրալի իմն անձկանօք և ցնծութեամբ. Ուտելն զգէշ թշնամւոյ ուրուք պատուեցելոյ համարին իբր առաւել լրացեալ և առաւել ցանկալի հաճութիւն վրէժխնդրութեան. Յորում և իցէ տեղւոջ այս սովորութիւն նախաշօրանայ. կալանաւորք ոչ փախչին երբէք 'ի մահուանէ. բայց ոչ են տանջեալք նովին անողորմութեամբ որպէս 'ի մէջ ցեղից ոչ յուժ սովորելոց առ այսպիսի գործելի սեղան:

(49) ‖ Բազում եղականագոյն են պարականք վերաբերեալք առ վարումն կալանաւորաց 'ի մէջ ժողովրդեան Պրասիլեայ գտանին 'ի պատմագրութեան Սթատիոսի Գերմանացւոյ պաշտօնատարի կարգեցելոյ առ ծառայութիւն փօրթուկէզաց հրատարակեցելոյ յամին 1556. Սա կալանաւորեցաւ 'ի Թուփինամպօսաց. և մնաց անդէն կալեալ զամս ինն. Բազում անգամ առաջիկայ եղև այնց սոսկալի խրախճանից, զորս ստորագրէ. և նա ինքն սահ-

մանեալ եղեւ առ նոյն անողորմ վախճան. որպէս զայլ կալանաւորսն. բայց ապրեցոյց զնեանս իւր ճգնմբք արտաքոյ կարգի քաջասրտութե եւ խորամանկութե. Պարոն Լէրին, որ ընկերացաւ ընդ պարոն Վիլէկանեոնեաւ 'ի շահատակութեն առ Բրասիլէ յամին 1556, որ եւ եկաց ընդ երկար ժամ յայնմ գաւառի միաբանի ընդ Աթատիոսի յամ ծանրակշիռ պարագայս. Նա եղեւ սուէպ ականատես վկայ տարաղուն, որով Բրասիլեանք վարէին զգերիս իւրեանց. Զայլ զանազան հնարալի մտանաւորութիւս 'ի բաց թողեալս յերկուց 'ի սոցանէ յիշատակէ հեղինակ ոմն փորթուկէզ. Փուրք Փիլձէր : ||

«Քաջութի իւրաքանչիւր պատերազմականի Ամերիկացւոյ կարելով դնել առնմանակ իմն փորձ, մեծ կէտն դաստիարակութե եւ կրթութե 'ի նոր աշխարհին կայանայ 'ի կերպաւորել զոգին առ 'ի պինդ ունել զայն. Յորժամ ազգք առնեն զպատերազմ յայտնի զօրութե հրաւիրեն զթշնամիս 'ի մարտ պատերազմի, եւ յաղթեն նչ վերնագունութե արհեստի եւ քաջասրտութե իւրեանց. զինուորք դաստիարակեալք են առ 'ի լինել գործօնեայք, արիականք եւ ձեռներէցք. Բայց յԱմերիկա, ուր բնաւորութի եւ սկզբունք պատերազմի են տարբերք, որակութին առաւել մեծավարկ է կրաւորական քաջութին. Ոստի առաջին ջան Ամերիկացւոց է ստանալն զքանքար ինչ, որ ընդունակացուսցէ զնա բերել այրաբար յորժամ համարձակութի իւր եղեալ իցէ 'ի վտանգի. Եւ քանզի երիտասարդութի այլոց ազգաց կրթի մարզացի 'ի գործս ներգործականութե եւ զօրութե, Ամերիկոյն մրցի ցուցանելով զհամբերութի 'ի չարչարանս. Պատացուցանեն զջիլս իւրեանց կամայական փորձովքն իւրեանց, եւ ստութեանաբար սովորին տանել կսկըծագոյն վշտաց առանց ցաւելոյ յայնմանէ. Մանուկ մի եւ աղջիկ մի կապեն 'ի միասին զմերկ բա-

զուկս, և դնեն 'ի միջի զխառնեալ կայծակն ինչ առ 'ի տեսանել, թէ ո՛ է առաջին յոյժ տալոյն այնմ և՛ 'ի թօթափել զայն. Նախանձագոյն փորձք 'ի գործ ածեալք յԱմերիկա, յորժամ երիտասարդ մի ընկալեալ է 'ի դաս մարտկաց, կամ յորժամ մարտիկ որ յառաջ շարժեալ է առ աստիճանաւորութիւն գլխաւորի կամ գլխոյ, համեմատին այսմ գաղափարի քաջասրտութեան. Ո՛չ են առհաւատչեայք քաջութեան, այլ համբերութեան. ոչ են փորձք ընդունակութեան նորա 'ի վնասելն, այլ 'ի կրելն. 'Ի մէջ ցեղիցն առ ափամբք Օրինոքոյի եթէ մարտիկ որ ձկտի առ աստիճան զօրագլխի. նորընծայութեան իւր սկսանի երկայն իմն ծոմօք առաւել խստագունիւ քան զոր պահեալ իցէ երբեք 'ի ժամանակի անապատաւորէ ումեք. Ընդ աւարտելն այսորիկ ժողովին գլխաւորքն, իւրաքանչիւր 'ի նոցանէ տայ նմա զերիս հարուածս մեծ խարազանաւ իւիք, և հարեալք այնչափ բռնութեամբ, մինչզի մարմին իւր մնայ իբր թմրեալ. և եթէ նա տայ տեսանել զգուշին նշան անհամբերութեան, կամ զգայականութեան, մնայ անկեալ 'ի շնորհաց միշտ, և է 'ի բաց մերժեալ իբր անարժան պատուոյ. Յետ միջոցի իրիք կայունութեան համբակլին փորձեալ է տաւել տանջողական իմն եղանակաւ. Տարածանեն զնա 'ի վերայ ականբի միոյ կապելով զձեռսն պնդագոյնս. և արկանեն 'ի վերայ զանհամար իմն բազմութիւն թունաւոր մրջմանց. որոց խայթուածն պատճառէ զզգալի իմն կսկիծ, և յառաջ ածէ զբռնական ինչ բորբոքումն արեան. Դատաւորք արժանեաց իւրոց կան շուրջ զականբիւն. և մինչ անագորոյն ժժմունքս այսորիկ կուռելն յառաւել զգայական մասունս մարմնոյ իւրոյ, հառաչանք ինչ, հեծութիւն իմն. շարժումն ինչ կամաւոր, որ յայտ արասցէ զայն, զոր զգայ նա, արտաքսէ զնա յարժանաւորութենէն, զոր փափագի ստանալ. Նա և յետ այսր վկայութեան քաջութեան իւրոյ ոչ

դատի

դատի կատարելապէս փորձեալ, այլ պարտի ունել այլում իմիք գործողութեան առնել սարասիելոյ քան որչափ կրեալ իցէ ցայնժամ. Կախեալ է նա 'ի մի ակնի իւրոյ, և ծածկեալ ունելով զար-մունկս. Նոյն ինչ ներխեալ բանջարոց լուցեալ է 'ի ներքոյ, այնպէս զի զգայ զտապ նր, և է շրջապատեալ 'ի ծխոյն. Թէպէտ և խանձատեալ և իբր խեղդեալ, պարտի շարունակել զկրելն նո-վին համբերատար անզգայութեամբ. Նաղումն կորն-չին յայսմ խիստ փորձի կայունութեան իւրեանց. բայց նոքա, որք ելանեն յայնմանէ զօրութեամբ, ընդունին վնչանս նորոյ պաշտօնի իւրեանց ընդ հանդիսիւ. և են յետոյ զօրավարք փորձ անվե-հերք. որոց յառաջ խաղալն 'ի գժուարագոյն կայա-ցորութիւն պատուելոց է զերկիր իւրեանց. 'Ի մէջ հիւսիսային Ամերիկոյ փորձն, որ առնի պատերազ-մականի ումեք ոչ է այնպէս կերպական, և ոչ այնքան դժնդակ. Թէպէտ յառաջ քան զթոյլ-տալն երիտասարդի ումեք կրել զէնս, փորձի համ-բերութիւն իւր և քաջութիւն ծայրի հարուածոց. հրոյ և նախատանաց. որոց վերջինք ամբարտաւան ումեք հօգւոյ առնել անհանդուրժելի են քան զերկուս առաջինսն:

Աւրալի անվեհերութիւն, որով Ամերիկացիք տանին կատարելագոյն տանջանաց, շարժեաց զոմանս 'ի հեղինակաց ենթադրել, թէ հայելով 'ի մասնա-ւոր ակարութիւն կազմուածոցն, զգայութիւն նց ոչ իցէ այնպէս սուր որպ զայլոց ժողովրդոցն, ճշգր-տիւ ըն սարասին, որով կանայք և անձինք թոյլք ունակութիւն նշմարին լինել նուազ թափանցեալք 'ի ցաւոյ քան զարս կորովիս. որոց չիք են պնտա-գոյնս կապեալք. Սակայն բաղկացութիւն Ամերիկաց-ւոց ոչ է այնքան զանազան 'ի միացեալ մարդկային տեսակէ, զի կարասցէ ծառայել փոխանակ փաս-տի առ այս եղական զանազանութեան. Այս ածան-ցի 'ի նն 'ի սկզբանէ խմէքէ պատոյ ընչեցելոյ ժա-

մանկան, և մշակեցելոյ այնչափ խնամով, որ հե-
ղու 'ի մարդն ես և յատուկ ուրոյական վիճա-
կի իւրում զվեհանձնութի իմն դիւցազնական. առ
որ իմաստասիրութիւնն ջանացաւ ընդունայն սովո-
րեցուցանել զնա, յորժամ նա բարձրագոյնս մշա-
կեալ է և կրթեալ. Ասուցանի Ամերիկացւոյն նկա-
տել զայս անյաղթելի կայանաւն իւր ակնդէտ տար-
որոշիչ մարդոյ և բարձրագոյն աստիճան, յոր կա-
րիցէ ժամանել մարդիկ ոք. Գաղափարք, որք ազ-
դեն 'ի գնացս իւր, և կիրք, ողք տիրեն սրտի իւ-
րում, են սակաւք. Այնչ գործեն այսչափ առա-
ւել հաստ արդեամբք ի նա, քան յորժամ խառ-
նի 'ի միոս բազմութիւն իմն առարկայից, կամ ընդ-
դէ զնա պէսպիսութի ցանկութեց իւրոց. և յոր-
ժամ պատճառն, որ ներգործէ զօրութբ 'ի մի ո-
գւոյ վայրաքին, խթէ զնա հանդուրժել արժանա-
ւորութբ. Նա առնի քաջասրտութի զայն, որ մարդ-
կային համբերութե երբեք անկարելի առնել. Այլ յոր-
ժամ քաջութի Ամերիկացւոց ոչ է եդեալ 'ի վարժ-
ման 'ի գաղափարէ պատւոյ, զգայութի նը առ վիշտն
է նոյն ը զգայութն մնացեալ մարդկային սեռի:
(50) Թուեալ է ես պհետ չորայ այնմ կարծեաց
նկատմամբ անկրութե Ամերիկացւոց, որ երեւեր
ինձ առաւել բանաւոր, և ամրացուցեալ յառա-
ջութենէ ծանրագոյն հեղինակաց, սակայն այլ տե-
սականութիք կերպաւորեալ եղեն վերահայեցմամբ
սորա յեւս գերազանցագոյն մատենագրաց. Տէրն.
Անտոնիոս Ուլլոա 'ի վերջին իւրք իւրում գոր-
ծում պնդէ, թէ անկոճած մորթոյ և մարմնոյ Ա-
մերիկացւոց է այնպիսի, զի նոքա են նուազ զգայա-
կանք առ վիշտն քան զմնացեալ ազգ մարդկան.
Յառաջ բերէ այսմ զանազան հաւաստիս յեղա-
նակէն, որով հանդուրժեն անողորմագոյն վիրահա-
տական գործողութեց, Զանօթութիք Ամերի-
կեանք. Այս դիտողութիւն արարեալ եղև 'ի վիրա-
բուժիցն 'ի Պերուէ. Հնդիկ ոք առնն ոչ քան-
քարտոյ

քարինս երբեք 'ի մէջ ցամայ, և հանդուրժեսցէ զհատումն միոյ 'ի սրունից, կամ բազկի առանց արտաքս առաքելոյ զհառաչանս ինչ. Զնաւադիրն է առ իս: Եւ ոչ ինչ առ այս համբերութիւն 'ի չարչարանս, որով Ամերիկացիք այնպէս իրաւացի հռչակեալ են, համանեն ամենեքեան. Կայունութիւն բազմաց յայնց զենլեաց ընկճեալ է 'ի դառնութենէ տանջանացն. Տկարութիւն նոցա և քրէանք լրացուցանեն զյաղթանակ թշնամեաց իւրեանց. և ձգեն զթշուառութիւն 'ի վէր գաւառի իւրեանց:

Յաւէժական թշնամութիւնք կալեալք յԱմերի- Աղա-կեան ցեղից ծնանին զմահաբեր արդիւնս. Եւ առեալ քանզի անկատար ճարտարութիւն նց ոչ մատա- 'ի հզա-կարարէ նոցա զաւերած ինչ դարման այլատից և քննարար ոչ ինչ յեղանակս անդորրութեն, յորժամ առ- պատե-րազմականութի ինչ մարդկան գայ աղարտել զնշա- րակնոց կեալ հօղս նոցա, կամ վրդովել զնո յարշաւանս ի-րենց. իւրեանց, յորս այսպիսի լին աղէտ վերածէ զազգ մի բնականաբար անդրդուհ և զուրկ 'ի հայթհայթանաց առ վերջին կարօտութի. Բովանդակ ժողովուրդ նահանգին տապատակեցելոյ դառնի յոբովակի պարաւանդեալ յապաստանիլ յանտառս, կամ 'ի լերինս, ուր ոչ կարեն տալ նց զսնունդ ինչ. և ուր բազմք մեռանին 'ի քաղցու. Այլ ինչ օգտեալով տարապայման ուշադրութի նոցա յընդածելն զգնոծորական գործողութիւն, և հոգածութի զօրավարացն 'ի նախապահել բզկեանս հետևողաց իւրեանց, այնու զի հազիւ երբեք վայելեն 'ի հանգիստ ինչ խաղաղութեն, կորուստ մարդկան 'ի մէջ Ամերիկացւոց երևելի է, բաղդատեալ առ սակաւ բազմամարդութեն իւրեանց. Այսպէս ասել և պատերազմն զաւգակցին 'ի նուազել զթիւ նց. Այժ ցեղք նց տկար են. և բազումք, որք երբեմն էին հզօրք, սակաւ առ սակաւ նուազեցան. և 'ի վախճանի չքացան. և զանազան ազգաց, որք կանխաւ եղեն երևելիք, այժմ ոչ ևս կայ, բայց եթէ լոկ անունն:

[illegible] Այն ցեղք, որք լինելով դաշնակիցք առ այս հացանէին նպաստաւոր անկումն, լուսաւորութեանն զարգային զօրութիւն իւրեանց, յորժամ ստանալ է, որդեգրելով զկարանաւորս արարեալս 'ի նոցանէ 'ի պատերազմի. և այսպիսի յառաջատուութիւն խափանեն զընթացին ջնջումն իւրեանց. Բայց գործածութիւն ոչ է ընդհանրապէս ընկալեալ. Այն է հզօրագոյն առ 'ի տալ գործել վայրագաց քան զքաղաքական նկատմունս. Մեծագոյն մասն կալանաւորաց իւրեանց փախչելով էին զոհեալք քինախնդրութեան իւրեանց. և միայն յորժէ հետէ թիւ նոցա սկսաւ նուազել, նոքա ընկալան զառնուլ մարդասիրական սկզբունս. Այնքիկ, զորս նոքա բռնէին փոխարէն, պարտին հրաժարել միաջենաբար 'ի բուն ցեղից իւրեանց. առնուն զբարս երկիրս ժողովրդեանն, յոր անցանեն. և զայն առնեն այնպէս կատարեալ իմն եղանակաւ, մինչ զերեթան միահետ ընկեցեալք 'ի շահատակութեան իմիք ընդդէմ նոյին իսկ հայրենակցաց իւրեանց. Այնքան իմն այսպէս յանկարծ և այսպէս ներհակ միում 'ի հզօրագոյն ազգմանց անկելոց 'ի մարդն 'ի բնութէ, երևէր օտարոտի ումեքէ այլում ժողովրդեան. Բայց 'ի մէջ անդամոց փոքրիկ հասարակութեանց, ուր ազգային թշնամութիւն է բնական. և արմատացեալ խորապէս, համարի առաւել փառաւորի. Կամին իրի երևի ծագել յայնց սկզբանց, որովք արարեալ է պատերազմ Ամերիկա. Յորժամ ազգք ունին զդիտումն ջնջելոյ զթշնամիս իւրեանց, ոչ ունի զտեղի փոխանակութի կալանաւորաց. 'Ի վայրենեն, որում ոք վարեցաւ գերի, հայրենիք և բարեկամք իւր համարին զնա իբր մեռեալ:

(51) Այս է գաղափար իմն բնական ամ բիրտ ցեղից. Առ Հոռմայեցիս յառաջին ժամանակս հասարակապետութեան իւրեանց էր աւած իմն, թէ կալանաւորն յայնժամ անուանի փախճանեալ, յոր-

ժամ

ժամ ըմբռնեալ է . Տէմբլի . և յետոյ յորժամ
զարգացումն կրթութեն փոխադրեաց զնա ներքա-
գոյնս նկատմամբ այսր յօդուածոյ, պարտաւորե-
ցան 'ի գործ ածել զայլ երկուս օրէնս առ 'ի ա-
պահովացուցանել զյառաջութիւն, և թողացուցա-
նել զդարձ կալանաւորի ուրուք . առաջինն քօր-
նեյեան օրէնք, և միւսն իրաւամբք յետսահ-
մանութեն . Ջէյնէ . 'Ի մէջ խափշկաց նախա-
զօրացեալ է նոյն գաղափարն . Ոչ եղև երբէք
ընկալեալ 'ի նոսա փրկանք կալանաւորի ուրուք .
Իսկոյն իբրև ըմբռնի որ 'ի պատերազմի, համա-
րի իբր մեռեալ . և նա ինքն է այնպիսի արդեամբք
առ հայրենիսն իւր և առ տուն իւր . Ըէյլը . Դէ-
Տոքվիլլ : ‖

Ի ծովուց զինքն ըմբռնիլ, կամ տանիլ 'ի թշնա-
մեաց, անկեալ է նա յանշնջելի իմն անարգութի .
և եթէ զինի այսպիսի իմն արատոյ պատուոյ իւրոյ
դառնայր 'ի տուն, առաւել անձուկ ազգականք իւր
ոչ ընդունէին զնա . այնղի ուրանային ամենեքեան
թէ չեն ծանուցեալ զնա երբէք . Ոմանք 'ի ցե-
ղիցն էին առաւել ևս խիստք . և եթէ կալանաւոր
ոք դառնայր անդրէն, մաքրիւր փաղփաղակի մա-
հուամբ իւրով փառահամբաւութեն բերեալ 'ի նմանէ
հայրենեացն . Կալանաւոր որ այսպէս դժբաղդեալ՝
գոլով հերքեալ 'ի դատաէ իւրմէ, և գոլով
խզեալ անկարկատելի կապանքն, որք յարէին զնա
անդր, զոր զփոքրագոյն խորշումն 'ի կերպաւորելն
զնոր իմն կապ ընդ ժողովրդեան միում, որ իբր 'ի ցոյց
բարեկամական զգացմանց իւրոց ոչ միայն ազատէ
զնա յանողորմ իմն մահուանէ, այլ և ընծայէ
ընդունել զնա յամ իրաւունս ճշմարիտ քաղա-
քացի ուրուք . Կատարեալ նմանութի բարուց 'ի
մէջ վայրագ ազգացն դիւրացուցանէ և աւարտէ
զմիաւորութիւն, և ներածէ զկալանաւոր ոք 'ի փոխա-
րինել ոչ միայն զհաւատարմութի իւր, այլ և զսէր
իւր առ հասարակութիւն, յորոյ 'ի ծոցն ժողովեալ է:

Յն Հիւս-Ամ. թէպէտև պատերազմն իցէ նախապատական ըղ-
երկրորդս բաղումն վայրենի մարդկան, և լինելն յայնմ գե-
նեւր առաւ-ղանց՝ իցէ բարձրագոյն զանազանութի՛նց և Հայր-
Գայն ’ի տուրթի, սակայն տեսանի միշտ յայտնապէս, թէ
ուսուցե- են վայրագոյնք յորժամ բաղդատին ընդ կիրթ ազ-
երկրի : գաց. Ուրեք յայնմ նախատեսութէ, որ ճանա-
չէ և նախահոգայ վն դիպուածոց եւ և հեռատե-
րաց, ողէտք միաւորութե և փոխադարձ վստահու-
թեան, որ պահանջի ’ի կերպարանութիւն զհանդա-
մանս ինչ զինուորական գործողութեանց, և անըն-
դունակք ստորակարգութե ոչ ինչ նուազ կարևոր
երևելոյ առ ’ի գործ դնել զայսպիսի հանդամանս,
վայրագ ցեղք այս՝ կարեն ապշեցուցանել քաջու-
թե իւրեանց զթշնամի որ կրթեալ, բայց ցանցա-
ռակի եղանին նմա աշխարհու վն դնացից իւրեանց.
և յորժամ ընդդիմակայութին է յերկարատև պի-
տոյ է նց տեղի տալ վերջնագոյն արհեստին:

(52) ‖ Ժողովուրդն Քիլեայ առաւել ոգելին և քաջագոյն ’ի մէջ Ամերիկացւոց է միայն բացառ-ցելի յայսմ գիտողութե. ’Ի գիմի հարկանի թշնամեաց իւրոց ’ի բացարձակ դաշտի. գունդք իւր յարդարեալ են ’ի կանոնաւոր կարգի. ճակատ զօրացն յառաջադէմ լինի առ վտանգն ոչ միայն քաջասրտութե, այլև արհեստիւ. Հիւսիսային Ամերիկացիք, թէպէտ բազումք ’ի նոցանէ սահմանեալ են զզէնս հրոյ Եւրոպացւոց փոխանակ աղեղանց և նետից իւրեանց, սակայն տակաւին յարեալ կան ’ի նախկին սկզբունս իւրեանց մարտի. և առնեն զայն ը̄ մասնաւոր կարգադրութե իւրեանց. Բայց Քիլեցիք նմանին կատարելապէս պատերազմական ազգացն Եւրոպիոյ և Ասիոյ ’ի զինուորական գործողութիւնս իւրեանց. Օվալ. պատմութիւն Քիլեայ. Քինաւր. Քօլլ. Յովհաննս Մէլոս. Փարակուայեայ: ‖ Թագաւորութիւնք Փերուայ և Մեքսիքոյ թէպէտ և արարեալ էին զերևելի յառաջադիմութի ’ի քաղաքականացման, բաղդատելով զայն ընդ գաղափա-

րացն

բայն Եւրոպացւոց և Ասիացւոց ստացան զայնպիսի իմն գերազանցութիւն 'ի վե վայրենի ցեղից գրայեաց իւրեանց, մինչզի նուաճեցին զմեծագոյն մասն նց ը իշխանութբ իւրեանց եւ մեծագոյն դիւրութբ. Յորժամ ժողովուրդն Եւրոպիոյ եանց ը պէսպէս գաւառս Ամերիկոյ, այս վերնագունութն հանապազօր եղև առաւել նշանաւոր, Որ սրտեղութն և ոչ բաղմուն աղգայնոցն կարօղ եղև վանել զաւխա յափշտակօղսն. Ջախատակ բնաւորութիւնն և թշնամութիւն, որք զօրանան առ բարբարոսս, խափանեցին զնս 'ի միաւորելոյ մինչև լայէ հասարակաց առաջարկութն վն պաշտպանութն. և մինչ իւրաքանչիւր ցեղ պատերազմէր ուրոյն ուրոյն, ամենեքեան էին նուաճեալք ը լծով:

Զ. Արհեստք բնիս աղգացն ոչ տեղեակ եղելոցն պիտանութեան հրահանգելեաց հաղիւ արժանաւորին ուշադրութեան իմիք. սակայն արժան է առնուլ զծանօթութիւն ինչ վնոցանէ որչափ ծառայեն ցուցանել զհնարագիտութն և զվարս իւրք ժողովրդեան. Առաջին տառապանքն, զոր վայրագ ոք ունի կրել, ծնանի յեղանակէն, որով մարմին իւր ներեալ է 'ի տօթոյ, 'ի ցրտոյ և 'ի խոնաւութէ կլիմային, ը որով կեայ. ուստի առաջին հոգ իւր եղեցի հայթհայթելն ինքեան զծածկոյթ ինչ վն անպհական պաշտպանութն իւրոյ. Յառաւել բարեխառն և 'ի քաղցրագոյն կլիմայսն Ամերիկոյ ոչ ոք 'ի վայրենի ցեղսն գնայր զգեստաւորեալ. Առ մեծագոյն մասն 'ի նոցանէ բնութիւնն և ոչ իսկ թելադրեալ էր զձանաչումն ինչ անվայելչութն յերթալն բնաւին մերկ. Այն զի 'ի խաղաղ իմիք կլիմայի էին սակաւ պէտք պատսպարուն իմիք 'ի տուգանացն օդոյ, և նոցա վերջին հեղգութիւն խուսէր յամենայն աշխատութէ, առ որ ոչ լինէր ստիպեալ 'ի բացարձակ հարկաւորութէ, բովանդակ բնակիչք կղզեացն, և մեծ մասն բնակչաց ցամաքին հային յայսմ վիճակի մերկ պարզմտութն. Այլք շատանային թեթև

ինչ

ինչ ծածկութիւն ցուրտայր վայելչութիւն խնդրեր. Այլ թէպէտեւ մերկք ոչ երեւէին բնաւին անպաճոյճք. Յօրինէին զվարսս բազմադիմի եւ օտարակերպ. Կապէին զկոտորակս ոսկւոյ, կամ զխեցիս ծովու, կամ զլուսաճաճանչ քարինս ընդ ականջս իւրեանց, ընդ ռունգունս, ընդ այտս. Նկարէին զմորթս իւրեանց մեծաւ պէսպիսութեամբ ձեւոց, եւ ծախէին բազում ժամանակս, եւ աշխատ լինէին մեծապէս 'ի գեղեցկել զանձինս իւրեանց այնպիսի օտարոտի իմն սարասիւ. Ունայնութիւն, որ գիտէ գտանել զզբաղմունս անբաւս վասն ճարտարմտութեան իւրոյ, է գիտ 'ի մէջ ազգացն, ուր զգենուլն եղեալ է արհեստ իմն բաղադրեալ եւ կնճռեալ. 'ի մէջ մերկ վայրագացն պարագրեալ է 'ի ներքս այնպիսի անձուկ կոպարաց եւ սահմանաւորին առ այնպէս սակաւ յօդուածս, մինչզի նոքին ոչ են շատացեալ այսոքիւք պարզ վայելչացուցմամբք. եւ են բերեալք սքանչելապէս յայլայլել զբնական կերպ մարմնոյ իւրեանց. Այս սովորութիւն է ընդհանրական 'ի մէջ վայրենագոյն ցեղիցն Ամերիկոյ. Գործողութիւնք նոցա վասն այսր վախճանի սկսանին իսկոյն ընդ ծնանիլ տղայոյ միոյ. Զօրութեամբ սեղմելոյ զոսկերս սկաւառակի գլխոյ, յորժամ տակաւին են փափուկք եւ դիւրաթեքք, ոմանք տափարակեն զպսակ գլխոյ նոցա. ոմանք պնդեն զայնս մինչեւ վերածել 'ի ձեւ կոնոնի. այլք որքան կարելի է նոցա առնեն զայնս քառակուսի. եւ քաջ ստէպ դնեն 'ի վտանգի զկեանս յետնորդաց իւրեանց բնական եւ ծիծաղական թեւակոխութեամբք աղաւաղելոյ զգաղափար բնութեան, կամ բարեգունացուցանելոյ զայն իւրեամբքն. Բայց յամ ջանս իւրեանց կամ զարդարելոյ կամ գաղափարելոյ նորոգ զանձինս իւրեանց՝ երեւի թէ նուազ առարկոյ Ամերիկացւոց լինել իցէ հաճութիւն կամ երեւելն գեղեցիկ, քան թէ տալն կերպարանաց իւրեանց զտեսիլ իմն արժանաւորութեան եւ ահարկուն. Աշխարհուն նոցա առ հանդերձս վերաբերիւր յաւէտ

առ

առ պատերազմ ,քան առ վայելչուԹի. Տարբերու-
Թին յաստիճանի և ՚ի համարման էր այնպէս մեծ
՚ի մէջ երկուց սեռից, մինչ զի չիջուցանէր ըստ ի-
միք մասին զհոգածուԹի նց ցուցանելոյ զինքեանս
փոխադարձաբար սիրունս. Մարդն դատէր անար-
ժան ինքեան զարդարելն զանձն իւր ՚ի շնորհս կնոջ
միոյ, յոր նա սովոր էր հայիլ իբր յաղախին իւր.
Յորժամ մարտիկն ունէր ՚ի մտի մտանել ՚ի խոր-
հուրդ ազգին իւրոյ, կամ երԹալ յասպարէզ ը-
դէմ Թշնամւոյ իւրոյ, յայնժամ առնոյր նա զըն-
տիր ընտիր զարդարանս իւր, և յօրինէր զանձն իւր
առաւել փափուկ խնամով. Իղձք կանանց էին սա-
կաւք և պարզք. Բովանդակ այն, որ էր պայծառ
կամ մեծագին, պահիւր արանց. ՚Ի զանազան ցեղս
կանայք էին պարաւանդեալք ՚ի ծախել զերևելի ինչ
մասն ժամանակի իւրեանց ՚ի զարդարել և ՚ի նը-
կարել զարս իւրեանց. և վնկ կարէին պարապիլ
սակաւ ՚ի պճնել զանձինս իւրեանց. ՚Ի մէջ զար-
մի միոյ մարդկան այնպէս անբարտաւան եղելոյ, զի
անդոսնէին զկանայս. և այնպէս ցուրտք, զի ոչ
ինչ հոգային զնոցանէ, բնականաբար կանայք ե-
ղանէին որհամարհոտք և հեղգք. և սէրն պճնե-
լոյ և երևելոյ, որ է միշտ դատեալ ախորժեալ կիրք
նց, սահմանաւորիւր առ միւս սեռն. Զարդարանքն
անձին էր նշան զանազանուԹե վն պատերազմա-
կանին և մի յիսկական զբաղմանց իւրոց:

(53) Հերրէրա այսմ տայ զնշանաւոր իմն հա-
ւաստիս. ՚Ի Իւքաթան մարդիկ ցուցանեն զինքեանս
այնպէս հոգածուս զզգեստուց իւրեանց, զի կրեն
միշտ զհայելիս հաւանականաբար արարեալս ՚ի քա-
րէ. որպէս զմեքսիքացւոցն. յորս բերկրին հայիլ
յինքեանս. բայց կանայք ոչ երբէք ՚ի կիր առնուն
զայն. Նա ինքն զեկուցանէ, Թէ ՚ի մէջ գազա-
նաբարոյ ցեղին փանքհէսաց ՚ի Նոր Թագաւորու-
Թեն Գրանատա, ոչ ումեք բաց յերևելի մարտկաց
Թոյլացուցեալ էր ծակել զշրԹունս. կամ կրել ՚ի

նս զքարինս կանաչս, կամ զարդարել զգլուխս փետրափնջիւք․ ՚Ի գաւառս ինչ Փերուայ, թէպէտ թագաւորութիւն այն արարեալ է զերեւելի ինչ յառաջադիմութիւն ՚ի քաղաքականացման, վիճակ կանանցն էր սակաւիկ ինչ զատեալ․ Բովանդակ աշխատութիւն մշակութեան և առտնին գործառնութիւնք եդեալ էին ՚ի վր նց․ և ոչ էր թոյլ տուեալ նց կրել զքօղեայս, կամ զայլ զարդս, որովք արքն ախորժէին զարդարել զանձինս․ Զարաթէ Պատմ․ Փերուայ : ||

՚Ի միում մասին հանդերձի իւրեանց, որ յառաջին տեսութեան երեւի ամենեւին եզական և օտարոտի, Ամերիկացիք ցուցեալ են զմեծ խորագիտութիւն, խորհելով ապահովանալ ՚ի նախապետական անպատշաճութեանց կլիմայի իւրեանց, որ սաստիկ է տապայեղց և խոնաւ արտաքոյ քան զչափն․ Բովանդակ տարբեր ցեղք, որք ոչ գնան զգեստաւորեալք, սովոր են օծանել և շփել զմարմինս իւրեանց ճարպով չնչաւորաց և մածանողական խեժիւք և պէսպէս ազգ իւղովք․ Այսպիսի իրօք յառաջ շարժեն զառատ արտաշնչումն, որ յայրեցած գօտւոջ ապականէ զկազմուած մարմնոյն, և կարճէ զմարդկային կեանս․ Այսպէս նախահօգան նաև զպատսպարութիւն ինքն ընդդէմ խոնաւութեան յանձրեւային յեղանակին :

(54) || Համարձակեցայ կոչել զգեստ Ամերիկացւոց զսովորութիւն, զոր ունէին նոքա օծանելոյ և նկարելոյ զինքեանս․ և այս համեմատի յատուկ բարբառոյ իւրեանց․ Այնու զի ոչ շարժին երթալ ՚ի դուրս, եթէ ոչ են օծեալ ՚ի գլխոյ մինչև ցոտս․ անքասիր առնեն զանձինս յորժամ են յայսպիսի վիճակի․ ասելով, թէ ոչ կարեն երեւիլ, վն զի են մերկք․ Կումիլլա Պատմութ․ Օրինոքոյ գետոյն : ||

Յորոշեալ ինչ ժամանակս սովոր են ևս խառնել ընդ իւղոյն գոյացութեանց զներկս զանազան գունոց․

նոց. և պիտակաւորեն զենքեանս անվախճան այն-
պիսի բաղադրութեան. Նշանակեալ այսու անընդ-
մտանելի ապքէեաւ մորթք նց ոչ միայն են ան-
քոյթ 'ի թափանցող տապոյ արեւու, այլ և քան-
զի այնքան անհամար զեռունք ունին զհակակրու-
թիւն իմն առ հոտն և առ ճաշակ այնպիսի խառ-
նուածոյ, մինչ ազատեալք 'ի խայթից հալած-
մանէ նց, որ 'ի մէջ անտառաց և ճահճոց՝ մաս-
նաւորաբար 'ի ջերմագոյն կողմանս 'ի վիճակի մեր-
կութեան պարտի լինել անհանդուրժելի:
Նուարկայն, որ անընդմիջաբար գայ կենի զգես-
տաւորելոյն, և որ գրաւէ զուշադրութիւն վայրագ-
մարդոյ է նախապատրաստել իւրեանց զընակու-
թիւն ինչ, որ տայէ նմա զապաստանարան 'ի տը-
ւէ, և զպատսպարան 'ի գիշերի. Սորտին վայրագն
համարի զաւարկայ իմն մեծ և ծանրակշիռ զայն
բովանդակ, որ ունի զծակցութիւն ընդ գաղափարի
անձնական արժանաւորութեան իւրոյ, կամ որ մե-
բաբերի առ զինուորական կենք իւր. և հայի ան-
տարբեր աչօք յինչեիցէ իր, որ պատկանի առ
քաղաքական և դատարկապորտ կեանս. Նմին իրի
թէպէտ և նա ախորժանօք մօտաղիր է զգեստու,
սակայն ցուցանի սակաւ փոյթ պէսափակութէ և
զվայելչութէ օթեվանին իւրոյ. Ազգք վայրագք
հեռիք յայնմ նպատակէ զոմանց, յորում եղա-
նակն կենյ նկատի իբր նշան իմն զանազանութեան,
և օգտոք այնց պիտոյից. որք պահանջեն զպէս-
պիսութի ինչ հանգստեանց, չինեն զտունս իւր-
եանց սահմանաւորելոց 'ի հարկաւորութէ. Սմանք
յԱմերիկեան ցեղից էին այնպէս տխմարք. և
այնպէս սակաւ զարգացեալք 'ի նախկին բնիկ պարզ-
մտութենէ իւրեանց, մինչզի ոչ ունէին զնշմա-
րանս ինչ տանց. Ի տընչեան ապահովանային 'ի
վառեալ շառաւիղացն արեւու 'ի ներքոյ թանձրա-
խիտ ծառոց. և 'ի գիշերի կազմէին զհիւղիկ ինչ
ճիւղովք և տերեւովք նց. Յանձրեւային յեղանակս
ամիս-

ամփոփէին 'ի ծածկարանի, կամ արարելոյ 'ի ձեռանէ բնութեան, կամ փորեցելոյ 'ի ճարտարութենէ իւրեանց ։

(55) ‖ Յեղք ոմանք 'ի գաւառին Չինալօայ 'ի խորշին Գալի փօրնիոյ՝ երևի, թէ 'ի մէջ վայրենագոյն ազգացն Ամերիկոյ իցեն միաւորեալք յընկերական կացութեան. Ոչ մշակեն և ոչ սերմանեն, և ոչ ունին տունս բնակելոյ. Բնակիչք շրջակայ գաւառին կեան յորսոյ. իսկ ծովեզերեայքն նախապետաբար 'ի ձկնորսութենէ. Կախին երկոքեան յինքնակամ բերոց երկրին. 'ի պտղոց, 'ի տնկոց, և 'ի պէսպէս ազգ արմատոց. Յանձրևային եղանակս ոչ ունելով զբնակարանս, ուր պատսպարեսցին, առնեն խուրձս եղեգանց, կամ ստուար խոտոց, և կապելով զայնս 'ի միասին 'ի միոջէ ծայրէ, ընդլայնեն 'ի միւսմէ. և յարմարելով զայն 'ի վերայ գլխոյ մնան ծածկեալք իբրև 'ի մեծ ինչ կնդղոյ. որ զօրէն ցնցղոյ իւիք առաքէ արտաքս զանձրևն. և պահէ զնոսա ցամաքս ընդ ժամանակ ինչ. Յամառան կերպաւորեն զհովանոց ինչ 'ի ճիւղոց ծառոց, որ պաշտպանէ զնոսա 'ի վառեալ շառաւիղաց արևու. Յորժամ արտադրեալ են ցրտոյ, լուցանեն զմեծ հուր. շուրջ զորով ննջեն 'ի բացի. Հայր Անտրէաս Փէրէզ ։ ‖

Այլք, որք ոչ ունէին զկայուն բնակութիւն, կամ որք թափառէին ընդ անտառս 'ի խնդիր որսոյ ագանէին 'ի տաղաւարիկս, զորս կանգնէին ինքեանք սակաւ աշխատութեամբ. և բարձի թողի առնէին առանց տհաճութեան. Բնակիչք այնոց ընդարձակ դաշտավայրաց, որք հեղեղեալ են 'ի զեղմանէ գետոց 'ի ժամանակս ջաղք անձրևաց. որք անկանէին պարբերաբար 'ի մէջ արևադարձից, բարձրացուցանէին զտունս 'ի վերայ փայտակուտից հաստատելոց յերկրի. կամ զետեղէին զայնս 'ի մէջ ստեղանց ծառոց. և կային այսպէս պատսպարեալք 'ի մէջ այնոց ահագին հեղեղացն. որք շուրջ պատէին զնոսա. Այս-

պիսի

պիսի էին առաջին ջանք վայրենացն Ամերիկա-
ցւոց վասն հայթհայթելոյ ինքեանց զբնակութի. Բայց նաեւ 'ի մէջ ցեղիցն, որք երեւէին սակաւ ինչ աւելի կրթեալք, և որոց արդէն ստոյգ էր կայանն, կերտուած տանցն էր անսահմանաբար պարզ և աղքատին. Կարէին ասել փանաքի հիւղք, մերթ երկայնաձեւ, և մերթ բոլորշի, սահմանեալք միայն 'ի պատսպարան առանց ինչ դիտման զարդու, և սակաւ նկատմամբ դիւրութեց. Դրունքն էին այնպէս ցածունք, զի պարտէր կորանալ, կամ երթալ սողալով առ 'ի մտանել անդր. Ոչ ունէին պատուհանս. այլ այո՝ զլայն ինչ ծեղքուած 'ի մէջ յարկին առ 'ի առաքել արտաքս զծուխն. Սատանօր պիտէր զհետ երթալ ճգհորդաց և յառաջ բերել զայլ մանր պարագայս գծագրեալս 'ի Նոցանէ. բայց այս լինէր ոչ միայն անարժան վիպասանութե միում, այլ և արտաքոյ առարկայի հետազօտութեց իմոց. Սակայն արժանի է ուշադրութե միմիայն պարագայ իբր այն, որ է եզական, և մեկնէ զյատկութի ազգին. Սմանք 'ի տանց նոցա էին այնպէս մեծք, զի պարունակէին դիւրակի զութսուն կամ զհարիւր անձինս. Նյօքիկ արարեալ էին վն օթեվանեցուցանելոյ անդէն զանազան գերդաստանս. որք կային 'ի միասին ընդ նովին յարկաւ. և յաճախակի շուրջ զմիով հասարակաց կրակարանաւ առանց զատուցեալ սենեկաց, կամ իրիք տեսակի բաժանման կամ անջրպետի 'ի մէջ միջոցացն. զորս իւրաքանչիւր տեղակալէին:

(56) ‖ Նյս տունք երեւէին նոյնչափ. կալք. Օրման 'ի Նոցանէ չափեցաք. որք էին երկայնք հարիւր յիսուն քայլք, և լայնք քսան. Կան 'ի ներքս անձինք աւելի քան զհարիւր. Ուելսոն. ուղեւորութե. Կուկայ. Տունք Հնդկաց, ասէ տէրն Պարրէրէ. ունին զգծծագոյն երեւոյթ. և են պատկեր իմն հիանալի վաղնջուց ժամանակաց.

Հիւղք

Խուղք նոցա համարակաւար շինեալ են 'ի վր̄ բարձր գետնոյ, կամ առ ափամբք իրեք գետոյ, երբեմն շփոթեալք 'ի միասին, երբեմն բաժանեալք և միշտ առանց ինչ կարգի. Տեսիլ նոցա է տխրական և անախորժելի. Ոչ տեսանի անդէն այլ ինչ, եթէ ոչ այն, որ է սոսկալի և վայրենի. Անդաստանք անգործք ոչ ցուցանեն զզուարճութի. Լռութիւն, որ թագաւորէ անդ, սակայն եթէ ոչ է խրամատեալ յանախորժ երգելոյ հաւուց, կամ 'ի գոչմանց գազանաց, զարհուրելի է 'ի վեր քան զչափն. Պատմութիւն Ռոբերտսոնի [illegible]: ||

Աղվաղակի իբրև ստացեալ են մարդիկ զայրանի գաղափարս յամակութեն, կամ երբ այնչափ բերեալ են սիրով առ կանայս իւրեանց, մինչև հակել 'ի վր̄ նոցա նախանձաւորութեամբ և խնամով, զերդաստանք բաժանին, կացուցանեն 'ի զատուցեալ օթևանս, ուր կարեն պահպանել և ունել յապահովլի զայն, զոր ըղձանան նախապահել. Այս ուրեմն կարօղեմք մեք նկատել զայս եղական տարազ բնակութեն իբր արդիւնս այնր հասարակութեն բարեաց, որ գոյաւորէր 'ի մէջ զանազան բաղմամարդութեանց Ամերիկայ, և իբր ցոյց իմն անմտադրութեն և անտարբերութեն նոցա առ կանայս իւրեանց. Եթէ ոչ լինէին սովորեալք առ կատարեալ իմն հաւասարութի, այս մարք ոչ երբեք հաստատեալ էր 'ի նոսա. Եթէ զգայականութի նոցա լեալէր ընդունակ կասկածելոյ, ոչ էին մտահացեալ զառաքինութի կանանց իւրեանց 'ի մէջ փորձութեանց և առթից այնպիսի իմն խառնակ կենցաղավարութեն. 'Ի նմին ժամանակի հաստատուն հաւաձայնութիւն որ թագաւորէ 'ի բնակութիւն, ուր այնքան զերդաստանք խռնին 'ի միասին, սքանչելի է. և է յայտնի վկայութի, թէ նոքա պարտին ունել զկարի իմն մաղասային խառնուած, որ գտանելով յայսպիսի կայաւո-

բուԹն ոչ ճանաչէ զխիզախումն, զՀակառակու-
Թի կամ զերկպառակուԹի :

Օգնի առնելոյ զյառաջատեսուԹի ինչ մ՟ զգես- Օէնք
տու և մ՟ բնակուԹն՝ վայրագ. ոմն ճանաչէ զպէտս նոցա :
նախապատրաստելոյ զպէտս իւր. որովք յարիցէ 'ի
մ՟, կամ վաներսցէ զԹշնամին. Այս է յօդուած
իմն, որ անդստին 'ի վաղնջագոյն ժամանակաց
վարժեալ է զմիտս և զգիտ բիրտ ցեղիցն. Առա-
ջին զէնք մնասիրչք եղեն առանց երկբայուԹե այնք,
զորս առաջի ընծայեցոյց դիպուածն. և Թեակո-
խուԹք արՀեստին առ 'ի զտեղ զայնս՝ եղեն պարզք
և անՀեԹեԹք. ԱնՀակք արարեալ 'ի ծանր փայ-
տէ, ցիցք կարծրացուցեալք առ Հրով, տէգք, ո-
րոց ծայրք ամրացուցեալք էին դայլախազիւք, կամ
ոսկերօք շնչաւորաց, են զէնք ծանուցեալք ան-
կիրԹ ազգաց. Այլ զայս ամ 'ի կիր արկանէին
միայն գալով 'ի կռիւ ինչ 'ի մօտուստ. Բայց
մարդիկ կամէին Հարստահարել զԹշնամին նաև 'ի
տարակացուԹե. և աղեղն և նիզակն են արագա-
գոյն գիւտ մ՟ այսպիսի իմն վախճանի. Այս զէն
գտանի 'ի ձեռս ժողովրդոցն, որք ոչ են բազում
յառաջացեալ 'ի Հրահանգուն. և է ընտել բնակ-
չաց այլ ամ մասին երկրագնտոյ, Բայց նկատելի
է այն. զի ցեղք ոմանք յԱմերիկա էին այնպէս
զուրկք յարՀեստէ և յաչալրջուԹէ, մինչ զի ան-
գիտանային զլինելն այսպիսի պարզ գիւտոյ. և ե-
րեւէին ոչ լինել տեղեակ կիրառուԹն զինուց ձգե-
լոյ. Պարսատիկն՝ Թէպէտ 'ի կերտուածի իւրում
ոչ է առաւել մանուածոյ քան զաղեղն, և Հաւա-
սար վաղնջականուԹբ 'ի մէջ ազգաց բազմաց,
էր յոյժ սակաւ ծանուցեալ ժողովրդեանն Հիւ-
սիսային Ամերիկոյ, կամ կղզեաց. բայց երևի 'ի
գործ ածեալ յոմանց ցեղից 'ի Հարաւային շա-
րունակի :

(57) ‖ Յեղք ինչ 'ի մէջ Հարաւային Ամերիկոյ
կարեն արձակել զնետս իւրեանցառ մեծ ինչ տա-

բակացութիւն և երևելի իմն բռնութիւն առանց օգ-
նութեան աղեղան. Առնուն զեղեգն ինչ դատարկ
երկայն իբր ինն ոտնաչափ և ստուար մի մատնա-
չափ, որ կոչեցեալ է սարպաքան. Յայսմ արկանեն
փոքրիկ նետ մի հանդերձ բամբակէ պատատե-
լով շուրջ զծայրիւն. այս արգելու զօդն, այնպէս
զի կարեն փչել 'ի ներքս սքանչելի արագութեամբ
և հաւաստի ուղղաձգմամբ առ հեռաւորութիւն աւելի
քան զհարիւր քայլ. Այս փոքրիկ նետք են միշտ
թունաւորեալք. Պիէրրին. Պանդրոֆթ Հոլլանտ. Գուիա-
նայ. Սարպաքան է յոյժ 'ի կիրառութեան 'ի մէջ
արևելեան Հնդկաց: ‖

Բնակիչք գաւառաց ինչ Չիլեայ և Փաթակոնիա-
ցիք դէպ հարաւային ծագին Ամերիկոյ ունին զդէն
ինչ մասնաւոր ինքեանց միայն. Կապեն քարինս
ինչ մեծութեամբ բռան միոյ յերկուս ծայրս իրիք
փոկոյ երկայնի ութն ոտնաչափ. և պտուտկելով
զայնս շուրջ զգլխով ձգեն այնպիսի յաջողակու-
թեամբ, մինչ զի հազիւ երբէք վրիպին 'ի նպատակէն
յոր ուղղեն զդիտումն:

Տնէնէ ջոնհ. նդ: Ժողովուրդ մի, որ հազիւ ունէր ինչ զբաղելոյ
արտաքոյ պատերազմի և որսոյ, վարժէր նախապե-
տաքար զգլուխ իւր և զճարտարութիւն շուրջ զայ-
սոքիւք առարկայիւք:

(58) ‖ Կարէի բազում օրինակս յառաջ բերել այսմ.
բայց շատացայց միով ևեթ առեցելով Ճչաքի-
մաուքսաց. Մեծագոյն հնարագիտութիւն իւրեանց,
առ է պարոն Ըլիան, ցուցանեն 'ի շինուածի աղե-
ղանց իւրեանց արարելոց հասարակաբար յերից
կտորից փայտի միմեամբ և ճշգրտիւ ագուցելոց 'ի
միասին, բաղկացուցանելով իւրաքանչիւրն զմի մասն
նոյն աղեղան. Յօղովակի 'ի միջեկ կամ յեղենա-
փայտէ. և քանզի պակասին 'ի զօրութեան և յա-
ռաձգականութեան, լնուն զերկոցունց պակասութիւն,
ամրացուցանելով զաղն աղեղան տեսակաւ իմիք
թելոյ. կամ լարի արարեցելոյ 'ի ջղաց եղջերուաց
իւրեանց,

իւրեանց, և գնելով 'ի նմա զառասան 'ի նոյն նիւթոյ. Նա 'ի կարօղ լինելոյ լարել ապահովագոյնս ընկղմէն զայնս 'ի ջուր. որ պատճառէ յողն աղեղան և 'ի լարն զկարկամութիւն իւր. և հետևաբար տայ նոցա զմեծագոյն առաձգութիւն. և զի սովոր են յայն անդստին 'ի մանկութենէ, ձգեն ապա ծայրագոյն յաջողակութեամբ. Պատմութիւն ու խորհն Հնդ-կաց : ||

Հայելով յայլ ինչ և իցէ իրս՝ պիտոյք նոցա և յօժարութիւնք էին այնպէս ամփոփեալք, զի միտք նոցա ոչ աշխատէր բազում. Կերակուր և բնակարան նոցա էին բնաւին պարզք, և հետևաբար առ անին կահք սակաւ և յոլի կազմեալ. Ոմանք 'ի հարաւային ցեղից գտեալ էին զարհեստ կազմելոյ զխեցեղէն անօթս և եփելոյ յարևու, ոչզի կարասցեն տոկալ հրոյ. 'Ի մէջ հիւսիսային Ամերիկոյ փորէին զհատոր ինչ կարծր փայտի 'ի կերպ սանի. և լցուցանելով զայն ջրով եռացուցանէին արկանելով 'ի ներքս քարինս տորաշիկացեալս. 'Ի կիր առնոյին զայսոսիկ անօթս 'ի նախապատրաստելն զմասն ինչ կերակրոց իւրեանց. և այս կարէ նկատիլ իբր անդը իմն առ նրբութիւն և առաւելորդութիւն. որովհետև մարդիկ յառաւել միճակի իւրեանց ոչ ճանաչէին զայլ եղանակ եփելոյ զկերակուր իւրեանց, բայց եթէ խորովել զայնս առ հրով. և առ զանազան ցեղս Ամերիկայ այս է միակ տեսակ խոհանոցի ցարդ ծանուցելոյ :

(59) || Հարկն է խելօսն և առաջնորդ ազգի մարդկան մի դամանց. սակայն է այնպիսի անհաւասարութիւն իմն 'ի մասունս ինչ յառաջադիմութեան իւրոյ, և ազգք ինչ ստանան այնպէս զառաւելութիւն 'ի վր այլոց յանձնէին համանման պարագայս, մինչ զի պարտիմք վերագրել զայն դիպուածոց ինչ 'ի պատմութեան նոցա, կամ մասնաւորութեան իմիք 'ի կացութեան նոցա, զոր ոչ գիտեմք. Ժողովուրդն կղզւոյն Օթահէիթեայ 'ի վերջոյ գտեալ 'ի հա-

բուսային ծովու գերազանցէ մեծապէս զմեծագոյն մասամբ Ամերիկացւոց 'ի ճանաչման և 'ի գործածութեան հանճարեղ արհեստից, և հանդերձ այսու ոչ գիտաց գտանել զարհեստ եռացուցանելոյ զջուր. և ոչ ունելով անօթս, որք կարիցեն տոկալ հրոյ, ոչ ունի և ոչ խակ զգաղափար, թէ ջուրն կարիցէ ջերմանալ, թող թէ պնտանալ: ‖

Ապաւինէ զանօթից խարէանց: Բայց գլխաւոր գործ արհեստի 'ի մէջ վայրագացն Ամերիկոյ է կերտուածն քանօթից իւրեանց. Եսքիմաուքս ոմն փակեալ 'ի նաւակի իւրում յուկերէ կետի, ծածկեալ մորթովք ծովային որթու, համարձակի սաստել մրրկալից ովկիանոսի, յորմէ ամլութիւն գաւառին իւրոյ բռնադատէ զնա խնդրել զմեծագոյն մասն ապրուստի իւրոյ. Ողողովուրդք Գուիանայի վտանգեն զանձինս երթալ 'ի վր գետոց իւրեանց և 'ի վր լճաց 'ի նաւակս պարարեալս 'ի կեղևոյ ծառոց, և այնպէս թեթև. զի որք երկու կարող են տանել զայնս յամ հաղի, յորում ցամաքութիւն, կամ առատ տեղացմունք անձրևաց արգելուն զնաւելն:

(60) ‖ Մի յայսց նաւակաց, որ կարէր տանել զարս բնն, կշռէր միայն վաթսուն լիպրայս. Անսոն ուղևո. ճանհորդութեան առ [illegible]: ‖

Այսպիսի տկար նաւակս բաւէն հարկանեն, և կատարեն զերկայն ճանապարհորդութիւնս. Բնակիչք կղզեաց և հարաւային շարունակին կերպաւորեն զքանօնս իւրեանց՝ փորելով զբուն մեծի իրիք ծառոյ անբաւ աշխատութեամբ. և որչափ և աներևոյթս իցեն անյարմարք և ծանունք, նոքա խաղացուցանեն զայնս 'ի մէջ ջրոյ, և ուղղեն այնպիսի յաջողակութեամբ, մինչ զի Եւրոպացիք քաջավարժք յամ նրբութիւնս 'ի գիտութեն նաւարկութեան հնացին ապշեալք ընդ արագութիւն շարժմանց նց և ընդ արագութիւն դարձուածոց նց. Փիրօկուէսք նց, որք են նաւք պատերազմի, ընդունակք են պարունակելոյ զքառասուն կամ զյիսուն արս. և քա-

նօնք

նոքա 'ի գործ ածեալք առ ձկնորսութիւն կամ 'ի
կարճ ճանապարհորդութիւնս են փոքրագոյնք. Նաւակք և
կերպ այս ամենայն տարբեր տեսակաց նաւակաց ե-
րեւին յարմարեալք առ ծառայութիւն, առ որ սահ-
մանեալ են. և որչափ առաւել մանր կրկտին,
այնչափ առաւել մեքենայութիւն կերտուածոյ նոցա,
և մտադիւրութիւն 'ի շինելն զարթուցանեն զզար-
մանս :

Բայց յորում և իցէ առթի Ամերիկացիք նկըր- Հնդ-
տեսցին հնարել, փայլէ միշտ 'ի յատկութեն նոցա գտ—ԼՆն,
ուսակութիւն իմն, որ նոյնժամայն խթէ զաչս. Ամեն ուրեք
'ի գործ առանց փութոյ, շարունակեն զայն սակաւ պտոյ զամ
գործունէութի և իբրև զողայս ցնդեալսն յայն- յետոյ յաջ-
մանէ գիւրակի. Նաև 'ի գործողութիւն, ուր խափա-
նելին առաւել կարևորք, և ուր զօրաւորագոյն են :
պատճառք խթեն զնա վարիլ ժրաբար, առնեն զայն
թոյլ իմն պղերգութե. Գործն 'ի ձեռս նց այն-
պէս յամր յառաջանայ, մինչև որ տեսեալն է, հա-
մեմատէ զայն անըմբռնելի յառաջադիմութե ա-
ռեգացման. Ծախեցին զայնքան ամս 'ի կազմել
գրանոց մի, մինչև այս սկսանի փտել պատճառաւ
ժամանակին յառաջ քան զաւարտելն. Թողուցուն
ապականիլ կամ կորնչիլ զմասն ինչ յարկին նախ
քան զբովանդակելն զմիւսն. Առաւել թեթև ձե-
ռագործն ծախէ զերևելի իմն երկայնութի ժամկի.
և այն, որ 'ի մէջ կիրթ ազգաց հազիւ լինէր չան
իմն ճարտարութե, 'ի մէջ վայրագացն է դժուա-
րաւհաս իմն ձեռնարկութի. Այս դանդաղութի Ա-
մերիկացւոց 'ի կատարելն զամ ազգ աշխատութե
կարէ վերագրիլ առ այսպիսի պատճառս. 'Ի մէջ
վայրագաց, որք ոչ ստանեն զմնունդ 'ի կանոնա-
ւոր մտավարժութէ իւրեանց, ժամանակն է այն-
պէս սակաւավարկ, զի ոչ արժեցուցանեն զայն
բնաւ. և միայն թէ կարասցեն հասուցանել 'ի վախ-
ճան զգաղափար իւրեանց, ոչ միտ դնեն երբէք
թէ որքան աւուրս ծախեն 'ի նմա. Գործիքն, զորս

ծառայեցուցանեն, են այնպէս անհեթեթք և պակասաւորք, զի յորժամ դիմագրաւ լինին 'ի գործ ինչ, գտանեն զայն մեծապէս տաղտկալի. Ձեռն ճարտարագոյն և ընդունակագոյն արհեստաւորի յորժամ ոչ իցէ նախահոգացեալ, բայց եթէ գործեալ միով ոչ ինչ լաւագունիւ քան զտապար մի քարի, խեցւոյ, կամ ոսկեր շնչաւորի. աշխատութիւն կարասցէ կատարելագործել զեւս պարզ արհեստակերտուածն. Այսրագն յերկարաձգէ ըզգործն, վասն հարկադրեալ է լնուլ զպակասութիւն ընդունակութեան իւրոյ. Բայց առաւել քան զայլ ամ պատճառ՝ ցուրտ և մաղասային խառնուածն Ամերիկացւոց է այն, որ առնէ թոյլ զգործել նոցա. Գրեթէ անկարելի լինի թօթափելն զնս 'ի յունականն անհոգութէն, յորում կեան ընկղմեալք և երբեմն անընդունակք ներգործութե իրիք, որ իցէ կործանութեն բաց 'ի պատերազմէ կամ յորսոյ. Անտարբերութի նց ոչ երբէք է այնպէս վառեալ և ոչ այնպէս մեծ, զի զարթուցէ զայն հոգին գտման, որ թելադրէ զհանգամանս վասն դիւրացուցանելոյ կամ նուաճելոյ զաշխատութիւնն. Կարծցին 'ի գործն օրըստօրէ, բայց ամենայն եղանակք նոցա 'ի կատարելն զայն են ծանունք և տաղտկալի:

(61) ‖ Նշանաւոր իմն ցոյց այսմ իրի տայ Ուլլոա. Հնդկանելն զակումբս, զծածկոյթս. և զայլ խոշոր ջուխայս, զորս սովոր են շինել, ճարտարութի նց ոչ է գտեալ զօծ իմն առաւել յաջողակ քան զքարշելն 'ի վեր զթելն զկնի թելոյ, և ապա թըռնել զայնս և որոշել ժամ ընդ ժամ առ 'ի անցուցանել զթեզանն ընդ նս, այնպէս զի առ 'ի աւարտել զփոքրիկ կապերտ մի ծախեն աւելի քան զերկուս ամս. Պանքրօֆթ տայ զնոյն ստորագրութե Հնդկացն Կուիանայ. Ըստ կարծեացն Մաւիրայ ուշիմութի և յաջողակութի Հնդկաց Ամերիկացւոց Հիւսիսայնոց ոչ են մեծագոյնք. 'Ի միջէ քանդակուածոյ պատկերահանաց Մեքսիքացւոց 'ի փուրք-

հա

հաս թուէր ինձ հաւաստելի, թէ ժողովուրդք Մեքսիքոյ գիտէին զբարեգոյն իմն և զյաջողակագոյն եղանակ ոստայնանկելոյ. Գործարանն ոստայնանկաց էր գիւտ իմն վերնագոյն քան զուշիմութի Ամերիկացւոց առաւել հրահանգելոց. ՚Ի բովանդակ գործս իւրեանց երթան յառաջ այնպէս յամր, զի մի յարհեստաւորաց նց ծախէ զամիս երկուս ՚ի փիփ մի դեղընչոյ կտրոցաւ իւրով յառաջ քան զաւարտելն : ||

Այլև յետ հաղորդելոյ նց Եւրոպացւոց զծանօթութի գործեաց իւրեանց, և ուսուցանելոյ հետևել արհեստից իւրեանց՝ մասնաւոր բնաւորութի Ամերիկացւոց նշանաւոր է յամ թեակոխութիս իւրեանց. Կարեն լինել հանդուրժօղք և հանապազորդք յաշխատութե. կարեն օրինակել ծառայական իմն և մանր խնամոտութբ, բայց ցուցանեն սակաւ գիւտ. և ոչ ունին քանքար եզերելոյ արագութբ. Հանդերձ կրթութբն և օրինակաւն, տիրէ ՚ի մէջ նց հոգի զարմին. շարժմունք նց են յամր բնականաբար. և ընդունայն է խթելն զնս առ ՚ի փութացուցանել զքայլն. ՚Ի մէջ Սպանիացւոցն Ամերիկոյ գործն Հնդկի ուրուք անցեալ է յառակ. որով յայտ առնեն զայնպիսի ինչ իր. ուր ծախի յոլով ժամանակ և դնի բազում աշխատութիւն ՚ի կատարելն զայն:

Ի. Ոչինչ յօդուած նկատմամբ բիրտ ազգացն Ամերիկացւոց լեալ է առարկայ մեծագոյն հետաքրքրութե քան թէ սկզբունք նց և ծէսք կրօնին. և ոչ մի ինչ թերևս լեալ է առաւել վեր ՚ի վերոյ իմացեալ, կամ առաջի արարեալ այնպիսի սակաւ կատարելութբ. Առաքեալքն ՚ի քարոզութի եղեն անձինք, որք կալան զեղեցկագոյն դիպաւորութիս տարրանալոյ յայս խոյզ ՚ի մէջ անկիրթ ցեղիցն. Բայց միտք նց լի վարդապետութբք կրօնի իւրեանց, սովորեալք ՚ի կրթութիս իւրեանց և նախանձայոյզք ՚ի ծաւալել զայնս, հաւատային միշտ նշմարել ՚ի

կարծիս և 'ի խորութիւն Ամերիկացւոց իրս ինչ, որ նմանէր առաքեալից սեպհական պաշտաման իւրեանց. Նոքա նկատէին զնմ ինչ յայսպիսի տեսլեան, յարմարելով զայն դրութեն իւրեանց, ջանալով զուգաւորել զաստուածաբանութիւնս, որք անկանէին 'ի ներքոյ աչաց նց, ընդ սեպհական հաւատոյ իւրեանց, և ոչ մեկնելով զայնս ըստ թանձր գաղափարաց այնց տառապեալ ժողովրդոց. Մեղադրեն վայրագաց զծանօթութիւն, զորս նոքա ոչ երբէք յարմարք 'ի կերպաւորել, և ենթադրեն կնն խելամտել սկզբանց և գործոց, որք լեալ են ամենևին հեռի 'ի գիտելոյ նց. Աստուստ է, զի 'ի մէջ խժդժագոյն ազգաց ոմանք 'ի միսիոնարաց ներածեցան 'ի պատկերել, նշմարեալ 'ի նն զհետս ոչ նուազ որոշս, քան թէ հիանալիս ճանաչման վսեմական խորհրդոց և մասնաւոր աստուածաբանութեանց քրիստոնէութե. Մեկնելով նք զբառս ինչ և զխորութիւնս, կնքեցին, թէ ժողովուրդքն այնորիկ ունէին զծանօթութի ինչ ամենասուրբ երրորդութե, մարմնաւորութե բանին, քաւչական պատարագին, զօրութե խաչին, և գործունէութե խորհրդոց. Բազում բարեպաշտ մատենագիրք ուշադիրք ծանրակշռութե նիւթոյն, և ոչ պայմանի այնց կոյր մարդոց, զորոց հնարէին յայտնել զզգացումն, աշխատ եղեն մեծապէս և սակաւ պտղով շուրջ զայսպիսի հետախուզութիւնք. և այսորիկ երևին այնպէս օտարաբար կնճռեալք, զի պիտոյ է քաջ ստէպ գլայ առնուլ առ 'ի զատանել զարարս 'ի նոցունց իսկ յառաջ բերեալս, ըզճշմարտութի, որով ընկերեն այնց, և զանականութիւն, զորս հաստատեն 'ի վն այնոցիկ:

(62) Յօդուածն կրօնի. 'ի մատենին Հօրն Լաֆիթաու մականուանեալ, Մորք Վայրենեաց, տարածանի յերեքհարիւր քառասունևեօթն տաղտկալի երեսս 'ի չորս:

Դիւրահաւատութի նց և երբեմն անզգաստութիւն ոչ ծառայեսցեն մեզ յայսպիսի դիպուածի փոխա-

նակ

ծակ առաջնորդի . որովհետեւ յորժամ տանի ընտրութեն առաջնորդաց՝ այս պարտի լինել մեծագոյն շրջահայեցութեբ՝ առ 'ի ոչ զհետ երթալ նոցա անաբոշ հաւատով :

Են երկու կէտք, յորոց մի հիմնի զօդուած կրօնին . (իմացեալ լինի յորքան կարէ նշմարել լոյն բնական, որովհետեւ ուր միտքն է լուսաւորեալ 'ի լուսոյ յայտնութեն եւ ընդարձակեալ 'ի գիտութէ, բովանդակ ճանաչմունք կրօնին են պարզք եւ ընտանեկանք ) Մի յայսց կէտից հայի 'ի գոյութիւնն այ, եւ միւսն յանմահութեն ոգւոյն . Պարզաբանելն զիդէայս անկիրթ ազգացն վերահայեցմամբ այսց ծանրակշիռ նիւթոց է ոչ միայն առարկայ իմն հետաքրքրութեն, այլ եւ մասնաւորապէս զհրահանգութի . Գղյա- Նէն ազ :

եւս պարուրելով յայլ ինչեւիցէ մասնաւորութէ ամփոփեցից առ այսոսիկ երկուս յօդուածս զխորհրդածութիս իմ . Որ ոք միանգամ կալեալ է զպարապ քննելոյ զկրօնական կարծիս անկիրթ եւ բիրտ ազգացն Ամերիկա, գտեալ է, զի դրութի նց յայսպիսի սեռի ածանցեալ է 'ի կրթութէ, եւ ոչ արդեօք յայտնեալ յորոնելոյ . Յառաջին եւ յաղօտագոյն շրջանս վայրագ կենաց այս հետազօտութիք էին բնաւին անծանօթք . Երբ իմացական կարողութիք են իբր 'ի սկզբան փթթման իւրեանց, եւ զի նց առաջին եւ տկար ներգործութիք վաղվաղակի դարձուցեալ են առ առաջին առարկայս ներգործական հարկաւորութե, երբ ճոխութիք մնաց են այնպէս ամփոփեալք, զի ոչ ունին զընդհանրական տեսակս, երբ լեզուն է այնպէս ամուլ, զի ոչ ունի զբառս առ 'ի յայտնել իրս ինչ, որ ոչ անկանիցի ընդ զգայութիք, ոչ կարէ սպասիլ, թէ մարդ անկիրթ եւ զառուցեալ յաշխարհէ իցէ ընդունակ իւրքնին հետազօտելոյ խնամով զառնչութիւն 'ի մէջ պատճառին եւ գործոյն . կամ ենթադրել, թէ նա ամբարձցի 'ի հայեցողութէ երկրորդին առ ծանօթութի առաջնոյն, եւ յղասցի զարդար իմն գաղա-

փար

փար միոյ առաջին և գերագոյն պատճառի հա-
նուրց. Այն յոգնաթիւ անհամար մարդկային տե-
սակի յայն վայրենի կողմանս, որոց նախապետա-
կան և միակ զբաղումն էր խնդրելն և ապահովա-
ցուցանելն զապրուստ իւրեանց, հայէին 'ի կար-
գադրութի՟ և 'ի գործս բնութեան սակաւ խորհրդա-
ծութբ՟. և ոչ ունէին զընդունակութի՟ մտանելոյ
'ի ճմ՟հ հայեցողականութեան, որ ընդածէ առ ճշմա-
րիտ և բարձր սկզբունս. Ա՟նկ զանազան ժողո-
վուրդք գտեալ եղեն յԱմերիկա, որք ոչ ունէին
զտեսակ գերագոյն էակին, և ոչ զծէսս կրօնա-
կան պաշտաման. Պակասեալք յուշադրութենէ առ
այն մեծագործ տեսարան կարգի և գեղեցկութեան,
զոր յանդիման առնէ շինուած տիեզերաց, ոչ
սովորեալք զմտաւ ածել զայն, որ ինչ են ին-
քեանք. կամ քննել, թէ ով է սկզբնապատճառ
գոյութեանց իւրեանց. անցուցանեն զաւուրս 'ի վայ-
րենի կացութեան իւրեանց առանց ճանաչելոյ զվեր-
նագոյն ածութի՟ ինչ. Ոչ ունին 'ի լեզուի իւր-
եանց զանուն ինչ վս՟ նորին. և առաւել խնա-
մոտ նշմարօղք ոչ լեալեն բաւական ճանաչել 'ի
նմ՟ զստորութի՟ կամ զսահմանադրութի՟ ինչ, որ
ցուցանէր զնմ՟ խնամատեալս զաւադութէ նր՟, կամ
փոյթս տանելոյ զշնորհս նր՟:
(63) ‖ Վերառաքեցի զընթերցօղսն առ զանազան
մատենագիրս, որք ստորագրեն զազգսնուաղ քա-
ղաքականացեալս յԱմերիկա. Ակայութի՟ նց՟ է մի-
օրինակ. Հօրն Ափպասայ պատկանեալ առ ժողո-
վուրդն Զինայօսյ միաբանի ընդ այլոցն. Նա. ասէ,
ծայրագոյնս ուշադիր եղէ յայն ամին, յորս յա-
մեցի 'ի մէջ նց՟ առ 'ի ստուգել զիս, եթէ պարտ
էին նկատիլ իբր կռապաշտք. և մարթ է հաս-
տատել առաւել կատարեալ անվթարութբ՟, որ
թէպէտ 'ի մէջ ոմանց 'ի նոցանէ կարեն լինել
հետք կռապաշտութեան, սակայն այլք ոչ ունին
զքուզնալքեայ ճանաչումն ածյ՟, և ոչ խսկ սուտ ինչ
ածու-

ածութեն. ոչ մատուցանեն զկերպական ինչ երկր-
պագութի գերագոյն էին, որ տիրէ հանուրց. ոչ
ունին զանսակ ինչ նախախնամութե միոյ արար-
չի, կամ կանոնաւորչի. յորմէ սպասիցեն յայլ
կեանս զվարձ բարի գործոց իւրեանց, կամ զպա-
տիժ չարեաց. և ոչ ճանաչին հրապարակաւ յի-
միք ներգործութե ածային պաշտաման. Աեխղոս
Թուքիւդիդէս : ||

Բայց այս հանդիպի միայն 'ի մէջ մարդկան, որք
գտանին յառաւել խուժադուժ վիճակի բնութե,
յորժամ իմացական կարողութիք նց են այնպէս
տկարք և կոպարաւորեալք, զի ոչ կարեն վերա-
նալ 'ի վր ինքեանց. ուստի միան յանընդհատ իմն
անզգայութե առ տպաւորութի վերնագունի իրիք
կարողութե. Այլ 'ի պարակայս զանազանս 'ի սո-
ցանէ և քան զսոսա յոյժ առաւել երջանիկս՝ միտք
մարդկային դիտմամբ կերպաւորեալ վն կրօնի, բա-
ցեալ լինի իսկոյն առ ազդմունս նր. և ընդունի
յայնմանէ զգաղափարս մաքուրս և կատարեալս,
որք սահմանեալ են առ 'ի լինել աղբիւր իմն մխի-
թարութե 'ի մէջ թշուառութեց կենաց. Յումանս
'ի ժողովրդոցն Ամերիկացւոց գտեալ 'ի սկզբան
հրահանգութե իւրեանց տարօրոշին ըմբռնմունք
աներևոյթ իրիք և հզօր էութե. Այս ըմբռնմունք
ոչ ծնանին 'ի զգացուածոյ երախտագիտութե վն
բարերարութեց ընկալելոց, այլ են սկզբնաբար
աներոշք և շփոթք. և երևին թելադրեալք մա-
նաւանդ յերկիւղէ չարեացն, որք սպառնան. Յոր-
ժամ բնութիւն միօրինակ և անայլայլակ կանոնա-
ւորութի յառաջատէ յընթացս իւր, վայելեն ժո-
ղովուրդքն այնուքիկ 'ի բարիսն, որք ծագին յայն-
մանէ առանց տատամսելոյ 'ի խնդիր պատճառի նր.
Բայց իբրև սակաւ մի այս կարգ այլայլի, սթա-
փին և ցուցանին շտուցեալք. Իսկ յորժամ տե-
սանեն զդէպս, որոց ոչ են սովոր, կամին հե-
տախուզել զպատճառս նր ագահ աւելահօգութի.

Անտք

Միտք նց անընդունակ է ընդմտանելոյ յայնս. բայց պատկերակերպութիւն առաւել սրտեայ և առաւել ազատ կարողութի ոգւոյ վճիռ հատանէ առանց վարանելոյ. Վերագրէ զայսոսիկ տարակարգ պատահմունս բնութեան առ ուղղեցութի անտեսանելի էակաց. և ենթադրէ, թէ որոտումն, մրրիկն և դետնաշարժն իցեն գործք միջնորդութեան նոցա. և բղխք 'ի տխմարագոյն ազգաց ցուցանեն ունել զշփոթ իմն տեսակ հոգւոր և աներևոյթ իրիք կարողութեան. որ վերագիտող է այսց պատահարաց, որք գան 'ի յատակել զերկիր և 'ի զարհուրեցուցանել զբնակիչս նր:

(64) ‖ Ժողովուրդն Պրասիլեայ էր այնքան զահի հարեալ յորոտմանէ, որ է յաճախ և ահարկու յայնմ գաւառի, ոչ յայլ մասունս այրեցած գօտւոյն, մինչ զի հայէր յայն ոչ միայն իբրև յառարկայ կրօնական յարգանաց, այլ և անուանէր զնա Թու-ֆանֆան, որ յայնբարբառ է առաւել բացայայտիչ առ 'ի նշանակել զածութիւն. Փիսոնէ 'է ԼԸ Պրասիլեայ : ‖

Բաց յայսմանէ տառապանք և վտանգք վայրագկենաց են այնչափք, և մարդիկ գտանին 'ի կացութիւս այնպէս զարհուրելիս, մինչ զի միտքն դիտակ տկարութեան իւրոյ ոչ ունի զայլ ապաւէն, բայց եթէ յառաջնորդութեան և 'ի պաշտպանութեան իմաստութեան իրիք և կարողութեան վերնագունի քան զայն, որ է մարդկային. Վհատեալ վայրագն 'ի թշուառութեանց, որք ճնշեն զնա, և արտաքրեալ վտանգաց, զորս իւրն ոչ կարէ հեռացուցանել, ոչ վստահանայ այլազգ յանձն իւր, զգայ զանկարութի իւր սեպհական, և ոչ տեսանէ զայս եղանակ զերծանելոյ յայնմանէ, բայց եթէ միջնորդաւ աներևոյթ իրիք բազկի. Այսպէս յայն բովանդակ ազգս ոչ լուսաւորեալս և ոչ կրթեալս՝ այն ծէսք, կամ այն արարողութիւնք, որք երևին ներգործութիւնք կրօնի, ունին յառաջակայ զ'ի բաց դար-

գարձուցանելն զչարիսն, զորս կրեն նոքա, կամ երկնչին, թէ կրելոց են. Մանիթուս կամ Ոքիս հիւսիսային Ամերիկացւոց էին յուռութք կամ թովչութիւնք, յորս պատկերակերպէին նոքա զայնպիսի զօրութիւն ազատելոյ զանձինս, որք յուսային 'ի նա, յամ ձախորդակ արկածէ. կամ համարեալ էին իբր ոգիք պաշտպանք, զորոց ակնունէին զինթերակայութիւն 'ի թշուառ պարագայս. Զէմիք կղզականացն էին հաստատեալ իբր սկզբնապատճառ ամ պատահարի, որ նեղէ զկարմ մարդկային. երեւեցուցանեն զնս ընդ ահաւորագոյն կերպարանօք, և մատուցանէին նոցա զկրօնական հարկս ոչ այլով դիտմամբ, բայց եթէ առ 'ի հանդարտեցուցանել զմոլեգին ածութիւս իւրեանց, Ամ և 'ի մէջ այնց ցեղից, որոց փողուած կրօնին էր առաւել ընդարձակեալ, և որք յղացեալ ունէին 'ի միտս զտեսակս բարերար էակաց. որք հաճէին յանձինս իւրեանց առնել զբարի եզչար ոգւոց տրամադրելոց 'ի բերել զչարիս, աւելորդապաշտութիւն ծնաւ յերկիւղէ. և եդ զբովանդակ ջանս իւր առ 'ի բաց վտարել զձախորդութիւս. Հաւատային, թէ բարի ածութիւք իւրեանց բնականաբար բարերարք շնորհէին զինչ և իցէ շնորհս առանց խնդրելոյ, կամ գոհանալոյ զայնմանէ. և վն այսորիկ վերածէին զբովանդակ փոյթս իւրեանց յաղաչել և 'ի ցածուցանել զչարկութի այնց կաբռնութեանց, յորս հայէին իբրև 'ի թշնամիս ազգի մարդկան:

Այսպիսի էին անկատար գաղափարք բիրտ Ամերիկացւոցն նկատմամբ ներկայութեն աներեւոյթ ներգործողացն. և այսպիսի էր ցածուն և անարգ առարկայ պաշտաման իւրեանց. Իսկ եթէ մեք կամեաք քննել զբովանդակ խուժադուժ ազգս 'ի նմին կացութեն, ոչ վկայասնութիւն յանդիման առնէ տեսութեն, գտանէին ամենեքեան ամենեւին նմանք 'ի մէջ իւրեանց 'ի սկզբունս և 'ի ծէսս. և կնքիւք

թէ

թէ անկիրթ մարդիկ յայսպիսի պարագայս ունին զնոյն ընթացս 'ի զարգացման իւրեանց:

Նշանաւոր վաճառականացն 'ի մէջ կրօնական ճանաչմանց նց: Սակայն 'ի մէջ այնց ցեղից, որք լեալ են ընդ երկայնագոյն ժամանակ միաւորեալ, և որք արարեալ են զմեծագոյն յառաջադիմութի՟ 'ի կրթութե՟, տեսանի հակումն ինչ, թէպէտ և տկար, առ առաւել արդար և առաւել հաւասարեալ ծանօթութի՟ գերագոյն կարողութե՟, որ կանոնաւորէ զտիեզերս. Նոքա ցուցանեն ճանաչել, թէ պարտի լինել պատճառ ինչ ընդհանրական, որում բովանդակ իրք պարտին զգոյութի՟ իւրեանց. Դատելով 'ի խօսից ինչ նց մարթ է յառաջ ածել, թէ ճանաչեն զանծային ինչ կարողութի՟, որ արարեալ է զաշխարհ, և կարգադրէ զամ դիպուածս. Անուանեն զայն հոգի մեծ. այլ այս գաղափարք են անկատարք և երկդիմիք. և յորժամ նկրտին մեկնել զայնս, տեսանի, թէ 'ի մէջ նց բառս հոգի ունի զնշանակութի՟ ինն շատ զանազան յայնմանէ, յորում առնումք մեք զայն ճշմարտութե՟. և թէ ոչ ըմբռնեն զանմահութի՟ ինն եթէ ոչ մարմնեղէն. Տան իմանալ, թէ ածք նց են մարդակերպք, թէպէտ բնութե՟ առաւել գերազանցք քան զմարդ. և ճապաղեն առասպելս այնպէս յիմարականս և անյարիրս զկատարողութե՟նց նց և զեղանակէ գործելոյ նց, մինչ զի ոչ արժանաւորին ունել զտեղի 'ի վիպասանութե՟ միում. Այս ցեղք ոչ ունին և ոչ իսկ զկերպ ինչ հաստատեալ հրապարական պաշտաման. ոչ զտաճարս կանգնեալս 'ի պատիւ ածութե՟նց իւրեանց, ոչ զպաշտօնեայս նուիրեալս մասնաւորաբար 'ի ծառայութի՟ նց. Բայց աւանդութի՟ն փոխանցուցեալ է մինչև 'ի նս զանազան արարողութի՟ս և զխորութի՟ս բժժականս. առ որս դիմեն տղայական ինն դիւրահաւատութե՟, յորժամ դէպք ինչ զարթուցանեն զնս 'ի սովորական անզգայութե՟ իւրեանց 'ի խոստովանել զկարողութե՟ և յաղերսել զպաշտպանութի՟ գերագոյն էակաց:

Յետք Նաթքհեզաց և ժողովուրդն Պօկօթայ էին Պերու-
յառաջադէմք քան զայլ անկիրթ ազգս Ամերիկոյ Ըն-
'ի ճանաչմունս կրօնի իւրեանց և 'ի քաղաքական Նոլե-
սահմանադրութիւնս իւրեանց. և պատճառ այսր զա- հեղոյ:
նմանութիւն ոչ է առաւել դիւրին 'ի մեկնել քան
զմիւսն, զոր արդ ևս քննեցաք. Արեգակն էր ա-
ռաջին առարկայ պաշտաման 'ի մէջ Նաթքհեզաց.
Ի մեհեանս նց, որք շինեալ էին որիշ իմն մե-
ծագործութբ, և վայելչացուցեալք պէսպէս զար-
դուք ըստ սարասի ճարտարապետութեն իւրեանց,
պահէին զհուր ինչ մշտնջենաւոր իբր տարացոյց
մաքրագունին ածութեն իւրեանց. Ընդ տեսանէին
պաշտօնեայք սահմանեալք 'ի հսկել և 'ի պահել
զնք հուրն. Առաջին ներգործութիւն նախապետա-
կան գլխոյ ազգին էր մատուցանել յամ առաւօ-
տու զհնազանդութի արեգական. և յեղանակս ինչ
հանդիպէին տօնք, որք կատարէին 'ի բոլոր հա-
սարակութէ հանդիսաւոր և անարիւն ծիսիւք. Այս
է առաւել նշանաւոր տեսակ կռապաշտութեն 'ի
գործ ածեալ յԱմերիկա. Թերևս վս զի առաւել
առձեռն այնց ժողովրդոց և առաւել ամոքիչ.
Արեգակն է երևելի ակիզբն ուրախութե, բեր-
րութեն և կենաց, որք ծաւալին 'ի ձեռն բնութե.
և յորժամ միտք մարդկային 'ի ջանս իւր հետա-
խուզութբ նկատէ զընդհանրական և զշնչաւորիչ
ազդողութի նր, հաստատէ զզարմանս իւր առ այս
երևելի, և հիմնալով ընդ առարկայն առանց ամ-
բառնալոյ բարձրագոյնս, վճարէ փառաւորագոյն և
առաւել բարերար գործոյն այ զայն երկրպագու-
թիւն, որ հարկաւորապէս պարտի նմա, որ ստեղծն
զնա. Նաև քանզի հուրն է առաւել մաքուր և ա-
ռաւել ներգործականն 'ի տարերաց, և յիմք յո-
րակութեց իւրոց և 'ի գործոց նմանի արեգական,
ընտրեցին զնա վս այսորիկ առ 'ի լինել տարա-
ցոյց հզօր ներգործութեց նր. Նախկին Պարսիկք
ժողովուրդք յայժ վերնագոյնք ամ մասամբք քան

զեկրա

զԼիրտ ցեղսն, զորոց ստորագրեմ զծէսսն. Հիմնեցին զկրօնական դրութիւն իւրեանց 'ի վերայ այսպիսի սկզբանց. և հաստատեցին զկերպ ինչ հրապարակական պաշտաման նուազ խոշոր քան զկերպ որևիցէ այլ ժողովրդեան զուրկ եղելոյ 'ի լուսաւոր առաջնորդութենէ ածային յայտնութեան. Այս սքանչելի զուգաւորութիւն գաղափարաց 'ի մէջ այսց երկուց ազգաց յայսպիսի իմն զանազան վիճակի գտանի է մի յառաւել եզական և յառաւել անմեկնելի պարագայից, որք ընդառաջ հանդիպին 'ի վիպասանութեան մարդկային իրաց:

Առ ժողովրդեան Փոկօթայի արեգակն և լուսինն էին նմանապէս նախապատուական առարկայք կրօնական երկրպագութեան. Դրութիւն նց յայսպիսի սեռի էր առաւել կանոնաւոր և լրացեալ, թէպէտ նուազ մաքուր քան զՆաթքհեզացն. Ունէին զտաճարս, զսեղանս, զքահանայս, զպահս և զերկայն իմն շարս խորութեանց. Բայց ծէսք պաշտաման նց էին անագորոյնք և արիւնաւորք. Մատուցանէին զմարդկային զոհս ածութեանց իւրեանց. և բազումք 'ի սովորութեանց նց նմանէին անձկապէս խուժադուժ վարմանցն Մէքսիքացւոց. զորոց ունիցիմք յիւրում տեղւոջ պարապ նկատելոյ զընաւորութիւնս ուշադրութեամբ:

[illegible] Խօսելով 'ի միւս մեծ կէտն վերաբերեալ առ ան-
[illegible] մահութիւն ոգւոյն, զգացուած Ամերիկացւոց ցուցա-
[illegible] նէին առաւել միակերպք. Մարդն ևս յորժամ
[illegible] է նուազ կրթեալ և նուազ լուսաւորեալ 'ի մշա-
[illegible] կութենէ հոգւոյ քանմի 'ի խորհրդն զքակտումն իւրո
[illegible] և ձգէ ևս յառաջ զհայեցմունս իւր յուսալով
[illegible] զվիճակ իմն ապագայ և երանական գոյութեան. Այս
զգացուած եթէ յամբողջ իմն խելամտութենէ արժանաւորութեան իւրոյ զոր ունի ինքն ծագեցի, կամ եթէ յընդարձակ իմն բաղձանաց անմահութեան, ընդհանրական է. և կարէ ևս ասել բնական. Հիմնեն 'ի վերայ այսորիկ առաւել ամբարձեալ յոյսք մար-

Եա դկ

դոյ լուսաւորելոյ զՀանդերձեալ կենաց. և յայս քաղցր մխիթարութե՛ ոչ՝ք եղեալ է զուրկ եւս և ՚ի նախնագոյն և յառաւել ուրոՀական դարս մարդկային Հրաշանգութե՛. Թագաւորէ այս կարծիք ՚ի միոջէ ծագէ Ամերիկոյ մինչև ցմիւս. ՚Ի կողմանս ինչ է առաւել տկար և աղօտ. յայլս պարզեալ յայտնագոյնս, և ծանուցեալ ընդ ամուրեք. Ոչ յոյժ քաղաքականացեալ ժողովուրդք Ամերիկոյ ոչ երկնչէին ՚ի մաՀուանէ իբր և ՚ի շիջմանէ գոլոյ իւրեանց. Յուսան ամենեքեան զապագայ իմն և զերջանկագոյն վիճակ. ուր լինիցին զերծք մշտնջենաւոր ՚ի թշուառութենէ, որք դառնացուցանեն զմ̃դկային կեանս ՚ի ներկայս պայմանի իւրում. Զայս ձևացուցանեն ինքեանց իբր երկիր իմն փափկալից Հանդերձ յաւէժական աղբերաւ օրՀնութեանց. որոյ անտառք լի են էրէիւք. որոյ գետք առատ են ձկամբք. ուր ոչ լինի զգալ զքաղց. և ուր անընդՀատ իմն առատութի վայելեալ լինի առանց ջանի և առանց աշխատութե. Բայց ՚ի կերպաւորելն զառաջին անկատար գաղափար անտեսանելի աշխարՀին ենթադրեն շարունակել անդէն նոյն բաղձանաց. և թէ եղիցին նոքա պարապեալք ՚ի նոյն զբաղմունս. և վնկ վերագրեն զգերազանցագոյն վիճակն այնմ կացութե՝ որպիսութեանց և քանքարացն, որք լեալ են առարկայ Համարման նց յաշխարՀի. Նմին իրի Ամերիկացիք նշանակեն զբարձրագոյն տեղին յերկրին Հոգւոց առաւել ընտանեակ որսորդին, Համարձակ և բազդաւոր մարտկին, նմա, որ յանկարծ ՚ի վճ̃ Հասեալ և սպանեալ էր զմեծագոյն բզ̃մութի թշնամեաց, խոշտանկեալ զբզ̃մս ՚ի կալանաւորաց և կերեալ զմիս նոցա:

Եւրոպա-

Նախազօրացեալ էին կարծիքս այսոքիկ ցայն- ձէ ընդ ձեռն վայր, մինչ զի արարին ծնանել զսովորութի իմն ՚ի Եւրոպէ ընդՀանրական. որ և միանգամայն ծառայէ իբր դարեան ԺԷ Հզօրագոյն վկայութի, թէ Ամերիկացիք Հաւա- տարեալ



տայլին Եւրոպացւոց:

տային զՀնդերձեալ իմն կացութի. և կերպաւո-
րէ զևս զմայլելի պատմութի այնր, զոր ակնու-
նին գտանել անդ. Պատկերացուցանելով մին-
քեանս, թէ մեռեալք սկսանիցին գնոր իմն ընթացս
յաշխարհին, ուր գնացեալ են, ոչ զի մի մտա-
նիցեն անդր առանց պաշտպանութե և անպատրաստ՝
թաղեն ընդ նս զաղեղն իւրեանց. զնետս և զայլ
զէնս 'ի կիր առեալս յորսորդութե կամ 'ի պա-
տերազմի. առանդեն 'ի գերեզմանս նոցա զմորթս
կամ զիրան, զորս զգեցեալ էին, զՀնդկաց ցո-
րեանն, զմանիոք, զկահս տանն, զորսն, և
զինչ դատեալ է կարևոր առ պարզ եղանակ կե-
լոյ նոցա. 'Ի գաւառս ինչ 'ի մահօճան քաղե-
քեայ ուրուք կամ գլխոյ՝ սպանեալ լինէր որոշ
ինչ թիւ կանանց իւրոց, սիրելեաց իւրոց, և գե-
րեաց իւրոց. և թաղեալ լինէին 'ի միասին ընդ նմա.
ոչ զի 'ի Հանդերձեալ կայանի իւրում երևիցի նա
նուազին արժանաւորութե, և զհետ երթիցեն նորա
նոյն արքանեակք. Այս հաւատ է այնպէս ար-
մատացեալ, մինչ զի բազումք 'ի հետևորդաց նց
մատուցանեն զանձինս իւր կամաւորական զոհս. և
փութամիցին վն ստանալոյ զարտօնութի ընկերե-
լոյ վախճանելոյ տեառն իւրեանց, համարելով
զայն ևս բարձրագոյն եղականութի. Դժուարին
լեալ է 'ի դիպողութիս ինչ գնելն զկապարս այսմ
սիրալիրական պարտականութե. և 'ի բաց դարձու-
ցանելն զյուղարկաւորութի սիրելի ուրուք զորա-
վարի. զոր ցեղն մատուցանէր վն խնայելոյ 'ի
զոհսն:

(65) ‡ 'Ի պատմութէն, զոր առնէ տէրն Տու-
մոնթ ականատես վկայն զՀանդիսէ թաղման մեծի
գլխոյն Նաթքհէզաց, երևի. թէ զգացուածք ան-
ձանց յայսմ դիպաւորութե էին ամենևին տար-
բերք. Սմանք փութային յայն պատիւ մեծաւ անձ-
կանօք. այլք ջանային խուսել 'ի դատապարտու-
թէ իւրեանց. և բազումք ապրեցուցանէին զկեանս
իւր-

իւրեանց փախչելով յանտառս. Օրորինակ Պրամինք Հնդկաց տան զորբեցուցիչ կաթիլ ինչ կանանց, որք պարտին այրիլ ընդ դիականց արանց իւրեանց, որ առնէ զնո անզգայս առ մերձումն ճակատագրութեան իւրեանց, այսպէս Նաթքչեզք պարաւանդէին զգոհս իւրեանց կլանել զպէսպէս խոշոր հաւս դեղլինչոյ. որ յառաջ ածէ զնմանակ ինն գործ. Յեղա. Լաւտոյ: ‖

Առ Ամերիկացիս և առ այլ ոչ քաղաքականացեալ ազգս բաղումք 'ի ծիսից և 'ի պահպանութեանց, որք ունէին զնմանութիւն ինչ ընդ ներգործութեանց կրօնին, ոչ յառաջ գան 'ի պաշտօնասիրական իմն յորդորատճառէ, այլ 'ի վառեալ իմն ըղձութենէ խելամտելոյ գաղտնեաց ապագային. Կարողութիւնք մարդկային մտաց յայն անհատան են ամենեին տկարք և անկիրթք. և վնկ են տրամադրեալք 'ի զգալ և 'ի ծանուցանել զայս սնոտի հետաքրքրութիւն իւրեանց. Ընտուցեալք առ դիպուածսն, զորոց ոչ հասանեն ըմբռնել զպատճառն, պատկերակերպեն, թէ իցէ 'ի ծագման նոցա խորհուրդ կամ հրէշ ինչ. Զարհուրեալք յիրացն, զորոց ոչ կարեն տարորոշել զսկիզբն կամ զհետեւութիւն, դիմեն մանաւանդ առ այլ հայթհայթանս առ 'ի հոլանել զայն՝ քան թէ 'ի կիր արկանել զխորագիտութիւն իւրեանց. և այսպէս աւելորդակրօնութիւն, որ կացուցանի իբր դրութիւն, առակցի ընդ ցանկութեան հմայելոյ զգաղտնիս ապառնի ժամանակաց. Հմմայութիւն եղանի 'ի մէջ նոցա ներգործութիւն իմն կրօնական. և հմայք և մոգք քարոզելով զինքեանս պաշտօնեայս երկնից՝ յանդգնին մեկնել զպատգամս նոր. և պարծին ունել զմեծ արհեստն յայտնելոյ զայն, որ է ծածկեալ նաև յաչաց նոցա:

Աւելորդակրօնութիւն յարացեալ ընդ պաշտօնասիրութե

Սակայն 'ի մէջ անկիրթ ազգացն, ոյք ոչ ճանաչեն զգերագոյն իմն կարողութիւն, և ոչ ունին զծէսս կրօնականս, հետաքրքրութիւն նոցա գիտելոյ զապագայն ծնանի և առնու զոյժ 'ի տարրեր սկզբնէ.

[illegible]

Հիւանդութիւնք մարդկան 'ի վայրագ կացութեան են իբր զհիւանդութիւնս շնչաւորաց սակաւք և բանականք. Նոցա անհամբերութիւն 'ի կրելն և փոյթն վերստին ստանալոյ զառողջութիւն շնչեն 'ի նոսա զանսովոր իմն ակնածութի առ անձինսն, որք գիտէին ճանաչել զբնութի ախտից նոցա և նախապահել զնս յանկարծ և 'ի մահաբեր արտագործութեանց նոցա. Այս տգէտ գուշակք էին այնպէս 'ի խաւարի կերտուածոյ մարդկային մարմնոյ, մինչ զի ոչ կարէին լինել ծանօթ նոցա պատճառք հիւանդութեանց իւրոց. և ոչ եղանակն, յոր եղերէին այսօրէն. Անկ վերացումն մնաց խառնեալ երբեմն ընդ բժնի իմք խորամանկութեան լրացուցանէր զպակասութիւն գիտութեան. Դիւրահաւատութիւնն սէր զարմանալեացն բնական մարդոց վայրենեաց նպաստէին խաբէութեան, և նոքա յայնմ վայրի էին զօհք պատրանաց. Գլխաւոր բժիշկք առ վայրագս են ազգ ինչ բժժագործաց կամ դիւթից, որք պնդէին գիտել զանցեալն և գուշակել զապագայն. Կոչչութիւնք, մոգութիւնք, ծպտմունք են հայթհայթանք, զորս 'ի կիր առնուն առ 'ի վանել զերևակայական պատճառս ախտին. և հանգչելով 'ի վն գործունէութեն նոցա, գուշակեն լրբաբար, թէ զինչ լինելոց է վախճան խարեալ հիւանդաց իւրեանց. Յայսմանէ տեսանի, թէ բովանդակ հոգածութի վայրագին է վն ազատեալ լինելոյ 'ի ներգործական չարչարանացն, և ոչ 'ի չարեացն, որք սպասեն նմա 'ի հանդերձեալ կեանսն. և զայս փոյթ ցուցանէ նա վն բժշկութեան, և ոչ վն կրօնական և պաշտօնասիրական իրիք վախճանի: Ի՛ն յառաջնոց և յառաւել իմաստուն վկայանիցն Ամերիկոյ մնաց մեծապէս հիացեալ 'ի տեսանելն զայս կապակցութի 'ի մէջ մոգութեն և բժշկականութեն 'ի ժողովուրդն Ապանիոյի. Բայց այս ոչ էր մասնաւոր նոցա միայն. Ալէքսիս, փիւայաս, աւթմօինս, կամ զինչ և իցէ անուն,

նուն, որ զանազանէր զգուշակս նոցա, կամ զգիւթս յայլ մասունս Ամերիկոյ, էին ամենեքեան բժիշկք իւրաքանչիւր ցեղից իւրեանց նովին եղանակաւ, որով պուհիխթօք 'ի Սպանիոլայի. Իբր պաշտօն նոցա պտուտկել զմարդկային միտս տկարացեալս 'ի հիւանդութէ, որ է ժամանակ պատերազմի մը նորա. յորում տրամադրեալ է ահաբեկիլ և դադարիլ 'ի պատրողական յոյսս. և յայնժամ հաւանեցուցանէին զտխմարսն զայնոսիկ ունել զանորոշ վստահութի 'ի զօրութն վիճակընկեցութեց իւրեանց և 'ի ստուգութն կանխասացութեց նոցա։ Յորժամ այսպիսի մարդիկ ճանաչէին զազդեցութի Ատու-գերբնական իրք կարողութն 'ի դիպուածի միում ճանաչընդունելին դիւրակի նաև յայլում իմիք. Ամերիկա- Բայց սա-ցիք ոչ յամեցին յերկար ժամանակ յենթադրել, բռծանէ։ թէ ազդողութի թունչութեց ոչ ամփոփիցի միայն առ բժշկութի. Դիմէին առ այն յամ առթի վտանգի կամ ձախորդութե. Յորժամ ելք պատերազմին էր մասնաւորաբար ներհակ, յորժամ առանց նախատեսանելոյ մնային խաբեալք յորսորդութե, յորժամ հեղեղք, կամ երաշտութի սպառնային ապականել զարմտիս իւրեանց, հրաւիրէին զմոգսն առ 'ի սկսանել զգործս իւրեանց, առ 'ի յայտնել զպատճառս այնց թշուառութեց, կամ առ 'ի գուշակել, թէ զինչ լինելոց էր հետևութի այնց. Վստահութի նոցա յայս պատրողական արհեստ աճեաց աստիճանաբար. և եկն 'ի յայտ 'ի վախճանի յամ պատահմունս, որ հանդիպէին օրըստօրէ. Յորժամ գտանէին ընկղմեալք 'ի դժուարութիս, կամ մերձք 'ի մտանել 'ի խորհուրդ ինչ մեծակշիռ, իւրաքանչիւր անհատ խորհուրդ հարցանէր կանոնաւորաբար 'ի հմայողէ, վարէր ըստ խրատուց նր առ 'ի զերծանիլ յառաջնոցն, և առ 'ի բարւոք ուղղաւորել յերկրորդին զընացս իւր. Այսպէս և 'ի մէջ խժդժագոյն ցեղիցն Ամերիկոյ երևեցաւ ինքնակամ կրօնն յայսմ կերպի. և հմայութիւն յայն տեղիան է արհեստ իմն

 մեծա-

մեծավարկ. Մինչև ստացեալ էր մարդն զայն ծանօթութիւն ա̃ծութե̃ն, որ չնչէ 'ի նա զյարգանս և պարաւանդէ զնա առ երկրպագութի̃, ամբառնայր զյանդգնական ձեռն առ 'ի բառնալ զայն վարագոյրն, որով յառաջատեսութիւն ա̃յ թաքուցանէ բարերարութե̃ զխախճանս իւր 'ի մարդկային միտաց. և նկրտէր անօգուտ անձկութե̃ ընդմըտանել 'ի խորհուրդս ա̃ծային կառավարութե̃ն. Ճանաչելն և յարգելն պ̃ծ է յայտնի ի̃մ նշան լուսաւորութե̃ն, բարգաւաճութե̃ն հասունութե̃ն միտաց մերոց. ընդունայն ըղձութի̃ն գիտելոյ զապագայն է մոլորութի̃ ի̃մ տղայութե̃ միտաց և տկարութե̃ իւրոյ:

'Ի սոյն յայս տկարութե̃ յառաջ գայր նաև հաւատն, զոր ընծայէին Ամերիկացիք երազոց, դիտողութե̃ց, և ուշադրութի̃ նոցա առ կարկաչմունս թռչնոց, և առ հառաչմունս չնչաւորաց. զորս ենթադրէին լինել այնքան ցուցակք ապագայ դիպուածոց. և եթէ ինչ յայսպիսի գուշակողական նշանաց համարեալ է վնասակար, նոքա վաղվաղակի 'ի բաց կան 'ի սատարելոյ զխորհուրդն զայնոսիկ, առ որս անձկանօք բերեալ են:

Ուրոյն բարք : Ա. Առ 'ի կերպաւորել զլրացեալ ի̃մ ճանաչումն անկիրթ ազգացն Ամերիկոյ կարևոր է նկատել զվարս ինչ եղականս. զի թէպէտ և ընդհանրականք և տարորոշիչք, ոչ կարեն պատշաճապէս վերածիլ առ մի 'ի յօդուածոցն, յորս բաժանեցի զհետախուզութիս իմ նկատմամբ եղանակի կելոյ նոցա:

Յօժարութիւն կաշառակելոյ : 'Ի մէջ վայրագաց ա̃մ մասին երկրագնտոյս սէր կաշառման է բերկրական ի̃մ. Այն զի ժամանակ իւրեանց յոլովակի անցանէ 'ի պարապորդի̃մ անհոգութե̃ առանց ինչ զբաղման, որ զարթուցէ զն̃ա, կամ կցորդիցի նոցա, նոքա բերկրին ընդհանրապէս 'ի զբօսանս ինչ, որ դնէ 'ի վարժման զներգործական կարողութիս բնութե̃ իւրեանց.

րեանց. Սպանիացիք յորժամ այց արարին Ամէրիկոյ զառաջինն, հիացան ընդ յօժարութի ազգայնոցն առ կաքաւումն. և տեսին զարմացմամբ զժողովուրդ ինչ ցուրտ, և ոչ բնաւ շնչաւորեալ 'ի մեծագոյն մասին բաղձանաց իւրոց՝ իբր վարիլ և դառնալ 'ի կենանս, և պարապիլ եռանդիւ յայսպիսի իմն հաճոյական զբօսանս յամ նուագի, յորում պիտոյ լինէր. Սակայն կաքաւումն ոչ պարտ էր կոչել 'ի մէջ նոցա զբօսանք. Այն է իսկական և ծանրակշիռ զբաղումն, որ 'ի գործ ածի յամ պիտոյս հրապարական կամ սոսկական կենաց. Եթէ դէպ լինիցի զրոյց ինչ 'ի մէջ երկուց ցեղից Ամերիկացւոց, պատգամաւորք միոյն մերձենան հանդիսիւ կաքաւելով. և առաջի առնեն զքալումէթ կամ զնշան խաղաղութեն. և սաքհէմն միւսոյն ընդունին զնն նովին խորութբ. Եթէ ծանուցեալ է պատերազմ 'ի թշնամւոյ ումեք, առնի կաքաւմամբ, որ բացայայտէ զոխերիմութիւն, զոր զգան. և զքինախնդրութիւն, զոր խորհին. Յորժամ պարտին ցածուցանել զբարկութի ոգւոց իւրեանց, կամ հռչակել զբարերարութի նոցա, խնդալ ընդ ծնունդ իրիք տղայոյ, կամ ողբալ զմահ սիրելւոյ ուրուք, ունին զկաքաւս յատկացեալս իւրաքանչիւր յայսց պարագայից և յարմարեալս զանազան զգացուածոց, որք յայնժամ շարժեն զնս. Եթէ անձն ոք դնի հիւանդացեալ, կաքաւումն ինչ պայմանեալ է իբր գործունէագոյն հայթհայթանք առ 'ի դարձուցանել զնա յառողջութի. և եթէ նոյն իսկ հիւանդն ոչ կարէ տոկալ առ աշխատանս այնպիսի իմն կրթութեն, բժիշկն, կամ կատարէ զայն յանուն նր, որպէս եթէ զօրութի ներգործականութեն իւրոյ անցանէր առ կրօղն:

Բովանդակ կաքաւմունք նոցա նմանին գործողութեն իմիք. և թէպէտ երաժշտութիւն, յորմէ կանոնաւորեալ են, իցէ ամենապարզ և անախորժ ականջաց վն անհամ միաձայնութեն, ոմանք 'ի պա-

բուց նոցա երեւին սքանչելաբար բացատրիչք եւ ողելիցք. Այքառ պատերազմին է թերեւս առաւել ապշելին. որովհետեւ է ներկայացումն իմն լրացեալ իրիք ճակատամարտի Ամերիկացւոյ. Անկնումն մարտկաց 'ի գիւղից իւրեանց, չուն 'ի գաւառ Թշնամեաց. զգուշութիքն, որովք բանակին. աչալրջութիւն, որով դնեն զոմանս 'ի վաշտից իւրեանց 'ի դարանի. եղանակն յանկարծ 'ի վր հասանելոյ հակառակորդին. շառաչումն եւ դժնէութի պատերազմին. կորզումն գագաթամղնեաց սպանելոցն. ըմբռնումն կալանաւորաց, դարձն տիրապետողաց յաղթանակաւ. Եւ տանջանք տարաբախտ գոհիցն են բովանդակ լիք, որք ներկայացուցանին անդէն մի ըստ միոջէ. Դերասանք կատարեն այնպիսի յափշտակութի մտաց զպէսպէս պաշտօնս իւրեանց, եւ են այնպէս օտարոտի շարժմունք նոցա՝ դէմքն, բարբառն, եւ այնպէս քաջ յարմարեալք առ զանազան երեւեցուցմունս, մինչ զի Եւրոպացիք դժուարին 'ի հաւատալ, թէ լիցի տեսարան իմն պատկերակերպական. Եւ ոչ տեսանեն զայն առանց խորշման եւ սարսափման:

Այլ որչափ եւ նշանականք լինին կաքաւք ինչ Ամերիկացւոց, բերեն ընդ իւրեանց զորոշ իմն նշանաւոր պարակայ, որ տեսանի յարեալ 'ի կնիք այնր զարմի. Ցուցք, կաքաւմունք, զբօսանք այլոց ցեղից, որք բացայայտեն զզգացուածս, յորոց խրախուսեալ են սիրտք նոցա, յարմարեցուցանին բազում անգամ 'ի պարզել կամ 'ի զարթուցանել զայն զգայականութիւն, որ քարշէ զսերս փոխադարձաբար. Այս կիրք 'ի մէջ ոմանց ժողովրդոց է այնպէս վառեալ, մինչ զի սէրն գրեթէ է միայն առակայ տօնի եւ ուրախութե. Եւ քանզի ազգք բիրտք ոչ ճանաչեն զնազելութի, եւ ոչ են սովորք 'ի թաքուցանել զշարժումն ինչ սրտից իւրեանց, յայսմանէ յառաջ գայ, զի եւս կաքաւմունք նոցա բզմ անգամ անսահմանաբար են վաւաշոտականք եւ անվայելուչք. Այսպի-

սի

ալի է փայլենտայն , ընդ որ ազգայինք Ափրիկոյ ախ-
տաբար զմայլեալ են . և այսպիսի ճարտարութիք
կաքաւօղ աղջկանց , որոց Ասիականք կան 'ի զնին
այնպիսի անձկանօք . Բայց 'ի մէջ Ամերիկացւոց ա-
ռաւել ցուրտ և անտարբեր եղելոցն առ կանայս
իւրեանց՝ վն պատճառացն , զորս կանխաւ մեկնեցի,
կիրք կաքաւման սակաւ մտանէ 'ի տօն նոցա և 'ի
զբօսանս . Յաւելք նոցա և պարք են մեծագոյն մա-
սամբ հանդիսականք և պատերազմականք . վերա-
բերին առ իսկական իմն և ծանրակշիռ իրականութի
կենաց . և ոչ ունելով զառնչութի ինչ առ սէրն
և առ նազելութի, ցանցառակի են հասարակք 'ի
մէջ երկուց սերից , այլ են 'ի գործ եդեալք յա-
րանց և 'ի կանանց ուրոյն . Եթէ յորոշ ինչ դի-
պաւորութիս թողացուցեալ է կանանց գտանիլ 'ի
մէջ տօնից . ազգ. զբօսանացն է միշտ նոյն . և ոչ
տեսանի անդ շարժումն կամ արալողութի , որ
բացայայտեսցէ զկիղձն, կամ զօրացուսցէ զհամար-
ձակութին :

(66) || Յաւիտս ինչ մանաւորաբար 'ի պարս սահ-
մանեալս վն բժշկութե անձանց ախտացելոց՝ են
ամենեւին զազրոտի և ամենեւին անվայելուչ . Մէ-
լու . պալոն փօնէրբէսյ . Բայց որպիսութի պարուց
նոցա հասարակաբար է որպէս ստորագրեալ եմ : ||

Ընկանոն իմն սէր խաղու և յատկապէս այնր , որ Սէր առ
կոչի վտանգի , որ և երևի լինել բնական համօ- խաղու :
րէն ժողովրդոց ոչ սովորելոց առ զբաղմունս կա-
նոնաւոր իրիք մտավարժութե , եղեալ է նմանա-
պէս ընդհանրական 'ի մէջ Ամերիկացւոց . Նոյն
պատճառք , որք խթեն զանձինս դիւրացեալս 'ի
քաղաքականացեալ կեանս 'ի դիմել առ այս պա-
րապումն , տանեն զայն հաճելի նաև վայրագին .
Առաջինքն ոչ կախին յաշխատութէ . երկրորդն
ոչ զգայ զհարկաւորութի այնր . և երկոքեան պա-
րապորդ լինելով երթան յափշտակութե իմն առ
զինչ և իցէ իր , որ կարէ շարժել և յուզել զմիտս
նոցա.

նոցա. Աստուած է. զի Ամերիկացիք, որք յոյժ ժամանակս են այնպէս անտարբերք, այնպէս հանդարտք, այնպէս լռիկք և այնպէս անանձնդիւրք. նոյնհետայն իբրև գրաւին առ խաղ, եղանին սրընթացք, անհամբերք, աղաղակօղք և իբր մոլեգնեալք վն անձկանացն. Աչուշտակք նոցա, առ տնին կահք, հանդերձք և զէնք իւրեանց բովանդակ դնին 'ի վն սեղանոյ. և յորժամ բոլորն կորուսեալ է, որչափ և մեծ իցէ զգացումն իւրեանց վն անկախութե,'ի մոլեգին իմն վառմանն յուսահատութե նյուսոյ փոանգեւցեն քաջ սակս 'ի միում և եթ ձգման զանձնական ազատութի իւրեանց. 'Ի զանազան ցեղս այս նուագք խաղու նորոգին յաճախակի և յիւրաքանչիւր մեծ տօնի լինին նոցա առաւել հաճոյական զբօսանք. Ինքնակամ կրօնն, որ միշտ պահէ զայսօրիկ կիրս յուժգնութե իւրեանց, մատուցանէ զօգնութի իւր առ 'ի հաստատել և զօրացուցանել զմիտումն այսպէս հաճոյական. Անգքն սովոր են նախադրել զհանդիսաւոր իմն պայման խաղու՝ իբր զմի յառաւել գործունեայ հայթհայթանաց հաշտեցուցանելոյ զոխս, կամ դարձուցանելոյ յառողջութի զհիւանդս:

Ի վն արբեցութեան: Ի վն պատճառաց նմանակաց այնց, որք առնեն զնս խաղամոլս, ուժգնակի բերեալ են Ամերիկացիք առ արբեցութի. Երևի թէ լեալ իցէ մի յառաջնոց նրբութեց մարդկային մտաց գտանելն զբաղադրութի ինչ արբեցուցիչ որակութե. և հազիւ գտանի ազգ մի այնպէս խուժադուժ և այնպէս ամուլ առ գիւտ, որում չիցէ յաջողեալ յայսմ մասնաւոր հետազօտութե. Իսկ և առաւել բիւրքն 'ի մէջ Ամերիկացւոց ազգաց կալեալ են զդժբաղդութի ժամանելոյ 'ի ստանալ զայս արհեստ. և նոքա, որք այնպէս փանաքիմաց են, մինչև ոչ գիտել զեղանակ տալոյ զայս ուժ հեղանիւթոց ճմլհւ խմորման, ստանան զնոյն վախճան այլովք հայթհայթանօք. Բնակիչք կղզեաց և հիւսիսային

Ամե-

Ամերիկոյ և Կալիֆօրնիոյ 'ի կիր առնոյին առ այս առարկայ զծուխ դեղինչոյ քարշեցելոյ ուրիշ դործեաւ խմիք 'ի վեր ընդ ըռնգունս . որոյ գոլորշին ելանելով 'ի խելսն առնէր նոցա զգալ զբովանդակ չափազանցութիւն և զբոլոր ցնորս արբեցելոց :

(67) || Օհօմաքոաս ցեղ կայացեալ առ ափամբք Օրինոքոսի 'ի կիր առնուն վն նորին վախճանի զորոշ ինչ բաղադրութի կոչեցեալ Իուփա . որ կազմեալ է 'ի սերմանց անծանօթ իրիք տնկոյ լոսեցելոյ 'ի փոշի , և 'ի ծովային խեցեաց այրեցելոց և փոշիացուցելոց . Արտագործութիք իւր՝ յորժամ քարշեալ է 'ի վեր ընդ ունչս , են այնպէս բռնականք , մինչ զի պատճառեն մանաւանդ զյիմարութի , քան թէ զարբեցութի . Կոնտիլլա : ||

Գիրեթէ յայլ ամ մասին Նորոյ աշխարհի ստացեալ ունէին զգաղտնին հանելոյ զարբեցուցիչ իմն հեղուկ յարմատոյն մայիծէի , կամ մանիօքի , գոյացութիք , զորս և փոխարկեն 'ի հաց . Ձեռագործութիւն . որով առնեն զայն , նմանի ամենևին այնմ, որ հասարակաբար 'ի գործ ածի 'ի նախապատրաստելն զբիռայն , բայց այսու տարբերութբ , զի փոխանակ խմորոյ նոքա 'ի կիր արկանեն զտաղտկալի իմն թուրմ որոշ քանակութե մայիծէի կամ մանիօքի ծամկեցելոյ 'ի կանանց իւրեանց . Զարթուցանէ զտողունս ուժգին իմն խմորումն . և 'ի սակաւ աւուրս հեղուկն է յաստիճանի արբեալ լինելոյ . Ոչ է անհաճոյ ճաշակելեաց . և որ կարի շատ ըմպէ յայնմանէ հաւաստեաւ արբենայ . Այս է ընդհանրական ըմպելի Ամերիկացւոց . զոր նոքա զանազանեն պէսպէս անուամբք . և որոյ վն զգան զայնպիսի իմն բուռն և անյագ ցանկութի , զոր ոչ է դիւրին իմանալ կամ գծագրել . 'Ի մէջ առաւել կիրթ ցեղիցն , ուր զանազան յաջորդական կատարողութիք և զբօսանք պահեն զմիտս 'ի հանապազորդ իմն զբաղման , փափագ ուժեղ ըմպելեաց կանո-

կանոնաւորեալ է ըստ մեծի մասին 'ի կլիմայէն. և անէ կամ նուազի ըստ պէսպիսութեանց խառնուածոյ իւրոյ. 'Ի չերմ կողմանս դիւրդ և զգայուն մարմնականութեան բնակչացն ոչ պահանջէ զխթան եռացուցեալ օշարակաց. Յառաւել ցուրտ գաւառս կորովագոյն և յուլագոյն բաղկացութեան ազգայնոցն ունի պէտս ազնիւ ըմպելեաց առ 'ի սթափիլ և խրախուսիլ. Բայց 'ի մէջ վայրագացն յօժարութիւն իւր իմիք, որ ունիցի կարողութիւն արբեցուցանելոյ յոյժ ասթի է նոյն. Բովանդակ ժողովուրդք Ամերիկոյ կամ բնիկք այրեցած գօտւոյն, կամ բնակիչք յառաւել բարեխառն կողմանս իւր, կամ եղեալք դժբախտութիւն ինն 'ի խստագոյն կլիմայս դէպ հիւսիսային կամ հարաւային ծագին իւրոյ երևին տիրեալք հաւասարապէս յայսմ յօժարութեան. Այսպիսի իմն նմանութիւն ճաշակելեաց 'ի մէջ ժողովրդոց յայնպիսի տարբեր կայաւորութիւնս պարտի ընծայիլ ազդողութեան բարոյական իրիք պատճառի. և ոչ կարէ նկատիլ իբր գործ բնական խառնուածական պիտոյից. Յորժամ վայրագն դրդուեալ է յորս կամ 'ի պատերազմ, յայնժամ է յառաւել կարևոր զբաղմունս. և բովանդակ կարողութիւնք բնութեան իւրոյ զգան զարթուցեալք առ կորովագոյն կրթութիւնս. Բայց առ այսոսիկ խրախուսիչ տեսարանս յաջորդեն երկայն անշրջելեալք հանգստեան, որոց 'ի տևելն մարտիկն ոչ պատահի իմիք, որ ունիցի յիշեան զարժանաւորութիւն բաւական, կամ զծանրակշռութիւն, որ զի լցէ արժանի ուշադրութեան իւրում. Թօշնի և թմրի նա յայսմ միջոցի անհոգութեան. դիւրք մարմնոյ իւրոյ է տարացոյց իմն որպխութեան մտաց իւրոց. Կալով նա կորացեալ 'ի վէմ հրոյ 'ի տաղաւարի իւրում, կամ տարածեալ ընդ հովանեաւ ծառոյ միոյ կորուսանէ զժամանակ իւր նիրհելով կամ ննջելով. կամ ընկղմեալ յանխորհուրդ իմն և մելամաղձային անգործութեան ոչ յոյժ հեռանայ յայնմանէ. Փա-

փաղի

փագի անձկանօք բարկ հեղանուտից. մն̃ զի զար-
թուցանեն զնա յայսմ մահաբեր թմբրութէ̃, և
տան զկենդանագոյն իւ̃ն շարժումն ոգեաց իւրոց, և
կազդուրեն զնա անսահմանաբար առաւել քան
զպարն և զխաղն. Այսրադն յորժամ ոչ է զբաղեալ
՚ի գործել, է տրտում և լի մտածութբ̃ ընչաւոր.
բայց իսկոյն իբրև ճաշակէ, կամ տեսանի ՚ի պատ-
րաստի ճաշակելոյ զումպն արբեցուցիչ, լինի զո-
ւարթ և կատակերգու. Որ զինչ և իցէ առիթն
կամ պատրուակն, որոյ մն̃ Եւրոպացիք գան ՚ի միա-
ւին, ժողով նոցա աւարտի միշտ ՚ի խնձոյս. Բա-
զումք ՚ի տօնից նոցա ոչ ունին զայլ առարկայ.
և կատարի վերադարձ նոցին զեղմամբք ուրախու-
թե̃. Ոչ գոլով նոքա սովոր ՚ի սանձել զյօժա-
րութի̃ ինչ, ոչ դնեն սահմանս և ոչ իսկ այսմ.
Շռայլութիւն շարունակէ յաճախակի ՚ի բազում
աւուրս առանց ընդմիջահատութե̃. և որչափ և
մահաբերք իցեն արգիւնք տարականոնութե̃, ոչ
թողուն երբէք ըմպել, մինչև չմնալ կաթիլ մի
յայնմ հեղանիւթէ. Անձինք բարձրագոյն աստի-
ճանի, մարտիկք առաւել երևելիք և գլուխք ա-
ռաւել անուանիք մն̃ հանճարոյ՝ ոչ դիտեն յաղ-
թել անձանց իւրեանց աւելի քան զաննշան ան-
հատս հասարակութե̃. Անլեգնութի̃ նոցա մն̃ ներ-
կայ վայելման առնէ զնն̃ կոյրս առ աղէտալի հե-
տևութիս իւր. և նոյն իսկ մարդիկ, որք յայլ դի-
պողութիս ցուցանեն լինել պերճացեալ զօրութբ̃
իւիք մտաց աւելի քան զմարդկայինն, յայսմ ա-
ղէկոծութե̃ են նուազ քան զտղայս ՚ի նախատեսու-
թե̃. և լոկ դերիք անասնական իւիք յօժարութե̃.
Յորժամ կիրք նոցա բնականաբար ուժգինք մե-
ծացեալ են և ջերմացեալ յըմպելոյ, եղանին նո-
քա յանցաւորք առաւել տարապայման եղեռնու-
թեց. և տօնն հազիւ երբէք աւարտի. առանց իւիք
ներգործութե̃ բռնութե̃, կամ առանց հեղման ա-
րեան. Բայց ՚ի մէջ այսր անկարգութե̃ է նշա-

նաւոր

նաւոր իմն պարակայ, այս է, զի կանանց 'ի մեծագոյն մասին Ամերիկեան ցեղից ոչ է թողացուցեալ լինել այնմ բաժանորդ :

(68) ‖ Թէպէտ այս դիտողութիւն ճշմարիտ է 'ի մէջ մեծագոյն մասին Հարաւային ցեղիցն, սակայն են ոմանք, յորս անբարեխառնութիւն կանանց է չափազանցական որպէս արանցն . Պանտօսէ, Հերոդ . Քնն . Աւաճանոյ : ‖

Զօգաբարձութիւն կանանց է նախապատրաստել զհեզանութան, և տանիլ զայն շուրջ առ հրաւիրեալսն, և ուշադիր լինել արանց իւրեանց և բարեկամաց յորժամ բանականութիւն նոցա ընկճեալ է . Արտաքսելն զկանայս յուրախութէ իմքէ այսպէս վսեմ համարեցելոյ 'ի վայրագաց կարէ լինել նկատեալ բանականութեան իբր նշան իմն վայրագութեթե նոցա, և իբր առաւելագոյն ցոյց արհամարհանացն, որով վարէին ընդ նոսա 'ի նոր աշխարհին . Ժողովուրդք հիւսիսային Ամերիկոյ յորժամ յայտնեցան զառաջինն, ոչ ճանաչէին զարբեցուցիչ ինչ ըմպելի . Բայց տեսանելով Եւրոպացիք լինել շահ իւրեանց մատակարարելն նոցա զոգելի հեղանուտս, արբեցութիւն վաղվաղակի եղև ընդհանրական 'ի մէջ այնց ժողովրդոց, որպէս 'ի մէջ հարաւային համաշխարհկաց իւրեանց . և կանայք նոցա ևս առեալ զայս նոր ճաշակելիս, շատացուցանեն զայն սակաւ վայելչութե զոյգ արանցն :

Յաղ զմահ ծերոց և հիւանդաց : Լինէր անսահման 'ի թիւ արկանելն զօտարոտի սովորութիւնսն, որք զարթուցին զարմանս ճանապարհորդացն յԱմերիկա . այլ ոչ կարեմ թողուլ 'ի բաց յիշատակելոյ զմի յայնցանէ եղականագոյն ևս յերևութի, որ զայլսն ստորագրեալս յինէն . Յորժամ ծնօղք նոցա կամ այլ ազգականք գան 'ի ծերութի, կամ կրեն զհիւանդութի ինչ, զոր ոչ կար ծանօթութի նոցա բժշկական արհեստի ոչ ժամանէ բժշկել . դնեն վախճան աւուրց նց բռնական ձեռամբ առ 'ի թեթևանալ 'ի ծանրութէ պա-

հելոյ

հելոյ զնա և ծառայելոյ նոցա. Այս սովորութիւն զօրացեալ էր 'ի մէջ վայրենագոյն ցեղին յամ մասին շարունակին 'ի խորշէն Հուտսոնու ծոցին փլաթայի. և որչափ և ներհակ երևիցի այնց զգացուածոց գորովոյ և զգածման, զոր մեք 'ի քաղաքականացեալ կեանս նկատեմք իբր նոյնացեալս 'ի մեզ, վայրագն մաւբերի յայն և յարմարեցուցանէ. հայելով 'ի պայման իւր. Տառապանք և դժուարութիւն նախահօգալոյ զապրուստ, որք 'ի դիպուածս ինչ զարհուրեցուցանեն զվայրագս 'ի սնուցանելոյ զորդիս իւրեանց, նոյնպէս խթեն զնա եղծանել զզառամեալս և զհիւանդս. Կացութի անկման վերջնոցն է լի կարեօք, որպէս և տղայութի առաջնոցն. Նոքա ոչ են նուազ անընդունակք քան զոսա կատարելոյ զպաշտօնս, որք անկ են պատերազմականի մտում, և որսորդի մտում. կամ տանիլ պէսպէս դժբաղդութեանց, յորոց վայրագքն յաճախակի պաշարեալ են վն պակասութեան զգուշութեան և ճարտարմտութեան իւրեանց. Օգան զայս ամ աղգականք. բայց ոչ գոլով յաստիճանի սատարելոյ այլոց պիտոյից և այլոց տկարութեանց վն ոչ կարելոյ տանիլ աւելի իմն ծանրութիւն, շիջուցանեն զայն կեանս, որ երևի նոցա դժուարին առ 'ի պահել. Այս ոչ համարի իւր ներգործութիւն իմն անգթութեան, այլ քաջիսկ կարեկցութեան. Ամերիկացի ոմն քրքրեալ յամաց և 'ի հիւանդութեանց, գիտելով, թէ ինքն ոչ կարէ յերկարագոյնս վտահանալ 'ի նոսա, զորս ունի շուրջ, դնի ինքնին շատացեալ 'ի փոսի իւրում. և 'ի ձեռաց որդւոց իւրոց, կամ մերձաւորագոյն արենակցաց քարշեալ է խեղդի. կամ տուեալ հարուածն, որ ազատէ զնա մշտնջենաբար 'ի տագնապից թշուառալի կենացն:

Թ.. Յետ նկատելոյ զբիրտ Ամերիկեան ցեղին յայսպիսի զանազան տեսիլս, յետ նշմարելոյ զբարս նց և զտարապս յայնպիսի տարբեր կայսւորութիւնս, այլ ինչ ոչ մնայ, բայց եթէ կերպաւորել զընդհան- Ընդհանուր ձևոյ ... նց :

րական

րական իմն դատումն զհանգամանաց նոցա բաղդատութե առաւել կիրթ ազգացն. Նակ իմն մարդկային՝ ոչ պարզ յառաջ գայ սկզբնաբար 'ի ձեռաց բնութե, է ընդ մտ ուրեք նոյն. Յառաջին երեւման իւրում, եթէ գտանիցի 'ի մէջ առաւել խորտաբորտ վայրագացն, կամ եթէ 'ի լաւս քաղաքականացեալ ընկերութե, ոչ է կարելի գտանել զօրակութի ինչ. որ նշանակիցէ զզանազանութի ինչ կամ զվերնագունութի. Տրամադրութին բարեգունանալոյ երեւի թէ իցէ նոյն. և տաղանդքն, զորս նա կարէ ստանալ, և գովելի գործողութիւն, որովք կարէ հանդիսանալ կախեալ կան 'ի վիճակէ ընկերութե, յորում եդեալ է նա. Այս վիճակ յարի զնի, և ընդունի յայնմանէ զուսումն իւր և զկրթութի. Ընդ իմացական կարողութիւք իւր զարթնուն ընդ չափակցութե պիտոյիցն, զորս զգայ անդէն, և սպաշտօնիցն. առ որս գրաւի. և անդ 'ի գործ ածէ զախորժակս սրտին ընդ առնչութեցն, որոց հանդիպի անդ 'ի մէջ անձին իւրոյ և 'ի մէջ մնացեալ տեսակի իւրոյ. և այս է եղանակն ճանաչելոյ թէ որ է կնիք մարդկան 'ի զանազան պարբերութիւս զարգացման իւրեանց:

Իմացական կարողութեն: Եթէ մերձեցուսցուք զայս սկիզբն և չափեսցուք զյառաջադիմութիւս մարդկեղէն մտաց յայնմ կացութե, տեսցուք ըստ դիտողութե իմիք կանխապարբերելոյ յինէն, թէ իմացական կարողութիւք իւր լինելոց են ամենեին կոպարաւորք 'ի գործելն իւրեանց. Այսքիկ սահմանաւորեալ են յանձուկ ծիր այնր, զոր վայրագն համարի կարեւոր առ 'ի լնուլ զպէտս իւր. և այնք իւք, որք ոչ վերաբերին առ այսպիսի նպատակ, ոչ արժանաւորին ուշադրութե նր, և ոչ են առարկայ որոնմանց նր. Այլ որչափ և ամփոփեալ իցեն կոպարքն, որոց 'ի ներքս պարագրի ճանաչումն վայրագ մարդոյ միոյ, զայն փոքրիկ կայծակն, զոր ընկալաւ 'ի բաժին իւր, ժառանգէ ամբողջ. Այս ոչ է հաղորդեալ նմա

 միջնոր-

միջնորդութիւ կերպական իւրք կրթութեն . ոչ դար-
ձուցանէ զինքն առ այն իբրև առ նիւթ սոսկ
հայեցողութեն և հետաքննութեն . այլ է արգասիք
սեպհական դիտողութեն իւրոյ և յարմարեալ պայմանի
իւրում և պիտոյից իւրոց . Մինչ դեռ նա պարա-
պեալ է 'ի ներգործական զբաղմունս պատերազմի
կամ որսոյ՝ գտանի կարի յաճախ 'ի դժուարին և
'ի վտանգաւոր պատահարս , յորոց գիտէ ազատիլ
միայն ջանիւք ճարտարմտութեն իւրոյ . Տեսանի
սակայն 'ի պատրաստի ունելոյ զխորհուրդս . ուր ամ
քայլ կախի յընդունակութէ իւրմէ 'ի վճռելն մի-
թէ պարտիցի վստահանալ միայն 'ի խելամտութե
իւր յընտրելն զվտանգս , յորս դնէ զանձն , կամ
թէ 'ի խոհեմութին 'ի զգուշանալն ընդդէմ ։
Եւ քանզի քանքարք անհատից վարժին և զտին յայ- Քաղա-
սոսիկ իրս , վնկ ասի, թէ փոքրագոյն հասարակութիք քական
յառաջ տանիլն զերակութիս ցուցանեն ըզմ քաղա- սահմանադրութիւն
քական խոհեմութի . Խորհուրդն , կամ ժողովն ծե-
րոց 'ի միում Ամերիկեան ցեղի , որ խորհդածէ 'ի վր
շահուց իւրոց , կամ բացորոշէ զխաղաղութէ և զպա-
տերազմ , համեմատեալ եղև ծերակուտի բազմաց
քաղաքականացեալ հասարակապետութեց . Հաս-
տատեալ լինի , թէ՛ յառաջ խաղալն առաջնոց ոչ է
նուազ կերպական և խորագիտական քան զերկրոր-
դացն . Ոչ է կար ուրանալ , թէ վայրագք ցուցանեն
զմեծ իմն քաղաքական իմաստութի յառնուլ զպէսպէս
առաջի եղեալ չափմունս և 'ի կշռելն զհաւաստելի
շահեկանութիս իւրեանց ընդ կորստեանցն , որք կա-
րեն յայնմանէ զեղանել . Առաջնորդք 'ի գործ ածեն
զբազում յաջողակութի և զճարտարախօսութի յոր-
ժամ ձկտին ստանալ 'ի յօգուտ հայրենակցաց իւ-
րեանց զայն վստահութին , որ կարէ շահիլ նոցա
զվերընագունութի իմն յայնմ ժողովի . Բայց 'ի
մէջ վայրագացն ասպարէզն պարզելոյ զքաղաքակն
քանքարս ոչ կարէ լինել բազում տարածեալ .
Մեր գաղափար առանձին յատկութե ոչ է ծանու-

ցեալ, ուր ոչ է մուծեալ իրաւաբանութիւն ինչ քրէական, հազիւ գոյ անդ տեղի վարելոյ զպահտօն ինչ ներքին կառավարութեան. Ուր ոչ է տուրևառութիւն, և ցանցաղակի հաղորդակցութիւն ընդ զատուցեալ ցեղիցն, ուր թշնամութիւն է անհաշտելի, և ոսոխութիւնք են շարունակեալք անդադար, լինիցին անդ սակաւ յօդուածք հրապարական իրաւունք յարդարելի ընդ դրացեաց. և այս բաժանումն գործառնութեանց, որ պարտ էր անուանել արտաքին, ոչ եղիցի երբեք այնպէս կնճռեալ, զի պահանջեսցէ զգտեալ իմն քաղաքականութիւն առ 'ի բարւոք յառաջ տանիլ զայն. Ուր անհատք են այնպէս անխորհուրդք և անյառաջատեսք, զի հազիւ երբեք առնուն զզգուշութիւնս գործունեայս առ 'ի նախադահիլ, ընդունայն է սպասելն, թէ հրապարական չափմունք և խորհրդածութիւնք իցեն կանոնաւորեալք 'ի տեսութենէ հեռաւոր դիպուածոց. Բնաւորութիւն վայրագացն է գործել ըստ մղման ներգործական կրիցն. Ոչ ունին, ոչ զնախատեսութիւն և ոչ զընդունակութիւն կերպաւորելոյ զհամապատկեալ կարգադրութիւնս հայելով յապագայ գնացս իւրեանց:

(69) Այս և յառաւել իմաստուն մատենագիրս 'ի վր եղանակացն Ամերիկացւոց հանդիպին պարագայք անյարիրք և անմեկնելիք. Հայրն Շարլէվօյքս, որ յաղագս հակառակութեան իւրք եղելոյ 'ի մէջ կարգին իւրոյ և 'ի մէջ կարգին Ֆրանչիսկանաց վերահայեցմամբ քանքարոց և ընդունակութեան հիւսիսային Ամերիկացւոց տրամադրեալ է ներկայացուցանել զիմացական և զբարոյական որպիսութիւնս նոցա յառաւել նպաստաւոր լոյս, պնդէ թէ նոքա գրաւեալ են 'ի հանապազորդ վաճառականութիւնս ընդ դրացեաց իւրեանց. և թէ յառաջ տանին զայնս առաւել նուրբ յաջողակութեամբ. Յարէ միանգամայն, թէ անկ է դեսպանաց նոցա, կամ լիակատար իշխանաւորացն 'ի գործ արկանել զճարտարաբանութիւնս իւրեանց. քանզի եթէ պայմանքն,

մանկըն, զորս առաջի մատուցանեն, ոչ են ընկա-
լեալք, նոքա պէտս ունին կալոյ 'ի պաշտպանութեան.
Դէպ լինի յաճախակի, զի հարուած մի տապա-
լի է միակ միջանակ տուեալ առաջադրութեանց նոցա.
Սակայն ոչ են արտաքոյ վտանգի, թէ և ունիցին
բաղդ զերծանելոյ 'ի հարուածոյն. քանզի մարթէ
ապաստել հալածեալ լինելոյ, և յըմինին մե-
ռանելոյ այրմամբ. Սորդիկ ընդունակք այսպիսի
ներգործութեանց բանութեան ցուցանեն ոչ գիտել զա-
ռաջին սկզբունսն, յորոց վը հիմնեալ է հաղոր-
դակցութիւն 'ի մէջ ազգաց. և փոխանակ մշտնջե-
նաւոր շահավաճառութեանցն, զորս յիշատակէ հայրն
Ռոլէվօքըս, երևի անկարելի թէ լինիցի 'ի մէջ
նոցա դոյզն հաղորդակցութիւն: ||

Խորհուրդք Ամերիկացւոց զճշմարիտն ասելով են
այնպէս յաճախք, և զննութիւն նոցա այնպէս յոգ-
նաթիւք և այնչափ յապաղեալք, մինչզի տան յա-
ռաջ խաղացման իւրեանց զկերպարան իմն արտա-
քոյ կարգի իմաստութեան. Բայց զայս ոչ է պարտ
ընծայել խորութեան առաջարկութեանց նոցա առաւել
քան թէ ցրտութեան և մաղասոյ խառնուածոյ նոցա.
որ առնէ զնոսա ամենադանդաղս յաւարտաբանելն.
Եթէ 'ի բաց առցի համբաւաւոր դաշն, որ միաւո-
րեաց զհինգ ազգսն 'ի Բանատա իբրև 'ի մի դաշ-
նակից հասարակապետութիւն, զոր յիշատակեսցուք
յիւրում տեղւոջ, ամենևին սակաւ նշմարանս քա-
ղաքական գիտութեան կարասցուք որոշել 'ի մէջ ան-
կիրթ Ամերիկեան ցեղից, որք ցուցցեն մեզ զնշա-
նաւոր ինչ աստիճան յառաջատեսութեան, կամ տա-
րածեալ իմացական ընդունակութեան. Տեսցին նաև
'ի մէջ նոցա հրապարական խորհուրդք յաճախա-
գոյնս ուղղեալք 'ի բուռն ամեհութեան երիտասար-
դաց իւրեանց, քան թէ կանոնաւորեալք 'ի ներ-
հմտութեան և 'ի շրջահայեցութեան ծերոց:

Պայման մարդոյ 'ի վայրագ վիճակի ոչ գոլով նպաս-Ամփիոն
տաւոր զարգացման մտաց՝ դիմէ հաւասարապէս որիշ ըմբէց:

իմն եղանակաւ 'ի ճնշել զյօժարութիւնս և 'ի սեղմել զսիրտս. Հզօրագոյն կիրք 'ի յոգւոջ վայրագի միոյ է զգացումն անկախութեան իւրոյ. Նա այնպէս փոքրիկ բաժինն բնական ազատութեան իւրոյ, զոր զոհեալ է ինքն առ 'ի եղանիլ անդամ ինչ ընկերութեան, մինչև մնայ գրեթէ յամ՟ իրս ինքն միայն տէր գործողութեանց իւրոց. Առնու նա ինքնին միայն զորոշմունս իւր առանց խորհրդակցելոյ և առանց ճանաչելոյ զառնչութիւն ինչ ընդ նս՟, որք կան նմա շուրջ. 'Ի բազում գործողութիւնս իւր նկատի նա իբր զատուցեալ 'ի մնացեալ տեսակէ իւրմէ, որպ՟ եթէ ոչ ունէր զմիաւորութիւն կերպաւորեալ ընդ այլոց. և խելամտեալ ամենասակաւ անկախութեան 'ի նոցանէ, տրամադրի հայիլ 'ի նոսա ցուրտ անտարբերութեամբ. Նաև զօրութեամբ մտաց իւրոց հանդանակէ յաճեցուցանել զայս յատկութիւն. և այնչափ ոչ տանի երբէք զդիտմունս իւր յիւրմէ և անդ 'ի խորհրդածելն զմասնաւոր գործոյն, զոր ինքն առնելոց է, գրեթէ ոչ երբէք տարածանի ևս անդր հոգածութիւն իւր շուրջ զհետևութեամբք. Յառաջ երթայ յընթացս իւր և հետևի յատուկ երևակայութեան իւրում առանց հետազօտելոյ, կամ խորհելոյ, մի թէ այն, զոր առնէ, իցէ հաճոյական, կամ թէ անհաճոյ այլոց. և թէ կարիցէ հանել յայնմանէ զշահաւորութիւն, կամ ընդունել զառուգանս. Աստուստ ծնանի անկենցաղավարելի խորթաբարոյութիւն վայրագացն, անհանդուրժողութիւն նոցա առ զինչ և իցէ տեսակ սանձի. անընդունակութիւն նոցա զսպելոյ կամ չափաւորելոյ զհակամիտութիւնս, քամահումն կամ անգոսնումն, որով ընդունին զխորհուրդ, բարձր համարումն նց՟ զանձանց իւրեանց և արհամարհումն այլոց. Ամբարտաւանութիւն անկախութեան յառաջ ածէ 'ի մէջ նոցա իբր զնոյն արդիւնս, զոր պատճառէ շահասիրութիւն յառաւել զարգացեալ իմիք վիճակի ընկերութեան. որովհետև վերաբերէ զամ՟ ինչ առ

նոյն

Նոյն խոկ մարդն, և առնէ ; զի կատարելն զցան-
կութիւս իւր իցէ չափ և վախճան վարուց իւրոց :
Կարեն վերադրել առ նոյն պատճառ կարծրութիւն Լապա-
սրտին և նշանաւոր անզգայութիւնքն 'ի համօրէն վայ-Լեհ ուրալ:
րենի ազգաց · Միտք նոցա, որք թողանին զարթ-
նուլ միայն 'ի հզօրագոյն շարժմանց, են հազիւ
ասպնջականք ազնիւ գողտրիկ՝ և խանդաղատ զգած-
մանց · Միտաւորութի նոցա է այնպէս անկատար,
մինչզի իւրաքանչիւր անհատ գործէ ազատօրէն,
որպէս եթէ պահէր ամբողջ և անվթար զամ բնա-
կան իրաւունս իւր · Եթէ ընձեռեալ է նմա երախ-
տիք ինչ, կամ արարեալ ծառայութի ինն վն իւ-
քոյ օգտի, ընդունի զայն մեծաւ հաճութբ · վն զի
օժանդակէ առ վայելումն իւր · Այլ բարերարու-
թիւն ոչ տարածանի արտաքոյ ինքեան, ոչ զար-
թուցանէ զճանաչումն պարտաւորութե · նա ոչ
զգայ զերախտագիտութի · և ոչ խորհի բնաւ փո-
խարինել այնմ ըստ մասին իւրում :
(70) ‖ Զ դիտողութի ինն Տակիտոսի նկատմամբ
Գերմանացւոց · Խնդամ ընդ պարգևսն առնէ, այլ ոչ
զտուրսն համարին, և ոչ առեալովքն պարտաւորին ·
Հեղինակ ոմն, որ կալաւ զբարի ինն դիպաւորու-
թի նշմարելոյ զսկիզբն, որ ներածէ զվայրագս առ
'ի ոչ բացայայտել զերախտագիտութի վն երախ-
տեացն ընկալելոց, կամ առ 'ի ոչ սպասել փո-
խարինի վն արարելոցն, մեկնէ այսպէս զիմաստն նց ·
Եթէ տաս դու ինձ զայս, (ասեն նոքա) առնես
զայն, վն զի ոչ ունիս պէտս այնր վն քո · և ես
ինձէն ոչ զոկեմ զիս երբեք յայնմանէ, զոր հաւա-
տամ կարեոր վն իմ · Ոգեշտափք 'ի Հ. Ը. Կոչնակոց ·
Մեկնաս · Տնկոց Կոտոխոնայէ Գոթշնէրքեն ֆն Անգղե-
Լայ : ‖
Այլ և 'ի մէջ անձանց առաւել անձկապէս ըծակ-
ցելոց է սակաւ փոխարինումն առ այն բարի օճանն,
որք սովոր են զօրացուցանել զիղձն · որք կակղեն
զսիրտն և քաղցրացուցանեն զմիաւորութիւն ընկե-

րական կենաց. Ամբարտաւան գաղափարք անկակալութե իւրեանց սնուցանեն զորոշ իմն դժնեայ և թերեհաւատ խորշումն. որ պահէ զնոսա յամ դիպաւորութե տարակուսի 'ի միմեանց. Աներձաւորագոյն ազգականք երկնչին խնդրել կամ ժտել զծառայութի իմն փոխադարձաբար առ ահին, զի մի միւսն համարիցի զայն իբրև կամիլ իմն դնել 'ի վերայ զբեռն ինչ աւելի, կամ ամփոփել զկամս նորա: Աշխկնշմարեցի. թէ որչափ այս խիստ և անզգայ խառնուած ազդիցէ 'ի վերայ ընտանեկան կենացնկատմամբ կապանաց 'ի մէջ առն և կնոջ, 'ի մէջ ծնողաց և որդւոց. Սակայն որդիք իւր ոչ նուազ երևին 'ի գործածութե այնց փոխադարձ օգնանաց զորովոյ, զոր պահանջեն յաճախակի տկարութիւնք բնութե մերոյ. 'Ի ցեղս ինչ յորժամ ումանք 'ի թըւոյ նոցա հարեալ են հիւանդութե, մնան բարձի թողի եղեալք յամենեցունց 'ի նոցանէ, որք կան շուրջ զնոքօք. որք և առանց զմտաւ ածելոյ զապաքինումն ողորմելեացն այնոցիկ փախչին մեծագոյն շտուցմամբ վն ենթադրեալ վտանգի տարափոխութեն. Այլ և ուր հիւանդք ոչ են այնպէս 'ի բաց թողեալք, ցուրտ անտարբերութիւն, որով ծառայեալ լինին, փոքր միխթարութի է նց. Ոչ գոյ անդ նայեցուած համակրական արգահատութե, ոչ բացայայտութի ցաւոյ, ոչ օգնաւոր ծառայութի, որ հանգանակեսցէ 'ի թեթևացուցանել զչարչարանս նոցա, կամ տալ նոցա առ սակաւ մի մոռանալ զայն. Բաւել անձուկ ազգականք հրաժարին բազում անգամ 'ի յանձն առնլլոյ զփոքրագոյն նեղութիւն, կամ 'ի բացկալոյ յես փոքրագոյն չնչին իրաց առ 'ի սփոփանս նց. Սիրտ վայրագի ուրուք է այնպէս սակաւ ընդունակ զգացուածոց, որք զարթուցանեն զմարդիկ առ 'ի ունել զայն կարեկից աշադրութիւն, որ մեղմացուցանէ զտառապանս, մինչզի 'ի գաւառս ինչ Ամերիկոյ Սպանիացիք կարեւոր համարեցան զօրացուցա-

ցուցանել զՀասարակաց պարտս մարդկութեն դրական օրինօք, և սովորել զարս և զկանայս. զծնօղս և զորդիս ընդ խստադոյն պատժօք ունել Հօգ զմիմեանց 'ի Հիւանդութեն. Բայց սոյն այս խստութի երեւի առաւել 'ի վարմանն, զոր առնեն ընդ Հնչաւորաց իւրեանց. Յառաջ քան զՀաղորդակցութի իւրեանց ընդ ժողովրդոցն Եւրոպիոյ ունէին Հիւսիսային Ամերիկացիք զընտանի շունս ինչ, որք ընկերէին նոցա յարշաւանս իւրեանց, յորս և ծառայէին նոցա ամ եռանդիւ և ամ Հաւատարմութբ մասնաւորաւ տեսակի իւրեանց. Այլ փոխանակ սիրոյ խնամատարութե, զոր զգայ որսորդն բնականաբար վն այսպիսի պիտանի ընկերաց աշխատութեն իւրոյ փոխարինեն զծառայութի նոցա արՀամարՀանօք. Հազիւ երբեք տան նոցա ուտել. և ոչ երբեք փաղաքշեն զնս. Այլ գաւառս Ամերիկացիք ստացեալ են զծանաչումն ընտանի շնչաւորացն եւրոպացւոց, և օգտին ծառայութբ նոցա, Բայց ընդՀանրապէս նշմարեալ է. զի վարին ընդ նոսա անգթութբ. և զի ոչ երբեք 'ի կիր արկանեն զայլ եղանակ առ 'ի վարել զնս 'ի գործ, բայց եթէ զբռնութի և զդժնէութի. Յամ դուզնաքեայ ներգործութե մարդոյ 'ի վայրագ վիճակի կամ առ նմանիս իւր, կամ առ շնչաւորս վայրագոյնս իւր տեսանի նոյն յատկութի. և նշմարին գործողութիք ոգւոյ ձկտեցելոյ առ սեպՀական Հածութի իւր և կանոնաւորեցելոյ 'ի քմաց իւրոց առանց Հայելոյ կամ զգալոյ զկիրս և զզգացումնս էակացն, որք կան նմա շուրջ:

Օգնի մեկնելոյ, թէ որչափ վնասակարէ վայրենի կացութիւն առ մշակութի մտաց և առ բարեգունացուցումն սրտի, ոչ էր Համարեալ կարեւոր զյիշատակելն զայնոսիկ, որք կարեն գտեալ լինել փոքրագոյն պակասութիք իւր, եթէ յատկութի ազգացն և յատկութի անՀատից ոչ լինէին տռաւել որէշ ներկայացուցեալք 'ի պարականյից առ երեւոյթս Լուսաւորեցուցանէն:

հասարակ եղելոց քան թէ 'ի նոցանէ, որք են ծանրակշիռք. Այլազգ ումն ընտելեալ յոլովակի 'ի կայսերութիւնս վտանգի և թշուառութեան թողեալ միայն յանձն իւր, և ընկղմեալ 'ի խորհուրդս և յառաջարկութիւնս իւր ոչ այլ ինչ է, բայց եթէ անժպիտ և մեղամաղձոտ կենդանի. Ուշադրութիւն իւր վասն այլոց գրեթէ է ոչինչ. Ծիր մտաւոր տեսակաց իւրոց է անձուկ. Աստի յառաջ գայ այն լռութիւն, որ այնքան անհաճոյ է մարդոց սովորելոց առ համարձակ վարուն ընկերական կենցաղակցութեան. Ամերիկացիք յորժամ ոչ են դրաւեալք 'ի գործ, նստին զաւուրս ողջոյն 'ի նոյն դիրս առանց բնաւ բանալոյ զշրթունս իւրեանց. Յորժամ ելանեն 'ի դուրս 'ի պատերազմ, կամ յորս, գնան հասարակաբար 'ի միում գծի փոքր ինչ հեռի 'ի միմեանց առանց հանելոյ զխօսս ինչ երբէք. Պահեն զնոյն լռութիւն, մինչ թիավարեն 'ի միասին 'ի միում քանօէի. Այն յորժամ են խրախուսեալք յարբեցուցիչ հեղանուտից, կամ զարթուցեալք 'ի զուարճութենէ տօնին, կամ պարուն՝ եղանին զուարթք և կենցաղեալք :

Խորամանկութիւն : 'Ի նոյն պատճառաց յառաջ գայ նուրբ խորագիտութիւն, որով կերպաւորեն և 'ի գործ դնեն զառաջարկութիւնս իւրեանց. Մարդիկ ոչ սովորեալք առ ազատական ինչ հաղորդութիւն կարծեաց և բաղձանաց իւրեանց ենթարկեալ են կասկածոտ լինելոյ, որպէս զի ոչ դնել յայտ զխոստովանութիւն իւրեանց և դիմել առ դարանակալ ինչ խորամանկութիւն 'ի կատարելն զձգտմունս իւրեանց. 'Ի քաղաքականացեալ կեանս նոցա իսկ, որք վասն սեպհական կայսերութեան ունին զեւս սակաւագոյն առարկայս հետևելոյ, յորոց վասն զկայ առնու միտք նոցա անհանգիստ, են առաւել զանազանեալք վասն ցածուն արուեստակութեան, որով յառաջ տանին զփանաքի առաջարկութիւնս իւրեանց. 'Ի մէջ վայրագացն, որոց զխումունք են հաւասարապէս ամփոփեալք, և

մտադ-

մտադրութիւն ոչ նուաղ տեսական, այսպիսի պա-
րագայք պարտին գործել միշտ առաւել ուժգնակի
առ 'ի ընտելացուցանել զնն աստիճանաբար առ
խորագէտ իմն նրբութի յամ գործողութիս իւ-
րեանց. Այլ 'ի նոսին իսկ զօրութիւն վն ունա-
կութեն, զոր ստանան 'ի կատակելն զերկուս նա-
խայիշատակեալ շահեկան զբաղմունսն. յորս ան-
ընդհատ գրաւին. Պատերազմն առ նոսա է զօ-
դուած իմն խորամանկութե. և առ 'ի յաջողել
զայն վստահանան առաւել 'ի հնարագիտութի, քան
'ի յայտնի զօրութի, ունելով միշտ զգետ իւրեանց
'ի զգուշութե առ 'ի խաբել կամ յանկարծ ըմբռնել
զթշնամիս իւրեանց. Օրէն որսորդաց յարակայ ա-
ւարկայ նոցա է թակարթելն առ 'ի սպանանել յետոյ.
Այն իրի արուեստակութիւն և խորամանկութիւն
նկատին ընդհանրապէս իբր երկու կնիք տարորոշիչ
վայրագաց. Ժողովուրդք վայրենի ցեղիցն Ամերիկոյ
են հռչակաւորք վն նենգաւորութեն և վն երկդիմու-
թեն. Անընդմտանելի ծածուկք յառնուլն զխորհուրդս
իւրեանց՝ 'ի գործ դնեն զայն համբերատար իմն և
հաստատուն մտադրութբ. և չիք նրբութի կեղծա-
ւորութե, զոր ոչ գիտիցեն 'ի կիր արկանել առ
'ի ապահովացուցանել զելս նոցա. Ազգայինք փէ-
րուայ կացին աւելի քան զամս երեսուն դիմադրաւք
'ի յարդարել զհանդամանս ապստամբութե իւր-
եանց առ փոխարքային մարզպանին Աբիլայ Կալցիայ.
և թէպէտ վստահացեալ էր 'ի մեծ իմն բազմութի
ամ զանազան աստիճանաց, ոչ թորեցաւ անտի
ընդ բովանդակ ժամանակն ընդ այն դոյզն ինչ նշան.
ոչ ոք մատնեաց զգաղտնին իւր. և ոչ անշրջահայեաց
իմն ակնարկութբ, կամ անխոհեմական բառիւ
միով արար ծնանել զկասկած ինչ զայնմանէ. զոր
խորհէին. Կեղծաւորութիւն և նենգութիւն անհա-
տից ոչ են նուաղ երևելիք քան զազգացն. Յոր-
ժամ բերեալ են նոքա 'ի խաբել, գիտեն այն-
պէս արուեստակութբ դքօղել, մինչև անկարելի
լինի

լինի ընդմտանել 'ի գիտաւորութիւնս նոցա, կամ հոլանել զխորհուրդս նոցա:

Առաքի- նութիւնք : Այլ եթէ են 'ի նոսա պակասութիւնք և վատութիւնք մասնաւորք վայրագ կենաց, են և առաքինութիւնք, զորս չիցէ այն. և բարի որակութիւնք, զորոց հաճի տեսանել զվարժութիւն. Կապանք ընկերութեան են այնպէս լոյծք յանդամս բրտագոյն ցեղիցն Ամերիկոյ, մինչզի դժուարաւ զգան զսպումն ինչ. Աստուստ յառաջ գայ հոգին անկախութեան, որ է հպարտութիւն վայրագի ուրուք. և զոր համարի նա իբր նախապետական արտօնութիւն մարդոյ. զոր ոչ է պարտ օտարացուցանել. Ոչ կարելով հանդուրժել ընդդիմադրութեան. և անարժան վարկանելով ճանաչել զվերնագոյնս, միտք իւր՝ թէպէտ և սահմանաւորեալ 'ի կարողութիւնս իւր, և փակեալ 'ի բուռն յղձից իւրոց, ամբառնայ այնչափ վն լինելոյն սոսկ զսեպհական ազատութեան իւրմէ, մինչ զի յաւիտս իմն ինչ գործէ սքանչելի քաջութեան, յարատեւութեան և արժանաւորութեան:

Բռաջա- ըէ : Անկախութիւն է այն, որ սնուցանէ զայսպիսի ամբարտաւան հոգին 'ի վայրագս. և մշտնջենաւոր պատերազմունք, առ որս գրաւեալ են, պահեն զնա 'ի վարժութեան. Այն երկայն անջրպետք անդորրութեան, որք տեսանին այնպէս յաճախ 'ի քաղաքականացեալ ընկերութիւնս, ոչ ճանաչին 'ի մէջ վայրենի ցեղիցն. Թշնամութիւնք նոցա, որպէս ասացի յառաջ, են անհաշտելիք և յաւիտենականք. Ոչ թողացուցանի երբեք երիտասարդական քաջութեան ժանգահարիլ 'ի դատարկութեան. Ունին միշտ 'ի ձեռին զտապար կամ առ 'ի պաշտպանել զանձինս, կամ առ 'ի ընդհարկանիլ. Նաև յարշաւանս իւրեանց յորս՝ պարտ է կալ նոցա 'ի պահպանութեան ընդդէմ յարձակմանց ցեղից թշնամեաց, որոց կեան 'ի միջի. Ամփոփեալք առ հանապազորդ ըմբռնմունս ընտանենան ընդ վտանգին. և սրտեղութեան եղանի 'ի նոսա առաքինութիւն իմն ունակական. որ ծագի բնա-

կանա-

կանաւոր ՚ի կայաւորութենէ նոցա. և որ զօրացուցանի յորակայ վարժութիւն. Նշանակն ցուցանելոյ զքաջութի ոչ կարէ լինել նոյն ՚ի փոքրիկ և ՚ի վայրենի բնակութիս, որպէս յառաջել հզօր և քաղաքականացեալ հասարակութիս. Օտարգաւորութի պատերազմի նոցա և զգաղափար քաջասրտութե նոցա մարթ է կերպաւորել ՚ի մի զանազան սկզբանց. բայց միտք մարդկային ոչ լինի վերնագոյն առ ըմբռնումն վտանգի, կամ առ երկիւղ մահու, բայց եթէ յառաջել պարզ և նուազ կրթեալ կացութե իւրում ։

Յարումն առ հասարակութիւն իւրեանց ։

Այլ իմն առաքինութի, որ փայլէ ՚ի մէջ վայրագաց, է յարումն առ հասարակութիւն, որոյ են անդամք. Քննելով զբնութի քաղաքական միաւորութե նոցա, պարտ էր սպասել լինելոյ այսմ կապոյ յոյժ տկար. Բայց են ՚ի նոսա պարագայք, որք առնեն ևս զօրաւորագոյն զազդեցութիւն ազատական տարազու ընկերանալոյ նոցա. Ամերիկեան ցեղք են փոքրիկք, սակայն միաւորեալք ընդդէմ դրացեաց իւրեանց առ ՚ի գլուխ տանել զնախկին թշնամութիւն կամ վրիժակել զառժամայն խէթսն. ոչ ունին զգործողութիս և ոչ զիրակութիս յոդնաթիւս և բաղադրեալս. Այսօրիկ են առարկայք, զորս կարէ իմանալ նաև ոչ մշակեալ միտք մարդոյ միոյ վայրագի. Սիրտ իւր է ընդունակ կերպաւորելոյ զծանկցութիս, մինչ ընդարձակին այսպէս սակաւ. Համախոհ լինի փոյթ ընդ փոյթ հրապարական չափմանցն ազդելոց ՚ի կրից նմանակաց այնց, որք ներգործեն ՚ի սեպհական գնացս իւր. Աստի ծնանի եռանդն, որով ձեռնամուխ լինին անհատք ՚ի վտանգաւորագոյն ծառայութի. յորժամ հասարակութիւն դատի զայն կարևոր. աստուստ նոցա ամենի և ՚ի խորս արմատացեալ հակակրութի ընդդէմ հրապարական թշնամեաց. աստուստ նախանձապատւոյ ցեղին և սէրն հայրենեաց իւրեանց, որ ստիպէ զնս ճակատել ընդդէմ վտանգին, ոչ զի նոյն սէրն

յաղթա-

յաղթանակեսցէ . և հանդուրժել սաստկագոյն տանջանաց առանց և ոչ մի ինչ հեծութեան . որպ զի մի անպատիւ լինիցի :

Բարոյա– ծոյն ընդ– ունդհա– կան կա– ցաղն իւրեանց: Այսպէս յամ կայսրութեան , ուր մարդկային իմ– ակ կարէ գտանիլ , եւ և յառաջել տհաճելիսն , են առակցեալք առաքինութիւնք մասնաւորք . են յօ– ժարութիւնք , զորս նոյն իսկ կայսրութիւն չնչէ . և տեսակ իմն երջանկութե . որում հաղորդի այն– նութեին առաւել բարերար դիտմամբ յանկուցա– նէ զմարդն ընդ կացութե իւրում . մասւոր տե– սակք իր և բաղձանք ոչ տարածանին արտաքոյ ընկերութեն . յորում կեայ . Առարկայք , որք ա– ռաջի աչնին նմա 'ի խորհիլ կամ 'ի վայելել , լինին զնա և յագեցուցանեն . և հազիւ կարէ ձևացուցա– նել , թէ այլ իմն տարազ կենցաղ իցէ առաւել հա– ճոյական և առաւել ափոփիչ . Սկիւթացին սովոր աստանդական լինելոյ ընդ տարածեալ դաշտավայրս , և ապրելոյ կթովք հօտին իւրոյ , ցանկայ թշնամւոյ իւրում իբր առաւել ահարկու անէծս , զի դատա– պարտեսցի առ 'ի կալ 'ի մի և 'ի նոյն տեղւոջ միայն . և ճարակիլ 'ի ծայրից մշախտոյ . Նիրա Ամերիկացիք զմայլեալք 'ի պարզ տնտեսմանս իւրեանց և շատա– ցեալք ընդ վիճակ իւրեանց՝ են հաւաստապէս ան– ընդունակք 'ի միտ առնլոյ զվախճան կամ զօգտու– թիւ տարբեր դիրութեց , որք յառաւել յղկեալ ընկերութե իմիք համարեալ են կարեւորք առ քաղց– րութի կենաց . Ջեռի 'ի դանդաղելոյ զսեպհական կայսրութե իւրեանց . կամ 'ի նայելոյ 'ի կայս մարդոց 'ի բարեգոյն իմիք վիճակի զարմացմամբ և յաչաղանօք , նկատեն զանձինս իւրեանց իբր գա– ղափարս դերագանցութե . կամ իբր եակս արդա– րացի կարգեալս և կատարելապէս պատրաստեալս 'ի վայելել 'ի ճշմարիտ երջանկութե . Ազատք յամ ամ– փոփմանէ կամաց , կամ զարծողութե , տեսանեն ապ– շու 'ի զանհաւասարութին ստորճանի , և զստորա– կարգութին 'ի քաղաքականացեալ կեանս . և կո–

չեն

չէին զենթարկութիւն մարդոյ միոյ առ միւսն ցածու- թեան հրաժարումն յառաջին զանազանութենէ մարդ- կութեան. Զուրկք 'ի յառաջատեսութենէ և 'ի հոգոյ անձանց իւրեանց. և գոհք ընդ այն կացութիւն ա- մենևին անցաւ ապահովութեան. զարմանան ընդ տագ- նապալի զգուշութիւն, ընդ անդադար մտավար- ժութիւն, ընդ բազմապատիկ պատրաստութիւն Եւ- րոպացւոց 'ի զգուշանալն 'ի չարեաց՝ ևս և հե- ռաւորաց, կամ 'ի նախահոգալն զապագայ պի- տոյն. և աղաղակեն ընդդէմ օտարոտի քիմա- րութեան նոցա 'ի բղձացուցանելն այսպէս զաղմուկս եյանձեցուցանելն զթշուառութիւս կենաց. Նախա- գասութիւն, զոր տան սեպհական վարմանց իւրեանց երևի քիւրաքանչիւր առթի. Նոյն իսկ բարքն, ո- րովք զանազան ազգք ձկտին տրոհիլ, յառաջ ա- ծեալ են յայսմ գաղափարէ գերակայութեան, զոր ունին նոքա. Ընդունեն, զոր տան ինքեանց Իրոք- քէզք, է առաջինք 'ի մարդկանէ. Քարաիպի սկզբ- նական անուն զազանաբարոյ բնակչացն կղզեաց 'ի ներքոյ հողմոյ՝ նշանակէ ազգ պատերազմական. Չէրօքքհէզք փքացեալք որոշ ինչ երևակայութեամբ վերնագունութեան իւրեանց կոչեն զԵւրոպացիս չնչին կամ զարմ գարշելի. և առնուն վն անձանց իւ- րեանց զանուանակոչութիւն ժողովրդեան սիրեցե- լոյ. Նոյն սկիզբն կանոնաւորէր զձանաչմունս այ- լոց ամերիկացւոց նկատմամբ Եւրոպացւոց. որով- հետև որչափ և 'ի սկզբան անդր էին հիացմամբ վն արհեստից նոցա, և երկիւղիւ վն կարողութեան նոցա, փութանակի նուաղեցուցին զհամարումն իւ- րեանց վն մարդոց. որք ունէին զսկզբունս և զառա- րազ կենաց այնպէս տարբերս 'ի նոցանէ. Անկ կոչէին զնս փրփուր ծովու, մարդիկ անհայր և անմայր. Ենթադրէին զնս, թէ ոչ ունէին աշ- խարհ իւրեանց սեպհական, և վնկ յափշտակէին զայլոցն, կամ թէ գոլով պակասեալք 'ի կարևո- րաց վն կելոյ 'ի տան իւրեանց, հարկադրեալ էին մոլորիլ

մոլորիլ ընդ ովկիանոս, և աւազակել 'ի նոցանէ. որք էին պերճագոյնս գործմանեալ:

Սոքիկ այսպէս գոհք ընդ պայման իւրեանց հեռի են յինչևիցէ խորհրդոյ 'ի բաց թողլոյ զսովորութիւն իւրեանց և ընդգրկելոյ զսովորութիւն քաղաքականացեալ կենաց. Ազգքն է այնպէս բռնական, մինչզի ոչ կարէ լինել 'ի միում վայրկենի. Նաև ուր արարեալ են թեւակոխութիւնք վն սարտուցանելոյ զվայրագ մի 'ի վարուց, և ընտելացուցանելոյ նմա զփափուկութիւն կիրթ ընկերութեան, և ևս ուր շնորհեալ է նմա ճաշակել զբերկրութիւն նորա, և պատճեալ է այնու խոտրութիւնք, որք են նախապետական տաւարկայք բաղձանաց մերոց, նա տխուր և ծնգի 'ի ներքոյ սանձի օրինաց և կերպականութեան. և 'ի բուռն արկանելով զառաջին դիպաւորութիւն ազատանալոյ յայնմանէ, վերադառնայ ուրախութեամբ յանտառն. կամ յանապատն առ 'ի վայելել անդ 'ի պարզ իմն և յանդորր ազատութեան:

Այսպէս ահա աւարտեցի զաշխատալի գծագրութի յատկութեան և բարուց ոչ քաղաքականացեալ ցեղիցն սփռելոց ընդ համատարած շարունակն Ամերիկոյ. Բայց յայսմ ոչ ձկտիմ մրցիլ ընդ մեծամեծ վարդապետաց, որք նկարեալ են և զարդարեալ զվայրագ կեանս, կամ համարձակութեամբ նշանագծութեան, կամ գեղեցկութեամբ և կայտառութեամբ գունոյն. Ըստացեալ եմ խոնարհագոյն իմն վաստակով. այս է, յաքատեւեալ ելոյ համբերա-
[illegible] տար իմն մտավարժութեամբ 'ի քննելն ընդ պէսպէս
[illegible] հայեցուածովք զնիւթն իմ, և 'ի հաւաքելն յա-
[illegible] ռաւել խնամոտ դիտողաց զայն անջատեալ և ստէպ
[illegible] մանր գծագրութիւն, որք կարէին դնել զիս յաս-
[illegible] տիճանի հանելոյ անտի զպատկեր մի, որ նմանիցի
[illegible]:

[illegible] Յառաջ քան զկնքելն իմ զայս մասն գործոյ իմոյ,
[illegible] 'ի դէպ է ինձ առնել զդիտողութիւն մի ևս առ 'ի արդա-

արդարացուցանել զաւարտաբանութիւն, զորս կերպաւորեցի, և կանխել առ սխալանսն, յորս կարէր անկանիլ որ ոք ունէր 'ի մտի քննել զայնս. 'Ի քննելն զբնակիչս իրիք աշխարհի այնպէս ընդարձակ տարածելոյ, որպէս Ամերիկա, կարևոր է առնել զմեծ իմն ուշադրութիւն առ զանազանութիւն կլիմայիցն, ընդ որովք եղեալ են նոքա. Կանխաւ ակնարկեցի զազդեցութիւն նոցա վերահայեցմամբ զանազան ծանրակշիռ մասնաւորութեացն, որք եղեն առարկայ քննութեանս. սակայն ես և յորժամ ոչ է եղեալ յիշատակութիւն կլիմայից, սոքա արժանի են միշտ նկատեալ լինելոյ. Գաւառք Ամերիկոյ են այնպէս պէսպէս խառնաճածով, մինչզի այս միայն բաւական է առ 'ի կայացուցանել զանազանութիւն իմն 'ի մէջ բնակչաց իւրոց. Յիւրաքանչիւր մասին երկրի, ուր գոն մարդիկ, կարողութիւն կլիմայի գործէ բացորոշ ազդեցութեամբ 'ի վերայ պայմանի նոցա և 'ի վերայ յատկութեանց նոցա. Յայն գաւառս, որք մերձին առաւել 'ի ծագս տօթոյ և ցրտոյ, այս ազդեցութիւն է այնպէս ինքնին յայտնի, մինչզի հարկանի և յաչս. Եթէ նկատեսցի մարդն իբր լոկ շնչաւոր, կամ թէ իբր էակ իմն ճոխացեալ բանաւոր կարողութեամբք, որք պատրաստեն զնա առ գործնականութիւն և առ հայեցողութիւն, տեսցուք, զի 'ի բարեխառն կողմանս հասեալ է նա առ մեծագոյն կատարելութիւն, ուրում ընդունակ է բնութիւն իւր. Ընդ բաղկացութիւն իւր է առաւել կորովի, գործարանք իւր են սրագոյնք և կերպարան իւր գեղեցկագոյն. Ընդ ունի նա զվերնագոյն իմն քանքար, զարգաւանդագոյն պատկերակերպութիւն, զառաւել ձեռներէց իմն սրտեղութիւն և զզգայունութիւն ինչ սրտի, որ տայ զշարժումն կրից ոչ միայն եռանդնոտաց, այլ և յարատևողաց. Յայսմ նպաստաւոր կայաւորութեան գիտացեալ է նա պարզել զմեծագոյն ճգանս մտաց իւրոց 'ի դրաւորութեան, 'ի քաղաքավարութեան, 'ի վաճառականութեան, 'ի պատերազմի և 'ի համօրէն

մօրէն. արհեստս, որք նրբացուցանեն և գեղերեսեն զմարդկային կեանս:

Այս հզօր ներգործութիւն կլիմայի զգացեալ է կենդանագոյնս՝ 'ի վայրենի ազգացն. և յառաջ ածէ 'ի նոսա զարդիւնս մեծագոյնս քան յառաւել մշակեալ ընկերութիւնս. Քանքարք մարդոց քաղաքականացելոց պարապեցուցանեն հանապազորդ 'ի փոխարէլ առաւել տանելի զպայման իւրեանց. և զօրութբ խորագիտութեան և հնարագտութեանց կարեն ըստ մեծի մասին լնուլ զպակասութիւն, և զգուշանալ 'ի դժպատեհութեանց որոյևիցէ կլիմայի. Բայց անյառաջատես վայրագն զգայ յայնմանէ զնոյն պարակայ մնանաւոր կայաւորութեան իւրում. Ոչ առնու զզգուշութիւն կամ առ 'ի մեղմել զայն, կամ առ 'ի բարեգունացուցանել. Օրէն տնկոյ միոյ կամ շնչաւորի թողու զինքն կերպաւորիլ 'ի կլիմայէն, ընդ որով եդեալ է. և զգայ զազդումն նորա բովանդակ ուժգնութբն:

Որք նկատէ զբիրտ ազգսն Ամերիկոյ, առաջի մատուցանի նմա այս բնական զանազանութիւն 'ի մէջ բնակչացն բարեխառն և այրեցած գօտւոյն. Անկ կարեն տրամատիլ յերկուս մեծամեծ դասս. Մինն բովանդակէ զբոլոր հիւսիսային Ամերիկացիս 'ի գետոյն Սրբոյն Լօրէնցիոսի ցծոցն Մեքսիկոյ 'ի միասին ընդ ժողովրդեանն Չիլեայ և ընդ սակաւ փոքրիկ ցեղսն դէպ 'ի ծագ հարաւային շարունակին. Առ միւսն պատկանին բովանդակ բնակիչք կղզեացն. և կայունացեալքն 'ի պէսպէս գաւառսն, որք տարածանին 'ի ցամաքալեզուէն Տարիէնու գրեթէ մինչև ցհարաւային սահմանս Պրասիլեայ առ արևելեան կողմն Անտեայց:

Յառաջնումն մարդկային տեսակն երևի յայտնագոյնս կատարեալ. Ազգայինքն են առաւել ուժեղք, առաւել գործունեայք. առաւել իմացականք, և սրտեղագոյնք. Ունին 'ի գերազանցագոյն աստիճանի զայն զօրութիւն հոգւոյ և զայն սէրն

անկախութեան, զորոց վերագոյնդ ասացի լինել նախապետական ձիրս մարդոյ 'ի վայրագ վիճակի իւրում. Սոքա պաշտպանեցին զազատութիւն իւրեանց յարատև քաջութեամբ ընդդէմ Եւրոպացւոց. որք արկին ընդ լծով զայլ վայրենի ազգս Ամերիկոյ այնքան դիւրութեամբ. Բնակք բարեխառն գօտւոյ են միայն ժողովուրդ 'ի նոր աշխարհին, որ պարտի զազատութիւն իւր սեպհական քաջութեան իւրում. Հիւսիսային Ամերիկացիք՝ թէպէտ և շրջապատեալք յերկայն ժամանակաց հետէ յերից ահարկու իշխանութեանց՝ հանդերձ այսու ամենայնիւ պահեն զմասն նախկին ստացուածոց իւրեանց. և տակաւին են իբր ազգք անկախք. Ժողովուրդն Չիլեայ՝ թէպէտ և կանուխ 'ի վերայ յարձակեալ 'ի թշնամեաց, դեռևս տոկայ 'ի հզօր իմն ընդդիմակութեան ընդ Սպանիացւոց. և եղեալ է կապարս յափշտակութեանց նոցա. ուր 'ի ջերմագոյն կողմանս մարդիկ են առաւել տկարք 'ի կազմուածս իւրեանց, նուազ կորովիք 'ի ջանս մտաց իւրեանց, ազնիւ, բայց թմբրեալ հոգւով, 'ի վերջոյ՝ առաւել գերիք հեշտութեանց և առաւել ընկղմեալք յանհոգութեան. Գամնիրի Եւրոպացիք յայրեցած գօտւոջ առաւել լրապէս հաստատեալ են զտէրութիւն իւրեանց 'ի վերայ Ամերիկոյ. ուր առաւել յուլութի և առաւել ցանկալի գաւառք անկեալ են ընդ լծով նոցա. և եթէ զանազան ցեղք վայելեն տակաւին յանկախութեան, այս հետևի յայնմանէ, կամ, վասնզի ոչ են երբէք 'ի դիմի հարեալք, բայց եթէ 'ի միջէ թշնամւոյ արդէն յագեցելոյ 'ի տիրապետութեան, կամ եղելոյ 'ի ժառանգութեան սահմանաց ընդարձակագունից քան զոր իցէ իւրն ընդունակ տեղակալելոյ. և կամ վասնզի հեռաւոր և անմատոյց դիրք նոցա ապրեցուցեալ է զնոսա 'ի նուաճութենէ:

Արշաւի և յայտնի երևիցի այս զանազանութիւն 'ի մէջ բնակչաց այնց տարբեր կողմանց, սակայն ոչ է ընդհանրական. Բարոյական և քաղաքական պատճառք հզօրագոյնք քան զազդեցութիւն կլիմայի՝ ներգործեն, ոյց կանխաւ նշմարեցի, 'ի վերայ տրա-

մադրութեն և համգամանաց եթէ անհատից և ե-
թէ ազգաց. Այլ գտանին ցեղք ոմանք 'ի պէսպէս
մասունս այրեցած գօտւոյն լի քաջասրտութեն, վսե-
մական հոգւով և սիրով անկախութեն յատկա-
նի միում ոչինչ ընաւ վայրագունի քան զաղ-
գայնոցն առաւել բարեխառն կլիմայից. Սակաւ
ծանօթ է մեզ պատմութի այսց ժողովրդոց, որով
'ի յառաջադիմութեն և 'ի կայաւորութեն նոցա դիւ-
րին իցէ մեզ որոնելն զպէսպէս պարագայս, որոց
պարտին նոքա զնշանաւոր գերակայութի իւրեանց.
Սակայն ամենաստոյգ է եղեալն. Քօլոմպոս անդս-
տին յառաջին ճնպհորդութե իւրմէ ընկալեալ էր
զծանօթութի, թէ բազումք 'ի կղզեաց էին բնա-
կեալք 'ի Քարաիբեաց ստամբակ զարմէ մարդկան
բնաւին աննման տկար և երկչոտ մօտաւորաց իւր-
եանց. Յերկրորդում շրջագայութեն իւրում առ
նոր աշխարհն ծանեաւ ճշմարիտ զայնպիսի իմն
ծանուցումն. և նա ինքն եղև վկայ անվեհերութեն նց։
(71) Ընդ. Պէռնալտէս ժամանակակից և բա-
րեկամ Քօլոմպոսի պահեալ էր զպարագայս ինչ
վերաբերեալ առ քաջութի Քարաիբեաց, որք ոչ
են յիշատակեալք 'ի Տէր Ֆէրտինանտոսէ Քօլոմ-
պոսէ, կամ յայլոց վիպասանից այնր ժամանակի.
որոց հրապարակեալ են գործք. Քանօէ մի
Քարաիբեան չորիւք արամբք, երկու կանամբք,
և միով մանկամբ դիպեցաւ յանկարծակի 'ի
նաւախումբն Քօլոմպոսի յերկրորդ ճնպհորդութեն
իւրում. յորժամ ուղղէր նա առ կղզիս նոցա.
'Ի սկզբան անդ գրեթէ ըմբռնեալ եղեն յապ-
շութէ և 'ի շուարմանէ առ այնպիսի իմն օտար
տեսարան. և դժուարաւ շարժեցան 'ի տեղւոջէն
ընդ միջոց աւելի քան զմի ժամ. Նաւակ մի Սպա-
նիացի քսան և հինգ մարդկամբ յառաջ խաղաց
դէպ նոցա. և նաւահանգէսն սակաւ առ սակաւ
շուրջ պատեաց զնս առ 'ի բառնալ զհաղորդութի
նոցա ընդ ծովեզերն. Իբրև տեսին, թէ անկա-
րելի էր փրծանիլն, ասէ պատմիչն, դիմեցին առ

զէնս

զէնս իւրեանց քաջասիրտ դիմադրաւութեամբ. և սկսան զմարտն. 'Ի գործ ածեն զյայտարարութիւն քաջասիրտ դիմադրաւութեան. քանզի էին սակաւք. և տեսանէին զմեծ ինչ բազմութիւն պատրաստական առ 'ի դիմի հարկանել նոցա. Խոցեցին զբազումս 'ի Սպանիացւոց, թէպէտ և ունէին զմեծամեծ վահանս և զայլ զէնս պաշտպանականս. այլև յորժամ քանօէ նոցա տապալեցաւ, մասն մի 'ի նոցանէ կալեալ եղև ծանր դժուարութեամբ և վտանգաւ. որովհետև շարունակէին պաշտպանել զանձինս և քաջամարտիլ աղեղամբք իւրեանց ծայրագոյն յաջողակութեամբ, ևս և լողալով 'ի ծովուն : ‖

Պահեցին անայլայլելի զնոյն յատկութիւն յամ յաջորդական պայքարմունս ընդ ժողովրդոց մերոյ ցամաքի. ևևս առ ժամանակօք մերովք տեսաք առնել գեղեցիկ ինչ դիմակացութիւն 'ի պաշտպանութեան վերջին երկրաստանին, զոր յափշտակողութիւն Եւրոպացւոց թողեալ էր նոցա 'ի ստացուած :

(72) ‖ Արժ է կերպաւորել զհաւանական ինչ վարկած վերահայեցմամբ պատճառի զանազանութեան յատկութեան Կարաիպեաց և բնակչացն ընդարձակագոյն կղզեացն. Առաջինքն երևին լինել յայտնապէս զարմ ինչ զատուցեալ. Լեզու նոցա է բնաւին տարազան 'ի լեզուէ մօտաւորաց իւրեանց 'ի վերոյասացեալ կղզիսն. Նոքին իսկ ունին զաւանդութիւն ինչ, թէ նախնիք նոցա եկեալ են սկզբնաբար 'ի մասնէ իմեքէ ցամաքին. և թէ տիրապետելով և ջնջելով զնախկին ազգայինս, առին զժառանգութիւն երկրաց նոցա և կանանց նոցա. Սոֆհէֆօրն և Թէուֆրէ. Աստուստ յառաջ գայ, զի կոչին Գալիպիէ, որ նշանակէ մարդ եկեալ անդուստ քան զծովն. Լապա. Նմին իրի Կարաիպք 'ի կիր առնուն զերկուս լեզուս զանազանեալս, մինն մասնաւոր արանց և միւսն կանանց. Թէուֆրէ. Լեզուն արանց ոչինչ ունի հասարակ ընդ այլում, որ խօսեցեալ լինի 'ի մեծամեծ կղզիսն. Բարբառ կանանց կարի իսկ շատ նմանի այնմ. որ և հզօրա-

15ռ.
57-2
377

բար հաստատէ զաւանդութիւն, զոր յիշատակեցի. Քարախիլք պատկերակերպեն լինել հաւանական ինչ յառաջ եկեալ 'ի Կալիպեաց հզօր ազգէ Կուխանայի 'ի մէջ հարաւային Ամերիկայ. Թէատրէ. Ռօքհէ-ֆօրթ. Այլ քանզի ամէնի բարք նոցա մերձենան բազում յոյժ առ բարս ժողովրդեան հիւսիսային չարունակին, քան առ բարս բնակացն հարաւային Ամերիկայ, և զի լեզու նոցա ունի ևս զմերձաւորութիւն ինչ ընդ այնմ, որ խօսեցեալ լինի 'ի Ֆլօրիտա, ծագումն նոցա պարտ էր յառաջածիլ մանաւանդ յառաջնոցն, քան թէ յերկրացն. Թաղումն. Ջերբէ-քու. 'Ի պատերազմունս իւրեանց պահեն միշտ զնախկին սովորութիւն իւրեանց ջնջելոյ զա̃մ արուս. և պահելոյ զկանայս, կամ վ̃ն գերութեն, կամ վ̃ն ծննդեան: ||

Ազգք ոմանք 'ի Պրասիլէ ոչ էին նուաղ գերազանց 'ի կորովութեն մտաց և 'ի քաջութեն առ պատերազմն. Ժողովուրդ ցամաքալեզուին Տարիէնու 'ի դիմի հարաւ Սպանիացւոց անվեհերաբար յաղթաբեցին. և գիտաց քաջ ստէպ վանել զահարկու յարձակողսն զայնոսիկ. Կարէին յառաջ բերել և այլ օրինակս. Գործողութիւնք և յատկութիւնք մարդկան ոչ կարեն միշտ մեկնիլ քննելով զա̃մ պատճառեղականս և զա̃մ մասնաւոր սկիզբն, որչափ և գործունեայ և տարածեալ երևիցի ազդողութիւնն. Նոյն իսկ օրէնք կլիմային թերևս առաւել հանրական 'ի գործողութեն իւրում քան զայլ զինչ և իցէ, ազդէ 'ի վ̃ր մարդկային տեսակի. Բայց զասեցեալ զվարուց մարդկան ոչ կարէ նոյն մերձեցուցանիլ առանց բազմաց բացառութեց:

## ՎԵՐՋ ԱՌԱՋՆՈՅ ՀԱՏՈՐԻՆ:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0024374